


Հ ԱՅԵՐԷՆ  
Լ Ե Ջ Ո Ւ Ի  
Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք



Ս. Գ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ,

Բ. Յ. ՎԵՐԴԵԱՆ,

Վ. Ա. ԲՈՍԵԱՆ

---

# ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Երկրորդ հրատարակութիւն

*С. Г. Абраамян, Б. А. Вердян, В. А. Косиан*  
**УЧЕБНИК АРМЯНСКОГО ЯЗЫКА**

Ереван—1968

*Abrahamian S. G., Verdian B. A., Cosian V. A.*  
**ARMENIAN LANGUAGE**

Yerevan—1968

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ձևոնարկելով արեւմտահայ դրական լեզուի դասագիրք կազմելու աշխատանքին, մենք՝ հեղինակներս, լիովին դիտակից ենք այդ սլատասխանատու գործին հետ կապուած դժուարութիւններուն:

Թէեւ արեւմտահայ բերականագիտութիւնը բաւական հարուստ է, կան արեւմտահայերէնի բաղմամբիւ դասագիրքեր, սակայն ոչ քիչ հարցեր անոնց մէջ կը մեկնարանուին տարրեր կերպ, կամ կ'անտեսուին այս կամ այն հեղինակին կողմէ: Յատկապէս ընդհանուր երևոյթ է շարահիւսութիւնը կամ բոլորովին զանց առնելը դասագիրքերէն և կամ շարահիւսական հիմնական մէկ քանի դադարներն ընդհանուր ձեւով տալը միայն: Բացի այդ, հեղինակներէն ոմանք ուշադրութիւն դարձուցած են առաւելապէս ձեւաբանութեան վրայ, ոմանք՝ բառակազմութեան, ուրիշներ՝ ուղղագրութեան և այլն:

Այդ հեղինակներու մօտ նիւթի սահմանափակ ընդգրկումը 'րեւս սլաշմանաւորուած է եղեր տղայական սահմանափակ կալիութիւններով, ինչպէս և տարակարծութիւնները՝ դիտական մերու ցրուածութեամբ և միասնական կեդրոնի բացակայութեամբ: սմենայն դէպս արդիւնքն այն է, որ արեւմտահայերէնի դասագրութուն մէջ յաճախ կը բացակայի միասնական մօտեցումը թէ՛ ընդգրկման և թէ՛ կարգ մը հարցերու լուսարանութեան վիճակէն:

Մեր նպատակն է միջնակարգ դպրոցներու միջին ու բարձր դասարաններուն համար ստեղծել արդի արեւմտահայ լեզուի դրացական այնպիսի դասագիրք մը, որ ընդգրկէ լեզուի ամբողջ առուցումը իր բոլոր կողմերով՝ հնչիւնական (ձայնական) համակարգ, բառասպաշար, բերականութիւն (ձեւաբանութիւն, շարահիւսութիւն):

Յատուկ ուշադրութիւն դարձուցած ենք նաև ուղղագրութեան ու կէտագրութեան վրայ:

Օգտագործած ենք այն շատ գրականն ու արժէքաւորը, որ կայ արեւմտահայերէնի դասագիրքերուն մէջ, ինչպէս նաեւ արեւելահայ լեզուաբանութեան նուաճումները և այդ բոլորին վրայ անլըուցած ենք մեր սեփական ուսումնասիրութեան արդիւնքները, ուսումնասիրութիւն, զոր կատարեր ենք արեւմտահայ դասական ու ժամանակակից հեղինակներու լեզուի հիման վրայ:

Արեւմտահայերէնի սոյն դասագիրքին մէջ կան նորութիւններ՝ նախորդ դասագիրքերու համեմատութեամբ: Որքան ալ համոզիչ դարձնելու նկատառումով ցանկալի է այդպիսի հարցերը շարադրել անլի մանրամասն ու հիմնաւորել, բայց և այնպէս դասագիրքի միասնական շարադրանքը սլահայանելու սլահանջը դժբախտաբար հեղինակները կը զրկէ այդ կարելիութենէն:

Այնուամենայնիւ մենք պիտի ուղէինք այդպիսի քանի մը առաւել կարեւոր հարցերու, ինչպէս և դասագիրքի շարադրման սկզբունքներուն թուղիկ կերպով անդրադառնալ այստեղ:

1. Սոյն դասագիրքին մէջ մենք ընդունած ենք պայթական բաղաձայններու երկաստիճան համակարգ: **Բ, գ, դ, ձ, ջ** բաղաձայնները համարած ենք շնչեղ խուլ՝ ելլելով արեւմտահայ շատ հատուածներու արտասանութենէն և դիտական գրականութեան մէջ արտայայտուած կարծիքներէն: Արեւմտահայ որոշ հատուածներու մէջ այդ բաղաձայններուն շնչեղ ձայնեղ, խսկ այլ հատուածներու մէջ՝ սլարղ խուլ արտասանութիւնը դիտած ենք իբրեւ արեւմտահայ վրական լեզուին ոչ ընդորոշ, բարբառային երևույթ:

2. Խօսքի մասերու դասակարգման մէջ (մասնաւորաբար դերանուններ, եղանակաւորող բառեր և այլն) օգտագործած ենք արեւելահայ քերականութեան նուաճումները. նկատի ունեցած ենք բառերու իմաստային ու քերականական ընդհանուր յատկանիշները, քանի որ խօսքի մասերը բառաքերականական կարգեր են:

Որպէս առանձին խօսքի մաս դիտած ենք եղանակաւորող բառերը, որոնք էապէս տարրեր են միւս խօսքի մասերէն:

3. Ա խոնարհումը միւս խոնարհումներուն համահաւասար չենք դիտած, քանի որ այդ խոնարհման կ'ենթարկուին միայն քանի մը բայ, ուստի և դայն ներկայացուցած ենք խոնարհման ամփոփիչ մասին մէջ միայն:

4. Պահպանած ենք հայերէնի արանդական ուղղագրութիւնը: Սակաւաթիւ հարցերու մէջ առանձին շեղումներու պարագային, որ այժմ կը նկատուին արեւմտահայ տարրեր հրատարակութեանց մէջ, մենք որպէս հիմք ընդունած ենք առաւել տարածուածը:

Այսպէս, **և** շաղկապն առանձին դործածելու պարագային՝ կը

գրենք և գիրով, իսկ երբ ան երեսան կու գայ բառի մէջ՝ կը գրենք եւ՝ հետեւելով սփիւռքահայութեան հրատարակութիւններու ճնշող մեծամասնութեան:

5. Կէտադրութեան հարցին մէջ հանդիպած ենք լուրջ դժուարութիւններով արեւմտահայ գրականութեան մէջ եղած դգալի անմիօրինակութեան, կէտադրութեան վերաբերեալ մշակուած միասնական կանոններու չգոյութեան պատճառով: Հեղինակային բոլոր վարժութիւններու կէտադրութիւնը նոյնութեամբ պահպանած ենք: Մեր շարագրանքին և օրինակներուն մէջ ցուցաբերած ենք մասնակի ինքնուրոյնութիւն. բարդ ստորադասական նախադասութեան երկրորդական նախադասութիւնը բոլոր պարագաներուն դիտարկէն զատած ենք ստորակէտով, այդ կը դիւրացնէ նախադասութեան կառուցուածքի և մտքի ըմբռնումը:

6. Արեւելահայերէնի որոշ իւրայատկութիւններ արեւմտահայերէնի համեմատութեամբ՝ համառօտակի նշած ենք մանր տառերովատոնց ուսուցումը կը թողունք ուսուցիչներու հայեցողութեան:

Գոհ պիտի ըլլանք, եթէ սոյն գասագիրքը ռեւէ շարժով կարենայ նպաստել սփիւռքահայութեան մէջ մեր մայրենի լեզուի ուսուցման գործին:

Սոյն հրատարակութեան մէջ հաշուի առած ենք գասագիրքին վերաբերեալ եղած շահեկան դիտողութիւնները:

Այսուչետ եւս սիրով կ'ընդունինք բոլոր օգտակար դիտողութիւնները, զորս կը խնդրենք ուղարկել հետեւեալ հասցէով. Սրեւան, «Լոյս» հրատարակչութիւն:

ՀԵՂ.ՆՆ.Ս.ԿՆԵՐ

## ՄՈՒՏՔ

Հայերէնը աշխարհի ամենահին լեզուներէն մէկն է: Կազմուած ըլլալով մեզմէ շուրջ 2500 տարի առաջ, դարերու ընթացքին՝ ան աւելի մշակուած ու կոկուած է և բարձր դարդացման հասած: Մեր մայրենի լեզուն մեր ժողովուրդի գոյութեան ու հոգեկան կեանքի ղէնքն է եղած միշտ: Աւելի քան տասն և հինգ դար առաջ Մեսրոպ Մաշտոց յօրինած է հայ տառերը: Ատոր շնորհիւ ստեղծուեցան դիտական մեծարժէք գործեր, գեղարուեստական հոյակապ երկեր, որոնք հայ մեծատաղանդ գործիչներն ու հայ ժողովուրդը հռչակեցին բովանդակ աշխարհի մէջ:

Սիրել մայրենի լեզուն՝ քիչ է. սէտք է ջանալ ճանչնալ անոր ամբողջ հարստութիւնը, սէտք է կարենալ ճիշդ և դիպեցիկ խօսիլ ու գրել: Ա՛յս է հայ լեզուի արանդման հիմնական նպատակը:

Լեզուի արանդումը կ'ընդգրկէ հետեւեալ բաժինները՝ հնչիւնաբանութիւն, բառադիտութիւն, ուղղագրութիւն և ուղղախօսութիւն, քերականութիւն (ձևաբանութիւն, շարահիւսութիւն):

---



## ՀՆՉԻՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ՀՆՉԻՒՆ

Հնչիւնաբանութիւնը կ'ուսումնասիրէ լեզուի մը հնչիւնային կազմը, անոր մէջ եղած հնչիւններուն տեսակները և փոփոխութիւնները:

Ամէն բառի մէջ կան զանազանելի առանձին ամենափոքր մասեր, որոնք միասին որոշ իմաստ մը կ'արտայայտեն. օրինակ՝ քառ բառը բաղկացած է երեք ամենափոքր մասերէ՝ ք-ա-ր, իսկ ծաղիկ բառը՝ հինգ ամենափոքր մասերէ՝ ծ-ա-ղ-ի-կ:

Բառի մէջ զանազանուող ամենափոքր միատորը հնչիւն կը կոչուի:

Սակաւաթիւ բառեր կազմուած են միայն մէկ հնչիւնէ. օրինակ՝ ու (Հայր ու որդի պարտէզ եկան), է (Պարզէնը իմ ընկերս է):

### 2. ՀՆՉԻՒՆՆԵՐՈՒ ԱՐՏԱՐՆԵՐՈՒՄԸ

Հնչիւններն արտասանելու գործարաններն են՝ թորերը, շնչափողը, բերանը (քիմք, լեզու, ատամներ, լինդեր, շրթունքներ) և բիթի խոռոչը:

Ելակէտը թորերն են, որոնց դուրս մղած օդը շնչափողէն կ'անցնի կոկորդը, ուր, հանդիպելով ձայնալարերուն, փոփոխութեան կ'ենթարկուի և կը մտնէ բերնի խոռոչը, հոն ձևաւորում կը ստանայ և դուրս կ'ելլէ բերնէն կամ քիթէն իբրև առանձին հնչիւն: Օրինակ՝ Վ հնչիւնը արտասանելու ատեն՝ օդը թորերէն շնչափողի միջոցով կը հասնի կոկորդը, ուր թրթռացնելով ձայնալարերը՝ մասնաւոր երանդ ստացած՝ կը մտնէ բերնի խոռոչը և

դուրս կ'ելլէ այն բացուածքէն, որ կ'առաջանայ վերին ատամնաշարքին և վարի շրթունքին իրար միանալովը:

Մինչդեռ ուրիշ է, օրինակ, և հնչիւնին արտասանումը. թոքերէն շնչափողի միջոցով կոկորդ հասած օդը հոս շի թրթռացներ ձայնալարերը, ուստի ձայնային երանդ չի ստանար և կը մղուի դէպի այն բացուածքը, որ կազմուած է լեզուի ծայրին և առաջաքիմքին միջեւ, և կ'արտասանուի իբրև հնչիւն:

### 3. ՏԱՌ

Հնչիւնի զրուոր նշանը՝ պատկերը, տառ կը կոչուի. օրինակ՝ սառ բառը կազմուած է երեք հնչիւններէ, որոնցմէ իւրաքանչիւրը կը գրուի մէկ տառով՝ ս-ա-ր: Սակայն կայ պարագայ մը, ուր միևնոյն հնչիւնը կը ներկայացուի երկու սարքեր տառերով. օրինակ՝ օ հնչիւնը կը գրուի թէ՛ օ տառով (օր, օղ) և թէ՛ ո տառով (ով, ովկիան, նոր, շող): Բառի մէջ յաճախ կը լսենք է, բայց կը գրենք ե (դետ, հետ, նետ, շեշտ):

### 4. ԱՅՐՈՒՐՆՆ

Տառերու (գիրերու) յաջորդական վարդը այբուրեն կը կոչուի (առաջին և երկրորդ տառերու անուններով՝ այբ, բեն):

Հայերէնի այբուրենն ունի 38 տառ և մէկ նշանադիր՝ Ա, որ երեք հնչիւններ կ'արտայայտէ՝ յ + է + ս:

Հայերէնի աւանդական այբուրենը հետևեալն է.

Ա, Բ, Գ, Դ, Ե, Ջ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Վ, Տ, Բ, Յ, Ը, Թ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Չ, Պ, Ջ, Բ, Ս, Վ, Տ, Բ, Յ, Ի (ւ), Փ, Ք, Օ, Ֆ:

Ասոնցմէ դատ հայերէնն ունի նաև հնչիւն մը՝ թէև պարզ, բայց երկու տառով գրուող՝ ու:

Արեւելահայ գրութեան մէջ և տառը չկայ. անոր փոխարէն վ կը գրուի (ու ձայնաւորէն յետոյ միշտ, Ի-ն յետոյ բառի վերջը և ձայնաւորէն առաջ. հարավ, լավ, թիվ, հաշիվ, հիվանդ):

Հայերէնի տառերն ունին իրենց անունները.

այբ, բեն, զիմ, դա, եչ, զա, է, ըր, բօ, մէ, ինի, լիւն, խէ, ծա, կեն, հօ, ծա, դատ, ճէ, մեն, յի, նու, շա, ո, շա, պէ, ջէ, ռա, սէ, վեւ, ւիւն, բէ, ցօ, վիւն, վիւր, բէ, օ, ֆէ:

Տառերը կարելի է անուանել թէ՛ իրենց անուններով և թէ՛ պարզապէս իրենց հնչիւններով. ա, բ (բը), գ (գը), դ (դը) և այլն:

Տառերը մեծատառ (գլխատառ, գլխագիր) կամ փոքրատառ կը դրուին: Մեծատառերը վերը տեսանք:

Փոքրատառերն են՝

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, բ, ժ, ի, լ, խ, ծ, կ, ն, ձ, ղ, ճ, մ, յ, Ն, շ, ո, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, ր, ց, յ, փ, ք, օ, ֆ:

## 5. ՏԱՌԵՐՈՒ ԹՈՒՍՅԻՆ ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Հին ժամանակները, երբ ներկայիս գործածուող թուանշանները դեռ չկային, իրրև թուանշան կ'օգտագործուէին հայերէն տառերը:

Անոնք բաժնուած էին չորս իննևակի՝ միաւորներ, տասնւորներ, հարիւրաւորներ և հազարաւորներ, իրենց առաջին տառերն ունենալով՝ ա—1, ժ—10, ճ—100, ո—1000:

Եւ յաջորդ տառերը՝ ըստ համապատասխան թիւերու. այսպէս՝

Ա.—1	Ժ.—10	Ճ.—100	Ռ.—1000
Բ.—2	Ի.—20	Մ.—200	Ս.—2000
Գ.—3	Լ.—30	Յ.—300	Վ.—3000
Դ.—4	Խ.—40	Ն.—400	Տ.—4000
Ե.—5	Մ.—50	Շ.—500	Ր.—5000
Զ.—6	Կ.—60	Ո.—600	Յ.—6000
Է.—7	Հ.—70	Չ.—700	Ի.—7000
Ը.—8	Չ.—80	Պ.—800	Փ.—8000
Թ.—9	Ղ.—90	Ջ.—900	Գ.—9000

Օր ի ն ա կ՝ 1968-ը կը դրուի ՌՋԿԸ:

Այժմ տառերը յաճախ կը գործածուին միայն իրրև դասական թուական. Ա՝ առաջին, Բ՝ երկրորդ, Գ՝ երրորդ, Թ՝ իններորդ, Ծ՝ տասներորդ, ԽԱ՝ քսանմէկերորդ և այլն:

Բառարաններու մէջ բառերը բնականաբար դասաւորուած են այբբենական կարգով. հաշուի առնուած են ոչ միայն բառերու սկզբնատառերը, այլև բոլոր տառերու յաջորդականութիւնը. օրինակ՝ անուն բառը աւելի առաջ է, քան աշուն բառը, բակ-ը աւելի առաջ է, քան բան-ը և այլն, քանի որ այբուբենին մէջ ն գիրը շ-էն, իսկ կ -ն՝ ն-էն առաջ են:

**Վարժութիւն 1.** Այբբենական կարգով գրել հետեւեալ բառերը.

Ամպ, արեւ, աշբ, աւաղ, աղբիւր, աիւայ, առաւօտ, բերան, բարի, բոց, գիւղ, գիրք, գեղձ, դէմք, եղբայր, երիասասարգ, զբարթ, զիջիլ, զջշալ, ըմբոստ, ընկեր, ընդարձակ, թումբ, թարմ, ժայռ, ժողով, ժիր, իղձ, իմաստուն, իժ, լոյս, լրագիր, լեռ, լոր, խորթ, խնդիր, խրոխտ, ծիծաղ, ծով, ծախ, կոշիկ, կրակ, հիւանդ, հուր, ձմեռ, ձիւն, ճիգ, ճեմել, ճշմարիտ, մեխակ, մուխ, մտերիմ, յահախ, յանցանք, յիմար, նկուղ, նուաղ, շէնք, շողոմ, ոգի, ոստ, որկոր, շիր, շնչին, պեղել, պղտոր:

Օրինակ՝ աիւայ, աղբիւր, ամպ, աշբ, աւաղ, բարի, բերան և այլն:

**Վարժութիւն 2.** Այբբենական կարգով գրեցէ՛ք ձեր դասընկերներուն աղգանունները (մականունները) և ապա՝ անունները:

## 6. ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Հնչիւնները ընդհանուր կերպով կը բաժնուին երկու հիմնական խումբերով՝ ձայնաւորներ և բաղաձայններ:

Օրինակ՝ զարուն բառը հինգ հնչիւնէ կազմուած է, որոնցմէ՝ ա, ու կ'արտաբերուին առանց սեւէ արտասանական դործարանի կողմէ արգելքի հանդիպելու և կազմուած են ձայնէ, զոր կարելի է երկնցնել անփոփոխ կերպով: Ասոնք ձայնաւորներ են:

Միայն ձայնէ կազմուած և առանց արգելքի արտասանուող հնչիւնները կը կոչուին ձայնաւոր:

Հայերէն լեզուն ունի 6 ձայնաւոր, որոնք կը գրուին Տ տառով՝ ա, է (ե), ը, ի, օ (ո), ու:

Սակայն այդպէս ազատ և անարգել չեն արտասանուիր զարուն բառին միւս հնչիւնները՝ գ, ր, ն, Ասոնք արտաբերուած ատեն արգելքի կը հանդիպին արտասանական դործարաններու կողմէ (անցքի փակում կամ նեղացում): Թորերէն դուրս ելլող ոգին կողմէ այդ արգելքներուն վերցուելովը (գ, ն) կամ ստեղծուած նեղուածքի պատերուն շփուելովն (ր) է, որ կ'արտաբերուին անոնք:

Արգելքով (նեղուածքով կամ փակուածքով) արտասանուող և ձայնէ ու ազմուկէ, կամ միայն ազմուկէ կազմուած հնչիւնները կը կոչուին բաղաձայն:

Հայերէն լեզուն ունի 30 բաղաձայն՝ ր, գ, դ, զ, թ, փ, լ, լն, ժ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, շ, պ, ջ, ու, ս, վ, տ, բ, ց, ա, փ, ք, ֆ, նո

**Վարժութիւն.** Հնդօրինակիւ հետեւեալը՝ ստորագծելով ձայնաւորները.

Հայրենիք. ո՞ր ազգաաէր սիրաբ շի խնդար այս զեղեցիկ ու վսեմ անունը լսելով. Հայրենիք. շկայ ասիէ աւելի ցանկալի ու սրտի հաճոյական անուն մը:

(Մ. Պէշիկբաշլեան)

## 7. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### Ա. ՊԱՅԹԱԿԱՆ ԵՒ ԵՓԱԿԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Բաղաձայնները կ'արտաբերուին տարրեր կերպերով և կ'ըլլան պայթական կամ շփական:

Բաղաձայններու արտաբերման ատեն արտասանական գործարանները կը գոյացնեն տարրեր տեսակի արգելքներ՝ փակուածք կամ նեղուածք:

Փակուածքի պարագային դուրս ելլող օդի հոսանքը, վայրկենարար բանալով արգելքը, կը ստեղծէ տուեալ բաղաձայնը: Օրինակ՝ ք, փ բաղաձայններու արտաբերման դէմ փակուածք կ'առաջացնեն շրթունքները, զորս յանկարծ պայթեցնելով կը բանայ դուրս ելլող օդը:

Արասանակուն գործարաններու փակուածքի յանկարծակաւ բացումով՝ պայթումով առաջացած բաղաձայնները պայթական են:

Պայթական բաղաձայններն են՝ բ, պ, փ, դ, տ, թ, դ, յ, ք, ձ, ծ, ց, ջ, ճ, չ, մ, ն:

Մնացած բաղաձայնները արտաբերելու ատեն արտասանական գործարանները կը գոյացնեն նեղուածք. թորերէն դուրս ելլող օդը կը շփուի նեղուածքի պատերուն, շփման (ոչ պայթիւնի) աղմուկ կ'առաջացնէ և կը ստեղծէ շփական բաղաձայն: Օրինակ՝ ս արտասանելու ատեն շեղուի ծայրը կը մօտենայ առաջաքիմքին, առանց սակայն անոր դպչելու, և կը գոյացնէ նեղուածք, որու պատերուն բստելով օդը՝ կ'արասանուի ս հնչիւնը:

Այն բաղաձայնները, որոնց արտաբերման ժամանակ օդը կը շփուի արտասանական գործարաններու նեղուածքի պատերուն, կը կոչուին շփական:

Շփական բաղաձայններն են՝ գ, ս, ժ, շ, դ, խ, ւ, վ, ֆ, ւ, բ, ա, յ, հ:

Վարժութիւն. Որոշել բաղաձայններու տեսակները՝ պայթա-  
կան կամ շփական, և գրել առանձին-առանձին.

Որքան ունիս դու ալի,  
Ճակատս այնքան խոկ ունի,  
Որքան ունիս դու փրփուր,  
Սիրտս այնքան խոց ունի բիր:

Այլ եթէ դողդ ալ թափին  
Բոլլքն աստեղաց երկնքին,  
Նըմանիլ չես կրնար դուն  
Հողուոյս՝ որ է բոց անհուն:

(Պ. Գուրեան)

#### Բ. ՇԵՉԵՂ ԽՈՒՆ, ՉԱՅՆԵՂ, ԽՈՒՆ ԵՒ ՉԱՅՆՈՐԳ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐ

Բաղաձայնները կը կազմուին միայն աղմուկէ, կամ ձայնէ ու  
աղմուկէ: Այս, այսինքն ձայնային երանգի տեսակէտէն, պայթա-  
կան բաղաձայնները կ'ըլլան շնչեղ խոլ և ձայնեղ:

Շնչեղ խոլ բաղաձայնները այսպէս կը կոչուին, քանի որ  
անոնք միաձուլումն են աղմուկի և Կ շունչի (հագագի):

Հայերէնի (արեւմտահայ, արեւելահայ գրական լեզուներ ու  
գրաբար) շնչեղ խոլներն են՝ փ, ֆ, ք, չ, ց:

Արեւմտահայ գրական լեզուի մէջ իբրեւ շնչեղ խոլ կ'ար-  
տասանուին ք, փ, ֆ, ձ, ջ բաղաձայնները, որոնք գրաբարի և  
արեւելահայ գրական լեզուի մէջ ձայնեղ են:

Ձայնեղ պայթականները կազմուած են զլխաւորապէս աղմու-  
կէ և զգալի շփով ձայնէ: Ժամանակակից արեւմտահայ գրական  
լեզուի մէջ ձայնեղ պայթական հնչիւնները կը ներկայանան ալ,  
կ, տ, ծ, ճ տառերով:

Այս տառերը կ'արտայայտեն ժամանակակից արեւելահայ գրական լեզուի  
խոլ պայթական հնչիւնները: Այդպէս էր նաև գրաբարի մէջ:

Հայերէնի միւս բաղաձայններն են շփականները և մ, ն  
ձայնորդ պայթականները: Ասոնք կը բաժնուին երեք խումբի՝  
ձայնորդ, ձայնեղ, խոլ:

Ձայնորդ կը կոչուին այն բաղաձայնները, որոնց մէջ ձայնը  
աւելի շատ է, քան աղմուկը. ւ, մ, յ, ն, ո, ր:

Ձայնեղ շփականներ են՝ **զ, փ, դ, ւ, վ**, որոնք կ'արտաբեր-  
ւին աղմուկով, սակայն ունին և ձայն:

Խուլ շփականները կազմուած են միայն աղմուկէ՝ **խ, և, շ,**  
**ս, ֆ:**

**Հ** խուլ շփականը կը կոչուի նաև շունչ:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել հետեւեալ բանաստեղծութիւ-  
նը, որոշել անոր մէջ գործածուած սլայթական բաղաձայններոս  
տեսակներն ըստ ձայնային երանդի. մէկ սողի վրայ գրել շնչեղ  
խուլները, երկրորդի վրայ՝ ձայնեղ սլայթականները:

Երբեմն հոգիս աստղի մը բոց  
Եւ թիթեռնի մ'ունէր թևեր.  
Վերջալուսի նըման ամպոց  
Երազնե՛ր, հո՛ւր ճակատս վառէր:

Արդ սառույցներ դառն արտօսքի  
Կը քարանան կուրծիս ներքեւ,  
Եւ բարդը ամպոց սեւաթորմի  
Կ'ուղեն խեղդել սիրտս ու արեւ:

(Պ. Դուրեան)

**Օ** ր ի ն ա կ՝

Շնչեղ խուլ սլայթական՝ **թ:**

Ձայնեղ սլայթական՝ **տ:**

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բանաստեղծութեան մէջ գոր-  
ծածուած բոլոր հնչիւնները խմբաւորել ըստ տեսակներու. նախ  
որոշել ձայնաւորները և դրել մէկ սողի վրայ. ապա բաղա-  
ձայնները խմբաւորել ըստ արտաբերման եղանակի (սլայթական  
և շփական), յետոյ՝ ըստ ձայնային երանդի (շնչեղ խուլ, ձայնեղ  
սլայթական, ձայնորդ, ձայնեղ շփական, խուլ շփական):

ԳԻՇԵՐՆ ԻՋԱԻ

Դիշերն իջաւ անամպ, անհուն,  
Բիւր ըիւրեղէ ի՞նչ նուրբ անուն  
Տալ անուրջի այս սուրբ սլահուն.  
— Ա՛խ, ապրելո՛ւ երջանկութիւն...

Կ'անկանայ նաև հեռակայ,  
Լիճն երազ մ'է, կայ ու չըկայ.

Ճուրի շշունջն է լոկ վըկայ.

— Շշնջելո՞ւ երջանկութիւն:

Վերն հաղար ասող, վարն հաղար լոյս,

Եիսաստուերին մէջ հողեյոյլ

Կը խօսակցին քար, վըտակ, բոյս.

— Ա՛խ, սիրելո՞ւ երջանկութիւն...

Ու կը ձայնէ մատուռն յստակ.

— Սա ծերունի ծառերուն տակ,

Նյս քաղցրութեան մէջ բովանդակ.

Քարանալո՞ւ երջանկութիւն...

(Ռ. Սեւակ)

### Տ. Վ Ա Ն Կ

Վանկ կը կոչուի այն ինչիւնը կամ ինչիւնախումբը, որ կ'արտաբերուի օդի մէկ մղումով:

Վանկ կազմելու համար անհրաժեշտ է ձայնաւոր, որ վանկաբար կը կոչուի Յ ր ի ն ա կ՝ դա-սա-բան բառը կազմուած է երեք վանկերէ, և իւրաքանչիւր վանկը ունի մէկ ձայնաւոր՝ (ա) դա-սա-բան: Կա-տու բառը ունի երկու վանկ, որոնք կը կազմուին երկու ձայնաւորներով՝ ա, ու:

Բառերը կ'ըլլան միավանկ և բազմավանկ:

Միավանկ են մէկ վանկ ունեցող բառերը՝ քար, տուն, հաց, ջուր, մարդ, գործ, շիր, այծ, դառ, Սիս, Վան, Մուշ և այլն:

Բազմավանկ են երկու և անլի վանկեր ունեցող բառերը՝ լծողու, մարտիկ, Հայաստան, Արարատ, տռաքինի, արգարադատ, Երևիկիա, Վաղարշապատ, Ճարտարապետ, մատենադարան, Տիգրանակերտ, յաւիտենականութիւն և այլն:

Վանկերը երկու տեսակ են՝ վանկ և բաց:

Բաց կը կոչուի ձայնաւորով վերջացող (ձայնաւորայտնդ) վանկը՝ սա, նա, դօ-տի, բ-սի, տա-րի, քա-նի, հո-ղի, բա-րի, կա-տու, ա-պա-կի, բա-րե-հո-գի:

Փակ կը կոչուի բազմաձայնով վերջացող վանկը՝ Եփ-րատ, Տիգ-րան, դար-բին, մար-տիկ, դոր-ծիր, ման-դաղ, դեր-ձան, հան-դերձ, դըլ-խարկ, գոյ-նոց, բաճ-կոն, խար-տոց, մըկ-բատ, Խար-բերդ, Մես-րոպ, Տիգ-րիա և այլն:



Նոյն բառին մէջ կրնան գտնուիլ թէ՛ բաց և թէ՛ փակ վան-  
կեր: Օրինակ՝ Ա-րա-րատ և Ա-րա-գած բառերուն վերջին վանկը  
փակ է, իսկ միւսները՝ բաց. յա-ւեր-ժա-կան բառին առաջին և  
երրորդ վանկերը բաց են, իսկ միւսները՝ փակ:

Վանկը կրնայ կազմուած ըլլալ մէկէն մինչև շորս հնչիւննե-  
րէ, նոյնիսկ՝ հինգ, բայց ոչ աւելի: Իւրարանշիւր վանկ կը սկսի  
միայն մէկ բաղաձայնով:

Վանկի վերջաւորութեան կրնայ երկու բաղաձայն ըլլալ. օրի-  
նակ՝ րարճունքներ բառին մէջ իրարու քով երեք բաղաձայններ  
կան, բայց միայն երկուրը (Պք) նոյն՝ միջին վանկին կը պատկա-  
նին, իսկ երրորդը (ն) վերջին վանկին (րար-ձուՆք-ներ):

Հայերէնի մէջ քիչ են այն բառերը, որոնք երեք բաղաձայ-  
նով կը վերջանան. օրինակ՝ վարձք, հունձք, կուրծք, համայնք,  
անցք և այլն:

Սուղ վանկ (զաղտնավանկ). բառի մէջ յաճախ բաղաձայն-  
ներու միջեւ արտասանուող ք-ն սովորութիւն դարձած է չգրել,  
բացի տողադարձի և ստանաւորի պարագաներէն:

Հնչուող, բայց չգրուող Ը ունեցող վանկը կը կոչուի սուղ  
վանկ:

Տողադարձի պարագային՝ տողի վերջը և յաջորդ տողի սկիզբը  
սուղ վանկի ք-ն սրէտք է գրել: Օրինակ՝ Մը-կըր-տիձ, բը-ժըշ-կել,  
գըր-գը-սել, թըր-թը-ւուն և այլն:

Ոտանաւորի մէջ, երբ հարկ ըլլայ, վանկի շահելու համար, սուղ  
վանկի ք-ն կը գրուի:

Օրինակ՝

Իաշտի ճամբու մը վըրան,  
Կամ ըստօրտող լիրան,  
Ուղևորին ժամանման  
Ըստպտող հիւզն ըլլայի:

Գաղտնավանկեր կան յստակ (յըստակ), կօիւ (կըոիւ), նշան  
(նըշան), գլուխ (գըլուխ), մեղր (մեղըր) և այլ բառերու մէջ:

Գաղտնավանկը կէս վանկ կը համարուի:

Այդ կիսավանկը կրնայ գտնուիլ բառի սկիզբը՝ կ(ը)օիւ, դ(ը)-  
լուխ, (ը)ստոր, վ(ը)կայ, կ(ը)բակ, յ(ը)ստակ, բառի մէջ՝ ընկ(ը)դ-  
միլ, մարտ(ը)նչիլ կամ բառի վերջը՝ կարծ(ը)ր, քաղց(ը)ր,  
աստ(ը)ղ, արկ(ը)ղ, մեղ(ը)ր, կայս(ը)ր:

**Վարժութիւն 1.** Վանկատել հետեւեալ բառերը. յաց վանկերը գրել մէկ սիւնակի մէջ, փակերը՝ միւս սիւնակի մէջ.

Ջարդարել, ճառագայթ, գեղեցկութիւն, ճաճանշաւոր, վերագարձ, հորիզոն, պարանոց, լուսամուտ, հաւատարիմ, անտառախիտ, ընթանալ, երջանիկ, սարսուռ, շրթունք, աշակերտ, գաղտնիք, խորհուրդ, շառաշել, յաղթանակ, բարձունք, խաղաղութիւն:

**Վարժութիւն 2.** Զատել միավանկ, երկվանկ, եռավանկ և ւեւելի վանկ ունեցող բառերը առանձին սիւնակներու մէջ.

Քե՛ղ, Հայ լեզու, կը սիրեմ մրդաստանի մը նըման...

Մեր անցեալին թանձրախիտ ստուերներուն մէջ կարծես

Մէջ-մէկ պտուղ՝ քու բոլոր բառերդ ինծի կ'երևան,

Որոնց մէջէն կը քալեմ ու կը քաղեմ դանոնք ես:

(Վ. ԹԼԿԷԱՆ)

**Վարժութիւն 3.** Վանկատել հետեւեալ բառերը.

Գաղտնի, պաշտպանել, բերկրանք, վարձկան, մարդկային, պոռթկալ, երկնային, բարձունենակ, տխրութիւն, պարտկել, շղթայ, ընկղմիլ, տրամութիւն, գամբու, մրրիկ, գրգռել, փաթթուիլ, կտրիճ, ունկնդրել, սարսուալ, փրկութիւն, կղզի, խնգալ:

**Վարժութիւն 4.** Նշանակել հետեւեալ բառերուն սուղ վանկերու ք-ն.

Դրախտ, սղտիկ, պատշգամ, սղտոր, գրտնակ, հրճուանք, փնտռել, փսփսալ, խշրտիւն, գրգռել, բրբրել, մխրճել, մրթմրթալ, թրթոռն, մթնցնել, տրտնջալ:

## ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

### 9. ԲԱՌ

Բառ կը կոչուի հնչիւններու այն խումբը կամ հնչիւնը, որ իմաստ մը կ'արտայայտէ:

*Օրի ն ա կ' աղ, ջուր, զիբ, Բաղք:*

Ասոնք երկու, երեք, շորս և հինգ հնչիւններէ բաղկացած կասկածաբար իմաստներ են, իմաստ ունին, ուստի և բառեր են: Կան նաև մէկ հնչիւնէ բաղկացած բառեր. օրինակ՝ Յակորիկը ուշիմ ու խելօք աշակերտ է: Այստեղ ու, է հնչիւնները բառեր են:

Հնչիւններու պատահական տմէն մէկ խումբ բառ չէ. օրինակ՝ արոս բառ է, քանի որ իմաստ ունի. բայց քոսու, որոս բառեր չեն, որովհետև իմաստ չունին:

Առանց բառի կարելի չէ խօսիլ ու խօսակցիլ, մտերի հաղորդել իրարու:

Հարուստ կը համարուի այն լեզուն, որ բաղմապիսի իմաստներ արտայայտող շատ բառեր ունի:

**Վարժութիւն 1.** Գրել 15 բառ, ցոյց տալ, թէ քանի հնչիւններէ կը բաղկանան անոնք և ինչ իմաստ կ'արտայայտեն:

**Վարժութիւն 2.** Կազմել բառեր հետեւեալ հնչիւնախումբերէն.

*Եդր, նոս, բրդի, ցոլիս, վա, կտարմ, Ամէնր, շմիտ, ցհա:*

### 10. ՀԱՅՆՐԷՆԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Լեզուի մէջ գործածուող բոլոր բառերը միասին բառային կազմ կամ բառապաշար կը կոչուին:

Հայերէնի բառային կազմը հարուստ է: Հազարամեակներու ընթացքին՝ ան հարստացած է բաղմաբի ու բաղմապիսի բառե-

բով, որոնք կ'արտայայտեն մարդոց, անոնց կեանքին և բնական շշխարհի հետ կապուած զանազան զազափարները. օրինակ՝

Ա. Աշխատանքի ու սնտեսութեան վերաբերեալ բաներ՝ արտ, ախօս, սերմ, ցորեն, գործիք, դործել, վարել, բահ, մուրճ, դուրձան, սալ, մանղաղ, դործարան և այլն:

Բ. Մաքու մաքմէի մասեր՝ արտայայտող բաներ՝ աչք, ոտք, բազուկ, ձկոյթ, սրունք, կուրծք, զլուխ, սիրտ, անութ, ուս և այլն:

Գ. Անտանիքի և մաքու կենցաղի վերաբերեալ բաներ՝ տուն, ընտանիք, բնակիչ, մայր, բեռի, հայր, սրդի, պապ, տալ, հարս, կեսուր, կեսրայր, հագուստ, զարդ, արդուկել, սննեակ, բազմոց, դաւիթ, բակ, տնտեսութիւն և այլն:

Հայերէնն ունի մօտ 150 000 բառ:

Մարդկային կեանքի մէջ ամէն մէկ դիւտ, նոր դործիք, իր, երևույթ ու զազափար անմիջապէս անուն կը ստանան: Այդ անունը, իբրև նոր բառ, կը մտնէ լեզուի բառապաշարին մէջ. օրինակ՝ մենք ունինք տիեզերք և նա բառերը, որոնցմէ վերջերս կ'ազմուեցաւ տիեզերանաւ նոր բառը: Նման նորակերտ բառեր են՝ տիեզերազնաց, տիեզերաբաւոր, հրբխակիր, սաւառակ, սաւառնորդ, ինՖիամուլ, հեռուստացոյց, հեռատեսիլ, ձայնասփիւս, հրասայլ, ձայնալեզակ և այլն, որոնք դոյութիւն շունչին ասկէ բանի մը տարի, կամ քանի մը տասնեակ տարիներ առաջ:

## 11. ՄԵՆԵՄԱՍՏ ԵՒ ԲԱԶՄԻՐԱՍՏ ԲԱՌԵՐ

Բառերն առաջացած են ընդհանրապէս որոշ իմաստ մը արտայայտելու համար. օրինակ՝ ձուկ բառը անունն է ջուրի մէջ ապրող կենդանիներու մէկ տեսակին. կեռասը անունն է միրգի մէկ տեսակին. հինգը՝ թիւ մըն է՝ շորսէն աւելի և վեցէն պակաս: Ասոնց նման կարգ մը բառեր միայն մէկ իմաստ կ'արտայայտեն և կը կոչուին մենիմաստ բառեր, ինչպէս՝ ամիս, շուս, ուր, ձիւր, ևս, դուն, ան, մենե, այս, այդ, այն, սա, նա և այլն:

Ժամանակի ընթացքին, երբ լեզուն կը զարգանայ, բառերը իրենց բուն՝ հիմնական իմաստէն զատ, շատ յաճախ կը ստանան նաև նոր իմաստներ. օրինակ, զլուխ բառը, որ սկզբնապէս մարմնի մասի անուն էր միայն, յետոյ ստացած է նաև նոր իմաստներ՝ 1. խելք (զլուխը լաւ կը գործէ). 2. առարկայի մը վերջ մասը (ծառի, լեռան, սանդուխի զլուխ). 3. կտրածն իր (առխի, կազամբի զլուխ). 4. ղեկավար, առաջնորդ (ձեռնարկի մը զլուխ

կանգնելու) 5. զիրքի ամբողջական հատուած (զիրքի զլուխ մը): Կլուխ բառը դեռ շատ ու շատ ուրիշ իմաստներ ունի. զլուխ բառով կազմուած են բազմաթիւ դարձուածքներ՝ վնասաբերական իմաստներով. օրինակ՝ զլուխ տալ (բարեւել), զլուխ բերել (յաջող աւարտել), զլլսէ հանել (մոլորեցնել), զլուխը կատ (բժամիս), զլուխ-գործոց (հեղինակի մը ստեղծագործութիւններուն ամենալաւը) և այլն:

Այդպէս է նաև ձեռն բառը, որ իր բուն իմաստէն դատ ստացած է նաև կարգ մը այլ իմաստներ՝ 1. իշխանութիւն, զօրութիւն (Հայաստան այն ատեն Մեծն Տիգրանի ձեռքին տակ էր). 2. Լանի մը զուգակից իրեր միասին առնուած (ձեռք մը զգեստ) և այլն:

Կլուխ, ձեռն բառերը բազմիմաստ են. Ռազմիմաստ կը կոչուին մէկէ աւելի իմաստներ ստացած բառերը: Հայերէնի մէջ բազմիմաստ բառեր շատ կան. օրինակ՝ աչք, դործ, բան, խօսք, խաղ, փունդ, թուղթ, մայր, հայր, տուն, քար, ջուր, հաց և այլն:

Բառերու բազմիմաստ դառնալը լեզուի բառային կազմի հարստացման միջոցներէն մէկն է:

Հայերէնը բնօրինակ է թէ՛ հորհրդային Հայաստանի և թէ՛ ուրիշ երկիրներու մէջ ապրող հայութեան համար: Համընդանօր է նաև, բնականաբար, հայերէնի բառապաշարը: Միայն շտա սակտաթիւ բառեր ունին իմաստի տարբերութիւններ արեւելաճայ և արևմտաճայ պահանջներով մէջ. օրինակ՝ ձկն ըստ արեւելեան հայերէնի մէջ կը նշանակէ թամուր մը քաշել զկտի իր կողմը, իսկ արևմտեան հայերէնի մէջ՝ թողուլ, որ վար իշխայ, թև արեւելաճայ լեզուի մէջ ալ այս իմաստն ունի (բաժակը ձեռքից ձգեց կտրեց): Ախոյեան բառը արեւելաճայ լեզուի մէջ բնօրինակապէս «մրցորդ»-ի, «հակառակորդ»-ի իմաստ ունի, մինչդեռ արևմտաճայ լեզուի մէջ պահած է իր բուն՝ նախնական իմաստը՝ «նախնորայն, բաջարի». նաև՝ «մրցակից»: Այլն ըստ արեւելաճայ լեզուի մէջ յաճախ կը նշանակէ «ոչ վէշ, բաւական չաւ», նոյնիսկ «չաւ». օրինակ՝ «ինչպէ՞ս էր» հարցման յաճախ կը պատասխանուի «սչինչ», այսինքն «պէշնմ, չաւ եմ». մինչդեռ արևմտաճայ լեզուի մէջ այդ բոսք պահած է իր բուն՝ մքրտական իմաստը:

Այսպիսի տարբերութեամբ բառեր շատ քիչ են: Հայերէնի բառային կազմի ամբողջ հարստութիւնը նախաբանապէս կը դործածուի դրական հայերէնի մեր երկու տարբերակներուն մէջ ալ:

Մ ա Ն Օ Բ Ա Ր Ի Կ Ն. Հայերէնի դարգացման բնացոյցի կարգ մը բառերու իմաստը փոխուած է. օրինակ՝ վաստակ դրարարի մէջ (հին հայերէն) սրողութիւն, խոնջութիւն, պառապանք կը նշանակէ, իսկ այժմ՝ «աշխատանքի յարձք, շահ»: Ապրիլ դրարարի մէջ կը նշանակէ «փրկուիլ, ազատիլ», իսկ այժմ՝ «հեանք ունենալ, ոչ ըլլալ»: Սասկիլ (սասակիլ) դրարարի մէջ կը նշանակէ «չարաբանութիւն մեղսել», իսկ այժմ՝ «անասունի մեղսելը», և միայն անարգական իմաստով կը օգտագործուի նաև մարդոց համար:

**Վարժութիւն 1.** Առանձին սիւնակներու մէջ տալ հետեւեալ նոտանաւորին մենիմաստ և բազմիմաստ բառերը. յետոյ ցոյց տալ բազմիմաստներու նախ հիմնական՝ բուն, և ապա՝ երկրորդական իմաստները.

Գիշերն է լուռ. լիճը տրտում, Հեռուէն,  
Ճաճանչներու, փրփուրներու պէս աղուոր,  
Քնացող ջուրին երեսին վրայ մեղմօրէն  
Երկու կարասի կը սահին լուռ, մենաւոր:

Իրենց մարմինը քնքուշ է, զեղեցիկ.  
Իրենց թեւերն արծաթակերտ, ձիւնադէս  
Ու մարմարի իրենց վիզը սըլացիկ՝  
Երազային տաճարներու սիւնին պէս:

Կը մօտենան անոնք իրար մեղմօրէն  
Ու կտուցնին իրար կու տան ուղղակի,  
Այնպէ՛ս ինչպէ՛ս ո՛չ մի շրթունք տակաւին,  
Այնքա՛ն սիրով չէ՛ մօտեցած շրթունքի:

(Ռ. Սեւակ)

**Վարժութիւն 2.** Գտնել վեց բազմիմաստ բառեր և ցոյց տալ անոնց հիմնական և երկրորդական իմաստները:

## 12. ԲՄ.ՈՒ ՏԵՄԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ ԻՒ ՁԵՒԻ

Բառերը, ըստ իրենց իմաստին և դրաւոր ձևին, կ'ըլլան նոյնանիշ, նոմանիշ, հականիշ և նոյնանուն:

1. Նոյնանիշ են այն բառերը, որ ճիշդ նոյն իմաստն ունին. օրինակ՝ արդ, հիմա, այժմ. պատ, որմ. հռչակ, համբաւ. սլօշ, ազի. ատամ, ակոյս. աւաղ, ավսոս. այտ, բուշ և այլն:

2. Հոմանիշ են այն բառերը, որոնց իմաստները շատ մօտ են իրարու, բայց նոյնը չեն. օրինակ՝ վախ, երկիտղ, ան, սոսկում, սարսափ. ասոնք իրարմէ կը տարբերին իմաստի նրբերանգներով կամ աստիճանումով: Վախէն և երկիտղէն աւելի ուժեղ զգացում կ'արտայայտեն ան և սոսկում բառերը: Իսկ սարսափ-ը ա՛լ աւելի ուժեղ է: Նրբերանգներու պատճառաւ այդ բառերը չեն կրնար գիրար փոխարինել:

Հոմանիշ բառեր են՝ խնդրել, աղաչել, աղերսել, պաղատիլ, րախանձել. նեղանալ, բարկանալ, ջղայնանալ, բորբոքիլ, զայրանալ. ծեր, ալետր. աղքատ, շունետր, շփատր, տնանկ, մագ, ներ, վարս, ծամ, գէս. յստակ, զուլալ, ջինջ, վնիտ, ականակիտ:

**Վարժուրիւն 1.** Հետեւեալ հատուածին նոյնանիշ բառերն առանձին գրել, հոմանիշները՝ առանձին և ցոյց տալ վերջիններուն իմաստային նրբերանդները.

Մարկոսեան երաժիշտի մեծ հռչակ կը վայելէր: Միաժամանակ լաւ ուսուցիչ էր, երաժշտութեան սքանչելի դասատու մը:

Մարկոսեանի խստութեան համրաւը տարածուեցաւ ամբողջ քաղաքին մէջ: Անիկա խիստ ուշադիր էր, հոգատար, բայց նոյն ատեն կը ընդհանար, երբ կեղծ հնչիւն մը արձակէր դաշնակը, կը զայրանար, կը բորբոքէր, երբ մէկը առանց նախապէս աշխատանք թափելու ներկայանար դասին:

Մարկոսեան տնանկ ու խեղճ մարդու մը դաւակն էր, բայց անոր երաժշտական ընդունակութիւնները չվրիպիցսն բարի մարդոց աչքերէն:

**Վարժուրիւն 2.** Գրել տասնական նոյնանիշ և հոմանիշ բառեր, բացատրելով վերջիններուն իմաստներու մօտիկութիւնն ու նրբերանդները:

3. Հակահիշ են այն բառերը, որոնք իրարու հակադիր իմաստներ կ'արտայայտեն. օրինակ՝ բարձր-ցած, լաւ-գէշ, աշխատասէր-ծոյլ, մաքուր-աղտոտ, քաղ-վախկոտ, արագ-դանդաղ, շատ-քիչ, լոյս-մութ, բարեկամ-քնամբի և այլն:

4. Նոյնաճուն են այն բառերը, որոնք նոյնն են ձևով, բայց տարբեր իմաստներ ունին. օրինակ՝ այր կը նշանակէ թէ՛ մարդ (ան կորովի այր մըն էր) և թէ՛ քաղաք (այրին մէջ տեղաւորուած էին 20—25 հոգի): Փող կը նշանակէ թէ՛ դրամ (յատկապէս արեւելահայ լեզուի մէջ. «ան շատ փող կը շահի»), թէ՛ խողովակ (ղինուորը մաքրեց իր հրացանին փողը) և թէ՛ նուազարանի տեսակ մը (հնչեց փողին ձայնը):

Նոյնաճուն են՝

վիով (կաշիէ սպարան), վիակ (տեսակ մը ծովային կաթնասուն),

ակ (աղբիւրի ակը), ակ (մատանիի ակը).

զագ (երկայնութեան շափ), զագ (մետաքսէ նուրբ, կիսաթափանց կտոր), զագ (շատ նօսր դաղային մարմին), զագ (փշոտ լեռնային թփիկ), զագ (բոժոժէ ստացուած մետաքս).

կամ (իրրեւ շողկապ), կամ (կամենալ բային արմատը), կամ  
(երկրագործական գործիք մը)։

կուզ (փոքր կենդանի մը), կուզ (սասպատ)։

**Վարժութիւն 1.** Գտէ՛ք հետեւեալ բառերուն հականիշները.

Գեղեցիկ, ամուր, դառն, վերեւ, ուժեղ, ձախ, դիշեր, շար,  
լաւատես, փորձուած, սուր, արշալոյս, մօտենալ։

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերէն ամէն մէկը խօսքի մէջ  
գործածել տարրեր իմաստով, իրրեւ նոյնանուն.

Ակ, ծուխ, փոխի, փող, սուր։

**Վարժութիւն 3.** Հետեւեալ ոտանաւորին ստորագծուած բառե-  
րուն բով նշանակել անոնց հոմանիշները (օրինակ՝ երգ, տաղ,  
բերթուած, բանաստեղծութիւն, ոտանաւոր). այդ հոմանիշ բառե-  
րով կաղմել նախագաստութիւններ.

#### ՄՐՐԻԿՆԵՐՈՒ ՆՐԳԸ

Ես կը սիրեմ մրրիկներու երգը հընչուն,  
Անոնց ձայնին շեշան անողոք ու շառաչուն,  
Կատաղութիւնն անոնց ոիթմին արագընքաց,  
Հողմաւալարար արշաւն անոնց խենք ու անսանձ։

Ես կը սիրեմ մրրիկներու շունչը հզօր  
երկինքներու դէմ ծառացող և անագօր,  
Քաղաքներու մազէն բռնող ձևերքն անեղ,  
Եւ բզկաւել մինչեւ անգամ թաթն առնադեղ։

Ես կը սիրեմ մրրիկներու աղմուկը թունդ,  
Կը ցնցուի սրմէ կարծես ողջ երկրագունդ,  
Ես կը սիրեմ մրրիկներու բմբուստ ողին,  
Երգերու պէս անոնց ուժը զոտ, մահադին։

(Յ. Գոյումենեան)

#### 13. ԲԱՌԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Բանակաղմութիւնը կ'ուսումնասիրէ բառերու կաղմութիւնը  
(յօրինուածք)։

Բառերը կաղմութեամբ կը տարբերին իրարմէ։



Նոր բառերը կը կազմուին երկու միջոցներով՝ բարդութեամբ և ածանցմամբ:

Բառերը կազմութեամբ կ'ըլլան՝ պարզ կամ արմատական, բարդ, ածանցաւոր (պարզ ածանցաւոր և բարդ ածանցաւոր):

Պարզ կամ արմատական են այն բառերը, որոնք կազմուած են միայն արմատէ. օրինակ՝ բար, սուն, հող, մարդ, ջուր, շուն, օդ, հաց, սեղան, դաւթ և այլն:

Արմատը բառի երկնական իմաստն արտայայտող այն մասն է, որ բաղադրիչ մասերու չի բաժնուիր ստանց իր իմաստը կորսնցնելու:

Օրինակ՝ ձայնաւոր բառը կազմուած է ձայն արմատէն և ւտոր մասնիկէն: Այս երկու մասերէն՝ ձայն-ը այլեւս մասերու չի բաժնուիր և բառին հիմնական իմաստը կ'արտայայտէ (կրնայ ինքնուրոյն ալ գործածուիլ): Աւոր-ը նոյնպէս իմաստաւոր մասերու չի բաժնուիր, բայց և հիմնական իմաստ չ'արտայայտեր և ստանձին չի գործածուիր: Ուրեմն ձայն-ը արմատ է, իսկ ւտոր-ը՝ մասնիկ, որ ձայն արմատին կցուած է նոր բառ կազմելու համար:

Կը սեսնուի թէ արմատը կը գործածուի ոչ միայն իրրեւ ինքնուրոյն բառ, այլև կը մտնէ ուրիշ բառերու կազմութեան մէջ:

Օրինակ՝ կող արմատը թէ՛ ստանձին բառ է և թէ՛ այլ բառերու բաղադրիչ՝ կողային, կողեղէն, կողոտ և այլ բառերու մէջ:

Սակայն կան արմատներ ալ, որոնք առանձին չեն գործածուիր, այլ ի յայտ կու գան միայն բառերու կազմին մէջ: Օրինակ՝ աշխատ, կարդ, հաւն, դն, տանջ, խորն և այլ արմատներ ստանձին բառ չեն, սակայն զանազան մասնիկներով բառեր կը կազմեն. աշխատիլ, կարդալ, հաւնել, դնել, տանջել, խորհիլ և այլն:

Արմատը իրմով կազմուած բառերուն մէջ կրնայ հնչիւնափոխուիլ: Օրինակ՝ ջրային, մրգաւէտ, սնամէջ, զնդակ բառերուն մէջ ջուր, միւրդ, սին, զունդ արմատները գործածուած են ջր, մրդ, սն, զնդ հնչիւնափոխուած ձևերով:

Բառային կազմի հարստացման համար շատ մեծ է արմատներու կարեւորութիւնը: Արմատներէն կամ արմատական բառերէն կը կազմուին նոր բառեր. օրինակ՝ բարձր արմատական բառէն կազմուած են՝ բարձունք, բարձրագոյն, բարձրաբերձ, բարձրահայնաց, բարձրախօս, բարձրաձայն, բարձրակերտ, բարձրազուխ, բարձրաբնակ, բարձրագոյն, բարձրագիր, բարձրանալ և շատ այլ բառեր: Գիւր արմատէն կազմուած են՝ գիրք, գրիչ, գրադարան,

գրաւոր, գրաշար, գրաւլաճառ, գրատուն, գրող, գրական, գրակա-  
նութիւն, պատմագիր, գրագիր, ձեռագիր, գրասէր, գրաբեր, գրա-  
ճանաչ, գրագէտ, գրավարժութիւն, վերնագիր և շատ այլ բառեր:

Հայերէնն ունի 11.000-է աւելի արմատներ: Ասոնց հիման  
վրայ շարունակ կը կազմուին, ըստ պահանջքի, բազմաթիւ նոր  
բառեր, հարստացնելով հայերէնի բառապաշարը՝ բառագանձը:

**Վարժութիւն 1.** Գտնել հետևեալ բառերուն արմատները.

Աշխատաւոր, ձմեռնային, բարձրութիւն, բարկութիւն, դանդ-  
բահեր, դիշերային, դանդաղկոտ, դիմակ, դեղնուց, զօրաւոր, դար-  
մանալի, թողութիւն, թեւաւոր, թարմացուցիչ, թփուտ, ժամանակա-  
ւոր, անժամանակ, անիրաւ, իմաստուն, լեռնական, խառնուրդ:

**Վարժութիւն 2.** Այս հատուածէն ընտրել պարզ արմատական  
բառերը.

Կիսանքի նաւակն հետը շթողուց իր ետին,  
Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան,  
Հին երազներս ամսերու պէս կ'անհետին,  
Տիշատակն ալ կ'անցնի երդի մը նման...

Հողիս սակայն կը յիշէ քեզ,  
Դուն, ծաղկաւէտ զիւղիս ճամբան,  
Ուր քալէինք դառնուկս ու ես,  
Դէպի պուրակն ու բուրաստան,  
Անմեղութեան երազին պէս:

Ու քովիկէդ դողդողագին  
Կը սահէր ջինջ, աղուոր առուն,  
Ու երթ կամուրջին ու մերթ մարդին  
Տակ պահուելով կ'երթար հեռուն,  
Ամայութեան իրրեւ ողորն:

Բարակ, նիհար քանի մը սիւղ,  
Կը գատուէին վտիտ բունձէդ,  
Մին կը գիմէր դէպ անշուք զիւղ  
Կը տարածուէր, կ'ըլլար անհետ,  
Բոլորելով խրճիթն ու հիւղ:

(Ռ. Որբերեան)

## 14. ԲԱՐԳ ԲԱՌԵՐ

Հեղուի բառապաշարի հարստացման միջոցներէն մէկն ալ բարդ բառերու կազմութիւնն է: Բարդման միջոցին երկու կամ ւեւիկ արմատներէ կամ բառերէ կը կազմենք նոր բառ՝ նոր իմաստ ւորայայտելու համար:

Գիրք և տուն բառերէն կազմուած է զբառուն բառը, որ կը նշանակէ զիրեւր վանառելու շէն՛: Ջուր և հոր բառերէն կազմուած ջրհոր բառը կը նշանակէ ջուր սլառունակող հոր:

Բարդութեան շնորհիւ կրնանք արտայայտել նոր հասկացութիւններ, իմաստներ:

Հայերէնի բարդ բառերը կ'ըլլան իսկական և անիսկական:

## 15. ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹԻՒՆ

Իսկական կը կոչուին այն բարդ բառերը, որոնց բաղադրիչները կորսնցուցած են իրենց բառային ինքնուրոյնութիւնը և միասին մէկ իմաստ կ'արտայայտեն:

Օրինակ՝ տնանս, բնագէտ և նման բարդ բառերու մէջ ա՛ն, տնս և բն, գէտ այլևս ինքնուրոյն բառեր չեն և միայն բարդութեան մէջ իմաստ կ'արտայայտեն:

Կան շատ բարդ բառեր, որոնց մէջ բաղադրիչները բառի տեսք ունին. օրինակ՝ հացատուն բառին մէջ՝ հաց և տուն: Բայց եթէ այդ բաղադրիչներն իրարմէ անջատենք, բարդութեան իմաստը կը վերնայ (հաց և տուն իրարմէ անջատ՝ այլևս չեն նշանակիր հաց սլառատելու՝ րխելու սենեակ):

Իսկական բարդութեան մէջ բաղադրիչները կրնան հնչունափոխուիլ: Օրինակ՝ զլխարկ բառին մէջ առաջին բաղադրիչը զլխ ձեւով է, որ զլուխ բառին հնչունափոխուած ձեւն է: Այսպէս են նաև ջրկիր, հրշէջ, դռնբաց և այլն:

Իսկական բարդութեան բաղադրիչները ընդհանրապէս իրարու կը կաողուին ա յօդակապի միջոցաւ: Օրինակ՝ մարդասէր, փառատօն, հայրենատենչ, ձայնապնակ, ծիծաղադէմ, դրաւաճառ, արծաթագոյն, տնաշէն, երկրագործ, լուսասփիւռ, խորախոր, հեղասահ և այլն:

Առաջին բաղադրիչ բառի վերջի իւ-ն ա յօդակապին հետ միանալով կու տայ եա, որ կը հնչունափոխուի ե-իւ Օրինակ՝ այդիւսագործ՝ այդեգործ. հողիւս-շահ՝ հողեշահ. սրդիւս-սէր՝ սրդեսէր և այլն:

Եթէ Երկրորդ րազադրիչը ձայնաւորով սկսի, յօգակապ չի գրուիր: Օրինակ՝ ծովեզօ, ձկնօրս, գետափ, գործիմաց, կենսուրախ, փակուպի, նորլնծայ և այլն:

Իսկական րարդ բառերու մէջ ընդհանրապէս առաջին րազադրիչը երկրորդին լրացումն է: Օրինակ՝ հողագոյն կը նշանակէ հողի գոյն (ունեցող), գրապանարան՝ գիրհերու պանարան, դիմագիծ՝ դէմքի գիծ, մարդասէր՝ մարդ սիրող, լայնարիկունք՝ լայն բիկունք (ունեցող), արագաշարժ՝ արագ շարժող, բարձրարիչ՝ բարձր քոչող և այլն:

Սակայն կան րարդ բառեր, որոնց մէջ երկրորդն է առաջինին լրացումը: Օրինակ՝ Լիջագետք՝ գետերու միջև, մայրաճաղակ՝ քաղաքներու մայր, մարդաշատ՝ շատ մարդ (ունեցող), միջօրէ՝ օրուան մէջտեղը և այլն:

Այս տեսակի բարդութիւնը հայերէնի ողիին հարազատ չէ՝ օտարամուտ է (յունարէնէ), հնուց մնացած, բայց սովորական պարձած:

Կան բարդ բառեր ալ, որոնց մէկ րազադրիչը միւսին լրացումը չէ: Օրինակ՝ Կիսաբանչ (հիանալի և սքանչելի), վեճապահած (վեճ և պանծալի), մեծամեծ (շատ մեծ), նորանոր (շատ նոր):

**Վարժութիւն 1.** Գտնել հետեւեալ հասուածին մէջ իսկական բարդութիւնները և որոշել րազադրիչները.

Իրիկնալերջը դալկոտ տերեւի մը պէս հողմալար անցեր էրացաստանին մէջ գիշերը թեւարաց կ'ընկողմանի. դաղջ, բուրումնացան, նազելի գիշերը: Աշխէտ զամբիկս նիւսը կը թօթիէ ու քիթվալով կ'անցնի աչքստանին մէջէն, ուր խաղողի ղզլխիչ բոյրը, գինիին նախբրդանքը, ու ցորեկուան արեւին եզկ շոգոլին կը բարձրանան:

Հնոաստանին մէջ հարսենի, գեղանի լեռը նստեր է տարփաանելիկ շարժուծներով, մշուշի տարտամօրէն յոգնաթոյր քցափ մը ուն ի վար կ'իջնէ. դոյզ մը ծառեր թխլիկ դաստակներու պէս արեւակէղ իրաննին կ'երկարեն, և իրենց տերեւուտքը կը բացուի. լերան գողար ափն է ան, ուր ահա լիալուսինը կը զետեղուի, շատագոյն, նրբարուեստ հողմահարի մը պէս՝ ուր հետզհետէ կ'երփներփուի սսկեթոյր, խնկաթոյր, քրքում ու արծաթ:

(Մ. Մեծարեւց)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերով կազմեցէ՛ք իսկական բարդութիւններ.

Մեղր և համ, տերեւ և խիտ, լի և առատ, լի և յոյս, դիւր և վառ, միշտ և մպիտ, հազիւ և գլխտ, հող և գոյն, գլխտ և տուն, ազատ և սէր, ծնող և սէր, ազնիւ և զարմ, ծով և ձի, ջուր և հոր, դուռն և բաց, արագ և հոսիլ, բարի և զործ, առաջ և ընթանալ, ծանր և շարժիլ, արեւ և մտնել, վայր և իջնել, ուրախ և դէմք, ուղիղ և գրել:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ բառերէն ընտրեցէ՛ք բարդութեան բաղադրիչներ և կազմեցէ՛ք բարդ բառեր.

Դար, ինձ, լեռ, ջուր, հատ, գարի, վաճառ(ել), թիկունք, լոյս, ննջ(ել), փող, շրջան, առիւծ, շղթայ, անցք, պտուղ, տուն, աթոռ, սովորութի(ւն), սննեակ, կապ(ել):

### 16. ԱՆԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆ

Անիսկական կը կոչուին այն բարդ բառերը, որոնք կը կազմուին երկու կամ աւելի բառերու յարադրմամբ կամ կցումով:

Օրինակ՝ ոչինչ, ելեւէջ, ցիրուցան, պղտիկ մնալ, թոյլ տալ և այլն:

#### Ա. ՅԱՐԱԳԻՐ ԲԱՐԴՈՒԹԻՒՆ

Յարագրութիւնը երկու անկախ բառերու կապակցութեամբ կազմուած բարդութիւն մ'է: Յարագիր բարդ բառերու բաղադրիչները իրարմէ անջատ կը դրուին:

Յարագիր բարդ բառերու բաղադրիչները կրնան ըլլալ՝

Ա. Երկուքն ալ անուն խօսքի մաս՝ տուն ու տեղ, օր ու արեւ, րեւ ու քիկունք, գաւ ու կրակ, ծուռ ու մուտ, կազմ ու պատրաստ, դուռ ու դրկից և այլն:

Այսպիսի անուանական յարագրութեան բաղադրիչները երբ անշաղկապ են, կը դրուին միութեան գծիկով՝ դուռ-դրկից, տուն-տեղ, սեւ-սեւ, բարդ-բարդ, խոր-խոր, ծանր-ծանր, ազմուկ-շառաջ և այլն:

Բ. Առաջին բաղադրիչը՝ անուն, երկրորդը՝ բայ. ձեռք բերել, ձայն տալ, երես առնել, խորհուրդ տալ, վերջ տալ, ովստ ընել և այլն:

Գ. Երկու բաղադրիչներն ալ բայ. կտրել անցնիլ, երբալ գալ, առնել անցնիլ, մտնիլ ազատիլ, հագուիլ սնուիլ, եփել թափել, պահել պահպանել և այլն:

Յարագիր բարդութիւնը կը հռչակուի իբրեւ մէկ բառ, և հռչակական վերջաւորութիւնը կը դրուի երկրորդ բաղադրիչին վրայ՝ *Օրինակ՝ օր ու արեւ, օր ու արեւի, օր ու արեւէ և այլն:*

Բայական յարագիրները կը խոնարհուն են երկու բաղադրիչով միասին: Օրինակ՝ պահեց պահպանեց, մեռաւ ազատեցաւ, զնայց եկաւ:

Յարագիր բարդութիւնները կրնան դառնալ կցական. *ինչպէս՝ օր ըստ օրէ և օրքստօրէ, շարդ ու փշուր և ջարդովիշուր և այլն:*

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածին մէջէն դտնել յարագիր բարդութիւնները և տեսակատրել երկու սինականերու մէջ առաջին սինակին մէջ դրել անուններով կազմուած յարագիրները՝ երկրորդ սինակին մէջ՝ բայական յարագիրները.

#### ՄԵՐ ՇՈՒԿԱՆ

Խանութներու շարքէն՝ ամենէն առաջ աչքս կը գրաւէր հողէ ամաններու խանութը, ուր, իրարու քով, անխօս մտերմութեամբ մը շարուած էին մեծ ու սղօտիկ սլուտուկներ և բզուկներ՝ լայնափոր և բաց-կարմիր: Տարիքն առած, կոնակը ծուռ մարդ մը՝ ծխամորճը միշտ բերանը՝ կը նստէր հոն կիսաստուերին մէջ, որ քայլ առ քայլ կը թանձրանար... Քայլ մը անդին երկաթագործին աշխատանոցը իր տախտակէ միացած փեղկերը կը բանար լայն-լայն՝ Վարպետը, թուս ու մռայլ դէմքով հսկայ մը, կաշիէ գոգնոց մը կապած, մեծկակ ունելլով մը հնոցին հրարորը փորէն դուրս կը բերէր երկաթի կաս-կարմիր կտոր մը... Սափրիչը ոչ միայն մազ ու մօրուք կը յապաւէր կամ կ'ածիլէր, այլ նաեւ ըծիշկի, ակռայ բաշողի և նոյն ատեն դեղագործի դեր կը խաղար:

Շուկային մէկ ծայրը, միս-մինակ, քէնոտ առանձնութեան մը մէջ կը կենար թաղքեղործին խանութը:

Շուկային ամենէն մնայուն ու հաւասարիմ ընակիչները շուներն էին: Անոնք՝ աղատ համարձակ՝ խանութներուն մօտերը կը դեղբեթին, երբեմն կանդ կ'առնէին մսավաճառին խանութներուն կամ փուռին առջեւ:

(Բ. Նուրիկեան)

**Վարժութիւն 2.** Կազմել յարագիր բարդութիւններ հետեւեալ բառերով.

Նո, վար, վեր, առաջ, ետ, խոյս, մէջ, սլատ, դէմ, կենալ, իյնալ, դալ, տալ, բերել:

Կցական կը կոչուին այն բարդ բառերը, որոնք կազմուած են երկու բառերու կցումով:

*Օրինակ՝ այսօր, այնչափ, նաև, ոչինչ, ամենուրեք, ելևէջ և այլն:*

Կցական բարդութիւններու մէջ կցումը կը կատարուի՝

**Ա. Եւ, ու** շաղկապներով՝ ցիրուցան, ասուլիս, եռուղև, քարուքանդ, սուսուփուս, առևտուր, ահուգող, ախուլախ, տարուբերել, որևէ, ինչևէ, ինչևիցէ, յարեմման, սուտումուտ և այլն.

**Բ.** Նախդիրներով՝ խառնիխտուն, սարնիվեր, սլատնիվեր, միառմի, օրըստօրէ, հետզհետէ, զլխիվայր, զառիվայր, զատիվեր, մէկէնիմէկ և այլն.

**Գ.** Առանց շաղկապի՝ ամենուրեք, այսինքն, թերևս, նաև, այլևս, կէսօր, նոյնքան, որչափ և այլն:

**Վարժութիւն 1.** Հնգօրինակիւ հետեւեալ հատուածներուն կցական բարդութիւնները և բացատրել անոնց կազմութիւնը.

**Ա.** Այս վերադարձը վարի ճամբէն եղաւ. ամբողջ կարաւանը մեր կողմի կառքերուն, երաժշտութեան, երգի, խնդալներու խաղացիչ ժխորով մը ու շորս դիէն արձակուած հրթիռներու մէջէն, ծանր ծանր կը քալէ խորտուրորտ ուղիին համեմատ ելևէջելով: Մութ է շորսդիսիս. հսկայ ծառերուն շուրջ վերահաս գիշերին սևութեամբը կը թանձրանայ:

Ես Մարիկին քովն եմ ու կառքէն իջած՝ հետիտան կ'երթանք երկուքնիս քիչ մը աչքեւէն, ու ետևնուս կը լսեմ էրկանը ձայնը որ այդ միջոցին իր առևտրական մէկ ճարտարութիւնը կը բացատրէ քովի մարդուն:

(Գ. Զօնրապ)

**Բ.** Յամբարայլ և հանդիսաւոր դնացքով՝ ամէն առաւօտ աշուղը կը յառաջանայ թաղին մէջէն: Անիկա կը յառաջանայ իր բոլոր անձին պատկառելի խաղաղութիւնովը, և իր շրթունքներէն երգը կը հոսի աւելի անուշ, աւելի ճկուն: Հեռաւոր և տարաշխարհիկ գոռուանքի մը յիշատակն էր, որ ձայնը կը գողգողացնէր յասմիկի թոսիին ներքև, և անոր նուազկոտ ելևէջները, բեկբեկ հեծկըլտոցներու սիւս կը ստուերէին անուշ աչքերը երազկոտ աղջիկներուն, պատշգամներուն վրայ:

(Զ. Նսայեան)

**Վարժուրիւն 2.** Կազմել կցական բարդութիւններ հետեւեալ բառերով.

Նախ, ելք, ութսուն, նոյն, այն, որ, քան, մօտ, վեց, իսկ, շափ, պէս:

### 17. ԱՆԱՆՑԱՒՈՐ ԲԱՌԵՐ. ԱՆԱՆՑ

Առան մասնիկը զնկելով դաս, վարժ, սառն արմատներուն վերջը՝ կը ստանանք դասաբան, վարժաբան, սառնաբան բառերը: Ան մասնիկը աւելցնելով տուն, գիր, երևոյթ, քեռանկաւ արմատներուն կամ բառերուն սկիզբը՝ կը կազմենք անտուն, անգին, աներեւոյթ, անքեռանկաւ բառերը:

Ինչպէս վերի օրինակներուն մէջ կը տեսնենք, ածանցները կամ մասնիկները կրնան դրուիլ թէ՛ արմատի (դաս, վարժ, սառն, տուն, գիր), թէ՛ անծանցաւոր բառի (երևոյթ) և թէ՛ բարդ բառի (հետանկաւ) վրայ:

Ածանց կը կոչուի այն մասնիկը, որ դրուելով արմատի մը կամ բառի մը վրայ՝ ուրիշ իմաստով նոր բառ մը կը կազմէ անոնցմէ:

Ածանց ունեցող բառերը կը կոչուին ածանցաւոր:

Ածանցները երկու տեսակ են՝ նախածանց և վերջածանց:

### 18. ՆԱԽԱՄԱՆՑՆԵՐ

Նախածանց կը կոչուին բառերու սկիզբը դրուող ածանցները:

Նախածանցները երկու տեսակ են՝ ժխտական և ոչ-ժխտական: Ժխտական նախածանցները դրուելով բառի մը սկիզբը՝ ժխտական իմաստ կու տան անոր:

Ժխտական նախածանցներն են՝

**Ա՛ն** — անտուն, անբան, աններելի, աննկուն.

**Ապ** — ապերախտ, ապուշ, ապաշնորհ.

**Գժ, տժ** — դժգոհ, դժբախտ, տժգոյն.

**Տ** — տհաս, տղիտ, տկար.

**Չ** — չկամ, չտես, չունենոր:

Ոչ-ժխտական նախածանցներն աւելի շատ են. ատոնցմէ են՝ **Արտ** (դորս) — արտասահման, արտագրել, արտասանել, արտագաղթ, արտասովոր.



**Գեր** (բարձր, վեր) — գերբնական, գերմարդկային, գերակըշտակ, գերզգայուն.

**Ենթ** (տակը, տակի, վարի) — ենթասպայ, ենթակայ, ենթադրել, ենթարկել, ենթամնայ.

**Բնդ** (տակ, ներս) — ընդդժել, ընդունիլ, ընդգրկել, ընդունակ, ընդհանակ, ընդօրինակել.

**Հակ** (հակառակ) — հակահարուած, հականիւում, հակագրոհ, հակաճատել, հակասել.

**Համ** (ամբողջ, հանութ, բոլոր) — համապումար, համաշխարհային, համամոզողութեան.

**Համ** (նոյն, միևնոյն) — համաձայն, համալեզու, համամիտ, համաքաղաքացի.

**Մակ** (վրայ) — մակերևույթ, մակադրել, մակերես, մակցիբ, մակրայ.

**Ներ** (ներս) — ներդադիթ, ներթափանցել, ներարկել, ներձժել.

**Պար** (շտրջ) — պարայիծ, պարպայլ, պարտեակել, պարբերութիւն.

**Վեր** (հորէն) — վերսկսիլ, վերլուծել, վերընտրել, վերակազմել, վերաշինել.

**Տար** (տարրեր, ալլ) — տարօրինակ, տարայիր, տարակարծիք, տարաշխարհիկ, տարատեսակ.

**Փոխ** (փոխարէն) — փոխհասուցում, փոխադարձ:

**Վարժութիւն 1.** Եւրաքանչիւր նախածանցով կազմել մէկերկու բառ և զորժածել նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Որոշել նախածանցն ու արմատը հետեւեալ բառերուն մէջ.

Գերյոզնութիւն, շիտական, պարփակել, արտահանել, ներգրակել, ընդունելութիւն, ներփակ, հակաթոյն, ներդրում, հակադիտական, հակադարձ, անփորձ, հակամարդկային, անօրինութիւն, դերաճիլ, համամարդկային, ապօրէն:

## 19. ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

Բառի մը կամ արմատի մը վերջը դրուող ածանցը կը կոչուի վերջածանց:

Հայերէնը վերջածանցներով շատ ակնի հարուստ է, բան նախածանցներով: Մանօթանանք անոնց մէկի մասին:

**Ակ, իկ, ուկ** (նուազական կամ փաղաքշական խմատի համար) — դռնակ, տնակ, ձորակ, խողանակ, ձկնիկ, մանկիկ, ուլիկ, ըլլրիկ, մայրիկ, գառնուկ, մանչուկ, հորթուկ, ձագուկ.

(Ա) **բար** (պէս, ձեռով, իրեն) — քաջաբար, հայրաբար, բարեկամաբար, աստիճանաբար.

(Ա) **գոյն** (ածականներու համեմատութեան աստիճան կը կազմէ) — լուսագոյն, մեծագոյն, բորձրագոյն, նորագոյն, դառնագոյն.

**Ական** (վերորերևալ, յատուկ) — եղբայրական, մայրական, մանկական, նկարչական, բանուորական, հայկական.

**Այսն** (վերաբերեալ, յատուկ) — ջրային, մամուռային, հիւսիսային, եթերային, սղպային, մարտիային, ժողային, հրաբրխային.

(Ա) **պէս** (ինչպէս՝ (ա) բար) — պարզապէս, վերջնականապէս, կանոնաւորապէս, փառաւորապէս. (նաեւ՝ տուժով, տեսակէտով) — նիւթապէս, բարոյապէս, տնտեսապէս, մտաւորապէս.

**Ատ** (կարած) — պոչատ, կիտատ, քնատ, միջատ, թեւատ.

**Եայ** (բանէ մը կազմուած, շինուած ըլլալու իմաստ կ'արտայայտէ) — ազակեայ, երկտթեայ, փայտեայ, ռսկեայ, արծաթեայ, բրդեայ. (նոյն վերջածանցին հնչիւնափոխուած ձևն է՝ Է. փայտեայ՝ փայտէ):

**Ենի, անի** (կը կազմէ ծուկրու տնուններ, ինչպէս և կ'արտայայտէ բանի մը վերաբերութեան իմաստ) — վարդենի, թթենի, ստոճենի, նշենի, եղբեւանի. հայրենի, մայրենի, վայրենի.

**Իչ** (գործողութիւն կատարողի, երբեմն ալ գործիքի իմաստ կ'արտայայտէ) — երգիչ, նկարիչ, տաւցիչ, հսկիչ, ձուլիչ, քննիչ, գործիչ, կիզիչ, բրիչ, զրիչ, սուլիչ, փերիչ.

**Ոտ** (զրան կամ մէջը բան մը ունեցող) — իւղոտ, ալիւրոտ, փուշոտ, հողոտ, սղտոտ.

**Ութիսն** (կը կազմէ լատիւթեան իմաստ ունեցող դուրսեաներ) — բարութիւն, ազնուութիւն, լաւութիւն, քաջութիւն, մեծութիւն, ազատութիւն, խաղաղութիւն.

**Ցի, ացի, եցի** (տեղացի ըլլալը կը նշանէ) — դիւղացի, գաշաեցի, լեւնցի, քաղաքացի, հայաստանցի, երեւանցի, սասունցի, ղէլթանցի, պսլտցի, խարբերցի.

**Իոր, աւոր** (ունեցող, կրող) — ձիաւոր, ձայնաւոր, պոչաւոր, գունաւոր, արհեստաւոր, բանւոր, շերտաւոր.

**Օրէն** (ինչպէս՝ (ա)բար) — ազնուօրէն, վհահոնձօրէն, անկեղծօրէն, մտկամօրէն, անդարձօրէն:

**Վարժութիւն 1.** Նշուած վերջածանցներով գտնել երկուրեական բառ և դանոնք գործածել նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերը վերլուծել՝ որոշելով նախածանցը, վերջածանցը, արմատը. բացատրել այդ բառերուն մէջ տեղի ունեցած հնչիւնափոխումները.

Մշտապէս, վերնագրել, վերլուծութիւն, հակաճառութիւն, արտայայտիչ, կախարդիչ, շիամութիւն, մտաւոր, նկարչական, կրթական, անմարդկային, դունատ, նրբագոյն, անգոյն, արտագրութիւն, վճռականութիւն, մայմիկ, սալտրենի, զարթուցիչ, մեղմիկ, վարիչ, բիրերկեայ, արծաթեայ, զդուշօրէն, անհաւանական, նշանաւոր, տասնաւոր:

## 20. ՅԱՊԱՆՈՒՄՆԵՐ

Յայտամար երկու կամ աւելի բառերու մասեր ի մի կը բերին և մէկ բառի ձև կը ստանան: Յայտաւումներ կան շատ լեզուներու մէջ: Յայտաւումները կը կազմուին խօսելու ասին ժամանակ, իսկ զրելու առին տեղ խնայելու նպատակով:

Յայտաւումները կը կազմուին հետեւեալ եղանակներով.

1. Բառերու սկզբնատառերով՝

ՄԱԿ — Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն.

ՍՍՀՄ — Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւն.

ՀԲՀՄ — Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն.

ՀԵԸ — Հայ Երիտասարդաց Ընկերութիւն.

ՀՄԸՄ — Հայկական Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն.

ԱՄՆ — Ամերիկայի Միացեալ Նահանգներ.

ՄԵՄՀ — Արարական Միացեալ Հանրապետութիւն.

Արդէն արմատական բառի արժէք ստացած ըլլալուն համար փոքրատառ կը գրենք բուն յայտաւումը, որ կը նշանակէ՝ բարձրագոյն ուսումնական հաստատութիւն:

2. Բառերու սկզբնամասերով՝

Ուսմանկիրատ՝ Ուսումնա-մանկալարժական հրատարակչութիւն.

ժողկրթքաժլար՝ Ժողովրդական կրթութեան բաժնի վարիչ.

3. Բառի մը կամ բառերու սկզբնամասով և վերջին ամբողջ բառով՝

գլխախոհուորդ — գիտական խորհուրդ.

խնայողութեան — խնայողական դրամարկղ:

Յապատմամբ կուզմուտած բարդութիւններ շատ կ'սին մանաւանդ արեւելահայ գրական լեզուի մէջ, որոնք կը գործածուին խորհրդաշարին Հայաստանի բազմաթիւ հիմնարկութիւններու և կազմակերպութեանց երկար ու բազմաբառ անունները կարճ գրելու և արտասանելու համար:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածէն զատել սլարդ, ածանցաւոր, բարդ և բարդ ածանցաւոր բառերը զատ սիւնակներու մէջ՝ արմատները ընդգծելով մէկ գիծով, ածանցները՝ կրկու-

### ԻՆՁ ԳԻՏՆԵՔ ԱՅՍՕՐ ՀՐԱՏ ՄՈՂՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ

«Հրատ 1» միջմոլորակային ինքնաշարժ հրթիռին արձակումը ուշադրութեան կեդրոնը բերաւ Հրատ մոլորակը: Երկար ժամանակներէ ի վեր սոյն մոլորակը սկսաւ ուսումնասիրուիլ, բայց մինչև այսօր ալ կան տակաւին անբացատրելի երեւոյթներ, որոնց լուսաբանութիւնը արդի գիտութեան սլարտականութիւնն է:

1877-ին առաջին անգամ ըլլալով Հրատի վրայ նկատուեցան նեղ ու դոյզ գոյնով երիզներ, որոնք տեղ տեղ կը կտրեն մոլորակին մակերեսը մեծ տարածութիւններու վրայ և որոնք «ջրանցքներ» անուանուեցան: Այսօր ծանօթ են քանի մը հարիւր այսպիսի ջրանցքներ: Ոմանք կ'ենթադրեն թէ անոնք մեծ ճեղքեր են, իսկ ուրիշ գիտնականներ կը կարծեն թէ խոնաւութիւն ունեցող վայրեր են, որոնց մէջ դարունը և ամառը բուսականութիւն գոյութիւն ունի: Ջրանցքներէն ոմանք մշտապէս չեն նկատուիր: Երբ մէկ կիսաազունդի վրայ գարունը կը սկսի, այն ժամանակ անոնք անսանելի կը դառնան: Տարուան կէսէն յետոյ անոնք կ'անհետանան և նոյն բանը կը վերսկսի միւս կիսաազունդին վրայ:

Աստղադիտարաններու մէջ կատարուած դիտողութիւնները ցոյց տուին թէ Հրատի վրայ լեռնաշղթաներ չկան, անոր մակերեսը միօրինակ է, առանց բարձրութիւններու:

Հրատի մթնոլորտին մէջ ջուրի գոլորշիները շատ փոքր քանակութեամբ են: Անոնց գոյութիւնը կտրելի է եզրակացնել միայն լուսաւոր ամպերու և առաւօտեան ու երեկոյեան մառախուղէն:

Մտախոհները շատ տարածուած են և կը շարժին 15—40 րոմ. մէկ ժամուայ ընթացքին, ուրկէ կրնանք հետեւեցնել քամիներու գոյութիւնը և անոնց արագութիւնը:

«Հրատ 1» կայանը պիտի անցնի Հրատ մոլորակի մօտերէն: Կայանը գիտութեան համար մեծ նշանակութիւն պիտի ներկայացուցնէ այն իմաստով որ պիտի պարզարանէ թէ Հրատի վրայ իսկապէս կա՞ն կեանքի ստորին ձևեր, թէ ոչ նկատուած փոփոխութիւնները անօրկանական բնոյթ ունին: Անկախ ստացունչիբ արդիւնքներէն «Հրատ 1» կայանի արձակումը կը ներկայացնէ գիտութեան մեծ նուաճումներէն մէկը և կը հանգիստանայ տիեզերքի զաղտնիքներուն թափանցելու յանդուզն փորձ մը:

(Լրագիր)

**Վարժութիւն 2.** Նոյն հատուածէն զատել բազմիմաստ բառերը, նշել անոնց այլ իմաստները և գործածել նախադասութեանց մէջ:

---

## ՈՒՂՂԱԳԻՐՈՒԹԻՒՆ,

### 21. ՉԱՅՆԱԻՈՐՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳԻՐՈՒԹԻՒՆԸ

#### 1. Է. Ե

Երբ բառի մը սկիզբը է լսուի, է կը գրուի՝ էակ, էական, էջ, էջմիածին, էի և այլն:

Բառի մէջ է կը գրուի հետեւեալ սլաքադաններուն.

**Ա.** Երբ է-ով սկսող բառը ածանցուի կամ բարդուի. օրինակ՝ էական—անէական—ամենաէական. էջ—վայրէջք. մանրէ—մանրէաբանութիւն և այլն:

**Բ.** Երբ է-ն ձայնաւորի մը նախորդէ (բացի եա, եօ երկրարբաններէն). օրինակ՝ գրէի, անդէսրդ, քրէական և այլն:

**Գ.** Այն բառերուն մէջ, ուր լսուող է-ն կրնայ հնչիւնափոխուիլ ի դռնաւ. օրինակ՝ կէս-կիսել, այնպէս-այնպիսի, մէջ-միջուկ, գէս-գիսակ, սէր-սիրել և այլն:

**Դ.** Վերջնավանկի մէջ ոչ արմատական ք-էն առաջ լսուող է-ն. օրինակ՝ աուրչէք, կաղանդչէք, տօօրննէք, քօղէք և այլն:

**Ե.** Էլ-ով վերջացող կարգ մը յատուկ անուններու մէջ. օրինակ՝ Միխայէլ, Խաւայէլ, Նարահայէլ և այլն:

Է ձայնաւոր հնչիւնը բառի վերջը միշտ է կը գրուի. օրինակ՝ բազէ. հիւլէ. մարգարէ. գրէ. կը գրէ: Բառի վերջի է-ն անփոփոխ կը մնայ բարդման, ածանցման կամ հոլովման ժամանակ. օրինակ՝ բազէ-բազէի-բազէակիր, հիւլէ-հիւլէի-հիւլէական և այլն:

Երբ բառի մը սկիզբը Ե լսուի, Ե կը գրուի. օրինակ՝ երբ, երգ, եռանդ, երկաթ, երեւան, Եղեւսիա, Եղովկիա, Երանունի և այլն:

Արմատական երկու բաղաձայնէ առաջ միշտ Ե կը գրուի. օրինակ՝ կեղեղել, յաւերժ, մեղմ. գեղչ, հրամեշտ, զգեստ, զաւեշտ, բերրի, բերդ, մերկ և այլն:

Բառավերջի **հ-էն** առաջ միշտ **ե** կը գրուի. օրինակ՝ նժպեմ, վեմ, ներսեմ, Ջարեմ, սլատեմ, դեմ և այլն:

**Ե** կը գրուի կարգ մը ուրիշ բառերու մէջ եւս. օրինակ՝ բերան, տերեւ, սեր (կաթի), բերել, գերան, քերել, ծեր և այլն:

**Վարժութիւն 1.** Հնդօրինակել հետեւեալ բառերը և գծիկնե-  
բուն տեղ դնել **ե** կամ **է**.

Ջր—ւ, քաղ—ւ, տ—ր, Վաչ—, տարբ—բ—ւ, —ի, —ինք,  
չ—ին, տ—ղ—կանաւ, բար—բ—բ, որեւ—, ինչեւ—, հ—րկ, բ—բբ,  
ամ—նա—ախան, ան—լան—լի, ասլ—բշանիկ, գ—տ, դ—բ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերը յետադաս գործածելով  
կազմել բարդ կամ ածանցեալ բառեր.

Երես, երանգ, է, էջ, էական, երգ, ելրայր, եզր, եղերք:

## 2. Օ. Ո

Երբ բառի մը սկիզբը **օ** լսուի, **օ** կը գրուի, ինչպէս՝ օղ, օր,  
օրինակ, օդ, օրէնք, օճառ, օգուտ, օթեան և այլն:

Քանի մը բառերու սկիզբը **ով** կը լսուի, բայց **ով** կը գրուի.  
ով, ովկիան, ովասիս, ովսաննայ:

Բառի մէջ երբ **օ** լսուի, ընդհանրապէս **ո** կը գրուի. օրինակ՝  
ստոնք, աթոռ, րսլոր, թորել, թու, ծոս, սալխ, լոր, սալոր, խոր,  
ձոր, խոտ, խոշոր, նորանոր, հոս, Սոցոմոն և այլն:

Բառի սկիզբի **օ-ն** անփոփոխ կը մնայ ածանցման, բարդու-  
թեան և խոնարհման ժամանակ: Օրինակ՝ օգ—անօգ. օթեան—  
անօթեան. օգուտ—անօգուտ—հանրօգուտ—աղօգուտ. օր—ամէն-  
օրեայ—հնօրեայ. օրէնք—անօրէն—սպօրէն—տնօրէն. օրօրելի—  
կ'օրօրեն. օծել—կ'օծէին. օգնութիւն—փոխօգնութիւն:

Կարգ մը բառերու մէջ **օ** կը գրուի՝ արօտ, կարօտ, անօթի,  
նօսր, արտօնել, քօղ, կօշիկ, սպօրիք, մօրուտ, յօժար, յօրանջիկ,  
տօն և այլն:

Հայր, մայր, եղբայր և նման բառերու սեռական հոլովածեւե-  
րը կը գրուին **օ-ով**. օրինակ՝ հօր, մօր, եղբօր և այլն:

Կրճատ գրուող անձնանուններու վերջը **օ** լսուելու ստան միշտ  
**օ** կը գրուի Օրինակ՝ Կարօ, Մարօ, Սաղօ և այլն: Նման բառերու  
սեռական հոլովածեւերը կ'ըլլան՝ Կարոյի, Մարոյի, Մարոյի և այլն:

Բառի մը սկիզբը երբ **օ** լսուի, կը գրուի **ո** տառով. ինչպէս՝  
որ, ոգի, յիս, սղնի, ոտք, որդի, սմանք, սրտոք, որմնագիր, ոս-  
կի, ոչխար, ոճ, ողջոյն, ողիոյդ, ոսպ, ո՛հ, ողն, ոստ և այլն:

**Վարժութիւն 1.** Հնդօրինակել հետեւեալ բառերը՝ դժիկներուն տեղ գրելով **օ** կամ **օ**.

Ր—րր—քիլ, —ծել, —ձ, զսպ—ղակ, —գնւ—րել, —տարու-  
թիւն, ան—բէն, —բապահիկ, —րի—րդ, —ղջութիւն, բնո—րդի,  
կար—տ, —ր—ր—ց, կ'—գնէ, կ'—ր—շեն, շ—գն—ղ, —րինապահ,  
—գ—ստ—ս, —գնական, ան—գնական, ան—դ, բաց—թեայ, —վ-  
բեր, հն—րեայ, —վիհանոս, կար—տալի, զ—բալար, խ—սիլ, բ—  
լ—րել, տ—մար, յ—րդ—րել, տ—նալաճառ, մ—բարոյր, ս—սա-  
փիւն, համ—ղել, յ—նք, ց—ղ, հ—սիլ, յ—դ, հն—ց, տ—թ, կր—ն,  
հ—լմ:

**Վարժութիւն 2.** Հնդօրինակել հետեւեալ բառերը, բացատրելով  
թէ ինչո՞ւ այդ բառերուն մէջ պրուած է **օ**.

Ազդօղոտ, անօրէն, կ'օղնէ, հնօրեայ, տասնօրեակ, շօքատ-  
դարձուած, ալօրինի, բացօթեայ, անօդ, օսկիգօծել:

**Վարժութիւն 3.** Գրել 10 բառ, որոնք ունենան **օ** գիրը և 10  
բառ ալ, որոնք ունենան **օ** գիրը:

### Յ. Բ

Բառի սկիզբը լսուող **ը**-ն ընդհանրապէս կը գրուի. ըզձալ,  
ըմպել, ընդ, ըսել, ընել, ընծայ, ընծուղտ, ընկոյզ, ընկճել, ընտրել,  
ընդունիլ, ընդունակ և այլն:

Բայց բառի սկիզբը հնչուող **ը**-ն չի գրուիր **սկ**, **սպ**, **ստ**, **սք**,  
**սփ**, **սք**, **շկ**, **շպ**, **շտ**, **զր**, **զզ** հնչիւնակապակցութիւններէն  
առաջ. օրինակ՝ (ը) սկսիլ, (ը) սպասել, (ը) ստանալ, (ը) սփո-  
ղել, (ը) սլոտիել, (ը) սրափիլ, (ը) շտապել, (ը) զրաղիլ, (ը)  
զգալ, (ը) շտապ, (ը) սրափ, (ը) զգօն, (ը) սկիզբ, (ը) ստաց-  
ւածք և այլն:

Բառի սկիզբի **ը**-ն անփոփոխ կը մնայ ածանցման, բարդու-  
թեան և խոնարհման ժամանակ. օրինակ՝ ընդունակ — անընդունակ,  
ընտրել — նախընտրել, ընդ — խոչընդոտ, ընդունիլ — կ'ընդունէր,  
ընթանալ — սրընթաց և այլն:

Մնացած պարադաներուն բառի մէջ լսուող **ը**-ն չի գրուիր.  
օրինակ՝ բ(ը)նութիւն, մ(ը)րջիւն, բ(ը)ժ(ը)շկել, հ(ը)նօրեայ, տ(ը)-  
խուր, խ(ը)նդալ, խ(ը)նկենի, խ(ը)րխ(ը)նջիւն, մ(ը)խ(ը)րճել և  
այլն:



Բառի մէջ լսուող **ը**-ն կը գրուի հետեւեալ երկու պարագաներուն. առաջին՝ տողադարձի ատեն տողին վերջը մնացած և յաջորդ տողն անցած վանկերուն մէջ և երկրորդ՝ ոտանաւորներու մէջ, երբ դայն վանկարար ընել ուղենք. օրինակ՝ բարեխըղ-ճութիւն, խըն-դաւ, քը-հար, զը-րիւ, խմրաղը-րիւ, Մը-կըրտիչ, Մկըրտիչ, գիւրըմբը-նիւի, նըր-բանկոտ, նրտնը-կատ, ըս-պտակ, ըս-կիզր, ըչ-գալ, ըս-թափիւ, ըս-փոփել, ըս-քանչելի, ըշ-տապիւ, ըզ-բապիւ:

«Մանկութեան օրեր, երազի նըման  
Անցաք զընացիք, այլ չէք դառնալու».

«Լալիս էի անդադար,  
Մօրըս բունը խանդարած»...

«Ինչո՞ւ ասլած ես, լըճակ»...

«Շատերը զիս մերժեցին,  
Քընար մ'ունի սոսկ, ըսին»:

**Վարժութիւն 1.** Գրել **ը** տառով սկսող 10 բառ:

**Վարժութիւն 2.** Գրել 10 բառ, որոնց սկիւրը լսուող **ը**-ն չգրուի:

**Վարժութիւն 3.** Ընդօրինակել հետեւեալ բառերը և որոշել թէ փակագիծերու մէջ գրուած **ը** տառը պէտք է գրե՞լ թէ ոչ.

Տ(ը)նտեսութիւն, (ը)զբաղում, (ը)նտանիք, ամենա(ը)նտիր, դ(ը)նդակ, դոյն(ը)դգոյն, համ(ը)նթաց, դասը(ը)նթացք, օր(ը)ստօբէ, խոչ(ը)նդոտ, (ը)սթափիւ, (ը)սփոփանք, ամենա(ը)դգայուն, (ը)նկոյզ, ճեպ(ը)նթաց, որոտ(ը)նդոտ, հ(ը)րակէշ, (ը)նտանի, մ(ը)շեցի, տ(ը)րտ(ը)նչալ, բ(ը)ղոց, մ(ը)րմուռ, չ(ը)րազան, խաղ(ը)նկեր, դիւր(ը)նթաց, դիւր(ը)մբ(ը)ունելի:

#### 4. ՈՒ

Հայերէնի մէջ միշտ չէ որ **ու** տառը կը համապատասխանէ **ու** հնչիւնին:

1. **Ու** կը լսուի և կը գրուի հետեւեալ պարագաներուն.

**Ս.** Բառի սկիւրը. օրինակ՝ ութ, ուլ, ուղիւ, ումնդ, ուշադիր, ուղիւ, ունենալ, ուշ, ուտկան, ուտում, ուտել, ուղղութիւն և այլն:

**Գ.** Բառի մէջ՝ բաղաձայններէ առաջ. օրինակ՝ բուրել, դուռ, գուռ, դուր, թուր, թունդ, լուր, լուռ, խումբ, ծուռ, կուտ, հում, ձուլել, Մուշ, յունական, նուռ, շունչ, ջուր, սուր և այլն:

**Վ.** Բառի վերջը. բու, լու, կատու, ձու, շու, բու, երկու, դնչու և այլն:

**2.** Չայնաւորներէ առտջ, վանկին սկիզբը եղած ու տառը ւ (թևթև վ) կը հնչուի. օրինակ՝ յօգուած, դանդուած, բոցսուի, գոցուի, պահուրտի, զոհուող, բերուող, կատուի, լեզուի, լեզուով, աղնուութիւն:

Կարգ մը բառերու մէջ ւ արտասանուող ու-էն առաջ կայ սուղ ք, որ կը վերականգնի սողադարձի առեն. օրինակ՝ մարսուիլ՝ մարտը-վիլ, նոսէր՝ նը-ւէր, նուաճել՝ նը-ւաճել, լուսցք՝ լը-ւացք, տնանուիլ՝ տնանը-վիլ, խպոնուածք՝ խառնը-ւածք, թուական՝ թը-ւական և այլն:

Բայց որոշ պարադաներու մէջ ու-ն անփոփոխ կը մնայ ձայնուորներէ առաջ գտնուելով հանդերձ.

**Ս.** Հոլովման ժամանակ, երբ բառը կը վերջանայ ու-ով. օրինակ՝ բուի, բուէ, լուի, լուէ, լուով, դնչուի, դնչուէ, դնչուով:

**Բ.** Օտար յատուկ անուններու մէջ. օրինակ՝ Լուի, Պոսուէն, Լուառ և այլն:

**Վարժութիւն 1.** Որոշել թէ ինչպէս կ'արտասանուի ու տառը հետեւեալ բառերուն մէջ. ուս, բուժել, նուէր, ընկճուիլ, Լուի, նուաճել, փնտռուիլ, բազում, ընկերներու, երկու, գութ, լուսին, կրուս, դանդուած:

**Վարժութիւն 2.** Ընդօրինակել հետեւեալ բառերը և որոշել թէ ու տառը ինչպէս կ'արտասանուի և ինչո՞ւ, ի՞նչ օրէնքով. անուն, ժողովուրդ, հարուած, կը փնտռուի, լեզուի, կը թողուի, Սամուէլ, բուսականութիւն, լուսաւոր, թուղթերու, սթ, թշուառ, անուանաւ պէս, ածուի, բարձունքներու, յուսաառ, ընդունելի, ընդունուած:

## 22. ԵՐԿՆՉԻՆԻՆՆԵՐՈՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՎՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Երկնչիւն (երկրարքաս) կը կոչուի յերես մէկ վանկ առտասանուող այն հնչիւնակազմութիւնը, որ կազմուած է երկու ձայնատրեւերէ, և կամ մէկ ձայնատրէ և յ կամ ւ հնչիւնէն:

Հայերէնի երկհնչիւններն են՝ այ, օյ, եա, եօ, իւ:

## 1. Ա.Յ

**Այ** երկհնչիւնը բառի սկիզբը և բառի մէջ անփոփոխ **այ** կ'արտասանուի. ինչպէս՝ այս, այդ, այն, հայր, մայր, կայծ, ձայն, ունայն և այլն:

Նոյն երկհնչիւնը գոյութիւն ունի նաև արմատական միավանկ բառերու վերջը, ինչպէս նաև այն պարագային, երբ այդ բառերը բարդ կամ անանցաւոր բառերու բաղադրիչներն են. ինչպէս՝ բայ, հայ, նայ, նայ, վայ, մակրայ, դերբայ, պալսամայ, արեւլահայ և այլն:

Քաղմտաթիւ բառերու վերջին **այ**-ը ներկայիս երկհնչիւն չէ, միայն իբրև ա կը հնչուի, քանի որ յ-ն անձայն կը մնայ: Օրինակ՝ ներկայ, պարագայ, վրայ, անդայ, կրիայ, ենթակայ, վկայ, հօկայ. ակամայ, լամայ, դուլպայ, սպայ, փետայ, կաթնայ, պոպոտայ, երթայ, դու. սղնատնայ և այլն:

Արեւելահայ գրական լեզուի մէջ բառի վերջի այդ համը յ-ն արդէն չի գրուիր:

**Վարժութիւն 1.** Գտնել բառի սկիզբը և բառի մէջ **այ** երկհնչիւնն ունեցող երեքական բառ և դասնք գործածել խօսքի մէջ:

**Վարժութիւն 2.** Գտնել բառի վերջը ա հնչուող, բայց **այ** գրուող երեք բառ և գործածել նախադասութեանց մէջ:

## 2. ԱՍ. ԱՍ.Յ

**Եա** երկհնչիւնը միայն փակ վանկի մէջ կը գտնուի և կը հընչւի սրուկս **եա**. օրինակ՝ տակեան, սենեակ, մատեան, պատեան, Գուրեան, Օտեան, Լուսակեան և այլն:

Բառի վերջը գտնուող **եայ**-ն ալ նոյն հնչումն ունի (վերջի յ-ն անձայն կը մնայ): Ինչպէս՝ պաշտօնեայ, հրեայ, փայտեայ, ոսկեայ և այլն:

**Վարժութիւն.** Գտնել **եա** և **եայ** ունեցող հինգական բառ և գործածել նախադասութեանց մէջ:

## 3. ԻԿ

**Ի** երկհնչիւնը միայն փակ վանկի մէջ կը գտնուի և կ'արտասանուի եւս: Ինչպէս՝ միւռ, հիւր, սիւն, ալիւր, արիւն, բարութիւն, իւր, իւր և այլն:

**Մ ա ն օ թ ու թ իւ ն 1.** Բառի վերջը գտնուող **իւ**-ն երկհնչյուն չէ, բանի որ անոր **ւ**-ն բաղաձայն է. ինչպէս՝ արծ**իւ**, պատ**իւ**, հաշ**իւ**, կռ**իւ**, շնորհ**իւ**, առթ**իւ** և այլն:

**Մ ա ն օ թ ու թ իւ ն 2.** Հիւանդ, դիւան և նման բառերու մէջ **իւ**-ն նոյն վանկին մէջ չի գտնուիր՝ հետևաբար երկհնչյուն չէ և տողագրածի ատեն կը բաժնուի. ինչպէս՝ հիւանդ, դիւան:

**Մ ա ն օ թ ու թ իւ ն 3.** **իւ**-ով վերջացող օտար բառերու մէջ **իւ**-ն կը հնչուի որպէս բձային (փափուկ) ևւ. ինչպէս՝ Մոնթեսքիւ, Ռըբլիւ, Էօժէն Սիւ, միսիւ:

**Վարժութիւն.** Գտնել բառի սկիզբը և բառի մէջ **իւ** երկհնչյուն ունեցող հինդական բառ և դորձածել զանոնք նախադասութեանց մէջ:

#### 4. ՈՅ

**Ոյ** երկհնչյունը փակ վանկի մէջ կ'արտասանուի **ույ**. օրինակ՝ բոյս, բոյր, բոյլ, յոյն, ստոյգ, խտրոյկ, արտոյտ, Պարոյր, երեկոյթ, ճաշկերոյթ, արշալոյս և այլն:

Բաղմավանկ բառերու վերջը **ույ**-ը երկհնչյուն չէ, բանի որ **յ**-ի ածայնութեան պատճառով **օ** կը հնչուի. ինչպէս՝ յարգոյ, գշխոյ, հաճոյ, յետոյ, բրտոյ, հաւարտոյ, երեկոյ և այլն:

Միայն բանի մը միավանկ բառերու վերջը **օյ**-ը **օյ** կը հնչուի. ինչպէս՝ խոյ, նոյ և այլն:

**Վարժութիւն.** Գտնել փակ վանկի մէջ **ույ** ունեցող հինգ բառ և դորձածել նախադասութեանց մէջ:

#### 5. ԿՕ

**Կօ** երկհնչյունը արդի հայերէնի մէջ շատ հազուադէպ է՝ եօրր, սարկօք, քնտանկօք, կարծկօք:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածներուն մէջէն գտնել երկհնչյունները, բացատրել անոնց արտասանութիւնը և ուղղագրութիւնը.

**Ս.** Համբերութիւն, սովորութիւնս այս է, կը կապիմ, վասնդի ատամնարոյժ մը միայն վկայականով շի կրնար կատարեալ ատամնարոյժ ըլլալ, սէտք է քիչ մ'ալ խելք ունենալ... Թէպէտ և իմ բռնած ընթացքս հիւանդներու տհաճոյ կը թուին, բայց վերջը դո՛ւ կ'ըլլան:

(Ս. Պարոնեան)

**Բ.** Տիրապին լուսթեամբ կը նայէր Երանուհայ երեսին, որոյ գեղեցկութիւնը դեռ չէին կարողացեր մթազնել արտասուք և տառապանք: Այս, գեղեցիկ է Երանուհի այն գեղեցկութեամբ, որ շատ անգամ կը գոչանայ հոգոյ աղնութեանց գէմբին վերայ անդրադառնալովը:

(Պ. Աղասեան)

**Վարժուիլն 2.** Բացատրել ձայնաւորներու, բաղաձայններու, երկհնչիւններու ուղղադրութիւնն ու արտասանութիւնը հետեւեալ հատուածին մէջ.

Բայց դիպուածը, որ շատ անգամ մեծ հիւանդութիւններ բուժած է, այնպէս ուղեց, որ այս տղուն հայրը ստիպուի օր մը սենեակին մէջ ստակ համբել Արդ, երբ հայրը առաւօտ մը քսակը դրոպանէն հանելով, սոկիները կը համբէր, անզգուշութեամբ անոնցմէ հատ մը ձուց գետինը: Տղան սոկիին գետին իյնալը անսնելուն պէս, նստած անզէն մէկէն ի մէկ կանգնեցաւ «Հրաշք», զոչեց հայրը, և սոկի մըն ալ նետեց գետինը: Երկրորդ սոկին անսնելուն պէս քայլ մը առաւ տղան: Երկու սոկի նորէն նետեց հայրը, երկու քայլ նորէն առաւ տղան: Չորս սոկի ալ՝ չորս քայլ ալ Հայրը քսակը նետեց սենեակին մէջտեղը, և Յ. սկսաւ քաշել Ահա այսպէս դիպուածով քաշել սորվեցաւ մանուկը, և այս է պատճառը այն խօսքի, որով կ'ըսեն թէ Յ. էֆէնտի առանց ստակի քայլ մը չ'առնէր ոչ գրասենեակին մէջ և ոչ հրապարակին վրայ:

(Յ. Պարոնեան)

## 23. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐՈՒ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

### 1. Ղ. Ե

**Ա.** Բառի սկիզբը լսողը Ղ հնչիւնը միշտ Ղ կը գրուի, բացի ո-ով սկսող բառերէն. օրինակ՝ վեր, վար, վայր, վտանգ, վեց, վրէժ և այլն:

**Բ.** Ղ լսուելու տունն զ կը գրուի հետեւեալ պարագաներուն.

ա) Ո-էն ետք. կով, կորով, ծով, ժողով, տպահով և այլն:

բ) Եթէ բառը բարդ կամ ածանցեալ է, և բաղադրիչ բառը կը սկսի Ղ-ով. հայրենավրէժ, կառավարել, թիավարել, հնավաճառ, անվտանգ, անվնաս, օրավարձ և այլն:

դ) Կարգ մը բառերու մէջ Ղ կը գրուի այն պատճառաւ, որ ան առաջ եկած է ՈՎ-էն. օրինակ՝ ժողովել, սորվիլ (ժողովել, սովորիլ):

դ) Բառի մէջ և բառի վերջը ա, ե, ի ձայնաւորներէն յետոյ և կը գրուի. օրինակ՝ աւելլի, հետալ, նստ, հաւ, աղաւնի, շնորհիւ, սուժիւ, գիտկան, բաւ, արև, թիւ, քիւ և այլն:

Արեւելահայ գրական լեզուի մէջ վ ճշիւնը միշտ վ կը գրուի ուղղագրական փոփոխութենէն ի վեր (1922-ին) և երբէք՝ և կամ ու. ավան, հարավ, կալված, արվեստ, պատվեր, եվեր, թվական, լեզվի, պատվել, բանվոր և այլն:

**Վարժութիւն 1.** Հետևեալ բառերուն բաց ձգուած տեղերը գրել պահանջուող տառը՝ վ. ւ, ու:

Կողւ., թոխ, հալի., խստի., թ.ել, Ղարթ, խողո.ակ, ղո., ա.աղակ, ն.արդ, յուղ.իլ, բո.անդակ, գո.ել, հա., յօդ.ած, կալ.ած, խորո.ած, հա.ատալ, իրա.ունք, ար.եստ, ար.արձան, ծո.ափ, հա.ատալ, թի., կա., թա., մեղ.արոյծ, հար.ած, քերթ.ած:

**Վարժութիւն 2.** Վերոյիշեալ բառերը դորձածել շարագրութեան մը կամ առանձին նախագասութիւններու մէջ:

## 2. 2. Գ

Բառի սկիզբը Կ և յ տառերը կ'արտասանուին միատեսակ՝ Կ (ինչպէս անա բառին Կ-ն):

Պէտք է սակայն գիտնալ որ՝

**Ս.** Յ կը գրուի ս և ղ տառերէն առաջ. յյի, յլիլ, յյփոնալ, յլիլ, յստի:

**Բ.** Բառի սկիզբը միւս բաղաձայններէն առաջ կը գրուի Կ. Կըմտա, Կնարել, Կպարա, Կլա, Կմայել, Կրաման, Կրապարակ, Կրնադանդ, Կնդիկ և այլն:

**Պ.** Զայնաւորներէն առաջ յ-ով և Կ-ով կը գրուին շատ բառեր. Կ-ով կը գրուին՝ Կաղնիլ, Կաղ, Կաղար, Կաղիւ, Կալածել, Կակ, Կարուէ, Կակ նախածանցը (Կակառակ, Կակպիր, Կակասել, Կակասնետ, Կակամարտ), Կակում, Կաղարջ, Կաղարդել, Կանելի, Կանալք, Կամ, Կամ նախածանցը (Կամապատ, Կամազումար, Կամաղպլին, Կամածայն), Կամբերել, Կամրոյր, Կամեսա, Կայելի, Կալր (Կալրենիք), Կալրել, Կալրական, Կանդարուել, Կանել, Կարցնել, Կարս, Կաց, Կեսաւ, Կեծնել, Կեղակ, Կեշա, Կիմնել, Կիւտնդ, Կալի, Կոզալ, Կարով, Կալմ, Կոզ, Կոսիլ, Կով, Կարթ, Կանձք և այլն:

Յ-ով սկսող բառերէն են՝ յալկնալ, յարարդ, յախճաղակի, յախտան, յակինթ, Յակրը, յալթել (յալթանակ), յաճախ, յամսա,

յամբ (գոնդոպ), յայտնիկ (յայտնի), յանդ, յանդուդն, յանդիման, յանկարծ, յանձնել, յանցանք, յաջող, յառաջ, յառակ, յառակ (յառականիշ), յարտերուծիւն, յար (յարտղիր, յարակից), յարգանք (յարկել), յարդ, յարդարել, յարկ, յարմար, յաւիտան, յաիշտակիւ, յեղափոխել (յեղափոխութիւն), յեա (յետադաս, յետադարձ, յետադէմ), յիշել, յիմար, յողնակի, յսլզ, յոյս, յոյն, յարդ, յարդարել, յորձանք, յորջորջել, Յուդա, յուշել (յուշատար, յուշարար), յուսթի, յոժար, յօդուած, յօրինել, յօրանջել, յօնք և այլն:

Բարդուելու կամ ածանցուելու առեն այս բառերուն յ-ն կը պահպանուի. ինչպէս՝ անյատակ, սուսայօն, մրայօն, անյապուրդ, մեծայայթ, հանրայարտ, լիայոյս և այլն:

Պ. Բառի վերջը ձայնաւորներէն յետոյ գրուող յ-ն չ'արտասանուիր. ինչպէս՝ ապուգայ, ծառայ, ողայ, հօկայ, կրեկոյ և այլն:

Բացառութիւն կը կազմեն միավանկ արմատական բառերը՝ հայ, լայ, վայ, նայ, խոյ և այլն:

**Վարժութիւն 1.** Գրել Կ-ով սկսող 10—15 բառ (օգտուելով բառարանէն) և անոնցմով կազմել նախադասութիւններ. ինչպէս՝ Համբարձունք հիմաու հեռցալան է:

**Վարժութիւն 2.** Գրել կարճ շարագրութիւն մը, որուն մէջ յ-ով սկսող տասնեակ մը բառեր գործածուին:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ բառերուն բաց ձգուած տեղերը լրացնել պահանջող Կ կամ յ տառերով.

Հրա—կողի, մեծա—աղթ, հեղա—ամբոյր, քառա—արկ (շէնք), նորա—արս, սիրա—օծար, ան—իմն, ան—աջող, քմա—աճ, լիա—ոյս, —ազուստ, տ—աճ, —ամողում, —անկարծակի, —անցազործ, —աջողութիւն, նորա—ատ, ան—արկի, —սկայ, —ախճապակի, —ողմա—արի, —բաման:

**Վարժութիւն 4.** Նախորդ վարժութեան մէջ նշուած բառերով կազմել 10 նախադասութիւն:

### Յ. Մ. Կ.

**Մ և Կ** հնչիւնները իրենց արտասանութեամբ կրնան շփոթուիլ ըլլալ, եթէ գրուած են շրթնային ք, պ, փ բաղաձայններէն տուաջ:

Պէտք է գիտնալ որ՝

**Ա. Բ, ս, փ** բաղաձայններէն առաջ ն կը գրուի ա՛ն ժխտական նախածանցի պարագային. ա նրոն, ա նրաւ, ա նպէտք, ա նփոյթ, ա նփարտակի, ա նրնտոն, ա նրիծ, ա նպարտակ և այլն:

**Բ.** Միւս պարագաներուն մեծ մասամբ մ կը գրուի. ինչպէս՝ ամփոփ, ամբոխ, ամբողջ, ամբարտակ, բամբ, բամբիս, դամփո, դամբարան, թամբ, թամբ, սմբակ, ճամբալ, ըմբոշխնել, տմպ (ըմպանակ):

**Պ.** Եամբ վերջնամասնիկը (գործիական հոլովածեի) միշտ մ-ով կը գրուի. ինչպէս՝ արեամբ, մեծաթեամբ, գիտաթեամբ, հերոսաթեամբ և այլն:

**Վարժութիւն 1.** Ան նախածանցով և ր, ս, փ բաղաձայններով սկսող 10—15 արմատներով կազմել նոր բառեր՝ ստորագծելով ն-ն:

**Վարժութիւն 2.** Ամբարիշտ, ամբոխ, ամփոփ, ամբարտակ, ըմպանակ, վամպիր, թամբ, թումբ, ամպրոպ, սմբակ և մ-ով գրուող այլ բառերով կազմել նախադասութիւններ:

**Վարժութիւն 3.** Կազմել հետեւեալ բառերուն գործիական հոլովը և դանոնք գործածել նախադասութեանց մէջ.

Ուրախութիւն (ուրախութեամբ), մեծութիւն, ծանրութիւն, արիւն, հանգստութիւն, ուսում, յարձակում, վերապրում, խմբաւորում և այլն:

#### 4. Ռ, Բ

**Ռ** և **Բ** բաղաձայնները արտասանութեամբ մօտ են իրարու, այդ իսկ պատճառով գրելու տեսն կրնան շփոթուիլ: Պէտք է գիտնալ որ՝

**Ա.** Ր-ով սկսող բառերը շատ քիչ են՝ րոպէ, րոք (մանկիք):

**Բ.** Սովորաբար բառի սկիզբը **ռ** կը գրուի. ինչպէս՝ առճիկ, ապմիկ, առմիկ, առնոց, առտին, առհ, առհան, առմբ, Ռումանիա, Ռուսաստան և այլն:

**Պ.** Բառի մէջ ն-էն առաջ կը գրուի **ռ**. ինչպէս լեռնային, բռնել, առնէտ, գառնակ, յառնել, գառնալ, ուռնալ, մեռնիլ, մոռնալ և այլն:

Բարդ և ածանցեալ բառերու մէջ արմատական **ր**-ն կը պահպանուի. ինչպէս՝ պարնամային, վերնալ, վարնոց, դարնել և այլն:



Հին լեռան և դուռն բառերուն սեռական հոլովները՝ լեռան և դրան, հիմա կը գրուին նաև առանց ու—ր հնչյունափոխման՝ լեռան, դուռն:

**Գ.** Բառի մէջ միւս բաղաձայններէն առաջ ր կը գրուի. ինչպէս՝ արօ, սրօ, կրթ (կրթալ), հերթ, կարթ, խորթ, խորթակիւ, բիրթ, սրբ, սուրբ, բարբ, բերբ և այլն: Բացառութիւն են հուշակ, ուսկան, ուսճանալ, խուշակ, խուպոս, յուսթի, կուսք, պուսկիւ և այլ արմատական բառեր:

**Ե.** Ռ-ով վերջացող և արմատի կրկնութեամբ կազմուած բարդ բառերու մէջ առաջին ու-ն ր կը դառնայ. ինչպէս՝ բառ-բարբառ՝ թիւ-թրթալ, սառ-սարսուռ, գիւղ-գրգիւղ, մառ-մրմուռ և այլն:

Բնաձայն բառերու մէջ ու-ն ր-ի շի փոխուի. ինչպէս՝ պուր-ուռ, կուկալ և այլն:

**Վարժութիւն 1.** Ըսել թէ հետեւեալ բառերուն սկիզբը ու և ր տառերէն ո՞ր մէկը պէտք է գրել.

.աղմական, .ահվիրայ, .ամկական, .ամկալար, .ափայէլ (առնուն), .մբակոծել, .նդեղջիւր, .ունդ, .ոճիկ, .ուսաստան, .ոսլէ, .ուպէական, .աֆֆի (յատուկ անուն):

**Վարժութիւն 2.** Գտնել հնչյունափոխուած բառերու մէջ Ղ-էն առաջ ր գրուող 5 բառ (օրինակ՝ վերին-վերնատուն, արիւն-արիւնաշաղախ, արնուխում):

**Վարժութիւն 3.** Յուրի, ունանալ, ուկան, խոշակ, հրոշակ բառերը գործածել նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 4.** Հրացնել բաց ձգուած տառերը.

տ.թ.ին, շո.թ.կ, կա.թ, լեա.դ, մե.թ, թ.թ.ու., թ.թ.ու., սա.սու., փա.թամ, ո.թ, հո.թ, յո.դ, լու.թ, կախա.դ, գո.դո.ոց, (կատուն) մը.մը.ոց (կ'արձակէ), իւ.խալ, թ.վ.ուն (երեխայ), մ.լուալ, յա.նել, կա.չիլ, թ.չիլ, ո.նալ, ընթե.նելի, սա.նորակ, Փա.նակ, կ.նակ, կ.թ.նիլ, խա.նիսու.ն:

## 5. Ղ, Խ

Բառի սկիզբը խ, ղ բաղաձայններուն ուղղագրութիւնը դժուար չէ, քանի որ այդ բաղաձայնները իրենց հնչյունով զգալապէս տարբեր են իրարմէ: Սակայն բառի մէջ, մանաւանդ ր, սլ, դ, տ բաղաձայններէն առաջ անոնք շփոթելի են: Ուստի պէտք է դիտանալ որ՝

**Ս. Տ** բաղաձայնէն առաջ **խ** կը գրուի կարգ մը բառերու մէջ. *ինչպէս՝ տխտ (հիւանդութիւն), տխտ (գաշինք), գմբախտ, մխանել, գրտխտ, կրտխտիք, թտխտ և այլն:*

**Խ** կը գրուի այլ բաղաձայններէ առաջ քիչ բառերու մէջ՝ *վախճան, յախճադակի: Նաև հնչյունափոխուած բառերու մէջ՝ Բախճիլ (Թախիճ բառէն):*

**Բ.** Միւս բաղաձայններէն առաջ կը գրուի **ղ.** *ինչպէս՝ աղբիւր, աղքատ, աղճատ, կղրալը, կղջիւր, կղկկի, նաղկանք, յաղճանք, պղտար, գաղձ (հաղտիւշտ), կաղկանձ, շաղտաղվիւ, տղր, գաղձ, ցիւղձ և այլն:*

## Գ. Ը, Պ, Փ

**Ա.** Կարգ մը բառերու մէջ **բ-էն** վերջ **բ** կը գրուի. *օրինակ՝ կրբ, որբ, սուրբ, նուրբ, քարբ, ներքան, գերբակ, արբէնաւ, յարբօքիւ, հարբախ: Իսկ սակաւաթիւ են վի-ով գրուողները՝ արօփի, տարփանք, փրփուր, կրփներանդ:*

**Բ. Ա.** ո ձայնաւորներէն յետոյ մեծ մասամբ **փ** կը գրուի. *օրինակ՝ ափ, թափուր, մրտփել, փտփուկ, ափսօք, լափշտակել, սարտափ, շօշտփել, խարխտփիլ, գաղտփար, ծափ, չափ, փափուք, սթտփիլ, թափափիլ, կափարիչ, ափսոս, գտփնի, լտփել, թօթափել, ափտիլ, ամփտի, գտփել, կտփել, ցտփ, Ծտփք:*

**Վ. Ա-էն, ո-էն** յետոյ քիչ բառերու մէջ **բ** կը գրուի. *խաբել, յաբախել, ձարտաւք, արբայ, արաք, շարթթ, Արբաճամ, Յակաք, Յօք և (տ)քար ամանցով կազմուած բառերը. ինչպէս՝ յարկիւմար, թշնամարար, ընկիրարար, հաւանարար և այլն:*

**Գ. Մ-էն** յետոյ **բ** կը գրուի. *օրինակ՝ սպտտամբ, համբաւ, թամբ, ամբողջ, կաղամբ, ջամբել, լամբար, խամբ, ամբոխ, բամբասել, թմբակ, թումբ, դամբան, կշտամբել, տմբակ և այլն:*

**Ե. Մ-էն** յետոյ **վի** կը գրուի քանի մը բառերու մէջ. *ամվտի, ամփտիկ, խամփոց, գամփո:*

**Զ. Մ-էն** յետոյ սակաւաթիւ բառերու մէջ **պ** կը գրուի. *ամպ, տ.մպ (ըմպանակ, ըմպան):*

**Վարժութիւն 1.** Ըսել թէ հետեւեալ բառերուն մէջ **պ**, **բ** տառերէն ո՞ր մէկը սքէտք է գրել.

*Ան.արտեղի, .արտական, .ադ (թռչուն), .աղկաթոս, ըմ.ոստ, .արաէղ, .ետութիւն, .աղմաւնդու, .ամնետոմս, ամ.արտակ, ան.արիկշտ, .նակ, .ազգատել, .անաւար, ամ.արտաւան, .տոյտ, .տաւ, .ա-*

նաւոր, առարան, ճամար, արարտ, արանոց, արդիյ, արեխիւզ, թամագործ, ատրաստ, ասձառ, արկանալ, արձրաւերձ, թմկահար, աստերազմ, վարեա, արոյական, արցակայ, խմավար, արբաւատ, աւել, նակարան, նաւորովիւն, օթաւեր, գրաար, սր, երեմն:

**Վարժութիւն 2.** Նախորդ վարժութեան բառերով կազմել 10 նախադասութիւն:

7. Գ. Ց. Թ

**Ս. Տ** կը գրուի խ. 2 բաղաձայններէն յետոյ, բացի նիշդ բառէն (արեւելահայերէնի մէջ՝ նիշտ). օրինակ՝ աշտանակ, անշաշտ, պաշտ, գրախտ, խրտաւտ, մխտել, լտխտ, հրեշտակ, յափրշտակիւ, պաշտպանիւ, պաշտիւ, պաշտօն, պարկեշտ, պանդուխտ, շեշտ, վիշտ, միշտ, հրամեշտ և այլն:

**Բ. Պ** կը գրուի ն-էն յետոյ՝ հանդարտ, կողմնդ, թնդանօթ, խնդիր, պանդակ, սնանդ, սարհանդակ, լանդպնիւ, կարկանդակ, պանդպ, աւանդ, բովանդակ, պանդախա, ալլանդակ, անդամ, հիւանդ, կենդանի, տապանդ, օտանդակ, պիրանդի, մնանդ, խանդ, ետանդ, մանաւանդ, մարմանդ, լանդխմանիւ, հնտպանդ, հանդէս, ակնդ, անդաւնդ, քանդակ, սպամտնդ և այլն:

**Վ. Թ** կը գրուի 'ն-էն յետոյ՝

ա) Երբ աւն ածանցին և բարդութեան մէջ ն-ով վերջացող արմատին կը յաջորդէ թ-ով սկսող արմատ մը. անթափանց, անթարթ, անթուլլատրիլի, անթաւամ, անթիւ, անթապանթ և այլն:

բ) Եւթ ածանցով կազմուած բառերու մէջ. ենթակայ, ենթամրնայ, ենթարկուիւ, ենթասպայ, ենթապրիւ և այլն:

գ) Քանի մը բառերու մէջ. ընթանալ, ընթեանալ, ընթրիւք, խենթ, կանթեկ, շանթ և այլն:

**Պ. Պ** կը գրուի ք-էն յետոյ կարգ մը բառերու մէջ. արդար, արդակ, բնրդ, բարդ, գրդիւ, երդում, խարդախ, խլարդ, թարդ, մարդ, լարդ, լորդ, կարդալ, փարդ, ջարդ և այլն:

**Ե. Թ** կը գրուի ք-էն յետոյ բաղմաթիւ ալլ բառերու մէջ. երթալ, մերթ, կիրթ, սպարթ, փերթ, թերթ, հարթ, հորթ, թարթիւ, յարթ, կարթ, փարթամ, խրթին, շողքարթ, շուրթ և այլն:

**Զ. Թ** կը գրուի շ-էն ստաք. թշտտ, թշնամի, թշրշար:

**Վարժութիւն 1.** Կրացնել բաց ձգուած տառը.

ազաւար, արածութիւն, անդաղ, քստում, աւիդ, ասնասհամ, ասընթացք, դեղ, դէտ, ասարան, ասընկեր, անդ, ևլափախիւ,

.ատաւոր, .եսակ, .արան, .եսարան, .եղագիր, .իկին, .երասան,  
.բոլոր, .ժրախտ, .կար, .զամարդ, .իմանալ, .նանսուքին, .նօրէն,  
.ատրակ, .ողագարձ, .ամս, .արրին:

**Վարժութիւն 2.** Դաշտ, խոխտ, պաշտպան, պարկեշտ, հրա-  
մեշտ, կաղանդ, սուրհանդակ, կարկանդակ, պունդուխտ, եռանդ,  
հանդէս, քանդակ, դրդել, երդում, յորդ, վարդ, վարքամ, հարք,  
կիրք բառերով կազմել մէկական նախադասութիւն:

### Ց. Զ. Ծ, Յ

**Ա.** Բառի մէջ **ղ, ն, ր** բաղաձայններէն յետոյ ընդհանրապէս  
ձ կը գրուի Օրինակ՝ ստաղձ, արձակ, թանձր, յարձակիլ, փորձ,  
յաղձալ, տանձ, պղինձ, վարձք, դարձ, մաղձ, խուրձ, գեղձա-  
նիկ, պապանձիլ, լանձնիկ, վրձին, գանձ, յորձանք, ստանձնիկ,  
հունձք, ստնձ, իզձ, անձտկ, գեղձ, արձան, ձորձ, նախանձ,  
ուղերձ, փղձկիլ, սնձ, մերձ, լարձ, թոխանձիկ, հանգերձ և ոչն:

**Բ.** **Ղ, ն, ր** բաղաձայններէն յետոյ սակաւաթիւ բառերու մէջ  
**ց** կը գրուի. սպաթարց, սաանց, տղցան, գանց, յանցանք,  
հարց, մրցիլ, որցակ, ցանց, քաղցր, քաղց, ուրց, պոխուրց և  
ոչն:

**Գ.** Բառի սկիզբը **ն-էն** առաջ **ց** կը գրուի. ցնցուղ, ցնցասի,  
գնորիլ, ցնցել, ցնդիլ, ցնծալ Սակայն քանի մը լատեր ժ-ով են.  
ձներկի, ձնիլ (ձնուեղ), ձնձգալ, ձնկիլ (ձունիկ լատէն) և ոչն:

**Վարժութիւն 1.** Կրացնել բաց ձգուած տառը.

.ին, .իսպան, .իածան, լայնար.ակ, .այնաւոր, թիթեղա.ածի,  
անփոր., .րիակեր, արեւա.աղիկ, սղն.ագործ, .երբակալել, արա.այլ,  
անվար.ք, .ողափայտ, ան.անօթ, վերադար., .եւարար., մշտա.իծալ,  
խան. ահոտ, .հոնափայտ, .խամորձ, դան.ապահ, .իթապտուղ,  
.անձրահալ, նորա.ին, արեւա-ագ, սանձար.ակ, ըղ.ական, ար.ա-  
նագրել, մեր.աւոր, հանգեր.ապահ:

### Յ. Զ, Ա, Զ

**Ա.** **Ր, ղ** բաղաձայններէն յետոյ առհասարակ **ջ** կը գրուի.  
օրինակ՝ տղջամուլջ, տղջիկ, սնուրջ, արջ, աուրջ, արջառ, գաղջ,  
բաղարջ, գեղջուկ, երջանիկ, զղջալ, լուրջ, կամարջ, վերջ, յորջոր-  
ջել, շիջ, եղջիւր, մրջիւն, ուջ, որջ, քուրջ:

**Բ.** Ղ բաղաձայններէն յետոյ շ կը գրուի հետեւեալ բառերուն՝ մէջ. *դարձին, ղեզձ, փարչ:*

**Բ.** Ր Ղ բաղաձայններէն յետոյ ճ կը գրուի կարգ մը բառերու մէջ. *ծխամարձ, կարձ, գտարձ, արձիճ, խեղձ, աղձտտ, Արձէշ, տարձ և այլն:*

**Վարժութիւն 1.** Ի՞նչ տառ սէտք է գրել ըստ ձգուած տեղը.

*ժր.ան, .անասէր, .ակատամարտ, .ահճախոտ, վեր.ակէտ, շր.ան, ող.սյն, .երմոց, .բանցք, .սխտթիւն, երկ.իւղ, կամբ.ակ, ղեղ.կական, .բամբար, .բմուղ, նախա.աշ, բարկա.այթ, եր.անկա.նալ, լր.տթիւն, .բհեղեղ, .լապինդ, եղ.երու, թր.ոյ:*

**Վարժութիւն 2.** Նախորդ վարժութիւնի մէջ տրուած բառերով կազմել նախագաստութիւններ:

#### 10. Կ. Ե. Յ.

**Ա.** Ն-ին տակի յաճախ կը յաջորդէ **գ.** *օրինակ՝ անգամ, անգրդ, զանգոտ, զանգատ, զանգակ, հանգանակ, հանգիտտ, մանգաղ, զանգ, ժանգ, յանգ, կրանգ, վառնգ, նահանգ, ժառանգ, կզանգ, հինգ, հրահանգ, վարանգ, սրինգ և այլն:*

**Բ.** Ն-էն յետոյ **ք** կը գրուի՝

**1.** *Ա.ն.ք, Ե.ն.ք, ի.ն.ք, ու.ն.ք* ածանցներուն մէջ. *աղաչանք, գարմանք, հոտաչանք, զրկանք, կալանք, գրայիկնք, Գրիգորիկնք, քնտիկնք, Արամիկնք, գաշինք, կրկինք, քրտինք, նախտտինք, արցանք, պաշտամանք, կրկանք, սրանք, սկզբունք և այլն:*

**2.** *Մ.ն.ք, ինք, լոնք, կոնք, հենք, վանք և այլ բառերու մէջ:*

**Գ.** Ոյ-էն յետոյ յաճախ **գ** կը գրուի արմատական բառերու մէջ. *զոյգ, ասոյգ, նմոյգ, սրոյգ, պտտոյգ:* **Ոյ-էն** յետոյ **ք** կը գրուի, եթէ բառը արմատական չէ. *զոյք, հաճոյք, պիտոյք, կահոյք, խնջոյք, գահոյք և այլն:*

**Դ.** Է-էն յետոյ **գ** կը գրուի. *էգ, կզէգ, մէգ, սէգ, վէգ, տէգ:*

**Ե.** Ա-էն յետոյ **գ** կը գրուի. *ազահ, անագ, արագ, աւագ, ազատ, ազարակ, զագաթ, թագ, ձագ, ձագար, ճրագ, հագնիլ, հագուտ, ծագիլ, չագենալ, գրագ, կարագ, ճագար, վագր, մագաղաթ, սագ, վայրագ և այլն:*

**Զ.** Ա-էն յետոյ **ք** կը գրուի որոշ բառերու մէջ. *առաքինի, տաքիւն, արտաքին, լժանաք, կարքաւ, մարտիլ, մեռաքս, հաւաքել, մարքոտ, սլաք, շաքար, սալթաքիլ, ցամաք, սաք, մարք և այլն:*

Արեւելահայ գրական լեզուի մէջ բառի սկիզբը **բ, գ, զ, ն, ջ** բաղաձայնները շունին արեւմտահայերէնի արտասանութիւնը:

**Օրինակ՝** բաղ, զիւն, դեղ, ձոր, շուր բառերուն մէջ անոնք կը պահեն իրենց մետաղական դարու հնչումը և կ'արտասանուին, ինչպէս արեւմտահայերէնի մէջ՝ պատ, կիւն, տեղ, ծոր, նուր:

**Իսկ** **ւլ, կ, յ, ծ, ց** բաղաձայնները արեւելահայ գրական լեզուի մէջ խուլ պայթական են, ինչպէս գրարարի մէջ: **Օրինակ՝** պատհ, կլիւն, հեղ, ծոր, ցուռ կ'արտասանուին խուլ, այսինքն՝ անոնց արտասանման շընկերանար ձայնաբերու թրթռում:

**Սակայն** **ր, ղ** բաղաձայններէն և յաճախ **ն-էն** ու ձայնաւորներէն յետոյ **բ, գ, զ, ն, ջ** ձայնեղ պայթականները կը հնչուին շնչեղ խուլ՝ **փ, ք, ք, ց, չ, Օրինակ՝** երբ (երփ), երգ (երք), արգելք (արքելք), կարողալ (կարթալ), արդէն (արքէն), վարդ (վարք), արծակ (արցակ), արջ (արճ), վերջ (վերճ), դեղձ (դեխց), մաղձ (մախց), ողջ (ոխճ), աղջիկ (ախչիկ), օգուտ (օքուտ), օգնել (օքնել), արագ (արաք), ուրագ (ուրաք), օդ (օք), օձ (օց), աջ (աճ) և այլն:

Այս բաղաձայններուն ուղղագրութիւնը նոյնն է մեր երկու գրական լեզուներուն մէջ ալ:

### **Վարժութիւն 1. Կրացնել բաց ձգուած տառերը.**

.աղտա.ողլի, .առնուկ, .աղմութիւն, .աթիլ, .ան.ատ, հն.ամեայ, .արեջուր, .արշելի, .աթսայ, .աթնասուն, վտան., դան.ակ, թանա.աման, .աւառացի, .եղեցիկ, .ալուած, .ամաւոր, ան.ամ, ենթամաշ.ային, արա.ավազ, .հտնախնձոր, .խտակից, .ամացուկ, .արօտալի, շա.անակա.ոյն, մա.րել, շա.արեղէդ, .խտկիք, .լխարկ, .աւահող, .եղծ, տա.նալ, ցամա.ային, .ոլորշի, .երակուր, .լոյլ.ութիւն, թան.ագին, ար.այ, .հտնակիւռ, եր.եցիկ, կար., մար.ա.հարին:

**Վարժութիւն 2.** Նախորդ վարժութեան բառերը դարձածնէ նախադասութեանց մէջ:

## **24. ՏՈՂԱԳԱՐՁ**

Երբ բառ մը ամբողջութեամբ տողին վերջը չի տեղաւորուիր, սողադարձ կ'ընենք:

Միավանկ բառերը չեն սողադարձուիր:

Բազմավանկ բառերը կը տողադարձուին վանկատուելով:

Տողին վերջը մնացող վանկէն յետոյ կը դրուի սողադարձի նշանը՝ ենթամնայ (-):

Տողադարձի կանոններն են՝

1. Երկու ձայնաւորներու միջեւ եղած բաղաձայնը չաջորդ

տողը անցընել. ինչպէս՝ դա-րուն, մա-քուր, ծի-րան, ա-ւադ, հա-յե-րէն:

Երբ ու-ն վ կը հնչուի և անոր կը նախորդէ Բ, տողագարձել Ը-ւ ձևով: Օրինակ՝ դարնուիլ՝ դարնը-ւիլ, պատմուածք՝ պատմը-ւածք, փրկուիլ՝ փրկը-ւիլ:

2. Երկու, երեք բաղաձայններէն (եթէ դադտնաւանկ չկայ) միայն վերջինը անցընել յաջորդ տողը. ինչպէս՝ վար-թօնք, մաք-րել, կար-դալ, դոր-ծիք, Խար-բերդ, անձ-կութիւն, բերկ-րանք, հանդ-չիլ:

3. Տողին վերջը մնացող և յաջորդ տողն անցնող դադտնա-ւանկերու (սուղ վանկ) մէջ լսուող Բ-ն կը գրուի. օրինակ՝ մը-թութիւն, մը-կըբսութիւն, մը-ռընչիւն, տըն-տեսել, ըզ-բաղմունք, ըս-կըսիլ, ըզ-գաստ, ըշ-տասել և այլն:

Մանօրութիւն. Օտար բառերը պէտք է այնպէս տողագարձել, որ անոնց հնչումը չխաթարուի. օրինակ՝ Ստրա-րոն (ոչ թէ Ըս-տրարոն), Սկի-տաք, Խպար-տակ, Սպա-նիա և այլն:

4. Իրարու կից երկու վանկաբար ձայնաւորներէն երկրորդը կարելի է անցընել յաջորդ տողը. ինչպէս՝ մի-ութիւն, լի-արժէք, է-ական, մի-օրինակ, բոսէ-ական, լի-իրաւ:

Բայց պէտք է խուսափել վերջնավանկի միակ ձայնաւորը տողագարձելէ. օրինակ՝ Արմե-նիա (ոչ թէ Արմենի-ա):

5. Բարդ կամ ածանցաւոր բառերը տողագարձ ընելու ատեն կարելի է յաջորդ տողը փոխադրել լատը կամ արմատը ամբող-ջութեամբ. օրինակ՝ ան-գնահատելի, ան-ասելի, տըն-օրէն, սղա-պրել, համ-ընդհանուր, բաղմա-շնորհ, դիւրա-դրգիւ:

Այս սլարագային յաջորդ տողն անցնող բաղադրիչի դադտնա-ւանկի Ը-ն չի գրուիր:

Վարժութիւն. Հետեւեալ բառերը տպագարձել հնարաւոր բո-լոր ձևերով.

Աղագաէր, ոտանալ, անէութիւն, հարցնել, կորուիլ, բախտըն-կեր, սրընթաց, անսկնկալ, ըմբռնել, խոստովանութիւն, ընկերակ-ցիլ, ախտահանել, ընթացքով, անպդոյշ, ամենաորտակից, կազմու-թիւն, սարսուլ, կոնչիւն, յանկարծակի, ուղղուիլ:

## 25. ԲԱՌԻ ՇԵՇՏ

Գրեթէ ամէն բառ, նոյնիսկ միավանկերը, շեշտ ունին, որ կը կոչուի բառի շեշտ՝ բառաշեշտ:

Շեշտակիր են բառերու վերջնավանկերը. օրինակ՝ բուղա՛ք,

դատադիրքը, խաղաղութի՛ւն, համբերութի՛ւն, մատի՛տ, աշակե՛րտ  
և այլն:

Նրբ բարբ կը վերջանայ Ը-ով, կը շեշտուի վերջընթեր վանկը:  
Օրինակ՝ թոշն՛ւնը, ուսուցի՛ւր, փողո՛ցը, գրագարա՛նը, կարմի՛րը,  
պատու՛հանք և այլն:

Սակաւաթիւ բառերու մէջ շեշտը կը դրուի առաջին վանկին  
վրայ. ինչպէ՛ս՝ զս՛ւպէ, մի՛թէ, մա՛նաւանդ, նա՛մանաւանդ, զո՛նէ  
ս՛եւ, ի՛նչեւէ, ն՛րբեւէ, ի՛նչեւիցէ և այլն:

Նրբ մի արդիւականի շեշտակիր ձայնաւոր Խ-ն սղուի, անոր  
շեշտը յաճախ կը փոխանցուի ձայնաւորով սկսող յաջորդ բառի  
առաջին վանկին. օրինակ՝ մ՛ը՛սեր, մ՛ը՛ներ, մ՛ա՛ռներ, մ՛ո՛ւտեր:

Կարգ մը բառեր անշեշտ են. ինչպէ՛ս՝ օժանդակ բայի հաս-  
տատականները՝ եժ՛, ես. է, էի, էիս, էր (գրեր եմ, նստած էի՛ն  
և այլն), ինչպէ՛ս նաև և, ու շողկապները, եթէ նախադասութեան  
մէջ չեն կրկնուիր:

## 26. ՀնՁԻՆԱՓՈՆՈՒԹԻՒՆ

Յաճախ բառի մը մէջ այս կամ այն հնչիւնը կը փոխուի մէկ  
ուրիշ հնչիւնի կամ կը սղուի: Օրինակ՝ հանդէս—հանդիսաւոր,  
սէր—սիրել, գրիչ—գրչածայր:

Մէր, հանդէս բառերուն է ձայնաւորը սիրել, հանդիսաւոր  
բառերուն մէջ փոխառած է Խ-ի Գրիշ բառի Խ-ն գրչածայր բառին  
մէջ սղուած է:

Կրնան փոխափել և երկհնչիւնները: Այսպէ՛ս՝ վայրկեան բա-  
ռին ես երկհնչիւնը վայրկեւաբար բառին մէջ դարձեր է ե:

Այսպիսի փոփոխութեանց կ'ենթարկուին առաւելապէս է, Խ,  
ու ձայնաւորները, ես (բառի վերջը եայ), ոյ երկհնչիւնները:

Այդ կը կոտարուի հետեւեալ կերպ:

Աժանցումներու, բառաբարդումներու, հոլովման, խոնարհման  
ատեն երբ բառը աճի, անոր շեշտը կ'անցնի վերջին վանկին վրայ.  
այդ պարագային շեշտակորոյս վանկին ձայնաւորը կամ երկար-  
բառը թուլնալով յաճախ կը հնչինափոխուի կամ կը սղուի:

Օրինակ՝ միրգ—մրգաստ, ամիս—ամսարիւ, պարտեզ—  
պարտիզպան. գունդ—գնդակ, սուր—սրել, բոյս—բուսական, յոյս—  
յուսալի, ատեան—ատենադպիր, գործունեայ—գործունէութիւն:

Հնչիւնափոխութեան զխաւոր երեւոյթներն են.



## 1. Է

Է ձայնաւորը փակ վանկի մէջ յաճախ կը դառնայ Ի: Օրինակ՝  
դէր — դիբնալ, գէղ — գիղել, հանդէպ — հանդիպիլ, սէր — սիրել,  
սէզ — սիզաւէտ, դէս — դիտուուր և այլն:

Է ձայնաւորը երբեմն փակ վանկի մէջ չի փոխուիր: Օրինակ՝  
վրէժ — վրէժխնդիր (բայց՝ վրիժաւու), տէր — տէրութիւն (բայց՝  
տիրել):

Է ձայնաւորը բաց վանկի մէջ չի փոխուիր: Օրինակ՝ բազէ —  
բազէակիր — բազէի, մտնրէ — մտնրէի, Եղիշէ — Եղիշէի և այլն:

## 2. Ի

Ի ձայնաւորը փակ վանկի մէջ՝

1. Յաճախ կը դառնայ ը, զոր շինք գրեք: Օրինակ՝ սիրա—  
սրտոտ, գիր—գրել, խլնդ—խնդալ, միշտ—մշտապէս և այլն:

2. Կրնայ նաև սղուիլ. օրինակ՝ գրիշ—գրչատուփ, սլատիժ—  
սլատիկ, ծաղիկ—ծաղկաման և այլն:

3. Յաճախ անփոփոխ կը մնայ Ի-ով սկսող միավանկ բառերու  
մէջ: Օրինակ՝ Իր—Իրտկան, Իսկ—Իսկական, Ինն—Իններորդ, Եր-  
բևմն այսպիսի միավանկ բառերու (մանաւանդ եթէ անոնք կը  
վերջանան մէկէ աւելի բաղաձայններով) Ի-ն կը դառնայ ը: Օրինակ՝  
Ինձ—ընձաւուժ, Իղձ—ըղձանք, Ինչ(ք)—ընչտէր և այլն:

Ի ձայնաւորը բաց վանկի մէջ յաջորդող ձայնաւորէն առաջ  
կը սղուի (թշնամի—թշնամական, բարի—բարութիւն, հայելի—  
հայելագործ): Նոյն դիրքի մէջ դտնուող Ի-ն և յաջորդող ա ձայ-  
նաւորը հնչունափոխուելով կը վերածուին Ե-ի. (տարի+ական—  
տարեկան, շողի+անաւ—շողենաւ, բարի+ական—բարեկամ,  
զինի+ագործ—զինեգործ), կամ Ի-ն կը գտնուայ Ե (սլատանի—սլա-  
տանեակ, սրգի—սրգեակ, հոյի—հոյեակ):

Բայց միավանկ բառերու Ի-ն բառի աճման ատեն չի փոխուիր:  
Օրինակ՝ թի—թիակ—թիափարել, գի—գիտի, ձի—ձիուուր—ձիեր,  
մի—միակ—միաւոր:

Բառի վերջը գտնուող Ի-ն կը մնայ անփոփոխ կարգ մը բազ-  
մավանկ բառերու մէջ: Օրինակ՝ քաղաքացի—քաղաքացիական,  
իրաւացի—իրաւացիութիւն իրաւացիօրէն, յուսուի—յուսուլու-  
թիւն և այլն:

Փակ վանկի մէջ **ու** ձայնաւորը՝

1. Միավանկ բառերու մէջ յաճախ կը փոխուի **ը-ի**, որ շի գրուիր Օրինակ՝ սուր—սրել—սրամիտ, ձուկ—ձկնորս, տուն—անակ, դուռ—դռան—դռնասպան և այլն:

2. Բազմավանկ բառերու վերջին փակ վանկին մէջ յաճախ կը կորսուի: Օրինակ՝ մանուկ—մանկութիւն, ամուր—ամրանալ, հանուր—հանրային, տխուր—տխրիլ և այլն:

3. Բազմավանկ բառերու վերջին փակ վանկին մէջ երբեմն կը պահպանուի. օրինակ՝ խանութ—խանութպան, լագուն(ն)—յուզումնայից, բուրում(ն)—բուրումնաւէտ և այլն:

4. Աւ-ով սկսող և մէկ բաղաձայնով վերջացող միավանկ բառերու մէջ սովորաբար կը պահպանուի. օրինակ՝ ուռ—ուսնոց—ուսի, ուշ—ուշանալ, ութ—ութերորդ—ութնոց և այլն:

5. Աւ-ով սկսող և մէկի աւելի բաղաձայնով վերջացող բառերու մէջ երբեմն կը պահպանուի, երբեմն ալ կը փոխուի **ը-ի**. օրինակ՝ ուզաւ—ուզասացան, ումպ—ըմպել, ունդ—ընդհդէն և այլն:

6. Բաց վանկի **ու-ն** գրութեամբ կը մնայ նոյնը՝ **ու**, բայց կ'արտասանուի **վ**: Օրինակ՝ ձու—ձուածեղ, կատո—կատու սպիտակատուխաղ, լիզու—լիզու սկան, մկուռ—մկուռ սպառ և այլն:

#### 4. Ա, Օ (ո), Մ

**Ա, Օ (ո)** ձայնաւորները մեծ մասամբ հնչիւնափոխութեան չեն ենթարկուիր, բայց երբեմն փակ վանկի մէջ կը կորսուին: Օրինակ՝ ժողով—ժողվել, օրօր—օրրան, կոճակ—կոճկել, հաւան—հանիլ, քաղաք—քաղքենի, արմատ—արմտիք և այլն:

**Մ** ձայնաւորը եւս սովորաբար շի հնչիւնափոխուիր: Կան բացառութիւններ՝ գեւ—գիւային, արցել(ք)—արցիլ(կալ և արցելաբան):

#### 5. ԵԱ

**Եա** երկհնչիւնը փակ վանկի մէջ կը փոխուի **ե-ի**: Օրինակ՝ մատեան—մատենագիր, առեան—առենակալ, պատեան—պատենաւոր—պատենիկ, կեանք—կենսագրութիւն, վարկեան—վարկենական և այլն:

**Ոյ** երկհնչիւնը փակ վանկի մէջ՝

1. Կը փոխառի ու-ի: Օրինակ՝ լոյս — լուսատար, լոյս — լուսալի, բոյս — բուսարան, կոյս — կոստիան, խոյս — խուսափելու և ուլն:

2. Երբեմն կը սղոսի կամ կը փոխուի ք-ի. օրինակ՝ պտոպտ — պտտիլ, կապոյտ — կապտիլ, քոյր — քրոջ և այլն:

**Ոյ** երկհնչիւնը բաց վանկի մէջ կը պահպանուի: Ընչդէս՝ գոյ — գոյական — գոյաթիւն — գոյանալ, խոյ — խոյակ — խոյանալ և այլն:

Պէտք է նկատի առնել, որ բառի աճման ոչ բոլոր պարագաներուն է որ կը կատարուի հնչիւնափոխութիւն: Վերը նշուած երևոյթները կը վերաբերին առաւելագոյն ածանցման, բարդութեան, հոլովման, և այն ալ տարբեր շափերով: Յոգնակիի կազմութեան ժամանակ մեծ մասամբ հնչիւնափոխութիւն տեղի չունենար: Օրինակ՝ առն — առնէր, շուն — շունէր, թիւ — թիւէր, տերեւ — տերեւէր, սպջիկ — սպջիկէր, վայրկեան — վայրկեանէր, յոյս — յոյսէր, լոյս — լոյսէր, տէր — տէրէր և այլն:

**Վարժութիւն 1.** Որոշեցէ՛ք հետեւեալ բառերուն արմատները շհնչիւնափոխուած վիճակի մէջ.

Լուսատու, յուսախար, գրաւոր, ըմպանակ, միջատ, խնդութիւն, շշնջիւն, թուշորս, հոգեակ, ամսական, ձկնորս, ժողովրդական, գլխատր, կռել, զմոսել, ջրել, բռնել, շշնջել, կիսատ, դիպել, շնչասպառ, անգնդախոր, հանգստութիւն:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ արմատական բառերուն աւելցուցէ՛ք մասնիկներ կամ արմատներ և կազմեցէ՛ք ածանցաւոր կամ բարդ բառեր՝ կիրարկելով ու բացատրելով հնչիւնափոխութեան կանոնները.

Մէդ, մատեան, կոխ, դիր, լոյս, պինդ, տարի, բարի, մօտ, տուն, գոյն, վայրկեան, դէր, սէր, պէս, յոյս, բոյս, սուր, զուժ:

**Վարժութիւն 3.** Ընդօրինակել հետեւեալ հատուածին մէջ գտնուող հնչիւնափոխուած բառերը և բացատրել զանոնք.

Հանդիսաւոր շնչտով մը կը կարգան արձանադրութիւնը, աշխարհարարի կը թարգմանեն, մեկնութիւններ կու տան:

Գրան առջև խոնուած այս ամբողջ բաղմութիւնը հետզհետէ ներս կ'ուղղուի: Բայց վերջին խումբերը ալ շնն կրնար յառաջ

շարժիլ: Ներքնագաւիթը արդէն լեցուած է, հոս ալ ամէն ոք կը ջանայ արմուկով ճամբայ բանալ գէպի ներս, սակայն ի դուրս Փողանցքին մէջ բաղմուսիւնը անթափանցելի պարիսպ մը երկարած է, մինչև դիմացի մեծ սրահը, որու լայնարաց դռնէն ելլողի ու ճառի ձայներ դուրս կը խումեն փոփոխակի: Շատերը արդէն ներս անցնելէ յուսահատ՝ նտ կը դառնան, գէթ շէնքին միւս մասերը պտըտելու...:

Խնդճ, առանձնասէր, համեստ մարդը շուարած է այս արտասովոր ցոյցերուն առջև, որոնց միակ առարկան ինք է:

Ձեռքերը կուրծքին, դուխը վայրահալ, ոչխարային խոշոր, բարի աչքերովը հազիւ երբեմն գաղտագողի ակնարկ մը կը սսլըրդեցնէ դիմացը շարուած տղոց վրայ: Բայց դէմքը հոգեկան անպարտդիր երանութեան մը ակներև ճառագայթումովը կը ցոլայ:

(Առանձաւ)



## Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Քերականութիւնը լեզուի գասընթացքին ամենահիմնական ու ամենակարեւոր մասերէն մէկն է: Քերականութեան բաժիններն են ձեւաբանութիւնն ու շարահիւսութիւնը:

### ՁԵՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

#### 27. ՁԵՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՄՐԿԱՆ

Բառերն ունին տարբեր նշանակութիւն ու ձև, ուստի և քերականակիտն տարբեր առանձնայատկութիւններու Օրինակ՝ գլուխ, սուն, մարդ, ծաղիկ բառերը առարկայի նշանակութիւն ունին, կրնան փոխել իրենց ձևը՝ հոլովուիլ, դորժածուիլ նշակի կամ յոգնակի թիւով՝ գլուխ, գլուխով, գլուխ, գլուխու, գլուխով և այլն:

Այլ նշանակութիւն ունին բերել, խօսիլ, ապուրել, աղալ և նման բառեր, որոնք դորժողութիւն կամ նշանակութիւն կը ցուցնեն: Աստիկ կս կրնան փոխել իրենց ձևը՝ խօսարհուիլ, դորժածուիլ նշակի և յոգնակի թիւերով, տարբեր ժամանակներով և այլն. օրինակ՝ կը բերեմ, կը բերես, բերած եմ, բերելու է, բերելու ըլլանք, բերած են եղեր, բերած պիտի ըլլան և այլն:

Ձեւաբանութիւնը կ'ուսումնասիրէ խօսքի մասերը (մասունք բանի), անոնց ձևը և փոփոխութիւնները:

#### 28. ՀԻՄՔ ԵՒ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Հայերէն լեզուի բառերը փոփոխութեան կ'ենթարկուին առանձին մասնիկներ ստանալով:

Օրինակ՝ փայտ, փայտի, փայտէ, փայտով, փայտեր, փայտը, փայտս. որ, որու. բերեմ, բերես և այլն:

Փոփոխութեան համար գործածուող մասնիկները կ'աւելան բառերու վերջը և այդ պատճառով ալ իր կոչուին վերջաւորութիւն:

Վերը բերուած բառերուն վերջաւորութիւններն են՝ ի, է, ով, եր, ք, ս, ու, եմ, ես:

Վերջաւորութիւնները միշտ կը դրուին ունէ հիմքի վրայ. օրինակ՝ Բարի, Բարէ, Բարով, հաճեմ, հաճող, հաճած, մալիւեսին, մալիւեսէն, մալիւեսով և այլն:

Վերջաւորութիւններ են հոլովման, խոնարհման ու յոգնակիրտ մասնիկները և յոգերը, որոնցմով նոյն բառին տարբեր ձեւերը կը կազմուին:

Փոփոխուած բառի մը այն հիմնական մասը, որուն վրայ կը դրուին վերջաւորութիւնները, կը կոչուի հիմք:

Վերջաւորութիւններն անջատելով՝ միշտ ալ կը մնայ հիմքը. օրինակ՝ ձուր-ի, ձուր-է, ձուր-ով, ձուր-եր, ձուր-ը բառաձեւերուն հիմքն է ձուր. իսկ վերջաւորութիւններն են՝ ի, է, ով, եր, ք:

Հիմքերը կրնան ըլլալ պարզ, բարդ կամ ածանցեալ. օրինակ՝ տունէն, ծառին, ջրկիւրեն, կազազործներ, ընկերութիւնով, վարուողի, ջուրով, գրեմ և այլն: Ասոնց մէջ տուն, ծառ, ջուր, գր (պիր) պարզ հիմքեր են, ջրկիւր, կազազործ՝ բարդ, ընկերութիւն, վարուող՝ ածանցաւոր:

**Վարժութիւն 1.** Հնդօրինակել փոփոխուած բառերը զատ-զատ՝ ստորագծելով հիմքերն ու վերջաւորութիւնները.

Սեղանիս վրայ է մոխրասպիտակ թերթերով ծաղիկը: Գոց սնտուկներու մէջ՝ ծովով, երկաթուղիով ճամբորդած է և ամիսներով աշխարհ պտըտած իմ ձեռքս հասնելէ առաջ:

Խոնջ ու վաստակաբեկի բան մը շկայ վրան, իր ձիւնադալար անկողնին մէջ ծլածի պէս՝ դողտը ու գողգողուն կեցեր է դէմս, երկու ձեռքով փարած իր զեղարդորդ ծաղկի փափկութեանը:

Ուշադրութեամբ կը դիտեմ այս անբացատրելի հմայքը, այս տնձառամ երիտասարդութիւնը, և մատիս դղչելուն՝ կը պզամ որ իր տեքններուն նուրբ թաւիշը՝ փայտաշանրբ սիրող ուղտիկ կաշուի մը տակն պէս կ'աղուզ է դեռ:

(Գ. Զօհրապ)

**Վարժութիւն 2.** Փոփոխել հետեւեալ բառերը, աւելցնել վերջաւորութիւններ՝ ստորագծելով հիմքերը.

Չուր, ծաղիկ, գործ, մատիտ, երգել, պատմել, խաղալ, զարմաւնալ:

**Վարժութիւն 3.** Որոշել հետեւեալ բառերուն հիմքն ու վերջաւորութիւնը.

Հայրենիրով, հողեր, քաջութենէն, երգեմ, դրասախտակին, կարդացին, կարդալու, քարը, քարեր, դարակներու, ջրկիրներու, սունկն:

**Վարժութիւն 4.** Ընդօրինակել հետեւեալ բառերը՝ որոշելով անոնց արմատը, ածանցը, հիմքն ու վերջաւորութիւնը.

Հողագործին, հայրենասիրութենէն, մրցութենէն, բերող, կարգացող, հանգստանալու, հացթուխներու, անվարժներու, դրասէրներու, լաւատեսներէ, սրբատէղս, սլաբատէղներ, գործերգ, գործերուն, ուսուցիչներով:

## ԽՕՍՔԻ ՄԱՍԵՐ

### 29. ԸՆԿՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԲՈՒԹԻՒՆ

Խօսելու կամ գրելու ատեն բառերու միջոցաւ նախադասութիւններ կը կազմուին. այդ բառերն իրենց նշանակութեամբ ու ձևով իրարմէ կը տարբերին: Օրինակ՝ Աշակերտը հոն գնեց զիւր ու մատիտ նախադասութեան մէջ աշակերտ, զիւր, մատիտ բառերը ունին առարկայի նշանակութիւն և կրնան փոփոխուիլ, հոլովուիլ՝ աշակերտի, զիւրի, մատիտէն և այլն: Իսկ գնեց բառը ունի գործողութեան նշանակութիւն և նոյնպէս կրնայ փոփոխուիլ, բայց ոչ թէ հոլովուիլ, այլ խոնարհուիլ՝ գնեմ, գնես, գնէ, կը գնեմ, կը գնես, կը գնէ, գնելու, գնած և այլն: Սակայն հոն բառը ո՛չ առարկայի և ո՛չ ալ գործողութեան իմաստ կ'արտայայտէ: Ան կը ցուցնէ գործողութեան կատարման տեղը և շի կրնար փոփոխութեան ենթարկուիլ, այսինքն՝ հոլովուիլ կամ խոնարհուիլ:

Բառերն ըստ իրենց նշանակութեան, երբեմն նաեւ ըստ իրենց ձևին ու կիրառելութեան՝ կը կազմեն խումբեր, որոնք կը կոչուին խօսքի մասեր: Օրինակ՝ այն բոլոր բառերը, որոնք գործողութիւն, այսինքն բան մը բնել կամ ըլլալ կը ցուցնեն, բայ են: Բայերը կը թերութիւն, կը խոնարհուին. ատիկա անոնց ձևն է: Գրել, երգել, խօսիլ, ուսնիլ, աղալ, խաղալ և ասոնց նման բազմաթիւ այլ բառեր իրրեւ խօսքի մաս բայ են, որովհետեւ գործողութեան իմաստ կ'արտայայտեն և կրնան խոնարհուիլ:

Այն բոլոր բառերը, որոնք կը ցուցնեն առարկայի մը ինչ-

պէս բլլալը, ամական կը հոշտին: Ածականները ո՛չ կը հոշտուին, ո՛չ ալ կը խոնարհուին, աչսինքն՝ չեն թերուիր, չեն փոխուիր: Յրինակ՝ Բաշ, ուրախ, բարձր, փայտեայ, կաշտական և նման բաներ, իրբն խօսքի մաս, ամական են:

Հայերէնի խօսքի մասերը տասն են՝ գոյական, ամական, բնական, դերանուն, բայ, մակրայ, կապ, շաղկապ, եղանակաւորոյ բաներ և ձայնարկութիւն:

Խօսքի մասերը կ'ըլլան՝ փոփոխուող և անփոփոխ: Փոփոխուող խօսքի մասերն են՝ գոյականներ, դերանուններ (մէկ մասը) և բայեր, որոնցմէ առաջին երկուքը կը հոշտուին, իսկ վերջինը՝ բայը, կը խոնարհուի. օրինակ՝ ջուր, ջուրի, ջուրէ, ջուրով. ես, իմ, ինձ (ինձի). գիս, ինձմէ, ինձմով. գրել, կը գրեմ, կը գրես, կը գրէ, գրեմ, գրած եմ և այլն:

Անփոփոխ խօսքի մասերն են՝ ամականներ, բնականներ, մակրայներ, կապեր, շաղկապներ, եղանակաւորոյ բաներ և ձայնարկութիւններ:

Ասոնք ո՛չ կը հոշտուին և ո՛չ ալ կը խոնարհուին: Անփոփոխ խօսքի մասերը՝ մասնատրարոր սծականն ու թուականը կրնան հոշտուիլ միայն գոյականարար գործածուելու ատեն՝ կապոյտ, կապոյտի, կապոյտէ, կապոյտով. երե՛մ, երե՛քի, երե՛քէ, երե՛քով և այլն:

## ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

### 30. ԲՆԷԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գոյական են այն բաները, որոնք առարկայի խմատ կ'արտայայտեն:

Առարկայ ըսելով կը հասկնանք իրեր (տուն, ծառ, ծաղիկ, փայտ, գրիչ), կենդանի արարածներ (մարդ, ուսուցիչ, աշակերտ, ախակ, նստատանակ), երեւոյթներ (ամպրոպ, կայծակ, փոքրիկ, հողմ), գաղափարներ (բարեկամութիւն, բնկերութիւն, պատիւ, ում), մէկ խօսքով՝ այն բոլոր բաները, որոնց համար կըրնայ ուղղուիլ դոյականներուն յատուկ ո՛վ կամ ի՞նչ հարցումը:

Օրինակ՝

Ո՞վ—մարդ, գիւղացի, Արշակ, Տիրբան, աշակերտ, ուսուցիչ, հայր, մայր, աղջիկ, սոլայ և այլն:

Ի՞նչ—լեռ, ձոր, ծառ, ծաղիկ, թուղթ, կտվ, մատիտ, դպրոց, բաշտութիւն, վախ, որոտում, լուսին, արեւ և այլն:



Կենդանի արարածներն ու իրերը, զորս կրնանք տեսնել, շօշափել, զգալ, քանձրացական առարկաներ են (ղաշտ, անտառ, մարդ, քաղուն, ռզմի, նաւ, նաւալար և այլն): Իբրև առարկայ դիտուող երևույթները, որոնց համար թէև կ'ուղղուի դոյականին յատուկ ի՛նչ հարցումը, բայց որ կարելի չէ զանոնք տեսնելով, շօշափելով զգալ, վերացական առարկաներ են (նոզ, սլայձառուրիւն, ում, վախ, արիւրիւն, պատիւ և այլն):

Գոյական անուններն ունին կարգ մը յատկանիշներ: Անոնք կը գործածուին որոշեալ ու անորոշ առումներով (մարդը, փողոցը, մարդ մը, փողոց մը), ունին քերականական թիւ (գիրք—գիրքեր, եղբայր—եղբայրներ) և ամենակարևորը՝ կրնան փոփոխուիլ՝ հոլովուիլ (բար, բարի, բարէ, բարով): Գոյական անունները երկու տեսակ են՝ հասարակ և յատուկ:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել դոյականներն իրենց ուղիւ ձեւերով (առանց վերջաւորութիւններու) և փակագիծերու մէջ նշել թէ անոնցմէ իւրաքանչիւրը ո՞ր հարցումին կը պատասխանէ.

Կառքը ալ շէր շարժեր, կառապանը դեպի նստած էր. անգամ մը որ ծերունին կառքին կաշեծածքին տակ պատասպարեց, ուղևարը ձեռքի հարուած մը տուաւ կառապանին՝ զայն սթափ պահելու համար, ու ձիերուն քով դնաց. ձիերէն մէկուն ոտքը դայթած էր, ու ձիւնը այնքան խոր էր, որ ձին մէջը կը միտէր, այնպէս՝ ինչպէս մարդ կը խնդդուի:

Վաճառականը լուցկի մը զարկաւ, ու դողդոջուն պղտիկ լոյսը իրեն ցուցուց թէ կենդանիի աչքը պղտոր ու անշարժ էր:

(Մ. Մեծարեկց)

**Վարժութիւն 2.** Ընդօրինակել դոյականները, փակագիծերու մէջ նշելով թէ անոնք ի՛նչպիսի առարկաներ կը ցուցնեն՝ թանձրացակա՞ն թէ վերացական.

Պատմութիւնս հետաքրքրական ընկելու ջանքով և անկից քանի մը հարիւր օրինակ աւելի ծախելու համար չ'ըսի, թէ նոյն օրը սաստիկ հով մը կար, թէ տեղատարափ անձրևս կու դար, թէ խուսն բաղմութիւն մը հետաքրքրութեամբ գէտ ի Ղալաթիոյ հրապարակը կը վազէր, թէ ստիկանութիւնը աղջիկ մը ձերբակալած էր և այլ խօսքեր, որովք վիպասաններն կ'սկսին միշտ իրենց վէպերը:

(Յ. Պարոնեան)

### 31. ՀԱՍԱՐՍԿ ԵՒ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

Հասարակ է այն անունը, որ կը տրուի նոյն տեսակի առարկաներէն իւրաքանչիւրին:

*Օրինակ՝ տան, գրադարանի կամ գրատան մէջ շատ դիրքեր կան՝ մեծ, փոքր, դեղարուեստական, դիտական և այլն: Բայց անոնցմէ իւրաքանչիւրը, իրրեւ նոյն տեսակի առարկայի անուն, կը կոչուի գիր:*

Հասարակ անուններ են՝ ջուր, լեռ, տեսք, լրագիր, անպ, օր, միտք, անիւ, այգի, մարզ, որդի, նայր, ուսուցիչ և այլն:

Հասարակ անունները կը գրուին փոքրատառով:

*Օրինակ՝*

*Ով խեղճ արինգ, տարաբախտ ոստ,  
Ան ո՞ր անգութ ձեռն էր անտես,  
Կամ ո՞ր կայծակն որսալնդոստ,  
Ո՞ր խելց, շորցուց բեզ ոսկրի պէս...*

Յատուկ է այն անունը, որ կը տրուի նոյն տեսակի առարկաներէն միայն մէկուն՝ իր նման միւս առարկաներէն զատելու, զանազանելու համար:

*Օրինակ՝ աշխարհի մէջ շատ ու շատ քաղաքներ կան, բայց դանոնք իրարմէ զատելու, զանազանելու նպատակով իւրաքանչիւրին անուն մը կու տանք՝ Փարիզ, Երևան, Անի, Վան և այլն: Նոյն ձևով յատուկ անուններ կը տրուին մարդերու (Անուշ, Հայկ, Ասպիկ, Վահան), զեաւերու (Արաբ, Հրազդան, Նեղոս, Գաւուր), ովկիանոսներու, ծովերու ու լիներու (Ալպանտան ովկիանոս, Սև ծով, Սեանայ լիւն), գիւղերու (Հագեկ, Ապարտե, Բալիւն, Կարծրաբերդ), ինչպէս և պետութիւններու (Հայաստան, Ռուսաստան), գիրքերու («Վարդանանկ», «Մեծապատիւ մուսակաւներ») և այլն:*

Յատուկ անունները կը գրուին մեծատառով (զլրագիր):

*Օրինակ՝*

*Մնար քարով, իմ հայր Սիվան,  
Եւ դու, իմ մայր Վանայ ծով,  
Ուր էջ դեամ, ձեզ չաւիտեան  
Չեմ մոռանայ իմ լազով:*

**Վարժութիւն 1. Ընդօրինակել յատուկ և հասարակ անուններն առանձին-առանձին:**

**Ա.** Այս հանգստութիւնը, որ Ղուկաս էֆէնտին կ'երազէր, շատ երկար շտեմեց:

Յորմէհնաէ Ս. Երրորդութիւն եկեղեցիին դայթակղական միջոգէպին հետեւանքով հրաժարած էր Աղքատախնամին նախագահութենէն, որեւէ տեղեկութիւն չէր ունեցած Շուշանիկի մասին:

Կիրակիի դէպքին հետեւեալ ու յաջորդ օրերը, ամբողջ Ֆէրի գիւղ այդ եղելութեամբ զրաղեր էր: Հաճի Թումիկի աղոցնութիւնն ու ժողովրդականութիւնը նոր փայլ մը ստացած էր այդ արարքովը:

(Ե. Օտեան)

**Բ.** Գարեգին պարկեշտ ու պատուախնդիր երիտասարդ էր, չէր ուզեր իր համոզումները ղոհել Մարգար էֆէնտիի քմահաճոյքներուն և միշտ պայքարած էր անոր դէմ: Իր այս ընթացքը բնականաբար զինքը դասել տուած էր Պօղոս էֆէնտիի կուսակիցներու շարքին մէջ, թէեւ ներքնապէս Գարեգին շերմ պաշտպան մը չէր եղած Թաղական Խորհրդի նախկին ատենապետին: Ք. Թաւրի մէջ, ուր երկու կուսակցութիւններ իրարու դէմ լարուած էին, Գարեգին կը շարունակէր ընդհանուր համակրանք վայելել, որովհետեւ իր հակառակորդներն ալ չէին կրնար ուրանալ անոր ուղղամըտութիւնը:

Երբ «Շանթ Ակումբ»-ի անդամներու ձեռքով ընտրական գործադրութիւնը խանգարուեցաւ և թաղային ընտրութիւնը ապարդին մնաց՝ թաղեցիներու չէղոք մասը, տեղի ունեցած արարքներէն՝ գայթակղած, ուղեց միջամտել և վերջ տալ տիրող խառնակութիւններուն...»:

(Ե. Օտեան)

**Գ.** Երբ Մկրիկ պատանեկութեան հասակը թեւակոխեց, Կեսարիոյ հորիզոնը շատ նեղ եկաւ իրեն. հալիւ հայերէն ընթերցանութիւն ուսանելու միջոց գտաւ հոն:

Մկրտիչ էֆէնտի 1859-ին դեռևս դպրոցական՝ ազգային կենաց մէջ նետուեցաւ: Յիշեալ թուականին Պալատու ժողովրդական ընկերութիւնը հիմնողներէն մէկն ալ ինքը եղաւ:

1868-ին երբ զինքը Ընտրողական ժողովոյ ատենապետ ընտրեցին իսկիւտարցիք, ինքն ալ զարմացաւ, բայց երբ տեսաւ,

որ թաղին կուսակցութիւնները շէղոք ատենապետ մը գտնելու և զայն իրենց գիմակ ընելով իրարու հետ կոուելու համար զինքը կարգեր են, հորհրդարանը թողուց, տուն քաշունցատ

(Յ. Պարոնեան)

**Վարժութիւն 2. 10 հասարակ և 10 յատուկ անուն գործածել նախադասութեանց մէջ:**

### 32. ԸԱՂԱԳՐԵԱԼ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յատուկ անունները կ'ըլլան նաեւ բաղադրեալ՝ բաղկացած երկու կամ աւելի բառերէ (Փոքր Ասիա, Սև ծով, Արարական Միացեալ Հանրապետութիւն):

Բաղադրեալ յատուկ անուն կազմող բոլոր բառերը կը գրուին զլիսագիրով՝

1. Եթէ ան պետութեան մը անունն է՝ հորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւն, Հայաստանի հորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն, Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Զխոսարտութեան Գիտական Հանրապետութիւն և այլն:

2. Եթէ բաղադրեալ անուն մէջ լրացեալը յատուկ անուն է՝ Տիգրան Մեծ, այստեղ լրացեալն է Տիգրան, որ յատուկ անուն մըն է, ուստի զլիսագիրով կը գրուի լրացումն ալ (Մեծ): Այսպէս կը գրուին նաեւ Մեծ Հայք, Փոքր Հայք, Սուրբ էջմիածին, Ներսէս Շնորհալի, Աշոտ Երկաթ, հրիմեան Հայրիկ, Գայլ Վահան, Փոքր Ասիա, նոր Արարիկ, նոր Նախիջևան, Վերին Սասնաշէն և այլն:

3. Փոխանուն պաշտօններ ու տեղանուններ, բարձր կոչումներ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց, նորին Սրբազնութիւն, Ս. Պատրիարք և այլն:

Մնացեալ բոլոր սլարադաններուն զլիսագիրով պէտք է սկսիլ միայն առաջին բառը. օրինակ՝ Ներսիսեան դպրոց, Թէքէեան վարժարան, Հայկական լեռնաշխարհ, Վարազա վանք և այլն:

Յատուկ չեն այն առարկաներու անունները, որոնք մէկ հատ են. օրինակ՝ արեւ, լուսին, երկինք, երկիր, հողագունդ (երկրագունդ) և այլն: Բայց երբ պէտք ըլլայ արեւը, լուսինը, երկիրը զատել, զանազանել միւս աստղերէն ու մոլորակներէն, այդ սլարադային այդ նոյն բառերը կը գրուին զլիսագիրով. օրինակ՝ մարդը հզօր հրթիռ-

Ներու օգնութեամբ կրցաւ անջատուիլ Սրկիր մուրակէն, նկարահանել Լուսինն ու Հրատը, բարդ շափիչ գործիքներով հաղորդակցիլ Արեւին ու Արուսեակին հետ:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել բոլոր յատուկ անունները՝ բայատրելով անոնց ուղղագրութիւնը.

Հայաստանի հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէ որ Խորհրդային Հայաստան հիւրընկալուած անգլիացի գրող Ճօն Պրիստլին և անոր կիներ՝ գրող Ճաքերթա Շօքս, այսօր այցելեցին Հայաստանի գրողներու միութիւն: Օրուայ երկրորդ կէսին հիւրերն այցելեցին Ուրարտուի մշակութային խոշոր կեդրոն էրեբունիի (Արիւբերդ) ամրոցի պեղումները:

Հայաստանի գիտութիւններու ակադեմիայի և Մոսկուայի Ա. Ս. Պուշկինի անուան կերպարուեստի թանգարանի միացեալ հնագիտական արշաւախումբի ղեկավար Կ. Յովհաննիսեանը անոնց տեղեկութիւններ հաղորդեց Ուրարտուի դարաշրջանի, էրեբունիի մօտակայքը դամուտը հին քաղաքներու մասին:

Ճաքերթա Շօքս, որ միաժամանակ «Օսյսերվըր» թերթի թղթակիցն է, Հին Հայաստանի պատմութեան մասին կարգ մը հարցումներ բրաւ:

Ճօն Պրիստլին, որ նաև նկարիչ է, Հայաստան եղած ատեն ջրաներկով նկարեր է կարգ մը ընապատկերներ՝ «Սեւանայ լիճը», «Գառնիի ձանապարհը», «Գառնիի բնութիւնը» և այլն:

(Լրագիր)

**Վարժութիւն 2.** Կադմել 10 նախագասութիւն բաղադրեալ յառուկ անուններով:

### 33. ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԹԻՒԸ

«Արտորալով կ'անցնէր փողոցէն, տենդոտ ձեռքովը ուժգին օեղմելով կտրցած քաւրի պղտիկ զլաններ, որոնք իր տալիք դաշնակի դասուրուն տետրակներն էին»:

Այս նախագասութեան մէջ գործածուած փողոցէն, ձեռքովը, քոտրի, դաշնակի գոյականները կը ցուցնեն մէկ առարկայ, իսկ զլաններ, դասեր, տետրակներ՝ մէկէ աւելի առարկաներ:

Ուրեմն՝ գոյականները կրնան ցուցնել մէկ կամ աւելի առարկաներ: Այս պատճառաւ գոյականները կ'ունենան երկու թիւ՝ եզակի և յոգնակի:

Եղակի թիւով գոյականը կը ցուցնէ մէկ հատ առարկայ կամ նոյն տեսակի առարկաներու իւրաքական ամբողջութիւն մը:

*Օրինակ՝* զիրք, զետ, քաղաք, մարդ, ջուր, եղբայր, ժողովուրդ, զիւղացիութիւն, աշակերտութիւն և այլն:

Այս օրինակներուն մէջ զիրք, քաղաք, մարդ, ջուր, եղբայր եղակի թիւով գոյականները կը ցուցնեն մէկ առարկայ, իսկ ժողովուրդ, զիւղացիութիւն և աշակերտութիւն եղակի թիւով գոյականները՝ առարկաներու հաւաքական ամբողջութիւն մը:

Յոգնակի թիւով գոյականը կը ցուցնէ միեւնոյն տեսակէն մէկէ աւելի առարկաներ:

*Օրինակ՝* գրիչներ, քաղաքներ, մարդիկ, եղբայրներ, ժողովուրդներ և այլն:

Կարգ մը գոյականներ կը գործածուին միայն եղակի. օրինակ՝ սէր, ռիս, ալիւր, մածուն, աղ (*կերակուրի*), զիւղացիութիւն, մաքրասիրութիւն, աշակերտութիւն, խաղաղութիւն և այլն:

**Մանօրութիւն.** *Քանաստեղծութիւններու մէջ երբեմն յոգնակի թիւով կը գործածուի սէր բառը: Այդ պարագային ան կ'արտայայտէ սիրոյ տարբեր զգացումներ՝ սէրեր: Այդպէս նաև երբեմն յոգնակի թիւով կրնան գործածուիլ աղ և այլ բառեր:*

**Վարժութիւն 1.** *Ընդօրինակել եղակի թիւով գոյականներն առանձին, յոգնակի թիւով գոյականները՝ առանձին.*

Հայեր ու յոյներ միայն կը յաճախեն Բեսդը: Վարժարանէնոր ելած երիտասարդներ են ասոնք, մեծ մասամբ անգործ դասատուներ, գործ փնտոող դրագիրներ, պաշտօնի հետամուտ բողոքական քարոզիչներ: Հոն կը նստին ժամերով, պատուհանին մօտ, միշտ յուսալից և ակնկալու, ուշադիր՝ դրան իւրաքանչիւր բացուածքին և ներս մտնող մարդուն, որ գողցես իր հետ պիտի բերէ այնքան ատենէ ի վեր ըզձացուած դասերը կամ պաշտօնը:

(Լ. Բաշալեան)

**Վարժութիւն 2.** *Հետեւեալ յոգնակի բառերը դարձնել եղակի.*

Գիւշերներ, դասարաններ, գիրքեր, տառեր, ընկերներ, եղբայրներ, հարազատներ, քարեր, մատնաններ, քաշեր, գիտուններ, եզրեր, կենդանիներ, ծովեր, լիճներ:

**Վարժութիւն 3.** Գրել ութ գոյական անուններ, որոնք շունհանան յոգնակի թիւ:

**34. ՅՈԳՆԱԿԻ ԹԻՒԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ**

Գոյականներու յոգնակի թիւը կը կազմուի գոյականի ուղիղ ձևին վրայ աւելցնելով **եր** կամ **ներ** մասնիկը:

Օրինակ՝ ծառ—ծառեր, գործ—գործեր, տուն—տուներ, փողոց—փողոցներ, անիւ—անիւներ, հնոց—հնոցներ և այլն:

Յոգնակի կազմելու համար միավանկ բառերու վրայ կ'աւելցրի **եր** մասնիկը. օրինակ՝ սուր—սուրեր, դետ—դետեր, վարդ—վարդեր, քար—քարեր, յոյս—յոյսեր, բոյս—բոյսեր:

Յոգնակի թիւի կազմութեան ատեն **եր** մասնիկ կը ստանան նաեւ այն գոյականները, որոնք կազմուած են մէկլուկէս, այսինքն՝ մէկ լրիւ և մէկ սուղ վանկէ (հոս սուղ վանկը երկրորդը կ'ըլլայ). օրինակ՝ աստղ—աստղեր, արկղ—արկղեր, անդղ—անդղեր, դուստրը—դուստրեր, կայսր—կայսրեր, տետր—տետրեր:

Եզակի թիւով թանի մը գոյական անուններ գրարարի մէջ կը վերջանան **Յ** բաղաձայնով. օրինակ՝ եզ**Յ**, մուկ**Յ**, ձուկ**Յ**, ոտ**Յ**, ձեռ**Յ**, հարս**Յ**, թոռ**Յ** և այլն. Ժամանակակից արեւելահայ լեզուի մէջ ասոնք կը գործածին առանց **Յ**-ի (եզ, մուկ, ձուկ, հարս և այլն), բայց յոգնակի թիւի կազմութեան ժամանակ կը վերականգնի գրարարեան **Յ** հնչիւնը միավանկ բառերու վրայ աւելցող **եք** յոգնակերտ մասնիկէն առաջ. Այսպէսով՝ այդ միավանկ բառերը իրենց յոգնակիին մէջ կ'ունենան **Յ**ներ, բայց բուն յոգնակերտը **եք** մասնիկն է. օրինակ՝ եզ—եզներ, մուկ—մկներ, ձուկ—ձկներ, ոտ—ոտներ, ձեռ—ձեռներ, հարս—հարսներ, թոռ—թռներ:

Բազմավանկ գոյականներու յոգնակին կազմելու համար բառի ուղիղ ձևին վրայ կ'աւելնայ **ներ** մասնիկը. օրինակ՝ դարբնոց — դարբնոցներ, հնոց — հնոցներ, աշակերտ — աշակերտներ, ուսուցիչ — ուսուցիչներ, ծաղիկ — ծաղիկներ, պատանի — պատանիներ, մատիտ — մատիտներ և այլն:

Ն վերջայանգ բազմավանկ բառերը ստանալով **ներ** յոգնակերտ մասնիկը, կ'ունենան երկու **ն**. օրինակ՝ դասարան—դասարաններ, պահարան — պահարաններ, գիտուն — գիտուններ, իմաստուն — իմաստուններ, հնչիւն—հնչիւններ:

Այն բարդ բառերը, որոնց երկրորդ արմատը միավանկ է, յոգնակիի կազմութեան ատեն կը ստանան **եր** կամ **ներ** մասնիկը.

օրինակ՝ քարածայր—քարածայրներ, դասագիրք—գասագիրքեր, բայց՝ կաթնասուն—կաթնասուններ, խոտակեր—խոտակերներ:

Եր կամ ներ մասնիկները կը գործածուին հաշուի առնելով այն պարադան, թէ երկրորդ միավանկ արմատը ինչ իմաստ ունի: Երբ բարդ բառին երկրորդ միավանկ արմատը գործածուած է առարկայի իմաստով՝ իբրև գոյական, այդ բառին յոգնակին կազմելու ատեն կ'աւելցնենք եր մասնիկը. օրինակ՝ քարածայր, դասագիրք, զուգավայտ, երկարածող, զլխատառ բառերուն երկրորդ արմատները միավանկ են և գործածուեր են գիրք, վայտ, ձող, տառ առարկաներու իմաստով՝ իբրև գոյական. այդ պատճառով ալ նշուած բարդ բառերուն յոգնակին կը կազմուի եր մասնիկով՝ քարածայրներ, դասագիրքեր, զուգափայտեր, երկաթածողեր, զլխատառեր:

Երբ բարդ բառին երկրորդ միավանկ արմատը կ'արտայայտէ բան մը ընողի իմաստ, այդ բառին յոգնակին կազմելու ատեն կ'աւելցնենք ներ մասնիկը. օրինակ՝ մարդաւէր—մարդ սիրող, ձկնորս—ձուկ որսացող, խոտակեր—խոտ ուտող, ժամացոյց—ժամ ցուցնող, դարպասապահ—դարպաս պահող, նամակատար—նամակ տանող, լրաբեր—լուր բերող: Այգ պատճառով ալ նշուած բառերուն յոգնակին կը կազմուի ներ մասնիկով՝ մարդասէրներ, ձկնորսներ, խոտակերներ, ժամացոյցներ, դարպասապահներ, նամակատարներ, լրաբերներ:

Ներ մասնիկը կը դրուի նաև այն պարագային, երբ երկրորդ միավանկ բառին լրացումը ածական ըլլայ. օրինակ՝ շիկահեր—շիկահերներ, մեծամիտ—մեծամիտներ, շարամիտ—շարամիտներ, բարեսիրտ—բարեսիրտներ, դեղադէմ—գեղադէմներ:

Որոշ բառերու յոգնակի թիւը կրնայ կազմուիլ զբաբարեան ք մասնիկով. ինչպէս՝

1) Յի վերջածանցն ունեցող բառերը. երևանցի—երևանցիք, վանցի—վանցիք, մշցի—մշցիք, տեղացի—տեղացիք, շահցի—լեռնցիք:

2) Ունի վերջածանցն ունեցող բառերը. Ուշտունի—Ուշտունեք, Բազրատունի—Բազրատունիք, Արշակունի—Արշակունիք:

3) Որդի, քտղայ բառերուն յոգնակին կ'ըլլայ նաև՝ ողիք, տղայք:

Կին, տիկին, պարոն բառերուն յոգնակի թիւը կը կազմուի եր, ներ մասնիկներով՝ կիներ, տիկիներ, պարոներ. բայց այդ բառերուն համար գործածական են նաև կանայք, տիկնայք, պարոնայք գրաբարեան ձևերը:



**Վարժութիւն 1.** Խմբաւորել հետեւեալ բառերը ըստ յոգնակիի կազմութեան՝ ստորագծելով յոգնակերտ մասնիկները.

Ասակիներ, բանաստեղծութիւններ, լոյսեր, բնակարաններ, թուղթեր, լեռներ, մատներ, ամաններ, զրիչներ, ումեր, դիմեր, ղանդակներ, հեռցապաններ, հայրեր, ծաղիկներ, սերմեր, արկղեր, դուստրեր, բոյսեր, կակաչներ:

**Վարժութիւն 2.** Կաղմել հետեւեալ զոյականներուն յոգնակին.

Առաւօտ, բոյս, արկղ, բուն, վէպ, գլուխ, տառ, հնչիւն, գրատախտակ, ժողովուրդ, եզր, եղ, անօթ, բաղկաթոս, դահ, ողնի, որսորդ, մուկ, աշխատանք, գիտնական, ճնմարան, համալսարան:

**Վարժութիւն 3.** Արտագրել յոգնակի թիւով գործածուած գոյականները, ստորագծել յոգնակերտ մասնիկները՝ բացատրելով իւրաքանչիւրին գործածութիւնը:

Աշխարհի զանազան երկիրներէն կ'երկարին կարաւանները հայրենարդձ հայերու Սասունցիք ու մշեցիք, վանեցիք ու կարսեցիք, հազար ու հազար հայրենասէրներ օտար ճամբաներէ կը վերադառնան մայր Հայաստան: Կրագիրները կը տպագրեն հայրենադարձներու շքեմ խօսքեր: Կը բաժնուին մարդիկ՝ խնդութեան արցունքներով, այն հաստատ համոզումով, որ շուտով պիտի հանդիսին իրարու հայրենի հողին վրայ, Մասիսներու հովանիին տակ: Ապագայի պայծառ ծրագիրներ, ստեղծագործ, ազատ աշխատանքի հեռանկարներ:

— Բարի ե՛րթ Ձեզ, պարոնայք ու տիկնայք, տղաք ու աղջիկներ, — կ'ըսեն մեկնողներուն ճամբու գնողները, — բարի հանդիպում մայր հայրենիքի մէջ:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ բանաստեղծութիւնէն ընդօրինակել յոգնակի թիւով գործածուած զոյականները. ստորագծուած բառերը արտայայտել յոգնակի թիւով՝ նշելով յոգնակերտ մասնիկները.

Դեռ մի կարօտ ունեմ անյադ՝ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,  
Լցուած կեանքով հազարաղանդ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,  
Ախորեանի շրբրի պէս զմրուխտ փէշկն համբարելով,  
Դառած մի նոր սիրոյ դղեակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:  
Հազար աստուայ կարօտ ունի փմ երազը հազարաթեւ,  
Ա՛խ, թէկուզ լուռ, դեռ աւերակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ...

Անցնեմ դարեր ոտք շորած հող ու հաճողվ իմ պապերի,  
Հայոց խովի համբոյրի տակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:  
Վանայ ծովի ու Վանի հետ ու Կարսի հետ ու Սեւանի,  
Իմ Սեւանի լոյսերի տակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:  
Կրծքիս սեղմեմ բերդերս աներ, բուերի տեղ սոխակ դառնամ,  
Որպէս երգ ու վարդի փաղափ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:

(Յ. Շիրազ)

**Վարժութիւն 5.** Կաղմել հետեւեալ բարդ բառերուն յոգնակին.

Տանտէր, ինքնաթիռ, շոգեբարշ, լուսատու, գինետուն, քա-  
րածայռ, նորալարծ, շիկահեր, բնասէր, քառատող, ինքնագիր,  
լեռնադաշտ, քաջասիրտ, մօրաքոյր, արունստատէր, թատերագէտ,  
սարալանջք:

**Վարժութիւն 6.** Ընդօրինակել յոգնակի թիւով գործածուած գո-  
յականները՝ բացատրելով անոնց կաղմութիւնը.

Իրիկնալոյսին ծիրանի ծովուն մէջ կղզիացած արտասուող  
ուռիներու շուքին տակ, հովիտին խորը ահաւասիկ իմ երգս, արօտ-  
ներուն շունչովը լեցուն. ահաւասիկ իմ երգս, առուեզերքի աննու-  
խին ու ռեհանին խունկովը օծուն. ահաւասիկ իմ երգս, հնձուած  
արտերուն ու հերկուած հողերուն բոյրովը, արեւեփ խաղողներուն  
ու մեղրացած թուղերուն անուշոյքովը ակաղձուն, իմ երգս՝ իղձի  
մը, արցունքի մը սրէս պարզ ու վճիտ՝ որ իրիկուան ոսկի հրեշ-  
տակին հետ թեւ առած կը թռչի, սարերն ի վեր, կապո՛ւյտն ի վեր:

Աւանները, անշարժ անգորրիկ իրիկուան մէջ, իրենց ծխնե-  
լոյղներէն փթթող ծուխի մանիշակները կ'ոսկեջրեն. տարածուն ու  
դաշնաւոր քաղցրութիւն մը կը մշշանայ անդաստաններուն վրայ,  
ջուրներուն վրայ, դիւղակներուն վրայ: Իրիկունը, շէկլիկ, հերար-  
ձակ, առոյգ, արքինի իրիկունը, շահասպրամներով, մանիշակնե-  
րով, վարդերով դարգարուած, իրիկունը, ոստոստուն, կը սահի,  
կ'անցնի քովէս: Ես իրիկուան տարփաւորն եմ, ու իմ երգս, պարզ,  
պարզ իմ երգս, անանուն գողերով, անհամար թրթռումներով  
լեցուն է հիմակ, ուռիներու շուքին տակ, հովիտին խորը:

(Մ. Մեծարեւոյց)

### 35. ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Գոյական անունները նախադասութեան մէջ կը գործածուին տարրեր ձեւերով: Այսպէս, բար գոյականը կրնայ ունենալ բարի, բարէ, բարով և այլ ձեւեր: Ինչպէս՝ Քարն ինկած է րակը: Քարին գոյնը գորշ է: Քարէն կտոր մը փրթաւ: Քարով զարկի փայտին:

Տրուած նախադասութիւններուն մէջ բար գոյականը ունի բարք, բարի, բարէ, բարով ձեւերը և անոնց համապատասխան՝ ենթակայի, յատկացուցիչի, անուղղակի խնդիրներու պաշտօն:

Գոյականի փոփոխութիւնը նախադասութեան մէջ այս կամ այն պաշտօնը կատարելու համար, կը կոչուի հոլովում, իսկ փոփոխուած, հոլովուած իւրաքանչիւր ձեւ կը կոչուի հոլով:

### 36. ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈՂՈՎՆԵՐԸ

Խօսքի մէջ գոյական անունը կը գործածուի տարրեր ձեւերով. իւրաքանչիւր ձեւ ունի իմաստ և նախադասութեան մէջ կը կատարէ որոշակի պաշտօն: Հոլովը կ'որոշենք բառին ստացած ձեւէն, արտայայտած իմաստէն և կատարած պաշտօնէն: Ժամանակակից հայերէնի մէջ գոյական անունները վեց հոլով ունին՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական և գործիական, սակայն չորս ձեւ միայն, որովհետեւ մէկ կողմէն ուղղականն ու հայցականը, իսկ միւս կողմէն սեռականն ու տրականը ձեւով նոյնն են: Այս հոլովները իրարմէ ղանազանելու համար պէտք է հաշուի առնենք անոնց իմաստը և պաշտօնը:

Նախադասութեան մէջ սեռական հոլովը գոյականի լրացում (լրացուցիչ) կ'ըլլայ և կը ցուցնէ առարկայի պատկանելութիւն, վերաբերութիւն, ամբողջի և մասի յարաբերութիւն, իսկ տրականը՝ բայի լրացում է և կ'արտայայտէ ղանազան յարաբերութիւններ:

Օրինակ՝

Երախայիւն խաղալիքները զեղեցիկ են:

Խաղալիքներ նուիրեցի երախային:

Այս նախադասութեանց մէջ երախայիւն գոյականը նոյն ձեւն ունի, սակայն առաջին նախադասութեան մէջ ան սեռական հոլովով է, քանի որ գոյականի լրացում է (յատկացուցիչ), իսկ երկրորդին մէջ՝ տրական հոլովով, քանի որ նուիրեցի բային լրացումն է (խնդիր):

Ուղղականը և հայցականը եւս ձեւով նոյնն ըլլալով՝ կը տարբերին իրարմէ իմաստով և պաշտօնով: Ուղղականը բան մը ընող կամ բան մը եղող առարկայ կը ցուցնէ և նախադասութեան

մէջ ենթակայ կ'ըլլայ: Հայցականը գործողութեան անմիջական առարկան, կրող խնդիրը կը ցուցնէ և նախադասութեան մէջ ուղիղ խնդիր կ'ըլլայ:

Օրինակ՝

Ջուրին մէջ ձուկ մը կը լողայ:

Ձկնորսը ձուկ մը բռնեց:

Այս նախադասութեանց մէջ **ձուկ** գոյականը նոյն ձևն ունի, սակայն առաջին նախադասութեան մէջ ուղղական է, քանի որ նախադասութեան ենթական է (Ձուկ մը կը լողայ—ի՞նչ կը լողայ), իսկ երկրորդին մէջ՝ հայցական, քանի որ նախադասութեան ուղիղ խնդիրն է (Ձուկ մը բռնեց—ի՞նչ բռնեց):

Արեւելահայ գրական լեզուի մէջ ուղղականն ու հայցականը միշտ չէ որ իրարու նման են: Անոնք կը նմանին, երբ միայն իր ցուցեող գոյականներ են. օրինակ՝ սեղանը մեծ է (սեղանը՝ ուղղական), սեղանը մարրեցի (սեղանը՝ հայցական), Անձ ցուցեող գոյականներու հայցականը տրականին նման է. տեսայ՝ Վարդանին (Վարդանին՝ հայցական), դիմեցի՝ Վարդանին (Վարդանին՝ տրական):

Սեռականը և տրականը արեւելահայերէնի մէջ իրարու նման են միայն անորոշ ածական պարագային: Օրինակ՝ սեղանի գոյնը սև է (սեղանի՝ սեռական): Սս մօտեցայ մի սեղանի (սեղանի՝ տրական): Իսկ որոշեալ ածական պարագային տարբեր են. սեռականը որոշիչ յօդ չի ստանար, իսկ տրականը կը ստանայ և որոշիչ յօդը՝ պատիւն, զարբիւ մարդուն և այլն:

Պատի բարբըրը դունաւոր են (պատի՝ սեռական):

Յենունցի սլատին (սլատին՝ տրական):

Արեւելահայերէնն ունի նաեւ ներգոյական հոլով: Ներգոյականն ունի ում վերջաւորութիւնը, որ կ'անլինայ գոյական անուան ուղղականին վրայ՝ վտում, փռոցում, դաշտում, անտառում: Անձի անունները չունին ներգոյական ձև: Ներգոյականի իմաստը կ'արտայայտուի նաեւ սեռականով և մէջ կապով, ինչպէս՝ զեւտում կամ զեւտի մէջ, սենեակում կամ սենեակի մէջ:

Արեւելահայերէնի ներգոյական հոլովին իմաստը արեւմտահայերէնի մէջ կ'արտայայտուի սեռականով և մէջ կապով, երբեմն նաեւ՝ հայցականով ու տրականով: Օրինակ՝ «Մեր քաղաքում շատ զրօսայգիներ կան», «Վարդանն ապրում է գիւղում» նախադասութիւնները արեւմտահայերէնով կ'ըլլան այսպէս՝ «Մեր քաղաքին մէջ շատ զրօսայգիներ կան», «Վարդան կը բնակի գիւղը»:

### 37. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈՒՈՎ

Գոյականներու ուղղական հոլովը կը ցուցնէ բան մը ընող կամ եղող առարկան:

Ուղղական հոլովով գրուած բառերը կը պատասխանեն ո՞վ, ի՞նչ(ը) հարցումներուն: Վարդանը կը նկարէ: Գրիգորը կը սորվի դասը: Մատը կը ծաղկի: Այս նախադասութեանց մէջ Վարդանը,

Գրիգորը, ծառը գոյակահաները գրուած են ուղղական հոլովով: Ասանք կը ցուցնեն նկարող, սորվող, ծաղկող առարկան և կը պատասխանեն ո՞վ, ի՞նչը հարցումներուն:

Եղակի ուղղականը բառի ուղիղ ձևն է, անհկա հոլովական վերջաւորութիւն չի ստանար (կրնայ միայն յօդ ստանալ):

Ուղղականը ենթակայի հոլովն է: Ենթական միշտ կը գրուի ուղղական հոլովով: Օրինակ՝ Վարդը կաւմիւր է, Գեար կը կոսի, Անձրեւը կը տեղայ, Արեւը կը լուսատէ նախադասութեանց մէջ վարդը, գեար, անձրեւը, արեւը ուղղական հոլովով գրուած գոյակահաները ենթակայ են:

Ուղղական հոլովով կը գրուին նաև նախադասութեան այլ անդամներ:

Պետրոսը լաւ վարդեա մրն է նախադասութեան մէջ ուղղականով գրուած է ոչ միայն Պետրոսը ենթական, այլև վարդեա բառը, որ ստորոգևարի մաս է:

Վարդեա Պետրոսը ասուն մը շինեց նախադասութեան մէջ վարդեա բառը գործնալ ուղղական հոլովով է և Պետրոսը ենթական իրական գոյական որոշիչն է:

### 38. ՀԱՅՑՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հայցական հոլովը կը ցուցնէ այն առարկան կամ անձը, որ գործողութիւնն իր վրայ կը կրէ:

Հայցականը կը պատասխանէ գ՞ով, ի՞նչ(ը), ի՞նչ բան հարցումներուն: Օրինակ՝ Կը սիրեմ եզրայրս, հայրենիքս նախադասութեան մէջ եզրայրս, հայրենիքս բառերը գրուած են հայցական հոլովով և կը պատասխանեն գո՞վ (եզրայրս), ի՞նչ բան (հայրենիքս) հարցումներուն: Հայցական հոլովը ուղղական հոլովէն ձևով չի աարբերիր: Այս երկուքը իրարու հետ շփոթելու համար սէտք է պիտանալ որ՝

**Ս.** Հայցականը ուղիղ խնդիրի (կրող խնդիր) հոլովն է:

Ուղիղ խնդիրը միշտ կը գրուի հայցական հոլովով: Օրինակ՝ տեսնել (գո՞վ, ի՞նչ բան)—մարդը, բոյրը, ընկերը, զիւրը, անտարը, լսել (ի՞նչ)—ձայն, երաժշտութիւն, մարքել (ի՞նչ(ը)—գետիւնը, տունը, երկուքը, սեղանը. կտորել (ի՞նչը)—վայտը, ապակիին և այլն:

**Բ.** Հայցական հոլովով կը գրուին նաև նախադասութեան այլ անդամներ:

Վարդան ամէն առաւօտ դպրոց կ'երթայ նախադասութեան մէջ  
առաւօտ գոյակահը դրուած է հայցական հոլովով և նախադասու-  
թեան մէջ կ'երթայ ստորագետիկ լրացումն է (ժամանակի պարա-  
գայ), դպրոց գոյակահը ևս հայցական է, կ'երթայ ստորագետիկ  
լրացումը (տեղի պարագայ):

Արեւիկահայերէնի հայցականը կը պատասխանէ ս՛ւմ, ի՛նչ հարցումներուն.  
(տեսայ կորոս (ս՛ւմ), զիդը (ի՛նչ):

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հասուածէն արտադրել ուղղական  
և հայցական հոլովածիւրը տասնձին սիւնակներու մէջ և սրտէջ  
անոնց պաշտօնը.

### ՏԵՂԱՏԱՐԱՓ

Մութ մը թանձր ու հոծ պատեր է շորս դին,  
Ամէհի հետք կը լսուի ծովան,  
Տենդեր, բիրտար, խորհուրդներ մթին  
Կը ցնցեն յանկարծ միտքս վրդաւուն:

Օձաձև լոյսի երիզներ անո՞ւակ  
Կը փայտատակին շոյիննով արտօղ,  
Եւ սրատաճներ ա՛նտար, համակ,  
Գոռ դրդրբողմաներ կը անդան վայրապ:

Յորդ անձրեւներու տարափներ թօնուա  
Խօլ ջրվէժներով մայթը կը ծեծեն,  
Խառնակ շոյինն մը երկարելով բուժ՝  
Իրենց մուկիին ու վայրագ ծեծէն:

Իմ սիրտս ալ արտօնուի կը փղձկի յանկարծ,  
Եւ գոչն կը ծեծեն յոյզեր անհամար,  
Անհաս անշիբու ճիւղեր մշտարժարծ  
Կը լուսաւորեն իր մոտայ կամար:

(Մ. Մեծաբեկ)

**Վարժութիւն 2.** Նախադասութեանց մէջ ուղղականով գործածել  
հետեւեալ բառերը.

Բարձունք, ալիք, դաշտ, աղբիւր, գետ, հայր, ուսուցիչ, ամա  
ծառ, ծաղիկ, թռչուն, բանաստեղծ, մանուկ, որիւ

**Վարժութիւն 3.** Նախադասութեանց մէջ հայցականով գործածել հետեւեալ բառերը.

Գիւղ, ձայն, աղջիկ, բոյր, դաս, երգ, ջուր, վարդ, ճամբայ, սրինգ, քար, գիրք:

**Վարժութիւն 4.** Ի՞նչ հոլով ունին ստորադժուած բառերը.

Վարդը հոտաւէտ ծաղիկ մըն է: Կը սիրեմ ձիւնածաղիկը: Գաթին ճամբարձու՞մը սուր մը կռեց, Կ'ուզեմ գիրք և նկար:

### 39. ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՈՎ

Սեռական հոլովը կը ցուցնէ այն առարկան, որուն կը պատկանի, կը վերաբերի ուրիշ առարկայ մը:

Ան կը պատասխանէ որո՞ւն(ն), ի՞նչ բանի(ն), ինչի՞(ն) հարցումներուն:

Գրիգորին եղբայրը լաւ վարպետ մըն է (որո՞ւն եղբայրը—Գրիգորին): Գետի ձուկը համեղ է (ի՞նչի՞ ձուկը—գետի):

Այս նախադասութեանց մէջ Գրիգորին, գետի բառերը դըրւած են սեռական հոլովով և կը պատասխանեն որո՞ւն (Գրիգորին), ինչի՞, ի՞նչ բանի (գետի) հարցումներուն:

Սեռական հոլովը կը կազմուի ուղղականէն՝ ի, ու, եան, ուան (ան), ոջ, օ, ոյ վերջաւորութիւններով. Օրինակ՝ հող—հողի, հայ—հայու, գիտութիւն—գիտութեան, մահ—մահուան, աղջիկ—աղջկան, տէր—տիրոջ, հայր—հօր, սէր—սիրոյ:

Սեռական հոլովը գոյականի լրացում կ'ըլլայ և ատու իսկ կը տարբերի տրականէն. վարդի գոյն, սեղանի ոտք, աշակերտի գիրք, խաղողի այգի, կոտի դաշտ, պատումանի ասլակի, զգեստներու պահարան կապակցութեանց մէջ վարդի, սեղանի, աշակերտի, խաղողի, կոտի, պատումանի, զգեստներու բառերը դըրւած են սեռական հոլովով, քանի որ գոյն, ոտք, գիրք, այգի, դաշտ, ասլակի, պահարան գոյականներուն լրացումն են:

Սեռական հոլովը յատկացուցիչի հոլովն է: Յատկացուցիչը միշտ կը դրուի սեռական հոլովով: Օրինակ՝ Վարդանի զգեստը մահու է, Անտառի ծառերը կանաչ են նախադասութեանց մէջ Վարդանի, անտառի բառերը դրուած են սեռական հոլովով և զգեստը, ծառերը գոյականներուն յատկացուցիչն են:

Սեռական հոլովով կը դրուին նաեւ նախադասութեան այլ անդամներ.

Պատերազմ էր հաւատքի և հայրենեաց փրկութեան:  
Ողջունէ դարձեալ, երկնային բարիք՝  
Վանայ տառելան ու Կալսեթի դիմին...  
Այս նախադասութեանց մէջ հաւատքի, փրկութեան, Կալսեթի սեռական հոլովածները պատերազմ, զինի գոյականներուն որոշիչն են (ո՞ր. ի՞նչպիսի՞ պատերազմ, զինի):

#### 40. ՏՐԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի տրական հոլովը կը ցուցնէ այն առարկան, որուն բան մը կը սրուի, կը մատուցուի, որուն կը լանգի գործողութիւնը:

Տրական հոլովը կը պատասխանէ որո՞ւն, ի՞նչի՞ն (ի՞նքանի) հարցումներուն: Գիրք մը տուի Պետրոսին, Հանդիպեցայ ընկերոջս, Մտեցայ գիւղին նախադասութեանց մէջ Պետրոսին, ընկերոջս, գիւղին գոյականները տրական հոլով են, կը պատասխանեն որո՞ւն (Պետրոսին, ընկերոջս), ի՞նչ բանի կամ ինչի՞ն (գիւղին) հարցումներուն և տուի, հանդիպեցայ, մտեցայ ստորագեղաներուն լրացումն են (անուղղակի խնդիր):

Տրական հոլովը ձևով նման է սեռականին: Ասոնք իրարմէ զանազանելու համար սէտք է դիտնալ, որ տրականը գոյականի լրացում չի կրնար ըլլալ, ան բայի լրացում կ'ըլլայ: Բերուած նախադասութեանց մէջ տրական հոլովով գրուած բառերը բայի լրացում են:

Տրական հոլովի հիմնական պաշտօններն են մատուցման և յանգման անուղղակի խնդիրները: Ան իր անձը նուիրեց հայրենիքին, Իրերը յանձնեցի տիրոջը նախադասութեանց մէջ հայրենիքին, տիրոջը բառերը տրական հոլով են և մատուցման անուղղակի խնդիր:

Պիտի վաւիժմ շքնաղ լաւնջքիդ ցորեն արտով ձփուն նախադասութեան մէջ լանջքիդ բառը գրուած է տրական հոլովով և յանգման անուղղակի խնդիր է:

Ընթերցումը կ'օգնէ մեր զարգացման նախադասութեան մէջ զարգացման բառը յանգման անուղղակի խնդիր է:

Տրական հոլովով կը գրուին նաև նախադասութեան այլ անդամներ:

Մարդ մը նստեր է քարին նախադասութեան մէջ քարին բառը գրուած է տրական հոլովով և տեղի պարագայ է: Տրական հոլովով կրնայ գրուիլ նաև ժամանակի պարագան:



Օրինակ՝

Վերադարձին հայրը իր տունը հրապարակեց զիս:

Այդ պահուն անկա ինքզինք երջանիկ կը զգար:

Վարժութիւն 1. Ընդօրինակել հետեւեալ հատուածը և ստորագծել սեռական հոլովածները մէկ, տրականները՝ երկու գիծով, որոշել անոնց պաշտօնը.

Աշնան սկիզբը՝ երբ կալերուն վրայէն յարդի ցանցառ բլուրները կը վերցուին ու դաշտը կ'ամայանայ՝ գեղացիին աչքերը դէպի այգեստան կը շտկուին:

Գեղն ամբողջ, մեծով պղտիկով, փէշերը դօտիին զարկած՝ այգեստան կը վազէ: Հոն՝ բաց արեւին տակ՝ քրտինքոտ աշխատանքն ու սրտարուխ վայելքը թեւ թեւի տուած կը պարեն: Հոս քանի մը տղաք նապաստակ մը կը հալածեն: Հոն՝ ուրիշ տղաք կրիայի մը կը քարկոծեն:

Թումրերուն վրայ, տեղ տեղ, նշենիներու ճիւղերէն կախուած օրրաններ կը ճօճին, որոնց քով գեղացի մայրեր հին օրօրներ կը կրկնեն անցնող ղեփիւռներուն հետ: Այգեկութի տենդոտ աշխատանքը կը գրկէ այգեստանն ամբողջ: Որթատունկերը կանանչ ծոցերնին կը բանան և իրենց բերքը կը հրամցնեն գեղացիին: Հասուն ողկոլղներ, հատ հատ, բաց գոգնոցներու կամ սակառներու մէջ կ'իյնան դանակի սուր շեղքերուն տակ և կ'երթան քիչ մը անդին բաց հողին երեսը դիզուիլ: Յետոյ՝ լայնաւոր կողովներու մէջ՝ էշերու բեռցուած՝ գիւղ կը տարուին ու հոն մութ սալքերու վրայ կը սպասեն, մինչև որ ճղմուին ու օր մըն ալ գինիի կամ անուշեղէնի տարադով մեր կաղանդի սեղանները շէնցնեն:

(Ռ. Նուրիկեան)

Վարժութիւն 2. Հետեւեալ գոյականները նախադասութիւններու մէջ գործածել սեռական և տրական հոլովներով.

Միծեռնակ, աշտարակ, ձիւն, դլուխ, եղբայր, հոգի, աշուն, տուն, գաշտ, իրիկուն, աստղ, ուրախութիւն:

#### 41. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՈՎ

Բացառական հոլովը կը ցուցնէ այն առարկան, որմէ բան մը կ'անջատուի, կամ գործողութիւն մը սկիզբ կ'առնէ:

Բացառականը կը սլատասխանէ որմէ՞, ի՞նչ բանէ, ուրկէ՞ հարցումներուն: Բաժնուցայ ընկերոջմէս, Մաղիկներէն հովը բեր-

րեւ կը բափէ նախադասութեանց մէջ ընկերոջմէս, ծաղիկներէն բառերը դրուած են բացառական հոլովով և կը ցուցնեն այն անձը և խոր, որոնցմէ կ'անջատուի բան մը:

Բացառական հոլովը կը վաղմուտ ուղղական հոլովին կցելով է հոլովակերտ մասնիկը: Օրինակ՝ Բարէ, Բաղաբէ: Սակայն ուրիւն վերջածանց ունեցող բառերուն բացառականը կը կազմուի սեռական-տրականէն (եա—ե) հնչիւնափոխութեամբ): Օրինակ՝ մեծուրիւն—մեծուրեան—մեծուրենէ, բազմուրիւն—բազմուրեան—բազմուրենէ:

Բացառական հոլովով դրուած բառերը բայի (ստորոգեալի) լրացում կ'ըլլան: Անոնք կը դառնան անջատման անուղղակի խընդիր: Վերի նախադասութեանց մէջ ընկերոջմէս, ծաղիկներէն բառերը անջատման անուղղակի խնդիր են:

Սակայն բացառական հոլովով կը դրուին նախադասութեան այլ անդամներ եւս:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել բացառական հոլովով դորժած-լած բառերը:

Անցեալ օր, սլատահմամբ, հին գիրքերէս մէկուն ծալքերէն անդուդական յիշատակ մը երեւան ելաւ. ինծի համար անգին գանձ մը, որուն անդարձ կորուստին հաւանականութիւնը ատենէ մը ի վեր միտքս կը շարշրկէր:

Որթատունկի սլափիկ ուտ մըն է ան, կարծր ու նիհար ցողունով մը: Հիմակուան սէս միտքս է դեռ Օգոստոսի այն արեւոտ առտուն, երբ մասնաւոր դուրգուրանքով մը փրցուցի դայն հօրենական երգիկիս վրայ իր դալար թեւերը տարածող արիշէն:

Հայրենի տունէս բերուած այս ոստը հրաշալի բան մը ունի իր մէջ: Մտքիս առջև յամրօթէն կու դայ կը տարածուի մեր հին, հսկայ որթատունկը, որուն յուռթի ծոցէն ամառ օր մը դողցայ իմ յիշատակը:

Արիշը, որ մանկութեանս ծիծաղկոտ օրերուն աչքիս տակ ծլաւ, հստակ քաշեց, սլատն ի վեր սլացաւ կարծես, ու իր կանանչ թեւերով, նեցուկներու վրայէն սողալով, դաւիթի տանիքին ամրողջ տարածութիւնը զրկեց:

Գարունը, Զատիկէն առաջ, ընութեան հետ խորունկ թմրութեան կ'արթննար ան, յօտուելէ, յարդարուելէ վերջ՝ իր բաղմաթիւ թեւերն ու մատուռները կը տարածէր գրկաբաց նեցուկներուն վրայ:

Հիմա դեղնորակ, մանտրտուկ ծաղիկներ, տերեւներուն արանքէն փունջ փունջ իրենց հլուն հլուն աշուկները կը բանային ու կը բուրէին:

(Ռ. Նուրիկեան):

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերը վերածել բացառական հոլովի.

Լոյս, հորիզոն, գիշեր, ծով, աշխարհ, մարդ, երախայ, կին, գազան, տուն, հող, դպրոց, սլատ, այգի:

**Վարժութիւն 3.** Նախադասութեանց մէջ բացառական հոլովով գործածեցէ՛ք հետեւեալ դոյականները.

Ցորեն, ծառ, յարդ, աւազ, ջուր, բոյս, մոլախոտ:

## 42. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականներու գործիական հոլովը կը ցուցնէ այն առարկան, որով կամ որու միջոցով կը կատարուի գործողութիւնը: Գործիականը կը սլատասլանէ որո՞վ, ի՞նչ բանով, ինչո՞վ հարցումներուն: Կը գրեմ մատիտով, կը նամբորդենք նաւով, կ'ուրախանանք մանուկներով նախադասութեանց մէջ մատիտով, նաւով, մանուկներով բառերը դրուած են գործիական հոլովով և կը ցուցնեն այն իրը (մատիտ, նաւ) և անձը (մանուկ), որոնցմով անդի կ'ունենայ գրելու, նամբորդելու, ուրախանալու գործողութիւնը:

Գործիական հոլովը կը կազմուի ու՛ վ մասնիկով, որ միշտ կը դրուի ուղղականին վրայ՝ աղմուկ—աղմուկով, գինի—գինիով, դաւակներ—գաւակներով, յաղթութիւն—յաղթութիւնով և այլն:

Ունինք նաեւ ուրիշ վերջացող բառերու գրարար հոլովածներ՝ ճոխութիւն—նոխութեամբ, վեհութիւն—վեհութեամբ:

Սակաւաթիւ դոյականներու գործիականը կրնայ կազմուիլ նաեւ աւ վերջատրութիւնով: Օրինակ՝ սլատճառ—սլատճառաւ, միջոց—միջոցաւ:

Գործիականով կը դրուի միջոցի անուղղակի խնդիրը: Վերի նախադասութեանց մէջ մատիտով, նաւով, մանուկներով գործիական հոլովածները միջոցի անուղղակի խնդիր են: Գործիական հոլովով կը դրուին նաեւ նախադասութեան այլ անդամներ:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածէն ընդօրինակել գործիական հոլովով գործածուած բառերը.

Վ Ա Ր Դ Ե Ն Ի Ն

Իմ հայրենի բուրաստանիս մէջ սիրուն  
Ու մարմարէ աղբերակի մ'եղբերքին,  
Վարդի մէկ ծիւղ, զերդ յուշիկ հին օրերուն  
Դեռ շղիմած պանդխտութեան դառնագին,  
Իմ մատներով տնկեցի:

Մէկ արշալոյս հաղիւ կիցայ իրեն քով,  
Տերեւները խամրած, հովէն կը դողար,  
Մէկ անգամ ջուր տուի իմ տաք արցունքով  
Ու մեկնեցայ դէպ' ուղիներն վշտահար,  
Օտարութեան, տաժանքի:

Տնակս ինկաւ ու կրեցաւ վշտահար,  
Մամուռներով լցաւ աղբիւրն մարմարի,  
Եւ ալ չ'երգեր,— այլ վարդենին միշտ դալար  
Բիւր վարդերով կը սարսըռայ, կը վառի  
Իդձերուս պէս անհամար:

(Ռ. ՈՐԵՐԵՒԱՆ)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերը նախադասութեանց մէջ գործածել գործիական հոլովով.

Արօր, դրիւ, ձեռք, կռիւ, սիրտ, հոգի, ընկեր, հայրենիք, կաթ, միս, փայտ, երկաթ, ղէնք, խիղճ, ծանրութիւն, խնդութիւն:

### 43. ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Խօսքի մէջ գոյական անունները կը գործածուին երկու առումով՝ անորոշ և որոշեալ: Գոյականը անորոշ առումով կը դրուի այն առեւ, երբ ան նախապէս յայտնի չէ խօսողին կամ խօսակիցին:

Օրինակ՝ Հաս տուն մը կայ: Տունը մարդ չկայ: Անկա եղբայր մը ունի:

Այս նախադասութեանց մէջ տուն, մարդ, եղբայր ըսելով կը

հասկանաք անորոշ, աչ յայտնի իրեր և անձեր (տուն, մարդ, եղբայր):

Անորոշ առումով դրուած գոյականները կրնան ունենալ նաեւ մը (մըն) յօդը, որ կը ցուցնէ առարկայի մը անորոշ կամ մէկ հասարակութիւնը. օրինակ՝ տղայ մը, գիրք մը:

Մը (մըն) յօդը կը գործածուի գոյականէն անջատ:

Օրինակ՝ Կարծիք մը կ'անցնէր: Հեղեղ մը սեւ դէպի հարաւ կը բաւէր: Մարդ մըն էր որ անցաւ:

Գոյականը որոշեալ առումով կը դրուի, երբ կը ցուցնէ խօսողին և խօսակիցին յայտնի առարկայ:

Որոշեալ առում ունեցող գոյականներուն բոլոր հոլովածեւորուն վրայ կը դրուի ք կամ ն որոշիչ յօդը: Ք յօդը կը դրուի բազաձայնէն յետոյ (բազարք, գիւղք, ձանապարհք, արտք), ն յօդը՝ ձայնաւորէն յետոյ (ծիւն, դարիւն, դօսիւն, ոսկիւն, կատուն, առուն): Բառին վերջը դառնող յ-ն կ'իջնայ, երբ բառը որոշիչ յօդ կ'առնէ. տղայ—տղան, ձամբայ—ձամբան (կամ ձամբէն), հսկայ—հսկան: Եթէ յաջորդ բառը ձայնաւորով սկսի, ք-ի փոխարէն կրնայ ն յօդը դրուիլ: Գործն է արգարս Ուսուցիչն ըսաւ:

Գիմարոշ, ցուցական և ստացական ս, դ, ն յօդերը եւս որոշեալ առման նշանակութիւն ունին: Օրինակ՝ տունս, սրբիդ, փեսան:

Արեւելահայերէնը բացի որոշեալ և անորոշ առումներէն, որոնք կը տարբերին ուղղական, տրական, հայցական հոլովներու մէջ (որոշեալ առման պարագային գոյականը կը ստանայ ք կամ ք յօդը), ունի նաեւ անձի և իրի առում, որ յատուկ է միայն հայցականին: Անձի առման պարագային գոյականի հայցականը ձեւով կը նմանի տրականին: Օրինակ՝ նա սիրում է ուսուցիչ (ուսուցչին հայցական է): Նա հանդիպեց ուսուցչին (ուսուցչին տրական է): Իրի առման պարագային հայցականը կը նմանի ուղղականին: Նա սիրում է ծովը (ծովը հայցական է): Մովը խաղաղ է (ծովը ուղղական է):

**Վարժութիւն 1.** Հետևեալ հատուածին մէջ ստորագծել որոշեալ առումով գործածուած գոյականները երկու, անորոշ առումով գործածուածները՝ մէկ գիծով:

Իր կտրուածովը շրեղ մայիսի ջինջ առտուան,  
Բլուրը ինչ թաւաթոյր կողեր ունի վէտովէտուն,  
Ի՞նչ ազուոր է դեռ թրջած խոտերու մէջը դալ ման  
Եւ երկննալ, և գիտեմ հեռուի լեռը ժպտուն...

Հոն դարբի նորարոյս արտը շղարշ մ'է նրբին,  
Որուն ներքեւ կը շողան հարսնուկները յակնթեայ,

Հոս՝ եզերքէն, բուսերով երիցուկներ կը յորդին  
Եւ կը հոսին մարգրտի զերթ հեղեղ մը ճամբուն՝ լրայ:

Քիչ մը անդին՝ հեշտացրիւ հօտը հովուին կ'արածի,  
Գառնուկները կը մայնն և կը ցատքնն անդադար,  
Եւ ուկիրը տոսպրակուած ծիծերուն տակ մայրենի  
Կը քուրուտուին և կ'ուղնն իրենց բաժինը արդար...

(Վ. Թէլէեան)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերը նախադասութեանց մէջ գործածեցէ՛ք անորոշ առումով (առանց յօդի և յօդով).

Փողոց, անկիւն, ճակատ, աթոռ, հրաման, ուրախութիւն, դա-  
ւակ, դուռ, անուն, ժողովուրդ, հագուստ, թուղթ, դրպան, քարտու-  
ղար, խորհուրդ, պետութիւն:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ բառերը նախադասութեանց մէջ գոր-  
ծածեցէ՛ք որոշեալ առումով.

Դիւղացի, ոստիկան, հեռագիր, կայարան, խնդիր, ղէնք, եղ-  
բայր, սրճարան, բազմութիւն, տուն, ճշմարտութիւն, պաշտօն,  
հայրենիք, խաղ, աղջիկ, սենեակ:

**Վարժութիւն 4.** Անորոշ առումով դրուած դոյականները գոր-  
ծածել որոշեալ առումով.

Կառք մը կ'անցնէր: Արիսողոմ աղան բռնակիր մը կ'անչեց,  
սակայն հինգը ներկայացան: Գնեցի աթոռ մը, սեղան մը, սփռոց  
մը և մերենայ մը վարձելով տուն տարի:

#### 44. ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐԸ

Գոյականը կրնայ հոլովուիլ երկու ձևով: բառին վերջը մաս-  
նիկ ստանալով և ներսի ձայնաւորներուն կամ երկհնչիւններուն  
հնչիւնափոխութեամբ:

Այսպէս, սեղան բառը կը հոլովուի հետեւեալ ձևով՝ սեղան,  
սեղանի, սեղանէ, սեղանով, իսկ հայր բառը՝ հայր, հօր, հօրմէ,  
հօրմով:

Ինչպէս բերուած օրինակներէն կ'երևի, առաջին բառը փո-  
փոխուեցաւ վերջը ի, է, ով մասնիկներ ստանալով, իսկ երկրորդ  
բառին մէջ գտնուող այ-ը օ-ի փոխուեցաւ և բառին վերջը մէ,  
մով մասնիկներ աւելցուեցաւ:

Բոլոր գոյականները միաձև չեն հոլովուիք. հոլովման տարբերութիւնները ի յայտ կու գան սեռական և տրական հոլովներուն մէջ, որոնց մասնիկներուն անուններով ալ կ'որոշուի հոլովման տեսակը՝ հոլովումը: Հայերէնի գոյականներն ունին 7 հոլովում՝ **ի** (սեղան**ի**, Հայկ**ի**), **ու** (հայ**ու**, ժող**ու**), **եան** (գլխաւթ**եան**), **ուան** (կրէկու**ան**), **ան** (աղջկ**ան**, բնո**ան**), **ոջ** (տիրոջ), **օ** (հօր), **ոյ** (սիրոյ, Ասիրոյ): **ի**, **ու**, **եան**, **ուան** (ան), **ոջ**, **օ**, **ոյ** մասնիկները կը կոչուին հոլովիչ կամ հոլովակերտ մասնիկներ: Ասոնցմով ալ կ'անուանենք համապատասխան գոյականներու հոլովումը՝ **ի** հոլովում, **ու** հոլովում, **եան** հոլովում, **ուան** (ան) հոլովում, **ոջ** հոլովում, **օ** հոլովում, **ոյ** հոլովում:

Բոլոր հոլովումներուն յոգնակին կ'ենթարկուի **ու** հոլովման, բացառութեամբ այլաձև հոլովում ունեցող բառերու:

#### 45. **Ի** ՀՈՂՈՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող գոյականները եղակի սեռական-տրականի ժամանակ կը ստանան **ի**, իսկ յոգնակի սեռական-տրականի ժամանակ՝ **ու** մասնիկը:

Բոլոր հոլովումներուն եղակի և յոգնակի թիւի բացառական հոլովը կը կաղմուի **է** մասնիկով:

**Ի** հոլովման գործիականն ունի **ով** վերջաւորութիւնը:

Այս հոլովման պատկանող գոյականներուն բացառականի և գործիականի վերջաւորութիւնները կ'աւելնան ուղղականին վրայ:

Հ ո Ղ Ո Վ Մ Ա Ն օ Ր Ի Ն Ա Կ՝

	Ե Ղ Ա Կ Ի	Յ Ո Ղ Ն Ա Կ Ի
Ուղղ. Հայց.	հող	հողեր
Սեռ. Տրակ.	հողի	հողերու
Բաց.	հողէ	հողերէ
Գործ.	հողով	հողերով
Ուղղ. Հայց.	հայրենիք	հայրենիքներ
Սեռ. Տրակ.	հայրենիքի	հայրենիքներու
Բաց.	հայրենիքէ	հայրենիքներէ
Գործ.	հայրենիքով	հայրենիքներով

Այս հոլովման կ'ենթարկուի հայերէնի գոյականներուն մեծ մասը: Դժուար է սահման մը դնել այդ բառերուն: Պէտք է գիտնալ, որ միւս հոլովումներուն պատկանող գոյականները սակաւաթիւ են: Ս' հոլովումը շատ ընդհանրացած է: Մնացեալ հոլովումներուն պատկանող բառերու յոգնակին նման է այս հոլովման յոգնակի ձևերուն:

**Վարժութիւն 1.** Հոլովել սեղան, վողոց, ուր, սենեակ, բել, կառ, գաւակ, դէմք, վայրիկան, զանգակ, խորհուրդ, նախարար, վարդեօ, ոստիկան բառերը:

**Վարժութիւն 2.** Ընդօրինակել հատուածին ի հոլովման պատկանող գոյականները:

Բլուրին գաղջ կողին վրայ ընկողմանած

Սրինգ կ'ածեմ,

Եղներս լայն հովիտին մէջ, սրտի երգով,

Ես կ'արածեմ.

Լուսնակն իջած է մանգաղուած լուռ արտերուն

Մակերեսին,

Կը ծաւալէ խողաններուն մէջէն հեղիկ

Կաթը լոյսին:

(Գ. Վարուժան)

#### 46. ՈՒ ՀՈՒՈՎՈՒՄ

Այս և միւս հոլովումները կը տարբերին ի հոլովումէն միայն եղակի սեռական-տրականի մէջ:

Այս հոլովման պատկերն է՝

	Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
Ուղղ. Հայց.	հայ	հայեր	ծով	ծովեր
Սեռ. Տրակ.	հայու	հայերու	ծովու	ծովերու
Բաց.	հայէ	հայերէ	ծովէ	ծովերէ
Գործ.	հայով	հայերով	ծովով	ծովերով

Այսպէս կը հոլովուին կարգ մը միաւղանկ բառեր՝ մարդ, հաւ, նաւ, հով, պասլ, շահ, մահ, ժամ, էջ, ձի, արջ, դահ, պահ, մանչ,



գար: Սակայն ասոնցմէ մէկ քանին կրնան հոլովուիլ նաեւ ի հոլովիչով (դահու և դահի, հովու և հովի, նաւու և նաւի, ծովու և ծովի, պապու և պապի):

Ու հոլովմամբ կը հոլովուի նաև անորոշ գերբայը՝ գրել—գրելու, կարգալ—կարգալու, յոգնիլ—յոգնելու, թռչիլ—թռչելու և այլն:

**Վարժութիւն 1.** Հոլովել պահ, գահ, ձի բառերը:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածէն ընտրել ու հոլովման պատկանող բառերը.

Բնաւ նախանձ կամ ատելութիւն ունեցած շէր տեսնելով հարուստ մարդոց դաւակները, երբ հագուած-սքուած կ'անցնէին իր քովէն:

Հայրը ծովու մարդ, ինք ծովու մօտ ծնած, այն անփոյթ ստահակներէն էր, որոնց համար ծովեզներք բոլոր տիեզերքը կը կաղմէ, իբրև տեսակ մը մարդկային խեցի, որուն ծովուն աղի ջուրը միայն կեանք կու տայ:

Եօթը տարուէն քաջաւարժ ու անվախ լուղորդ էր և մայրը՝ դողդոջուն սրտիւ ի զուր պատուհանէն կը սրտար ու իր որդւոյն վտանգաւոր խաղերն արդիւնել կ'ուզէր:

Տարի մը վերջը ներսէս ձեռք անցուցած էր հին, փտած ու խոշոր նաւակ մը, որուն թիակներն հաղիւ շարժելու կարող էր և որուն վրայ թիաւարելէ ետ շէր կենար:

Ներսէս տասը տարեկան եղած ատեն արեւէն ու հովէն սեւցած, ձեռքը թի քաշելէ կարծրացած, առոյգ, անվախ ու տղէտ տղայ մ'էր, որուն հայհոյալից խօսակցութիւնը կ'ահարեկէր ու կ'ապշեցնէր հէք մայրը:

(Գ. Զօհրայ)

**Վարժութիւն 3.** Նախադասութիւններու մէջ գործածել նաւ բառը բոլոր հոլովներով:

#### 47. ԵԱՆ ՀՈՒՈՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող գոյականները, որոնց եզակի ուղղականը կը վերջանայ **իւն**-ով, սեռական-տրականի մէջ կը կրեն հնչիւնափոխութիւն՝ **իւն** -ը կը փոխուի **եան**-ի: Բացառականը կը կազմուի սեռականէն՝ **է** հոլովակերտ մասնիկով: Եզակի գործիականը կը կազմուի **ով** մասնիկով (գիտութիւնով), սակայն ղուդա-

հեռաբար կայ նաեւ հին հայերէնի ք-ով վերջացող ձեւը՝ գիտութեամբ, արեամբ: **Եան** հոլովման պատկանող գոյականները սակաւաթիւ են:

Այս հոլովման պատկերն է՝

	Եղակի	Յոգնակի
Ուղղ. Հայց.	բաղմութիւն	բաղմութիւններ
Սեռ. Տրակ.	բաղմութեան	բաղմութիւններու (եանց)
Բաց.	բաղմութենէ	բաղմութիւններէ
Գործ.	բաղմութիւնով (բաղմութեամբ)	բաղմութիւններով

#### 48. ՈՒԱՆ, ԱՆ ՀՈՒՈՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող բառերուն եղակի սեռական-տրականը կը կաղմուի **ուան** կամ **ան** հոլովակերտ մասնիկներով, որոնք կ'աւելնան ուղղականին վրայ: Օրինակ՝ շարաթ—շարթուան ամառ—ամառ**ուան**, դուռ—դռան, բոռ—բռան:

Բացառականը կը կաղմուի սեռականէն, երբեմն ալ ուղղականէն՝ **է** հոլովակերտ մասնիկով: Գործիականը ի հոլովման նման է: Այս հոլովման ենթարկուող բառերուն մէկ մասը յոգնակի շունի: Օրինակ՝ վաղը, այսօր, զարգացում, ուսում:

Հոլովման պատկերն է՝

	Եղակի	Յոգնակի	Եղակի	Յոգնակի
Ուղղ. Հայց.	օր	օրեր	մանուկ	մանուկներ
Սեռ. Տրակ.	օրուան	օրերու	մանկան	մանուկներու
Բաց.	օրուրնէ	օրերէ	մանուկէ	մանուկներէ
Գործ.	օրով	օրերով	մանուկով	մանուկներով

Այս հոլովման կը պատկանին՝

**Ա.** Ժամանակ ցուցնող կարգ մը բառեր՝ երէկ, այսօր, վաղը, օր, կէսօր, շարաթ, ամիս, տարի, ցերեկ, գիշեր, առտու, իրիկուն, ամառ, ձմեռ, հերու, ժամանակ և այլն:

**Բ.** էրիկ, կնիկ, մանուկ, լեռ, դուռ, բոռ, թոռ բառերը:

**Գ. Ում վերջացող բառերը՝ ուսում, զարգացում, զգացում, գոմարում և այլն:**

Պէտք է գիտնալ, որ ասորցմէ մէկ քանին կրնան հոլովուիլ նաև **ի** հոլովումով. ինչպէս՝ մանուկ—մանուկ**ի**, դուռ—դուռ**ի**, օր—օր**ի**, գիշեր—գիշեր**ի**, ժամանակ—ժամանակ**ի** և այլն:

**Վարժութիւն 1.** Հոլովել մեծութիւն, քաջութիւն, բեռ, ժամանակ, գումարում գոյականները:

**Վարժութիւն 2.** Նախադասութեանց մէջ գործածել առաջին վարժութեան բառերը զանազան հոլովներով:

**Վարժութիւն 3.** Հատուածէն ընտրել **եան, ուան (ան)** հոլովումներուն պատկանող գոյականները և նշել, թէ ո՛ր հոլովով գրուած են: Ստորագծել նաև **ի, ու** հոլովումներուն պատկանող բառերը:

Սև կաշիէ մեծկակ պայուսակ մըն վեր զոր առտու իրիկուն իր ձեռքը բռնած կ'երթար փողոցներէն: Իր կեանքին անբաժան ընկերն էր այս տոկուն կաշիէ պարկը, որով ամէն իրիկուն իր տան պիտոյքը, հացն ու միսը կը տանէր, կամ պտուղը իր երկու փոքրիկ զաւառներուն, որոնք դրան առջեւէն կը բոլորովէն խոստումնալից ու խոստամնապահ այս պայուսակին շուրջը:

Այս մարդուն բոլոր յոգնաջան վաստակը ու քրտնաթոր գործունէութիւնը անոր մէջն էր, դանայեան տակառ, զոր կը լեցնէր շարունակ երեսուն տարիներէ ի վեր առանց յաջողելու: Իր կեանքի սլաքարը հոն էր ամբողջ, ասլրուտի խնդիր, օրական հացի խնդիր, որուն արհաւիրքովը լեցուն էր միշտ այդ կաշիէ պահարանը իր մշտնջենական պարապութեամբը. իր ուրախութիւնները ու ցաւերն ալ հոն էին, իր յիշատակներն ալ:

Աղէկ օրեր ու գէշ օրեր ունէր այդ տոպրակը:

(Գ. Զօհրայ)

## 49. ՈՋ ՀՈՒՈՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող գոյականներուն սեռական-տրականը կը կազմուի **ոջ** մասնիկով, իսկ բացառականի մէջ անոր վրայ կ'աւելնայ **մէ**:

Օրինակ՝ կին, կնոջ, կնոջմէ:

Հոլովման պատկերն է՝

	Ե Ղ ա կ ի	Յ ս դ ն ա ի ի
Ուղղ. Հայց.	բոյր	բոյրեր
Սևո. Տրակ.	բրոջ	բոյրերու
Բաց.	բրոջմէ	բոյրերէ
Գործ.	բրոջմով	բոյրերով

Այս ձևով հոլովուող բառերը սակաւաթիւ են: Այս հոլովման կը պատկանին ազգակցութիւն ցուցնող քանի մը գոյականներ՝ կին, տալ, աներ, տագր, կեսուր, տէր և ասոնցմով բարդուած այլ բառեր (երբ երկրորդ բաղադրիչ են):

Ընկեր բառը եւս կը պատկանի այս հոլովման, սակայն ան կրնայ հոլովուիլ նաեւ ի հոլովմամբ (ընկեր—ընկերի կամ ընկերոջ):

### 50. Օ ՀՈՒՈՎՈՒՄ

Այս հոլովման կը պատկանին սերտ ազգակցութիւն ցուցնող քանի մը գոյականներ՝ հայր, մայր, եղբայր և ասոնցմով բարդուածները, որոնց մէջ յիշկաները երկրորդ բաղադրիչ են՝ նախահայր, նախամայր, հօրեղբայր, մօրեղբայր, կնքահայր և այլն: Այս բառերուն այ կրկնչիւնը սեռական հոլովի ատեն կը փոխուի օ-ի, որով կը ստացուի օթ: Օրինակ՝ հայր-հօթ, եղբայր—եղբօթ, մայր—մօթ:

Բացառականը կը կազմուի սեռական-տրականէն՝ մէ՛ւ մասնիկով, գործիականը՝ մո՞վ մասնիկով:

	Ե Ղ ա կ ի	Յ ս դ ն ա կ ի
Ուղղ. Հայց.	եղբայր	եղբայրներ
Սևո. Տրակ.	եղբօթ	եղբայրներու
Բաց.	եղբօթմէ	եղբայրներէ
Գործ.	եղբօթմով	եղբայրներով

### 51. ՈՅ ՀՈՒՈՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող գոյականներուն սեռական-տրականներ կը կազմուի ոյ մասնիկով, որ կ'աւելնայ ուղղականին վրայ:

Բացառականը կը կազմուի է, երբեմն նաեւ մէ՛ւ, գործիականը՝ ու՞վ, երբեմն մո՞վ մասնիկով: Այս հոլովման պատկանող բառերը սովորաբար յոգնակի թիւ շունին:

Այս հոլովման կը պատկանին թիչ թիւով բառեր.

**Ա.** Սէր, Աստուած, Պոլիս, Տարօն, Կարին.

**Բ.** Իս վերջացող տեղանունները՝ Ասիա, Խաւիա, Նդեսիա, Նիդակիա, Թրակիա և այլն:

Հ ո լ ո Վ մ ա ն պ ա տ կ ե ր ն է՝

Ուղղ. Հայց. սէր (յոզնակին գործածական չէ, թէեւ ոմանք կը դնեն քերականութեան դիրքերու մէջ):

Սեռ. Տրակ. սիրոյ՝

Բաց. սէրէ

Գործ. սիրով

Աստուած բառը կը հոլովուի հետեւեալ ձևով.

Ուղղ. Հայց.	Աստուած
Սեռ. Տրակ.	Աստուծոյ
Բաց.	Աստուծի
Գործ.	Աստուծով

**Մ ա ն օ թ ու թ ի ն ք.** Իս վերջացող անձանունները կը պատկանին **Ի** հոլովման (Արաքսիա—Արաքսիայի, Մատաթիա—Մատաթիայի, Նդիա—Նդիայի և այլն):

**Վարժութիւն 1.** Հոլովել տագր, աներ, տէր գոյականները նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Հոլովել մայր բառով կազմուած երկու բարդ գոյական (օր. նախամայր, սանամայր):

**Վարժութիւն 3.** Հետեւեալ հատուածէն առանձին սիւնակներու մէջ ընդօրինակել **ոջ, օ և ոյ** հոլովումներուն պատկանող բառերը—

**Ա.** Գեղը, մօրաբրոջ մը տանը մէջ ապրած էր ինքզինքը գիտնալէն ի վեր: Մօրը յիշատակը իր պղտիկ տարիքին մէջ շատ տարտամ կերպով մը կու դար մտքին առջեւ, առեն անցնելով գոյնը նետած, գիծերը հղծուած հին լուսանկարի մը ոյէս: Հայրը բնաւ ճանչցած չէր: Այս մօրաբրոջ տանը մէջ՝ կէս մը աղախինի ու կէս մը ազգականի սրէս կ'ապրէր: Մօրաբրոյրը սիրով ընդուներ էր անոր ամուսնութեան առաջարկը և ճամբեր էր օր մը:

Հաճի Տիւրիկ ճիշդ այդ ժամուն հասաւ զինքը միասին Պոլիս ասանկու համար:

(Գ. Զօհրապ)

Բ. Յակոբ Մահտեսեան իր հօրմէն ժառանգած է անսանձ սէր մը գեղեցկութեան համար ու մօրմէն՝ իր գեղեցիկ աչքերուն հետ հայարտութեան և քաջութեան խառնուրդ մը: Իսկ իրրեւ նիւթական հարստութիւն՝ իր հայրը Մահտեսի Նիկողոս, իրեն ձգած էր հաճի Սարգիս ամիրային բնակած փայտաշէն և ընդարձակ շէնքին կէսը, որ տարիներէ ի վեր նորոգութենէ զուրկ՝ քիչ ատենէն փլատակ մը ըլլալու կը սպաննար:

Յակոբ Մահտեսեան, որուն Սարգիս ամիրային թոռը ըլլալը շատերը մոռցած էին այլևս, որդեգրուած էր իր հօրաքրոջմէն՝ Գոհարիկ հանըմէն, որ ժամանակին իր հօրը ողջութեան ամուսնացած էր իրենց կացութեան համապատասխանող ընտանիքի մը երիտասարդ անդրանիկին հետ:

Երբ Յակոբ որդեգրուեցաւ իր հօրաքրոջմէն, արդէն անիկա բաւական տարեց կին մըն էր— իր հօրմէն մէկ-երկու տարեկան մեծ ըլլալով արդէն— և իր երկու տղաքը ամուսնացած և զաւակներու տէր էին. իր հօրաքրոջ աղջիկը՝ օրիորդ Աննիկ, ստանձնած էր իր կրթութիւնը իր երկու եղբօր զաւակներուն հետ:

(Զ. Նսայեան)

## 52. ԱՅԼԱԶԵՒԻ ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐ

Հայերէնի մէջ կան կարգ մը բառեր, որոնց հոլովումը կը տարբերի մեր ստույած կանոններէն:

Այդ բառերը յաճախ դրաբարաձև կը հոլովուին:

Այդպէս է տուն, շուն բառերուն սեռական-տրականը՝ տան, շան. անուն, ժողովուրդ, ծնունդ, գալուստ բառերուն սեռական-տրականը՝ անուան, ժողովրդեան, ծննդեան, գալստեան:

Այս բառերը կը հոլովուին նաև ի հոլովումով:

Մարդիկ և տղաք անկանոն յոգնակիները այսպէս կը հոլովուին՝

Ուղղ. Հայց.	մարդիկ	տղաք
Սեռ. Տրակ.	մարդոց	տղոց
Բաց.	մարդոցմէ	տղոցմէ
Գործ.	մարդոցմով	տղոցմով

### 53. ԳՐԱՐԱՐԵԱՆ ՀՈՂՈՎԱԶԵՆԻՐՈՒ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

Ժամանակակից հայերէնի մէջ կան գրարար կարգ մը հոլովածներ, որոնք կորսնցուցած ըլլալով իրենց երբեմնի հոլովական իմաստը, այժմ կը գործածուին իրրեւ անկախ բառեր: Օրինակ՝ Արշակունեաց բառը այլեւս չի դիտուիր իրրեւ Արշակունի գոյականին յոգնակի սեռականը, այլ կը գործածուի որպէս առանձին բառ, իսկ Արշակունի գոյականին յոգնակի սեռականը կ'ըլլայ Արշակունիներու:

Վրաց բառը (վրաց լեզու, վրաց երկիր) այժմ չի նշանակեր վրացիներու, շունի այլեւս հոլովական այդ իմաստը, զոր հին դարերուն ունեցած է: Այսպէս են նաև (Գիրք) ծննդոց, Սևանայ (լիճ), Կասպից (ծով), Հայոց (աշխարհ), Վարդանունց (տօն), յարգանաց (հաւաստիք), կենաց (բաժակ), շարեաց (փոքրագոյն), հարսանեաց (հրաւէր), արքայից (արքայ) և այլն, որոնք ծնունդի, Սևան, Կասպի, Հայ, Վարդանան, յարգան, կեն, շարի, հարսանի, արքայ և այլ բառերու գրարար եղակի կամ յոգնակի սեռական հոլովածներն են:

Գրարար բաղմաթիւ հոլովածներ այժմ պահպանուած են իրրեւ այլ խօսքի մասեր: Այսպէս, մասամբ բառը հիմա կը դիտուի իրրեւ մակրայ (մասամբ ուղղուեցաւ, մասամբ ճիշդ է), մինչդեռ ան գրաբարի մէջ եղած է մասն գոյականին գործիական հոլովածներ, որ կը նշանակէ մասով:

Այս ձեւով մակրայ, եղանակաւորող բառ, երբեմն ալ կապարձած են ի հարկէ, ի սկզբանէ, ի բնէ, ի ծնէ, ի պաշտօնէ (գրարար բացառականները), առեւտ. դիտմամբ, հարկաւ, իրաւ, իրօք, կարծեօք, նկատմամբ, ստուգիւ, արդեօք (գրարար գործիականները), կամաց (գրարար տրականը) և այլն:

### 54. ՅԱՐԱԳԻՐ ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Յարագիր կաղմութիւն ունեցող գոյական անունները հոլովուելու առեւն կը փոխուի միայն երկրորդ բաղադրիչը, իսկ առաջինը կը մնայ անփոփոխ:

Օրինակ՝

Ուղղ. Հայց.	հող ու մոխիր
Սեռ. Տրակ.	հող ու մոխիրի
Բաց.	հող ու մոխիրէ
Գործ.	հող ու մոխիրով

Կան որոշ բացառութիւններ, երբ երկու բաղադրիչներն ալ  
կը հոլովուին:  
Օրինակ՝

Ուղղ. Հայց.	հայր ու մայր
Սեռ. Տրակ.	հոր ու մօր
Բաց.	հորմէ ու մօրմէ
Գործ.	հօրմով ու մօրմով

### 55. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈԼՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

#### Ի հոլովուիմ

	Ի զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
Ուղղ. Հայց.	վարպետ(ը)	վարպետներ(ը)
Սեռ. Տրակ.	վարպետի(ն)	վարպետներու(ն)
Բաց.	վարպետէ(ն)	վարպետներէ(ն)
Գործ.	վարպետով(ը)	վարպետներով(ը)
Ուղղ. Հայց.	գիւղ(ը)	գիւղեր(ը)
Սեռ. Տրակ.	գիւղի(ն)	գիւղերու(ն)
Բաց.	գիւղէ(ն)	գիւղերէ(ն)
Գործ.	գիւղով(ը)	գիւղերով(ը)

#### Ու հոլովուիմ

Ուղղ. Հայց.	պապ(ը)	պապեր(ը)
Սեռ. Տրակ.	պապու(ն)	պապերու(ն)
Բաց.	պապէ(ն)	պապերէ(ն)
Գործ.	պապով(ը)	պապերով(ը)
Ուղղ. Հայց.	նաւ(ը)	նաւեր(ը)
Սեռ. Տրակ.	նաւու(ն)	նաւերու(ն)
Բաց.	նաւէ(ն)	նաւերէ(ն)
Գործ.	նաւով(ը)	նաւերով(ը)



**ԵԱՆ** հ ո լ ո վ ու մ

Ուղղ. Հայց.	գիտութիւն(ը)	գիտութիւններ(ը)
Սեռ. Տրակ.	գիտութեան(ը)	գիտութիւններու(ն)
Բաց.	գիտութենէ(ն)	գիտութիւններէ(ն)
Գործ.	գիտութիւնով(ը)	գիտութիւններով(ը)
	կամ գիտութեամբ(ը)	

**ՌԻԱՆ, ԱՆ** հ ո լ ո վ ու մ

Ուղղ. Հայց.	թոռ(ը)	թոռներ(ը)
Սեռ. Տրակ.	թոռան(ը)	թոռներու(ն)
Բաց.	թոռէ(ն)	թոռներէ(ն)
Գործ.	թոռով(ը)	թոռներով(ը)

Ուղղ. Հայց.	գիշեր(ը)	գիշերներ(ը)
Սեռ. Տրակ.	գիշերուան	գիշերներու(ն)
Բաց.	գիշերուրէնէ	գիշերներէ(ն)
Գործ.	գիշերով(ը)	գիշերներով(ը)

**ՈԶ** հ ո լ ո վ ու մ

Ուղղ. Հայց.	կին(ը)	կիներ(ը)
Սեռ. Տրակ.	կնոջ(ը)	կիներու(ն)
Բաց.	կնոջմէ(ն)	կիներէ(ն)
Գործ.	կնոջով(ը)	կիներով(ը)

**Օ** հ ո լ ո վ ու մ

Ուղղ. Հայց.	հայր(ը)	հայրեր(ը)
Սեռ. Տրակ.	հօր(ը)	հայրերու(ն)
Բաց.	հօրմէ(ն)	հայրերէ(ն)
Գործ.	հօրով(ը)	հայրերով(ը)

**ՈՅ** հ ո լ ո վ ու մ

Ուղղ. Հայց.	սէր(ը)
Սեռ. Տրակ.	սիրոյ(ն)
Բաց.	սէրէ(ն)
Գործ.	սիրով(ը)

Կան կարգ մը ածանցներ, որոնք աւելնալով արմատի մը կամ բառի մը վրայ (դոյականի, ածականի, թուականի կամ ուրիշ խօսքի մասի), կը կաղմեն դոյական անուն: Այդ մասնիկները կը կոչուին դոյականակերտ ածանցներ:

Անոնցմէ առաւել դործածականներն են.

**Ա.կ** — ունի երկու իմաստ.

ա) Փաղաքշական-փոքրացուցիչ, նուաստական. ինչպէս՝ առու-աւուռակ, լիճ-լճակ, դետ-դետակ, անտառ-անտառակ, ծով-ծովակ, տուն-տնակ, աղջիկ-աղջնակ, խումբ-խմբակ, վէսլ-վիսլակ, հիւղ-հիւղակ, կամուրջ-կամրջակ, դրօշ-դրօշակ, վահան-վահանակ, սին-սինակ, դոնդ-դնդակ, դրիշ-դրշակ և այլն:

բ) Գործող անձի, դործիքի կամ այլ իմաստ. օրինակ՝ աղդ-աղդակ, գէտ-գիտակ, պահ-պահակ, ախորժ-ախորժակ, օրէն-օրինակ, ճաշ-ճաշակ, սահուն-սահնակ, խօսուն-խօսնակ, յայժ-կայժակ, տես-տեսակ, դէտ-գիտակ, ներքին-ներքնակ, հարթ-հարթակ և այլն:

**Ա.ն** — ճարտասան, խթան, կոան, վիպասան, տափան և այլն:

**Ա.նակ** — յաղթանակ, ճօճանակ, մրցանակ, ժամանակ, ցուցանակ, դանձանակ, ուժանակ և այլն:

**Ա.նք** (առաջացած է **ան**-էն՝ ք մասնիկով) — գովասանք, գգուանք, դրգանք, բամբասանք, դարմանք, յարգարանք, յարմարանք, աշխատանք, տականք, դրկանք, հալածանք և այլն:

**Ա.րան** — դասարան, տանջարան, ժողովարան, դատարան, դործարան, տաղարան, նուագարան, սրճարան, թէյարան, քաւարան, ննջարան, ընդունարան և այլն:

**Ա.րք** — գործարք, լուծարք:

**Եակ** — եռեակ, տասնեակ, հնգամեակ, յիսունամեակ և այլն:

**Իշ** — երգիչ, նկարիչ, ուսուցիչ, բնակիչ, խառնակիչ, ներկայացուցիչ, սյահպանիչ, քննիչ և այլն:

**Իւն** — հնչիւն, գոչիւն, դոփիւն, թնդիւն, շառաշիւն, սօսա-վիւն, կարկաշիւն, գլրգիւն և այլն:

**Իք** — ոստելիք, վառելիք, ճաշակելիք, ըմպելիք, գործիք, շարիք, կարծիք և այլն:

**Ոյթ** — բնոյթ, լուծոյթ, հաւաքոյթ, հասոյթ, ձանձրոյթ, կըշ-առոյթ, սովորոյթ և այլն:

**Ոյք** — կահոյք, հաճոյք, պիտոյք, դահոյք և այլն:

**Որդ** — առաջնորդ, ժառանգորդ, կցորդ, դնորդ, անցորդ, փոխանորդ, հետևորդ, լողորդ, ճանապարհորդ, լծորդ, նաւորդ և այլն:

**Ու** — արիւնարրու, վաշխառու, կատակերգու, ողբերգու, տաղերգու և այլն:

**Ուածք** — բացուածք, դարձուածք, սլաքուածք, դլանուածք, ձեղքուածք, մանուածք, խօսուածք, կոտորուածք և այլն:

**Ութիւն** — աղնուութիւն, մեծութիւն, բազմութիւն, քաջութիւն, հղօրութիւն, հերոսութիւն, սլաքածառութիւն, խոհեմութիւն, բարկութիւն, խաղաղութիւն, սլաղութիւն, խոնաութիւն և այլն:

**Ուհի** — հայուհի, դերասանուհի, սլարուհի, գեղուհի, բժշկուհի, իշխանուհի, թագուհի, քրմուհի, վարժուհի և այլն:

**Ում** — զգացում, բաժանում, բեռնաթափում, զարգացում, յուլում, մերձեցում, մշակում, շարժում, ընդարմացում, թարմացում, կաշկանդում, դումարում, յարգարում և այլն:

**Ունք** — զբազմունք, ցուցմունք, վարմունք, բաժանմունք, համեմունք, սկզբունք, իրաւունք, սլատահմունք և այլն:

**Պան** — ալգեսպան, սլարտիղսպան, դոնսպան, ձիապան, սլահոսպան, բարսպան, սլանդոկսպան, ջորեսպան և այլն:

**Իոր** — աշխատաւոր, սլատգամաւոր, ձիաւոր, դորժաւոր, դատաւոր, ոտանաւոր և այլն:

**Գ** — կամք, միտք, բերք, հումք, կեանք, օրէնք, դոյք, դիրք, փառք, ձեռք, ոտք, ջանք և այլն:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածներէն ընդօրինակել ածանցաւոր բառերը, որոշել ածանցը, արմատը. նոյնաժանց բառերը դրել զատուղատ սիւնակներու մէջ.

**Ս.** Մեր շոգեհնաւը կ'երթայ անդու ու միակերպ յառաջագացութեամբ, տիտանեան կնոջ մը շնորհալի կոտորուքով: Մեր ոտքերուն ներքեւ կը զգանք անոր ծածանքը զլուխէն մինչեւ յետոյքը, կոհակին անձնատուր ու անոր լուսերանդ համրոյրներուն տակ սարսռադին:

Ջուրը կը ձերմկի, կը խլրտայ շորս բոլորտիքը, զոգաւոր փրփրալից ալօսի մը մէջ գեռ երկար ատեն սլահնելով շոգեհնաւի անցքի դրոշմը: Նաւուն յետնակողմը, սլայտէ նստարանին վրայ բազմած, յոգնութեանէ ու ձանձրոյթէ ա'լ աւելի տիրապետող բան մը կը զգաս, ամբողջ մարմնոյդ անէացումը, զբացումներուդ ու զգայութեանցդ ընդարմացումը, բոլորագիծ շրջապատկերին անշարժութեանը մէջ:

(Լ. Ռաշալեան)

**Բ.** Մրրիկն իր բոլոր զայրոյթին ու կատաղութեանը հասած էր ալ. ծովը հետզհետէ լեռնաձև ալիքներով շորս կողմէն կը պաշարէր փոքրիկ մակոյկը զոր իր աղի ջուրերովը լեցուցած էր: Մութին մէջ աներևոյթ դարձող ցամաքն՝ իրարու յաջորդող փայլահերթուն ցուլացման մէջ կը տեսնուէր հանդարտ ու անփոյթ: Տնակներն ու ասպարանքներն իրենց կարմիր ու դուարթ լոյսերը վառած էին ու ալեաց մէջ կորսուող մակոյկն, անիրականանալի երազի մը պէս հեռուէն կը դիտէր ցամաքին այս հաստատ ու ասպհով երջանկութիւնը: Սահակ կը շարունակէր իր դերմարդկային ճիգերը, վտանգը կը կրկնապատկէր անոր սարտարութիւնը: Բոլոր ջանքը կը կայանար նաւակին կողը շնծայելու ալեաց յարձակման, ու խաւարին մէջ ճերմակ փրփուրներէն կոհակաց դալուտը սեսնելով՝ ձախ թիակովն իր ուղղութիւնը կը պահէր:

(Գ. Զօհրայ)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ արմատներով և ածանցներով կազմեցէ՛ք գոյական անուններ.

Հիւանդ, առողջ, մեծ, բարձր, բժիշկ, բաժան, դումար, յօդ, դին, անց (նիւ), ճամբայ, առու, ծով, տառայ (իւ), շարշար (ել), սփոփ(ել), գոլիթ, ճարճատ(իւ), գոշ(ել), դործ, ճաշ, լող(ալ), այգի, գուռ(ն), —ութիւն, —ում, —ուածք, —որդ, —ակ, —անք, —իւն, —սլան:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ հատուածէն գտնել գոյական տնունները, որոշել անոնց տեսակը (յատուկ կամ հասարակ), թիւը, հոլովումը, ցոյց տալ հոլովը, բացատրել կաղմութիւնը.

#### ՀԱՄԱՐՁՈՒՄ ԱՂԱ

**Ա.** Ամէն անգամ որ մանկութեան կամ պատանեկութեան վերջիշումներ կ'ունենամ, անխուսափելի կերպով դէմս կը կանգնի Համբարձում աղան. շիտակ, շոր, երկայնահասակ մարդ մը, յիսունէն յիսունհինգ տարեկան, պիսիքուն ծայրերը կտրած և դէպի բերանը իջած, երեսը միշտ նոր ամիլուած, գլուխը խոշոր ֆէս մը՝ մինչև ականջներուն կէսը իջած, ձեռքը երկար թէղպիհ մը, որուն հատիկները երկուք առ երկուք կը քաշէ անդադար: Իր հագուտը միօրինակ էր ամէն ժամանակ. սեւ թրքական սէթրի մը՝ միշտ կոճկուած, կանաչագոյն բսոթալոն մը, որ հուլի տարին անգամ մը պատահութիւն կ'ունենայինք տեսնելու, որովհետև, ինչպէս ըսի, սէթրին միշտ կոճկուած էր:

Մասնաւոր ուշադրութիւնս դրաւած էր ժամացոյցը, ոսկի մեծ, հնօրեայ ժամացոյց մը, որ քիչ անգամ դուրս կ'ելլէր բաճկոնին դրայանէն: Այդ ժամացոյցը պահուած էր շուխայէ պղտիկ պարկի մը մէջ, որպէսզի ոսկին շկորանցունէր իր փայլը և ամէնը մէկանց ամփոփուած ընկոյզի փայտեայ տուփիկի մը մէջ, որպէսզի որեւէ դիպուածական արկածէ ղերծ մնայ: Այդպիսի խնամքով պահուած ժամացոյց մը բնականաբար ամէն վայրկեան դուրս չէր կրնար ելլել իր թաքստոցէն...

Համրարծում ազան մեղի խնամի էր. հօրաքրոջ թէ մօրաքրոջ ամուսին կամ ասոնց մօտ բան մը, լաւ չեմ դիտեր, միայն դիտեմ, որ յաճախ մեր տունը կը դտնուէր, ուր մասնաւոր չարդանքով մը կը վարուէին հետը:

(Ե. Օտեան)

**Բ.** Մովը կապոյտ սաւանի մը պէս առանց ծալքի կը տարածւէր կը մնար ու տաք ղեփիւո մը՝ անտեսանելի հրդեհի մը ջեռուցած մթնոլորտին պէս երեսի կը զարնէր: Հեռուէն Պէտրքաթէրէի ծովեղերքը մթնշաղին մէջ նոր վառուող ճրագներն ու լապտերները լուսաւոր բիծերու կը նմանին:

Սուլթանիէի բացերն էին հիմա. ոչ նաւաւարը և ոչ տիրուհին ուշադրութիւն կ'ընէին քիչ-քիչ երկինքը ծածկող մթին ամպերուն, որոնց խայտաբղէտ փայլը ծովուն անշարժութեան մէջ կը ցոլանար: Սովորականէն շատ հեռու դացած էին արդէն ու կը հեռանային դեռ ալեւաց կամաց ընթացքին հետ:

Հաւասարապէս բացն էին երկու եղերքէն և ծովուն վրայ մռայլ քօզ մը կ'իջնէր, հետզհետէ վարատոյրի մը մէջ ամփոփելով գիրենք:

(Գ. Զօհրաս)

## Ա Մ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Ն

### 57. ԸՆԳԷՍԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ածականը առարկայի մը որակը, յատկանիշը, որպիսութիւնը կը ցուցնէ:

Օրինակ՝ բարձր (սար, ժառ, շէնք), գեղեցիկ (դէմք, մարդ, հագուստ), մեծ (տուն, բար, երկիր, ծով), սպիտակ (վարդ, ծագիկ, պատ, թաշկինակ):

Այստեղ բարձր, գեղեցիկ, մեծ, սպիտակ բառերը կը ցուցնեն սար, ծառ, շէնք, երկիր, ծով, վարդ, ծաղիկ, տուն, քար, սլաք, թաշկինակ և այլ առարկաներու յատկութիւնը, որակը որպիսութիւնը:

Ածականը կը ցուցնէ նաեւ առարկաներու ինչ նիւթէ ըլլալը: Երբնակ՝ սղոճեայ լար, ոսկեայ կամ ոսկեղէն զարդ, փայտեայ դուռ կասկեցութիւններուն մէջ սղոճեայ, ոսկեայ, փայտեայ բառերը կը ցուցնեն լար, զարդ, դուռ առարկաներուն ինչ նիւթէ շինուած ըլլալը, անոնց նիւթեղէն յատկանիշը, այսինքն՝ սղինձով սլաքաստուած լար, ոսկիով շինուած զարդ, փայտով սլաքաստուած դուռ:

Հայկական երգ, արեւելեան սովորութիւն, ծովային կենդանի կասկեցութիւններուն մէջ հայկական, արեւելեան, ծովային բառերը կը ցուցնեն երգ, սովորութիւն, կենդանի առարկաներուն վերաբերութիւնը. այսինքն թէ՛ ինչին կամ որուն կը վերաբերին այդ առարկաները (սովորութիւնը կը վերաբերի արիւնքին, կենդանին՝ ծովուն, երգը կը սլաքականի հայերուն):

Այսպէսով՝ առարկայի մը յատկութիւնը (որպիսութիւնը), ինչ նիւթէ ըլլալը, վերաբերութիւնը ցուցնող բառերը կը կոչուին ածական անուն:

Ածականները կը սլաքասլանեն **ի՛նչպիսի՞, որպիսի՞, ո՞ր** հարցումներուն:

## 58. ԱՇԱԿԱՆԻՆ ՏՆՍԱԿՆԵՐԸ

Ածականները կ'ըլլան երկու տեսակի՝ որակական և յարաբերական: Աղէկ, ուրախ, բարձր, ցած, ծանր, քեքեւ, խելօք, յիմար, կարմիր, սպիտակ, սեւ, դեղին և այլ բառեր կը ցուցնեն առարկայի մը որակը, յատկութիւնը:

Առարկայի մը կամեմատելի յատկութիւնը, որակը ցուցնող բաները որակական սծական են:

Երկարեայ (երկարէ), բրդեայ (բուրդէ), հրեղէն, ընկերական, բարեկամական, ցամաքային, արեւմտեան, հիւսիսային և նման բառեր կը ցուցնեն առարկայի մը ինչ նիւթէ ըլլալը, որուն կամ ինչին վերաբերիլը և կը կոչուին յարաբերական ածականներ:

Յարաբերական ածականները կը ցուցնեն առարկաներու վերաբերութիւնը, յատկացումը:

Պատկանելութիւն, յատկացում ցուցնող ածականները կը կոչուին նաև յատկացական ածականներ: Օրինակ՝ կղրայրական (սէր), բրոջսական (դուք), թշնամական (վերաբերում), բարեկամական (նուէր) և այլն:

Ածական անունները շին փոխուիք (շին հոլովուիք), եթէ գոյականաբար շին առնուած:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հասուածէն ընդօրինակել որակական և յարաբերական ածականները և դրել զատ-զատ սինակներու մէջ.

Տար դիշեր է, բայց սաք, այնչափ ազդու, սաստիկ, այնքան որ շօշափելի բանի մը, սրտիդ վրայ ձնշող նիւթական բանի մը զգացութիւնը կու տայ բեղ: Ասֆալթը ծանր գլխորշինքնով կ'արտաշնչէ օրն ի բուն մթնշրած տաքութիւնը:

Ամէն ոք դուրսն է, դռներուն առջև, մայթերուն վրայ, ոլարտէլներուն մէջ, սրճարաններուն առջև. ամէն ոք սունէն դուրս մղուած է անդիմադրելի զգացումէ մը որ շլիտի ուղէ սահմանափակուիլ շունչի, աւելի կենդանութեան ի խնդիր:

Պուլուարներուն վրայ, հիմակ, մարդկային հեղկը կը հոսի խիստ և կուտ: Ելեքտրական լամպարները, օդին մէջ կախուած լուսնդէն կայլակներ, իրենց թեթև, անբացատրելի կապոյտ լոյսով աչք կը խողտացնեն, լուսնին պէս տժգոյն ու անոր պէս իրենց բոլորտիքըն ունենալով բակ մը: Ինծի այնպէս կու դայ որ բեւեռային արեւներն այդ ջինջ պայծառութիւնն սնենալու են:

(Լ. Բաշալեան)

**Վարժութիւն 2.** Որակական և յարաբերական ածականները գրել առանձին սինակներու մէջ.

Մեղմ, օգային, ուրախ, տղայական, հին, բարի, կրքանիկ, երկամեայ, աղքատ, նուրբ, դարնանային, աշնանային, ծովափնեայ, հովուական, դեղեցիկ, թիթեղեայ, զուարթ, ելեքտրական, քաղցր, մարդկային, հտրազատ, ցերեկային, մտտեղիկ, կենդանական:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ գոյական և ածական անունները այնպէս մը դասաւորեցէ՛ք, որ ածականը գրուի յարմար գոյականի մը վրայ.

Վագր, ծանր, կատաղի, դետ, քար, արծիւ, վարար, դիշատիչ, սրատես, վճիտ, թռչուն, առուակ, պարկեշտ, զանդուր, վարք, մաղ:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ ածականներուն համար ընտրեցէ՛ք յարմար գոյականներ.

Կարմիր, սէդ, կոշտ, պայծառ, ճարտար, դիւրաբեկ, աղնիւ, նենգ, խարդախ, քնկոտ, բարեձեւ, բախտաւոր:

**Վարժութիւն 5.** Հետեւեալ գոյականներուն համար ընտրեցէ՛ք յարմար ածականներ.

Ամոլ, ցօղ, ձիւն, ճահիճ, աղբիւր, հաց, աղանի, պարտէզ, գիրք, խազոզ, այդի, վարդ:

### 59. ԱՄԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ԱՄՏԻՃԱՆՆԵՐԸ

Որակական ածականները կը ցուցնեն առարկաներու համեմատելի յատկութիւնը, որակը: Որակական ածականներուն մեծ մասը (մասնաւորապէս կաղմութեամբ պարզերը) ունին համեմատութեան աստիճաններ՝ դրական, բաղդատական, գերադրական, որոնք կը նշեն յատկանիշի մը աստիճանը, շափք:

Օրինակ՝ բարձր—սլակաս բարձր, անլի բարձր, շատ բարձր, ամենէն բարձր, բարձրագոյն. քաղցր—սակաւ քաղցր, անլի քաղցր, ամենէն քաղցր. մեծ—փոք մեծ, անլի մեծ, առանկ մեծ, ամենէն մեծ, մեծագոյն:

Այստեղ բարձր, քաղցր, մեծ բառերը կը ցուցնեն յատկանիշ, որակ՝ առանց ուրիշ առարկաներու նոյն յատկանիշներուն հետ համեմատուելու և այդ պատճառով ալ դրական աստիճանի են:

Ածականի դրական աստիճանը անոր սկզբնաձեւն է:

Անլի բարձր, սլակաս բարձր, սակաւ քաղցր, անլի քաղցր, փոք մեծ, անլի մեծ, առանկ մեծ կատարելութիւնները կը ցուցնեն այդ յատկանիշները՝ ուրիշ առարկաներու նոյն յատկանիշներուն բաղդատութեամբ և այդ իսկ պատճառով բաղդատական աստիճանի են:

Բաղդատական աստիճանը կ'արտայայտուի երկու ձևով.

**Ա.** Դրական աստիճանին վրայ կ'աւելցուին սլակաս, անլի, առանկ և նման բառեր, որոնք բաղդատութիւն կը նշեն (սակաւ ծանր, սլակաս ծանր, փոք խելօք, առանկ խելօք, առանկ գրաւիշ և այլն):

**Բ.** Դրական աստիճանի ձեւէն առաջ կը դրուի բաղդատող առարկային բացառական հոլովը (ընկերոջմէն) խելօք, ումեղ, բոյլ և այլն):



Ամենէն բարձր, բարձրագոյն, ամենէն բազր, ամենէն մեծ, մեծագոյն բառերն ու կառուցութիւնները կը ցուցնեն այդ յատկանիշներուն գերազանց և ամենաբարձր աստիճանի ըլլալը և այդ պատճառով ալ զերադրական աստիճանի են:

Գերադրական աստիճանը կը կազմուի հետեւեալ կերպ.

**Ա.** Դրականին վրայ աւելցնելով ամենէն, բոլորէն բառերը (ամենէն, բոլորէն լաւ, գեղեցիկ, ընդունակ և այլն):

**Բ.** Դրականը կը բարդուի ամէն բառով (ամենաբարձր, ամենանուրբ և այլն):

**Գ.** Դրական աստիճանը կը ստանայ (ա)զոյն ածանցը (մեծագոյն, լաւագոյն, ծանրագոյն և այլն): Բոլոր ածականները շեն ստանար (ա)զոյն ածանցը, այլ անոնցմէ մէկ քանին:

**Դ.** Դրական աստիճանէն առաջ կը դրուին շատ, խիստ, շափազանց, անհամեմատ և այլ բառեր. շատ գեղեցիկ, շատ բարձր, խիստ ընդունակ, շափազանց գրավիշ, շափազանց ծանր, անհամեմատ քաղ, անհամեմատ հզօր և այլն:

Արեւելահայերէնի գերադրականի կազմութեան տարածուած միջոցն է ամէն բառին և դրական աստիճանին բարդութիւնը (ամենամեծ, ամենամաճաւ, ամենալաւ և այլն):

Կարգ մը որակական ածականներ համեմատութեան աստիճաններ չունին (ամուլ, ամուրի, էգ, զուրկ, կոյր, համր, ստեղծ, որբ, հեարուլի և այլն):

**Վարժութիւն 1.** Կազմել հետեւեալ ածականներուն համեմատութեան աստիճանները.

Ազահ, ազատ, աղնիւ, ահաւոր, աղէկ, առողջ, արգար, բարի, բերրի, բոբր, դրաւիշ, դառն, երկչոտ, թոյլ, զով, երկար, լայն, խաղաղ, խիտ, խոշոր, ծանր, կակուղ, համեստ, հարուստ, հպարտ, ճապուկ, միամիտ, մանր, մռայլ, յստակ, շոր, շար, սղոտոր, սլայծառ, սլարասլ, սլոտիկ, վիթխարի, տաք, տկար, տարտամ, տխուր, փխրուն, փափուկ, քաջ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածէն ընտրել որակական ածականները և կազմել անոնց համեմատութեան աստիճանները.

Մեր առջև կ'երկարի խճուղի մը, երկար, անհատնում, անսահման: Արեւը իր ճառագայթները անարգել կը թափէ ճամբուն վրայ, արծաթաղօծելով փողին, որ ջուրի հարթ մակերեսովի մը պէս կը փոռուի Այս փողեղէն ծովն իր կոհակներն ունի...: Անատուրի ճշմարիտ դիւզացիներ, առոյգ, բարձրահասակ, արեւն այրած,

այլատեսակ տարազներով, որոնց մէջ Ֆէսին փաթթուած թաշկինակը, առաւել համ նուազ ծաւալուն շալուարը և շուաններով կապուած տրեխը՝ յար և նման են գրեթէ միշտ... Խճուղիին երկու կողմէն կ'երկարաձողուին ընդարձակ արտեր, որոնց հունձքը աւարտուած է արդէն:

Եզիպտացորենի լայնատարած դաշտ մը ուշագրութիւնս կը գրասէ. սրտուղները հնձուած են և արմատները միայն կը մնան ուղղածիդ, արեւէն շորցած, սղտորուած, սեւցած,— կարծես ձայնարկութեան անվախճան նշաններ՝ հողին մէջ ցցուած, բնութեան ահաւոր խորհուրդին անհունութիւնը որակելու համար: Ծխախոտի արտերը միայն կը սղահեն դեռ իրենց կանաչութիւնը, բարակ ցօղունի մը ծայրը դալար փունջով մը, որուն մէջ ճերմակ ծաղիկներ՝ խօսուն խուզարկու աչքերը կը թուին լայն տերեւներուն:

(Լ. Ռաշալեան)

## 60. ԱՄԱԿԱՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՆՍՆԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ածականները նախադասութեան մէջ սովորաբար կը դործածուին գոյականներու հետ՝ սուցնելով առարկայի յատկանիշ:

Օրինակ՝

Դեղեցիկ տղան վարդ մը տեսաւ

Վարդանը ուշիմ աշակերտ մըն է:

Մայրական սիրտը ամենէն ջերմն է:

Այս նախադասութեանց մէջ գեղեցիկ, ուշիմ, մայրական ածականները դործածուած են տղան, աշակերտ, սիրտը գոյականներուն հետ և կը ցուցնեն անոնց ինչպէս ըլլալը:

Ածականները կրնան նաեւ ստորոգեալի բաղադրիչ ըլլալ: Օրինակ՝

Գարունը գեղեցիկ է: Մասիսը բարձր է: Յասմիկին շրջազգեստը մետաքսայ է:

Այս նախադասութեանց մէջ գեղեցիկ, բարձր, մետաքսայ ածականները ստորոգեալի բաղադրիչ են:

Որակական ածականները կրնան դրուիլ նաեւ բայերու վրայ և ցուցնել դործողութեան յատկանիշ: Օրինակ՝ Ան գեղեցիկ կը նկատուի: Տղան բարձր կը խօսէր:

Դեղեցիկ և բարձր որակական ածականները դրուած են կը նկատուի, կը խօսուի բայերուն վրայ:

Աստուծոյ մէջ զատ, ածականները նախադասութեան մէջ կրնան գործածուիլ գոյականաբար: Այդ սարադային ածականները կրնան կատարել այն բոլոր պաշտօնները, որոնք յատուկ են գոյականին:

Օրինակ՝

Մոլլը շի սիրուի:

Յարգանքի փառքը կը վազէ քաջերու անուան հետ:

Նամակը տուաւ սլոտիկի մը:

Ինձո՞րն երէն ընտրեց քաւմը:

Ան սկսաւ շատ քարծրէն:

Այս նախադասութեանց մէջ ծոլը, քաջերու, սլոտիկի, քաւմը, քարծրէն բառերը գոյականաբար գործածուած ածականներ են (գոյականի նման հոլովուած են):

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հաստատմին մէջէն դանել ածականները և որոշել թէ ի՞նչ բառերու հետ են գործածուած.

Տընակին մէջ մըթընշաղ, կըտուրին տակ հայրական,  
Ամբարնե՛րն են, շար ի շար, նոր բերքերով ծոցուորած:  
Իրենց լայնշի արգանդէն՝ թանձր բոյրերը կու գան  
Աշունհերուն պըտղալից և արտերսին սանդաղուած:

Հո՛ն է վիզը թըխահատ, հո՛ն է դարին իլածեւ,  
Հո՛ն, քամուելով ակօսէն ու հոսելով սարն ի վար  
Տորեանն հեղե՛ղ է կազմեր: Անոնք ոսկի և արեւ  
Կըրկած կարծես թէ ըլլան արշալոյսներ ամպածրար:

Գերաններէն ծըխասպատ, և մենաւոր պատերէն  
Սարդն անոնց վրայ է փըռեր պատմուհանները մոխրտու:  
Մերթ անոնց վրայ կը ցաթէ շեշտակի լոյս մը վերէն  
Տատամսկէ վերջ երկար շուրջն երգիկին արեւտու:

(Գ. Վարժման)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հաստատմին մէջ ցոյց տալ ածականները իրենց բուն գործածութեամբ՝ վանոնք տարբերելով այն ածականներէն, որոնք գործածուած են գոյականաբար.

Կապոյտն յանկարծ կու լայ բուրն ծիծաղէն,

Եւ կը տեղայ աղամանդ.

Կը լուսնի կոյր աղբերակներ ու կ'երգեն

Իրենց ծրնունդն արգաւտնդ:

Անհունն ի վար կը հեղեղուին շառաշով  
Մեծ կաթիլներ շափիւղայ,  
Կի արեւով, ցընծութիւնով, կապոյտով,  
Միծաղներով սատափեայ:

(Գ. Վարուժան)

**Վարժութիւն 3.** Հետեւեալ ածականները գործածել գոյականներու հետ.

Ամայի, կանաչ, վարդագոյն, կոշտ, շարժուն, թխադէմ:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ ածականները գործածել բայերու հետ.

Բարձր, խելօք, հպարտ, արձակ, ազատ, տխուր, վայելուչ, արդար:

**Վարժութիւն 5.** Հետեւեալ ածականները գործածել իբրեւ ստորոգեալի մաս.

Մեծ, նուրբ, պայծառ, վտանգաւոր, կակուղ, շնորհալի:

**Վարժութիւն 6.** Նախադասութեանց մէջ գոյականաբար գործածել հետեւեալ ածականները.

Իմաստուն, սիրուն, գանգուր, աղի, տաք, լայն, զով, թթու, փոքր:

### 61. ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ ԱՅԱՆՅՆԵՐ

Ածականները կազմութեամբ կ'ըլլան պարզ, բարդ և ածանցաւոր: Պարզերը քիչ են (մեծ, վտր, ծանր, քեքեւ, քաղցր, յստակ, վնիտ, ուրախ, ծուռ, դեղին, կարմիր, սեւ, սպիտակ, ներմակ, պալ և այլն):

Աւելի շատ են բարդ (բանիմաց, ինքնամիտփ, լաւտես, լուսամիտ, հայրենասէր, հիւստեանչ, պարզամիտ, քաջատեղեակ) և ածանցաւոր ածականները:

Ածանցաւոր ածականները կազմուած են ժխտական նախածանցներով և կարգ մը վերջածանցներով:

**Ժխտական նախածանցներով.**

**Ան** — անտուն, անմիտ, անմահ, անկարգ, անփոյթ և այլն:

**Ապ** — ապերախտ, ապաշնորհ, ապուշ, ապերջանիկ, ապօրինի և այլն:

**Գժ** (տժ) — դժբախտ, դժգոհ, տժգոյն և այլն:

**Զ** — շունեւոր, շխօսկան, շտես և այլն:

**Տ** — տղէտ, տգեղ, տհաս և այլն:

Վերջածանցներով.

**Ակ-սն** — բնական, բարեկամական, թշնամական, վերջնական, սովորական և այլն:

**Ային** — ցամաքային, ծովային, երկնային, դարնանային, աշնանային, ալգային և այլն:

**(Ա)ւէտ** — բուրասէտ, պտղաւէտ, ծաղկաւէտ, հոտաձէտ և այլն:

**(Ա)ւոր** — զօրաւոր, յանցաւոր, հոգեւոր, ցանցաւոր, պտուտակաւոր, գլխաւոր և այլն:

**Ացի** — խելացի, բերանացի և այլն:

**Եայ(է)** — բրդեայ, ոսկեայ, արծաթեայ, գործունեայ, միամեայ, փայտէ, ադամանդէ և այլն:

**Եան** — արեւելեան, արեւմտեան, նախնադարեան, հնադարեան, միջնադարեան, գրարարեան և այլն:

**Եղ** — համեղ, զօրեղ, ուժեղ և այլն:

**Եղէն** — հրեղէն, բոցեղէն, կայծակեղէն, լուսեղէն և այլն:

**Իշ** — գիւթիշ, կախարդիշ, գրաւիշ, հմայիշ, յուզիշ, կիզիշ, տալաւորիշ, համողիշ և այլն:

**Ոտ, կոտ, ուտ** — տղմոտ, քարոտ, աւալուտ, վախկոտ, հողոտ, ջրոտ, մրոտ, ամչկոտ, դանդաղկոտ և այլն:

**Ուն** — հոսուն, խօսուն, լսրծուն, մնայուն, կանդուն, բեկբեկուն, հաստատուն, կայուն և այլն:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածին մէջէն գտնել ածանցաւոր ածականները և ստորագծել ածանցները.

Գործարանը կը նմանէր առասպելական հսկայ տնասունի մը, երկաթէ կմախքով և աղիւսէ միաններով: Բայց բրածոյ մը շէր, կեանքի շունչը միշտ ալ անպակաս էր իր ներսէն:

Եւ ահա՛ ելքերտրական դանգին սուր կանչէն արթնցած՝ առասպելական հսկան կը բռնար բերանը, և կէս ժամուան մէջ ներս կ'առնէր, կը կլլէր կարծես երկու հարիւր հոգի՝ պատանի կամ շափահաս գործաւորներ:

Վայրկեան շանցած, մոզական հպումով մը կարծես, գետնալարիկին մէկ անկիւնը նստած ուժատու մեքենան կը սկսէր դառ-

ճաշ, Գործարանի սրղպատէ սիրտն էր, որ արիւնի տեղ իւզ կը գործածէր ու կը բանէր, կը բարախէր:

Ու հսկային ներսի աշխարհն ամբողջ կը լնցուէր համաշափ զարկերովը երկու հարիւր մարդկային սիրտերու և մեծ ու պզտիկ բազմաթիւ մեքենաներու: Արմէն՝ թանձր յծնքերով, խորունկ աչքերով, բարակ ու ջղուտ շաղուածքով պատանի մը, ախտմայ ինկեր էր սեմէն ներս, որ բանտի մը սեմն էր կարծես:

(Բ. Նուրիկեան)

**Վարժութիւն 2.** Ժխտական նախածանցներով կազմեցէ՛ք ածականներ հետեւեալ բառերէն.

Գոյն, տուն, աղմուկ, ձայն, կրախտիք, օրէնք:

**Վարժութիւն 3.** Ային, ախան, (ա)տք, (ա)ւէտ, եղէն, եսն, եայ, իչ, ոտ վերջածանցներով 5-ական ածական կազմեցէ՛ք:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ հատուածին մէջէն գտնել ածականները, որոշել անոնց տեսակը, կազմութիւնը, սլաշտօնը.

Տրտում օդ մը կար. առջի իրիկուրնէ ի վեր անձրեւ տեղացած էր, և Ղալաթիոյ սալաշատակներուն աղստտ կապարադոյն ցեխը աչքի զարնող հակապատկեր մը կը կազմէր երկնքին պայծառ կապոյտին հետ որ, թօնընկեց ամպերէն ազատուած՝ անհունութեան մէջ կը պարզէր իր անծայրածիր մերկութիւնը: Կծու ցուրտ մը կը տիրէր, ու քամին բիւր սլաքներով կ'ասպնտէր մարմնին հոլանի մասերը: Մ'եսպր մտայ յանկարծ: Մարմարեայ սեղանի մը առջեւ անցայ, ուր նստած էր բարեկամներէս մին, մշտնջենաւոր յաճախորդ այդ ներողամիտ հաստատութեան, ու պատկերազարդ հաւաքածոյ մը առեւելով սկսայ մեքենարար թղթատել: Նոյն բաղմութիւնը հոն էր միշտ, անդոյր ու անշշուկ, մեղմաձայն խօսակցութեամբ զրտողած կամ ընթերցանութեան մէջ խորասոյզ:

Այդ միջոցին ճիշդ քովս եկաւ նստաւ տասնինը-բստն տարեկան երիտասարդ մը:

Ուշագրաւ դէմք մըն էր, բոլորովին տարբեր այն խաղաղ ու տարտամ դէմքերէն, որոնց վարժուած էր հոն նայուածքս: Մոլորուն ու խոր աչքեր ունէր, բայց խոր, այնչափ որ բիրտուն ցուրը այնպէս կը վառէր հոն, ինչպէս սիկառէթի մը ծայրը դիշերուան խաւարին մէջ:

(Լ. Բաշալեան)

## Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Ն

### 62. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

**Թիւ, թուային կարգ և բաշխում ցուցնող բառերը կը կոչուին թուական:**

*Օրինակ՝ մէկ, երկու, զսան, քառասուն, երեսունութ, երկրորդ, հարիւրերորդ, շորսական, վեցական և այլն:*

**Թուականները կ'ըլլան երեք տեսակ՝ ֆանակական<sup>1</sup>, դասական, բաշխական:**

### 63. ՓԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՒԱԿԱՆՆԵՐ

**Քանակական կը կոչուին թիւ, քանակ ցուցնող թուականները:**

*Քանակական թուականները կը գործածուին սովորական համբանքի ժամանակ, առարկաներուն քանակը ցոյց տալու համար:*

*Օրինակ՝ երեւ գիրք, ֆսան քայլ, ուր մատիտ և այլն:*

*Քանակական թուականներուն ուղղագրութիւնը գիտնալու համար անհրաժեշտ է լաւ ըմբռնել անոնց կազմութիւնը:*

*Ըստ կազմութեան քանակականները կ'ըլլան՝ պարզ, բարդ, բաղադրեալ:*

*Պարզ կը համարուին միատրոները (մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթն (եօրր), ուր, ինն (ինը), տասնատրոները (տասը, ֆսան, երեսուն, ֆառասուն, յիսուն, վարսուն, եօրանասուն, ուրսուն, իննսուն), կարիւր, կազար, միլիոն, միլիառ թուականները:*

*Բարդ են երկանիշ թիւերու անունները՝ 11—99, որոնց բաղադրիչները կը գրուին միասին. տասնմէկ, տասներկու, տասներեք, տասնչորս, տասնհինգ, տասնվեց, տասնեօթը, տասնութ, տասնինը, զսանմէկ, զսաներկու, զսաներեք, զսանչորս և այլն:*

*Բաղադրեալ են միւս բոլոր թուականները: Օրինակ՝ հարիւր տասնմէկ, երեք հարիւր չորս, չորս հազար ինը հարիւր վաթսուներեք և այլն:*

**Վարժութիւն 1.** Բառերով դրել հետեւեալ թիւերը, խմբաւորելով ըստ կազմութեան. բացատրել անոնց ուղղագրութիւնը. 7, 9, 19, 38, 47, 90, 99, 164, 276, 451, 1964, 9243:

**Վարժութիւն 2.** Բառերով գրել թուականները, որոշել տեսակներն ըստ կազմութեան.

<sup>1</sup> Որոշ բերականներ զայն կ'անուանեն «բացարձակ»:

Սիրելի զաւակս՝ Միհրանիկ,

Կը հաստատեմ 1905 Դեկտ. 25 թուակիր յանձնարարեալ նամակս, որով ներփակ զրկեցի 300 ֆր. 200-ը իբրև Յունուարի ամսական և 100-ն ալ կաղանդի բացառիկ ծախսերուդ համար: Կը յուսամ որ ժամանակին ստացած կ'ըլլաս: Ընդունեցի քու 1905 Դեկտ. 27 թուակիր նամակդ և ամէնքս ալ շատ ուրախ եղանք որ առողջ ես ու դասերուդ կ'աշխատիս:

(Ն. Օտեան):

#### 64. ԴՍՍԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Դասական կը կոչուին այն թուականները, որոնք առարկաներու թուային կարգ կը ցուցնեն:

Օրինակ՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնմէկերորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, տասնհինգերորդ, տասնվեցերորդ, քսաներորդ, երեսուներորդ, քառասուներորդ, յիսուներորդ, վաթսուներորդ, եօթնասուներորդ, ութսուներորդ, հարիւրերորդ, երկու հարիւրերորդ, երեք հարիւրերորդ, եօթը հարիւրերորդ, հազարերորդ, հազար ինը հարիւր վաթսուներորդ և այլն:

Դասական թուականները կը կաղմուին բանական թուականներուն կցելով **երրորդ** ածանցը. ինչպէս՝ հինգերորդ, վեցերորդ, վաթսուներկուերորդ և այլն:

Երկու, երեւ, չորս թուականներուն դասականները կը կաղմուին **րորդ** ածանցով՝ երկրորդ, երրորդ, չորրորդ:

Մէկ բանականէն դասական չի կաղմուիր. համապատասխան դասականն է՝ առաջին:

Դասական թուականները կը դրուին նաև հետեւեալ կերպ.

1) Արաբական թուանշաններով և **րդ** մասնիկով. թուանշանին և այդ մասնիկին միջև կը դրուի դծիկ. օրինակ՝ 2-րդ (երկրորդ), 3-րդ (երրորդ), 4-րդ (չորրորդ), 5-րդ, 6-րդ, 15-րդ, 100-րդ և այլն:

Առաջին դասականը կը դրուի՝ 1-ին:

2) Արաբական թուանշաններով ու փակագիծով. ինչպէս՝ 1), 2), 3), 4), 5), 10), 225), 226), 227) և այլն:

Այս պարագային փակագիծի փոխարէն կրնայ դրուիլ նաև միջակէտ. 1., 2., 3., 4., 5., 10., 20., 30. և այլն:



3) Հոսովմէական թուանշաններով՝ I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XII, XIII, XIV, XV, XVI, XVII, XVIII, XIX, XX... XXX (30-րդ), XXXI, XXXII, XL (40-րդ),... L (50-րդ), C (100-րդ), M (1000-րդ) և այլն:

4) Հայերէնի այբբենական կարգով. իւրաքանչիւր տառի բով կը դրուի փակագիծ կամ միջակէտ, եթէ այդ տառով թուարկում արտայայտուի.

Օրինակ՝

Ա., Բ., Գ., Դ., Ե., Զ., Է., Ը., Թ., Ժ., ԺԱ., ԺԲ., ԺԳ., ԺԴ., ԺԵ., ԺԶ. և այլն, Կամ ա), բ), գ), դ), ե), զ), է), ը), թ), ժ), ժա), ժբ), ժգ), ժդ), ժե), ժզ) և այլն: Կամ ա., բ., գ., դ., ե., զ., է., ը., թ., ժ. և այլն:

Եթէ տառերով թուային կարգ նշուի առանց թուարկման, տառերուն բով փակագիծ կամ միջակէտ չի դրուիր: Օրինակ՝ Սիրով կը կարդանք Ծերենցի թերկունք (Պ դարուս վէպը; Հայ գիրերու գիտք եղած է Ն դարուն սկիզբը:

**Վարժութիւն 1.** Բառերով գրել հետեւեալ քանակականներուն դասականը և բացատրել անոնց կազմութիւնը.

1, 3, 4, 7, 8, 9, 28, 33, 401, 226, 1965:

**Վարժութիւն 2.** Գրել 22—32 քանակականներուն դասականը թուանշաններով:

**Վարժութիւն 3.** IV—XVI, XXI—XLII դասականներուն քանակականը գրել հայկական տառերով:

### 65. ԲԱՇԽՍԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Այն թուականները, որոնք կը ցուցնեն առարկաներու բաշխումը ըստ հաւասար քանակի, կը կոչուին բաշխական:

Օրինակ՝

Իւրաքանչիւր դասարան ունի քանակական աշակերտ:

Աշակերտներուն տուին երեքական տետր:

Բաշխական թուականները կը կազմուին քանակական թուականներուն կցելով ակաւն ածանցը:

Օրինակ՝ մէկական, երկուքական, երեքական, չորսական, հինգական, վեցական, եօթնական, ութական, իննական, տասնական, տասնմէկական, տասներկուական, տասնչորսական... քսանա-

կան, երեսունական, քառասունական, յիսունական, վաթսունական-  
իննսունական, հարիւրական, հազարական և այլն:

Քաշխական թուականի իմաստ կարելի է արտայայտել նաև  
քանակականներու կրկնութեամբ՝ առանց ական ածանցի. Օրինակ՝  
մէջ-մէկ (այստեղ մէկ-ի Կ-ն դարձեր է յ), երկ-երկու, երեք  
երեք, շորս շորս, հինգ հինգ, վեց վեց, ութ ութ, տասը տասը և  
այլն:

Քանակականի կրկնութեամբ քաշխական կաղմելը մասնաւորա-  
պէս սովորական է 1—6 թուականներուն համար:

Մէկ-էն փոքր թուականները կը կոչուին կոտորակային: Կո-  
տորակային թուականները կ'արտայայտուին յարադիր բարդութիւն-  
ներով. ինչպէս՝ երեք իններորդ, ութ տասներորդ, մէկ երրորդ, շորս  
հինգերորդ և այլն: Այս թուականներուն առաջին բառը կ'ըլլայ քա-  
նակական թուական, երկրորդը՝ դասական:

**Վարժութիւն 1.** Կաղմեցէ՛ք 4—13 քանակականներուն յաշ-  
խականը:

**Վարժութիւն 2.** Որոշեցէ՛ք հետեւեալ նախադասութեանց մէջ  
գործածուած թուականներուն տեսակները, խմբաւորեցէ՛ք զանոնք-  
դրեցէ՛ք բառերով, բացատրեցէ՛ք անոնց ուղղագրութիւնը:

Երեսնի մէջ կայ 11 բարձրագոյն դպրոց (1): Հայ տառերու  
դիւտը կատարուած է 5-րդ դարուն (2): Աշակերտներն ստացան  
Ծ-ական մատիտ (3): Խորհրդային Հայաստանը հիմնադրուեցաւ  
1920 թուականին (4): 11-րդ դասարանը կը բաղկանայ 27 աշա-  
կերտներէ, իսկ Ծ-րդը՝ 25 (5): Աւարայրի ճակատամարտը տեղի  
ունեցած է 451-ին (6):

**Վարժութիւն 3.** Լրացուցէ՛ք հետեւեալ նախադասութիւն-  
ներուն մէջ բաց ձգուած թուականները, որոշեցէ՛ք անոնց տեսակը,  
բացատրեցէ՛ք ուղղագրութիւնը:

Տարին կը բաղկանայ... կամ... օրերէ: Մենք կ'ապրինք... դա-  
րուն մէջ: Այժմ... թուականն է: Իւրաքանչիւր ձևոք ունի... մասը  
Ան... դասարանէն փոխադրուեր է Ծ-րդ:

## 66. ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Թուականներն ունին երեք կարգի գործածութիւն.

Անոնք՝

Ա.՝ կը գործածուին համընդու ժամանակ. ինչպէս՝ մէկ, երկու,  
երեք, շորս, հինգ, վեց, եօթը, ութ, ինը, տասը և այլն:

**Բ.** Կը դրուին գոյականներու վրայ, ցոյց տալու համար առարկաներու քանակը, թուային կարգը, քանակական բաշխումը. ինչպէս՝ հինգ երախայ, տասներկու տետր, վեցերորդ դասարան, Էրստներորդ դար, հինգական դրիչ, ուրական մատիտ և այլն:

**Գ.** Կը դործածուին գոյականաբար, շիրկնելու համար այն գոյականը, որուն վրայ դրուած է տուեալ թուականը: Օրինակ՝ քսանհինգ աշակերտներէն քսաներեքը փոխած են իրենց կարգը, երկուէր կրկնած են, Քու նուիրած դիրքերէդ երեքը կարդացեր են, կը մնայ մէկը:

Գոյականները մէկէն բարձր քանակական թուականներուն հետ դործածուելու ատեն կրնան դրուիլ թէ՛ եղակի և թէ՛ յոգնակի:

**1. Գոյականը սովորաբար եղակի կը դրուի՝**

**Ա.** երբ շարի միտուր է (ժամանակի, տարածութեան, շափի, քանակի, գիւնի ու արժէքի և այլն) և թուականին հետ կ'առնուի իրեն նախադասութեան մէկ անդամ:

*Օրինակ՝*

Հինգ վայրկեան սպասեց հոն:

Ահա երեք տարի է շարունակաբար Արմաշ կ'երթայ:

Խճուղիին երկու կողմէն կ'երկարաձգուին ընդարձակ արտեր:

Երկու օր է շատ յոգնած կ'երևիս:

Այս շէնքին բարձրութիւնը քսանհինգ մետր է:

**Բ.** երբ յատկապէս կը շեշտուի թուականի և ոչ քէ գոյականի գաղափարը:

*Օրինակ՝*

Երէկ հինգ զիւր գնեցի:

Հինգերորդ դասարանը քսաներկու աշակերտ ունի:

**2. Թուականին հետ գոյականը սովորաբար յոգնակի թիւով կը գործածուի՝**

**Ա.** երբ գոյականը որոշեալ առում ունի, կամ երէ կը շեշտուի ոչ քէ թուականի, այլ գոյականի գաղափարը:

*Օրինակ՝*

Լոյիէ տէ՛ վեկա դրած է անլի բան երկու հազար քատերախաղի: Այսօր՝ յայտնի են միայն անոր շուրջ վեց հաւիւր յիսուն քատերախաղերը:

Գիւղատնտեսական միատններուն պիտի տրուին բարձրագոյն ուսում ունեցող եօրը հաւիւր մասնագէտներ են:

Մինչև ատժմ թանդարանի սրահներուն մէջ ղետեղուած են անլի բան հինգ հաւիւր առաւիաներ և վաստաքուտեր:

Ք. Երէ գոյականն ունի բուականէն յետոյ դրուած որեւէ լրացում:

Օրինակ՝

Երեսուն յառաջադէմ աշակերտներ պարգևատրուեցան զանազան գիրքերով:

Բայց արդէն հաստ դաւաղաններով դինուած նոյնքան բազմութիւն մը կը սպասէր, բացի եօթը ուր չէզոք հանդիսատեսներէ:

Թուականները զխատրասէս կը գրուին գոյականներու վրայ և նախադասութեան մէջ կը կատարեն որոշիչի դեր: Այս պարագային թուականները շեն հոլովուիր, այլ կը գործածուին անփոփոխ:

Օրինակ՝

Գնեցի վեց գիրք:

Փոխադրուեցայ ուրբերոդ դասարանը:

Փետրուարը քսանութ կամ քսանինն օր ունի:

Թուականը անփոփոխ ձևով ստորագեալի մաս կրնայ ըլլալ:

Օրինակ՝

Մէկ ձեռքի մատներուն քանակը հինգ է:

Հայերէնի խօսքի մասերը տասն են:

Սակայն թուականները գործածուելով գոյականաբար և հոլովուելով կրնան կատարել գոյական անուան յատուկ պաշտօններ անթակայի, խնդիրի և այլն:

Օրինակ՝

Իմ ընկերներէս շոքսը բժիշկ դարձած են, իսկ երեքը՝ դերասան:

Կարդացեր եմ քու նուիրած գիրքերէդ երկուքը:

Այս նախադասութեանց մէջ շոքսը, երեքը գոյականաբար գործածուած թուականները անթակայ են, իսկ երկուքը՝ ուղիղ խնդիր:

## 67. ԹՈՒԱՅԱՆՆԵՐՈՒ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Թուականները կը հոլովուին գոյականաբար տրծածուելու պարագային:

Քանակական թուականները կը պատկանին թ հոլովման:

Ուղղ. Հայց.	երեք (ը)
Սեռ. Տրակ.	երեքի (ն)
Բաց.	երեքէ (ն)
Գործ.	երեքով (ը)

Մկ բառը երբեմն կը հոլովուի նաև ու հոլովումով (մէկու)՝  
 Երկու թուականը յօդ ստանալու պարագային լիերը կ'ունենայ  
 ք. երկուք, երկուքի, երկուքով:

Դասականներէն առաջին-ը գոյականաբար գործածուելու պարագային կը հոլովուի այսպէս՝ առաջնոյն (նաև առաջինին), առաջինէն, առաջինով:

Մնացած դասականները կ'ենթարկուին ի հոլովման: Բաշխական թուականները եւս կը հոլովուին ի հոլովումով:

Ուղղ. Հայց.	Հինգերորդը	Եօթնականը
Սեռ. Տրակ.	Հինգերորդի(ն)	Եօթնականի(ն)
Բաց.	Հինգերորդէ(ն)	Եօթնականէ(ն)
Դործ.	Հինգերորդով(ը)	Եօթնականով(ը)

**Վարժութիւն 1.** Հետեւեալ նախադասութեանց մէջ գործածուած թուականները գրեցէ՛ք թառերով. որոշեցէ՛ք անոնց տեսակը ըստ իմաստի և ըստ կաղմութեան.

Կը հաստատեմ 1908 Մայիս 3 թուակիր նամակս (1): 2 օր առաջ քրոջդ՝ Մելինէին նշանածը ճամբայ դրինք դէպի Եւրոպայ (2): Այս առթիւ ներօդի 200 ֆրանքնոց պլանքնօթ մը կը ղրկեմ (3): Գիրը անհրաժեշտութիւն մըն էր որ եթէ 406-ին շունենայինք, 416-ին կամ 426-ին պիտի ունենայինք որեւէ կերպով մը (4): Այս առթիւ Արփիար ինձ կը գրէր 906 Յուլիս 15 թուականով (5): Եղևունին յաջորդող 2-րդ կիրակին էր (6): Արբանեակը իր 12-րդ պտոյտը կստարած է երկրին շուրջը (7): Մեր դարաշրջանի 6-րդ և 7-րդ դարերու յայտնագործութիւններէն ցուցահանդէսին մէջ ներկայացուած են Յուստինիանոս կայսրի ժամանակուան բիւզանդական դրամներ (8): Յուցահանդէսին մէջ կան նաև իրեր 10—11-րդ դարերէն (9):

**Վարժութիւն 2.** Նախորդ վարժութեան բանականները գարձուցէ՛ք դասական, դասականները՝ բանական:

**Վարժութիւն 3.** Կաղմեցէ՛ք 4, 9, 16, 100 դասականներուն բաշխականը, ինչպէս նաև շորս կոտորակային թուականներ և գործածեցէ՛ք զանոնք նախադասութեանց մէջ:

## Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

### 68. ՀՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Խնձոր Տանձր Դեղձր	}	հաճելի միրգ մըն է, Աս հաճելի միրգ մըն է:
Սպիտակ Կարմիր Վարդագոյն	}	ժաղիկ կը սիրէ ան: Այսպիսի ժաղիկ կը սիրէ ան:
Երկրորդ Երրորդ Չորրորդ	}	ժամուն սխտի դամ: Միւս ժամուն սխտի դամ:

Ձախ կողմի շարքին մէջ ստորագծուած երեքական բառերուն կը համապատասխանէ աջ կողմի շարքին մէջ ստորագծուած մէկական բառ:

Առաջին օրինակին մէջ խնձոր, տանձ, դեղձ բառերէն իւրացանչիւրն ունի իր տարբեր իմաստը, որով կը զանազանուի միւսներէն. այդ բառերէն ամէն մէկը կ'անուանէ տուեալ միրգը, տուեալ առարկան և կ'անուանէ առանց դայն մատնացոյց ընելու:

Սա-ն առարկայ կը ցուցնէ, բայց անոր վրաստն այնքան ընդհանուր է, որ ան կրնայ ցուցնել ոչ միայն այդ միրգերը և առհասարակ բոլոր միրգերը, այլև անխտիր ամէն տեսակի առարկայ, որ կը գտնուի խօսողին մօտիկ: Սա-ն մատնացոյց կ'ընէ խօսողին մօտը գտնուող առարկան:

Ուրեմն, խնձոր, տանձ, դեղձ բառերը առարկան կ'անուանեն՝ առանց մատնացոյց ընելու թէ ո՛ր մէկն է ան. իսկ սա-ն մատնացոյց կ'ընէ առարկան իբրև խօսողին մօտը գտնուող առարկայ, առանց անուանելու դայն:

Նման տարբերութիւններ կան նաև միւս օրինակներուն ըստ ստորագծուած բառերուն միջև: Միայն անոնք ոչ թէ առարկայի իմաստ ունին, այլ յատկանիշի:

Սպիտակ, կարմիր, վարդագոյն ածականները կը ցուցնեն որակական տարբեր յատկանիշներ. երկրորդ, երրորդ, չորրորդ թուականները՝ թուական տարբեր կարգեր, իսկ այսպիսի, միւս բառերը ունին յատկանիշի շատ ընդհանուր իմաստ և մատնացոյց կ'ընեն առարկայի տարբեր յատկանիշներ:

Այն բառերը, որոնք մատնացոյց կ'ընեն առարկաներ, յատկանիշներ, առանց անուանելու վանոնք, դերանուն են:

Իրենց իմաստի իւրայատկութեան պատճառով դերանունները յաճախ կը դրուին անուններու փոխարէն:

Հայերէնի դերանուններն են՝ ես, դուն, ան, ին՛(ը), ասիկա, ատիկա, անիկա, այս, այդ, այն, սա, դա, նա, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այստեղ, այդտեղ, այնտեղ, միւս, իրար, մէկը-մէկ, ով, ինչ, որ, քանի, որքան, որչափ, մէկը, ուրիշ, քանի մը (մէկ քանի), այսինչ, այնինչ, ոմանք, ամէն(ը), ամէնք, ամէն ոք, իւրաքանչիւր(ը), բոլոր(ը), ոչինչ, ոչ ոք և այլն:

Գերանունները ըստ կիրարկման կը բաժնուին երեք խումբի.

**Ա.** Առարկայ ցուցնող դերանուններ, որոնք կը գործածուին անկախ, կը կատարեն գոյականին յատուկ պաշտօններ:

Ատոնցմէ են՝ ես, դուն, ան, ինքս, ինքդ, ինքը, ասիկա, ատիկա, անիկա, ոմանք, ամէնք, ոչ ոք և այլն:

Օրինակ՝

Վտակ, երեկ՛կ քեզ, մեռնիլ շունիս դուն:

Ովքե՛ր են այս երկու եզրայրները:

Ամէնքս ալ սիրով կը համարենք քեզ:

Ալ դիմանալու բան չէր ասիկա:

**Բ.** Գոյականի վրայ գրուող դերանուններ, որոնք նախադասութեան մէջ կը կատարեն ածականին, թուականին յատուկ դերեր:

Ատոնցմէ են՝

ա) Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, ինչպիսի և այլն, որոնք առարկայի մը ինչպէս ըլլալը կը ցուցնեն:

բ) Քանի մը, բոլոր, ամբողջ, ամէն և այլն, որոնք առարկաներու շափը, բանակը կը ցուցնեն:

Օրինակ՝

Այսպիսի շէնքեր շատ կան մեր քաղաքին մէջ:

Այդպիսի ծաղիկներ շատ կը սիրեմ:

Ամբողջ բաղաբը կարծես հարսնիքի մէջ էր, և ամէն ժամ ուրախ շուրեր կը հասնէին ամէն կողմէ:

Քունի մը մարդիկ հաւաքուիւ էին հրապարակը:

դ) Այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ, որքան, ինչքան, ինչչափ և այլն, որոնք կը ցուցնեն չափ ու քանակ և կը գործածուին թէ՛ գոյականներու, թէ՛ բայերու հետ:

Այսքան դիրք ե՛րբ դներես:

Այսքան չէր դրած բնաւ:

Որքան հրաշալիքներ ունի մեր սիրասուն հայրենիքը:

Որքան կարօտքեր եմ քեզ: Այսչափ ծաղիկ ոչ մէկ տեղ տեսած եմ:

Այսչափ աշխատած չէի:

Մ ա ճ օ ր ու թ լ Վ ճ . Ռ և Գ կէտերու գերանուններէն շատերը կրեան գործածութիւն գոյականարար և ունենալ գոյականի կիրարկութիւններ:

Օ ր ի ն ա կ՝

Ամէնը կը խօսին այդ մասին: Ես տեսայ թղթը:

Այս, այդ, այն գերանունները հաւասարապէս թէ՛ ածականաբար և թէ՛ գոյականաբար կը գործածուին:

Այս տունն իմս է: Այս է իմ տունս:

Գ. Բայի վրայ գրուող գերանուններ, որոնք կը ցուցնեն գործողութեան յատկանիշ:

Ատոնցմէ են՝ այսպէս, այդպէս, այնպէս, ինչպէս, հոս, հող, ետն և այլն:

Օ ր ի ն ա կ՝

Միշտ այսպէս կը սորվի դասերը:

Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:

Հոս բժշկական բնութեան պիտի ենթարկուինք:

Դերանունները կ'ըլլան՝ անձնական, ցուցական, վիճադարձ, հարցական-յարարեցական, որոշեալ, անորոշ:

Վարժութիւն. Հետեւեալ հատուածին մէջէն գտէ՛ք դերանունները և որոշեցէ՛ք անոնց կիրարկութիւնը.

— Այս տարիքին եկած եմ, և աստեղ ըմպողութեան եկած չէր:

— Արիստոզոմ աղա հրամանքնի՞դ էք...

— Այո, ես եմ:

— Շնորհակալ եմ որ Արիստոզոմ աղան դուր էք. ձեր գալուստը լրագրի մէջ կարգացի և շատ ուրախացայ որ աղբերնուս մէջ ձեզի պէս ազնիւ սիրտ կրող աղջասէրներ պակաս չեն, վասնզի այն աղբն, որ աղջասէր չունի իւր մէջ, աղդ չէ:

— Այո՛:

— Փոխադարձաբար այն աղջասէրն ալ, որ աղդ չունի, աղջասէր չէ:

— Շիտակ է:

— Այս երկուքն իրարու հետ այնպիսի սերտ կապակցութիւն մ'ունին որ իրարմէ բաժնելուդ պէս՝ երկուքն ալ կը կորսուին:

— Այնպէս է...



— Աղդ մը որ իւր աշխատատեղերը չ'քաջալերեր... աղդերուց կարդ անցնելու բնաւ իրաւունք չունի:

— Շատ աղէկ կը խօսիր:

— Եւ երբ աշխատատեղ մը վարձքը չ'ընդունիր իւր աղդէն, բնականաբար կը վհատի և երբեմն կը խորհի երթալ ինքզինք ծովը նետել:

— Ատ տղայութիւն է:

— Ներեցէք, Արիստողոմ աղա, եթէ մեր այս առաջին տեսակ-ցութեանը քիչ մը համարձակ կը խօսիմ ձեզի հետ...

Այս խօսակցութեան միջոցին երկու, երեք հոգի եւս կու դան՝ ամէնն ալ Արիստողոմ աղային կամ դիրք նոսրելու կամ լրագրի մը բաժանորդ դրելու դիտարութեամբ, և ամէնը պատուական ձաշ մ'ալ կ'ընեն իրենց առաջարկութիւնները ներկայացնելով:

(Յ. Պարոնեան)

## ԵԾ. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անձնական դերանուններն անձ կը ցուցնեն և ունին երեք դէմք:

Առաջին դէմքի անձնական դերանունները կը ցուցնեն խօսողը՝ ես, ինք: Ես դիրքը շատ կը սիրեմ: Ինքս եմ կարգացեր այդ դիրքը:

Երկրորդ դէմքի անձնական դերանունները կը ցուցնեն խօսակիցը՝ դուն, ինք: Դուն հայրենիք այցելած ես, ինքը ըրէ, ուրիշին մի՛ ձգեր:

Երրորդ դէմքի անձնական դերանունն են ան, ինք(ը), որոնք կը ցուցնեն երրորդ անձ: Ան եկաւ մեզ մօտ: Ինքը ըսաւ ինծի:

Անձնական դերանուններուն յոգնակի թիւը կը կաղմուի իւրայատուկ ձևով:

Ես, դուն, ան, ինք(ը) դերանուններուն յոգնակին են՝ մենք, դուք, անոնք, իրենք:

Ս ա ն Ե Ր Ո Ւ Ի Ն. Անձնական դերանունն երկրորդ դէմքի յոգնակին կը դորձածուի եւս եզակիի իմաստով և կը կոչուի Բաղաձայնաբանական յոգնակի:

Օրինակ՝ Ազնուաշուի Գողմայ էֆէնտի. թոյլ տուէք նոր տարուայ առթիւ որ Ձեզ ներկայացնեմ իմ խորին երախտագիտութեանս հաւաստին՝ Ձեր բարձր հոգածութեան համար:

Դո՛ւք էք, Արիստողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգենաւով եկաք:

Նախադասութեան մէջ անձնական դերանունները և ստորոգ-կալները միեւնոյն դէմքով կը դրուին: Ես եկայ: Դուն եկաւ: Ան

եկաւ: Այս պատճառաւ յաճախ աւելորդ կ'ըլլայ գործածել անձնական դերանունները, մանաւանդ անոնց տառջին և երկրորդ դէմքերը: Վերի նախադասութիւններէն եթէ հանենք ես, դուն, ան դերանունները, դարձեալ ըստին դէմքէն կը հասկցուի, թէ ով է գործողութիւն կատարողը (ես, դուն, ան):

Հետեւեալ ոտանաւորին բայերէն որոշակի կերպով կը հասկըցւին շտրածածուած դերանունները.

#### Ս Ր Ի Ն Ք

Նկու՛ւր սիրենք, եկուր սիրուինք,  
Նկուր պատմեմք քեզ մեկուսի,  
Գաղտնի ուժեղ սէր մը, սըրինդ,  
Որ տակաւին մէկուն շըսի...

Նրթանք կապոյտ սարն հեռակայ,  
Մարդերէն վե՛ր, աստղերուն տակ...

(Ռ. Սեւակ)

Սակայն յաճախ հարկ կ'ըլլայ գործածել անձնական դերանունները շեշտելու համար այս կամ այն դէմքը, իսկ երբեմն ալ բանաստեղծութիւններու մէջ պահպանելու համար ոտանաւորի շափը կամ յանգը:

#### Օ Ր Ի Ն Ա Կ՝

Ո՛վ հայրենիք, կ'երազէի ես երկար  
Քեզ յիշելով, յուսալով...  
Հիմա նորէն քեզմով իմ սիրտս է խռով,  
Բայց երազել շեմ կրնար:

Կը փայլէիր, կ'աղուորնայիր, օ՛հ, որքան,  
Արեւին մէջ երազիս...  
Հիմա մօտս ես ու ինձի դուն կ'երեւիս  
Լոյս ու շուքովդ իրական:

(Վ. Թէրէեան)

#### Կամ՝

Ես քեզի համար կը բարեխօսեմ, դուն ալ ինձի համար:

Որպէս անձնական դերանուն կը գործածուի նաեւ ինքզինք՝ ըստ, որ յօդ ստանալով կը կիրարկուի տարրեր դէմքերով (ինքզինքս, ինքզինքդ, ինքզինքը):

Իրրեւ երրորդ գէմքի անձնական գերանուն կը գործածուի նաեւ անխկա ցուցականը:

Անձնական գերանունները կը հոլովուին (բացի ինքս, ինկդ գերանուններէն):

Անոնք կը հոլովուին զոյականներէն տարրեր ձեռով՝ առանց հոլովիչներու:

Անձնական գերանունները հոլովման ատեն լրիւ կամ մասամբ կը փոխեն իրենց արմատը: Ինչպէս՝ ես—իմ—ինձ, դուն—քու—քեզ և այլն:

### Անձնական գերանուններու հոլովման սլափերը

#### Ա ո ա ջ ի ն դ է մ ր

	ն դ ա կ ի	Յ ո ս ն ա կ ի
Ուղղ.	ես	մենք
Սեռ.	իմ	մեր
Տրակ.	ինձի, ինձ	մեզ(ի)
Հայց.	զիս	մեզ
Բաց.	ինձմէ	մեզմէ
Գործ.	ինձմով	մեզմով

#### Ե Ր Կ Բ Ո Ր Պ ղ է մ ր

Ուղղ.	դուն	դուք
Սեռ.	քու	ձեր
Տրակ.	քեզ(ի)	ձեզ(ի)
Հայց.	քեզ	ձեզ
Բաց.	քեզմէ	ձեզմէ
Գործ.	քեզմով	ձեզմով

#### Ս Ե Ր Ո Ր Պ ղ է մ ր

Ուղղ.	ան, ինք(ը)	անոնք, իրենք
Սեռ.	անոր, իր	անոնց, իրենց
Տրակ.	անոր, իրեն	անոնց, իրենց
Հայց.	զայն, զինք(ը)	զանոնք, զիրենք
Բաց.	անորմէ, անկէ, իրմէ	անոնցմէ, իրենցմէ
Գործ.	անով, իրմով	անոնցմով, իրենցմով

Անձնական դերանուններուն սեռականը, որ ունի ինքնուրոյն դարձածութիւն, յայտնի է ստացական դերանուն անունով: Այդ դերանուններն են՝ իմ (մեր), բու (ձեր), անոր (անոց), իր (իրեց):

Այս դերանունները կը դրուին գոյականէն առաջ և ցոյց կու տան, թէ գոյականով արտայայտուած առարկան որո՞ւն կը պատկանի: Այս պարագային գոյականին վրայ կը դրուի յօդ. իմ գերանւան ատեն՝ **ու**, բու գերանուան ատեն՝ **օ**, իր գերանուան ատեն՝ **ը**: կամ **ն**

Օրինակ՝ իմ գիրքս, բու գիրքդ, իր գիրքը: Իմ ուղիս, բու ուղիդ, իր ուղին: Իմ գրասեղանս միշտ մաքուր կը պահեմ: Քու օրագիրդ քուզ է:

Այս սեռականները ոչ միայն գոյականներու վրայ կրնան դրուիլ, այլև գոյականի խմաստ առնելով՝ կրնան դորձածուիլ գոյականաբար: Այդ պարագային անոնք յօդ կը ստանան: Այսպէս՝ իմս (կամ իմինս), բուկդ (կամ բուկինդ), անորը (կամ անորինը), իրը (կամ իրենը), մերը (կամ մերինը), ձերը (կամ ձերինը), անոցը (կամ անոցինը), իրեցը (կամ իրեցինը):

Ասոնք կը կատարեն գոյականի դեր, ունին յոգնակիի ձևեր և կը հորովուին:

Ասոնց յոգնակիներն են՝ իմիններս, բուկիններդ, իրենները, մերինները, ձերինները, իրեցինները:

Օրինակ՝ Երկուքս ալ նոր գներ ենք մեր գիրքերը, բայց իմիններս մաքուր են, բուկիններդ՝ աղտոտ:

### Ստացական դերանուններու հորովումը

	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
Ուղղ.	իմս (իմինս)	իմիններս
Սեռ.	իմինիս	իմիններուս
Տրակ.	իմինիս	իմիններուս
Հայց.	իմս (իմինս)	իմիններս
Իճայ.	իմինէս	իմիններէս
Գործ.	իմինսւս	իմիններովս

Այսպէս կը հորովուին նաև միւս ստացականները.

Քուկդ (կամ քուկինդ), քուկինիդ, քուկինէդ, քուկինովդ.

Անորը (կամ անորինը), անորինին, անորինէն, անորինովը.

Իրը (կամ իրենը), իրենին, իրենէն, իրենովը.

Մերը (կամ մերինը), մերինին, մերինէն, մերինովը.

Ձերը (կամ ձերինը), ձերինին, ձերինէն, ձերինովը.

Անոնցը (կամ անոնցինը), անոնցինին, անոնցինէն, անոնցինովը.

Իրենցը (կամ իրենցինը), իրենցինին, իրենցինէն, իրենցինովը.

Քուկիններդ, բուկիններուդ, բուկիններէդ, բուկիններովդ.

Մերինները, մերիններուն, մերիններէն, մերիններովը.

Նոյն ձեռով կը հոլովուին նաեւ միւս յոգնակիները:

**Վարժութիւն 1.** Գտէ՛ք անձնական գերանունները, որոշեցէ՛ք անոնց գէմբը, թիւը, հոլովը.

Աղուէս մը սապէս կը դանդաղէր. «Միայն վառեակ մըն էր իմ դողցածս, կ'ըսէր անիկա. ես ի դորձ դրի խոհեմութեան պահանջած բոլոր զգուշութիւնները, բայց դարձեալ յայտնուեցայ եւ ամէն ոք զիս կը մեղադրէ. շեմ դիտեր ինչպէս ընելու է ասկէ յետոյ»:

— «Ատրէ՛ դիւրին բան շիայ, պատասխանեց իրեն շնիկ մը, եթէ դուն կ'ուզես որ մարդիկ շիմանան քու դէշ արարքդ և քեզ շմեղադրեն, բնաւ գէշութիւն մի՛ գործեր»:

**Վարժութիւն 2.** Կազմեցէ՛ք նախադասութիւններ և անոնց մէջ գործածեցէ՛ք անձնական գերանունների այն բոլոր հոլովներով, որոնք գործածուած չեն նախորդ վարժութեան մէջ:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ նախադասութեանց մէջ գործածած անձնական գերանուններուն եղակին դարձուցէ՛ք յոգնակի, յոգնակին՝ եզակի. որոշեցէ՛ք անոնց հոլովը և գէմբը.

Ես կը սորվիմ, դուն կ'աշխատիս: Մենք տեսանք զքեզ հեռուէն: Իրենց դիրքը իմ քովս է: Ինք մեղմէ դո՛ւ է: Քեզմէ՛ յետոյ եկաւ քու ընկերդ և խօսեցաւ անոր մասին: Ան քեզմէ՛ ու ինձմէ՛ նամակ չէ ստացեր:

**Վարժութիւն 4.** Նախորդ վարժութեան անձնական գերանուններուն գէմբերը փոխել՝ գործածելով նախադասութեանց մէջ. առաջին գէմբը դարձնել երկրորդ, երկրորդը՝ երրորդ, երրորդը՝ առաջին:

Օրինակ՝ Դուն կը սորվիս, սոն կ'աշխատի:

**Վարժութիւն 5.** Որոշեցէ՛ք հետեւեալ ստացականներուն թիւր և եզակին դարձուցէ՛ք յոգնակի, յոգնակին՝ եզակի.

Քուկինիդ, իմինս, մերինէն, իրենը, իմինիս, ձերիններէն, իրենցինին, քուկդ, ձերինին, մերինները, իմինէս, իմիններուս, իմինուս:

**Վարժութիւն 6.** Գտէ՛ք անձնական դերանունները հետեւեալ հատուածին մէջէն. որոշեցէ՛ք անոնց դէմքը, թիւը, հոլովը.

— Ես այդ մարդուն պարտական մնալ շնմ ուզեր,— վճռեց Բարսեղ էֆէնտի...

— Ես ալ այդ կարծիքէն եմ,— ըսաւ Մարտիկ էֆէնտի:

— Վաղն իսկ դրամը կը տանիմ, կը յանձնեմ իրեն:

— Դո՞ւն պիտի տանիս,— դռնից Արամ:

— Այո՛, պէտք է որ ես ձեռքովս տամ:

— Ինչո՞ւ համար...

— Որովհետեւ այս առթիւ իրեն խօսելիք ունիմ,— պատասխանեց վաճառականը, իրեն հազար ոսկի դրամ վճարելէս ետքը կարծեմ իրաւունք ունիմ քանի մը խօսք ըսելու...

— Հա՛յր, այդ դրամական խնդիրը Թորոսս պէ՛յ յնժի հետ կարգադրած է, հետևաբար պէտք է որ ես յանձնեմ,— ըսաւ երիտասարդը համեստ ձայնով մը:

— Դուն կամ ես, միեւնոյն բանն է:

— Չէ, զնդհակառակն, շատ տարբեր է:

— Դուն շեւ կրնար ինժի շափ հեղինակութեամբ խօսիլ,— ըսաւ Բարսեղ էֆէնտի:

— Ես կ'ուզեմ որ հինգ հարիւր ոսկին իմ ձեռքովս տրուի:

(Ն. Օտեւան)

**Վարժութիւն 7.** Կաղմեցէ՛ք նախորդ հատուածին մէջ եղած անձնական դերանուններուն ստացականը և դործածեցէ՛ք նախադասութեանց մէջ՝ տարբեր հոլովներով:

## 70. ՅՈՒՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Յուցական դերանունները կը ցուցնեն խօսողին կամ խօսակիցին մօտը կամ անոնցմէ հեռու գտնուող առարկաներ, յատկանիշներ:

Յուցական դերանուններն են՝ այս, այդ, այն. առ, ատ, ան. սա, դա, նա. ոսիկա, առիկա, անիկա. այսպիսի, այդպիսի, այնպիսի. այսքան, այդքան, այնքան. այստեղ, այդտեղ, այնտեղ. այսպէս, այդպէս, այնպէս. հոս, հոդ, հոն. սոյն, դոյն (սակաւ դործածական), նոյն և այլն:

Ինչպէս կ'երևի, այս դերանունները կը կազմեն 3 շարք՝ ա արմատ ունեցող, դ (կամ ա) արմատ ունեցող և ն արմատ ունեցող դերանուններ:

Առաջին դէմքին մօտը գտնուող բան մը կը ցուցնեն **ա** արմատական հնչիւնով դերանունները՝ աս, սա, ասիկա, այս, սոյն, այսպիսի, սյսման, սյսչսփ, այստեղ, այսպէս, հոս:

Երկրորդ դէմքին մօտը գտնուող բան մը կը ցուցնեն **դ** (կամ ա) արմատական հնչիւնով դերանունները՝ ատ, դա, ատիկա, սյդ, դոյն, այդպիսի, այդքան, այդչափ, այդտեղ, այդպէս, հոդ:

Յրորդ դէմքին մօտը գտնուող բան մը կը ցուցնեն **ն** արմատական հնչիւնով դերանունները՝ ան, նա, անիկա, այն, նոյն, այնպիսի, այնքան, այնչափ, այնտեղ, այնպէս, հոն:

**Օրինակ՝** Այս (խօսողին մօտը գտնուող) դիրքը և այդ (խօսակիցին մօտը գտնուող) դիրքը կարգացեր եմ, իսկ այն (խօսողէն և խօսակիցէն հետո գտնուող) դիրքը՝ ո՛չ:

Երրորդ շարքի դերանուններուն կը յարին հետեւեալ ցուցականները՝ միւսնոյն, նոյնչափ, նոյնպէս, նոյնպիսի, միւս:

Յուցական դերանուններուն մէկ մասը իր կամ անձ կը ցուցնէ և կը դործածուի դոյականի սէս: Այդ դերանուններն են՝ աս, ատ, ան, ասիկա, ատիկա, անիկա:

**Օրինակ՝**

Պէտք է ասիկա տպուի ձեր թերթին մէջ:

Ատիկա շեմ տեսեր: Ատոր թերթերը փրցուած են:

Յուցական դերանուններուն մեծ մասը կը դրուի դոյականներու վրայ և ունի ածականական կիրարկութիւն:

Անոնցմէ են՝ այսպիսի, սյդպիսի, այնպիսի, նոյնպիսի, սա, դա, նա. այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ. այսքան, այդքան, այնքան, նոյնքան և այլն: Ինչպէս՝ այսպիսի բողոք, սյդպիսի ընկեր, այսչափ մարդիկ, նոյնքան դիրքեր, այսման ժամանակ և այլն:

**Մ ա ն օ ր ու ր ի Վ Ե .** Այս դերանուններէն մէկ բանին կրնան դրուիլ ետեւ բայերու վրայ: Այս, այդ, այն ցուցականները կը դրուին թէ՛ դոյականներու վրայ և թէ՛ կը դործածուին անկախարար (տե՛ս § 68):

Կան ցուցական դերանուններ, որոնք կը դրուին բայերու վրայ և սովորաբար կը կատարեն պարագայի գեր. ինչպէս՝ այսպէս, այդպէս, այնպէս, նոյնպէս. այստեղ, այդտեղ, այնտեղ. հոս, հոդ, հոն:

**Օրինակ՝**

Արդեօք պատմող մը ունի՞ այսպէս վարուելու:

կամ՝ այնպէս պատմել, այդպէս սորվիլ, այստեղ մնալ, այնտեղ ըլլալ և այլն:

Յուցական դերանուններուն մեծ մասը կը հոլովուի Անոնցմէ մէկ բանին կը հոլովուին գոյականներէն տարրեր կերպ.

	Ն զ ա կ ի	Յ ո դ ն ա կ ի
Ուղղ.	այս, աս, ասի, ասիկա	ասոնք
Սեռ.	ասոր	ասոնց
Տրակ.	ասոր	ասոնց
Հայց.	այս, աս, ասի, ասիկա	ասոնք
Բաց.	ասկէ	ասոնցմէ
Գործ.	ասով	ասոնցմով

Միւս ցուցականները կը հոլովուին ասոնց նման:

Այդ, ատ, ատի, ատիկա. ատոր, ատկէ, ատով.

Ատոնք, ատոնց, ատոնցմէ, ատոնցմով.

Այն, ան, անի, անիկա. անոր, անկէ, անով.

Անոնք, անոնց, անոնցմէ, անոնցմով:

Նոյն դերանունը կը հոլովուի այսպէս՝ նոյնը, նոյնին, նոյնէն, նոյնով:

Յատկանիշ ցուցնող ցուցականները (ածական ցուցական) երբ գոյականներու վրայ կը դրուին՝ շին հոլովուիր: Ինչպէս՝ այս ծառը, այս ծառին, այս ծառէն, այս ծառով. այս ծառերը, այս ծառերուն, այս ծառերէն, այս ծառերով:

Այսպէս, այդպէս, այնպէս, նոյնպէս, հոս, հող, հոն դերանունները, որոնք դործողութեան յատկանիշ կը ցուցնեն, շին հոլովուիր:

**Վարժութիւն 1.** Գտնել դերանունները և որոշել տեսակները, թիւը, հոլովը, դէմքը.

— Ո՞վ պարտք ունի անոր:

— Գուն ունիս, և եթէ ան չբռէր ինձի, թէ բեղմէ առնելիքն այս իրիկուն պիտի առնէր և ինձի պիտի տար, ևս չէի տպեր այդ տոմսակներն և ներկայացուման ազդերը: Երկու ժամ է որ վարը դրան առջև կը սպասեմ, որ իջնայ և պարտքը տայ, և դուն հոս կը խաղցունես խեղճը:

— Աս ի՞նչ է, ևս անոր պարտք ունեմ... ամենեւին...

(Յ. Պարոնեան)



**Վարժութիւն 2.** Նախադասութիւններ կաղմեցէ՛ք՝ գործածելով հետևեալ դերանունները՝ ատ, ատիկա, սոյն, սսիկա, անիկա, այս, այն, ան, աս, այսպիսի, այդպէս:

**71. ՓՈՒՍՄԱՐՁ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ**

Փոխադարձ դերանունները կը ցուցնեն գործողութեամբ կամ դրութեամբ իրարու հետ կապուած առարկաներ:

Այդ դերանուններն են՝ զիրար, մէկզմէկ, միմեանց:

Փոխադարձ դերանուններէն՝ զիրար, մէկզմէկ բառերը շունին յոգնակի թիւ եւ եղակի ձևով կը ցուցնեն մէկէ աւելի առարկաներ (մեծ մասամբ անձ):

Օրինակ՝

Սիրեցէ՛ք մէկզմէկ:

Յնոնք կ'օգնեն իրարու:

Անոնք գոհ են իրարմէ:

Փոխադարձ դերանունները շունին ուղղական հոլով:

Կը հոլովուին այսպէս.

Սեռ.	իրարու	մէկմէկու (մէկզմէկու)
Տրակ.	իրարու	մէկմէկու (մէկզմէկու)
Հայց.	զիրար	մէկզմէկ
Բաց.	իրարմէ	մէկմէկէ (մէկզմէկէ)
Դործ.	իրարմով	մէկմէկով (մէկզմէկով)

**Վարժութիւն 3.** Ձիրար դերանուան բոլոր հոլովները գործածել նախադասութեանց մէջ:

**72. ՀԱՐՑԱԿԱՆ-ՑԱՐԱՐՆԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ**

Հարցական-յարարերական դերանուններն են՝ ո՞ր, ով, ինչ, ուր, որչափ, ինչքան, քանի, ինչպիսի, ինչպէս:

Այս դերանուններն ունին երկու հիմնական կիրարկութիւն.

**Ա.** Կը գործածուին հարցական նախադասութեանց մէջ. անոնցմով հարցում կ'ուղղուի առարկայի մը կամ յատկանիշի մը մասին:

Օրինակ՝

— Ո՞վ եկաւ:— Արամը եկաւ:

— Ո՞ւր կ'երթաս:— Քաղաք կ'երթամ:

— Ո՞րմէ՞ գոհ ես:— Աշոտէն գոհ եմ:

Ի՞նչ ըսին սահմանադրութենէն ի վեր եկող դացող ներքին գործերու նախարարները. ի՞նչ ըրին, ո՞ւր կողմ գործ մը տեսան,

ո՞ր ցաւին դարձան տարին, ո՞ր արցունքը սրբեցին, որո՞ւն հաց տուին:

Ք. Կը դորձածուին բարդ նախադասութեանց մէջ. կը դրուին իրենցմէ առաջ դորձածուած անուան, դերանուան փոխարէն և այդպէսով յաջորդ նախադասութիւնը կը կապեն, յը յարաբերեն նախորդին հետ: Այդ պատճառով ալ անոնք այս պարագային կը կոչուին յարաբերական դերանուն և հարցական առողանութեամբ շին արտասանուիր, կը դրուին առանց հարցական նշանի:

Օրինակ՝

Ասիկա այն դիրքն է, զոր դուն նուիրած ես ինծի:

Ես կը կատարեմ այն, ինչ որ կը յանձնարարէ իմ ուսուցիչս:

Եւ եղաւ այնպէս, ինչպէս տնօրինուած էր քնտանեկան խորհրդակցական ժողովին մէջ:

Հարցական-յարաբերական դերանունները կը հոլովուին այսպէս.

		Ու		Ինչ	
		Եղակի	Յոգնակի	Եղակի	Յոգնակի
Ուղղ.	որ(ը)		որոնք	ինչ(ը)	ինչեր(ը)
Սևո.	որու(ն)		որոնց	ինչի(ն), ինչու(ն)	ինչերու(ն)
Տրակ.	որով(ն)		որոնց	ինչի(ն), ինչու(ն)	ինչերով(ն)
Հայց.	դոր, որը		որոնք (դորս)	ինչ(ը)	ինչեր(ը)
Բաց.	որմէ		որոնցմէ	ինչէ(ն)	ինչերէ(ն)
Գործ.	որով, որմով		որոնցմով	ինչով(ը)	ինչերով(ը)

Ով դերանունը և անոր յոգնակին՝ ով՛ներ-ը, շին հոլովուիր: Անհրաժեշտութեան պարագային անոնց հոլովներուն փոխարէն կը դորձածուին աւ դերանուան հոլովները:

Առարկայի կամ դործողութեան յատկանիշ ցուցնող հարցական-յարաբերական դերանունները (որքան, քանի, ինչքան, ինչչափ, ինչպիսի) կը հոլովուին դոյականաբար դորձածուելու պարագային և կ'ենթարկուին ի հոլովման:

Ուղղ.	որքանը	քանին
Սևո.	որքանի(ն)	քանիի(ն)
Տրակ.	որքանի(ն)	քանիի(ն)
Հայց.	որքանը	քանին
Բաց.	որքանէ(ն)	քանիէ(ն)
Գործ.	որքանով	քանիով

**Վարժութիւն 1.** Գտէ՛ք հարցական-յարարերական դերանունները և բացատրեցէ՛ք անոնց դերը նախադասութեան մէջ:

**Ա.**— Ուրեմն թողէք որ երթայ:

— Ո՛ւր... այն փլատակներուն մէ՛ջ, ուր շատ հեծեցի, այն նախնի դիւցազանց շիրիմներուն քո՛ւլ, որոնք շատ թրջեցի... շատ կը սխալիք, այն զոր մուրացկան և խենթ կը կարծէք և վրան կը խնդար, երբեմն թաղի մը տակ լացած վէ հայուն ու Հայաստանի վրայ:

(Պ. Գուրեան)

**Բ.** Բանանք մէջ մը, աչքերնուս առջեւէն անցընենք հին և նոր պատմութեանց զրքերը, որոնք մարդկային դորձոց յիշատակարաններն են. ո՞ւլ են անոնք, որ դիւցազն՝ քաջ ու արդար անւամբ կը գովուին ու մեր առջեւը դրուած են իրր ընաիր օրինակներ առաքինութեանց, և որոնց վարքը միմիայն ճամբայ է անմահութեան հասնելու: Ո՞ւլ են անոնք, որոնց փառաւոր անունը ինչւան հիմա ամենուն բերանն է... Հայրենասէրներն են:

(Մ. Պէշիկպաշլեան)

**Վարժութիւն 2.** Թուր հարցական-յարարերական դերանունները դորձածեցէ՛ք նախադասութեանց մէջ հարցականի և յարարերականի դերով:

### 73. ԱՆՈՐՈՇ ԿԱՄ ՄՍ.ՈՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ես այս երեկոյ կու դայի քեզ տեսնելու, բայց ճամբան մէկը հանդիպեցաւ ու խնդրեց, որ երթանք ուրիշի մը մօտ:

Ես, այս, քեզ դերանունները որոշակիօրէն կը ցուցնեն թէ որու (ո՞ր անձի), ինչի (ո՞ր երեկոյի) մասին է խօսքը: Իսկ մէկը, ուրիշը դերանունները որոշակի կերպով շին ցուցներ թէ որ անձի մասին է խօսքը. անոնք մասնական իմաստ կ'արտայայտեն, բայց անորոշ կերպով և կը կոչուին անորոշ կամ մասնական դերանուններ:

Անորոշ դերանունները առարկայի կամ յատկանիշի մասնական իմաստ կ'արտայայտեն անորոշ կերպով:

Անորոշ դերանուններն են՝ մէկը, ուրիշ(ը), այսիկ(ը), այն-իկ(ը), ոմն, ոմանկ, Բանի մը (մէկ Բանի), որեւէ, որեւիցէ և այլն:

Անորոշ դերանուններէն միայն անկախարար (զոյականի դերով) կը դորձածուին մէկը և ոմանկ (յոգնակին):

Օրինակ՝ Երէկ քու մասիդ մէկը կը հարցնէր:

Ոմանք ուրիշ կարծիք ունին այդ մասին:

Որեւէ, որեւիցէ գերանունները միայն գոյականներու հետ կը գործածուին: Ինչպէս՝ որեւէ գիրք, որեւիցէ աշակերտ:

Միւս գերանունները կը գործածուին թէ՛ անկախ (գոյականաբար), թէ՛ գոյականներու հետ:

Ուրիշ, այսինչ, այնինչ գերանունները գոյականի վրայ կը դրուին. ուրիշ քաղաք, այսինչ մարդը, այնինչ մարդուն:

Գոյականաբար գործածուելու պարագային այս գերանունները յօդ կը ստանան՝ ուրիշը, այսինչը, այնինչը:

Օրինակ՝

Ինծի ուրիշը ըսաւ:

Քանի մը գերանունը կը դրուի գոյականի վրայ, իսկ մէկ քանին կը գործածուի գոյականաբար:

Օրինակ՝

Քանի մը տղաք կը խաղան բակը:

Տղոցմէ մէկ քանին դացին տուն:

Ոմն գերանունը գոյականաբար կը գործածուի առանց յօդ ըստանալու և շի հոլովուի:

Օրինակ՝

Մի ոմն քեզ կը հարցնէր:

Անորոշ գերանուններուն մեծ մասը կը հոլովուի.

Ուղղ.	մէկը	ումանք
Սեռ.	մէկուն	ումանց
Տր.	մէկուն	ումանց
Հայց.	մէկը	ումանք
Բաց.	մէկէն	ումանցմէ
Գործ.	մէկով	ումանցմով

Միւս անորոշ գերանունները կը հոլովուին ի հոլովման պատկանող գոյականներուն նման:

Օրինակ՝

Ուղղ.	ուրիշը	ուրիշները
Սեռ.	ուրիշի(ն)	ուրիշներու(ն):
Տր.	ուրիշի(ն)	ուրիշներու(ն):
Հայց.	ուրիշը	ուրիշները
Բաց.	ուրիշէ(ն)	ուրիշներէ(ն):
Գործ.	ուրիշով	ուրիշներով

**Վարժութիւն 1.** Թսլոր անորոշ դերանունները դորձածեցէ՛ք նարիադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Գտէ՛ք դերանունները, որոշեցէ՛ք անոնց տեսակը.

Մայրդ կը գրէ որ ձեր ճամբորդութիւնը և օգափոխութիւնը մեծապէս օգտակար եղած են և մէկ քանի շաբթուան մէջ զըր-  
զըրուած ջիւղերդ հանդարտեր են... Հիմա մօրդ դրածին համեմատ,  
ինքզինքդ դատած ես, կրնամ լրջօրէն խօսիլ կարգ մը խնդիրներու  
մասին, որոնք սլատճառ սուրին քու հանգիստդ խոտլելու...

Բայց որո՞ւ մտքէն կ'անցնէր որ այդ ստորին արարածը օր  
մը պիտի ելլար Պոլիս դար ու այսպէս համարձակէր դայթակղու-  
թիւն հանելու: Իրաւ է որ ես առաջուց իմացեր էի այդ խնդիրը,  
բայց մեծ կարեւորութիւն մը չէի տուեր: Մարտիկ էֆէնտին  
նիւթական այնպիսի դիրք մը ունէր, որ այդ տեսակ շնչին բա-  
ներու համար խնդիր յարուցել չէր արժեր: Գրամը, սիրելի աղ-  
ջիկս, այդ տեսակ արատները կը սրբէ, կը մաքրէ, միայն թէ մենք  
ալ մեր կողմէ պէտք էր որ խելացութեամբ վարուէինք և ոչ թէ  
պէ՛յի պէս կրակի վրայ իւղ լեցնենք:

Տե՛ս, քու մեկնեւէդ ետքը մենք ինչպէս խնդիրը մարեցինք  
և կը յուսամ որ քանի մը օրէն ա՛լ վերջնականապէս կը կարգա-  
դրենք:

(Ս. Օսեան)

#### 74. ՈՐՈՇԵԱԼ ԿԱՄ ՀԱՆՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Որոշեալ կամ հանրական դերանուններն են՝ ամէկ(ը), ամէկ(ը),  
բոլոր(ը), իւրաքանչիւր(ը), ամէն մէկ(ը), իւրաքանչիւր ոք, ամէն  
ու՛, ամէն ինչ(ը), ամբողջ(ը):

Ասոնք իմաստով հակադիր են անորոշ կամ մասնական դե-  
քանուններուն: Անորոշները շատերէն մէկը կամ շատերուն մէկ մա-  
սը կը ցուցնեն անորոշ կերպով, իսկ որոշեալ կամ հանրական  
դերանունները կը ցուցնեն առարկաներու ամբողջութիւնը, բոլոր  
առարկաները. անոնք ունին հանրական իմաստ և այդչափով  
միայն որոշեալ են:

Հ ա մ ե ն մ ա տ է՛.

Գիրքերէդ մէկը բեր: Բոլոր գիրքերդ բեր:

Ուման՛ այդ կարծիքին են: Ամէնքն այդ կարծիքին են:

Ուրի՞ջ օր մը կ'երթանք: Ամէն օր կ'երթանք:

Որոշեալ ամէնք, ամէն ոք, իւրաքանչիւր ոք դերանունները  
դոյականներու վրայ շնն դրուիր, կը դորձածուին անկախաբար:

Ամէնքն ալ իրենց հաշիւը մաքրած են իրենց խիղճին հետ:  
Ամէն ոք դուրսն է:

Միւս որոշեալները կը դրուին գոյականներու վրայ, բայց կըր-  
նան նաեւ գործածուիլ գոյականաբար:

Օրինակ՝

Թղթատարական բոլոր ստորագաս պաշտօնեաները տեղացի են:

Ամէն բան լաւ կ'ընթանայ:

Ամենուն ալ նոյն պատասխանը տուաւ:

Ամէն ոք, իւրաքանչիւր ոք դերանուններէն բացի մնացեալ-  
ները կը հոլովուին:

Ուղղ.	ամէնը	ամէնքը
Սեռ.	ամենուն	ամենքին
Տրակ.	ամենուն	ամենքին
Հայց.	ամէնը	ամէնքը
Բաց.	ամենէն	ամենքէն
Գործ.	ամենով	ամենքով

Հանրական դերանուններէն են ոչ ոք, ոչինչ, ոչ մէկը, որոնք  
ամէն ոք, ամէն ինչ, ամէն մէկը դերանուններուն ժխտականներն են:

Հ ա մ ե մ ա տ է'.

Ամէն ոք իմացաւ: Ոչ ոք իմացաւ:

Ամէն ինչ տեսաւ: Ոչինչ տեսաւ:

Ամէն մէկը պատրաստ է: Ոչ մէկը պատրաստ է:

Ոչինչ և ոչ մէկը դերանունները կը հոլովուին այսպէս.

Ուղղ.	ոչինչը	ոչ մէկը
Սեռ.	ոչինչի	ոչ մէկուն
Տրակ.	ոչինչին	ոչ մէկուն
Հայց.	ոչինչը	ոչ մէկը
Բաց.	ոչինչէն	ոչ մէկէն
Գործ.	ոչինչով	ոչ մէկով

Արեւմտահայերէնի մէջ ժխտական բնոյթի որոշեալ դերանուն-  
ներուն հետ նախադասութեան ստորոգեալը կը դրուի հաստատա-  
կան ձեւով:

Օրինակ՝

«Ոչ ոք ըստ էնք տըղայ

Արդեօք ինչո՞ւ կը մըխայնա՞:

Ոչ ոք, ոչ ոք կը համարձակէր ամենաշնչին ակնարկով մը փոխադարձել զանոնք:

Արեւելահայերէնի մէջ ժխտական գերանուններու հետ ժխտական բնոյթի ստորոգեալ կը գործածուի:

Օրինակ՝

Ն: սիրտը մօր ասաւ տխուր,  
լացակումած.—  
Ե՛վայ խեղճ տղաս,  
Ոչ մի տեղի չըցաւ՝ցո:  
(Ա. Խամակեան)

Հին աշխարհը շեմ տեսել,  
Ո: ոչ մի բան չեմ յիշում,  
Ու չեմ նրան երազել  
Իմ յուշերի մշուշում:

(Յովն. Երեւոյ)

**Վարժութիւն 1.** Թուրր որոշեալ գերանունները գործածել նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Գտէ՛ք գերանունները, որոշեցէ՛ք անոնց տեսակը, թիւը, հոլովը, դէմքը (եթէ ունին).

— Արդարեւ մեր պարտքն էր երէկ գալ և ձեր գալուստը շնորհատրել, բայց ուշ իմացանք ձեր դաշն, ասոր համար յատկապէս ձեր ներողութիւնը կը խնդրենք, — ըսաւ Երիտասարդն ձեռներն իրարու շփելով:

— Այսօր գալով պակասութիւն մ'ըրած չէք ըլլար, որ ներողութիւն խնդրէք:

— Ձեր քաղաքավարութիւնն է, որ այնպէս խօսիլ կու տայ ձեզի, բայց մենք մեր պակասութիւնը միշտ կը ճանչնանք: Արդարեւ մեծ պակասութիւն մ'է մեր ըրածը, ձեզի սրէս երեւելի մարդ մը մայրաքաղաքս գայ, և պատկերահան մը անմիջապէս բարի եկարի շերթայ, պակասութիւններու պակասութիւնն է, որ և ոչ մէկ կերպով մը կրնայ պակասութիւն ըլլալէ դադրիլ:

— Ամեննեին պակասութիւն մը չէ, եթէ բնաւ չգայիր, դարձեալ պակասութիւն մը չէր համարուիր ինձի համար:

— Շատ վեհանձն էք... Թող այնպէս ըլլայ, ասոր համար հիմա վիճաբանութեան մտնելու հարկ չեմ տեսներ. միայն ինքզինքս ձեր տրամադրութեան տակ կը դնեմ և ձեր հրամաններուն կը սպասեմ:

(Յ. Պարոնեան)

Քաղաքավարութիւնը փափուկ զգացման մը և հանրային բարեսիրութեան մը արտայայտութիւնն է, որ մեր առաքինութեանց յարգը կ'անւելցնէ, այնպիսի կերպ մը տալով մեր գործերուն ու խօսքերուն, սր ոչ որ կը վիրատորուի իր զգացմանց և իմացականութեան մէջ: Քաղաքավարութիւնը հաճելի կ'ընէ ընկերական կեանքը, իրր արուեստ մը որ կը համաձայնեցնէ ինչ որ կը պարտինք մեր անձին: Իր արդեցութիւնը այնքան մեծ էր իրր կապ ընկերութեան, որ երեւելի փիլիսոփաներ անարժան շհամարեցին իրենց՝ անով զբաղելու Ասոնք կը հաստատեն թէ, առանց քաղաքավարութեան, մարդիկ միայն կոռուելու համար պիտի հասարուէին...

Քաղաքավարութիւնը այն է բարութեան համար, ինչ որ է շնորհքը դէմքին համար:

(Ն. Ռուսիեան)

## 75. Յ 0 Գ

**Ս, Գ, Ն (ը)** մասնիկները, որոնք գրուելով բառերու ձրայ, կը մասնատրեն անոնց իմաստը, յօդ կը կոչուին:

Օրինակ՝ գիրք բառով կ'անուանենք այդ առարկան ընդհանրապէս:

Ինչսրէս՝ Ան գիրք շատ կը սիրէ:

Իսկ գիրք բառին վրայ գրուելով **ս, Գ** յօդերը՝ կը ցուցնեն թէ այդ գիրքը կը պատկանի խօսողին (գիրքս) կամ խօսակիցին (գիրքդ):

Յօդերը սարբեր նշանակութեամբ կը գործածուին և կ'ըլլան՝ ստացական, դիմորոշ, ցուցական և որոշիչ:

**Ս., Գ** յօդերը կը ցուցնեն ստացականութիւն կամ պատկանելութիւն և կը կոչուին ստացական:

Այսպէս՝ սեղանս, սեղանդ, գրիչս, գրիչդ բառերուն մէջ **Ս, Գ** յօդերը կը նշանակեն իմ, քու:

Սիրելի զաւակս՝ Միհրանիկ,

Նամակդ մեծ ուրախութիւն պատճառեց մամնուս: Դպրոցական յաջողութիւններդ դովեստի արժանի են: Ինքդինքդ ծանր ծախէ, ահա իմ հայրական խրատս:

Նախ քու դիտատրութիւնդ պէտք է դիտնամ որոշապէս:

Իրեւութեանցիկ մէջ ստացուած յօդը և ստացական գերածուծը միաժամանակ շեն գործածուիր, ի տարբերութիւն արեւտահայերէնի:



Արեւելահայերէնով կ'ըսուի՝ դիտաւորութիւնդ կամ քա դիտաւորութիւնը, խրատս կամ իմ խրատը և ոչ թէ՛ քա դիտաւորութիւնդ, իմ խրատս և այլն:

Ստացական յօդերն ունին եղակիի իմաստ և դրուելով եղակի ու յօդնակի բառերու վրայ՝ կը ցուցնեն մէկ մարդու պատկանող մէկ կամ շատ առարկաներ: Ինչպէ՛ս՝ մատիտս—իմ մատիտս, ժամացոյցս—իմ ժամացոյցս, մատիտներս—իմ մատիտներս, ժամացոյցներս—իմ ժամացոյցներս, դիրքս—իմ դիրքս, դիրքերս—իմ դիրքերս:

Հայերէնն ունի նաեւ յօդնակի ստացական իմաստ արտայայտող մասնիկներ, որոնք հետեւեալներն են՝ նիս, նիդ, նին: Աստեղ կը ցուցնեն, թէ առարկայ մը կամ առարկաները ոչ թէ մէկու մը, այլ շատերուն կը պատկանին, այսինքն՝ ունին ստացական գերանուններու յօդնակի թիւի իմաստ (մեր, ձեր, իրենց) և կը դըրւին թէ՛ եղակի, թէ՛ յօդնակի գոյականներու վրայ:

Գիրքերնիս—մեր գիրքերը, գիրքերնիդ—ձեր գիրքերը, գիրքերնին—իրենց գիրքերը:

Տուններնիս—մեր տունները, տուններնիդ—ձեր տունները, տուններնին—իրենց տունները:

Գաւաթնիս—մեր գաւաթը, գաւաթնիդ—ձեր գաւաթը, գաւաթնին—իրենց գաւաթը:

Գիրքերնիս, տուններնիս և այլն, կրնան նշանակել նաեւ մեր տունը, մեր գիրքը և այլն (երբ շատերն ունին մէկ տուն, մէկ գիրք):

Այս մասնիկները մեծ մասամբ կը դրուին գոյականներու, երբևի՛ն նաեւ այլ խօսքի մասերու վրայ:

Օրինակ՝

Գործերնիս վերջացուցինք:

Գիրքերնիդ մաքուր պահեցէք:

Պատիկ բան մը տուաւ ամէն մէկներնու:

Յօդնակի ստացական մասնիկ ունեցող բառերը կը հոլովուին այսպէս.

	ն զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
Ուզդ. Հացդ.	գրիչնիս	գրիչներնիս
Սեւ. Տրակ.	գրիչնուս	գրիչներնուս
Բաց.	գրիչնէս	գրիչներնէս
Գործ.	գրիչովնիս	գրիչներովնիս

Յոգնակի ստացական մասնիկները գրական հայերէնի համար շատ հարադատ շեն: Աւելի յարմար է անոնց իմաստը ստացական գերանուններով արտայայտել. մեր գրիչները, մեր գիրքները և այլն:

**Բ. Ս, Գ** յօդերը կը ցուցնեն նաև դէմք և կը կոչուին զիմօ-  
րոշ: Դիմորոշ յօդին հետ սովորաբար կը գործածուի նոյն դէմքի  
անձնական գերանունը:

*Օրինակ՝*

Մենք՝ աշակերտներն, շատ բան կը պարտինք ձեզի՝ ուսուցիչ-  
ներուդ:

*Դուք ամէնքդ ուրախացաք:*

**Գ. Ս** յօդը կը գործածուի նոյնպէս ցուցականի իմաստով և  
կը կոչուի ցուցական յօդ:

*Օրինակ՝*

Վերջերս տօնուեցաւ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամ-  
ևակը:

Ամսոյս վերջը աշակերտները կը մեկնին Սեւան:

**Դ. Ն** կամ **Ը** յօդերը կը կոչուին որոշիչ յօդ, երբ գրուելով  
այս կամ այն գոյականին վրայ՝ կը ցուցնեն յայտնի, ծանօթ  
առարկայ մը (այդ գիրքը շատ հետաքրքրական է), կամ կը ցուց-  
նեն տուեալ տեսակի առարկան, իբրև յայտնի, որոշ (գիրքը կը  
դարգացնէ մարդը):

**Ն և Ը** յօդերը միեւնոյն նշանակութիւնն ունին: Անոնք կը  
տարբերին միայն իրենց գործածութեան տեղով. **Ն**-ն կը գրուի  
ձայնաւորէն յետոյ, **Ը**-ն՝ բաղաձայնէն յետոյ:

*Օրինակ՝ քամիՆ, բաղէՆ, տառՆ, ԱրաՆ. բայց՝ հայրենիքը,  
մարդը, քաղաքը, տետրը:*

**Ն** յօդը կրնայ գրուիլ նաև բաղաձայնով վերջացող բառերուն  
վրայ, երբ անոնց կը յաջորդեն՝

ա) Չայնաւորով սկսող բառեր, մասնաւորապէս օժանդակ  
բայ, ալ, ու շաղկապները, իսկ եղանակաւորող բառը, ուր, իրենց  
գերանունները և այլն:

*Օրինակ՝*

Անխներու հետքերովՆ ախօսուած փոշելից արահետը լեցուն  
է մարդերով ու անասուններով: Կովերը, լծուոր եղներն ու դո-  
մէշները դանդաղաբայլ նոյնպէս դէպի գեղը, դէպի դոմը շտ-  
կուած են:

Այս պատճառով ջերմեռանդութիւնն ալ օր ըստ օրէ պակսելու  
վրայ է:

բ) Սպ, ստ, սկ, սք, սթ, սփ, զբ, զգ, շկ, շտ, շփ հնչիւ-  
նական կապակցութիւններով սկսող բառեր:

Օրինակ՝

Աղշիկներն ստացան իրենց վիճակացոյցները:

Գասերն սկսան:

Հիւանդն սթափեցաւ:

Անասուններն սպանդանոց կը տանին:

Աշակերտներն զրօսանքի դացին և այլն:

Յօդը բառին որոշեալ իմաստ հաղորդելու համար աղատօրէն  
կը գրուի ուղղական ու հայցական հոլովներուն վրայ:

Օրինակ՝

Հայ դպրութիւնը դարերու պատմութիւն ունի:

Աշոտ ու Անահիտ վերցուցին գիրքերն ու տետրերը և ըս-  
կըսան սորվիլ իրենց դասերը, կատարել վարժութիւնները:

Երբ գոյականը կ'ունենայ միւս, նոյն, միեւնոյն, այսինչ,  
այնինչ և ցուցական իմաստ արտայայտող նման այլ բառեր, յօդ  
կը գրուի անոր բոլոր հոլովներուն վրայ: Միայն գործիական հոլովե-  
ն, որ այս պարագային կրնայ յօդ ստանալ կամ շտտանալ:

Օրինակ՝

Միւս դպրոցը, միւս դպրոցին, միւս դպրոցէն, միւս դպրո-  
ցով (կամ դպրոցովը), նոյն դասագիրքը, նոյն դասագիրքին, նոյն  
դասագիրքէն, նոյն դասագիրքով (կամ դասագիրքովը):

Երբ գոյականը որոշեալ առումով յատկացուցիչ ունենայ, յօդ  
կը գրուի այդ գոյականին բոլոր հոլովներուն վրայ:

Օրինակ՝ Գիւղացիին աշխատասիրութիւնը, գիւղացիին աշ-  
խատասիրութեանը, դիւղացիին աշխատասիրութեանէն, գիւղացիին  
աշխատասիրութեամբը: Աշակերտին գիրքը, աշակերտին գիրքին  
աշակերտին գիրքէն, աշակերտին գիրքովը:

Բացի յիշեալ յօդերէն, հայերէն լեզուն ունի նաև մը անորոշ  
յօդը:

Անորոշ յօդը կը գրուի անուան վրայ և անոր իմաստը կը  
մասնաւորէ անորոշ կերպով:

Օրինակ՝

Քսանհինդ տարեկանի մօտ միջահասակ պատանի մը դողդո-  
ջուն քայլերով ներս մտաւ և նամակ մը յանձնեց Աբիսողոմ աղային:

Եւ նախկին քայէն և ալ բառէն առաջ դիրահնչութեան հա-  
մար մը-ին վրայ կ'աւելնայ ն, և մը յօդը կը դառնայ մըն. իսկ

ձայնաւորով սկսող բառերէն առաջ յահախ ք-ն կը սղուի, և մ-ն կը գրուի յաջորդ բառին կից և անկէ կը բաժնուի ապաթարցով:

Օրինակ՝

Հայրենեաց սէրը սաստիկ բոց մըն է, որ կը բորբոքի ազգասէրին սրտին մէջը:

Գուր խօսեցէք քիչ մը, մենք Արիստոյում աղային հետ սլլտիկ դործ մ'ունինք:

Հարկ է սլլտիկ փոխառութիւն մ'ընել:

**Վարժութիւն 1.** Կաղմեցէ՛ք նախադասութիւններ և անոնց մէջ դործածեցէ՛ք անորոշ յօդը իր տարբեր ձևերով (մը, մըն, մ՛):

**Վարժութիւն 2.** Լրացուցէ՛ք բաց ձգուած յօդերը, բացատրեցէ՛ք անոնց տեսակն ու նշանակութիւնը.

Սովորութիւն... ունինք, որ եթէ մեքենա... մէկու... տուն... տանիլ հարկ ըլլայ, կանխիկ գումար... կ'առնենք ոչ թէ վստահութիւն շունենալնու... համար, այլ սովորութիւն... յարգելու համար:

**Վարժութիւն 3.** Լրացնել բաց ձգուած յօդերը և բացատրել, թէ ինչու անոնք անհրաժեշտ են.

Այս զաւակներ... իր բոլոր երջանկութիւն..., հիմա կը ճընշէին զինքը իրենց տասներկուրս, տասներհինգ տարու ազգիա... անմեղութեան ժպիտով..., որ յանդիմանութիւններով լեցուն կ'երևար իր հայրական աչքի...:

(Գ. Զօհրապ)

Լեզու... թարգման... է մտքի...: Անով մեր սէտքեր... կը յայտնենք, և ուրիշներու... հետ հաղորդակցութեան կը մտնենք. անով մարդիկ... կը յուզեն կամ կը հանդարտեցնեն, մերթ որոտընդոստ պերճախօսութեամբ անոնց եռանդ... արծարծելով, և մերթ մեղմ ու սրտազրաւ խօսքերով անոնց կիրքեր... մեղմացնելով:

(Ս. Տիսար)

**Վարժութիւն 4.** Հետեւեալ բանաստեղծութիւններուն մէջ ցո՛յց տուէք յօդերը, որոշեցէ՛ք անոնց տեսակները, բացատրեցէ՛ք նշանակութիւնները.

Կը գըրէ մայրս.— «Ո՛վ իմ որդեակըս սլանդուխտ,  
Դեռ մինչև ե՛րբ պիտ' անձանօթ լուսնի տակ  
Օրերդ անցնին, դեռ մինչև ե՛րբ հէդ զըլուխդ  
Ես շնորհմամ լանջքիս տաք:

Հերի՛ք օտար սանդուխներէ՛ ելլեն վեր  
Ոտքերդ՝ զոր օր մ'ափերուս մէջ տաքցուցի.  
Հերի՛ք ալ սիրտդ՝ ուր իմ ստինքս եմ սլարսեր,  
Գատարկ սըրտէս դուրս հիւծի:

Դըրանս առջեւ կը նըստիմ միշտ տըխրալիր,  
Կուր կ'ուզեմ վրագ ամէն կողմէ՛ որ կ'անցնի.  
Այն ճիւղն ուռի՛ զոր քու ձեռքով տնկեցիր  
Վըրաս կ'ընէ հովանի:

(Գ. Վարուժան)

### ՁՂՋԻԿԸ

Քու սուգըդ ո՞վ պիտի լայ, շղջիկ, զսողիւր ու մութ քոյր,  
Ահա իջնող մութին մէջ կը խարխափէ վաղքըդ կոյր.  
Ո՞ւր, շղջիկ քոյր, Ինչո՞ւ լուռ կը հեռանաս երգիկէս,  
Ո՞ր թարշամած վարդն յետին պիտի հաճի ժպտիլ քեզ...

Եւ ո՞ր սարեակը պահուած թաուտին մէջ հեշտարոյր,  
Քեզ դայլալուն իր հրաւէր պիտի կարգայ ի համբոյր...  
Դուն ի՞նչ ունիս, ո՞չ փետուր և ո՞չ ձայնիկ մ'որ երգես,  
Ո՞չ խսկ ըյս մը մտերիմ փոստուայի բոցին պէս:

Մերթ թիւերդ, որ հէդ կողքդ կը ծեծեն անընդհատ,  
Քընած կեանքը թունելու շարժումն ունին յուսահատ,  
Իւ միջոցին մէջ անէծք ցանկու տնդը անշէջ:

(Ռ. Սեւակ)

## Բ Ա Յ

### 76. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Բայր դործողութիւն և եղելութիւն ցուցնող խօսքի մաս է:  
Աշխատիլ, կ'աշխատիմ, աշխատեցայ, մաքրել, մաքրեւ եմ,  
երբալ, կ'երբամ, պիտի երբամ, երբալու եմ բայաձևերը կը ցուց-  
նեն գործողութիւն:

Մագիլ, ծագեցաւ, կորստիլ, կորսուեցաւ, ըլլալ, կ'ըլլայի  
բայաձևերը կը ցուցնեն եղելութիւն, գրութիւն, կացութիւն:

Ի՞նչ երբ կը պատասխանեն ի՞նչ ընել, ի՞նչ ըլլալ հարցում-

Ներուն (ի՞նչ կ'ընես, ի՞նչ ըրաւ, ի՞նչ կ'ըլլայ, ի՞նչ պիտի ըլլայ, ի՞նչ պիտի ընէ, ի՞նչ է եղեր, ի՞նչ եղաւ և այլն): Օրինակ՝ կարդալ (ի՞նչ ընել), կը կարդամ (ի՞նչ կ'ընեմ), կարդացի (ի՞նչ ըրի), նուազիլ (ի՞նչ ըլլալ), նուազեցաւ (ի՞նչ եղաւ) և այլն:

**Վարժութիւն 1.** Գտնել դորժողութիւն և եղելութիւն ցուցնող տասնական բայ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածին մէջ ստորագծել գործողութիւն ցուցնող բայերը մէկ, եղելութիւն ցուցնող բայերը՝ երկու գիծով.

Ճղնաւորը շերեւցաւ, ու շքաւեցայ այս բանին համար. իրեն իրագործած բանաստեղծութիւնն այնքան մեծ էր որ մարդը հարկաւորաբար պղտիկ ու տխեղծ պիտի երեւնար աշքիս, մինչ, իր ճերմակ տնակին պատերուն ետեւ քաշուած, կը պահէր իր անծանօթ ու աներևոյթ էակի բոլոր հրապոյրը:

Քիչ քիչ կը հեռանանք սակայն այդ ծովեղերքէն: Մուժը կը ասիս կոխել, ծովուն վրայի այն ստուերոտ տարտամութիւնը երկընքէն կ'իջնէ ու հետզհետէ կը ցածնայ, մինչ արեւմտեան հորիզոնին վրայ շառագոյն դիծ մը հետզհետէ կը սաստկանայ, կ'ոսկեզօծուի, կը հրդեհի գոյներու տարօրինակ բոցալառութեամբ մը: Ծովեղերքի լեռներուն կատարները կը կորսնցնեն իրենց ձիգ ուղղութիւնը, մութին մէջ սլալիկնալով, հալելով յաջորդաբար: Ճղնաւորին ճերմակ շէնքերը մինակ կը պահեն դեռ իրենց ամբողջութիւնը:

Ընթրիքի ժամն եկած է սակայն, ու վար կ'իջնեմ: Երբոր ժամ մը յետոյ վեր կ'ելլեմ, մութը տարածուած է ամէն կողմ: Երկնքին վրայ աստղերը կը սպաղան:

(Լ. Ռաշպեան)

## 77. ԲԱՅԻ ԽՈՆՍ.ՐՉՈՒՄԸ

Բայն ունի երկու հիմնական ձեւ՝ դիմաւոր (եղանակային) և անդէմ (դերբայական):

Դիմաւոր կամ եղանակային ձեւերը անձերու և իրերու (առարկաներու) որոշակի դորժողութիւնը կամ եղելութիւնը կ'արտայայտեն՝ ցուցնելով դէմքը, թիւը և որոշակի ժամանակը. օրինակ՝ կը խաղամ, կը խաղայի, խաղացեր ես, պիտի շխաղաս ձեւերը դիմաւոր են, քանի որ կը ցուցնեն խօսողին և խօսակիցին դորժողութիւնները խօսելու ատեն (կը խաղամ), անկէ առաջ (կը խաղայի, խաղացեր ես) և յետոյ (պիտի շխաղաս):

Անդէմ կամ գերբայական ձեւերը կ'արտայայտեն դործողութիւնը կամ եղելութիւնը այս կամ այն վիճակով՝ առանց գէմքը, եղանակն ու որոշակի ժամանակը ցուցնելու: Օրինակ՝ խաղալ, խաղալու, խաղացեր, խաղացած, խաղացող ձեւերը խաղալ դործողութեան տարբեր վիճակները կը ցուցնեն:

Բայերու այս փոփոխութիւնները խոնարհում կը կոչուին:

Խոնարհումը բալի փոփոխութիւնն է դերբայական և դիմաւոր ձեւերով:

Բայի փոփոխութիւնը՝ խոնարհումը, կը կատարուի խոնարհիչներով:

Հայերէնն ունի 3 խոնարհիչ (ե, ի, ա), հետեւաբար՝ 3 խոնարհում: Խոնարհիչները դրուելով և մասնիկէն առաջ, կը կաղմեն անորոշ գերբայի վերջաւորութիւնը՝ ել, իլ, ալ: Խոնարհիչները կը կոչուին նաև լծորդ:

Ե լծորդ ունին սիրել, տեսնել, գրել, մարել, մտածել, շոշափել, վարել, փողել, քաշել արշաւել, գաղթել, նշմարել և լսողմամբիւ ալլ լսոյն: Ի լծորդ ունին լողնիլ, հանդիլ, փախչիլ, նըստիլ, խօսիլ և ուրիշ լսոյն: Ա լծորդ ունին մնալ, տեղալ, հասկընալ, բանալ, զարմանալ և ուրիշ լսոյն:

Քանի մը բայեր արեւմտահայերէնի մէջ ունին ու խոնարհիչը՝ դրօսեալ, թողուլ, երդնուլ՝ և այլն:

Արեւելահայերէնի մէջ երկու խոնարհում կայ միայն՝ ե և ա, ուրեմն կայ և երկու լծորդութիւն:

Ե լծորդ ունին, օրինակ, գրել, տեսնել, բերել, հանել, նուաճել, կարգել, կոտրել, սիրել և այլ բայեր:

Ա լծորդ ունին, օրինակ, խաղալ, մնալ, ազալ, կարգալ, զարմանալ, ուշանալ, բարձրանալ և այլ բայեր:

Արեւմտահայերէնի մէջ Ի լծորդութեան պատկանող բայերուն մեծ մասը արեւելահայերէնի մէջ ե լծորդ ունի (հանդիպիլ—հանդիպել, նստիլ—նըստել, խօսիլ—խօսնել, փախչիլ—փախչել, կաշիլ—կպշել, աղբիլ—աղբնել, կառչիլ—կառչել և այլն), փոքր մասն ալ ա լծորդ ունի (երկիլ—երեւալ, թուիլ—թուալ, ժպտիլ—ժպտալ և այլն):

Ա լծորդ ունեցող բայերը արեւելահայերէնի մէջ ունին ե լծորդ՝ դրօսեալ—դրօսնել, թողուլ—թողնել, երդնալ—երդնուլ և այլն:

<sup>1</sup> Այս բայերը սակաւթիւ ըլլալու համար որպէս առանձին խոնարհում նկատի չենք առած, սակայն զանոնք ներկայացուցած ենք խոնարհման ընդհանուր պատկերին մէջ (տե՛ս էջ 179):

**Վարժութիւն.** Հետեւեալ հասուածէն ընդօրինակել բայերու անդէմ և դիմաւոր ձևերը զատ զատ սիւնակներու մէջ և որոշել անոնց խոնարհումը.

Պղտիկ սուներ հեռուէն ինծի կը ժայտին...  
Գիւղ մ'է՛ թաղուած մեծ ծառերու շուրին տակ,  
Անտառախիտ լերան մը կողը ևտին  
Եւ առջեւէն հոսող ջուրով մը յստակ:

Եւ կը խորհիմ... Ես այդ դիւղին բնակիչ,  
Մենաւորիկ և մոռցուած հոն կ'ապրիմ,  
Հողիս յանձնած իր անդորրին ամորիչ,  
Հովին, հոպին և ծառերուն մտերիմ:

Ինչ անուշ է՝ դիշերն այնտեղ բնանալ...  
Կեանքն հոն կանուխ, արշալոյսին կը սկըսի.  
Մշուշասքօղ հեռուի լեռն ու դաշտն ալ  
Յօրանջելով ստբի կ'ըլլեն մեկուսի:

Առուակն այգուն կ'ըսէ աղօթք մը կարծեո՛  
Ալեակներուն համրիչն անվերջ քաշելէն.  
Կը բուրվառեն ծառի ճիւղերն, և անտես  
Ճողուներն ալ առուակին դէմ կը բռնեն:

(Վ. Թէլէեան)

## 78. ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բայի պարզ ժւ.մտնակները կը կազմուին անորոշ դերբայի և անցեալ կատարեալի հիմքերով:

Անորոշ դերբայի իմմէ ստանալու համար անկէ կը հեռացնենք Ել, իլ, ալ, ուլ մասնիկները: Օրինակ՝ վաղել—վաղ, դրել—գր, մանել—մոն, դանել—գոն, խօսիլ—խօս, նստիլ—նստ. ապրիլ—ապր, աշխատիլ—աշխատ, հաղնիլ—հաղն, ձգտիլ—ձգտ, փախչիլ—փախչ, հասնիլ—հասն, սնանիլ—սնան, բուսնիլ—բուսն, բանալ—բան, հետանալ—հետան, դիմանալ—դիման, գիտնալ—գիտն, հիանալ—հիան, երթալ—էրթ, թողալ—թող, դրօսնալ—գրօսն և այլն:



Անցեալ կատարեալի նիմֆը կը ստանանք անցեալ կատարեալ ժամանակէն՝ վերջաւորութիւնները հանելով:

Օ Ր ի ե ա կ՝ գրեցի, գրեցիր, գրեց, գրեցինք, գրեցիք, գրեցինք. հասայ, հասար, հասաւ, հասանք, հասաք, հասանք. առնք անցեալ կատարեալի ձեւեր են, որոնցմէ հանելով վերջաւորութիւնները՝ կը ստանանք գրեց, հաս անփոփոխ ձեւերը, որոնք այդ բայերուն անցեալ կատարեալի հիմքն են:

Անցեալ կատարեալի հիմքը երկու տեսակ կ'ըլլայ: Առաջին տեսակը ստանալու համար անորոշի հիմքին վրայ կ'աւելցնենք եց (ե և ի խոնարհման պարզ բայերու համար) կամ աց (ա խոնարհման պարզ բայերու համար), ինչպէս՝ վաղել—վաղ—վազեց, գրել—գր—գրեց, խօսիլ—խօս—խօսեց, ապրիլ—ապր—ապրեց, նստիլ—նստ—նստեց, խաղալ—խաղ—խաղաց, աղալ—աղ—աղաց, կարդալ—կարդ—կարդաց: Կամ անորոշի հիմքի ա՛ն, ե՛ն ւծանցներուն նօն և նօ ւծանցը կը փոխենք ց-ի (ա խոնարհման ւծանցաւոր բայերու համար). ստանալ—ստան—ստաց, բարձրանալ—բարձրան—բարձրաց, մերձենալ—մերձեն—մերձեց, գիտնալ—գիտն—գիտց, մոռնալ—մոռն—մոռց և այլն:

Երկրորդ պարագային անորոշի հիմքէն կը հեռացնենք նօ, չ, ա՛ն, ե՛ն մասնիկները (ե և ի խոնարհման ւծանցաւոր բայերու համար): Օրինակ՝ գտնել—գտն—գտ, մտնել—մտն—մտ, իջնել—իջն—իջ, հեծնել—հեծն—հեծ, խածնել—խածն—խած, անցնիլ—անցն—անց, մեռնիլ—մեռն—մեռ, հաղնիլ—հաղն—հաղ, փախչիլ—փախչ—փախ, հանդչիլ—հանդչ—հա՛նդ, սնանիլ—սնան—սն և այլն:

Բայի խոնարհման այս երկու հիմքերով կը կազմուին բոլոր պարզ ժամանակները և գերբայները:

Վարժութիւն 1. Գտէ՛ք հաւցնել, ելլել, բերել, փլչիլ, դրայչիլ, վրբիլ, ապշիլ, զաղբել, զրպարտել, մոռնալ, ղողալ, ընրանալ, զգալ, վախճալ, հեռանալ, դառնալ, ձանձորանալ բայերուն անորոշ դերբայի և անցեալ կատարեալի հիմքերը:

Վարժութիւն 2. Հետեւեալ բայաձեւերուն մէջ ցո՛յց տուէք հիմքերը.

Վճարեցինք, երեւցան, արձակեցի, կը դրաւէին, պիտի մոռնայինք, կ'ընթանանք, փորեցէք, կը կարդամ, թողուցի, կը դրօսնունք:

## 79. ԳԵՐՐԱՅՆՆԵՐ

Դերբայները (բայի անդէմ ձևերը) կը ցուցնեն գործողութեան կամ եղելութեան տարբեր վիճակներ: Դերբայները վեց տեսակ են՝ անորոշ, սպառնի, վաղակատար, յարակատար, ենթակայական, ժխտման:

Անորոշ — մտածել, խօսիլ, խաղալ, թողուլ.

Ասպառնի — մտածելու, խօսելու, խաղալու, թողելու.

Վաղակատար — մտածեր, խօսեր, խաղացեր, թողեր.

Յարակատար — մտածած, խօսած, խաղացած, թողած.

Ենթակայական (ներկայ) — մտածող, խօսող, խաղացող, թողող.

Ժխտման — մտածեր, խօսիր (խօսեր), խաղար, թողուր:

Այս ձևերը անդէմ են, այսինքն դէմք ու որոշակի ժամանակ չեն ցուցներ:

## 80. ԱՆՈՐՈՇ ԳԵՐՐԱՅ

Անորոշ դերբայը գործողութեան գաղափար կ'արտայայտէ և սոսկ գործողութիւն կը նշէ:

Օրինակ՝ դրել, երգել, նստիլ, կարդալ և այլն:

Երբ կ'ըսենք աշխատիլ, ատուլ միայն կ'արտայայտենք գործողութիւնը. յայտնի չէ, թէ ո՞վ կ'աշխատի (կամ կ'աշխատէր), ե՞րբ կ'աշխատի (կամ կ'աշխատէր):

Անորոշ դերբայը բայի սկզբնաձևն է. բայը կ'անուանենք անորոշ դերբայով:

Անորոշ դերբայը կը սլատասխանէ ի՞նչ ընել, ի՞նչ ըլլալ հարցումներուն. սորվիլ, գրել, սիրել, կանչել (ի՞նչ ընել). փայլիլ, ժանդոտիլ, տաքնալ, խաւարիլ, սառիլ (ի՞նչ ըլլալ):

Բայի լծորգութիւնը, խոնարհումը կ'որոշուի անորոշ դերբայով: Անորոշ դերբայն ունի 3 տեսակի վերջաւորութիւն՝ ել, իլ, ւլ:

Անորոշ դերբայով բաղադրեալ ժամանակներ չեն կաղմուիր, բայց անորոշ դերբայը որեւէ դիմաւոր բայի հետ կրնայ ստորոգեալ կաղմել. ինչպէս՝ սկսաւ խնդալ, կ'աշխատէր վրախշիլ և այլն:

Նախադասութեան մէջ անորոշ դերբայը գոյականաբար գործածուելու սլարագային կրնայ հոլովուիլ: Կը հոլովուի ու հոլովմամբ, միայն եղակի թիւով.

Ուղղ.	Հայց.	մտածել,	խօսիլ,	խաղալ
	Սեռ.	մտածելու,	խօսելու,	խաղալու
	Բաց.	մտածելէ,	խօսելէ,	խաղալէ
	Գործ.	մտածելով,	խօսելով,	խաղալով

Անորոշ դերութայի հոլովածուները նախադասութեան մէջ կրնան կատարել բոլոր այն պաշտօնները, որոնք յատուկ են զոյականին:  
Օրինակ՝

Մտածելը մարդու յատկութիւնն է:

Տեղ կայ որ խօսիլը արժաթ է, լռելը՝ ոսկի:

Շատ աշխատելէն ետքը խաղալը օգտակար է:

Այս նախադասութեանց մէջ մտածելը, խօսիլը, լռելը, խաղալը դերայնները գրուած են ուղղական հոլովով և ենթակայ են: Խաղալու ժամը չի, հասած, խօսելու առիթ կը փնտոէ նախադասութիւններուն մէջ խաղալու, խօսելու դերայնները գրուած են սեռական հոլովով և յատկացուցիչ են: Ամբողջ օրը մտածելով կ'անցընէ, խաղալով ժամն անցուց, խօսելով կը քալէր նախադասութեանց մէջ մտածելով, խաղալով, խօսելով դերայնները գրուած են դործիական հոլովով և պարագայ են:

Ես ալ գիտեմ նկարել, նախադասութեան մէջ նկարել դերայնը հայցական հոլովով գրուած ուղիղ խնդիր է:

Աշխեր ուռած էին լալէն նախադասութեան մէջ լալէն բառը բացառական հոլովով գրուած անորոշ դերայն է և կը կատարէ պարագայի պաշտօն (պատճառի պարագայ):

**Վարժութիւն 1.** Գրել երեք տարբեր լծորդութիւններու պատկանող 10-ական բայ դատ սինականներու մէջ:

**Վարժութիւն 2.** Հոլովել ցանկ, խմել, գալ, բարձրանալ, արտօնել, հանգչիլ անորոշ դերայնները:

**Վարժութիւն 3.** Նախադասութեանց մէջ դործածել հագնիլ, ուրախանալ, ելլել անորոշ դերայնները:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ հատուածներէն ընտրել անորոշ դերայնները և որոշել անոնց պաշտօնը:

**Ս.** Անդլիա մտնելու արտօնութեան հարցը կրցայ յաջողութեամբ լուծել:

Ուշ էր արդէն, երբ Թորնէօ հասանք: Աւանին միակ օթէլին մէջ ասել ձգելու տեղ շկար, այնպէս որ շատ շատերը յանձն առին անդաստակին կամ նրբանցքներուն մէջ դիշերել աթոռներու վրայ, յաջորդ առտուն անցնելու համար հանդիպակաց եզերքը և անկից երթալու համար Քարունդիի կայարանը:

Ամբողջ դիշեր մը շոր աթոռի մը վրայ անցընելու հեռանկարը գործիւ շէր դար, ու պէտք էր ճար մը գտնել: Գուրս ելայ և սկսայ շորս կողմը դիտել:

Փնտռած օթևանս դտած էի, բայց պէտք էր վերագարձի մասին մտածել, և մնջկատակը վերսկսաւ: Պալով վարձքին, արեւելքցիի կասկածամտութեան մնացորդ մը ինձ թելադրեց դրամ ցոյց տալ իրեն և հասկցնել թէ՛ երթուղարձը միասին պիտի վճարէի Թորնէօ:

(Լ. Բաշալեան)

**Գ.** Շունչ կ'առնէր խեղճ մարդը. բայց գործերը կը պակսէին, աւուրչէքը շահիւր տաժանելի տառապանք մը կ'ըլլար ու պարտքերը կը դիզուէին շուրջը:

Ու պայտասակը կը շարունակէր կրել ձեռքը, անօգուտ տարուրեր մը հիմա, բայց ամչնալով թողուլ, մէկգի նետել դայն, յուսահատութիւնը խոստովանիլ աշխարհքի առջև, վասնզի ի՞նչ պիտի ըսէր աշխարհք ձեռնունայն տեսնելով զինքը այսուհետեւ:

...Ի՞նչպէս կ'ըլլայ որ մարդ հացի մը ստակին կարօտը կը քաշէ կամ շողկնաւի մը ստակը շվճարելուն համար կեցած տեղը կը մնայ դամուած:

Յուշի աղան հիմա այս խնդիրները կը յարուցանէր մտքին մէջ, լուծելու կը ջանար, և փողոցին մէջ քայլելով, իր դատարկ պայտասակը զգալով, շօշափելով մատներուն տակ, իր տունը փոխադրուած կը զգար ինքզինքը յանկարծ:

(Գ. Զօհրայ)

## 81. Ա.ՊԱՌՆԻ ԳԵՐՐԱՅ

Ապառնի դերբայը կատարուելիք գործողութեան գաղափար կը ցուցնէ:

Օրինակ՝ դրելու, խօսելու, կարգալու:

Ապառնին կը կաղմուի անորոշ դերբայէն ու մասնիկով:

Անորոշ դերբային իլ մասնիկը ապառնի դերբային մէջ ել կը դառնայ: Օրինակ՝ հանդչիլ—հանդչելու, փախչիլ—փախչելու, հաղնիլ—հաղնելու, նստիլ—նստելու, յոգնիլ—յոգնելու և այլն:

Ապառնի դերբայը կը պատասխանէ ի՞նչ բնելու, ի՞նչ բլլալու հարցումներուն (ի՞նչ ընելու—գրելու, աշխատելու, հանդիպելու, խաղալու. ի՞նչ ըլլալու—կարմրելու, բուսնելու, թանձրանալու):

Ապառնի դերբայով կը կաղմուին երկու բաղադրեալ ժամանակներ: Օրինակ՝ դրելու եմ, ես, է (ապառնի), դրելու էի, էիր, էր (անցեալի ապառնի):

Որոշ բերականներ որպէս ասպանի դերբայ կ'ընդունին նաեւ ի.ք վերջաւորութիւնն ունեցող ձեւը (գրել*ի.ք*, կարդալ*ի.ք*, խօսել*ի.ք*)։ Այս ձեւը նախադասութեան մէջ կրնայ որոշիչ ըլլայ (Գրելիք շարադրութեանս նիւթը պատրաստ է), ինչպէս և դործածուիլ դոյականաբար (Ըսելիքը վերջացաւ Ատիկա քո գիտեալիք է)։

**Վարժութիւն 1.** Կաղմել ստեղծել, վափափիլ, տալ, զգալ, կամենալ, բորբոքիլ, վախշիլ, ապրիլ բայերուն ասպանի դերբայները։

**Վարժութիւն 2.** Նախադասութեանց մէջ դործածել խառնել, ըստանալ, հրդեհիլ բայերուն ասպանի դերբայները։

**Վարժութիւն 3.** Հետեւեալ հատուածին մէջ ստորագծել ասպանի դերբայները և որոշել, թէ ինչ պաշտօն ունին անոնք.

— Աստիք զիս քիթէս բռնելով կողոպտե՞լ կ'ուզեն։ Մա քաղարբ դաւէս ի վեր վայրկեան մը ինք իր զլիտա շմնացի, հազիւ մէկը կ'երթայ, միւսը կու դայ, ստակ կ'ուղէ. ես աս տեղ ամհնուն ստա՞կ ապու համար եկայ։ Ի՞նչ աներկս մարդեր են... ոչոչափ աներկսութիւն ոչ լսուած բան է, ոչ ալ տեսնուած։ Եթէ վրտեմ ըսես, ս՞ր մէկը վրտեմու է, ս՞ր մէկուն հասնելու է. օրականով շորս հինգ հոգի վարձելու է, որ ուրիշ դործ շունենան, միայն եկողները վրտեն...

(3. Պարունեան)

## 82. ՎԱՎԱԿԱՍԱՐ ԳԵՐՐԱՅ

Վաղակատար դերբայը կը ցուցնէ կատարուած, վերջացած գործողութիւն կամ եղելութիւն։

Օրինակ՝

Անիկա գասը սորվեր է։

Պետրոսը զիւզ գացեր է։

Վարդանը այս առաւ ընկերոջը հանդիպեր է։

Այս նախադասութեանց մէջ սորվեր, գացեր, հանդիպեր բաները վաղակատար դերբայ են։

Եւ Ե խոնարհման բայերու վաղակատար դերբայը կը կաղմըլի անորոշի հիմքէն՝ եք վերջաւորութեամբ։ Ինչպէս՝ կատարել—կատարեալ, վճարել—վճարեալ, պատահիլ—պատահեալ, խօսիլ—խօսեալ, բորբոքիլ—բորբոքեալ և այլն։

**Ա.** խոնարհման բայերու վաղակատար դերբայը կը կազմուի անցեալ կատարեալի հիմքին վրայ եր անելցնելով: Օրինակ՝ խա-  
լալ—խաղացեր, կարգալ—կարգացեր, հասկնալ—հասկցեր, մոռ-  
նալ—մոռցեր և այլն:

Վաղակատար դերբայը կը սլատասխանէ ի՞նչ բեր, ի՞նչ եղև:  
հարցումներուն:

Այս դերբայն առանձին շի գործածուիր, այլ օժանդակ բային  
հետ վաղակատար և անցեալի վաղակատար ժամանակը կը կազմէ:

Օրինակ՝ գրեր եմ, ես, է, ենք, էք, են, էի, էիր, էր, էինք, էիք.  
էին. մոռցեր եմ, ես, է, ենք, էք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին:

**Վարժութիւն 1.** Կազմեցէ՛ք պատանիլ, մնալ, յաղթել, մեր-  
ձել, ազդել, նիրհել բայերուն վաղակատար դերբայը:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածներէն ընդօրինակել  
վաղակատար դերբայները՝ խմբաւորելով զանոնք ըստ խոնարհում-  
ներու.

Իմ մանկական աչքերս շլացեր են այն ճաճանչներէն, որոնք  
մղկիթներու ոսկեղօծ գմբէթներուն վրայ իյնալով լոյսի հրդեհներ  
կը վառէին. իմ առաջին տեսողական տպաւորութիւններս կրեր  
եւ այդ դունագեղ և միևնոյն ատեն նրբօրէն երանգաւոր շրջա-  
նկարէն, որ խոր ազդեցութիւն գործեր է իմ վրաս: Գեռ անդի-  
տակից և անրարբառ՝ լացեր կամ խնդացեր եմ կրած տպաւորու-  
թիւններու առթած ուժգին յուզումով և հետագային, երբ կրկին  
տեսեր եմ նոյն տեսարանները, զգացեր եմ որ անոնք արդէն տես-  
նուած և զգացուած են ինձմէ:

(Ձ. Յսայեան)

Չմեռուան իրիկուն մը, կէս գիշերը անց, ան տուն բերի էր  
անձանօթ և ալազգի փախստական մը, որ ծխախոտի մաքսանենդ  
էր, խաշախճի: Դէտերը իր հետքերուն վրայ էին: Այդ մաքսա-  
նենդները ընդհանրապէս շէրքէզ էին, սրոնց եկեր միացեր էին  
քսանի մը հայեր: Տիգրան մօրեղբայրս յարաբերութիւն հաստատեր  
էր այդ մարդոց հետ և իր արկածախնդրական տրամագրութիւն-  
ները արծարծուր էին:

(Ձ. Յսայեան)

Յարակատար դերբայը կը ցուցնէ կատարուած և յատկութիւն դարձած գործողութիւն:

Օրինակ՝ դրած, աշխատած, խօսած, նստած, պառկած, մընացած, մոռցած և այլն:

Երբ կ'ըսենք զրած, կարդացած գիրք, հոս զրած, կարդացած դերբայները կը ցուցնեն աւարտուած և յատկութիւն դարձած զրելու, կարդալու գործողութիւնները:

Յարակատար դերբայը կը պատասխանէ ի՞նչ ըրած, ի՞նչ եղած հարցումներուն (ի՞նչ ըրած—զրած, կարդացած. ի՞նչ եղած—զաղրած, կորսուած, բացուած):

Յարակատար դերբայը կը կազմուի վաղակատարին նման. միայն եր վերջաւորութեան փոխարէն ած կը գրուի. Օրինակ՝ փախեր—փախած, մտածեր—մտածած, դրեր—զրած, պատմեր—պատմած, վերադարձեր—վերադարձած, սկսեր—սկսած և այլն:

Յարակատար դերբայը օժանդակ բային հետ կը կազմէ սահմանական եղանակի յարակատար և անցեալի յարակատար ժամանակները:

Օրինակ՝

Յարակատար ժամանակ — սկսած եմ, ես, է, ենք, էք, են:

Անցեալի յարակատար ժամանակ — սկսած էի, էիր, էր, էինք, էիր, էին:

Ասկէ դատ, յարսկատար դերբայով կը կազմուին նաեւ բայերու երկրորդական բաղադրեալ ժամանակները (զրած եմ եղեր, զրած կ'ըլլամ և այլն), որոնք շատ շնն գործածուիր:

Յարակատար դերբայը կը գործածուի նաեւ որպէս նախադասութեան ինքնուրոյն անդամ. կ'ըլլայ որոշիչ և պարագայ: Օրինակ՝ Ապագան ահա կը ժպտի նորէն՝ ծեծ կերտած լացող տղու մը նման:

Այս նախադասութեան մէջ ծեծ կերտած յարակատար դերբայը տղու դոյականին որոշիչն է:

Անիկա բարկացած կը խօսի նախադասութեան մէջ բարկացած յարակատար դերբայը ստորոգեալի լրացում է՝ ձեւի պարայայ:

Յարակատար դերբայը կրնայ գոյականաբար գործածուելով՝ հոլովուիլ, և այդ պարագային կրնայ կատարել գոյականին յատուկ բոլոր պաշտօնները:

Օրինակ՝ Խնդրածը շնչին բան մըն է նախադասութեան մէջ խնդրածը բառը գոյականաբար գործածուած յարակատար դերբայ է և նախադասութեան մէջ դարձեր ֆ ենթակայ:

Գրածէն բան մը շնասկցայ նախադասութեան մէջ գրածէն բառը գոյականաբար գործածուած յարակատար դերբայ ֆ և անուղղակի խնդիր:

Նղածովը զոհացայ նախադասութեան մէջ եղածովը բառը նայնպէս անուղղակի խնդիր է:

**Վարժութիւն 1.** Կազմեցէ՛ք կանչել, ապրիլ, ըսել, սիրել, յուսալ, սանիլ, սորվիլ բայերուն յարակատար դերբայները:

**Վարժութիւն 2.** Բացուած, զամուած, գտած, ցանուած, թաղուած, հասկցուած յարակատար դերբայները նախադասութեանց մէջ գործածեցէ՛ք իրրեւ որոշիչ:

**Վարժութիւն 3.** Յոգնած, յուսահատած, ինկած, գրգռուած, վիրատուած յարակատար դերբայները գործածեցէ՛ք իրրեւ պարագայ (օրինակ՝ Մերունին յոգնած կը քալէ):

**Վարժութիւն 4.** Գոյականաբար գործածեցէ՛ք հետեւեալ դերբայները. դռնուած, կարգացած, սորված, մնացած, նստած, դրոշմըւած, յանձնած, փախած, իմացած, շրջապատուած:

**Վարժութիւն 5.** Հետեւեալ հատուածներէն ընդօրինակեցէ՛ք յարակատար դերբայները. բացատրեցէ՛ք անոնց կազմութիւնը.

**Ա.** Խնդանք, եզրայրներ, իրենց փափաքին  
Քովն ինկած մարդոց ծիծաղով խնդանք,  
Մեր գիտիները գրկած կաթոգին՝  
Աշխարհի վրայ որքան հայ որ կանք,  
Խնդանք աշխարհի ժահրոտ երեսին...

(Վ. Թէֆէկեան)

**Բ.** Կը յիշեմ մայրսեան զով անձրեւը, որ կը տեղար հապճեպ մրմունջով, պառկած բոյսերու և կարմիր կղմինտրներով ծածկուած տանիքներու վրայ: Բաց պատուհաններէն զովացած օդի թարմ շունչը կը խուժէր ներս: Պարտէզներէն ու այգիներէն հերկըւած և սրարար հողի և թրջուած կանանչի հոտը կը բռնէր մթնոլորտը:

Եւ այգուն՝ անձրեւով յաղեցած պարտէզները իրենց ցօղաթարմ ծաղիկներով կը ծպտէին:



Այդ պարտէզներուն մէջ արքայական ծիրանիներ իրենց ոսկեգոյն պտուղները կարկառած են ինձ, ծաղկեալ վարդենիներ իրենց բազր բուրմունքով օծած են իմ մանկութիւնս և կարմիր վարդեր ինկած են ռաբերուս առաջ: Իմ կեանքի ընթացքին տեսած եմ շատ երկիրներ և վայելած եմ բնութիւն բազմատեսակ գեղեցկութիւններ, բայց Սիլիհոտարի պարտէզներու յիշատակը մնացած է անջնջելի:

(Չ. Եսայեան)

## 84. ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԳԵՐՐԱՅ

Ենթակայական (կամ ներկայ) դերբայը կը ցուցնէ որեւէ գործողութիւն կատարող, բան մը ընելու կամ ըլլալու յատկութիւն ունեցող առարկան. օրինակ՝ երգող, աշխատող, խաղացող, մնացող բաները կը ցուցնեն երգել, աշխատիլ, խաղալ, մնալ գործողութիւնները կատարողը:

Անիկա լաւ աշխատող տղայ մըն է նախադասութեան մէջ աշխատող բառը ենթակայական դերբայ է, որ կը ցուցնէ թէ աշխատելու գործողութիւնը կատարող է:

Ենթակայական դերբայը կը պատասխանէ ի՞նչ ընող, ի՞նչ եղող հարցումներուն (կարգացող, սորվող, մնացող, գացող (ի՞նչ ընող), ծաղկող, թաղուող, վիրաւորուող (ի՞նչ եղող):

Ենթակայական դերբայը կը կազմուի ող մասնիկով, որ կ'աւելնայ ե և ի խոնարհման բայերուն անորոշ դերբայի հիմքին վրայ (գրել—գրող, յայտնել—յայտնող, բնակիլ—բնակող, նստիլ—նստող), իսկ ա խոնարհման բայերուն անցեալ կատարեալի հիմքին վրայ (խաղալ—խաղացող, մնալ—մնացող):

Ենթակայական դերբայը նախադասութեան մէջ ածականին նման կը գործածուի իրրեւ որոշիչ Վարդանը դասը շուտ հասկըցող աշակերտ մըն է նախադասութեան մեջ հասկցող ենթակայական դերբայը աշակերտ գոյականին որոշիչն է:

Ենթակայական դերբայը կրնայ դառնալ նաեւ ստորոգելիական վերագիր: Վարդանը հասկցող է նախադասութեան մէջ նաակըցող բառը ստորոգելիական վերագիր է:

Ենթակայական դերբայը կրնայ գործածուիլ գոյականաբար, հորովուիլ և կատարել գոյականին յատուկ պաշտօններ: Վարդացողը կանգ ստաւ նախադասութեան մէջ կարգացողը ենթակայ է: Վարդացողին խելքը կտրուկ է նախադասութեան մէջ կարդացողին բառը խելքը գոյականին յատկացուցիչն է:

Հասկցողին մէկ բէէ, շնասկցողին՝ հազար ու մէկ նախադասութեան մէջ ենթակայական դերրայք անուղղակի խնդիր է:

**Վարժութիւն 1.** Կազմեցէ՛ք երգել, հանել, աւարտել, մեկնել, սլակսիլ, աշխատիլ, դողալ, խաղալ ըստ բուն ենթակայական դերրայքերը:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ դերրայքերը նախադասութեանց մէջ գործածեցէ՛ք գոյականաբար՝ տարրեր հոլովներով.

Կիտցող, համաձայնող, փնտսող, քալող, ընդունող, ճամբորդող, նայող, արթնցող, կուտող, հրամայող, ըսող, հաղնող, պատրաստող, արտասանող, սորվող, դասող, սլաղատող, զգացող, զըտնող, զբարեկեցնող, պաշտող, խաղացող:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ քերթուածին մէջ ցո՛յց տուէք ենթակայական դերրայքերուն պաշտօնները.

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Վ Ա Ր Կ Ա Պ Ե Տ

Դուն ճպտտ մ'արդէն՝ նուրբ, կրենաշող,  
Չայնքը մէկ մէկ, ձայնքը խումր խումր  
Շուրջըդ ջուրերու պէս բխեցընող  
Եւ յանկարծ՝ անոնց առջև եղող թումր...

Եւ ճպտտ մ'ուրիշ՝ դուն ինքդ նորէն,  
Ճպտտ հրաշագործ զօրութեան մը ձեռք,  
Մոռդ աջ ու ձախ, անյնող հայ կրկրէն,  
Կեցող արտերու, գիւղերու եղերք

Եւ գտնող, ո՛վ դուն, ի՞նչ քաղցր, ի՞նչ առատ,  
Գետնին տակ սլահուած, հոսուն, գլզուն,  
Հայրենի երգին աւազանն անհուն...

(Վ. Թէքէեան)

### 85. ԺԽՏՄԱՆ ԳՆՐԱՅ

Ժխտման դերբայը կը ցուցնէ գործողութիւն կամ եղելութիւն մը, որուն կատարումը կը ժխտուի օժանդակ բայի ժխտական ձեւով:

Այս դերբայը կը կաղմուի անորոշէն, որուն վերջին Լ-ն կը փոխուի ր-ի. ինչպէս՝ գրեւ— գրեր, մնալ— մնար, մտնալ— մտնար և այլն:

**Ի** խոնարհման բայերու ժխտման դերբայն ունի և՛ **Ի** խոնարհիչ (խօսիր), և՛ **Ե** խոնարհիչ (խօսեր)։ Աստուծոյ առաջինը կը գործածուի ներկայ ժամանակի կաղմութեան ատեն (չեմ խօսիր, չես խօսիր, չի խօսիր և այլն), իսկ երկրորդը՝ անցեալի անկատար ժամանակի կաղմութեան մէջ (չէի խօսեր, չէիր խօսեր, չէր խօսեր և այլն)։ Ժխտման դերբայով կը կաղմուին սահմանական եղանակի ներկայ և անցեալի անկատար ժամանակները (չեմ գրեր, չես գրեր, չի գրեր, չէի գրեր, չէիր գրեր, չէր գրեր և այլն)։

**Վարժութիւն 1.** Կաղմեցէ՛ք վազել, կանչել, ակորժիլ, հանգչիլ, ստունալ, ուրախանալ բայերուն ժխտման դերբայները։

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածներուն մէջ ցո՛յց տուէ՛ք ժխտման դերբայները։

**Ա.** Այլևս ժողովարան չէինք երթար։ Մեծ խումբերով կը տանէին Սկեղեցի։ Գծիկներն նկարը նոյն սարսափը չէր ազդեր հիմա։

Աւագ շաբթու մէջ օր մը յայտարարուեցաւ, թէ հինցած կօշիկներուն տեղ նորեր պիտի տրուին։ Զատիկը մօտ էր։ Իսկ կօշիկ մը հին նկատուելու համար պէտք էր ծակած ներբան ունենար։ Նրեաները նկատի չէին առնուեր։ Կը դրկուէին հնակարկատին։

**Բ.** Բացառութիւն կը կաղմէր խաչիկը։ Անտարբեր երեւոյթ մը առած էր, իրբև թէ ընաւ շահտարբերութիւն մեկնումներով։ Հետզհետէ կը մեկուսանար, կը կծկուէր։ Խաչերուն չէր մասնակցեր։ Այլևս մարդ չէր ծածկու։ Ամբողջ օրը լուռ կը մնար։ Նոյնիսկ ինծի հետ չէր խօսեր։ Զէի խանդարեր իր տխրութիւնը, բայց միշտ հետն վէր։

**Գ.** Ամուր մը կախած վարի շրթունքը, ձեռքերը դրպաններուն մէջ, անթարթ աչքերով կը նայէր գետին։ Ուշադրութիւն չէր ընկր ինծի, խօսքերուս պատասխան չէր տար։

Զեմ գիտեր, թէ պիտի կրնայի՞ համոզել խաչիկը։

(Ա. Մատուկեան)

## 86. ԲԱՅԻ ԳԻՄԱՒՈՐ ՁԵՒԵՐԸ

Եթէ բայի անգէմ ձեւերը կը ցուցնեն գործողութիւնը տարբեր վիճակներով, դիմաւոր (եղանակային) ձեւերը կը ցուցնեն որոշակի գործողութիւն՝ եղանակով, ժամանակով, դէմքով, քիտով։

Օր ի ն ա կ՝ կը գրեմ, պիտի գրես, գրեց, գրէ՛ ձեւերը կը ցուցնեն խօսելու պահուն կատարուող, խօսելէն յետոյ կատարուելիք և անցեալի մէջ կատարուած, վերջացած գործողութիւն մը, դոր կը

կատարեն խօսողը (կը գրեմ), խօսակիցը (պիտի գրես, գրէ՛) և երրորդ անձ մը (գրեց):

Բայլ դիմատր ձևերը կը կոչուին նաև եղանակային ձևեր:

## 87. ԳԷՄՔ ԵՒ ԹԻՒ

Գործողութիւնը կամ եղելութիւնը կը կատարուի խօսողին, խօսակիցին և երրորդ անձի մը կողմէ, ուստի բայերը կ'ունենան երեք դէմք:

Առաջին դէմքով կ'արտայայտուի խօսողին գործողութիւնը կամ եղելութիւնը:

Օրինակ՝ (ես) կը գրեմ, կը նստիմ, կ'իյնամ:

Երկրորդ դէմքով կ'արտայայտուի խօսակիցին գործողութիւնը կամ եղելութիւնը:

Օրինակ՝ (դուն) կը գրես, կը նստիս, կ'իյնաս:

Երրորդ դէմքով կ'արտայայտուի խօսողէն ու խօսակիցէն հետո գտնուող անձի մը, իրի մը գործողութիւնը կամ եղելութիւնը:

Օրինակ՝ (ան, անիկա) կը գրէ, կը նստի, կ'իյնայ:

Բայն ալ, գոյականին նման, ունի երկու թիւ՝ եզակի և յոգնակի: Եզակի թիւը կը ցուցնէ մէկ առարկայի, իսկ յոգնակին՝ մէկէ աւելի առարկաներու գործողութիւնը կամ եղելութիւնը:

Եզակի՝ կը բալեմ, կը մազլցիս, կը լողայ:

Յոգնակի՝ կը բալենք, կը մազլցիք, կը լողան:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ կապակցութեանց մէջ դերբայները դիմատր ձև դարձնելով կազմեցէ՛ք նախադասութիւններ.

Նամակ գրել, ծառ տնկել, արտ հնձել, փայտ տաշել, հայերէն խօսիլ, գիրք տպագրել, հացով սնանիլ, հիւանդութեամբ տառապիլ, ընկերը սիրել:

Օրինակ՝ Նամակ մը գրեցի: Անիկա հայերէն կը խօսի և այլն:

**Վարժութիւն 2.** Կազմեցէ՛ք հետեւեալ բայերուն առաջին դէմքի ձևերը.

Կը բալեն, պիտի թռչին, պիտի հասկնաս:

**Վարժութիւն 3.** Ի՞նչպէս կ'ըլլան հետեւեալ բայերուն երկրորդ և երրորդ դէմքերը.

Կ'արշաւեմ, կը տնկեմ, պիտի բաղեմ, կը մաքրէի, կը սուրամ:

**Վարժութիւն 4.** Կազմեցէ՛ք հետեւեալ բայերուն յոգնակին.  
Կ'ուղեմ, կը խոստանամ, կ'իջնեմ, կ'իյնաս, պիտի մոռնամ,  
պիտի սողայիր:

**Վարժութիւն 5.** Հետեւեալ բերթուածին մէջ ստորագծել դիմաւոր  
բայերը և որոշել անոնց դէմքն ու թիւը.

ՊԵՏՐՈՍ ԳՈՐԻՍԱՆ

Լուս, մարմարակերտ դամբանին խորէն,  
Հանճարի աշբերն անբոյժ կը նային,  
Լոյս ողիներու կեանքովն երկնային  
Ալ մեկուսացած ունայն յըխորէն:

Մեռաւ, խանդավառ սէրերն երգելէն՝  
Ու պիտի յաւէտ միտքերն հըմային  
Իր թունդ քնարէն, ու երգերն ալ հին  
Պաշտումով ըզմեզ միշտ պիտի գերեն:

Յոյզով մեռաւ ան, յուշքով կ'ապրի դեռ,  
Ծառերուն նըման, որ թարմ ու դալար,  
Իր գերեզմանին կ'ելլեն քովն ի վեր:

Հիացքներ կ'երթան իրեն հտեւէն...

Նւ իր յուշերն ալ յաւէտ անմռլար  
Ու միշտ սղևոր դեռ պիտի տեսնի:

(Մ. Մեծարեւոյց)

## 88. ԺԱՄԱՆԱԿ

Բայը երեք ժամանակ ունի՝ ներկայ, որ խօսելու պահուն  
կատարուող գործողութիւն կամ եղելութիւն կը ցուցնէ, անցեալ, որ  
խօսելու պահէն առաջ կատարուած գործողութիւն կամ եղելութիւն  
կը ցուցնէ և ապառնի, որ խօսելու պահէն յետոյ կատարուելիք  
գործողութիւն կը ցուցնէ:

Կը կարեմ, կը թոշիս, կը խաղան՝ ներկայ, կը կարէի, կը թըռ-  
չէիր, խաղցեր է՝ անցեալ, պիտի կարեմ, պիտի թոշիս, պիտի խա-  
ղան՝ ապառնի ժամանակներու բայածակեր են:

Ներկայ ժամանակը մէկ է:

Անցեալ ժամանակը բանի մը տեսակ է՝ անցեալի անկատար  
(կը գրէի), անցեալ կատարեալ (գրեցի), վաղակատար (գրեր եմ),

անցեալի վաղակատար (գրեր էի), յարակատար (գրած եմ), անցեալի յարակատար (գրած էի):

Ապառնի ժամանակը երկու տեսակ է՝ ապառնի (պիտի գրեմ, գրեմ), անցեալի ապառնի (պիտի գրէի, գրէի):

Ժամանակները իրենց կազմութեամբ երկու տեսակ են՝ պարզ և բաղադրեալ:

Պարզ են այն ժամանակները, որոնք կազմուած են բայաճիւմով և վերջաւորութեամբ: Օրինակ՝ գր—եմ, գր—ես, գր—է, գր—էի, գր—էիր, գր—էր, գր—ենք, գր—էք, գր—են, գրեց—ի, գրեց—իր, գրեց, գրեց—ինք, գրեց—իք, գրեց—ին: Հոս գր և գրեց ձևերը բայաճիւմներ են, իսկ—եմ, —ես, —է, —ենք, —էք, —են, —էի, —էիր, —էր, —ի, —իր, —ինք, —իք, —ին՝ վերջաւորութիւններ:

Բաղադրեալ են այն ժամանակները, որոնք կը կազմուին դերբայով մը և օժանդակ բայով. օրինակ՝ գրեւ եմ, գրեւ ես, գրեւ է, գրած եմ, գրած ես, գրած է բաղադրեալ ժամանակներ են, քանի որ կազմուած են գրեւ, գրած դերբայներով և եմ, ես, է օժանդակ բայով:

## 89. ԵՂԱՆԱԿ

Գործողութիւնը կամ եղելութիւնը կրնայ արտայայտուիլ տարբեր եղանակներով:

Բայի եղանակը կը ցուցնէ խօսողին վերաբերմունքը դործողութեան կատարման նկատմամբ. խօսողը կը դիտէ զայն իրբև ստոյգ իրողութիւն, հրաման, թէ ցանկութիւն: Ըստ այսմ բայն ունի երեք եղանակ՝ սանձաւակաճ, հրամայական, ըղծական (ստորագասական):

## 90. ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Սանձաւակաճ եղանակի բայաձևերը կը ցուցնեն ստոյգ կերպով կատարուած, կատարուող, կատարուելիք գործողութիւն կամ եղելութիւն:

Օրինակ՝

Եղեգնեայ գրչով պայքար երգեցի:

Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն:

Բայց պիտի սիրենք հետքն ալ վերքերուդ:

Այս նախադասութեանց մէջ երգեցի, կու գան, պիտի սիրենք սահմանական եղանակի բայաձևեր են, քանի որ կը ցուցնեն իրա-

կան, ստոյգ գործողութիւններ, որոնցմէ առաջինը կատարուեր է անցեալի մէջ (երգեցի), երկրորդը կը կատարուի խօսելու ատեն (կու գան) և երրորդը պիտի կատարուի յետոյ (պիտի սիրենք):

Ահամանական եղանակն ունի 5 պարզ և 6 բաղադրեալ ժամանակ:

Պարզ ժամանակներն են՝ ներկայ, անցեալի անկատար, անցեալ կատարեալ, ապառնի, անցեալի ապառնի:

Բաղադրեալ ժամանակներն են՝ վաղակատար, անցեալի վաղակատար, յարակատար, անցեալի յարակատար, բաղադրեալ ապառնի, բաղադրեալ անցեալի ապառնի:

Այս բաղադրեալ ժամանակները կը կոչուին զլիսաւոր:

Կան երկրորդական բաղադրեալ ժամանակներ, որոնք կը կազմուին յարակատար, ապառնի դերբայներով և ըլլալ բային խոնարհուած ձևերով:

## 91. ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿ

Ներկայ ժամանակը կը ցուցնէ խօսելու ատեն ստոյգ կերպով կատարուող գործողութիւն:

Օրինակ՝ կը բալեմ, կը գրեմ, կը փորձենք, կ'ընես, կը բացատրեն, կը պատասխանեն, կը ստանամ, կը խոստանամ, կը նաեղնամ, կը խօսիմ բայաձևերը ներկայ ժամանակի բայաձևերն են, բանի որ կը ցուցնեն խօսելու ատեն կատարուող գործողութիւններ:

Ներկայ ժամանակը կը կազմուի կը մասնիկով (բաղաձայնով սկսող բայերէն առաջ, իսկ ձայնաւորով սկսող բայերուն առջև կը-ի ք-ն կորսուելով կը դառնայ կ' գալ, լալ, տալ միավանկ բայերուն առջև՝ կու): Այդ մասնիկը կը դրուի բայերու ըզձական եղանակի ձևերուն վրայ (վերջիններս կը կազմուին անորոշ դերբայի հիմքին վրայ նմ, նս, է, ննք, էք, նն, իմ, իս, ի, ինք, իք, ին, ամ, աս, այ, անք, ար, ան վերջաւորութիւնները աւելցնելով):

կը տեսնեմ	կը շրջիմ	կը ստանամ
կը տեսնես	կը շրջիս	կը ստանաս
կը տեսնէ	կը շրջի	կը ստանայ
կը տեսնենք	կը շրջինք	կը ստանանք
կը տեսնէք	կը շրջիք	կը ստանաք
կը տեսնեն	կը շրջին	կը ստանան

Կարգ մը բայեր իրենց ներկան կը կաղմեն առանց կը նա-  
խամասնիկի. ինչպէս՝ զիտեմ, կամ, կրճամ, ունիմ:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ բայերը խոնարհեցէ՛ք ներկայ ժամա-  
նակով.

Իջնել, կարծել, թափել, երեւիլ, ելլել, ընել, սիրել, սենալ,  
դառնալ, ստըլալիլ, գտնել, զարնել, փախչիլ, արդիւիլ, կանչել, հո-  
սիլ, երկննալ, քնանալ, ազրիլ, խաղալ, մնալ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ քերթուածներէն ընդօրինակել ներկայ  
ժամանակի ձևերը.

**Ա.** Զանդուածն ահա՛ դու կ'երերայ հեծելով,

Անտառի պէս կամ ծովու,

Մով կամ անտառ, զոր կը շարժէ ոչ թէ հով,

Այլ երկրաշարժ մ'ահարկու...

Եւ հնօրեայ այս դանդուածէն մարդկային

Ահա մասեր մի առ մի

Անվերջօրէն կը բաժնուին, կը մեկնին...

Եւ ան տակաւ կը պակսի...

Խլուած իրենց արմատներէն ամէնքն ալ՝

Մեր հին, հին աղբը ահա,

Որ շի կրնար իր հողերուն վրայ մնալ,

Զորնալ ուրիշ տեղ կ'երթայ...

(Վ. Քէլէկեան)

**Բ.** Հովե՛ր կ'անցնին.—

Ու ցորեաններս յուշիկ յուշիկ կ'արթըննան,

Իրենց խորքէն կը հոսի դող մ'անսահման:

Դեղադալար կողերն ի վար բլուրին

Մովե՛ր կ'անցնին:

Հովե՛ր կ'անցնին.—

Այնքան կ'յորդի, կը կատուի դաշտը յուրթի՛

Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:

Գողին մէջէն ալետատան հովիտին

Մովե՛ր կ'անցնին:

Հովե՛ր կ'անցնին.—

Ու ցորեանին պատմութեանները ծփուն

Մերթ կը պատուին, մերթ կը կարուին փողփողուն:

Ըստուերի մէջ, լոյսերու մէջ փրփրադին

Մովե՛ր կ'անցնին:

(Գ. Վարուժան)



Սահմանական եղանակի անցեալի անկատար ժամանակը կը ցուցնէ անցեալի մէջ սկսած, բայց չաւարտած, անկատար մնացած գործողութիւն կամ եղելութիւն:

Կը ֆալէի, կը գրէի, կը խօսէի, կը ստանայիք, կը նանչնայիք րայաձևերը անցեալի անկատար ժամանակի րայաձևեր են, բանի որ կը ցուցնեն գործողութիւն մը, որ սկսած և ընթացքի մէջ դանուած է անցեալ ժամանակակէտի մը համեմատութեամբ: Կը ֆալէի, երբ ան եկաւ նախադասութեան մէջ կը ֆալէի րայաձևը կը ցուցնէ գործողութիւն մը, զոր (ես) սկսեր եմ մինչև խօսելու պահը եղած ժամանակակէտէ մը առաջ: Այդ գործողութիւնը անկատար կը կոչուի այն պատճառաւ, որ այդ պահուն աւարտած չէ:

Այս ժամանակը եւս կը կազմուի **կը (կ', կու)** նախամասնիկով, որ կը դրուի միշտ ըզձական եղանակի անցեալի ասրանի ժամանակի ձևերուն վրայ:

Օ ր ի ն ա կ՝

կը գործէի	կ'աշխատէի	կը կարդայի
կը գործէիր	կ'աշխատէիր	կը կարդայիր
կը գործէր	կ'աշխատէր	կը կարդար
կը գործէինք	կ'աշխատէինք	կը կարդայինք
կը գործէիք	կ'աշխատէիք	կը կարդայիք
կը գործէին	կ'աշխատէին	կը կարդային

Որոշ րայեր առանց **կը** նախամասնիկի կը կազմեն այս ժամանա՞ր, ինչպէս եերկան (տե՛ս § 91):

**Վարժութիւն 1.** Խոնարհեցէ՛ք ըսել, կարծել, ապրիլ, խորնիլ, իյնալ րայերը անցեալի անկատար ժամանակով:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածէն ընդօրինակեցէ՛ք անցեալի անկատար ժամանակի րայաձևերը.

Մովը ընդհանրապէս խաղաղ էր իր գրեթէ անծալ մակերեսով. որոշ ժամերու, երբ օդը նպաստաւոր ըլլար, պահ մը կ'ուրազծուէր երոպական փոռնքը և կ'անհետանար իսկոյն լուսեղէն մշուշի մը ետեւ: Բայց Մարմարայի գլխաւոր զարդը կը կազմէին Իշխանաց կղզիները իրենց յարափոփոխ երևոյթներով:

Այգուն առաջին ժամուն այդ կղզիները եթե րային թեթեւութիւն մը կը ստանային: Անոնք կարծես փետուրի պէս կը ծփային ծովուն զով կտրծբին վրայ: Քանի ժամը կը յառաջանար, անոնք ի՛ամբանային, շրջագիծ կը ստանային և միջօրէին շքեղ և դալար փունջերու պէս կը խրոխտանային իրենց դեղեցիկութեան մէջ: Երեկոները, վերջալուսային ցոլքերով վառուած, փոխնիփոխ խառնուելով և անջատուելով երկինքի շառագոյն ամպերէն, կարծես պայքարի կը մտնէին աներեւոյթ դօրութիւններու հետ: Մովափին վրայ մեր պտոյտի ընթացքին, մեր տեսողութեան մէկ կէտէն միւսը անոնք երբեմն կը կուտակուէին, երբեմն կը հեռանային իրարմէ, շարքով կեցած նաւերու նման:

(Զ. Խայկան)

### 93. ԱՆՅԵԱԿ ԿԱՏԱՐԻԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

Սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակը կը ցուցնէ կատարուած, աւարտած գործողութիւն կամ եղելութիւն:

Օ ր ի ն ա կ՝ եր:եցի, սիրեցինք, փնտռեցիր, գացի, թափառեցայ, դարձաւ, տեսար և այլն:

Անցեալ կատարուածն ունի երկու տեսակ վերջաւորութիւն՝

1-ին դէմք	ի	ինք	այ	անք
2-րդ դէմք	իր	իք	ար	աք
3-րդ դէմք	—	ին	աւ	ան

Այս վերջաւորութիւնները դնելով բայահիմքի եց, աց մասնիկներուն վրայ, կը ստանանք՝

եցի	եցինք	եցայ	եցանք
եցիր	եցիք	եցար	եցաք
եց	եցին	եցաւ	եցան

Օ ր ի ն ա կ՝

երգեցի	երգեցինք	հանդիպեցայ	հանդիպեցանք
երգեցիր	երգեցիք	հանդիպեցար	հանդիպեցաք
երգեց	երգեցին	հանդիպեցաւ	հանդիպեցան

Անցեալ կատարեալի հիմքին մէջ եց, աց շունեցող բայերուն խոնարհումը կ'ըլլայ՝

ըսի	ըսինք	անցայ	անցանք	գտայ	գտանք
ըսիր	ըսիրք	անցար	անցարք	գտար	գտարք
ըսաւ	ըսին	անցաւ	անցան	գտաւ	գտան

**Վարժութիւն 1.** Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը անցեալ կատարեալ ժամանակով.

Աւարտել, ճաշել, յանձնել, սլատասխանել, նշմարել, հաստատել, ծոխլ, կասկածիլ, մասնակցիլ, նայիլ, խորհիլ, յաջողիլ, կարգալ, խաղալ, մնալ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածէն բնորոշեալիկ անցեալ կատարեալ ժամանակի բայաձևերը և բացատրել անոնց կազմութիւնը:

Եւ օր մըն ալ նախաձեռնարկ եղայ այցելութիւն մը կազմակերպել Գուրեանի շիրիմին:

Սկսանք լառաջանալ անխօս: Երբ Գուրեանի շիրիմին հասանք, մինակ էինք: Միհրան այնքան տծողոյն էր, որ վախցայ թէ պիտի հիւանդանայ: Մեղմօրէն ձեռքը առի և սեղմեցի դինքը պաշտպանելու համար իր սկարտիքեան դէմ: Յետոյ մոռցայ ամէն ինչ և ուժգնօրէն թափանցունցայ Գուրեանի յիշատակով: Խոր պզտուս մը ինձ դրակց ամբողջովին: Հետզհետէ ուրիշ երիտասարդներ ալ եկան և առաջին բողէներու վարանումէն յետոյ հաղորդակցութիւն հաստատուեցաւ մեր մէջ: Խումբով կանգնած վաղամեակի բանաստեղծի շիրիմին առաջ՝ նոյն տրամադրութեամբ վարակուած, խորատուղեցանք մտածումներու և երազանքի մէջ:

(Զ. Նայեան)

#### 94. ԱՊԱՌՆՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Սահմանաւէտ եղանակի ապառնի ժամանակը կը ցուցնէ ենթակային մէկ գործողութիւնը կամ եղելութիւնը, որ տեղի պիտի ունենայ խօսելէ յետոյ:

Օրինակ՝ պիտի գիտնամ, պիտի սորվիս, պիտի անցնի և այլն:

Սահմանական եղանակի ասպռնի ժամանակը կը կազմուի ըղձական ասպռնիէն՝ պիտի եղանակիչ բառով. օրինակ՝ գրեմ—պիտի գրեմ, մնաս—պիտի մնաս, նային—պիտի նային:

Արեւելահայ գրական լեզուի մէջ այս ձեւը հարկադրական եղանակին կը պատկանի Սահմանականի ասպռնին և անցեալի ասպռնին արեւելահայերէնի մէջ բաղադրեալ են (գրելու եմ, գրելու էի):

պիտի սիրեմ	պիտի խորհիմ	պիտի բարձրանամ
պիտի սիրես	պիտի խորհիս	պիտի բարձրանաս
պիտի սիրէ	պիտի խորհի	պիտի բարձրանայ
պիտի սիրենք	պիտի խորհինք	պիտի բարձրանանք
պիտի սիրէք	պիտի խորհիք	պիտի բարձրանաք
պիտի սիրեն	պիտի խորհին	պիտի բարձրանան

### 95. ԱՆՅՅԱԼԻ ԱՊՍՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Սահմանական եղանակի անցեալի ասպռնի ժամանակը կը ցուցնէ ենթակային մէկ գործողութիւնը կամ եղելութիւնը, որ անցեալ ժամանակակէտի մը համեմատութեամբ յետոյ պիտի կատարուէր:

Օրինակ՝ պիտի մտածէի, պիտի աշխատէին, պիտի վերադառնայիր և այլն:

Այս ժամանակի ձեւերը կը կազմուին ըղձական եղանակի անցեալի ասպռնիէն՝ պիտի եղանակիչ բառով, որ առանձին կը գրուի: Օրինակ՝ գրաւէի—պիտի գրաւէի, իյնար—պիտի իյնար, յաջողէին—պիտի յաջողէին և այլն:

պիտի մաքրէի	պիտի նստէի	պիտի խաղայի
պիտի մաքրէիր	պիտի նստէիր	պիտի խաղայիր
պիտի մաքրէր	պիտի նստէր	պիտի խաղար
պիտի մաքրէինք	պիտի նստէինք	պիտի խաղայինք
պիտի մաքրէիք	պիտի նստէիք	պիտի խաղայիք
պիտի մաքրէին	պիտի նստէին	պիտի խաղային

Վարժութիւն 1. Խոնարհեցէ՛ք բարեւել, յիշել, բացատրել, ծոխլ, կասկածիլ, սկսիլ, դողալ, կարդալ, զգալ բայերը սահմանական եղանակի ասպռնի և անցեալի ասպռնի ժամանակներով:

**Վարժութիւն 2.** Սահմանական եղանակի ներկայ ժամանակի հետեւեալ բայերը դարձուցէ՛ք ապառնի.

Կը դիմեն, կու գան, կը սլարզուի, կը սպասենք, կ'արդիւուի, կը նշանակեն, կը փափաքինք, կը կասկածիս, կը սկսի, կը յուսամ, կը ղգանք:

**Վարժութիւն 3.** Սահմանական եղանակի անցեալի անկատար ժամանակի հետեւեալ բայերը դարձուցէ՛ք անցեալի ապառնի.

Կ'ընէին, կը խօսէր, կը սլատմէր, կը պարունակէին, կու տար, կը ճանչնար, կը բնակէի, կ'երեւային, կ'իյնար, կը վախնայի, կ'արթննար:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ հատուածներէն գտնել սահմանական եղանակի ապառնի և անցեալի ապառնի ժամանակներու բայաձեւերը.

**Ա.**

ՊԻՏԻ ՄՈՌԱՆՆՔ

Պիտի մտռնանք մենք ըզբեղ, մեր վիշտն ու վէրքն ահագին  
Պիտի մոռնանք, այնպէս չէ՞, երբ մեր երկիրը դառնանք,  
Եւ աշխատինք ունկնդրել տակաւ զարնեն իր սրտին,  
Եւ մենք ու ան՝ իրարու քիչ առ քիչ ուժ տանք ու կեանք...

Պիտի մոռնանք անսահման մեր կսկիծին հետ նաև  
Մեր հողիները այրող ատելութիւնն անսահման,  
Ու մեր աչքերը պայծաս ու մեր քայլերը թեթև  
Պիտի ըլլան վերքստին՝ մեր հողին վրայ մայրական...

Մարդոց շարիրք մեղի, ու քու շարիրք, Աստուած իմ,  
Պիտի գայ օր մ'ուր այլեւս պիտի կրնանք չյիշել,  
Պիտի կրնանք մենք նորէն երգել, ժողովը անարգել...

Ո՛հ, դեռ դիտեմ, կանուխ է, զի բախտն է գեռ ոխերիմ,  
Սակայն, ո՛վ Տէր, մօտեցուր այն առաօտն ու նորէն  
Պիտի կրնանք Քեզ օրհնել հողիներուն մեր խորէն:

(Վ. Ռէվէնան)

**Բ.** Բայց գուն ինծի մտիկ ընել շնս ուղեր, ի՞նչ փոյթ, ես  
գարձեալ պիտի ըսեմ ճշմարտութիւնը, որ մինչև կոկորդս եկած  
է, որ զիս պիտի խեղդէ... Այդ գրամը, իմ ժառանգութիւնս քեզի

համար պահած էի և կը խորհէի թէ աստիճան մը արդարութիւն ըրած պիտի ըլլայի, քանի որ հայրդ սնանկացած էր իմ հղբօրս պատճառաւ, որ հտօրէն ալ դժկամակած էր քեզ քովը ընդունիլ, բայց ես պնդեցի, պնդեցի, որովհետեւ խորհեցայ որ բան մը, ներքին ձայն մը քեզի անոր դէմ պիտի հանէր վերջապէս, թէ բնազդով պիտի զգայիր քու հօրդ ու մօրդ թշնամին: Ինչքան գո՞ և հանգիստ պիտի մեռնէի, եթէ քեզ կրկին որր և աղբատ շձգէի իմ ետեւէս:

(Չ. ՆԱՅԼԵԱՆ)

**Գ.** Վերստին իր հոգիին բոլոր թափովը կը սիրէր զայն ու այնքան աւելի անոր հմայքին ներքեւ էր, որ չէր ուզեր մտարե-րել թէ ինչո՞ւ Զարուհի պիտի դար զինքը տեսնելու, թէ ի՞նչ պիտի խնդրէր իրմէ, կը բաւէր որ անիկա պիտի գար ու իր տու-նը պիտի խնկուէր անոր ներկայութիւնով, յետոյ ժամերով մինակ պիտի ըլլային ու իրարու պիտի ըսէին իրենց սրտի ցաւերը... Օ՛հ, այո՛, ինքը պիտի ըսէր թէ աարիներով տանջուած էր կնոջ մը համար, բայց այդ կնոջ անունը չպիտի տար երբէք... Ու ինչպէս հեշտ պիտի ըլլար օրօրուիլ Զարուհիին խօսքերէն:

(Չ. ՆԱՅԼԵԱՆ)

## 96. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը կը ցուցնէ խօսելէ առաջ ենթակային կատարած, վերջացուցած մէկ գործողութիւնը կամ եղելութիւնը:

Օրինակ՝ վճարեր է, դրեր է, բորբոքեր է, խմեր եմ, խօսեր է, խաղացեր ես, մնացեր ենք, անցեր եմ և այլն:

Ես տեսեր եմ Երեւանը:

Անիկա հասկցեր է դասը:

Գիւղը տօնավաճառի երեւոյթ առեր է:

Այս նախադասութեանց մէջ տեսեր եմ, հասկցեր է, առեր է բայաձևերը սահմանական եղանակի վաղակատար ժամանակի բայաձևեր են, որոնք կը ցուցնեն թէ իմ տեսնելս, անոր հասկընալը, գիւղին՝ տօնավաճառի երեւոյթ առնելը կատարուեր, վերջա-դեր է խօսելէ առաջ:

Վաղակատար ժամանակը բաղադրեալ է և կը կազմուի վաղակատար դերրայով (գրեւ, սուրվեւ, կարդացեւ) ու օժանդակ բային ներկայով (եմ, ես, է, եմք, էք, եմք) :

գրեւ	եմ	նստեւ	եմ	կարդացեւ	եմ
գրեւ	ես	նստեւ	ես	կարդացեւ	ես
գրեւ	է	նստեւ	է	կարդացեւ	է
գրեւ	եմք	նստեւ	եմք	կարդացեւ	եմք
գրեւ	էք	նստեւ	էք	կարդացեւ	էք
գրեւ	ենք	նստեւ	ենք	կարդացեւ	ենք

### 97. ԱՆՅԵԱԿԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Սահմանական եղանակի անցեալի վաղակատար ժամանակը կը ցուցնէ գործողութիւն մը կամ եղելութիւն մը, որ կատարուեր, աւարտուեր է անցեալ որեւէ ժամանակակէտէ առաջ :

*Օր ի ն ա կ՛ լսեւ էր, սոլասեր էի, մնացեւ էինք և այլն :*

Գէորգ կարդացեւ և հաւնեւ էր գիրքը : Վարդան նամակ մը գրեւ էր անոր :

Այս նախադասութիւններուն մէջ կարդացեւ էր, հաւնեւ էր, գրեւ էր բայաձեւերը անցեալի վաղակատար ժամանակի բայաձեւեր են :

Անցեալի վաղակատարը կը կազմուի նոյնպէս վաղակատար դերրայով (գրեւ, խօսեւ, խաղացեւ) և օժանդակ բային անցեալով (էի, էիր, էր, էինք, էիր, էինք) :

մտածեւ	էի	աշխատեւ	էի	ջանացեւ	էի
մտածեւ	էիր	աշխատեւ	էիր	ջանացեւ	էիր
մտածեւ	էր	աշխատեւ	էր	ջանացեւ	էր
մտածեւ	էինք	աշխատեւ	էինք	ջանացեւ	էինք
մտածեւ	էիրք	աշխատեւ	էիրք	ջանացեւ	էիրք
մտածեւ	էինք	աշխատեւ	էինք	ջանացեւ	էինք

Արեւելահայերէնի մէջ վաղակատար և անցեալի վաղակատար ժամանակներն աւելի զործածական են : Արեւմտահայերէնը այդ իմաստներուն համար կը նախընտրէ յարակատար և անցեալի յարակատար ժամանակները :

**Վարժութիւն 1.** Խոնարհել պահել, գրել, նկարել, սկսիլ, ժպտիլ, մարիլ, յաջողիլ, յոգնիլ, զգալ, մնալ, խաղալ բայերը սահմանական եղանակի վաղակատար և անցեալի վաղակատար ժամանակներու:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ նախադասութեանց մէջ ներկայ ժամանակի ձևերը դարձուցէ՛ք վաղակատար և անցեալի վաղակատար.

Կը սիրենք մեր հայրենիքը: Վարդան կը նկարէ տուն մը: Աշակերտը դասերը կը սորվի: Մենք երաժշտութիւն կը լսենք: Քամին սաստիկ կը փչէ: Գրիգոր կը վերադառնայ հայրենիք: Համբարձում ոտանաւոր մը կը յօրինէ: Գուք նամակ մը կը գրէք:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ նախադասութեանց մէջ անցեալ կատարեալը դարձուցէ՛ք վաղակատար:

Փնտռեցի գիրքս: Հանդիպեցայ ընկերոջս: Ան թափառեցաւ դաշտերը: Աշակերտները կարդացին գեղեցիկ բանաստեղծութիւն մը: Գարունը եկաւ: Մտները ծաղկեցան:

**Վարժութիւն 4.** Անցեալի անկատարը դարձուցէ՛ք անցեալի վաղակատար.

Կ'ուզէի, կը բնակէին, կ'իջնէր, կ'անցնէր, կ'ափսոսայի, կը ճանչնայիք, կ'արթննար, կը դռնուէր, կ'իմանայի, կը դիմադրէին, կը ներշնչէր, կը կոշուէր, կու տար, կը զլջայինք, կ'իյնար:

**Վարժութիւն 5.** Հետեւեալ հատուածներէն ընդօրինակել վաղակատար և անցեալի վաղակատար ժամանակները.

**Ա.**

ՇԵՐԱՄԻ ՈՐԳԵՐԸ

Անցեալ տարուրնէ եկե՛ր էր իրեն այս փափաքը, որ ամբողջ աշնան ու ձմրան հետզհետէ սաստկացեր, ծաւալեր, անդիմադրելի բղձանք մը դարձեր էր իր մատղաշ երեսակայութեան մէջ, ու այս դարնան շերամի որդ պիտի պահէր: Վարպետ շերամարոյժի մը պէս, դիտէր արգէն ճերմակ պղտիկ հունտերուն հետզհետէ կրելիք կերպարանափոխութիւնները, որոնց առջեւ փոխրերան մնացած էր, իր մանկական պարզ միտքը համայնած, ընկճած: Իրեն հասակակից պղտիկ դրացուհիի մը տունը անցեալ տարի, ամէն օր ներկայ դռնուեր էր այս յամբընթաց ու սքանչելի աճման, ու այն ատեն ատաջադրեր էր ինքն ալ նոյն արարչագործութիւնն ի կատար հանել: Անցեալ տարուրնէ պահեր էր ուրեմն ափ մը հունտ: Թթենիներուն ծլելուն հետ, մէջտեղ հանած էր իր հունտերը: Այն



ի՞նչ ուրախութիւն էր երբ իրիկուն մը իմացուց մեզ թէ որդերը սկսեւր են ելլել հունտերէն:

(Լ. Բաշալեան)

**Բ.** Չորս տարի Ամերիկա մնացեր են: Օր շ'անցնիր որ բանտրներէն մէկուն թևը կամ ոտքը շմնայ մեքենաներու տակ: Իրենցմէ մին քաշեց տարատը և սրունքին վրայ ցոյց տուաւ լայն կտրուածքի մը հետքը: Ամերիկացի բժիշկ մը դարմաներ է դինքը: Գործողութենէն հտըրը, սակայն, վնասուած ոտքը միւս ոտքէն կարճ մնացեր է: Քիչ մը դրամով դարձեր էին Ամերիկացէն: Ու որպէսզի ա՛լ տակի հանդստութիւն կարենային տանիլ իրենց իններուն, յանձն առեր են ձմեռնամուտի այս դմնդակ օրերուն այդ երկար ճամբորդութիւնը ընել նաւին կամուրջին վրայ: Փոթորկալի ծովը տանջեր էր այդ ցամաքի մարդիկը:

(Լ. Բաշալեան)

### 98. ՅԱՐԱՆԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Սահմանական եղանակի յարակատար ժամանակը կը ցուցնէ անցեալի մէջ կատարուած գործողութիւն մը կամ եղելութիւն մը, որ իբրև վիճակ կը յարատեւէ մինչև խօսելու պահը:

Օրի նա կ' նստած եմ, տեսած եմ, գտնուած է, մնացած է, դրած եմ, ելած ենք և այլն:

Պարզապէս հանդստանալու համար նստած ենք:

Այդ տեսակ սրոշում մը չէ տրուած:

Այդ սմէնը իմացած եմ:

Այս նախադասութեանց մէջ նստած ենք, չէ տրուած, իմացած եմ բայաձևերը յարակատար ժամանակի բայաձևեր են:

Յարակատար ժամանակը որ բազադրեալ է, կը կազմուի յարակատար դերբայով (տրուած, իմացած, նստած) և օժանդակ բային ներկայով (եմ, ես, է, ենք, էք, եմք):

Պէտք է նկատի առնել, որ բազմաթիւ բայերու, մասնաւորապէս էջատրական սեռի բայերու յարակատար (և անցեալի յարակատար) ժամանակի առաջին և երկրորդ դէմքերը քիչ գործածական են կամ բոլորովին գործածական չեն:

Օրի նա կ' Դրոշմուած եմ (ես), գործուած եմ (ես), խոստացւած եմ (ես) և նման այլ ձևեր ընթացիկ չեն: Սակայն կան կրաւորական սեռի կարգ մը բայեր, որոնց այս ժամանակը գործածական է. ինչպէս՝ մատնուած եմ (ես), ծածկուած եմ (ես) և այլն:

Արեւելահայերէնի մէջ ներդրածական սեռի բայերու յարակատար և անց-  
եալի յարակատար ժամանակներն անսովոր են. ինչպէս՝ տեսած եմ (ես, է),  
կոտրած էի (էիր, էր), ստացած եմ (ես, է) և այլն: Աւելի դործածական են  
շէզոր սեռի բայերու յարակատար և անցեալի յարակատար ժամանակները:

Յարակատար յամբանակի խոնարհման պատկերն է.

լսած եմ	դրաղած եմ	զգացած եմ
լսած ես	դրաղած էս	զգացած էս
լսած է	դրաղած է	զգացած է
լսած ենք	դրաղած ենք	զգացած ենք
լսած էք	դրաղած էք	զգացած էք
լսած են	դրաղած են	զգացած են

### 99. ԱՆՅԵԱՎԻ ՅԱՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Սառնանտիան եղանակի անցեալի յարակատար ժամանակը կը  
ցուցնէ կատարուած գործողութիւն մը կամ եղելութիւն մը, որ իբրեւ  
վիճակ կը յարատեւէ մինչեւ անցեալ ժամանակ մը:

Օրինակ՝ Բարկացած էր, խոնուած էին, ինկած էիր, նստած  
էիք և այլն:

Սկսած էր ուշադրութիւն դրանք:

Այդ ենթադրական խօսքին վրայ ամէն մարդ մէյմէկ յաւելում  
ըրած էր:

Գիտե՞ս թէ ինչ բանի համար գացած էին հոն:

Այս նախադասութեանց մէջ սկսած էր, ըրած էր, գացած էին  
բայածեւերը անցեալի յարակատար ժամանակի բայածեւեր են:

Անցեալի յարակատար ժամանակը կը կազմուի յարակատար  
դերբայով (բերած, ստարած, սորված, բորբոսած, մնացած, կար-  
դացած) և օժանդակ բային անցեալով (էի, էիր, էր, էինք, էիք, էին):

լսած էի	դրաղած էի	զգացած էի
լսած էիր	դրաղած էիր	զգացած էիր
լսած էր	դրաղած էր	զգացած էր
լսած էինք	դրաղած էինք	զգացած էինք
լսած էիք	դրաղած էիք	զգացած էիք
լսած էին	դրաղած էին	զգացած էին

**Վարժութիւն 1.** Հետեւեալ բայերը խոնարհել սահմանական եղանակի յարակատար և անցեալի յարակատար ժամանակներով.

Ուզել, արդիւիւել, հաւարել, ջլատահիլ, յողնիլ, հանդիսլիլ, մնալ, գողալ, սպառնալ:

**Վարժութիւն 2.** Անցեալ կատարեալ ժամանակի ձևերը դարձնել յարակատար.

Յանձնեցի, շարունակեցիր, ասպարեց, տիրեցինք, նայեցաւ, անցայ, առիր, ծոնցաւ, կասկածեցաւ, սկսայ, երկնցաւ:

**Վարժութիւն 3.** Անցեալի անկտտար ժամանակի ձևերը դարձնել անդեալի յարակատար.

Կ'ընէին, կը խօսէր, կը սլատմէր, կը պարունակէին, կը զբաղէին, կը յափշտակէին, կու տայի, կը սկսէինք, կը բնակէր, կ'երեւար, կը բազկանար, կը վախնային, կ'ափսոսայի, կ'արթննային, կը թռչէի:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ հատուածներէն ընդօրինակել սահմանական եղանակի յարակատար և անցեալի յարակատար ժամանակներն ու բացատրել անոնց կազմութիւնը.

**Ա.** Անսպասելի կերպով ծանօթացայ տիկին Սիրանոյշ Դանիէլեանի հետ: Իր մասին շատ լսած էի և իր բանաստեղծութեանց հատորը սնարի դիրք մը եղած էր ինձ համար: Շատ բան չէ դրած, և իր ստանաւորները հազուադէպ կերպով կ'երեւան, բայց ամէն անգամուն անոնք մասնաւոր և շատ անձնական շեշտ մը կը յայտնարերեն: Անտարակուսելի է, որ շատ աւելի բան կայ իր մէջ, բան արսույտյտած է:

(Չ. Ստայեան)

**Բ.** Ո՞րն է այս երկիրը: Արդէք եղած չեմ հոս, բայց անծանօթ չէ ան ինձի: Տեսնելուս կը հանչնամ դայն իսկոյն, սիրտս անոր կ'երթայ մէկէն: Երկար երողանքներու մէջ, երեւակայութիւնը անոր տարփոտ հարտարապետը եղած է, մտքին յարածամ փայլփայլանքները կ'երպուտրած, սրտին խանդուն ըզձանքները դայն դաստակերտած են ինձի համար, տարտամ ու որոշ միանգամայն: Ես հոս մազլցած չեմ այդ լիոներն ի վեր, աղբիւրին մէջ չեմ լողցած, եկեղեցիին բակը իմ լատղերս չէ տեսած, դաշտերուն մէջ ծաղիկ չեմ քաղած, ու այդ տանիրները իմ խոնջ մարմինս չեն պատսպարած:

(Լ. Ռաշալեան)

100. ԲԱՂԱԳՐԵԱԿ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Ստիմանական եղանակի բաղադրեալ ապառնին կը ցուցնէ խօսելու պահէն յետոյ հաստատաբար կատարուելիք գործողութիւն մը:

Օրիինակ՝ գրելու եմ, սորվելու ես, աշխատելու է, կարդալու էք և այլն:

Այս դիրքը կարդալու ես դուն:

Վարդանը գոց սորվելու է այդ գողտրիկ բերթուածը:

Խրատներու համաձայն շարմելու ես:

Այս նախադասութեանց մէջ կարդալու ես, սորվելու է, շարժելու ես բայաձևերը բաղադրեալ ապառնի ժամանակի բայաձևեր են:

Բաղադրեալ ապառնին կը կազմուի ապառնի դերբայով (գրելու, յիշելու, կարդալու) և օժանդակ բային ներկայով (եմ, ես, է, ենք, էք, են): Այս ժամանակը համեմատաբար քիչ գործածական է:

լսելու եմ	դբաղելու եմ	ղգալու եմ
լսելու ես	դբաղելու ես	ղգալու ես
լսելու է	դբաղելու է	ղգալու է
լսելու ենք	դբաղելու ենք	ղգալու ենք
լսելու էք	դբաղելու էք	ղգալու էք
լսելու են	դբաղելու են	ղգալու են

101. ԲԱՂԱԳՐԵԱԿ ԱՆՅԵԱԿԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Ստիմանական եղանակի բաղադրեալ անցեալի ապառնին կը ցուցնէ գործողութիւն մը, որ պիտի կատարուէր անցեալ ժամանակէ մը յետոյ:

Օրինակ՝ գրելու էի, վաղելու էիր, տեսնելու էին և այլն:

Իմացածը պատմելու էր, թէ ուղղակի Արամին յայտնելու էր:

Գրիգորը վաղուց վերանորոգելու էր իր տունը:

Մենք երթալու էինք գիւղ:

Այս նախադասութեանց մէջ պատմելու էր, յայտնելու էր, երթալու էինք բայաձևերը բաղադրեալ անցեալի ապառնի ժամանակի բայաձևեր են:

Քաղաղորեալ անցեալի ապառնի ժամանակը կը կազմուի ապառնի գերբայով (լսելու, գրելու, նստելու, խօսելու, խաղալու, կարդալու) և օժանդակ բային անցեալով (էի, էիր, էր, էինք, էիք, էին):

Այս ժամանակը նոյնպէս քիչ կը գործածուի:

լսելու էի	դրաղելու էի	խաղալու էի
լսելու էիր	դրաղելու էիր	խաղալու էիր
լսելու էր	դրաղելու էր	խաղալու էր
լսելու էինք	դրաղելու էինք	խաղալու էինք
լսելու էիք	դրաղելու էիք	խաղալու էիք
լսելու էին	դրաղելու էին	խաղալու էին

Քաղաղորեալ ապառնի և քաղաղորեալ անցեալի ապառնի ժամանակները իրենց իմաստով զգալապէս տարբեր են արեւելահայերէնի համապատասխան ժամանակներէն և մօտաւորապէս կ'արտայայտեն արեւելահայերէնի հարկադրական եղանակի երկու ժամանակներուն իմաստը (լսելու եմ—սլիտի լսեմ, լսելու—էի, սլիտի լսէի):

**Վարժութիւն 1.** Կաղմել հետեւեալ բայերուն քաղաղորեալ ապառնի և անցեալի ապառնի ժամանակները.

Պատմել, դտնել, տեսնել, աշխատիլ, սխալիլ, աղատիլ, զարմանալ, ստանալ:

**Վարժութիւն 2.** Յաջողել, փոխել, բորբոքիլ, մոռնալ բայերը խոնարհել սոսմանական ապառնի, անցեալի ապառնի և քաղաղորեալ ապառնի, քաղաղորեալ անցեալի ապառնի ժամանակներով:

**Վարժութիւն 3.** Ընդօրինակել քաղաղորեալ ապառնի և անցեալի ապառնի ժամանակները.

Այս վայրկեանէս աշխատէ երաշխատը մը գտնել, եթէ ոչ այս տունը մտնելու շես (1): Եթէ յաջողիմ իրեն հետ համաձայնութիւն մը գոյացնել, աղէկ. եթէ ոչ՝ դատիդ պաշտպանութիւնն ստանձնելու եմ և շարունակելու խաղալ մեր խաղերը (2): Գուք այժմէն վժտուհ ըլլալու էք, որ հասարակաց կարծիքը մեզի նպաստաւոր սլիտի ըլլայ (3): Կարծես թէ քիչ մը սիրտս բացուեցաւ ա՛հ, հոս ըլլալու էիք և տեսնէիք ինչն՝ պատահեցան (4): Գիտնալու էիք, թէ դարուս ոգին կը դատապարտէ անձնականութիւն վիրատրելը (5): Ո՞վ է գիշերուան այս ուշ ատենին որ ճրագ կը վառէ սա անտառին մէջ, ուր խաւարն իր արհաւիրքը վաղցուցեր

է և ուր կաղնին, մացառները մինակ ըլլալու էին (6): Գուն քուտղուդ խօսք հասկցնելու էիր (7): Երէկ գիշեր տեսնելու էիր խեղճն... դիմանալու բան չէք... ժամերով լացաւ (8):

**Վարժութիւն 4.** Գտնել սահմանական եղանակի սլարդ և բաղադրեալ ժամանակները և ընդօրինակել դատ սինականերու մէջ.

**Ա.** Մաղերն ալետուր ու սլարթիւ հասակը կորացած, այլ այդ մաղերը դեռ անխորշոմ ու լայն ճակտի մը վրայ ինկեր էին, ու քայլերը կրնային համեմատիլ գարնան ատուները անտառի մէջ սուրացող եղնիկի մը քայլերուն, ճկուն ու դիրաթիւք: Մերութիւնը իր փառքը տուած էր անոր, առանց հոսելու երակներուն մէջ այն տրտմադին թուութիւնը, որ մեծ դագարէն առաջ կու գայ մարդուս յիշեցնել յաւերժական հանգստեան մօտենալը:

— Մշտնջենական երիտասարդն եմ,— կը մտածէր ինքնիրեն ու կը բաւէր, ու քանի կը մօտենար իր հայրենի քաղաքին, աչքերը աւելի վառ, աստուածային հանճարի ցոլբովը կը շողային:

Քառսուն տարիներու կարօտը կ'ուտեցնէր կուրծքը, և ինք վէս ու գոտոզ, կը շարունակէր ճամբան: Իրատուք ալ ունէր: Այդչափ տարիներ առաջ մեկնած էր մէկ օր այդ բուրաստաններուն մէջ սլահուած քաղքէն, դէսլի կեանքի շոր ու վհատեցնող իրականութիւնները, արտամաղին քնարէ մը դատ առանց ընկերի, ու ողջունած ամէն ծովերու ափերը: Ինքը մինակը հարթած էր ճամբան ամէն օր դէսլի աւելի լուսաշող բարձունքներ: Մանկան մը ճիշերով սկսած էր, ընտանեղուրկ ու լքուած հոգիի մը դաղաղումներով, այլ ժամանակը ձև տուած էր այդ անկերպարան ճիշերուն ու մեղամաղձոտ բանաստեղծը տեսնու էր օրին մէկը, որ աստուածներու դալարագեղ դափնին կը բոլորուէր իր լայն ճակտին շուրջ:

(Ռ. Որբերեան)

**Բ.** Ապակեպատ ծաղկանոցին մէջ լեցուն  
Բաղարները շարուած էին քովէ քով,  
Շուշան ու վարդ կը ծաղկէին գոյնզգոյն,  
Թէև աշունն հասած էր ցուրտ երկինքով:

Արեն հագիւ ամպերէն վար կը մաղուէր,  
Քամին կու լար իր տխրահունչ մեղեդին,  
Կը մօտենար ձմեռը ցուրտ, ալեհեր,  
Սաղկանց հոգին տանելու մութ անդունդին:

Այլ այդ սիրուն, արուեստական դարնան մէջ  
Կը ժպտէին վարդ, մանիշակ իրարու,  
Կը հեղնէին սարսուռներով բիր, անվերջ,  
Դուրսը հեծող փոթորիկը ահարկու:

Այդ ծիծաղկոտ ծաղիկներուն դրացի,  
Անկիւնի մը մենութեան մէջ անընկեր,  
Դալկատերեւ նոճետունկ մը դիտեցի,  
Լերան ծնունդ, զոր բախտը հոգ կը նետէր:

Նկուն դիրքով, անշարժ ու լուռ մահուան պէս,  
Շահատն հակած ծաղկանոցի փեղկերուն,  
Ստար հոգի տրտում դաւակն էր կարծես,  
Որ քշուած էր հոսանքէ մը մոլորուն:

(Ռ. ՈՐԵՐԷԱՆԸ)

## 102. ՀՐԱՄԱՅՈՒՆ ԵՎ ԱՆՆԱԿ

Հրամայական եղանակը կը ցուցնէ գործողութեան կատարման  
իրաման, կամք, թելադրանք, յորդոր:

*Օրինակ՝*

Հայր իմ, օրհնէ՛, ժամը հասաւ, սլիտ՝ երթամ:

Բսէ՛, իմ կոունկ:

Ա՛խ, զնա՛, բաղէ՛, դափնի մը կտուցիդ:

Քալէ՛, աղջի՛կս, քալէ՛:

Սուրվեցո՛ւր ինձ, ով հայրենի իմ մուսան:

Մշակ, ցանէ՛, յանուն տանդ սեղանին:

Լեցո՛ւր ախօսն, յորդէ՛ հերկերը բերրի:

Այս նախադասութեանց մէջ օրհնէ՛, քսէ՛, զնա՛, քալէ՛, սուրվե-  
ցո՛ւր, ցանէ՛, լեցո՛ւր, յորդէ՛ բայաձևերը հրամայական եղանակի  
բայաձևեր են:

Հրամայական եղանակը դրական կամ հաստատական խոնարհ-  
ման մէկ ձև ունի միայն: Ան ունի միայն երկրորդ դէմք և երկու  
թիւ՝ եղակի ու յոգնակի:

Հրամայականի եղակին կը կազմուի **Ե** և **Խ** խոնարհման բա-  
յերու անորոշ դերբայի հիմքին վրայ **Է** աւելցնելով (դրէ՛, կանչէ՛,  
վաղէ՛, մտածէ՛, խօսէ՛, լաջողէ՛, հանդիպէ՛), իսկ **Ս** խոնարհման  
բայերու անորոշ դերբայի հիմքին վրայ **ա** աւելցնելով (կարդա՛,

խաղա՛, մնա՛): Յոգնակին կը կազմուի անցեալ կատարեալի հիմ-  
քին վրայ **է.ք** աւելցնելով (գրեցէ՛ք, կանչեցէ՛ք, խօսեցէ՛ք, յա-  
ջողեցէ՛ք, կարգացէ՛ք, խաղացէ՛ք<sup>1</sup>): Հրամայական եղանակով խո-  
նարհուած բայերու վերջին վանկը ուժեղ կը շեշտուի:

Յարադիր բայերու հրամայականի շեշտը կ'իյնայ անուանական  
բաղադրիչին վրայ. ինչպէս՝ կա՛նդ առ, նե՛րս եկուր, դո՛ւրս ելիր,  
վա՛ր բեր, ցո՛յց տուր:

Ե ղ ա կ ի

Յ ո գ ն ա կ ի

սլատմէ՛

սլատմեցէ՛ք

խօսէ՛

խօսեցէ՛ք

խնդա՛

խնդացէ՛ք

**Վարժութիւն 1.** Հետեւեալ բայերը խոնարհել հրամայական  
եղանակով.

Քալել, արշաւել, ճախրել, մազլցիլ, հոսիլ, աշխատիլ, սուրալ,  
խաղալ:

**Վարժութիւն 2.** Ո՛ր խոնարհման կը սլատկանին հրամայա-  
կան եղանակով խոնարհուած հետեւեալ բայերը (գրել իւրաքան-  
չիւրին անորոշ դերբայք):

Գրէ՛—գրեցէ՛ք, սրէ՛—սրեցէ՛ք լուսաւորէ՛—լուսաւորեցէ՛ք,  
փայլէ՛—փայլեցէ՛ք, սլտըսէ՛—սլտըտեցէ՛ք, կանդնէ՛—կանդնեցէ՛ք,  
զգա՛—զգացէ՛ք:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ ոտանաւորներէն ընդօրինակել հրա-  
մայական եղանակի ձեւերը.

**Ա.** Աւլէ՛, ծեր, աւլէ՛, աշխատէ՛ տրուն,  
Զմեռուան ցուրտին, ամառուան տաքուն,  
Աւլէ՛ մարդկութեան աղտը ցնցոտի,  
Ու գիտցի՛ր որ միշտ սլիտի աղտոտի...  
Գիտցի՛ր որ հացդ է աւելի մարուր,  
Քան ջոշին կարմիր հացը թաքթաբուր:

Ու սորվէ՛ ատել նոզկանքով անհուն  
Անոնք որ «փրկչի» կը կրեն անուն

<sup>1</sup> Ածանցաւոր բայերու կազմութեան առանձնայատկութիւնները ներկայա-  
ցուցած ենք առանձին (էջ 196 և շարունակութիւն):



Ու ճոխ խօսքերով տունըդ կը բանդեն.  
Սորովեցո՛ւր տղոցդ ատել արդանգէն՝  
Քաղաքագէտները ամէն գոյնի,  
Որոնք կը սպաննեն բեզ առանց թոյնի:

(Ռ. Սևակ)

Բ. է՛յ աղօրիք, դարձի՛ր, դարձի՛ր,  
Նստած կանանչ խորը ձորին,  
Աղաղակէ՛ երզրդ խորին  
Դէպի լուսնակն արծաթածիր:

է՛յ աղօրիք, բանտուած մրրիկ  
Սառերուն մէջ.— Աղա՛, աղա՛,  
Փրփուր խմէ՛, ալիւր տեղա՛,  
Քարէ կուրծքէդ տեղա՛ բարիք:

(Դ. Վարուժան)

### 103. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ըղձական եղանակը կը ցուցնէ գործողութեան կատարման իղձ,  
ցանկութիւն, տենչանք:

Օրինակ՝

Երբանք, երբանք, Հայուհի:

Գուցէ զտնես զբան առաջ մայրս զբաղած կկոցին:

Այս նախադասութեանց մէջ երբանք, զտնես բայածները  
ըղձական եղանակի բայածներ են:

Մ ա ն օ բ ու ի լ ւ ւ ւ ւ . Այս եղանակը կը կոչուի նաև ստորադասական,  
քանի որ ան յաճախ կը գործածուի ստորադաս (երկրորդական) նախադասու-  
թեանց մէջ:

Ըղձական եղանակին հետ երբեմն կը գործածուի քող բառը,  
որ քողով բային հրամայականի կղակին է:

Թո՛ղ ծաղկին բոլոր ծաղիկները:

Խաղաղութեան աղանին քո՛ղ սաւառնի աշխարհի վրայ:

Ըղձական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անց-  
Լալի ապառնի:

Ըղձական եղանակի ապառնի ժամանակը կը ցուցնէ ենթակային մէկ գործողութիւնը կամ եղելութիւնը, որուն կատարումը ցանկայի, փափաքելի է:

*Օրինակ՝ շատ կ'ուզեմ, որ օր մը տեսնեմ հայրենիքս:*

Ըղձականի ապառնին կը կազմուի անորոշ դերբայի հիմքին վրայ ըստ խոնարհումներու (լծորդութիւններու) հետեւեալ վերջատրութիւններն աւելցնելով:

	Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
	Լմ    Լնք	իմ    ինք	ամ    անք
	Լս    էք	իս    իք	աս    արք
	է    Լն	ի    ին	այ    ան
	պատմել	խօսիլ	խաղալ
Ե զ ա կ ի	պատմեմ պատմես պատմէ	խօսիմ խօսիս խօսի	խաղամ խաղաս խաղայ
Յ ո գ ն ա կ ի	պատմենք պատմէք պատմեն	խօսինք խօսիք խօսին	խաղանք խաղաք խաղան

Ըղձական եղանակի ապառնի և անցեալի ապառնի ժամանակներէն կը կազմուին սահմանական եղանակի ներկայ, անցեալի անկատար, ապառնի, անցեալի ապառնի ժամանակները կը, սլիտի եղանակիչներով:

105. ԱՆՑԵԱԼԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Ըղձական եղանակի անցեալի ապառնի ժամանակը կը ցուցնէ ենթակային մէկ գործողութիւնը կամ եղելութիւնը, որուն կատարումը ցանկայի եղած է անցեալի մէջ:

Յ ր ի ն ա կ՝

Սա իրիկունն ըլլայի ես...

Ու լսէի ես ցայգուն

Քո՛վը կրակին ճարճատուն

Նրզն իրիկուան եկուորին:

Կանգնէի քովը ճամբուն...

Ու քերթողին տաղէս վանկեր ես տայի:

Այս նախադասութեանց մէջ ըլլայի, լսէի, կանգնէի, տայի բայաձևերը ըղձական եղանակի անցեալի ասպանի ժամանակի բայաձևեր են:

Անցեալի ասպանի ժամանակը կը կազմուի դարձեալ անորոշ դերբայի հիմքէն՝ աւելցնելով հետեւեալ վերջաւորութիւնները.

**Ե, Ի** խոնարհումներ

**Ա,** խոնարհում

էի էինք

այի այինք

էիր էիրք

այիր այիրք

էր էին

ար ային

Ինչպէս այս վերջաւորութիւններէն կ'երևի, **Ի** խոնարհման պատկանող բայերը անցեալի ասպանի խոնարհման ժամանակ **ե** խոնարհիչ կը ոտանան՝ **ե** խոնարհման բայերուն պէս (խօսիլ—խօսէի, խորհիլ—խորհէի, նստիլ—նստէի, աշխատիլ—աշխատէի ե այլն):

Յ զ ա կ ի

պատմէի

խօս էի

խաղ այի

պատմէիր

խօս էիր

խաղ այիր

պատմէք

խօս էք

խաղ ար

Յ ո պ ն ա կ ի

պատմէինք

խօսէինք

խաղ այինք

պատմէիրք

խօսէիրք

խաղ այիրք

պատմէին

խօս էին

խաղ ային

**Վարժութիւն 1.** Հետեւեալ ոտանաւորէն ընդօրինակել ըղձ-ձական եղանակի ասպանի ժամանակի ձևերը.

Անի մը ցորեան փերուդ մէջ

Թո՛ղ լեցընեմ, կտրիճ Որդիս,

Կտրին՝ Որդիս, դօտին մէջքիս.  
Թո՛ղ մաճակալ բաղուկներէդ  
Քսան ցուլի արինն անցնի,  
Եւ հղենի քու հասակէդ  
Քսան տունի սինը կանգնի.  
Ու երբ թիւովը մատերուդ  
Սերմանես քու սերմընցուն՝  
Հնձես թիւովն աստղերուն:

Ափ մը ցորեան գլուխդ ի վար  
Թո՛ղ որ թափեմ, Թոռնիկ սիրուած,  
Թոռնիկ սիրուած, ցուպըս ծաղկած.  
Թո՛ղ ճակատիդ վրայ դրուի  
Հարիւր սաղմոս իմաստութեան,  
Եւ ուսերուդ վրայ գըրուի  
Տապանակը ըզդաստութեան.  
Ու երբ հօտիդ օր մ'այցեցես՝  
Թո՛ղ քու ափիդ գարիին  
Հաղար ոչխա՛ր երկարին:

(Գ. Վարուժան)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ ոտանաւորէն ընդօրինակել ըզ-  
ձական եղանակի անցեալի ապանի ժամանակի ձեւերը.

ՀՈՎՐ

Ալիքներուն վրայ ոստոստող հովն ըլլայի,  
Ու ջուրերու խուլ մոռնչին մէջ ամայի՝  
Ձկնորսներու ականջն ի վար փսփսայի  
Սիրուած երգեր, քաղցրութիւնով օծուն բառեր:

Հովն ըլլայի վատարներուն վրայ պարանցիկ,  
Ու ձիւնին մէջ սառող մարդուն համար լայի.  
Հովն ըլլայի հողվըրտիբին մէջ երգեցիկ  
Ու ծծէի տակաւ դաղտնիքն եւ Անդիս:

Չմեռներուն եւ ամպավար հովն ըլլայի  
Եւ անճըրագ խուղերու ճիչն յորձքիս ձուլած,  
Անցորդներու հողտոյն վրայ փշրուէի  
Իբրեւ ալիք: Ու տանէի հոն կոծն ու լաց...

(Մ. Մեծարեւոյ)

**Վարժութիւն 3.** Հետեւեալ բայերը խոնարհել ըղձական եղանակով.

Երգել, դտնել, յանձնել, իջնել, կերտել, քանդակել, նստիլ, հանդիպիլ, դպչիլ, թոշիլ, սկսիլ, երթալ, աղալ, դառնալ, ղարմանալ, խոստանալ:

**Վարժութիւն 4.** Փակագիծերու մէջ եղած անորոշ դերբայները վերածել ըղձական եղանակի համադատասխան բայածեւերու.

Ես դաս (սորվիլ): Անիկա մեղի նամակ (գրել): Եթէ դուն (լսել) անոր նուազը, պիտի (ղմայլիլ): Ես (նստիլ) ամթոռին:

**Վարժութիւն 5.** Կաղմել հետեւեալ բայածեւերուն ըղձական եղանակի ժամանակները.

Կը նայի, կ'ըլլաս, պիտի վաղէին, փայփայեցիր, բաժնուեցան, կ'երթայ, կ'անցնիմ, մոռցեր էի, կը հասնիմ, ժողված եմ, վառեցիր:

## 106. ԿԱՆՈՆԱԻՈՐ ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Ե խոնարհում

Ի խոնարհում

Սահմանական եղանակ

Ն ե ր կ ա յ ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ռ գ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ռ գ ն ա կ ի
կը պատմեմ	կը պատմենք	կը խօսիմ	կը խօսինք
կը պատմես	կը պատմէք	կը խօսիս	կը խօսիք
կը պատմէ	կը պատմեն	կը խօսի	կը խօսին

Ա ն ց ե ա լ ի ա ն կ ա տ ա ռ ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ռ գ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ռ գ ն ա կ ի
կը պատմէի	կը պատմէինք	կը խօսէի	կը խօսէինք
կը պատմէիր	կը պատմէիք	կը խօսէիր	կը խօսէիք
կը պատմէր	կը պատմէին	կը խօսէր	կը խօսէին

Ա ն ց ե ա լ կ ա տ ա ռ ե ա լ ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ռ գ ն ա կ ի	Ի ղ ա կ ի	Յ ռ գ ն ա կ ի
պատմեցի	պատմեցինք	խօսեցայ	խօսեցանք
պատմեցիր	պատմեցիք	խօսեցար	խօսեցարք
պատմեց	պատմեցին	խօսեցաւ	խօսեցան

Ա. սյ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
սլիտի պատմեմ	սլիտի պատմենք	սլիտի խօսիմ	սլիտի խօսինք
սլիտի պատմես	սլիտի պատմէք	սլիտի խօսիս	սլիտի խօսիրք
սլիտի պատմէ	սլիտի պատմեն	սլիտի խօսի	սլիտի խօսին

Ա. ն ց ե ա լ ի ա սյ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
սլիտի պատմէի	սլիտի պատմէինք	սլիտի խօսէի	սլիտի խօսէինք
սլիտի պատմէիրք	սլիտի պատմէիրք	սլիտի խօսէիրք	սլիտի խօսէիրք
սլիտի պատմէր	սլիտի պատմէին	սլիտի խօսէր	սլիտի խօսէին

Վ ա ղ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
սլատմեր եմ	սլատմեր ենք	խօսեր եմ	խօսեր ենք
սլատմեր ես	սլատմեր էք	խօսեր ես	խօսեր էք
սլատմեր է	սլատմեր են	խօսեր է	խօսեր են

Ա. ն ց ե ա լ ի վ ա ղ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
սլատմեր էի	սլատմեր էինք	խօսեր էի	խօսեր էինք
սլատմեր էիրք	սլատմեր էիրք	խօսեր էիրք	խօսեր էիրք
սլատմեր էր	սլատմեր էին	խօսեր էր	խօսեր էին

Յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
սլատմած եմ	սլատմած ենք	խօսած եմ	խօսած ենք
սլատմած ես	սլատմած էք	խօսած ես	խօսած էք
սլատմած է	սլատմած են	խօսած է	խօսած են

Ա. ն ց ե ա լ ի յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ն ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
սլատմած էի	սլատմած էինք	խօսած էի	խօսած էինք
սլատմած էիրք	սլատմած էիրք	խօսած էիրք	խօսած էիրք
սլատմած էր	սլատմած էին	խօսած էր	խօսած էին

Ռ ա ղ ա ղ ր ե ա լ ա ս ւ ա ռ ը ի ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի
սլատմելու եմ	սլատմելու ենք	խօսելու եմ	խօսելու ենք
սլատմելու ես	սլատմելու էք	խօսելու ես	խօսելու էք
սլատմելու է	սլատմելու են	խօսելու է	խօսելու են

Բ ա ղ ա ղ ր ե ա լ ա ն ց ե ա լ ի ա ս ւ ա ռ ը ի ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի
սլատմելու էի	սլատմելու էինք	խօսելու էի	խօսելու էինք
սլատմելու էիր	սլատմելու էիք	խօսելու էիր	խօսելու էիք
սլատմելու էր	սլատմելու էին	խօսելու էր	խօսելու էին

Հրամայական եղանակ

Եզակի սլատմէ՛	խօսէ՛
Յոգնակի սլատմեցէ՛ք	խօսեցէ՛ք

Ըղծական եղանակ

Ա ս ւ ա ռ ը ի ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի
սլատմեմ	սլատմենք	խօսիմ	խօսինք
սլատմես	սլատմէք	խօսիս	խօսիք
սլատմէ	սլատմեն	խօսի	խօսին

Ա ն ց ե ա լ ի ա ս ւ ա ռ ը ի ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ռ զ ն ա կ ի
սլատմէի	սլատմէինք	խօսէի	խօսէինք
սլատմէիր	սլատմէիք	խօսէիր	խօսէիք
սլատմէր	սլատմէին	խօսէր	խօսէին

Սահմանական եղանակ

Ն ե Ր կ ա յ ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
կը խաղամ	կը խաղանք	կը թողում	կը թողունք
կը խաղաս	կը խաղաք	կը թողուս	կը թողուք
կը խաղայ	կը խաղան	կը թողու	կը թողուն

Ա ն ց ն ա լ ի ա ն կ ա տ ա Ր ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
կը խաղալի	կը խաղալինք	կը թողուի	կը թողուինք
կը խաղալիր	կը խաղալիք	կը թողուիր	կը թողուիք
կը խաղար	կը խաղալին	կը թողուր	կը թողուին

Ա ն ց ն ա լ կ ա տ ա Ր ե ա լ ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
խաղացի	խաղացինք	թողուցի	թողուցինք
խաղացիր	խաղացիք	թողուցիր	թողուցիք
խաղաց	խաղացին	թողուց	թողուցին

Ա. յ կ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
պիտի խաղամ	պիտի խաղանք	պիտի թողում	պիտի թողունք
պիտի խաղաս	պիտի խաղաք	պիտի թողուս	պիտի թողուք
պիտի խաղայ	պիտի խաղան	պիտի թողու	պիտի թողուն

Ա ն ց ն ա լ ի ա ս յ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
պիտի խաղալի	պիտի խաղալինք	պիտի թողուի	պիտի թողուինք
պիտի խաղալիր	պիտի խաղալիք	պիտի թողուիր	պիտի թողուիք
պիտի խաղար	պիտի խաղալին	պիտի թողուր	պիտի թողուին

Վ ա դ ա կ ա տ ա Ր ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
խաղացեր եմ	խաղացեր ենք	թողեր եմ	թողեր ենք
խաղացեր ես	խաղացեր էք	թողեր ես	թողեր էք
խաղացեր է	խաղացեր են	թողեր է	թողեր են



**Ա. Խոնարհում**

**ՌԻ Խոնարհում**

**Ա. Ե ց ե ա լ ի վ ա յ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ**

<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>	<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>
խաղացեր էի	խաղացեր էինք	թողեր էի	թողեր էինք
խաղացեր էիր	խաղացեր էիրք	թողեր էիր	թողեր էիրք
խաղացեր էր	խաղացեր էին	թողեր էր	թողեր էին

**Յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ**

<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>	<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>
խաղացած եմ	խաղացած ենք	թողած եմ	թողած ենք
խաղացած ես	խաղացած էք	թողած ես	թողած էք
խաղացած է	խաղացած են	թողած է	թողած են

**Ա. Ե ց ե ա լ ի յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ**

<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>	<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>
խաղացած էի	խաղացած էինք	թողած էի	թողած էինք
խաղացած էիր	խաղացած էիրք	թողած էիր	թողած էիրք
խաղացած էր	խաղացած էին	թողած էր	թողած էին

**Բ ա դ ա դ ր ե ա լ ա ս յ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ**

<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>	<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>
խաղալու եմ	խաղալու ենք	թողելու եմ	թողելու ենք
խաղալու ես	խաղալու էք	թողելու ես	թողելու էք
խաղալու է	խաղալու են	թողելու է	թողելու են

**Բ ա դ ա դ ր ե ա լ ա ն ց ե ա լ ի ա ս յ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ**

<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>	<b>Ն զ ա կ ի</b>	<b>Յ ո գ ն ա կ ի</b>
խաղալու էի	խաղալու էինք	թողելու էի	թողելու էինք
խաղալու էիր	խաղալու էիրք	թողելու էիր	թողելու էիրք
խաղալու էր	խաղալու էին	թողելու էր	թողելու էին

**Հ ր ա մ ա յ ա լ լ ա ն ե դ ա ն ա կ**

<b>Ն զ ա կ ի</b>	խաղա՛	թո՛ղ
<b>Յ ո գ ն ա կ ի</b>	խաղացե՛ք	թողուցե՛ք

Ըղձական եղանակ

Ա. պ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
խաղամ	խաղանք	թողում	թողունք
խաղաս	խաղաք	թողուս	թողուք
խաղալ	խաղան	թողու	թողուն

Ա. ն ց ե ա լ ի ա պ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
խաղալի	խաղայինք	թողուի	թողուինք
խաղայի:	խաղայիք	թողուիր	թողուիրք
խաղար	խաղային	թողուր	թողուին

107. ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՐԱՂԱԳՐՆԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Բացի բուն բաղադրեալ ժամանակներէն, հայերէնի մէջ կան նաեւ երկրորդական բաղադրեալ ժամանակներ, որոնք կը կազմուին յարակաւոր և ապառնի դերբայներով ու ըլլալ բայով:

Օրինակ՝

Վաղը, երբ քովս գաս, ես արդէն պատրաստած կ'ըլլամ շարդրութիւնս:

Ամէն անգամ, որ գրելու ըլլաս, յիշէ՛ ուղղադրական կանոնները:

Կարծեմ թէ տեղ մը տեսած ըլլալու եմ էֆէնտին:

Խոնարհման ատեն կը փոփոխուի միայն ըլլալ բայը: Ասոնց ժամանակը կ'որոշուի խոնարհուող բային դերբայով և ըլլալ բային խոնարհուած ձեւով:

Օրինակ՝ գրած կ'ըլլամ բայաձեւը կազմուած է գրել բային յարակաւոր դերբայէն և ըլլալ բային ներկայ ժամանակէն, ուստի կը կոչուի սանմանական եղանակի յարակաւոր բաղադրեալ ներկայ ժամանակ:

Գրելու ըլլայի բայաձեւը կազմուած է գրել բային ապառնի դերբայէն և ըլլալ բային ըղձական եղանակի անցեալի ապառնի

ժամանակէն, ուստի կը կոչուի ըղծական եղանակի ապառնի բաղադրեալ անցեալի ապառնի ժամանակ:

Բոլոր եղանակներն ալ ունին երկրորդական բաղադրեալ ժամանակներ:

### Մահմանական եղանակ

գրած կ'ըլլամ      գրած կ'ըլլանք      գրելու կ'ըլլամ      գրելու կ'ըլլանք  
գրած կ'ըլլաս      գրած կ'ըլլաք      գրելու կ'ըլլաս      գրելու կ'ըլլաք  
գրած կ'ըլլայ      գրած կ'ըլլան      գրելու կ'ըլլայ      գրելու կ'ըլլան

Գրած կ'ըլլայի, գրած կ'ըլլայինք, գրելու կ'ըլլայի, գրելու կ'ըլլայինք և այլն:

Գրած եղայ, գրած եղանք և այլն:

Գրած պիտի ըլլամ, գրած պիտի ըլլանք և այլն:

Գրած ըլլալու եմ, գրած ըլլալու ենք և այլն:

Կան նաև ըլլալ ըստի վաղակատար գերբային (եղեր) միջոցով կաղնուող երկրորդական բաղադրեալ ժամանակներ:  
Այսպէս՝

1-ին դէմք—կը գրեմ եղեր      կը գրենք եղեր

2-րդ դէմք—կը գրես եղեր      կը գրէք եղեր

3-րդ դէմք—կը գրէ եղեր      կը գրեն եղեր

1-ին դէմք—պիտի գրեմ եղեր      պիտի գրենք եղեր

2-րդ դէմք—պիտի գրես եղեր      պիտի գրէք եղեր

3-րդ դէմք—պիտի գրէ եղեր      պիտի գրեն եղեր

### Հրամայական եղանակ

Գրա՛ծ եղիք, գրա՛ծ եղէք

Գրելո՛ւ եղիք, գրելո՛ւ եղէք

### Ըղծական եղանակ

Գրած ըլլամ, գրած ըլլանք, գրելու ըլլամ, գրելու ըլլանք և այլն:  
Գրած ըլլայի, գրած ըլլայինք, գրելու ըլլայի, գրելու ըլլայինք և այլն:

**Վարժութիւն 1.** Արձակել, պատմել, նստիլ, ծիծաղիլ, մնալ, խաղալ բայերը խոնարհել երկրորդական բաղադրեալ ժամանակներով:

**Վարժութիւն 2.** Գտնել երկրորդական բաղադրեալ ժամանակները և խմբատրել ըստ եղանակներու.

**Ա.** Երթաս բարով, նրբացուցիչ փաստարան... քիչ մնաց որ յանցաւոր ընէր զիս մեր մեծապատիւ իրաւագէտը: Եթէ թոյլբերան ու ապուշ եղած ըլլայի՝ տարակոյս չկար որ յանցանքն վրաս ծանրացած պիտի ըլլար և բուն յանցաւորն արգարացնել պիտի աշխատէր: Անառակ կիսն մաքուր աղանի պիտի դարձած ըլլար, որովհետեւ նրբացուցիչ դէպք յանցանաց ունի եղեր, որովհետեւ այս նրբացուցիչն դաղղիներէն, իտալերէն, յունարէն, ալմաներէն ու անգղիերէնն ալ ունի եղեր, որովհետեւ սիրածը ծեր ու տգեղ չէ եղեր, որովհետեւ չար նպատակով սիրած չէ եղեր, այլ բարի նպատակով սիրած է ևղեր, որովհետեւ... ինչ գիտնամ, այս որովհետեւներուն վերջ շղար կոր, և բոլոր այս որովհետեւներն այդ լրբին, այդ անհաւատարիմ կնոջ, այդ դժոխային էակին անմեղութիւնն կ'ապացուցանեն եղեր:

(Յ. Պարոնեան)

**Բ.** Եթէ հաշտուելու համար խօսք շտայի՝ մինչև հիմա խենթերու քովը գացած պիտի ըլլայի (1): Երբէք չեմ ճանչնար կնոջ հոգի մը, որ այնքան յարատեւ նայած ըլլայ երկինքն ի վեր (2): Կարծես նայուածքն ու աչքին լոյսը հոն մոռցած ըլլաք (3): Չէր ընդուներ որ իր զաւակը տեսնուած ըլլայ Տիգրանուհիին հետ (4):

**Օգտէն.**— Չեմ հասկնար. չըլլայ որ սխալ խօսք մը փախցուցած ըլլաս բերնէդ:

**Պապտասար.**— Խօսիլ շտտին արդէն որ սխալ խօսք փախցուցած ըլլամ (5):

Ուրիշ բան մ'ըրած չեմ ըլլար, այլ պարզապէս սկզբունք մը պաշտպանած կ'ըլլամ, բայց այս սկզբունքը ձեր սկզբունց կը հակառակի եղեր. վնաս չունի, թող սկզբունքները կռուին (6):

Աննիկ պատասխանեց բարեկամիս. կարծեմ թէ տեղ մը տեսած ըլլալու եմ էֆէնտին (7):

Բացի դրական խոնարհումէն, կայ նաև ժխտական խոնարհում: Մինչև հիմա մենք սորվեցանք դրական խոնարհումը:

Ժխտական խոնարհման ժամանակ գործողութեան կատարումը կը ժխտուի **չ** ժխտական մասնիկին (հրամայականին վրայ՝ **մի՛** արդեւական մասնիկին) միջոցով:

**Եմ** բային ժխտական խոնարհումը կը կազմուի անոր հաստատական ձևերուն սկիզբը **չ** անկցնելով:

Ներկայ		Անցեալի անկատար	
չեմ	չենք	չէի	չէինք
չես	չէք	չէիր	չէիրք
չէ	չեն	չէր	չէին

Սահմանական եղանակի ներկայ և անցեալի անկատար ժամանակները կազմակու համար **եմ** օժանդակ բային ժխտական ձևը կը դրուի ժխտման դերբային վրայ:

Օրինակ՝ չեմ գրեր, չես գրեր, չի գրեր, չենք գրեր, չէք գրեր, չեն գրեր:

Ինչպէս կը տեսնուի, օժանդակ բային եղակի երրորդ դէմքի **է-ն ի-ի** կը փոխուի (չի գրեր): Այս **ի-ն** ձայնաւորով սկսող բայերէն առաջ կրնայ գեղչուիլ՝ տեղը ապաթարց ստանալով՝ չ'երթար, չ'ընէր, չ'երգեր:

Սահմանական և ըզձական եղանակներու միւս ժամանակներուն **չ-ն** կը դրուի բայերուն վրայ՝ պիտի չգրեմ, պիտի չխօսիմ, չգրեմ, չխօսիմ և այլն:

Արևեշահայերէնի մէջ **չ-ն** կը դրուի պիտի եղանակին վրայ (չպիտի գրեմ, չպիտի խաղամ և այլն):

Հրամայական եղանակի ժխտականը կը կոչուի արգելական, որ կը կազմուի **մի՛** շեշտակիր մասնիկով. եղակին կազմելու համար այդ մասնիկը կը դրուի անորոշ դերբային վրայ, որուն վերջի **ւ-ն թ-ի** կը փոխուի (մի՛ գրեր, մի՛ նստիր, մի՛ խաղար), իսկ յոգնակիի պարագային՝ ըզձական եղանակի յոգնակի երկրորդ դէմքին վրայ (մի՛ գրէք, մի՛ խօսիք, մի՛ խաղաք):

Սթէ բայը սկսի ձայնաւորով, այն ատեն մի՛ արգելականի ի-ն յաճախ կը կորսուի, և մ-ն կը միանայ բային. անոնց միջև կը գրուի ապաթարց:

Օր ի ն ա կ՝ մ՛ըներ, մ՛առներ, մ՛իյնար և այլն:

## 109. ԺԵՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Ե խոնարհում

Ի խոնարհում

### Սանմանական Եղանակ

#### Ն ն ր կ ա յ յ ժ ա մ ա ն ա կ

Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չեմ գրեր	չենք գրեր	չեմ խօսիր	չենք խօսիր
չես գրեր	չէք գրեր	չես խօսիր	չէք խօսիր
չի գրեր	չեն գրեր	չի խօսիր	չեն խօսիր

#### Ա ն ց ն ա լ ի ա ն կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չէ գրեր	չէնք գրեր	չէ խօսեր	չէնք խօսեր
չէիր գրեր	չէիր գրեր	չէիր խօսեր	չէիր խօսեր
չէր գրեր	չէին գրեր	չէր խօսեր	չէին խօսեր

#### Ա ն ց ն ա լ կ ա տ ա ր ե ա լ ժ ա մ ա ն ա կ

Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չգրեցի	չգրեցինք	չխօսեցայ	չխօսեցանք
չգրեցիր	չգրեցիրք	չխօսեցար	չխօսեցաք
չգրեց	չգրեցին	չխօսեցաւ	չխօսեցան

#### Ա պ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ս զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
պիտի չգրեմ (չպիտի գրեմ)	պիտի չգրենք (չպիտի գրենք)	պիտի չխօսիմ (չպիտի խօսիմ)	պիտի չխօսինք (չպիտի խօսինք)
պիտի չգրես (չպիտի գրես)	պիտի չգրէք (չպիտի գրէք)	պիտի չխօսիս (չպիտի խօսիս)	պիտի չխօսիրք (չպիտի խօսիրք)
պիտի չգրէ (չպիտի գրէ)	պիտի չգրեն (չպիտի գրեն)	պիտի չխօսի (չպիտի խօսի)	պիտի չխօսին (չպիտի խօսին)

Ե խոնարհում

Ի խոնարհում

Ա ն ց ե ա լ ի ա ս ղ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
սլիտի շորէի (շպիտի գրէի)	սլիտի շորէինք (շպիտի գրէինք)	սլիտի շասուի (շպիտի խասուի)	սլիտի շասուէինք (շպիտի խասուէինք)
սլիտի շորէիք (շպիտի գրէիք)	սլիտի շորէիք (շպիտի գրէիք)	սլիտի շասուիք (շպիտի խասուիք)	սլիտի շասուիք (շպիտի խասուիք)
սլիտի շորէր (շպիտի գրէր)	սլիտի շորէին (շպիտի գրէին)	սլիտի շասուր (շպիտի խասուր)	սլիտի շասուէին (շպիտի խասուէին)

Վ ա ղ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
շիմ գրեր	շենք գրեր	շիմ խասեր	շենք խասեր
շիս գրեր	շէք գրեր	շիս խասեր	շէք խասեր
շէ գրեր	շին գրեր	շէ խասեր	շին խասեր

Ա ն ց ե ա լ ի վ ա ս ղ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
շէի գրեր	շէինք գրեր	շէի խասեր	շէինք խասեր
շէիք գրեր	շէիք գրեր	շէիք խասեր	շէիք խասեր
շէր գրեր	շէին գրեր	շէր խասեր	շէին խասեր

Յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
շիմ գրած	շենք գրած	շիմ խասած	շենք խասած
շիս գրած	շէք գրած	շիս խասած	շէք խասած
շէ գրած	շին գրած	շէ խասած	շին խասած

Ա ն ց ե ա լ ի յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
շէի գրած	շէինք գրած	շէի խասած	շէինք խասած
շէիք գրած	շէիք գրած	շէիք խասած	շէիք խասած
շէր գրած	շէին գրած	շէր խասած	շէին խասած

Բ ա դ ա դ ր ե ա լ ա ս ր ա ն Ե ի ժ ա մ ա ն ա կ

Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
գրելու շեմ	գրելու շենք	խօսելու շեմ	խօսելու շենք
գրելու շես	գրելու շէք	խօսելու շես	խօսելու շէք
գրելու շէ	գրելու շեն	խօսելու շէ	խօսելու շեն

Բ ա դ ա դ ր ե ա լ ա ն ց ե ա լ ի ա ս ր ա ն Ե ի ժ ա մ ա ն ա կ

Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
գրելու շէի	գրելու շէինք	խօսելու շէի	խօսելու շէինք
գրելու շէիր	գրելու շէիրք	խօսելու շէիր	խօսելու շէիրք
գրելու շէր	գրելու շէին	խօսելու շէր	խօսելու շէին

Հ ր ա մ ա յ ա կ ա ն Ե դ ա ն ա կ

Եզակի	մի՛ գրեք	մի՛ խօսիր
Յողնակի	մի՛ գրէք	մի՛ խօսիրք

Ը դ ձ ա կ ա ն Ե դ ա ն ա կ

Ա ս ր ա ն Ե ի ժ ա մ ա ն ա կ

Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չգրեմ	չգրենք	չխօսիմ	չխօսինք
չգրես	չգրէք	չխօսիս	չխօսիրք
չգրէ	չգրեն	չխօսի	չխօսին

Ա ն ց ե ա լ ի ա ս ր ա ն Ե ի ժ ա մ ա ն ա կ

Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե դ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չգրէի	չգրէինք	չխօսէի	չխօսէինք
չգրէիր	չգրէիրք	չխօսէիր	չխօսէիրք
չգրէր	չգրէին	չխօսէր	չխօսէին



Սահմանական եղանակ

Ն ե Ր կ ա յ ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չեն խաղար	չենք խաղար	չեմ թողուր	չենք թողուր
չես խաղար	չէք խաղար	չես թողուր	չէք թողուր
չի խաղար	չեն խաղար	չի թողուր	չեն թողուր

Ա ն ց ե ա լ ի ա ն կ ա տ ա Ր ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չէի խաղար	չէինք խաղար	չէի թողուր	չէինք թողուր
չէիր խաղար	չէիք խաղար	չէիր թողուր	չէիք թողուր
չէր խաղար	չէին խաղար	չէր թողուր	չէին թողուր

Ա ն ց ե ա լ կ ա տ ա Ր ե ա լ ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չխաղացի	չխաղացինք	չթողուցի	չթողուցինք
չխաղացիր	չխաղացիք	չթողուցիր	չթողուցիք
չխաղաց	չխաղացին	չթողուց	չթողուցին

Ա պ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
պիտի շխաղամ	պիտի շխաղանք	պիտի շթողում	պիտի շթողունք
(չպիտի խաղամ)	(չպիտի խաղանք)	(չպիտի թողում)	(չպիտի թողունք)
պիտի շխաղաս	պիտի շխաղաք	պիտի շթողուս	պիտի շթողուք
(չպիտի խաղաս)	(չպիտի խաղաք)	(չպիտի թողուս)	(չպիտի թողուք)
պիտի շխաղայ	պիտի շխաղան	պիտի շթողուս	պիտի շթողուն
(չպիտի խաղայ)	(չպիտի խաղան)	(չպիտի թողուս)	(չպիտի թողուն)

Ա ն ց ե ա լ ի ա պ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ

Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե զ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
պիտի շխաղայի	պիտի շխաղայինք	պիտի շթողուի	պիտի շթողուինք
(չպիտի խաղայի)	(չպիտի խաղայինք)	(չպիտի թողուի)	(չպիտի թողուինք)
պիտի շխաղայիր	պիտի շխաղայիք	պիտի շթողուիր	պիտի շթողուիք
(չպիտի խաղայիր)	(չպիտի խաղայիք)	(չպիտի թողուիր)	(չպիտի թողուիք)
պիտի շխաղար	պիտի շխաղային	պիտի շթողուր	պիտի շթողուին
(չպիտի խաղար)	(չպիտի խաղային)	(չպիտի թողուր)	(չպիտի թողուին)

**Ս. Խոնարհում**

**ՈՒ Խոնարհում**

**Վ ա դ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ**

<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>	<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>
<i>չեմ խաղացեր</i>	<i>չենք խաղացեր</i>	<i>չեմ թողեր</i>	<i>չենք թողեր</i>
<i>չես խաղացեր</i>	<i>չէք խաղացեր</i>	<i>չես թողեր</i>	<i>չէք թողեր</i>
<i>չէ խաղացեր</i>	<i>չեն խաղացեր</i>	<i>չէ թողեր</i>	<i>չեն թողեր</i>

**Ա ն ց ն ա լ ի Վ ա դ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ**

<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>	<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>
<i>չէի խաղացեր</i>	<i>չէինք խաղացեր</i>	<i>չէի թողեր</i>	<i>չէինք թողեր</i>
<i>չէիր խաղացեր</i>	<i>չէիրք խաղացեր</i>	<i>չէիր թողեր</i>	<i>չէիրք թողեր</i>
<i>չէր խաղացեր</i>	<i>չէին խաղացեր</i>	<i>չէր թողեր</i>	<i>չէին թողեր</i>

**Յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ**

<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>	<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>
<i>չեմ խաղացած</i>	<i>չենք խաղացած</i>	<i>չեմ թողած</i>	<i>չենք թողած</i>
<i>չես խաղացած</i>	<i>չէք խաղացած</i>	<i>չես թողած</i>	<i>չէք թողած</i>
<i>չէ խաղացած</i>	<i>չեն խաղացած</i>	<i>չէ թողած</i>	<i>չեն թողած</i>

**Ա ն ց ն ա լ ի Յ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ**

<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>	<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>
<i>չէի խաղացած</i>	<i>չէինք խաղացած</i>	<i>չէի թողած</i>	<i>չէինք թողած</i>
<i>չէիր խաղացած</i>	<i>չէիրք խաղացած</i>	<i>չէիր թողած</i>	<i>չէիրք թողած</i>
<i>չէր խաղացած</i>	<i>չէին խաղացած</i>	<i>չէր թողած</i>	<i>չէին թողած</i>

**Ք ա դ ա դ ր ե ա լ ա պ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ**

<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>	<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>
<i>խաղալու չեմ</i>	<i>խաղալու չենք</i>	<i>թողելու չեմ</i>	<i>թողելու չենք</i>
<i>խաղալու չես</i>	<i>խաղալու չէք</i>	<i>թողելու չես</i>	<i>թողելու չէք</i>
<i>խաղալու չէ</i>	<i>խաղալու չեն</i>	<i>թողելու չէ</i>	<i>թողելու չեն</i>

**Ք ա դ ա դ ր ե ա լ ա ն ց ն ա լ ի ա պ ա ո ն ի ժ ա մ ա ն ա կ**

<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>	<i>Եղ ա կ ի</i>	<i>Յ ո գ ն ա կ ի</i>
<i>խաղալու չէի</i>	<i>խաղալու չէինք</i>	<i>թողելու չէի</i>	<i>թողելու չէինք</i>
<i>խաղալու չէիր</i>	<i>խաղալու չէիրք</i>	<i>թողելու չէիր</i>	<i>թողելու չէիրք</i>
<i>խաղալու չէր</i>	<i>խաղալու չէին</i>	<i>թողելու չէր</i>	<i>թողելու չէին</i>

Հրամայական եղանակ (արգելական)

եզակի	մի՛ խաղար	մի՛ թողուր
Յոգնակի	մի՛ խաղաբ	մի՛ թողուբ

Էղծական եղանակ

Ա. պ ա ո ճ ի ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չխաղամ	չխաղանբ	չթողում	չթողունբ
չխաղաս	չխաղաբ	չթողուս	չթողուբ
չխաղայ	չխաղան	չթողու	չթողուն

Ա. ն ջ ե ա լ ի ա պ ա ո ճ ի ժ ա մ ա ն ա կ

Ե ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի	Ե ղ ա կ ի	Յ ո գ ն ա կ ի
չխաղայի	չխաղայինբ	չթողուի	չթողուինբ
չխաղայիր	չխաղայիբ	չթողուիր	չթողուիբ
չխաղար	չխաղային	չթողուր	չթողուին

**Վարժութիւն 1.** Խոնարհել ժխտական ձևով պատմել, վազել, յոգնիլ, սանիլ, ստոլիլ, կանգնիլ, խնդալ, աղալ բայերը:

**Վարժութիւն 2.** Որոշել հետեւեալ բայաձևերուն եղանակը, ժամանակը, դէմքը, թիւը.

Զեւ երգեր, շէին կարդար, պիտի շահէին, մի՛ աշխատիր, չի վայլեր, չ՛ուղեր, շտորվեցար, չհասկցաս

**Վարժութիւն 3.** Հետեւեալ նախադասութեանց մէջ զորժած-սած բայերուն գրական ձևերը դարձուցէ՛ր ժխտական, ժխտականները՝ գրական.

Հորիզոնէն վար լոյսի պար մը կ'իջնէ: Շուտ կը փախչի մութը, կենդանութիւն կը զգենուն դաշտ ու լեռներ, դեղջուկին ցըն-ծուն երգերը կը լսուին: Ինծի ծագիկ մը նուիրեցիր, հոն ժպտեցաւ կեանքը ինծի: Ան չի դարս Մէկը չ՛ըսեր: Դուն զորժատուն ա՛լ չերթաս: Պիտի չսորհին:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ հատուածին մէջ օգտագործուած բայերուն ժխտական ձեւերը ընդօրինակել և որոշել անոնց եղանակը, ժամանակը, դէմքը, թիւը.

Բոլոր յարձակումները կը կրէր միևնոյն հեղութեամբ. շէր բողոքեր, շէր լար, շէր փոխադարձեր: Ծակատադրին հետ հաշտ, շարութեան դէմ անզօր, այլևս ցերեկներն ալ կը մնար իր խոնար խշտեակին վրայ, շփորձելով խառնուիլ ընկերներուն:

Մինչև կէսօր հաղիւ կրցայ ամփոփել յիշողութիւնս: Որոշ էր թէ բունիս մէջ լսած էի տեղ փոխելու առաջարկ մը, ցուրտի և հովի մասին ըսուած խօսք մը, բայց չէի կրնար ճշդել թէ ե՞ս էի առաջարկողը, թէ Ենովքն էր:

Ամբողջ օրը խուսափած էի Պօղոսին նայելէ: Գիտէի նաև հիմա թէ հոն էր, իր անկիւնը, բայց սիրտ շունչի իրեն դառնալու:

Հսկիչը վերջացուց շրջանը և իր սենեակը դացած պահուն, տեսաւ զիս: Շատ լաւ գիտէր թէ չէի կերած ու ոտքի վրայ պատիժ էի ընթրիքի ատեն: Առանց պատասխանիս սպասելու, կտոր մը հաց բերաւ տուաւ ձեռքս ու հրամայեց — կե՛ր:

Կ'ուզէի պոռալ թէ հաց չեմ ուղեր, թէ կրնամ դեռ երեք օր անօթի մնալ, միայն Պօղոսին հետ շպառակիմ:

Հսեցի Պօղոսին շշուկը: Բաներ մը կ'ըսէր, բայց չէի հասկնար: Ու երբ տեսաւ թէ ուշադրութիւն չեմ ընէր իրեն, մօտեցաւ առանց ոտքի ելլելու, բսուկով գետնին: Գեռ չէի նայած իր կողմը: Հսեցի յստակ բառերը.

— Մի՛ վախնար, բովս չես պառկիր... ես լաւ տեղ մը գիտեմ:

(Ա. Մարուկեան)

## 110. ԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Բայի խոնարհման համար կարեւոր է դիտնալ անոր կազմութիւնը: Բայի կազմութիւնը սորվելու համար անհրաժեշտ է նկատի առնել անորոշ դերբայը:

Կան շատ բայեր, որոնց դերբայական մասնիկէն առաջ կը դրուի բայական ածանց. օրինակ՝ մօռնալ, կրկնուլ, լայննալ, մօտենալ, իջնել, տեսնել, փշշիլ, կպշիլ, պարմանալ, մօտեցնել, տեսցնել, ճնշուիլ, տարածուիլ, կարտել, թուջտիլ, կրծուտել, պատահուտել և այլն: Այս բայերուն մէջ դերբայական ել, ալ, իլ, ուլ մասնիկներէն առաջ և բայարմատէն յետոյ դրուած են ածանց-

ներ՝ ն, են, չ, ա՛ն, եց՛ն, ց՛ն, ու, տ, ոտ: Այս ածանցները յատուկ են բայերուն և կը կոչուին բայածանցներ:

### Բայածանց ունեցող բայերը ածանցաւոր են:

Բայերու մեծ մասը շունին այդ ածանցները:

Օրինակ՝ գրել, երգել, ըսել, գործել, թնկթնել, արձակել, արածիլ, նստիլ, նայիլ, կարդալ, խաղալ, մնալ և այլն: Այս բայերուն մէջ գերբայական մասնիկները դրուած են բայարմատներուն վրայ, անոնց միջև չկայ բայական ածանց:

### Բայածանց չունեցող բայերը պարզ են:

<sup>1)</sup> Երբ իր կազմին մէջ կրնայ տեսնուի մէկէ աւելի արմատ և նոյնիսկ բառակազմական այլ ածանցներ: Թրինակ՝ անափական, կիրառել, կիրարկել, վիրահատել, շափազանցել բայերուն մէջ կայ երկուրակոն արմատ: Փոխառակել, տաւջնորդել, դժկամակիլ բայերու կազմին մէջ կան թէ՛ արմատներ և թէ՛ ածանցներ, բայց ասոնք բոլորն ալ կը դիտուին իրրեւ պարզ բայեր, քանի որ շունին բայածանցներ:

**Վարժութիւն.** Կազմեցէ՛ք հետեւեալ հատուածին մէջ գործածուած բայերուն անորոշ գերբայները, դատ սխեմայներու մէջ խմբաւորելով զանոնք ըստ վաղմութեան (պարզ և ածանցաւոր).

Բռնաւոր մը կայ, գեղեցիկ անուան տակ ծածկուած՝ դմեղ գերութեան կը դատապարտէ նոյնիսկ այն առանձնաշնորհմանց մէջ, դորս մեր կամբը կը շնորհէ մեղ և որոց չը հակառակիր օրէնքն: Այս բռնաւորը բնութեան ալ կը հակառակի և թոյլ չտար անոր որ աղատ համարձակ դործէ մարդ էակին հետ: Այս բռնաւորը բազաբաւարութիւնն է: Այս բռնաւորին հակառակորդներն անկիրթ կ'անուանուին յանիրարի:

Այս բազաբաւարութիւնն բաշուելու բան չէ մանաւանդ անոնց համար, որ կը սիրեն և տրամաբանութիւն ունին բնութեան օրինաց հետեւիլ և այս ընթացքով երջանկութիւն գտնելու: Հասկցնելու համար թէ որչափ կը շարշարուին, կը հարստահարուին այս խեղձերն, արժան կը դատենք քանի մ'օրինակներ մէջ բերել:

Բարեկամներէդ մէկուն անուան տօնախմբութեան ներկայ դտնուիլ կը փափարիս: Ընթրելէն յետոյ կ'ելնես, բարեկամիդ տունը կ'երթաս, ուր սիրալիք ընդունելութիւն մը կը գտնես: Մէկ ժամու չափ նստեղէն ետքը աչքերդ կը սկսին գոցուիլ և կ'ուղես

բազմոցի վրայ ընկողմանիլ: Քաղաքավարութիւնը կ'արգիլէ: Ախորժակով ընթրած ըլլալով՝ գօտիդ քիչ մը թուլցնելու կամ բակելու պէտքը կը զգաս: Հրաւիրելոց առջեւ ասանկ պէտք մը զգալն հակառակ է քաղաքավարութեան: Քունը երթալով կը ծանրանայ արտեւանացդ վրայ...

Փորձէ և քիչ մը քնացիր:

Տան տէրը զլխոդ վրայ կը տնկուի:

(Յ. Պարոնեան)

## 111. ԲԱՅԱԾԱՆՅՆՆԵՐՈՒ ԵՒ ԱԾԱՆՅԱՒՈՐ ԲԱՅՆՐՈՒ ՏՆՍԱԿՆԵՐԸ

Բայածանցները, ինչպէս և անոնցմով կազմուած բայերը կ'ըլլան՝ կրաւորական, պատնտուակուն (կամ անցողական), սոսկական և բազմապատկական:

1. **Կրաւորական** ածանցն է **ու-ն** (անորոշ դերբայի մասնիկին հետ գործածուելու պարագային՝ **ուիլ**), սրով կը կազմուին կրաւորական սեռի բայեր:

Ինչպէս՝ գտնել—գտնուիլ, փրկել—փրկուիլ, ջարդել—ջարդուիլ և այլն:

**Ուիլ-ը** կը դրուի անորոշի կամ անցեալ կատարեալի հիմքին վրայ:

**Ել, իլ** լծորդութիւններուն պատկանող բայերուն կրաւորականը կը կազմուի անորոշի հիմքէն, որուն վրայ կը դրուի **ուիլ**: Ինչպէս՝ գրել—գրուիլ, բերել—բերուիլ, ուտել—ուտուիլ, լսել—լսուիլ, խօսիլ—խօսուիլ, համարել—համարուիլ և այլն:

Ասոնց պէս կը կազմուի նաեւ այս լծորդութիւններուն պատկանող և **ն, չ, տ, ոտ** և ուրիշ սոսկական ու բաղմապատկական ածանցներ ունեցող բայերուն կրաւորականը: Ինչպէս՝ հաւնիլ—հաւնուիլ, կտրտիլ—կտրտուիլ, կոխկուտիլ—կոխկուտուիլ և այլն:

**Ալ** լծորդութեան պատկանող բայերուն կրաւորականը կը կազմուի անցեալ կատարեալի հիմքէն, որուն վրայ կը դրուի **ուիլ**: Ինչպէս՝ կարդալ—կարդացուիլ, խաղալ—խաղացուիլ, աղալ—աղացուիլ և այլն:

Անցեալ կատարեալի հիմքէն կը կազմուի նաեւ **ալ** լծորդութեան պատկանող և **ն, ա՛ն** ածանց ունեցող բայերուն կրաւորականը՝ մոռնալ—մոռցուիլ, գիտնալ—գիտցուիլ, հեռանալ—հեռացուիլ, իմանալ—իմացուիլ և այլն: **Յ՛ն** (աց՛ն, եց՛ն) ածանց ունե-

ցող բայերուն կրատրականը կազմելու ատեն կ'առնենք բայի հիմ-  
քը մինչև ածանցի ց-ն ներառեալ և կ'աւելցնենք ուիլ:

Օրինակ՝ կարդացնել—կարդացուիլ, մտեցնել—մտեցուիլ,  
նագցնել—նագցուիլ, բուլցնել—բուլցուիլ և այլն:

2. Պատճառական (կամ անցողական) ածանցն է ցն (ացն,  
եցն): Պատճառական ածանց ունեցող բայերը կը ցուցնեն այնպի-  
սի գործողութիւն մը, որ ենթական ընել կու տայ ուրիշի մը:

Պատճառական բայերը կը կազմուին ներգործականներէն.

Օրինակ՝

ճանչնալ — նանչցնել, մտնալ — մուցնել, տեսնել — տեսցնել  
և այլն:

Պատճառականները կրնան կազմուիլ նաեւ շէղոք սեռի բայե-  
րէն. այս պարագային շէղոքը կը դառնայ ներգործական. ինչպէս՝  
խաղալ—լսաղցնել, թռչիլ—բոցնել, յոգնիլ—յոգնեցնել, բալել—  
բալեցնել և այլն:

Պատճառական բայերը միշտ կը պատկանին ել լծորդութեան՝  
անկախ անկէ, թէ ո՛ր լծորդութեան պատկանող բայերէ կազմուած  
են:

Պատճառական բայեր կազմելու համար պատճառական  
ածանցը ել մասնիկին հետ միասին (ցնել, եցնել, ացնել) կը դրուի  
բայարմատին վրայ:

Օրինակ՝ տեսնել—տեսցնել, վիշիլ—վիցնել, մտնալ —  
մտեցնել, խաղալ—խաղցնել, կարդալ—կարդացնել, սքանչա-  
նալ—սքանչացնել և այլն:

Պատճառական իմաստը յաճախ կ'արտայայտուի տալ բայի  
միջոցով, որ կը դրուի բայերու անորոշ ձեւին վրայ: Օրինակ՝  
մաքել տալ, գրել տալ, վճարել տալ, կտրել տալ, վազել տալ,  
կարել տալ և այլն:

Իլ լծորդութեան պատկանող բայերուն պատճառականը կազ-  
մելու ատեն (թէ՛ ածանցով, թէ՛ տալ բայով) ի ձայնաւորը կը  
փոխուի ե-ի:

Օրինակ՝ լոգնիլ—լոգնեցնել, հաւնիլ—հաւնեցնել, սորվիլ—  
սորվեցնել, խօսիլ—խօսեցնել, շարմիլ—շարմեցնել տալ, նալիլ—նա-  
լեցնել տալ և այլն:

Երբ տալ-ով կը կազմուի յարադիր բայի մը պատճառականը, այդ պարագային բայը կ'ունենայ երեք բաղկացուցիչ մաս:

Օրինակ՝ Ուրիշներ ալ կան, որ իրենց խօսքերը մտիկ ընել տալու համար մարդ կը փնտռեն:

Տալ բայով կազմուած պատճառական բայերու խոնարհման ատեն կը փոփոխուի միայն տալ բայը:

**3. Ձ, ն (ա՛ն, ե՛ն)** ածանցները կը վուշուին սոսկական, որովհետեւ գտնուելով բայի կազմութեան մէջ՝ անոր արտայայտած գործողութեան վրայ որեւէ իմաստ չեն աւելցնել:

Օրինակ՝ փլչիլ, մա՛նկել, սքանչա՛նալ, զարմա՛նալ, մօտե՛նալ: Ի տարրերութիւն միւս ածանցներուն, ասոնք մշտապէս կը գտնուին բայի կազմութեան մէջ, և առանց ասոնց վերոյիշեալ բայերը չեն գործածուիր:

**4. Տ, ոտ, ուտ, կուտ, ուըստ** ածանցները գործողութեան կուտան մէկէ աւելի անդամներ կատարուելու կամ շատերու կողմէ կատարուելու իմաստ:

Օրինակ՝ կտրել—կտրտել, պատուել—պատուտել, կրծել—կրծտել, ցատքել—ցատքտել, ճեղքել—ճեղքտել, քաշել—քաշկըտել, կոխել—կոխկտել, կանչել—կանչուըստել, լիզել—լզուըստել և այլն:

**Վարժութիւն 1.** Իւրաքանչիւր բայածանցով կազմել մէկ-երկու բայ և գործածել նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Գտնել ածանցաւոր բայերը և անոնց տեսակները:

Արդիւնաբերութեան ընդհանրացումը և մերենաներու բազմացումը պատճառներ են, որ աղմուկը շատնայ քաղաքակրթութեան զարգացման միջավայրերու մէջ: Աղմուկը վնասակար է մարդոց առողջութեան: Այս իրողութիւնը ասիթ ընծայեց, որ սեղի ունենայ միջազգային համագումար մը, որ միջոցներ գտնէ առաջին անհելու համար աղմուկի կատարած աւերներուն՝ մարդոց առողջութեան վրայ:

Աղմուկը ամենէն առաջ կ'անհանգստացնէ մեր ախանջը, անոր զգայնութեան համեմատութեամբ և կրնայ խլացնել կամ «ծանրացնել» դայն:



Վերոյիշեալ համագումարին մէջ որոշուեցաւ աշխատանոցներու մէջ նկատի ունենալ աղմուկի որոշ շափանիշ մը, ամէն միջոց ձեռք առնելով զեղչելու համար այս շափանիշը, աշխատութիւն մը, որ մեր երկրին մէջ կը կատարուի զանազան ասպարէշներու և ձեռնարկութիւններու բժիշկներուն և ինժեներներուն գործակցութեամբ:

Մարդոց բնական կազմուածքը և զգայնութիւնը իրենց բաժինը ունին աղմուկին դիմանալու մէջ: Աղմուկի միջավայրի մէջ ոմանք կը վարժուին այս կացութեան, մինչ ուրիշներ աւելի դուրագրգիռ կ'ըլլան: Գիշերային աղմուկը ամենէն վտանգաւորն է, քանի որ կրնայ անբնութիւն առաջ բերել և այս վիճակին մէջ անշունչ իրողութիւններն իսկ մեծ համեմատութիւն կ'առնեն ու կը ջլատեն ենթական:

Պէտք է ամէն միջոց ձեռք առնել բաղաբներու և գիւղերու մէջ արգելք ըլլալու համար վնասարեք աղմուկներուն:

(Լրագիր)

**Վարժութիւն 3.** Կրաւորական, պատճառական, սոսկական, բաղմապատկական ածանցներով երեքական բառ գործածեցէ՛ք նախադատութեանց մէջ:

## 112. ԿՐԱՆՈՐԱԿԱՆ ԲԱՅՆՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Կրաւորական բայերը, անկախ անկէ թէ ո՛ր լծորդութեան կը պատկանին, կ'ունենան ի լծորդը և կը խոնարհուին ի լծորդութեան պատկանող բայերուն պէս:

Օ ր ի ն ա կ՝

### Սաւահանական եղանակի ներկայ ժամանակ

կը գրուիմ	կ'ընդունուիմ	կը կարգացուիմ
կը գրուիս	կ'ընդունուիս	կը կարգացուիս
կը գրուի	կ'ընդունուի	կը կարգացուի
կը գրուինք	կ'ընդունուինք	կը կարգացուինք
կը գրուիք	կ'ընդունուիք	կը կարգացուիք
կը գրուին	կ'ընդունուին	կը կարգացուին

**ԿՐԱՆՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ԵՆ՝**

Անորոշ՝	դրուիլ	խօսուիլ	կարդացուիլ
Ապառնի՝	դրուելու	խօսուելու	կարդացուելու
Վաղակատար՝	դրուեր	խօսուեր	կարդացուեր
Յարակատար՝	դրուած	խօսուած	կարդացուած
Ենթակայական (ներկայ)՝	գրուող	խօսուող	կարդացուող

**Վարժութիւն 1.** Կաղմեցէ՛ք տարածել, ուտել, տեսնել, մոռնալ, գիտնալ բայերուն կրատրականը և դորժածեցէ՛ք նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Տարբեր խոնարհումներու պատկանող երկերկու ներգործական բայերէ կաղմեցէ՛ք կրատրական բայեր և խոնարհեցէ՛ք:

**113. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ**

Պատճառական բայերը կը պատկանին և լծորդութեան և իրենց խոնարհման յատկանիշներով ընդհանուր առմամբ նման են և լծորդութեան բայերու խոնարհման՝:

Պատճառական բայերու խոնարհման ձևերը կը կազմուին անորոշ դերբայի կամ անցեալ կատարեալի հիմքէն:

Անորոշ դերբայի հիմքէն կը կազմուին անորոշ, ապառնի, ենթակայական դերբայները, սահմանական եղանակի ներկայ, անցեալի անկատար, ապառնի, ըղձական և զանալի ապառնի, անցեալի ապառնի ժամանակները:

Ասոնք կը կազմուին անորոշ դերբայի հիմքին անլցնելով և լծորդութեան պատկանող բայերու խոնարհման յատուկ վերջաւորութիւններ:

**Օրինակ՝**

**Դերբայներ**

Անորոշ՝	կարդացնել.
Ապառնի՝	կարդացնելու.
Ենթակայական՝	կարդացնող:

<sup>1</sup> Որոշ բերականներ պատճառական, ստակածանցաւոր բայերուն խոնարհումը կը համարեն զարտողի:

### Ստևոսեանի եղանակ

Ներկայ՝ կը կարգացնեմ և այլն.

Անց. անկատար՝ կը կարգացնէի և այլն.

Ապառնի՝ պիտի կարգացնեմ և այլն.

Անց. ապառնի՝ պիտի կարգացնէի և այլն.

Բաղադրեալ ասլառնի՝ կարգացնելու եմ և այլն.

Բաղադրեալ անց. ապառնի՝ կարգացնելու էի և այլն:

### Հղձական եղանակ

Ապառնի՝ կարգացնեմ և այլն.

Անց. ապառնի՝ կարգացնէի և այլն:

Պատճառական բայերու խոնարհման միւս ձևերը կը կազմուին անցեալի հիմքէն: Այդ ձևերը հետեւեալներն են՝

### Գերբայներ

Վաղակատար՝ կարգացուցեր, տեսցուցեր.

Յարսկատար՝ կարգացուցած, տեսցուցած:

### Ստևոսեանի եղանակ

#### Վաղակատար

կարգացուցեր եմ

տեսցուցեր եմ

կարգացուցեր ես

տեսցուցեր ես

կարգացուցեր է

տեսցուցեր է

կարգացուցեր ենք

տեսցուցեր ենք

կարգացուցեր էք

տեսցուցեր էք

կարգացուցեր են

տեսցուցեր են

#### Անցեալի վաղակատար

կարգացուցեր էի

տեսցուցեր էի

կարգացուցեր էիր

տեսցուցեր էիր

կարգացուցեր էր

տեսցուցեր էր

կարգացուցեր էինք

տեսցուցեր էինք

կարգացուցեր էիք

տեսցուցեր էիք

կարգացուցեր էին

տեսցուցեր էին

### Յարակատար

կարդացուցած հմ	տեսցուցած հմ
կարդացուցած հս	տեսցուցած հս
կարդացուցած է	տեսցուցած է
կարդացուցած հնք	տեսցուցած հնք
կարդացուցած էք	տեսցուցած էք
կարդացուցած հն	տեսցուցած հն

### Անցեալի յարակատար

կարդացուցած էի	տեսցուցած էի
կարդացուցած էիր	տեսցուցած էիր
կարդացուցած էր	տեսցուցած էր
կարդացուցած էինք	տեսցուցած էինք
կարդացուցած էիք	տեսցուցած էիք
կարդացուցած էին	տեսցուցած էին

### Անցեալ կատարեալ

կարդացուցի	տեսցուցի
կարդացուցիր	տեսցուցիր
կարդացուց	տեսցուց
կարդացուցինք	տեսցուցինք
կարդացուցիք	տեսցուցիք
կարդացուցին	տեսցուցին

### Հրամայական

կարդացո՛ւր	տեսցո՛ւր
կարդացուցէ՛ք	տեսցուցէ՛ք

**Վարժուիլն.** Գտնել պատճառական բայերը և բացատրել անոնց կազմութիւնը, խոնարհումը.

Կորսնցնուը կը գանգատէր թուղթին ձախորդութենէն, ընկերոջը ասիկարութենէն, այս տրտունջներուն պատասխանատու մէկը փնտռելով (1): Այս յաջողութիւնը իր շահու ծորանը սաստկացուց, այնպէս որ հօրեղբայրը խանութին մէջ դրեթէ խանութ մ'ալ ինք հաստատեց (2): Տեղ տեղ հակասութիւններ ալ կրնան տեսնուիլ,

որոնց աչք դոցելու է. այս վերասպահութեամբ այդ դիշերը Ազատամարտի ընթերցողներուն պիտի ներկայացնեն հետզհետէ (3): Այս նախաբանը ըրի քեզի հասկցնելու համար, որ անկողմնակալ ողիւտի մը կը դատեմ կղերութիւնները (4): Արձագանգը ղիրենք զուարճացուց, Նարդիկ ծառոց բունին փաթթուող մամուռներ սուղվելու ելաւ, միւսներն ալ ցրուած հոս հոն բարձրաձայն կը պուռային (5): Այսպէս տճա կու գային իրենց ազմուկովը, լոյսովը, արթնցնելով դիւղացին, որ պատուհանը կ'ըլլէր հրախաղութիւնը դիտելու համար, յետոյ կ'երթար պատկելու, տեսնելով որ այս կրիտասարդները քնանալու միտք չունէին և մեծ ծառին տակ այս ամառ դիշերը լուսցնելու կը պատրաստուին (6):

#### 114. ՍՈՍԿԱԾԱՆՑԱԽՈՐ ԲԱՅՆՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Սոսկածանցաւոր բայերը կը պատկանին տարբեր լծորդութիւններու:

Օր ի ն ա կ' մտնել, իջնել, փախչիլ, զգաստանալ և այլն:

Սոսկածանցաւոր բայերը կը խոնարհուին համապատասխան լծորդ ունեցող պարզ բայերու նման, բայց անոնց մի քանի ձեւերը կը կազմուին անցեալի հիմքէն, և այդքանով միայն անոնք կը տարբերին պարզ բայերու խոնարհումէն:

Ներկայի հիմքէն կը կազմուին հետևեալ դերբայներն ու ժամանակները.

#### Դերբայներ

Անորոշ՝ մտնել: թռչիլ, զգաստանալ, ունենալ.

Ապտուկի՝ մտնելու, թռչելու, զգաստանալու, ունենալու.

Ներակայակա՞ն՝ մտնող, թռչող:

Ա.ն, Լ.ն սոսկածանց ունեցող բայերու ենթակայական դերբայը կը կազմուի անցեալ կատարեալի հիմքէն:

#### Սահմանակա՞ն Եղանակ

Ներկայ՝ կը մտնեմ, կը թռչիմ, կը զգաստանամ, կ'ունենամ և այլն. Անց. անկատար՝ կը մտնէի, կը թռչէի, կը զգաստանայի, կ'ունենայի և այլն.

Ապաւելի՝ պիտի մտնեմ, պիտի թռչիմ, պիտի զգաստանամ, պիտի ունենամ և այլն.

Անց. ապառնի՛ պիտի մտնէի, պիտի թռչէի, պիտի զգաստանայի,  
պիտի ունենայի և այլն.

Ռազադրեալ ապառնի՛ մտնելու եմ, թռչելու եմ, զգաստանալու  
եմ, ունենալու եմ և այլն.

Ռազադրեալ անց. ապառնի՛ մտնելու էի, թռչելու էի, զգաստա-  
նալու էի, ունենալու էի և այլն:

### Ըղծակաւոն եղանակ

Ապառնի՛ մտնեմ, թռչում, զգաստանամ, ունենամ և այլն.

Անց. ապառնի՛ մտնէի, թռչէի, զգաստանայի, ունենայի և այլն:

խոնարհման ատեն անցեալի հիմքէն կ'իյնան ՚ն, չ սոսկա-  
ծանցները: Ինչպէս՝ մտնել—մտ(այ), իջնել—իջ(այ), տեսնել—  
տես(այ), փախչիլ—փախ(այ), թռչիլ—թռ(այ):

Մ ա ն օ ր ու ր իւ ն. Կառչիլ, մարտնչիլ, մեղանչել, հանգչիլ բայերուն չ-ն  
սոսկածանց չէ, ուստի այդ բայերը կանոնաւոր կերպով կը խոնարհուին:

Ա.Ն. Լ.Ն սոսկածանցներուն ճ-ն, ինչպէս և ալ խոնարհման պատկանող  
բայերու ճ սոսկածանցը անցեալի հիմքին մէջ կը դառնայ զ: Ինչպէս՝ զգաստա-  
նալ—զգաստաց(այ), ունենալ—ունեց(այ), ճանչնալ—ճանչց(այ), արթննալ—ար-  
թընց(այ) և այլն:

Սոսկածանցաւոր բայերու անցեալի հիմքէն կ'աղմուած ձե-  
ւերն են՝

### Գերբայներ

Վաղակատար՝	մտեր,	թոեր,	զգաստացեր,	ունեցեր.
Տարակատար՝	մտած,	թուած,	զգաստացած,	ունեցած.
Ենթակայական՝	—	—	զգաստացող,	ունեցող.

### Ստեմանական եղանակ

#### Վաղակատար

մտեր եմ	թոեր եմ	զգաստացեր եմ	ունեցեր եմ
մտեր ես	թոեր ես	զգաստացեր ես	ունեցեր ես
մտեր է	թոեր է	զգաստացեր է	ունեցեր է
մտեր ենք	թոեր ենք	զգաստացեր ենք	ունեցեր ենք
մտեր էք	թոեր էք	զգաստացեր էք	ունեցեր էք
մտեր են	թոեր են	զգաստացեր են	ունեցեր են

### Անցեալի վաղակաւոր

մտեր էի	թոեր էի	զգաստացեր էի	ունեցեր էի
մտեր էիր	թոեր էիր	զգաստացեր էիր	ունեցեր էիր
մտեր էր	թոեր էր	զգաստացեր էր	ունեցեր էր
մտեր էինք	թոեր էինք	զգաստացեր էինք	ունեցեր էինք
մտեր էիք	թոեր էիք	զգաստացեր էիք	ունեցեր էիք
մտեր էին	թոեր էին	զգաստացեր էին	ունեցեր էին

### Յարակաւոր

մտած եմ	թոած եմ	զգաստացած եմ	ունեցած եմ
մտած ես	թոած ես	զգաստացած ես	ունեցած ես
մտած է	թոած է	զգաստացած է	ունեցած է
մտած ենք	թոած ենք	զգաստացած ենք	ունեցած ենք
մտած էք	թոած էք	զգաստացած էք	ունեցած էք
մտած են	թոած են	զգաստացած են	ունեցած են

### Անցեալի յարակաւոր

մտած էի	թոած էի	զգաստացած էի	ունեցած էի
մտած էիր	թոած էիր	զգաստացած էիր	ունեցած էիր
մտած էր	թոած էր	զգաստացած էր	ունեցած էր
մտած էինք	թոած էինք	զգաստացած էինք	ունեցած էինք
մտած էիք	թոած էիք	զգաստացած էիք	ունեցած էիք
մտած էին	թոած էին	զգաստացած էին	ունեցած էին

### Անցեալ կատարեալ

մտայ	թոայ	զգաստացայ	ունեցայ
մտար	թոար	զգաստացար	ունեցար
մտաւ	թոաւ	զգաստացաւ	ունեցաւ
մտանք	թոանք	զգաստացանք	ունեցանք
մտաք	թոաք	զգաստացաք	ունեցաք
մտան	թոան	զգաստացան	ունեցան

### Հրամայական

մտի՛ր	թոի՛ր	զգաստացի՛ր	ունեցի՛ր
մտէ՛ք	թոէ՛ք	զգաստացէ՛ք	ունեցլ՛ք

**Մ ա ն օ ր ու ր ի ն .** Կ, սոսկածանց ունեցող սակաւաթիւ բայերու հրամայականի եզակին կ'արտայայտուի բայի արմատով: Ինչպէս՝ տեսնել—տես, առնել—առ:

Բազմապատկական բայերը խոնարհման առանձին յատկանիշներ չունին: Անոնք կը խոնարհուին պարզ բայերուն պէս:

Օրինակ՝ կտրտել, կը կտրտեմ, կը կտրտէի, կտրտեցի, կըլտըրտեր եմ, կտրտէ՛ք և այլն:

**Վարժութիւն 1.** Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը.

Գտնուիլ, մոռցուիլ, փակցնել, կերցնել, մտնել, իմանալ:

**Վարժութիւն 2.** Գտէ՛ք ածանցաւոր բայերը, որոշեցէ՛ք անոնց տեսակները, գրեցէ՛ք անորոշ դերբայը, անցեալ կատարեալի և հրամայականի ձեւերը.

**Ա.** Այս սէրը մէկէնիմէկ եկեր է ձերունիին, իր կեանքին վերջին տարիներուն: Օր մը երկու աղանի թոշկով ներս մտեր էին տանը պարտէղին վրայ նայող մէկ պատուհանէն, ու հոն մնացեր էին, ա՛լ չուզելով մեկնիլ: Այդ տանը խորին հանդարտութիւնը հրապուրեր էր զիրենք. ուղեկորոյս մոլորեալնե՛ր էին: Սա իրաւ է, որ պատուհանին մէկ անկիւնը թառեր ու ալ անկից չէին բաժնուեր: Սերունին... քիչ քիչ անոնց համար սրտին խորը սէր մը սկսեց էր, որ հիմակ իր ամբողջ կեանքը կը լեցնէր...

Գիշեր մը ձերունին ընդոստ արթնցաւ խուլ շշուկէ մը, որուն անմիջապէս յաջորդեցին ճարճատիւններ: Մութի հոտ մը կը սկսէր ծաւալիլ սենեակին մէջ: Հասկցաւ վտանգը, ցատքեց ելաւ անկողնէն, աճապարանքով հագուեցաւ կիսովին, և սենեակէն դուրս նստեցաւ: Մուսը թանձր թանձր յորձանքներով պատեր էր շորս դին: Իր երկու քոյրերն ալ, արթնցած ու հագուած գէպի իրեն կու դային խելայեղ: Վարի յարկէն ճարճատիւնները կը շատնային, և հրդեհի լոյսը պոռթկաց յանկարծ, հին ու շոր տախտակներէն դէպի վեր գալարուելով:

(Լ. Բաշպեան)

**Բ.** Ու բացատրութիւնս, թերևս արդարացումս լսելու անհամբեր, Արմենիսս ոտքի ելաւ. ես կալանաւորի մը պէս իրեն հետեւեցայ. ըսելիքս փնտռելով, շարունակով շուարած մտքիս մէջ



կը զդայի որ ժամը եկած էր հրաժեշտ տալու. Արմենիսան կը ճանշնայի յամառ ու ոխերիմ:

Տուն հասանք. որշա՛փ կ'ուզէի որ ճամբան անհատնում երկարէր ու բնաւ չհասնէիք. սենեակը ելանք միասին, այն քաղցրարոյր, ժպտուն, խոստմնալից սենեակը, ուր ամբաստանեալի մը պէս կը մտնէի...

Մեկնեցայ, աւերակներու մէջէն խոյս տալու պէս, վախնալով որ պատերը վրաս շփուին յանկարծ. հեռացայ սանդուղէն...

Արմենիսա ութը օր հիւանդացաւ. այս սաստիկ յուզման շէր դիմացեր. անկեղծօրէն կը սիրէր զիս, և բաժանումը իրեն ալ դժնդակ երեւցաւ: Սպասաւորներէն իմացայ որ իմ երթալէս վերջը ինքն ալ շատ լացեր էր:

(Գ. Զօհրայ)

## 115. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅՆ

Կարգ մը բայերու խոնարհումը կը տարբերի կանոնատու բայերու խոնարհումէն: Այս բայերուն անցեալ կատարեալի հիմքին մէջ տեղի կ'ունենայ արմատի փոփոխութիւն, որով անոնք կը տարբերին կանոնատու բայերէն և կը կոչուին անկանոն: Առաւել գործածական անկանոն բայերը հետեւեալներն են՝

ըլլալ, դնել, ընել, գալ, ուտել, տանիլ, լալ, իյնալ, տալ:

Ըստ արմատի փոփոխութեան աստիճանի՝ անկանոն բայերը կարելի է բաժնել երկու խումբի՝ բայեր, որոնց արմատը լրիւ կը փոխուի, և բայեր, որոնց արմատը մասնակի շափով կը փոխուի:

Առաջին խումբի բայերն են՝ ըլլալ, գալ, ուտել:

Անորոշ դերբայ՝ ըլլալ, գալ, ուտել.

Անցեալ կատարեալ՝ եղայ, եկայ, կերայ:

Միւս անկանոն բայերը կը մտնեն երկրորդ խումբին մէջ. այդ բայերն են՝ դնել, ընել, տանիլ, լալ, իյնալ, աալ: Խոնարհման ատեն այս բայերուն մէջ արմատի մասնակի փոփոխութիւններ կ'երեւան, երբ համեմատենք այս բայերուն անորոշ գերբայները անցեալ կատարեալի ձևերուն հետ. դրի, ըրի, տարի, լացի, ինկայ, տուի:

Ըլլալ

Կ ա ն ո ն ա լ ո Ր ձ ե ւ ե ր

Գերբայներ

Անորոշ՝ ըլլալ.

Ապառնի՝ ըլլալու:

Սահմանական եղանակ

Ներկայ՝ կ'ըլլամ, կ'ըլլաս, կ'ըլլայ և այլն.

Անց. տնկատար՝ կ'ըլլայի, կ'ըլլայիր, կ'ըլլար և այլն.

Ապառնի՝ պիտի ըլլամ, պիտի ըլլաս, պիտի ըլլայ և այլն.

Անցեալի ապառնի՝ պիտի ըլլայի, պիտի ըլլայիր, պիտի ըլլար և այլն.

Բաղադրեալ ապառնի՝ ըլլալու եմ, ըլլալու ես, ըլլալու է և այլն.

Բաղադրեալ անց. ապառնի՝ ըլլալու էի, ըլլալու էիր, ըլլալու էր և այլն:

Ըղծական եղանակ

Ապառնի՝ ըլլամ, ըլլաս, ըլլայ և այլն.

Անց. ապառնի՝ ըլլայի, ըլլայիր, ըլլար և այլն:

Ա Ն Կ ա ն ո ն ձ ե ւ ե ր

Գերբայներ

Վաղակատար՝ եղեր.

Յարակատար՝ եղած.

Ենթակայական՝ եղող:

Սահմանական եղանակ

Վաղակատար՝ եղեր եմ, եղեր ես, եղեր է, եղեր ենք, եղեր էք, եղեր են.

Անց. վաղակատար՝ եղեր էի, եղեր էիր, եղեր էր, եղեր էինք, եղեր էիք, եղեր էին.

Յարակատար՝ հղած հմ, հղած հս, հղած է, հղած հնր, հղած էր,  
հղած են.

Անց. յարակատար՝ հղած էի, հղած էիր, հղած էր, հղած էինք,  
հղած էիր, հղած էին.

Անց. կատարեալ՝ հղայ, հղար, հղաւ, հղանք, հղար, հղան:

### Հրամայական կլանակ

Եղի՛ր, հղէ՛ք

### Գլուխ

### Ն ա ճ ո ճ ա լ ո Ր Ծ Ե Ն Ե Ր

#### Դերբայներ

Անորոշ՝ դալ.

Ապաւենի՛ դալու:

### Ստեմանական կլանակ

Ներկայ՝ կու գամ, կու դաս, կու գայ և այլն.

Անց. տնկատար՝ կու գայի, կու գայիր, կու դար և այլն.

Ապաւենի՛ պիտի գամ, պիտի դաս, պիտի գայ և այլն.

Անց. ապաւենի՛ պիտի գայի, պիտի գայիր, պիտի դար և այլն.

Բազայրեալ ապաւենի՛ գալու հմ, գալու հս, գալու է և այլն.

Բազայրեալ անց. ապաւենի՛ դալու էի, գալու էիր, դալու էր և  
այլն:

### Ըղծական կլանակ

Ապաւենի՛՝ գամ, դաս, գայ և այլն.

Անց. ապաւենի՛ գայի, գայիր, դար և այլն:

### Ս. Ճ Կ ա ճ ո ճ Ծ Ե Ն Ե Ր

#### Դերբայներ

Վաղակատար՝ եկեր.

Յարակատար՝ եկած.

Ինքնակայական՝ եկող:

Ստեփաննական եղանակ

Վաղակատար՝ եկեր եմ, եկեր ես, եկեր է, եկեր ենք, եկեր էք,  
եկեր են.

Անց. վաղակատար՝ եկեր էի, եկեր էիր, եկեր էր, եկեր էինք,  
եկեր էիրք, եկեր էին.

Յարակատար՝ եկած եմ, եկած ես, եկած է, եկած ենք, եկած էք,  
եկած են.

Անց. յարակատար՝ եկած էի, եկած էիր, եկած էր, եկած էինք,  
եկած էիրք, եկած էին.

Անց. կատարեալ՝ եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան:

Հումայական

եկո՛ւր

եկէ՛ք

Աւել

Կ Ա Ն Ո Ր Ա Ն Ե Ր Ի Ե Լ Ե ր

Գերբայներ

Անորոշ՝ ուտել.

Ապառնի՝ ուտելու.

Ներակայական՝ ուտող:

Ստեփաննական եղանակ

Ներկայ՝ կ'ուտեմ, կ'ուտես, կ'ուտէ և այլն.

Անց. անկատար՝ կ'ուտէի, կ'ուտէիր, կ'ուտէր և այլն.

Ապառնի՝ պիտի ուտեմ, պիտի ուտես, պիտի ուտէ և այլն.

Անց. ապառնի՝ պիտի ուտէի, պիտի ուտէիր, պիտի ուտէր և այլն:

Բաղադրեալ ապառնի՝ ուտելու եմ, ուտելու ես, ուտելու է և այլն.

Բաղադրեալ անց. ապառնի՝ ուտելու էի, ուտելու էիր, ուտելու էր  
և այլն:

Ըղնական եղանակ

Ապառնի՝ ուտեմ, ուտես, ուտէ և այլն.

Անց. ապառնի՝ ուտէի, ուտէիր, ուտէր և այլն:

## Պ Ն Կ Ա Ն Ո Ն Ի Ե Լ Ե Բ

### Գերբայներ

Վաղակատար՝ կերեր.

Յարակատար՝ կերած:

### Մանահանական եղանակ

Վաղակատար՝ կերեր եմ, կերեր ես, կերեր է, կերեր ենք, կերեր էք, կերեր են.

Անց. վաղակատար՝ կերեր էի, կերեր էիր, կերեր էր, կերեր էինք, կերեր էիք, կերեր էին.

Յարակատար՝ կերած եմ, կերած ես, կերած է, կերած ենք, կերած էք, կերած են.

Անց. յարակատար՝ կերած էի, կերած էիր, կերած էր, կերած էինք, կերած էիք, կերած էին.

Անց. կատարեալ՝ կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան:

### Հումարական եղանակ

Կե՛ր

կերէ՛ք

## Տալ

## Պ Ն Ո Ն Ա Լ Ո Ր Ի Ե Լ Ե Բ

### Գերբայներ

Անորոշ՝ տալ.

Ապառնի՝ տալու:

### Մանահանական եղանակ

Ներկայ՝ կու տամ, կու տաս, կու տայ և այլն.

Անց. անկատար՝ կու տայի, կու տայիր, կու տար և այլն.

Ապառնի՝ պիտի տամ, պիտի տաս, պիտի տայ և այլն.

Անց. սպառնի՝ պիտի տայի, պիտի տայիր, պիտի տար և այլն.

Բաղադրեալ ապառնի՝ տալու եմ, տալու ես, տալու է և այլն.

Բաղադրեալ անց. սպառնի՝ տալու էի, տալու էիր, տալու էր և այլն:

### Ըղծական եղանակ

Վայառնի՛ տամ, տաս, տայ և այլն.

Սնց. ապառնի՛ տայի, տայիր, տար և այլն:

### Ֆ Ե Կ Ա Ն Ն Գ Ն Ե Լ Ե Բ

#### Գերբայներ

Վաղակատար՝ տուեր.

Յարակատար՝ տուած.

Ներակայական՝ տուող:

### Սահմանական եղանակ

Վաղակատար՝ տուեր եմ, տուեր ես, տուեր է, տուեր ենք, տուեր էք, տուեր են.

Սնց. վաղակատար՝ տուեր էի, տուեր էիր, տուեր էր, տուեր էինք, տուեր էիք, տուեր էին.

Յարակատար՝ տուած եմ, տուած ես, տուած է, տուած ենք, տուած էք, տուած են.

Անց. յարակատար՝ տուած էի, տուած էիր, տուած էր, տուած էինք, տուած էիք, տուած էին.

Քնց. կատարեալ՝ տուի, տուիր, տուաւ, տուինք, տուիրք, տուին:

### Հրամայական եղանակ

Տո՛ւր

տուէ՛ր

### Տունիլ

### Վ ա ն ո ճ ա լ ո Ր Ն Ե Լ Ե Բ

#### Գերբայներ

Անորոշ՝ տանիլ.

Ապառնի՛ տանելու.

Ներակայական՝ տանող:

### Սահմանական եղանակ

Ներկայ՝ կը տանիմ, կը տանիս, կը տանի և այլն.

Քնց. անկատար՝ կը տանէի, կը տանէիր, կը տանէր և այլն.

Ապառնի՛ պիտի տանիմ, պիտի տանիս, պիտի տանի և այլն.

Անց. ապառնի՛ պիտի տանէի, պիտի տանէիր, պիտի տանէր և այլն.

Բաղադրեալ ապառնի՛ տանելու հմ, տանելու ևս, տանելու է և այլն.

Բաղադրեալ անց. ապառնի՛ տանելու էի, տանելու էիր, տանելու էր և այլն:

### Ըղնակաւն եղանակ

Ապառնի՛ տանիմ, տանիս, տանի և այլն.

Անց. ապառնի՛ տանէի, տանէիր, տանէր և այլն:

### Ս. Ե կ ա ց ո ւ ն ն ձ Ե Լ Ե Բ

### Գերբայներ

Վաղակատար՛ տարեր.

Յարակատար՛ տարած:

### Սանժոնակաւն եղանակ

Վաղակատար՛ տարեր հմ, տարեր ևս, տարեր է, տարեր ենք, տարեր էք, տարեր են.

Անց. վաղակատար՛ տարեր էի, տարեր էիր, տարեր էր, տարեր էինք, տարեր էիր, տարեր էին.

Յարակատար՛ տարած հմ, տարած ևս, տարած է, տարած ենք, տարած էք, տարած են.

Անց. յարակատար՛ տարած էի, տարած էիր, տարած էր, տարած էինք, տարած էիր, տարած էին.

Անց. կատարեալ՛ տարի, տարիր, տարաւ, տարինք, տարիր, տարին:

### Հումբայական եղանակ

Տա՛ր

տարէ՛ք

## Լ,ալ

### Կ ա ճ Ո Ճ ա լ Ո Ր ն եւ եր

#### Գերբայներ

Անորոշ՝ լալ.

Ապստոնի՝ լալու:

#### Ստեղծանական եզանակ

Ներկայ՝ կու լամ, կու լաս, կու լայ և այլն.

Անց. անկատար՝ կու լայի, կու լայիր, կու լար և այլն.

Ապստոնի՝ պիտի լամ, պիտի լաս, պիտի լայ և այլն.

Անց. ապստոնի՝ պիտի լայի, պիտի լայիր, պիտի լար և այլն.

Բաղադրեալ ապստոնի՝ լալու հմ, լալու հս, լալու է և այլն.

Բաղադրեալ անց. ապստոնի՝ լալու էի, լալու էիր, լալու էր և այլն:

#### Ըզնական եզանակ

Ապստոնի՝ լամ, լաս, լայ և այլն.

Անց. ապստոնի՝ լայի, լայիր, լար և այլն:

### Ա ճ Կ ա ճ Ո Ճ ն եւ եր

#### Գերբայներ

Վաղակատար՝ լացեր.

Ֆորակատար՝ լացած.

Ներակայական՝ լացող:

#### Ստեղծանական եզանակ

Վաղակատար՝ լացեր հմ, լացեր հս, լացեր է և այլն.

Անց. վաղակատար՝ լացեր էի, լացեր էիր, լացեր էր և այլն.

Ֆորակատար՝ լացած հմ, լացած հս, լացած է և այլն.

Անց. յարակատար՝ լացած էի, լացած էիր, լացած էր և այլն.

Անց. կատարեալ՝ լացի, լացիր, լացու և այլն:

#### Հրամայական եզանակ

Հա՛ց

լացէ՛ր



## Իյնալ

Ն ա ճ Ո Ճ ա լ Ո Ր    ձ Ե Լ Ե Ր

### Դերբայներ

Անորոշ՝ իյնալ.

Ապառնի՝ իյնալու.

Ներախայական՝ իյնող (ինկող):

### Սահմանական Եղանակ

Ներկայ՝ կ'իյնամ, կ'իյնաս, կ'իյնայ և այլն.

Անց. անկատար՝ կ'իյնայի, կ'իյնայիր, կ'իյնար և այլն.

Ապառնի՝ պիտի իյնամ, պիտի իյնաս, պիտի իյնայ և այլն.

Անց. ապառնի՝ պիտի իյնայի, պիտի իյնայիր, պիտի իյնար և այլն.

Բաղադրեալ ապառնի՝ իյնալու եմ, իյնալու ես, իյնալու է և այլն.

Բաղադրեալ անց. ապառնի՝ իյնալու էի, իյնալու էիր, իյնալու էր և այլն:

### Ըզնական Եղանակ

Ապառնի՝ իյնամ, իյնաս, իյնայ և այլն.

Անց. ապառնի՝ իյնայի, իյնայիր, իյնար և այլն:

Ս. Ճ Կ ա Ճ Ո Ճ    ձ Ե Լ Ե Ր

### Դերբայներ

Վաղակատար՝ ինկեր.

Յարակատար՝ ինկած:

### Սահմանական Եղանակ

Վաղակատար՝ ինկեր եմ, ինկեր ես, ինկեր է, ինկեր ենք, ինկեր էք, ինկեր են.

Անց. վաղակատար՝ ինկեր էի, ինկեր էիր, ինկեր էր, ինկեր էինք, ինկեր էիք, ինկեր էին.

Յարակատար՝ ինկած եմ, ինկած ես, ինկած է, ինկած ենք, ինկած էք, ինկած են.

Անց. յարակատար՝ *ինկած վի, ինկած էիր, ինկած էր, ինկած էինք, ինկած էիր, ինկած էին.*

Անց. կատարեալ՝ *ինկայ, ինկար, ինկաւ, ինկանք, ինկաք, ինկան.*

**Հումայական եզանակ**

*ինկիր*

*ինկէ՛ք*

**Ընկ**

**Կ ա ն ո ճ ա լ ո Ր ձ Ե ւ Ե Ր**

**Գերբայներ**

Անորոշ՝ *ընել.*

Ապառնի՝ *ընելու.*

Սերակայական՝ *ընող:*

**Մանահական եզանակ**

Ներկայ՝ *կ'ընեմ, կ'ընես, կ'ընէ և այլն.*

Անց. անկատար՝ *կ'ընէի, կ'ընէիր, կ'ընէր և այլն.*

Ապառնի՝ *պիտի ընեմ, պիտի ընես, պիտի ընէ և այլն.*

Անց. ապառնի՝ *պիտի ընէի, պիտի ընէիր, պիտի ընէր և այլն.*

Բաղադրեալ ապառնի՝ *ընելու եմ, ընելու ես, ընելու է և այլն.*

Բաղադրեալ անց. ապառնի՝ *ընելու էի, ընելու էիր, ընելու էր և այլն:*

**Հոծական եզանակ**

Ապառնի՝ *ընեմ, ընես, ընէ և այլն.*

Անց. ապառնի՝ *ընէի, ընէիր, ընէր և այլն:*

**Ս. Ո կ ա Ն Ո Ն Ձ Ե ւ Ե Ր**

**Գերբայներ**

Վաղակատար՝ *ըրեր.*

Յարակատար՝ *ըրած:*

### Մահմանական եզանակ

Վաղակատար՝ ըրեր հմ, ըրեր հս, ըրեր է, ըրեր հնք, ըրեր էք,  
ըրեր հն.

Անց. վաղակատար՝ ըրեր էի, ըրեր էիր, ըրեր էր, ըրեր էինք,  
ըրեր էիր, ըրեր էին.

Յարակատար՝ ըրած հմ, ըրած հս, ըրած է, ըրած հնք, ըրած էք,  
ըրած հն.

Անց. յարակատար՝ ըրած էի, ըրած էիր, ըրած էր, ըրած էինք,  
ըրած էիր, ըրած էին.

Անց. կատարեալ՝ ըրի, ըրիր, ըրաւ, ըրինք, ըրիր, ըրին:

### Հրամայական եզանակ

Ըրէ՛

Ըրէ՛ք

### ՎՆԵԼԻ

### Ն ա ն ն աւ ու ը ն եւ եր

#### Պերբայներ

Անորոշ՝ դնել.

Ապառնի՝ դնելու.

Ենթակայական՝ դնող:

### Մահմանական եզանակ

Ներկայ՝ կը դնեմ, կը դնես, կը դնէ և այլն.

Անց. անկատար՝ կը դնէի, կը դնէիր, կը դնէր և այլն.

Ապառնի՝ պիտի դնեմ, պիտի դնես, պիտի դնէ և այլն.

Անց. ապառնի՝ պիտի դնէի, պիտի դնէիր, պիտի դնէր և այլն.

Բաղադրեալ ապառնի՝ դնելու հմ, դնելու հս, դնելու է և այլն.

Բաղադրեալ անց. ապառնի՝ դնելու էի, դնելու էիր, դնելու էր և  
այլն:

### Ըզնական եզանակ

Ապառնի՝ դնեմ, դնես, դնէ և այլն.

Անց. ապառնի՝ դնէի, դնէիր, դնէր և այլն:

## Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ի Ե Լ Ե Ի Բ

### Դերբայներ

Վաղակատար՝ *գրեր*.

Յարակատար՝ *գրած*:

### Ստեղծանական եղանակ

Վաղակատար՝ *գրեր եմ, գրեր ես, գրեր է, գրեր ենք, գրեր էք, գրեր են.*

Անց. վաղակատար՝ *գրեր էի, գրեր էիր, գրեր էր, գրեր էինք, գրեր էիք, գրեր էին.*

Յարակատար՝ *գրած եմ, գրած ես, գրած է, գրած ենք, գրած էք, գրած են.*

Անց. յարակատար՝ *գրած էի, գրած էիր, գրած էր, գրած էինք, գրած էիք, գրած էին.*

Անց. կատարեալ՝ *գրի, գրիր, գրաւ, գրինք, գրիք, գրին:*

### Հումաւյական եղանակ

Դի՛ր

գրէ՛ք

## 117. ՊԱՆՍԱՍԻՈՐ ԲԱՅՅՐ

Այն բայերը, որոնք շունին խոնարհման բոլոր ձևերը, կը կոչուին պակասաւոր բայեր:

Անոնց խոնարհման մէջ եղած այս պակասը կը լրացուի ուրիշ բայերու քերականական ձևերով:

Հայերէնի պակասաւոր բայերն են՝ եմ!, կամ, գիտեմ, ունիմ, կրնամ, կարենալ:

Պակասաւոր բայերը կը խոնարհուին այսպէս.

Եմ՝

Սահմ. ներկայ՝ *եմ, ես, է, ենք, էք, են.*

Անց. անկատար՝ *էի, էիր, էր, էինք, էիք, էին.*

<sup>1</sup> Անորոշ դերբայ շունեցող բայերու համար կու տանք ներկայի ձևը:

Միւս ձեւերուն համար կը գործածուի ըլլալ բայը (տե՛ս էջ 208):

### Կաւմ

Սանմ. ներկայ՝ կամ, կաս, կայ, կանք, կաք, կան.

Անց. անկատար՝ կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային.

Խոնարհման պակասը կը լրացուի ըլլալ կամ գտնուիլ բայով:

### Պիտեմ

Սանմ. ներկայ՝ դիտեմ, գիտես, դիտէ, դիտենք, գիտէք, դիտեն.

Անց. անկատար՝ գիտէի, գիտէիր, գիտէր, գիտէինք, գիտէիք, գիտէին.

Խոնարհման պակասը կը լրացուի գիտեալ բայով. վաղակատար դերբայ՝ գիտցեր, յարակատար դերբայ՝ գիտցած, ենթակայական դերբայ՝ գիտցող, անց. կատարեալ ժամանակ՝ գիտցայ, հրամայական՝ գիտցի՛ր, գիտցէ՛ք:

### Ունիմ

Սանմ. ներկայ՝ ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիր, ունին.

Անց. անկատար՝ ունէի, ունէիր, ունէր, ունէինք, ունէիք, ունէին.

Միւս ձեւերուն համար կը գործածուի ունենալ բայը. վաղակատար դերբայ՝ ունեցեր, յարակատար դերբայ՝ ունեցած, անց. կատարեալ՝ ունեցայ, հրամայական՝ ունեցի՛ր, ունեցէ՛ք:

### Կրնամ

Սանմ. ներկայ՝ կրնամ, կրնաս, կրնայ, կրնանք, կրնար, կրնան.

Անց. անկատար՝ կրնայի, կրնայիր, կրնար, կրնայինք, կրնայիք, կրնային.

Հրամայական՝ կրցի՛ր, կրցէ՛ք.

Վաղակատար դերբայ՝ կրցեր.

Ֆարակատար դերբայ՝ կրցած.

Ենթակայական դերբայ՝ կրցող:

Խոնարհման պակասը կը լրացուի կարենալ բայով:

## Պարեմալ

Ռդձական ներկայ՝ կարենամ, կարենաս, կարենայ, կարենանք,  
կարենաք, կարենան.

Անց. անկատար՝ կարենայի, կարենայիր, կարենար, կարենայինք,  
կարենայիք, կարենային:

Նուազ գործածական է սահմանական ներկան՝ կը կարենամ, կը  
կարենաս և այլն:

Խոնարհման պակասը կը լրացուի կրճամ բայով:

Կրճամ և կարենալ բայերուն պակասաւոր ձեւերուն համար կը  
գործածուի նաեւ կարող եմ-ը:

**Վարժութիւն.** Ընդօրինակեցէ՛ք անկանոն և պակասաւոր բա-  
յերը, բացատրեցէ՛ք անոնց կազմութիւնը, խոնարհումը՝ որոշե-  
լով եզանակը, ժամանակը, թիւը, դէմքը.

**Ա.** Ամենէն աւելի ինծի վիշտ պատճառող պարագան սա  
եղաւ, որ շտրաթ մը ժննւ կեցեր է առանց երբէք ունէ գործով  
զբաղուելուս Ուրեմն սուտ ըսաւ ինծի, թէ այստեղ կարելոր գոր-  
ծեր ունէր կարգադրելիք: Յաւալի, շատ ցաւալի բան:

Խորհուրդ կու տաս նշանտուրը ետ ընելու, բայց շատ դժուար  
բան մըն է ատիկա, մանաւանդ որ հիմա յարտերութիւն հաս-  
տատանցիներ իր հօրը հետ, որ շատ պարկեշտ ու պատուաւոր մարդ  
մըն է և մեծ համակրանք ցոյց կու տայ մեզի հանդէպ...

Քանի մը օր առաջ Պոլիս եկաւ և մեզի հիւր եղաւ Շատ ու-  
րախութիւն յայտնեց որ իր տղան մեզի պէս ընտանիքի մը մէջ  
պիտի մտնար:

— Հիմա յոյս ունիմ որ ձեր շնորհիւ կատարեալ մարդ պիտի  
բլլայ, ըսաւ

Եւ նոյնիսկ հասկցայ որ ամուսնութենէն ետքը միտք ունի  
մեծկակ դրամագլուխ մը տրամադրել իր զակիին, պայմանով որ  
ինծի հետ ընկեր ըլլայ և միասին գործենք...

Ասոր համար կը խնդրեմ որ այդ եղածները մոռնաս և մա-  
նաւանդ Մարտիկ էֆէնտիի մասին աննպաստ ակնարկութիւն մը  
չընես մօրդ կամ քրոջդ նամակ դրած ժամանակ... Պատուած  
ղղեստի մը վրայէն երր նոր բալթօ մը հագնինք ու կոճկուինք,  
ոչ ոք կրնայ կատկածիլ թէ մեր ներքին լաթերը հին են: Խնդիրը  
կոճակին ուշադրութիւն ընելու վրայ է: Քիչ վաճառականներ կան,  
որոնք առանց դրամագլուխ ունենալու վարկով գործերնին կը դարձ-

նեն: Բարոյականն ալ անանկ է. եթէ դրամագլուխ-բարոյական շու-  
նենայ մարդ և կամ սպառի, կրնայ ինքզինք փրկել վարկ-բարո-  
յականով, միայն թէ վարպետութեամբ շարժելու է:

(Ն. Օտեան)

### 118. ՐԱՅԻ ՍԵՌԵՐԸ

Բայի արտայայտած զանազան գործողութիւնները տարբեր  
բնոյթի կապ կ'ունենան առարկաներուն հետ:

Օրինակ՝

Երախան սլատոնց լրագիրը:

Երախան կը բնանայ:

Երախան կը վազէ դէպի մայրը:

Առաջին նախադասութեան մէջ սլատոնց բային ցոյց տուած  
գործողութիւնը շի կրնար կատարուիլ առանց որեւէ առարկայի: Այդ  
առարկան այստեղ լրագիրն է, որ իր վրայ կը կրէ գործողութիւնը  
և նոյնիսկ կը փոփոխուի այդ գործողութեանէն (կը սլատուի):

Երկրորդ նախադասութեան մէջ կը բնանայ գործողութեան  
համար որեւէ առարկայ պէտք չէ, ենթական դայն կը կատարէ  
ինքնիրեն: Կը վազէ գործողութիւնը չ'անցնիր որեւէ առարկայի  
մը վրայ, այլ ենթական կը կատարէ ինքնիրեն. թէև կը վազէ  
բայն ունի լրացում մը (դէպի մայրը), բայց այդ լրացումը բային  
հետ կը կապուի բոլորովին անուղղակի կերպով, և վաղելու գործո-  
ղութիւնը չ'անցնիր անոր վրայ:

Բայի այն յատկանիշը, որով կ'արտայայտուին անոր տարբեր  
բնոյթի յարաբերութիւնները առարկաներու նկատմամբ, կը կոչուի  
բայի սեռ:

Բայն ունի երեք սեռ՝ ներգործական, կրատական, չէզոք:

### 119. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՐ

Ներգործական սեռի բայը կը ցուցնէ արևաբան գործողութիւն  
մը, որ անմիջական կերպով կ'անցնի այս կամ այն առարկային  
վրայ:

Ներգործական սեռի բային պահանջած խնդիրը կը գրուի հայ-  
ցական հոլովով, կը սլատասխանէ զո՞վ, ի՞նչ հարցումներուն և կը  
կոչուի ուղիղ խնդիր:

Օրինակ՝ սիրելի (ընկերը, ուսուցիչը), սորվիլ (դասը), գրել (նամակ մը, ոտանաւոր մը), վերցնել (գիրքերը), կարդալ (լրագիր մը) և այլն:

Բոլոր պատճառական բայերը նոյնպէս ներգործական սեռի բայեր են: Օրինակ՝ խաղցնել, թոցնել, նստեցնել և այլն:

**Վարժութիւն.** Դտէ՛ք ներգործական սեռի վեց բայ (երկը պատճառական) և գործածեցէ՛ք նախադասութեանց մէջ:

## 120. ԿՐԱՆՈՐԱԿԱՆ ՍՆՈՒ

Այն բայերը, որոնց ցոյց առած գործողութիւնը կը կատարուի ուրիշ: մը կողմէ և կ'անցնի ենթակային վրայ, կրաւորական սեռի են:

Կրաւորական սեռի բայերը կը կաղմուին ներգործականէն՝ ուիլ մասնիկով (տե՛ս էջ 199):

Ներգործական՝ գրել. Ան նամակ գրեց:

Կրաւորական՝ գրուիլ. Նամակը գրուեցաւ անոր կողմէ (անոր ձեռքով):

Ներգործական՝ սիրել. Աշակերտները կը սիրեն ուսուցիչը:

Կրաւորական՝ սիրուիլ. Ուսուցիչը կը սիրուի աշակերտներէն (աշակերտներուն կողմէ):

Կրաւորական սեռի բայերուն խնդիրը (ներգործող խնդիր) սովորաբար կը գրուի բացառականով, ինչպէս կ'երեւի վերի օրինակներէն:

Կան կարգ մը բայեր, որոնց կրաւորականը կը կաղմուի իլ վերջաւորութեամբ: Օրինակ՝ այրել—այրիլ, մաւել—մաւիլ, ծով—ծովիլ, րպիւլ—րպիլիլ, ազատել—ազատիլ և այլն:

Կրաւորական ձև ունեցող քանի մը բայեր կրաւորական սեռի չեն. անոնք կը յուցնեն, թէ տուեալ անձին, առարկային գործողութիւնը կ'անցնի. կ'անդրադատնայ կատարողին վրայ:

Օրինակ՝ սանտրուիլ, լուսցուիլ, հագուիլ:

Այսպիսի բայեր ահա կը կոչուին անդրադարձ բայեր:

Անդրադարձ բայերը սեռի խմատով շատ մօտ են շէգործական:

**Վարժութիւն 1.** Ներգործական բայերը դարձուցէ՛ք կրաւորական, կրաւորականները՝ ներգործական և գործածեցէ՛ք զանոնք նախադասութեանց մէջ.

Լսուիլ, մոռցուիլ, սորվիլ, լուծել, հանել, դնել, տեսնել, յարգուիլ, բանալ, խմել:



**Չէզոք սեռի բայերը** կը ցուցնեն այնպիսի գործողութիւն մը, որ ուրիշ առարկայի մը վրայ չ'անցնիր, կամ ուրիշ առարկայ մը անմիջական կերպով չի կրեր իր վրայ:

*Օրինակ՝* ուրախանալ, քնանալ, խնդալ, երթալ, թոռմիլ, ծաղկիլ, փափկիլ, խոսափիլ, հանդիպիլ, մօտենալ և այլն:

**Չէզոք սեռի բայերուն** գործողութիւնը կրնայ անուղղակիօրէն կապուիլ առարկային հետ, բայց ուղղակիօրէն չ'անցնիր անոր վրայ, և տուեալ առարկային անունը չի գրուիր հայցական հոլովով:

*Օրինակ՝* մօտենալ (մէկուն, բանի մը), ղուգաղիպիլ (րանի մը), կռուիլ (մէկու մը հետ, բանի մը դէմ) և այլն:

Կրատրական ածանցով կարգ մը բայեր ունին չէզոք սեռի խմատ և կը կոչուին կրատրակերայ չէզոքներ:

*Օրինակ՝* խանուիլ, սիրահարուիլ և այլն:

**Վարժութիւն 1.** Գտնել չէզոք սեռի 8 բայ (որոնցմէ 2-ը ըլլան կրատրակերայ չէզոք) և գործածել ղանոնք նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բայերը խմբաւորել ըստ սեռի. ներգործական բայերէն կազմել կրատրական, կրատրականներէն՝ ներգործական, չէզոքներէն՝ սլատճառական.

Կղատել, ակօսել, աղղուիլ, ամփոփուիլ, այրիլ, ապրիլ, ընտրել, թափել, թմրիլ, լուալ, բզկտուիլ, ծծել, կազդուրել, ղեկավարուիլ, ննջել, ներկուիլ, որոշել:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ հատուածին բայերը խմբաւորել ըստ խոնարհումներու. որոշել անոնց անորոշը, անկատարը, անցեալ կատարեալը և հրամայականը.

Համարածում Քիրէճեան կը կոչուէր, արհեստով դրաշար: Ծնմարանին մէջ, — որ հիմա այրացաւեր փլատակներու կոյտ մըն է լոկ տխրատեսիլ, — իր նախնական ուսումը ստացած էր, ու տասնուվեց տարեկան գործի եղած էր, ընտանիքին օգնելու համար դրաշար եղած էր: Իր շահած շարաթական դոյլն դումարը գրեթէ ամբողջութեամբ հօրը կու տար, որպէսզի կարենար պահել իր բազմամագամ ընսանիրը: Հայրը դարբին էր, քիչ շատ կը վաստրկէր, և «վարդի պէս կ'ապրուէին»:

Օր մը հայրը մեռաւ: Սե օրը այն օրը եղաւ իրենց տանը համար: Ան ատեն Համբարձում ութսուն դրուշ կ'առնէր շարաթը: Այդ գումարէն պէտք էր տանը վարձքը վճարել և ապրեցնել, իրմէ դատ, դեռ վեց հոգի: Մայրն ու երկու հասած աղջիկները սկսան դուրսի կար կարել. սղտիկ մանչը, Արշաղը, հազիւ տասնմէկ տարեկան, դպրոցէն հանեցին և ժամագործի մը քով տուին շարաթակիան տասը դրուշով, որուն հինգը շարաթ իրիկունները կը բերէր մօրը կը յանձնէր: Եւ սակայն, երկու ամիս շանցած, հացագործը ա'լ սկսաւ հաց շտալ, և մտավաճառն ու նպարավաճառը տանը դուռը ափ առին:

Համբարձումի համար տանջանքը սկսաւ, նիւթակիան ու բարոյական ահռելի տանջանք: Յերեկները պանիր հաց կ'ուտէր, և օրը բսան փարա խնայելու համար Սկիւտարի առաջին ու վերջին շոգենաւերով կ'երթեւեկէր: Բայց ամենէն աւելի իր սիրտը ճմլող բանն էր տեսնել իր խեղճ մայրն ու մատաղատի քոյրերը, որ ասեղին տակ կը ծակծկէին իրենց մատները՝ մինչև կէս գիշերն անցած:

Չլուսահատեցաւ սակայն, և զլուխը ասղին անդին զարկաւ: Ա՛խ, եթէ կարենար բացէն շահ մը ունենալ:

(Լ. Բաշալեան)

**Վարժութիւն 4.** Հետեւեալ հատուածին բայերը խմբաւորել ըստ եղանակներու՝ որոշելով իւրաքանչիւր բային դէմքը, թիւը, ժամանակը, սեռը.

Առաջին գիշերս Հնդկաստանի մէջ շատ անհաճոյ անցաւ: Պանդոկապետը որուն հետ ալ մտերմացած էի, կարգ մը խրատներ տուաւ, որոնք զիս մտատանջութեան մատնեցին:

— Պատուհաններու փեղկերը քնանալէ առաջ լաւ մը գոցեցէր, բանի որ տարին պատճառաւ սափսլուած էր այսակիները բաց թողուլ:

— Ինչո՞ւ համար պէտք է փեղկերը գոցեմ...

— Որովհետեւ դիշերը ադաւանները սենեակ կը մտնեն ու ամէն բան տակն ու վրայ կը դարձնեն, նոյնիսկ կրնան ձեր գուլպաները, վընոցը, շապիկին օձիքը, թաշկինակները, թեճակները և այլն քողնալ... և եթէ քուներնիդ ծանր է՝ դէմքերնիդ ալ խածնել:

Յիշեցի թրքական սուածը «ադաւար կերակրէ, որպէսզի աչքդ հանէ»:

— Եթէ ձեզուներն կամ պատին մէջէն ձայներ լսէք, մի՛ վախնաք, — շարունակեց պարոն Բօլ:

— Ի՞նչ են այդ ձայները:

— Մուկերու աղմուկն է պարզապէս:

— Սենեակը շե՞ն գար:

— Շատ շեն համարձակիր սենեակ մտնել, մանաւանդ եթէ լոյսը վառած ձգէք:

— Ուրեմն այդպէս կ'ընեմ:

— Իսկ եթէ երբէք տեսնէք որ մուկ մը սենեակ մտնէ և դիւահարի մը պէս ասողին անդին վազվզէ կամ անկողնին վրայ ցատքել ուզէ ու յետոյ գետին իյնայ մեռնի, չըլլայ որ զինքը հալածելու համար անկողնէն վար իջնաք կամ իրեն ձեռք դպցնէք, այլ իսկոյն ելեքտրական կոճակին վրայ կոխեցէք, որսէսզի սպասաւորը գայ:

— Ի՞նչ կը նշանակէ այսիկա:

— Մուկերը երբ ժանտախտէ բռնուին, այսպէս՝ տենդի ազդեցութեան տակ՝ խելայեղ ամէն կողմ կը վազվզեն, մինչև որ սատկին, կը հասկնա՞ր... Երբէք պէտք չէ որ այդ տեսակ ժանտախտահար մուկի մը ձեռք դպցնէք:

— Իսկ սպասաւորը...

— Սպասաւորը մասնաւոր դեղեր ունի, որ իսկոյն մուկին վրայ կը թափէ:

— Բայց ինչո՞ւ բաւական կատու չունիք այդ մուկերը ջնջելու համար:

— Նախ այստեղի մուկերը այնքան մեծ են որ կատուներէ չեն վախնար և կրնան անոնց դիմադրել, ուստի կատուի տեղ՝ մուկ բռնող շուներ կը գործածենք, բայց այնքան ահագին քանակութեամբ մուկ կայ, որ շունի ամբողջ բանակ մը բաւական չէ գիրենք բնաջինջ ընելու համար:

— Ուրիշ տեղեկութիւններ ալ ունի՞ք տալու:

— Բնականաբար, մուկերէն դատ դժբախտաբար... շատ կարիճներ կան:

— Թունաւոր:

— Անշուշտ կարիճը միշտ թունաւոր է և շատ վտանգաւոր երրորդ խայթէ: Միայն թէ քնացած տեղդ քեղի բան մը չ'ընենք: Նոյնիսկ կրնայ ըլլալ որ մարմնոյդ կամ դէմքիդ վրայէն քալէ անցնի առանց վնասելու, իսկ եթէ անդգուշութեամբ կամ անգիտակցաբար ձեռք դպցնես իրեն՝ իսկոյն կը խայթէ...

— Իսկ օձեր չկա՞ն արդեօք:

— Շատ, բայց անոնք կարեւորութիւն չունին... Եթէ դիշերը պարտէղ շելէք պտըտելու՝ օձերէ վախ չունիք, որովհետեւ անոնք

դուրսը կը գտնուին, և շատ քիչ անգամ առիթ կ'ունենանք սեն-  
կակներու մէջ օձ տեսնելու: Ուրեմն առ այժմ դիշեր բարի, պա-  
րոն, հանգիստ քուն կը մաղթեմ, յոգնած ըլլալու էք անշուշտ:

(Ե. Օսկան)

## ՄԱԿՄԱՅ

### 122. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Անոնք Բաշարաւ կ'ուրեցան:

Ան պատասխանեց մեղմարար:

Արամը բարեխղճօրէն կը սորվի դասերը:

Դուն միշտ իրաւացի ես:

Անիկա մօտաւորապէս երկու մեթր ցատրեց:

Քաջարար, մեղմարար, բարեխղճօրէն բառերը կը ցուցնեն  
գործողութեան որակը, անոր կատարման եղանակը, ձեւը: Միշտ  
բառը կը ցուցնէ իրաւացի ըլլալու ժամանակը, մօտաւորապէս  
բառը՝ ցատրելու շափին աստիճանը, երկու մեթրին մօտաւոր ըլ-  
լալը:

Այս և ասոնց նման բառերը մակբայ են:

Մակբայ կը կոչուին այն բառերը, որոնք կը ցուցնեն առարկայի  
մը յատկանիշին (գործողութեան, եղելութեան, որակին, չափին)  
յատկանիշը, պարագան:

Հայերէնի մակբայներն են՝ կամաց, կամացով, արագ, ստէպ,  
միշտ, ուշ, դեռ, դեռևս, ակամայ, յանկարծ, խալառ, հագլու,  
վերստին, յաւէտ, յալտեան, արդէն, տակալին, յետոյ, նախ,  
սպա, վար, վեր, մերք, երբեմն, մեծապէս, ուժգնօրէն, լայնօրէն,  
երկարօրէն, բարեխղճօրէն, դիտմամբ, երեսանց, մէկէնվմէկ, մէկ-  
դի, վաղուց, օրէ օր, կանուխ և այլն:

Մակբայները կը դրուին՝

Ա. Մեծ մասամբ բայերու վրայ՝ միամտօրէն ժողով, արագ  
խօսիլ, ուշ պատասխանել, կամաց բալել, ստէպ ստէպ այցելել,  
ուժգնօրէն հարուածել, լայնօրէն տարածուիլ, դիտմամբ ուշանալ  
և այլն:

Բ. Ածականներու վրայ՝ միշտ մնայուն, զրեքէ մերկ, հագլու  
նկատելի և այլն:

**Գ.** Թուականներու վրայ՝ նազիւ մէկ մեթր, ընդամէնը երեք  
նուպլի և այլն:

Մակրայները նախադասութեան մէջ կը կատարեն պարագայի  
սլաշտօն՝ ձևի, ժամանակի, տեղի, շափի ու քանակի:

**Օրինակ՝**

Անյազօրէն կը կարգամ քու նամակդ:

Գաղտնօրէն կը դիտէր ամէն ինչ:

Մանր հողատէրերն ալ նետզնետէ կը կորսնցնեն իրենց հո-  
շերը:

Կը կարգար այժմ ինչ դիրք որ ձեռք անցընէր:

Ամենուրեք ծառերը ծաղկեր են, դետինը կանանցեր է:

Անոնք շատ նետու կ'ապրին:

Համեստութիւնը անլի կը գեղեցկացնէր զինք:

Ան շատ կը սիրէր հայրը:

Այս օրինակներուն մէջ անյազօրէն, գաղտնօրէն բառերը ձե-  
ւի պարագայ են, նետզնետէ ու այժմ՝ ժամանակի պարագայ,  
ամենուրեք, նետու՝ տեղի պարագայ, անլի, շատ՝ շափի պարագայ:

Սակաւաթիւ մակրայներ կրնան նաև ստորոգելիական վերա-  
դիրի դեր կատարել:

**Օրինակ՝**

Անոնց տունը նետու է:

Անոր վերադառնալու ժամը հիմա է:

**Վարժութիւն.** Գտնել մակրայները և որոշել թէ ինչ խօսքի  
մասի լրացում են անոնք.

Երբեմն ալ մօրս միջամտութեանը կը դիմէր զիս կարգի բե-  
րելու և առողջութեանս հակելու ստիպելու համար զիս:

— Հանրմ, բո՛ւ որ դիշերները շատ շնտտի, հողին շքակէ  
գրելով:

— Գուն ալ գուլպայ կը շինես, կ'ըսէի ծիծաղելով:

— Ես դաւկիս համար կ'աշխատիմ...

Եւ անմիջապէս իր ձայնը կը փոխուէր... սուղը կու գար,  
կարգաւ, մէկ մէկու ետեւէ, համրիչի մը հատիկներուն պէս. իր  
ամուսնութիւնը հազիւ երկու տարի տեւած, գիւղը մնացած զա-  
ւակը և վերջապէս օտարի գուռը իյնալը, ինչպէս կ'ըսէր ինքը...

Երջադեհատը յեղաշրջում մը բերաւ ու վայլեց իրեն. նախ  
քնաւայրը, կլիման կորսնցնող մէկը դարձաւ. մէջքը շատ նեղ եկաւ

իրեն ու փէշը շատ լայն. առջի օրերը չկրցաւ շարժիլ... ինքը՝ իր աղուորութեան համար տրուած վկայութիւնները լսելով՝ կը կարմրէր, գլուխը ծռելով մեղմիւ ուսին վրայ:

Ու քիչ քիչ աւելի վայելուչ երեւալու ջանք մը սկսաւ ընել. դարձեալ մը եկաւ իր սրտին մէջ. իր դիւղացիի պարզամտութեամբը սպասուհիի դիրքին մէջ ունեցած պզտիկ միջոցներով՝ սլշրանքով լեցուն արդուզարդ մը ունէր հիմա, միշտ մաքուր հաղուած ու սանտրուած էր օրուան ամէն ժամուն. մութ կապոյտ եազման գէպի ետեւ շրջած, հաղիւ թէ կը կենար պզտիկ սիրուն կապով մը ու կը սպառնար ամէն վայրկեան վար սահիլ ուսին վրայ, բռնորովին արձակելով անոր առատ մազերուն կոհակները. մինչդեռ մաս մը ճակտին, մինչև աչքերուն վրայ կը թափէր կամայ թէ ակամայ ու վարը, ծոծրակին քով, նուրբ աղուամաղի թափը մը՝ մորթին կաթի ճերմակութիւնը ցոյց կու տար իր նոր բուսած մարդագետնի մեղկ ու կակուղ խաւերուն մէջէն:

(Գ. Զօհրայ)

### 123. ՄԱԿՐԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մակրայներն ըստ իմաստի կ'ըլլան՝ որակի կամ ձևի, ժամանակի, տեղի, շափի կամ աստիճանի և ընդհանրական:

1. Որակի կամ ձևի մակրայները կը ցուցնեն գործողութեան որակը, ձեւը, այսինքն՝ ինչպէս կատարուիլը:

Այդ կարգի մակրայներ են՝ քաջաբար, հերոսաբար, անձնւիրաբար, միամտօրէն, մեծապէս, եղբայրաբար, լիովին, ակամայ, յանկարծ, յանկարծակի, մէկէն, մէկէնիմէկ, կամայ, բարձրաձայն, յամրաձայլ, միասին, անմիջապէս, մեղմիւ և այլն:

Օրինակ՝

Անոնք հերոսաբար կոտուեցան:

Մեղմիւ կը փշէ քամին:

Կ'երգեն, կը խնդան, բարձրաձայն կը խօսին:

Յամրաձայլ ետ կը դառնամ:

Կամաց կամաց կ'սլլեմ կ'երթամ:

Ներս մտանք միասին:

Զղազրդուեցայ արտակարգօրէն:

Հոս անցուր գիշերը, կ'ըսեմ իրեն մէկէնիմէկ:

Անմիջապէս ոտրի ելայ:

Կսմաշուկ մը հագան իրենց տրեխները:

2. Ժամանակի մակբայները կը ցուցնեն գործողութեան, եղելութեան ժամանակը:

*Այդ կարգի մակբայներ են՝ այժմ, արդ, հիմա, երբեմն, դեռ, դեռեւս, շատ, ուշ, միշտ, մշտապէս, յար, յաւէտ, յետոյ, կանուխ, վաղուց, հնուց, նախ, տակաւին, միանգամայն, ժամ առ ժամ, ժամանակ առ ժամանակ, վերջապէս, ի վերջոյ, երբեմն երբեմն, օրէ օր և այլն:*

*Օրինակ՝*

*Հիմա քիչ մը պիտի տաքնայ:*

*Անձրևը կը շարունակէ միշտ իր կայլակներու լուսեղէն պարը մայթին վրայ:*

*Ես ուշ համբայ կ'ելլեմ:*

*Պէտք է որ մարդ երբեմն երբեմն աւելի սաստիկ զգայ, աւելի ուժեղ վայելէ:*

*Երբ որ պարոն Աթունը դեռ ողջ էր, երբեմն կ'երթայի իրեն:*

*Առաւօտեան դէմ քունս տարած էր վերջապէս:*

*Շուտով կ'անցնինք կամուրջը:*

3. Տեղի մակբայները կը ցուցնեն գործողութեան կամ եղելութեան տեղը:

*Այդ կարգի մակբայներ են՝ վար, վեր, ներս, մէկդի, ամենուր, ամենուրեք, դէմ առ դէմ, դռնէ դուռ, զիսդէ զիսդ, հետու, վեր-վար և այլն:*

*Օրինակ՝*

*Անոնք ներս եկան:*

*Աբամբ մէկդի կեցած էր:*

*Գէմ առ դէմ եկայ տիկին Պէաթրիսի Հետ:*

*Սենեակին մէջ վեր-վար կը բալէր:*

4. Չափի ու քանակի մակբայները կը ցուցնեն գործողութեան կամ եղելութեան չափը, աստիճանը:

*Այդ կարգի մակբայներ են՝ շափազանց, քանիցս, բազմիցս, ետզիս, ամբողջովին, բոլորովին, բնաւ, լիովին, մասամբ, մասնակիօրէն, Բիշ Բիշ և այլն:*

*Օրինակ՝*

*Բազմիցս զդուշաքօցած եմ քեզի:*

*Բեթևա էր քալուածքը, գրեթէ բոլորովին անխելի:*

ես անելի դէշ ըրի, երբ ժամանեցի հոս:  
Ըսածները մասամբ ճիշդ են:

5. Կան մակրայներ ալ, որոնք ունին ոչ թէ մէկ, այլ մէկէ անելի իմաստներ. այդպիսի մակրայները կը կոչուին ընդհանրական մակրայներ: Այսպէս, առաջ մակրայը կը գործածուի թէ՛ տեղի, թէ՛ ժամանակի իմաստով: Ան անդադար առաջ կը փախ նախադասութեան մէջ առաջ-ը տեղ կը ցուցնէ, իսկ Ան առաջ անելի համետ էր նախադասութեան մէջ նոյն առաջ բառը ժամանակ կը ցուցնէ:

Յերնէ բերուն մակրայը կուրբ բերնէ բերան տարածուեցաւ նախադասութեան մէջ ձեւի իմաստ ունի, իսկ Քածակը բերնէ բերան լի է ջուրով նախադասութեան մէջ նոյն մակրայը շարժի իմաստ կ'արտայայտէ:

Ընդհանրական մակրայներն են՝ շարունակ, ետ, անընդհատ, յանախ, սուէսլ սուէսլ, մերք մերք և այլն:

**Վարժութիւն.** Գտէ՛ք մակրայները, որոշեցէ՛ք անոնց տեսակները և ընդօրինակեցէ՛ք զատ սիւնակներու մէջ.

**Ա.** Պօղոս քիչ մը տաքութիւն ունէր: Առտուն չէր կրցած գլուխը բարձէն վիւրցնել: Տաքութիւնը շատցած էր: Բան մը չէ, ըսին նախ, վաղը կ'անցնի: Հետեւեալ օրը երիտասարդը անելի տկար էր. մարմինը կ'այրէր կարծես տաքութեան մէջ: Նըրայրը գրեթէ միշտ անոր բովն էր: Իր խանութին վրայի սենեակը կը պակսէին ինք, եղբայրը ու հօրեղբայրը:

Հիւանդը երթալով ձանրացաւ: Նըրայրն ու հօրեղբայրը շուրբ մնացեր էին: Ի՞նչ ընէին: Իրենց դիտցած բոլոր ընտանեկան դեղերը դործածելու էին ու հիւանդին վիճակը նոյնն էր միշտ, հետզհետէ անելի վատթարանալով: Խեղճ տղան օրէ օր կը հալէր, ինքզինք կորսնցուցած, ցնդական զառանցանքներով, որոնց մէջ կ'արտասանէր միշտ իր նորատի կնոջն ու մէկ հատիկ զուկին անունները:

Յետոյ օր մը եկաւ որ հիւանդին տէրերուն սիրտը վիւլուկն առաւ: Չնորէ կլէկու վրայ էր խեղճ տղան: Առջի կտրիճէն՝ հիմա շորցած մարմին մըն էր մնացեր, անընդհատ կրակի մը մէջ այրելով հատնելով օրէ օր:

(Լ. Քաշալեան)



Թ. Գոյութիւն ունէ՞ր իրօք, թէ առասպել մըն էր որ բերնէ բերան կրկնուելով, տարածուելով՝ վերջնական ձև ու վաւերացում կը ստանայ, իրողութեան կարգ կ'անցնի:

Գող մըն էր Զարուզօն մեր գեղին մէջ. ոչ այն ռամիկ գողը որ կը բռնուի շարունակ, կը ծաղրուի ու բանտերու մէջ կը փճանայ. ոչ ալ այն ահարկու աւաղակը որուն գողօնին արլուն կը խառնուի ատեն ատեն:

Իր մեծ արժանիքը Շարպիլութեան մէջ էր. օղի պէս անօսր, օղիի պէս անբերեցիթ, տեղ մը չէ ու ամէն տեղ է միանգամայն:

Ամենէն աւելի ամուր փախուած դուռը, ամենէն բարձր պատը՝ մանկէ շնն արգիլեր զինքը...

Հիմա արուեստասէրի պէս կ'ապրէր, զոյնալով թալլելով շարունակ, աւելի սնապարծութենէ քան թէ իրական շարութենէ մղուած... Կամաց կամաց մտերմութիւն մը հաստատուած էր գիւղացոց ու այս գողին մէջ, ի հարկէ ստիպեալ՝ վարժուեր էինք իր ներկայութեան:

(Գ. Զօհրուպ)

## 124. ՄԱԿԹԱՅՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

*Մակրայները կազմութեամբ բաղմազան են:*

Կան պարզ, բարդ, ածանցատր և փերականակաճ ձևերէ կազմուած մակրայներ:

Պարզ մակրայները կազմուած են միայն մէկ արմատէ. ինչպէս՝ դեռ, ապա, նախ, ուշ, շուտ, մերր, վեր, վար, ետ, ներս, դուրս, արագ, ստէպ, կանոյս, շտապ, յանախ, հիմա, յաւէտ, յար և այլն:

Բարդ մակրայներուն մէջ կան թէ՛ իսկական, թէ՛ անիսկական բարդութիւններ:

Իսկական բարդութիւններ են՝ միաձայն, բարձրաձայն, միանամուտ, միաբերան, միաժամանակ, միանգամայն, սրտատուփ և այլն:

Անիսկական բարդութեամբ կազմուած մակրայներն աւելի շատ են:

Աստուջ մէջ ստաւել մեծ թիւ կը կազմեն կրկնատրները, որոնք կը կազմուին նոյն արմատին կամ բառին կրկնութեամբը:

Յրինակ՝ ուշ, ուշ, ստէպ ստէպ, շուտ շուտ, ատեն ատեն, կամաց կամաց, զոյգ զոյգ (շարութիւլ), վաճկ վաճկ (արտասանել), տեղ տեղ (չորնալ), ալիք ալիք (տարածուիլ) և այլն:

Կրկնաւոր յարադիրներէն շատերուն բաղադրիչները իրարու կը կապուին առ նախդիրով: Ինչպէս՝ ժամ առ ժամ, րոպէ առ րոպէ, վայրկեան առ վայրկեան, քայլ առ քայլ, դէմ առ դէմ, մի առ մի և այլն:

Արմատի կամ բառի կրկնութեամբ կազմուող մակրայնները կրնան իրարու կապուիլ ուրիշ նախդիրներով եւս, ինչպէս՝ ըստ, ի, գ, ընդ: Սակայն այդպիսի մակրայներու թիւը համեմատաբար քիչ է: Օրինակ՝ օրըստօրէ, վերջիվերջոյ, նեւզնեւտէ, մերք ընդ մերք, մէջ ընդ մէջ, գիրկընդխառն և այլն:

Բարդ մակրայնները կը կազմուին նաեւ տարբեր արմատներէ կամ բառերէ: Անոնք իրարու կրնան միանալ թէ՛ ու շաղկապով և թէ՛ նախդիրներով: Ինչպէս՝ աջ ու ձախ, վեր ու վար, ետ ու առաջ, ցայգ ու տիւ, վոճբ ի շատէ, վայրիվերոյ, տակնուվրայ և այլն:

Յաճախ նախդիրը դրուելով ուրիշ խօսքի մասի մը վրայ, կը կազմէ մակրայ, կամ կը դրուի մակրայի մը վրայ և կը կազմէ նոր մակրայ: Ինչպէս՝ առայժմ, առնուազն, առանել, առհասարակ, ընդամէնը, իսպառ, ի վերջոյ և այլն:

Ածանցաւոր մակրայնները կը կազմուին որեւէ խօսքի մասէ ու ածանցէ:

Մակրայակերտ ածանցներն են՝

**(Ա)բար**— հայրւարար, եղբայրարար, ընկերարար, բարեկամարար, ընթշարար, վայրկեանարար, մտերմարար, խոհեմարար, աղնուարար, դիտակցարար, խոնարհարար, թշնամարար, մեքենարար, ազահարար, պատահարար, քաջարար և այլն:

**(Ա)պէս**— առանելապէս, ամբողջապէս, խորապէս, գերադանցապէս, կատարելապէս, յատկապէս, մեծապէս, էապէս, իրտապէս, զլխատրապէս, հիմնաւորապէս, վերջապէս, նախապէս, մշտապէս, անձնապէս, հոգեպէս, ներքնապէս, սնտեսապէս, բարոյապէս և այլն:

**Օրէն**— աղետօրէն, լայնօրէն, սերտօրէն, դանդաղօրէն, մտերմօրէն, անշնչօրէն, փաստօրէն, երկմտօրէն, ծանրօրէն, հասցնիւօրէն, փարթամօրէն, շքեղօրէն, վճռականօրէն, դիտականօրէն և այլն:

**Ովիւն**— լիովին, ամբողջովին, բոլորովին, խմբովին, հիմնովին, զլխովին, կամովին և այլն:

Այս ածանցներով միայն մակրայններ կը կազմուին:

Կան ածանցյալներ ալ, որոնցմով թէ՛ մակրայններ, թէ՛ այլ խօսքք մասեր կը կազմուին:

Այդ ածանցյալներն են՝

- Ա.կի** — շեշտակի ((հարուածել), շեղակի (նայլ), համառօտակի (շարադրել), թեթեակի (սլատմել): Այլի ածանցով կը կազմուին նաեւ ածականներ. ինչպէս՝ եղակի, յոգնակի, երկակի, կողմնակի, որոշակի և այլն:
- Ա.յն** — միանգամայն, լռելեայն: Բայց կան նաեւ համայն, ամենայն բառերը, որոնք ածականներ են:
- Ո.վի** — մտովի, իրովի: Ովի ածանցով կը կազմուին նաեւ ածականներ՝ ծալովի, ջրովի, հաւաճովի և այլն:
- Ի.ն** — ինքնին, վերստին, կրկին, տակաւին: Այս ածանցով կը կազմուին նաեւ ներմին, վերին, ստորին և այլ ածականներ:

Մակրայններ կը կազմուին նաեւ հոլովման ու խոնարհման նշաններէն (մեծ մասամբ գրաբար ձեւերու քարացման նանապարհով): Ատոնցմէ են՝ հազիւ, բնաւ, դիրաւ, կարգաւ, մասամբ, դիտմամբ, նորէն, մէկէն, վաղուց, շտապով, փոթով, շուտով և այլն:

Քիչ են խոնարհման ձեւերէն առաջացած մակրայնները՝ դարձեալ, համարեալ, գրեթէ:

Երբեմն մակրայի իմաստ կ'արտայայտուի նկարագրական եղանակով՝ բառերու կապակցման միջոցով: Բառերու այդ կապակցութիւնները կը գործածուին մակրայի դերով՝ իրրեւ սլարագայ:

Այդպիսի կապակցութիւնները շատ կը կազմուին ի բունով: Ինչպէս՝ օրն ի բուն, գլշերն ի բուն և այլն:

Օրինակ՝

Օրն ի բուն կ'աշխատէր գործին հետամուտ:

Նկարագրական մակրայններ են՝ ժամ առաջ, մեծաւ մասամբ (կամ մեծ մասամբ), առաջին հայեացքէն, ամենէն առաջ, օր օրի (կամ օր օրի վրայ), մինչեւ որ աստիճան, մասնաւոր կերպով, անվերադարձ կերպով, ուրիշ կերպ և այլն:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ մակրայնները խմբաւորել ըստ իրենց կազմութեան.

Միանգամայն, բնաւ, բոլորովին, կամացուկ, հազիւ, աղնբւորէն, շեղակի, բարեկամարար, սուսժամ, աջ ու ձախ, վեր, քնքշօ-

բէն, առնուազն, մէջ ընդ մէջ, կատարելապէս, միահամուռ, քիչ քիչ, հիմա, տակալ ստէպ, ապա, յետոյ, լիարերան, ժամ առ ժամ. վաղուց, ուժդեօբէն, զեռ, զիամամբ, զրեթէ:

**Վարժութիւն 2.** Օրէն, (ա)պէս, (ա)բար, ովին ածանցներով կազմել շորսական մակրայ և գործածել զանոնք նախադասութեանց մէջ:

**Վարժութիւն 3.** Գտնել մակրայները, որոշել անոնց տեսակներն ըստ իմաստի և բացատրել կազմութիւնը.

**Ա.** Յուսէի աղան ի զուր օրն ի բուն իր հաշտարարի դերը կը կատարէր, ողորկիչ, համողիչ փաստերով. առնողին ըսելով թէ ասլրանքը աժան էր այդ զինով, ու ծախողին՝ թէ իր վաճառող պահանջած զինէն շատ պակաս կ'ընէր. ո՛չ. երկուքն ալ կը յամառէին, և Յուսէի աղան յուսակտուր ձեռնթափ կ'ըլլար ա՛լ. առեսուրի տաղնասը, զոր իր վաճառական եղած ատենէն այնքան լաւ կը ճանշնար, նորէն իր վրայ, իր համեստ միջնորդի ասլրուստին վրայ ալ կ'իշխէր ու փճացնել կը սպառնար զինքը:

Ո՛հ, թէ որ մինակ ըլլար...

Վասն զի բարոյական կորովը կը պակսի իրեն՝ օր օրի, իր երբեմնի նիւթական դրամագլխին պէս, հիմա կը զգայ որ իր սրտին քաջութիւնը կը սպառի ու կը հատնի քիչ քիչ: Գեռ առտուները իր դողդոջուն ձեռքին մէջն է պայուսակը, զոր առանց ամբողջապէս լեցնելու կը դառնայ շատ հեղ. ու առտուն, նաւամատոյցին վրայ, այն վաճառականներուն քով՝ որոնք մուրացիկի մը ողորմութիւն տալու պէս երբեմն գործ կու տան իրեն, կը սլքտայ, երբեմն կը համարձակի անոնց խօսքին խառնուիլ, կարծիք տալ, միշտ խօսողին նսպատատոր կարծիք մը: Անոնց դժին վրայ շի բայեր, այլ քիչ մը ետեւէն, իր անբաժան պայուսակը ձեռքը, ու երբ պատահի որ առեսուրի մէջ մէկու մը երեսէն վնաս մը կրին այդ մարդիկը, ինք անոնցմէ աւելի կը զայրանայ այդ մէկուն դէմ:

(Գ. Զօհրապ)

**Բ.** Գեղեցիկ է կեանքը, հաճելի՝ ասլիլը, երբ առատ կանուխ կ'ըլլան անկողինէդ, մարմինիդ վրայ տակաւին զաղջութիւնը յամեցող զիշերուան: Կ'ըլլես ու կը նայիս հեղ մը՝ կնոջդ փակ աչքերուն, և ոտքիդ մատներուն վրայ, կամաց, մեղմիւ, առանց շշուկ հանելու կ'ուղղուիս խոհանոց, սրտիդ մէջ վախը՝ զինք արթնցնելու...

Այո՛, անհաւատալիօրէն գեղեցիկ է կեանքը, հաճելի՛ ապրիւր, երբ իրերը դասաւորուած են այնպէս և երբ դուն դուրս ելլելէ վերջ ունիս աշխատանք մը ապահով: Շատ պարզ բաներ են ըսուածները. մենք շխտեցանք բնաւ շքեղօրէն կահաւորուած տան մը ու հարստութեան մասին... Սակայն քանի՞ քանի՞ հազարներ այս ակներուն վրայ, այս պարզ նկուղը, այս շնչին տարրական իրաւունքը մարդկային, վերածեր են երազի: Վերածեր են երազի, որովհետեւ անլին, շատ ու շատ անլին ապահովուած է ակ մը մարդոց, անարդարօրէն, իրենց դժբախտութեան խկ դինով:

(Գ. Սեւան)

## Կ Ա Պ

### 125. ԸՆԳՆԱՆՈՒԻ ԾԱՆՕԹՈՒԹՒԻՒՆ

Այտերէն կը սրբէր արցունքները:

Հանդիպեցայ տունը:

Կը սառի այտերու վրայ արցունքը կրակ:

Հանդիպեցայ տան մօտ:

Այս նախադասութեանց մէջ տեղ ցուցնող լրացումը առաջին պարագային արտայայտուած է միայն մէկ բառով (այտերէն, տունը), իսկ երկրորդ պարագային՝ երկու բառով (այտերու վրայ, տան մօտ): Այս երկու բառերէն ոչ մէկը կրնայ առանձին դործածուիլ ստորոգեալին հետ. կարելի չէ ըսել՝ կը սառի այտերու կամ կը սառի վրայ:

Նոյն բանը կարելի է ըսել նաև կ'երգեր սոխակի պէս նախադասութեան մասին, ուր ստորոգեալին հետ առանձին չեն կըրնար դործածուիլ ո՛չ սոխակի և ո՛չ ալ պէս բառերը: Պէս-ը դրուելով սոխակ բառին վրայ, մէկ կողմէն դայն կը կապէ ստորոգեալին, իսկ միւս կողմէն՝ այդ բառին (սոխակ) հետ կը ցուցնէ գործողութեան կատարման ձեւը. կ'երգէր ի՞նչպէս, ի՞նչ ձևով՝ սոխակի պէս:

Որեւէ բառ մը լրացեալին (մեծ մասամբ ստորոգեալին) կապող և անոր հետ լրացում դարձող բառերը կը կոչուին կապ:

Օրինակ՝

Գէորգը կը խօսէր իր հայրենիքին մասին (մասին բառը դրուած է հայրենիքին բառին վրայ և անոր հետ միասին դարձած է կը խօսէ ստորոգեալին լրացումը):

Յաջողեցաւ աշխատասիրութեան շնորհիւ (շնորհիւ բառը դրուած է աշխատասիրութեան վրայ և անոր հետ յաջողեցաւ ստորոգեալին լրացումն է):

Ինչպէս այս, նմանապէս և կապ ունեցող բոլոր նախադասութեանց մէջ կապը և կապուող բառը միասին կը դառնան լրացում: Առաջին նախադասութեան մէջ հայրենիքին մասին բառերը միասին անուղղակի խնդիր են, իսկ աշխատասիրութեան շնորհիւ բառերը՝ գործողութեան պատճառ ցուցնող լրացում:

Նախադասութեան մէջ կապերը կը դրուին մեծ մասամբ գոյականներու, ապա նաև դերանուններու և գոյականարար գործածուած ուրիշ խօսքի մասերու վրայ:

Օրինակ՝

Գնաց դէպի տուն:

Անոր պէս գեղեցիկ կը կարգայ միայն Յասմիկը:

Երկինքի կապոյտին նման աչքեր ունէր:

Կը պատմէր տեսածին մասին:

Առաջին նախադասութեան մէջ կապը գործածուած է գոյականի, երկրորդին մէջ՝ դերանուն, երրորդին մէջ՝ ածականի, չորրորդին մէջ՝ դերբայի հետ:

Հայերէնի կապերն են՝ ի, առ, ըստ, դէպի, մինչև, իբրև, առանց, բացի, զատ, համար, հանդերձ, ի վեր, հետ, պէս, շտի, դէմ, մօտ, վրայ, իսկ, վերաբերեալ, նկատմամբ, մասին, նման, մէջ, փոխանակ, փոխարէն, հակառակ և այլն:

Ասոնք կրնան դրուիլ կապուող բառերէն առաջ կամ յետոյ:

Օրինակ՝

Մինչև տուն միասին կ'երթայինք:

Մարդուն մէջ գեղեցիկ է բարութիւնը:

Այս հիման վրայ ալ կապերը կը բաժնուին նախադրութիւններու և յետադրութիւններու:

Հայերէնի նախադրութիւններն են՝ ի, առ, ըստ, ընդ, դէպի, մինչև, իբրև, որպէս, ինչպէս, առանց և այլն:

Ասոնցմէ մէկ բանին զրարարի նախդիրներ են (ի, առ, ըստ, ընդ), որոնցմով կաշմուած դրարարածն կարգ մը կապակցութիւններ մինչև հիմա ալ կը պահպանուին. ինչպէս՝ ի գիտութիւն, ի տնօրինութիւն, ըստ կարգի, ըստ ամենայնի, առ ի շղոյէ, ընդ որում և այլն:

Հայերէնի յետադրութիւններն են՝ համար, մասին, պէս, մօտ, Լուլ, հետ, տակ, դէմ, ստեն, հանդերձ, զատ, միջև, նկատմամբ, միջոցին, պատուին, օրօք, օգտին և այլն: Հայերէնի մէջ աւելի շատ են յետադրութիւնները:

Կան կապեր, որոնք կը գործածուին թէ՛ նախադաս, թէ՛ յետադաս:

Օրինակ՝

Ան նպատակին հասաւ շնորհիւ ջանասիրութեան:

Ջանասիրութեան շնորհիւ ան հասաւ նպատակին:

Բոլորը եկեր էին բացի Յակոբէն:

Յակոբէն բացի բոլորը եկեր էին:

Այսպիսի երկակի գործածութիւն ունեցող կապերէն են՝ անկախ, ընդդէմ, հակառակ, հանդէպ, հանդերձ, սկսեալ, շնորհիւ, ի անս և այլն:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել կապերը կապուող բառերուն հետ. կապերն ստորագծել երկու, իսկ կապուող բառերը՝ մէկ գիծով.

Գէորգ, մինակ մնալուն պէս, վար կ'իջնէ անկողնէն, կթոտ քայլերով կը յառաջանայ մինչև պատուհանն և մէկդի կ'առնու վարագոյրը: Սեննակը պարտէղին վրայ կը նայի... Քիչ մը ատեն կը դիտէ անձրևի կաթիլներն որք ծլարձակ ոստերուն վրայ իջնալով յուշիկ շրշիւն մը յառաջ կը բերեն և մարգարտի պէս կը փողփողին անդ: Հակառակ դուրսի տխրութեան, այդ կանաչազարդ ձիւղերը զորս քսան օր առաջ տեսած էր իրենց կմախային մերկութեան մէջ, տեսակ մը գոհունակութիւն կը պատճառեն իրեն...:

Ու գրելու պէտք մը կը զգայ, իր զգացումները թուղթին վրայ թափելու անդուսպ, անդիմադրելի տենչ մը: Կամաց քայլերով գրասեղանին քով կ'երթայ, որպէսզի հօրաքոյրը շիմանայ վարէն, թուղթ ու գրիչ կ'առնու և տենդայոյզ շարժումներով, արագ-արագ կը գրէ...

(Լ. Քաշալեան)

**Վարժութիւն 2.** Ընդօրինակել յետադրութիւնները կապուող բառերուն հետ. յետադրութիւններն ստորագծել երկու, իսկ կապուող բառերը՝ մէկ գիծով.

1. Ինչ որ ալ ըլլան ուրիշներուն կարծիքները իմ վերայ, ինչ որ ալ զրուցեն ամէնքը ինձ համար, կ'ուզեմ այսօր գաղափար

մը տալ քեզ, սիրելի ընթերցող, իմ քանի մը փափաքներուս վերայ:

Կարելի է որ զիս մտիկ ընելէդ յետոյ բարկանաս ինձ դէմ, ծուռ ծուռ նայիս իմ դրած տողերուս վերայ, բնութիւնբոց այնքան պոստես, որ աչքերդ աներեւոյթ ըլլան մրայօն ճակտիդ տակ, և մինչեւ անգամ... ճմռթկես այն Ռատրոնը, որուն մէջ պիտի կարդաս զիս: Բայց առաջուց ըսի արդէն. ինչ որ կ'ըլլաս՝ եղիբ, պէտք է որ խօսիմ քեզի:

(Յ. Պարոնեան)

2. Սնտուկներն և անկողինն, որ բուրջի մը մէջ ներփակուած էր, նաւակէն հանելուն պէս ճամբորդը քաշեց քսակն և նաւաւարին իրաւունքը վճարելով՝ բռնակիր մը կանչեց: Հինգ բռնակիրներ ներկայացան իրեն: Տարակոյս շկայ որ եթէ հինգ կանչէր, քսան և հինգ պիտի ունենար իւր առջեւ, մայրաքաղաքիս սովորութեանը համեմատ:

(Յ. Պարոնեան)

Վարժութիւն 3. Տասը նախադրութիւն գործածել տարրեր նախադասութեանց մէջ:

Վարժութիւն 4. Կազմել 10 նախադասութիւն, որոնց մէջ անկախ, բացի, ընդդէմ, շնորհի, հակառակ կապերը գործածուին թէ՛ նախադաս, թէ՛ յետադաս:

## 126. ԿԱՊԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

Կապերը նիւթական իմաստ չեն արտայայտեր, այսինքն՝ անոնք ո՛չ առարկայ, ո՛չ առարկայի որակ, ո՛չ գործողութիւն և ո՛չ ալ գործողութեան յատկանիշ կը ցուցնեն, ինչպէս որ կ'արտայայտեն գոյականը, ածականը, թուականը, դերանունը, բայը և մակրայը:

Կապերը, սակայն, զուրկ չեն իմաստէ: Նոյնիսկ խօսքէն անկախ՝ անոնք ունին որոշ նշանակութիւն: Օրինակ՝ դէպի կապը կ'արտայայտէ տեղի գաղափար, կը ցուցնէ գործողութեան մը ուղղւած ըլլալը որոշ տեղ մը (կ'երթային դէպի տուն): Եւրբ կապը ունի ժամանակի որոշ նշանակութիւն (վայրկեան մը եւրբ նորէն կ'երևար), իսկ համար կապը՝ նպատակի նշանակութիւն (հայրենիք գացին ուսանելու համար):



Լ'սա իրենց արտայայտած իմաստներուն կապերը կ'ըլլան՝

**Ա. Տարածակա՞ն՝** մէջ, վրայ, տակ, մօտ, հեռու, շուրջ, վեր, վար, դէպի և այլն.

**Բ. Ժամանակայի՞ն՝** առ, յետոյ, ետքը, առէն, պահուն, միջոցին և այլն.

**Գ. Նպատակի՞** համար, յօգուտ, յանուն, ի, օգտին.

**Դ. Հիմունքի՞** ըստ, համաձայն, հիման վրայ, շնորհիւ.

**Ե. Բացառման ու զիջման՝** բացի, առանց, զատ, հակառակ, շհաշուած.

**Զ. Վերաբերութեան՝** մասին, վրայ, դէպի, վերաբերեալ, արիւ, ուղղութեամբ և այլն:

Կարգ մը կապեր իրենց հիմնական իմաստէն զատ կրնան գործածուիլ այլ իմաստով ևս:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել կապերը՝ նշելով անոնց իմաստը և նախադրութիւն կամ յետադրութիւն ըլլալը.

Այն մաքուր, աւուած, ծառազարդ ուղիէն կ'երթայի, որ նաւամատոյցէն դէպի ճաքօմոյի օթէլը կը տանի:

Երկու կողմէ, խնամուած, ծաղկած պարտէզներուն մէջ, ամէն մէկ բային սիրուն տուներ, վիլլաներ երբեմն, ապարանքներ, որոնց բաց պոնտէն ներս կահաւորման ճոխութիւնն ու շոպյութիւնն աչքի կը զարնէ, սև հագուստներով և ճերմակ ու բարակ փողկապով սպասատրուհիներ, ստնտուններ՝ ճերմակ ու բարակ կտաւէ պոզնոցով՝ դրան մօտ սպասելու կեցած:

Տարրեր բարբեր ճաշակով կատուցուած այս քէօշկերուն մէջ քարուկիր ու անպաճոյճ շէնք մը իր պարզութեամբը ուշադրութիւն կը հրաւիրէ իբր միակ լուրջ դէմքը՝ այս բոլոր զուարթ ու խնայասցող պատկերներուն մէջ:

...Յերոյացիներ կը տեսնեմ շուրջս... Շտայնի խանութին հողուած արձաններուն պէս անշարժ ու կանգուն. սեղանին վրայ քահանայ մը ցած ձայնով ու անհասկնալի բարբառով ինքնիրեն բառ մը կը մրմնջէ. լռութիւն մը կը տիրէ ամէն կողմ:

(Դ. Զօհրայ)

**Վարժութիւն 2.** Կաղմել երկերկու նախադասութիւն տեղի, ժամանակի, նպատակի և վերաբերութեան կապերով:

127. ԻՍԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ, ԱՆԻՍԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՒ  
ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Կապերն առաջացած են նիւթական խօսքի մասերէն (գոյական, բայ, մակբայ և այլն)։ Անոնց մէկ մասը լրիւ կորսնցուցած է իր նախկին նշանակութիւնը և այժմ կը գործածուի միայն իբրև կապ։ Որոշ կապեր ալ կան, որոնք չեն կորսնցուցած իրենց նախկին նշանակութիւնը և ընդհանուր առմամբ ոչպէս կապ գործածուելով հանդերձ, մասնաւոր պարագաներու մէջ կրնան գործածուիլ նաև որպէս գոյական, ածական, մակբայ և այլն։

Օրինակ՝

Ծառերուն քով հաճելի է կենալ։

Մենք գացինք դէպի պարտէզը։

Այս նախադասութեանց մէջ գործածուած են երկու կապեր (քով, դէպի)։ Եթէ առանձին առնելու ըլլանք, անոնք նախադասութեան անդամ չեն և միայն զրուելով կապուող բառերուն վրայ (ծառերուն, պարտէզը), կը ցուցնեն գործողութեան կամ եղելութեան տեղը։ Բայց անոնցմէ առաջինը (քով) կրնայ գործածուիլ նաև իբրև մակբայ կամ գոյական, կրնայ հոլովուիլ և նախադասութեան ինքնուրոյն անդամ ըլլալ։

Ինչպէս՝

Ամէն օր քովը կ'երթար՝ դասերը սերտելու

Քովէն անցնելու ատեն միշտ կ'ուրախանայինք։

Այս նախադասութեանց մէջ քով բառը այլևս կապ չէ՝ ստացեր է յօդ, հոլովուեր է և նախադասութեան ինքնուրոյն անդամ է (տեղի պարագայ)։ Մինչդեռ այդպէս չէ դէպի բառը, որ միմիայն կապի դեր կը կատարէ, յօդ չի ստանար, չի հոլովուի (եթէ գոյականաբար չէ գործածուած) և նախադասութեան ինքնուրոյն անդամ չի կրնար ըլլալ։

Կապերու տեսակներն են՝ իսկական կապեր, անիսկական կապեր։ Կան նաև կապական բառեր։

Իսկական կը կոչուին այն կապերը, որոնք ամբողջովին կորսնցուցած ըլլալով իրենց նիւթական նշանակութիւնը, նախադասութեան անդամ չեն ըլլար, փոփոխութեան չեն ենթարկուիլ և միայն կը գործածուին որպէս կապ։

**Իսկական կապեր են՝** ի, առ, ըստ, ընդ, առանց, բացի, իբրև, համար, յանուն, նկատմամբ, շնորհիւ, առթիւ, ընդդէմ, հանդէպ, պէս, ի դէմս, ի նենուկս, ի հաշիւ և այլն:

*Օրինակ՝*

Ըստ լուրերու՝ համերգի պիտի գայ Հայաստանի սոխակ Գոհար Գասպարեանը:

**Կը զննէր կերպսը՝ տեսակը հասկնալու համար:**

Անիսկական են այն կապերը, որոնք ամբողջովին չեն կտրուցնուցած իրենց նիւթական նշանակութիւնը, կրնան վտիվտուիլ (հոտուտիւ), յող ստանալ և դառնալ նախադասութեան ինքնուրոյն անդամ:

**Անիսկական կապեր են՝** մօտ, բով, մէջ, տակ, շուրջ, ղիմաց, շավի, զատ, առաջ, հսկառակ և այլն:

*Օրինակ՝*

Ան կանգնած է դրան առջեւ (կապ):

Սուրբէն կ'երթար Յակոբը (գոյական):

Այն բառերը, որոնք ունին նիւթական նշանակութիւն (գոյական, ածական կամ մակբայ են), կը կատարեն նախադասութեան ինքնուրոյն անդամի պաշտօն, բայց նաեւ կապ կ'ըլլան, կը կոչուին կապական բառեր:

**Կապական բառեր են՝** վերեւ, ներքեւ, ներս, դուրս, նետու, կից, համապատասխան և այլն:

*Օրինակ՝*

Գուրսը մեղմիւ անձրեւ կը մաղուէր:

Քաղաքէն դուրս կը մտնար ցաւատանջ հոգերը:

Առաջին նախադասութեան մէջ դուրս բառը գործածուած է իր հիմնական իմաստով, իբրև գոյական, իսկ երկրորդ նախադասութեան մէջ կը կատարէ կապական բառի պաշտօն:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել կապերը՝ խմբաւորելով ըստ տեսակներու (իսկական, անիսկական կապեր և կապական բառեր):

Օրուան մէջ շարաշար աշխատելէն ետք, կը հանգստանար տան մը դրան առջեւ նստելով...

Հաճի թումս ա՛լ առջի պէս շէր կրնար խիզախել ծովին դէմ: Կ'ափսոսար իր աղէտայի որոշումին վրայ: Արցունք մըն ալ կը

զլորէր արեւակէղ այտերէն վար: Բայց շէր կրնար իր սիրելի տաշ-  
տէն հետի ապրիլ... Այսչափն ալ մեծ միտքարանք ու բաւական  
սփոփանք էր կոյր ձկնորսին համար: Ու ամէն օր կը շարունակէր  
իր ձկնկու սափորը ծովին յատակը իջեցնել... Գերեզմանոցի մը  
ծանր հանդարտութիւնը կը տիրէր ծովեզերքին վրայ. ծովային  
բանի մը թռչուններ՝ մտացածին ստուերներու պէս՝ կը յածէին  
այդ լոին շրջապատկերին վերելը:

(Յրուխան)

**Վարժուրիւն 2.** Տակ, մէջ, շափ, դիմաց, ներս, դուրս, հե-  
ռու բառերը նախագաստութեանց մէջ գործածել որպէս կապ և որ-  
պէս այլ խօսքի մաս:

## 128. ԿԱՊՈՒՈՂ ԲԱՌԵՐՈՒ ՀՈՒՈՎԱՆԱՆ ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տարրեր կասկերու հետ տարրեր հոլովով բառեր կը գրուին.

Օրինակ՝

Հայրենիքին պէս քաղցր ոչինչ կայ:

Հայրենիքն հեռու կ'ապրինք հայրենիքով:

Պէտ կասր կը պահանջէ սեռական, իսկ հեռու կապը՝ բացառա-  
կան հոլովով բառ:

Կապի հետ գործածուած բառը կը կոչուի կապի խնդիր:

Առական հոլովով կապի խնդիր կը պահանջեն հետեւեալ  
կասկերը՝ մօտ, բով, վրայ, պէս, համար, շափ, հետ, նման: Բայց  
այդ կասկերուն հետ առաջին և երկրորդ դէմքի դերանուններով ար-  
տայայտուած կապի խնդիրները կը գրուին տրական հոլովով.

Օրինակ՝

Հայրենիքիս համար կու տամ ամէն ինչ:

Ինձի համար շէրայ ատկէ թանկագին անուն:

Տրական հոլովով կապի խնդիր կը պահանջեն հետեւեալ կա-  
պերը՝ առանց, յաւուն, ըստ, համաձայն, հակառակ և այլն:

Օրինակ՝

Առանց գիրքի մութ է աշխարհը:

Անիկա կեանքը զոհեց յանուն արդարութեան:

Հայցական հոլովով կապի խնդիր կը պահանջեն հետևեալ կապերը՝ ի, առ, քան, դէպի, մինչ, մինչև և այլն:

Օրինակ՝

Ես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարդ մահու սխն

Պիտի գոռամ, սխտ կրկնեմ անդադար՝ աղատութիւն:

Բացառական հոլովով կապի խնդիր կը պահանջեն հետևեալ կապերը՝ առդին, անդին, հետո, զատ, վեր, վար, վերև, ներքև, բացի, ի վեր, յետոյ և այլն:

Օրինակ՝

Ուրախութեան արցունքներ կը զորէին այտերէն վար:

Գրիգորէն զատ ուրիշ ընկեր չունէր:

Մանօրութիւն. Քացի կապին հետ այս, այդ, այն գերանունները կրնան գործածուի հայցական հոլովով:

Գործիական հոլովով կապի խնդիր վը պահանջէ հանդերձ կապը.

Օրինակ՝

Պարոնը ներկայացաւ հանդերձ ընտանեօք:

Քանի մը կապեր կրնան դրուի տարբեր հոլովներով բառերու վրայ: Այդպիսի կապեր են՝ ի վեր, առաջ, որպէս, ինչպէս, իբրև: Օրինակ՝ առաջ կապը կրնայ ունենալ սևոական, հայցական և բացառական հոլովով կապի խնդիրներ (դրան առաջ, հինգ տարի առաջ, ամենէն առաջ):

Ի վեր կապին հետ կը դրուին հայցական և բացառական հոլովներով կապի խնդիրներ (բլուրն ի վեր, զիշերուրնէ ի վեր):

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել կապերը կապի խնդիրներուն հետ միասին՝ յոյց տալով կապի խնդիրներուն հոլովը.

Կէսօրին կերակուր չունէինք: Մինչև իրիկուն բախտախաղի մէջ էինք սենեակները կամ բակին անկիւնները, մանաւանդ ընկոյզի օրերուն: Ընկոյզները զոգնոցիս զրպաններուն մէջ, ձեռքերս անոնց վրայ, գացի բակին միւս ծայրը, ուր հաց ունեցողներ կային: Ընկոյզի մասնաբէտներ ունէինք, որոնք կրնային զատել լեցունք փուճէն, առանց կոտրելու:

Ընթրիքին՝ հացը կէս էր, բայց կերակուր ունէինք: Մեր առաջին շարժումը կ'ըլլար տիրանալ հացի բաժիններուն: Ոչ ոք կը

մտածէր կերակուրին հետ հացը ուտելու մասին: Որքան շուտ ու  
որքան արագ գործածէինք դգալը, այնքան շահաւոր էինք, ի վնաս  
խմբակին միւս ընկերներուն: Խօսիլ չկար, կատակի մասին մտա-  
ծող չէր ըլլար: Ամէն մարդ հոգիին պէս կը գուրգուրար դգալին  
վրայ: Վերջացնողները իրաւունք չունէին ելլելու: Գոհարանական  
աղօթք մը կար դեռ: Յոտնկայս և միաբերան ըստած այդ աղօթ-  
քէն ետք, նորէն կը խառնուէինք իրարու:

(Ա. Մտռուկեան)

**Վարժութիւն 2.** Նախադասութեանց մէջ գործածել վրայ,  
պէս, յանուն, անց, գատ, հանդերձ կապերը՝ նշելով թէ ի՞նչ հոլո-  
վով արտայայտուած են կապի խնդիրները:

**Վարժութիւն 3.** Ի վեր, առաջ կապերը նախադասութեանց մէջ  
գործածել հայցական և բացառական հոլովներու հետ:

**Վարժութիւն 4.** Արտագրել կապերը՝ նշելով անոնց իմաս-  
տը, նախադրութիւն կամ յետադրութիւն, իսկական, անիսկական  
կապ կամ կապական բառ ըլլալը:

**Ա.** Մինչեւ այն ատեն Ենի-Գարու կը նստէր: Արդարեւ, առանց  
մեծ համբաւի մը տէր ըլլալու, բաւական համարում մը կը վայն-  
լէր միջնակարգ ընտանեաց մէջ: Աղքատները կը սիրէին զինքը՝  
այն բարեհամրոյր ոչ մարդասէր բնաւորութեան՝ համար, որով  
տնանկին դռնէն դուրս կ'ելլէր՝ առանց տանտիրոջ ձեռքը նայելու...  
Իր ծերունի ծնողներուն և ամուրի քրոջը հետ կ'ապրէր:

(Բ. Ռաշալեան)

**Բ.** Երաժշտութեան եղանակներ կան, տարիներէ ի վեր մոռ-  
ցուած, որոնք յանկարծ միտքդ կ'իյնան: Եղանակներ՝ զորս անօ-  
գուտ ջանքեր ընելէ ետքը մտքէդ վանելու ու հեռացնելու համար,  
մէլիէնիմէլի րարձրաձայն երգելու կ'ելլես: Իմ Յակոբիկը յիշելու  
ելլելս այդ տեսակի բան մըն է: Ի՞նչպէս, մտքի ի՞նչ անգիտակից  
ջանքով յիշողութեանս առջեւ եկաւ կանգնեցաւ այս տղուն դէմքը...

Դպրոցին մէջ նախ կը տեսնեմ զինքը, ճիշդ իմ քովս նստած,  
զմեկտովը դրասեղանին վրայ իր անունը քանդակելու, շատ անգամ  
ալ պարզապէս զայն տաշելու զբաղած, իր սիրական զբաղումը,  
յետոյ, դպրոցէն ելլելնուս, իրարմէ բաժնուելնէս վերջը, հոս ու  
հոն, միշտ աղւտոր հագուած երիտասարդ՝ որուն անունը ամենուն  
բերանն էր:

(Գ. Զօնրայ)

**Վարժարթիւն 5.** Որոշել կապերուն տեսակները ըստ իմաստի, ըստ տեղի և գործածութեան (իսկական, անիսկական կապ, կապական բառ)։

Համար, շափ, ի, պէս, առթիւ, շնորհիւ, մէջ, վրայ, ժամանակ, վերեւ, առ, դուրս, դատ։

**Վարժարթիւն 6.** Կաղմել նախադասութիւններ հետեւեալ կապերով։ ցոյց տալ, թէ ի՛նչ հոլովով կը գործածուին կապուող բառերը՝ առ, դուրս, միջոցաւ, վրայ, բով, տակ, մէջ, հանդերձ, դէպի, բացի։

## ՇԱՂԿԱՊ

### 129. ԸՆԳԷՍՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. Կը լայննայ երկինքը անծայր ու ջինջ։

Գիւղին վրայ մութը բիշ բիշ կը կոխէ։

2. Երազը զնաց, բայց խանդաղատանքը դեռ կը մնայ։

3. Իւր կարճ հասակովը ամիրայութեան բարձրանալ կ'ուզէր, վասնզի ամէն բարօրութիւն հոն կը փնտռէր։

Այս նախադասութիւններէն առաջինին մէջ ու բառը կը կապէ նախադասութեան երկու համազօր, համադաս անդամներ՝ անծայր ու ջինջ (երկինք)։ Երկրորդին մէջ բայց բառը կը կապէ երկու համազօր նախադասութիւններ՝ երազը զնաց և խանդաղատանքը դեռ կը մնայ։ Երրորդ օրինակին մէջ վասնզի բառը կը կապէ ամէն բարօրութիւն հոն կը փնտռէր նախադասութիւնը իւր կարճ հասակովը ամիրայութեան բարձրանալ կ'ուզէր զլիստոր նախադասութեան։

Նախադասութիւններ կամ նախադասութեան համադաս անդամներ իրարու կապող բառերը շաղկապներ են։

Հայերէնի շաղկապներն են՝ և, ու, իսկ, բայց, սակայն, կամ, ժամատանգ, ուստի, եւս, այնուամենայնիւ, թէև, թէպէտ, թէ, երէ, զի, որ, որպէսզի, վասնզի, քանզի, որովհետեւ, այլ, մինչդեռ, բայց և այնպէս. թէ'... թէ', և'... և', կա՛մ... կա՛մ և այլն։

**Վարժարթիւն.** Գտնել շաղկապները։

Երբ շոգնատուն մօտենցան և շուանէ սանդուխէն վեր մաղլցեցան, արդէն շոգնեալին մէջ իրարանցում մը կը տիրէր... իսկ վերջին անգամ հսկողութիւն կատարող ոստիկանը բանտարկուած

էր: Ոստիկան Օսման աղան հարցաքննելով համոզուեցան որ փախստականները յաջողած էին հաշիշով քնացնել զայն և փախուստ տալ շոգենաւուն եզրէն շուանով մը: Լեւոն վստահ էր թէ կալանաւորները կրնային փախուստ տուած ըլլալ միայն նաւակով կամ առագաստանաւով մը, բանի որ այդ ժամուն տեւէ շոգենաւ շէր մտած Իդմիրի ծովախորշը: Լեւոն յոյս ունէր թէ մի գուցէ Վահան և Արգար այս կողին ապաստանած կրնային ըլլալ:

Գալով Լեւոնին յոգնած ըլլալուն, ինք շհետեւեցաւ ոստիկաններուն խուզարկութեան, այլ մօտակայ գիւնետուն մը մտաւ և մէկ երկու շիշ օղի խմել մտադրեց:

Իր ուշադրութիւնը գրաւեցին խումբ մը նաւաստիներ և ձրկնորսներ, որոնք թէ՛ կը խմէին և թէ՛ տաք վիճաբանութեան մը բռնուած էին:

(Ն. Օտեան)

### 130. ՇԱՂԿԱՊԵՆՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Շաղկապները կ'ըլլան երկու տեսակ՝ համադասական և ստորադասական:

Համադասական շաղկապները նախադասութեան համազօր, համադաս անդամները և նախադասութիւնները կը կապեն իրարու:

*Օրինակ՝*

Ան ունէր բարի և դժոտ սիրտ մը:

Բոլոր լեզուներն աղէկ են, բայց ամենէն հիասքանչը մայրենի բարբառն է:

Համադասական շաղկապներն են՝ և, ու, եւս, այլ, բայց, իսկ, սակայն, այնուամենայնիւ, մանաւանդ, կամ, քէ... քէ', և'... և', կա'մ... կա'մ, բայց և այլնայն և այլն:

Ստորադասական շաղկապները ստորադասուող երկրորդական նախադասութիւնը կը կապեն գերօդաս նախադասութեան հետ:

*Օրինակ՝*

Ան ըսաւ, թէ գիրքը բերած է:

Տղան տաք հագած էր, որովհետեւ դուրսը սաստիկ ցուրտ էր:

Ստորադասական շաղկապներն են՝ որ, որովհետեւ, վասնզի, քէ, կրէ, զի, քանզի, որպէսզի, քանի որ, մինչև, քանի զեռ, քէեւ, քէպէտ և այլն:



Ստորագրասական շաղկապներուն հետ պէտք չէ շփոթել այն յարաբերական դերանունները, որոնք նոյնպէս երկրորդական նախագաստութիւնները կը կապեն դերագասին հետ:

Օրինակ՝

Տեսայ այն մարդը, որ զողտրիկ բանաստեղծութիւններ գրած է:

Մասնք պարտէզ, որ կը սոյասէր ընկերս:

Շտղկապը նախագաստութեան անդամ չի կրնար ըլլալ, իսկ յարաբերական դերանունը կ'ըլլայ: Օրինակ՝ վերի նախագաստութիւններէն առաջինին մէջ որ դերանունը ենթակայ է, իսկ երկրորդին մէջ որ դերանունը՝ տեղի պարագայ:

Շտղկապներէն մէկ բանին կրնան գործածուիլ թէ՛ իբրև համագասական և թէ՛ իբրև ստորագասական (թէ, թէ չէ, եթէ... ապա և այլն):

Օրինակ՝

Մեծ թէ պզտիկ ուշադիր կ'ունկնդրէին անոր:

Ըսաւ թէ՛ անտրամադիր է:

**Վարժութիւն 1.** Ռոշել շաղկապները, անոնց տեսակը՝ միաժամանակ ցոյց տալով թէ ի՞նչ կը կապեն իրարու (նախագաստութեան անդամներ, թէ նախագաստութիւններ):

Հազար ութը հարիւր եօթանասուն... շեմ յիշեր՝ քանիին, Սևտ-տեմբեր երեսունըմէկին, ներեցէ՛ք, երեսունին պիտի ըսէի, վասնզի Սևտտեմբերն երեսուն օր միայն ունի, երկար և ընդարձակ թիկնոցի մը մէջ փաթթուած միջհասակ և դիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի շոգհնաւէն նոր ելած էր, Ղալաթիոյ նաւամատոցին վրայ կայնած՝ նաւակէ մը իւր սնտուկները հանել կ'աշխատէր:

Կը տեսնէր՝ որչափ պարզութեամբ սկսայ: Պատմութիւնս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարիւր օրինակ աւելի ծախելու համար չըսի թէ նոյն օրը սաստիկ հով մը կար, թէ տեղատարափ անձրևն կու դար... Ես ալ կրնայի ըսել այս ամէնը, բայց չըսի, սրովհետև նոյն օրը ո՛չ հով կար, ո՛չ անձրև...

Արդ, ստանց կասկածելու հաւատացէ՛ք պատմութեանս, որ ժամանակակից գէպը մ'է:

Այս համարդն օժտուած էր ղոյգ մը խոշոր և սև աչքերով, ղոյգ մը հաստ, սև և երկար յոնքերով, ղոյգ մը մեծ ալիանջներով և ղոյգ մը քիթով... չէ՛, չէ՛, մէկ քիթով, թէպէտև բայց ղոյգ մը

քիթերու տեղ կրնար ծառայել, անոր մեծութիւնը սխալեցուց զիս: Ունէր այնպիսի նայուածք մը, որուն եթէ պ. Յ. Վարդուհան հանդիպէր իւր աչքերով, կը հարցունէր այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կ'ուզես թատրոնիս մէջ ապուշի դեր կատարելու համար»: (Յ. Պարսնեան)

**Վարժութիւն 2.** Կաղմել նախադասութիւններ հետեւեալ շաղկապներով՝ խսկ, վասնզի, քէպէտեւ, որ, և'... և', քէ'... քէ', սակայն, ոչ միայն... այլև, ոչ քէ... այլ:

**Վարժութիւն 3.** Կաղմել երկերկու նախադասութիւն, որոնց մէջ և, ու, քէ շաղկապները մէկ պարագային շաղկապին համադաս անդամներ, իսկ միւս պարագային՝ նախադասութիւններ:

## ԵՂԱՆԱԿԱԻՈՐՈՂ ԲԱՌԵՐ

### 131. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մինչեւ հիմա Էդանսկաւորող բառերը դասագիրքերու մէջ որպէս առանձին խօսքի մաս չեն դիտուած՝ նոյնացուելով ձևի մակերայններուն հետ: Ծիշդ է, անոնք ունին որոշ արտաքին նմանութիւն, բայց էսպէս կը տարբերին իրարմէ:

Օրինակ՝

1. Թռչուններու խմբերը մեղմիւ կը հնչէ:
2. Գուցէ դիւզն ամբողջ արթուն է հիմա:

Առաջին նախադասութեան մէջ մեղմիւ-ը մակրայ է, կը չրացնէ ստորոգեալը՝ կը ցուցնէ դործողութեան կատարման ձևը:

Երկրորդ նախադասութեան մէջ գուցէ-ն եղանակաւորող բառ է, բայ-ստորոգեալին չրացումը չէ, այլ կը վերաբերի ամբողջ նախադասութեան: Գուցէ-ն կը ցուցնէ գիւղին արթուն վիճակի հաւանական ըլլալը (բայց ոչ հաստատ): Այդ նոյն միտքը հաստատ կ'ըլլար, եթէ ըսէինք՝ Անշուշտ, գիւղն ամբողջ արթուն է հիմա:

Նղանակատող բառերը կ'արտայայտեն խօսողին վերաբերմունքը որեւէ մտքի կամ գաղափարի նկատմամբ:

Օրինակ՝

1. Անտառակոյս, ան պիտի գայ այս երեկոյ:
2. Լեմա՛ն, Լեմա՛ն, պատմէ՛ ինձ սիրող լուկ...

Ալպեաններու դու ձիւնի՞ն ես սիրահար,  
Կարապնէրուն արդեօք վզի՞ն սլացիկ...»

եղանակաւորող բառերէն առաջինը (անտարակո...) անակա-  
ւորած է ամբողջ նախադասութիւնը, իսկ երկրորդը (արդեօք)՝  
միայն նախադասութեան մէկ անդամ (ձիւնի՞ն, վզի՞ն):

եղանակաւորող բառերն են՝ անա, ալպէէն, անաւասիկ, ան-  
շուշտ, անտարակոյս, սարգաւեւ, արդեօք, զոզցես, զոնէ, զուցէ,  
իրաւ, իրօք, կարծեօք, կարծես, հաւաստեաւ, հարկաւ, միրէ և այլն:

եղանակաւորող բառերը մակբայներէն կը տարբերին անով,  
որ շունին նիւթական իմաստ և նախադասութեան անդամ չեն  
ըլլար:

Օրինակ՝

Ան հոն կ'երթար վուրով:

Մի՞րէ վերջին պոէտն եմ ես,

Վերջին երգիչն իմ երկրի...»

Առաջին նախադասութեան մէջ հոն և վուրով մակբայները  
նախադասութեան անդամ են. հոն-ը կը ցուցնէ գործողութեան  
տեղը (տեղի պարագայ), իսկ վուրով-ը՝ գործողութեան ձևը (ձևի  
պարագայ): Երկրորդ օրինակին մէջ մի՞րէ բառը միայն կ'երան-  
դաւորէ նախադասութիւնը և նախադասութեան անդամ չէ:

**Վարժութիւն.** Գտնել եղանակաւորող բառերը, ցոյց տալ թէ  
ի՞նչ երանգ կը հաղորդեն նախադասութեանց, առանձին բառակա-  
պակցութիւններուն կամ բառերուն.

**Ա.** Խորագիրս տեսնելով դուցէ քիչ մը դարմանաք թէ ինչպէս  
հակայեղափոխական մը դրած եմ յեղափոխական մակարոյծներու  
շարքին մէջ: Ընդհակառակը՝ շատ բնական է կարծեմ յեղափոխու-  
թեան մակարոյծները նկատել այն տեսակ մը տիպարները, որոնք  
96-ին ի վեր մէջտեղ եկած են և որոնք յեղափոխութիւնը շատա-  
գովելով դայն շահագործելէ ևտքը, հիմակ սկսած են յեղափոխու-  
թեան հակառակորդ ձևանալով ապրիլ, տեսնելով որ այդ միջոցը  
տակի շահարկի է...»

(Ե. Օտեան)

**Բ.** Անտարակոյս, կարելիս պիտի ընէի օր մը գոնէ խուսափե-  
լու համար իր ակնարկէն (1): Եւ այժմ կը ջանամ մխիթարուիլ,  
խորհելով որ դուցէ կիներ շհասկցաւ արագօրէն թաւալուող հայերէն

բառերը (2): Կ'երեւոյ զլուխս կախեր ևմ բիշ մը ևրկար ատեն, և  
ժէմէն վիճակս նշմարեր է (3): Մեծ բան կորսնցուցինք ևրկու-  
բքս ալ, բայց մանաւանդ ևս (4): Անշուշտ տունիններն անհամ-  
բեր ինձ կը սպասեն (5): Փորձած էր մասամբ գոնէ մեղմել զայն՝  
զիս մղկուով որ հայերէն խօսիմ (6):

**Պ.** Այդ սրտաճմլիկ տխրութեան առջև անդիմադրելի պէտք  
մը կը զգայիր իրեն դիտելու և ըսելու. «Բարեկամ, ի՞նչ է վիշաղ-  
արդեօք կրնամ սփոփել քեզ. ըսէ՛, խօսէ՛, թեթևցի՛ր, գուցէ ճար  
մը կայ...»:

Հինգ վայրկեան մնաց այդպէս, կարծես քարացած...

Բոլոր այս խօսքերուն և շարժումներուն տակ կռահեցի ըն-  
տանեկան տոամ մը, անշուշտ ցաւադին, բայց հետաքրքրա-  
շարժ ար:

(Յրուխան)

## 132. ԵՂԱՆԱԿԱԿՈՐՈՂ ԲԱՌԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Եղանակաւորող բառերը կրնան արտայայտել խօսող անձին  
տարբեր տեսակի վեճաբերմունքը և ըստ իմաստի կ'ըլլան՝ հաս-  
տատական, երկրայական, ցուցական, զիջական, սաստկական,  
սահմանափակման և կամային:

**1. Հաստատական եղանակաւորող բառերն են՝** ապրմէն,  
արդարեւ, անշուշտ, ի հարկէ, անպայման, իսկապէս, հարկաւ, հա-  
ւատեալ, իրօք, իրաւ և այլն:

Ասոնցմով խօսողը կ'արտայայտէ իր հաստատական վերա-  
բերմունքը:

Օր ի ն ա կ՝

Իրօք ան աշխատասէր է:

Անշուշտ այդ խօսքերը իր սիրտէն կը բխէին:

**2. Երկրայական եղանակաւորող բառերն են՝** կարծեմ,  
կարծես, կարծեօք, քերես, երեւի, իբր, իբր քէ, գուցէ, գոզցես,  
միզուցէ, միթէ, արդեօք և այլն:

Ասոնք կ'արտայայտեն խօսողին երկրայութիւնը, կատկա-  
ծանքը:

Օրինակ՝

Արդեօք անհեռացա՞ւ քաղաքէն:

Կարծես կը լսեմ անոր ձայնը:

3. Յուցական եղանակաւորող բառերն են՝ անա, անա-  
ւասիկ: Ասոնք մատնացոյց կ'ընեն այս կամ այն միտքը, առար-  
կան:

Օրինակ՝

Անա մեր վեճն արտակը:

Անաւասիկ կը գրեմ բնգի:

Անա գիւղն իմ հայրենի:

4. Զիջական եղանակաւորող բառերն են՝ ինչեւիցէ,  
ինչեւէ, ինչ որ է, յամենայն դէպս:

Ասոնք կը ցուցնեն զիջական վերաբերմունք:

Օրինակ՝

Ինչեւիցէ, մոռնանք անցածը:

Յամենայն դէպս, Գէորգ պիտի շնորհակցէր իրողութիւնը:

5. Սաստկական եղանակաւորող բառերն են՝ եռյիսկ,  
անգամ, մինչեւ իսկ, մինչեւ անգամ, մանաւանդ և այլն:

Ասոնցմով նախադասութեան արտայայտած մտքին կամ որե-  
ւէ դադարի մը սաստկացման երանդ կը տրուի:

Օրինակ՝

Մինչեւ իսկ դո՞ւն շահակցար դիտ:

Լեռներն անգամ չէին դիմանար այդ վիշտին:

6. Սահմանափակման եղանակաւորող բառերն են՝  
գէր, գունէ, լոկ, միայն, միմիայն:

Ասոնցմով կ'արտայայտուի սահմանափակման իմաստ:

Օրինակ՝

Գէր անգամ մը լսէի իր ձայնը:

Միայն ան կը մնացեր որովէս աղաւէն:

7. Կամային եղանակաւորող բառերն են՝ րող, դեմ:

Ասոնք կ'արտայայտեն խօսողին կամային վերաբերմունքը:

Օրինակ՝

Դե՛մ, խօսէ՛ տեսնեմ:

Թող անոնք ըսեն բուն ճշմարտութիւնը:

եղանակաւորող բառեր են նաև այո և ոչ պատասխանական բառերը.

Ո՛չ, յար պիտի շողայ մեր քաղցրարարբառ հայոց լեզուն:  
Յովհաննէս Թումանեան, այո՛, սիրելի է բոլորին:

Այո և ոչ եղանակաւորող բառերը տրամախօսութեան ժամանակ կրնան գործածուիլ իրրեւ առանձին պատասխանական բանախաղասութիւններ:

Օրինակ՝

— Դուն այսօր թատրոն պիտի գա՞ս:

-- Այո՛:

Եղանակաւորող բառերը յաճախ նախադասութեան մէջ կը գործածուին որպէս միջանկեալ բառեր և կը տրոհուին ստորակէտով:

Օրինակ՝

Անոր պատասխանը, անշուշտ, համոզիչ էր:

Մենք, ի հարկէ, պիտի մտածենք ատոր մասին:

Յակոբը, այո՛, պիտի գայ այսօր:

Ո՛չ, անոր գիրքերը մաքուր չեն:

Սակայն եղանակաւորող բառերը միշտ միջանկեալ չեն ըլլար և չեն տրոհուիր:

Օրինակ՝

Ան գրեթէ ուժասպառ եղեր էր: Անոնք զուցէ այսօր վերադառնան:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել եղանակաւորող բառերը՝ որոշելով անոնց տեսակը.

Քաղցրութեամբ, գրեթէ դգուանքով կը խօսէի (1): Մեղմիւ կը պատասխանէր, սիրտը բանալով, վիրաւոր, խոցուած սիրտ մը որ սփոփուիլ չէր ուզեր, թերեւս անոր համար որ այդ խոցտանքը տաննի բան մը, սովորութիւն մը դարձած էր (2): Երբէք շխտեցաւ յետոյ այն օրուան դէպքին վրայ որ բոլորովին մոռցուած էր կարծես (3): Օգափոխութենէ՛ եթէ ոչ բժշկութիւն՝ գէթ րարոքում մը կ'ակնկալէին (4): Ու հիւանդապահի մը պէս կ'ընկերանար ահա իր ամուսինին (5): Ի՞նչ կը խորհէր արգեօք (6): Ամուսինին հետ մեռնիլ կ'ուզէր անշուշտ (7): Այո՛, այս էր իր գաղափարը (8): Տրամաբանութիւն կար իր խօսքերուն մէջ, բայց սիրտ

չկար ու շեմ դիտեր ինչո՞ւ սթարգապէս ահարկու ու ոամիկ թուն-  
ցաւ ինձի այս ըմբռնտանը՝ որ ապաքէն բուրբ աշխարհի մարդոց  
սովորական ըմբռնտան է (Յ)։

**Վարժութիւն 2.** Կազմել տասը նախադասութիւն եղանակա-  
ւորող բառերով։

**Վարժութիւն 3.** Կազմել նախադասութիւններ հետեւեալ եղա-  
նակաւորող բառերով՝ անշուշտ, գրեթէ, հարկաւ, ոչ, միթէ, ահա-  
աւելի, մինչն իսկ, գէթ, զոգցես։

## ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

### 133. ԸՆԴՂԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Զգացում արտայայտող բառերը կը կոչուին ձայնարկութիւն-  
ներ կամ միջարկութիւններ։

Ձայնարկութիւնները կ'արտայայտեն ուրախութիւն, վիշտ,  
հրճուանք, վախ, հիացում, տհաճութիւն, ափսոսանք և այլն. ջա՛ն,  
օ՛հ, ո՛ւյ, վա՛հ, օ՛յ, օ՛, պա՛հ, հօ՛, վա՛յ, վա՛խ, վա՛շ, վո՛ւշ,  
աւա՛ղ, իցի՛ւ, բարէ՛, է՛հ, է՛, ա՛հ, եղո՛ւկ և այլն։

Օրի ն ա կ՛

Ո՛հ, ի՛նչ մրմունջ հանեո, վտակ

Ահան սիխա և հանդարտիկ։

Ա՛հ, կը շտապեն, կը փախչին

Ճամբաներու լոյսերն ամէն

Յանկարծական խուճապի մը մատնուած...

Որոշ ձայնարկութիւններ կ'արտայայտեն խօսողին կամքը՝  
հրաւիրելով խօսակիցին ուշադրութիւնը. ա՛յ, հէ՛յ, օ՛հ, է՛յ, հօ՛, ծօ՛  
և այլն։

Օրի ն ա կ՛

Օ՛հ, քաջի՛ր, ի մարտ յանուն հայրենիքի։

Ձայնարկութիւններ են նաեւ նմանաձայնութեամբ կազմուած  
բառերը՝ հի՛ւ և հի՛ւ, հը՛ոո, բը՛զզ, հա՛ֆ հա՛ֆ, ո՛ւ, ա՛, զը՛ոո և  
այլն։

Օրինակ՝

Ճը՛ռռ, ճը՛ռռ, փողոցէն վը լսուէր սայլին միալար ձայնը:  
Ծառէն կու դային ուրախ ձայներ՝ ճի՛ւ, ճի՛ւ, ճի՛ւ...:

### 134. ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՐՄԱՄՈՒԹԻՒՆԸ

Ձայնարկութիւններու վրայ կը դրուի երկարացման նշան կամ շնշտ՝ վա՛յ, ս՛ն, ուխա՛յ, է՛յ, ծօ՛, օ՛ն, ջա՛ն և այլն:

Ձայնարկութիւնները նախադասութեան անդամ չեն ըլլար: Անոնք կրնան դրուիլ նախադասութեան սկիզբը, վերջը կամ մէջտեղը՝ բոլոր պարագաներուն ալ՝ ստորակէտով տրոհուելով:

Օրինակ՝

Օ՛ն, այս ի՛նչ գգուանք, օ՛ն, այս ի՛նչ անուրջ  
Կու տասս գուն ինձի, անձրեւո՛ւտ գիշեր...:

Ճօ՛ւ, նղո՛վք, նղո՛վք: Մեր վէրքին փրփրուն  
Շոգին խաւարեր է ձեր աշքերը, ա՛ն...:

Ձայնարկութիւնները կոշական անուններէն երբեմն ստորակէտով չեն բաժնուիր:

Օրինակ՝

Ա՛յ վտակ անուշ, ինչո՞ւ կ'աղմկես:  
Է՛յ սարեօ, ձորե՛ր, դուք առաջուանն քք,  
Լոկ մինակ ես եմ փոխուեր ու շորցեր:

Որոշ ձայնարկութիւններ կը կապուին նախադասութեան անդամներուն հետ և ստորակէտով չեն բաժնուիր անոնցմէ:

Օրինակ՝

Ա՛յս քէ շգայ ան կրէք:  
Վա՛յ քէ խարած ըլլայ քու սոյստամներդ:

Վարժութիւն 1. Ընդօրինակել ձայնարկութիւնները և նշել, թէ ինչ զգացում կ'արտայայտեն.

— Ա՛խ, եթէ դուք տեսած ըլլայիք Վանը... — հառաչեց ծերունին... Գեղածիժաղ ծովը տեսնէիք, վա՛խ, անոր շուրջը պար բռնած լեռները...:

— Ափսո՛ս, Գուրգէնը մեղի հետ շէ, բայց պատմէ՛, հայրի՛կ, — խնդրեցինք ծերուկին:



— Զա՛ն, մատաղ ձեր հոգուն, ի՛նչ պատմեմ... Հէ՛յ վա՛խ, անցան դացին,— հառաչեց անո— Ձեր տարիքին առաւօտեան վա՛նուխ կ'երթայի ծովափ, Բղնունեաց ծով. խելագարի պէս կը սի՛բէի նաւակ նստիլ և դիտել ծիրանագոյն արշալոյսը ջուրերուն վրայ... Վա՛հ, անդամ մը տեսնողը շի մոռնար երբէք:

Ան յանկարծ ընդհատեց պատմութիւնը.

— Մը՛սս, այս ի՛նչ ձայն է:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, օղնեցէ՛ք,— կը պոռար մէկը:

Մենք վար իջանք բլրակէն:

— Վա՛խ, ո՞տքս, ո՞տքս...

— Է՛յ, ի՛նչ պատահեր է,— հարցուցի Գուրգէնին, որ կաղալով մեզի կը մօտենար:

— Օ՛, դեռ կը հարցնես... Բան մըն ալ չէ եղեր, պարզապէս չեմ ուզեր որ մինակ լսէք պապիկին հրաշալի դրոյցները:

— Փո՛ւ, ինչ սատանայ ես, հա՛...

**Վարժութիւն 2.** Գտնել ձայնարկութիւնները և նշանակել բաց ձգուած շեշտերը, երկարացման նշանները և ստորակէտերը.

Տունը բան մը չըսաւ տէրտէրը: Ինքն իր ձեռքով մարբեց, թռչունները բրինձի վրայ ձգեց ու փուռը զրկեց...

Իրիկունը, սեղանին վրայ, երբ մեծ ափսէի մը մէջ տատրակները բերուեցան՝ տակաւին ծխաշունչ, կարմրած բրինձին վրայ, Սրբաղանը թևերը սոթտեց և.

— Հը սա պատուական կ'երեւայ կոբ հը,— մոլտաց անյտղ նայուածքով:

Եւ իրօք, երբ Սրբաղանը մի քանի պատառով կուլ տուաւ ամբողջ թռչուն մը, դովասանական բառերը վերջ չգտան:

— Օ՞ք պատուական, պատուական: Սո դեռ ասանկ համով կերակուր կերած չունէի: Տէրտէր, դիտցած ըլլաս, վազն իրիկուն նորէն կ'ուղիմ: Զուրցէ բռնողին:

— Մառայ եմ, Սրբաղան, ձեռնէ հրաման կ'ուղէ միտակ:

— Մօ ուղածին չափ թող բռնէ: Բա՛ն նայիմ ով է:

— Ձեր խոնարհ ծառան, Սրբաղան:

— Մօ վայ թշուառակոն, դո՞ւն ես: Էյ ինչ ընենք, ալ մէջ մը ըսած դտնուեցայ, ուխտէդ կ'աղատեմ քեզի: Բայց ասկից ետքը պատուական կտոր մը դարնելու ըլլաս նէ, Առաջնորդարան զրկելու չմոռնաս:

(1. Բաշալեան)

**Վարժութիւն 3.** Կազմել նախադասութիւններ ջա՛ն, աա՛ղ, ա՛ն ձայնարկութիւններով, զանոնք գործածելով նախադասութեան սկիզբը, վերջը և մէջտեղը:

### 135. ԱՄՓՈՓՈՉ ՎԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ ՁՆԻԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՆԵԱԼ

**Վարժութիւն 1.** Հետեւեալ նախադասութիւնները վերլուծել ըստ խօսքի մասերու.

Ճրագը ձեռքը ննջասենեակէն ներս մտաւ ձերունի կիկնը: Գուրսը գարնանային անձրեւը կը հոսէր լիատարափ: Հերարձակ անձրեւը ջուրի վէժքեր կը ցրցընէր ապակիներուն վրայ, պատե-րուն վրայ, մայթերուն ու տանիքներուն վրայ:

Սերուհին լուսակալին վրայ դրաւ ճրագը ու գնաց պատուհա-նին հպեց ճակատը: Տարափը մտրակներու հոյլի մը պէս կը շա-չէր սալարկին վրայ և յետոյ շարաճճի ձևերի մը նման գգուական ծեծիկներ կու տար ապակիներու երեսին:

Սերուհին ընդերկար մնաց այդ դիրքին մէջ: Անձրեւի յորձ-քերը կը վերսկսէին խաղալ տանիքներուն հետ... Եւ երկնային ջուրը հմայական ձևերի մը պէս՝ լուսեղէն տեսիլ մը կ'առկախէր յանկարծ խաւարին մէջ:

(Մ. Մեծարեւոյց)

**Վարժութիւն 2.** Գտնել և զատ սիւնակներու մէջ դրել գո-յականները, ածականները, թուականները, դերանուններն ու բայե-րը. որոշել անոնց ձևաբանական բոլոր յատկանիշները (օրինակ՝ գոյականներուն թիւը, հոլովը, հոլովումը, բայերուն խոնարհումը, եղանակը, ժամանակը, գէմբը, թիւը, սեռը և այլն).

— Թիւթիւնճի՛, սիկարա՛...

Այս տխրաշունչ վայոցը կը լսուէր դարձեալ փողոցներուն մէջ, փոքրիկ Ռափիկին յափտենական ձայնարկութիւնը, որուն զուարթ ու կայտառ շեշտը քիչ քիչ տեղի կու տար լալագին եղա-նակի մը, հեծկտուրներէ ու հառաչներէ պատտուած կոկորդէ՛ մը գուրս թռչելով: Մանաւանդ առտուները, երբ բնութիւնը դեռ բո-լորովին չէ արթնցած իր մթաստուեր թմրութեանէն, Ռափիկ առջի գիշերօրան գաւտղանին հարուածներուն քայքայող ազդեցութեանէն

ընկճուած ու տխրահամակ, դրեթէ լալահառաչ կը հանէր իր ձայնը, ոսկորներուն մէջ զգալով դեռ կծու ցաւ մը և իր մանկային երեւակայութեան մէջ հրաշէկ երկաթներու պէս ցցուած տեսնելով հազարաւոր անթացուայեր, որոնք պատրաստ էին ճղճիմ մարմնոյն վրայ ելլել իջնելու անխնայ, ջախջախիչ:

Բայց երբ արեւը կը ծփար երկնքին կապոյտ յատակին վրայ, երբ ոգևորութիւնը կը տիրէր փողոցներուն մէջ ու Ռափիկ կը սկսէր առուծախ ընել, իր դեղնած գէմըը վատ երեւոյթ մը կը ստանար, նուազկոտ աչքերը կը բոցաւառէին ու իր կայտափակ ու շարաճճի հասակը կը սւաւուցնէր փողոցէ փողոց, իր երկարածիգ ու ղուարթ կանչն արձակելով.

— Թիւթիւնճի...

(Յրուխան)

**Վարժութիւն 3.** Գտնել և ղատ սիւնակներու մէջ գրել մակրայները, կապերը, շաղկապները, եղանակաւորող բառերն ու ձայնարկութիւնները, որոշել անոնց տեսակները, նախադասութեանց մէջ ունեցած դերը.

Մէկէն, սակայն, հառաչանք մը սթափեցուց զիս: Գարձայ ո՞տ տեսայ, ինէ քանի մը քայլ անդին, բարամբին վրայ կբած, մարդ մը որ կը խոկար՝ ծովուն նայելով, անթարթ ու անշարժ: Այնքան ցաւաղին թուեցաւ ինծի այդ հառաչը, մարդկային վշափ անանկ մեծարարաւ յայտարարութիւն մը կտրդացի անոր մէջ, որ խանդաղատալից հետաքրքրութենէ մը մղուած, քիչ մը մօտեցայ, աւելի աղէկ տեսնելու համար մարդը: Եւ լուսնի անորոշ ճառագայթներուն մէջ ճանշցայ ճամբորդ մը, որուն առաջին վայրկեանին իսկ՝ երեւոյթն ու շարժումները խորհրդաւոր ու ցաւաղին թուած էին ինծի: Հայ էր անշուշտ, բայց ոչ մէկուն հետ կը տեսնուէր. ցերեկին ծալլապատիկ նստած էր խելաց կողմը, շուրջի շարժումին ու աղմուկին անուշաղիր: Ամերիկայէն վերադարձող խումբին կը սրատկանէր: Բայց ոչ որ հետը կը խօսէր: Անպարագրելի տխրութեան մը խորիմաստ դրոշմը կար գէմբին վրայ, մեռելական գունաթափութեամբ:

— Թարեկամ,— ըսի,— ինչո՞ւ կու լար... Հայրենիքի կարօ՞տն է արդեօք...

Մարդը մէկէն ի մէկ շտկուեցաւ, ու տեսայ որ աճաւարանքով թիկնոցին մէջ գրպանը պահեց թուղթ մը զոր ձեռքին ունէր:

— Հայրենիքի կարօ՞տ, օ՞, անշուշտ կայ ատիկա,— ըսաւ նուազած ու տրտմալի ձայնով... Բայց իմ ցաւս այդ չէ միայն... իմ ցաւս անմարելի է... և աւելորդ է զիս մխիթարել փորձել:

— Ուսկի՞ց կու գար:

— Ամերիկայէն. հազիւ երկու տարի է երթալս... դորժ ունէի հոն. բաւական դրամ կը շահէի, բայց անապարանքով կտ կը դառնամ... որովհետեւ...

Չշարունակեց. ու գլուխը ինկաւ կուրծքին վրայ ու աչքերը նայեցան ծովուն: Հինգ վայրկեան մնաց այդպէս, կարծես քարացած: Սպասեցի որ շարունակէ:

(Նրուխան)

**Վարժութիւն 4.** Որոշել խօսքի մասերը և ցոյց տալ անոնց բոլոր յատկանիշները.

ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ

**Ա.** նահանջ ուղեւորութիւն մըն էր մեր ըրածը ձմեռ ատեն, այս անձուկ կիրճերուն և այս տղմուտ դաշտերուն մէջէն, զոր ձմեռնամուտի անձրեւները ճախճախուտներու կը վերածէին շարունակ: Եւ, զզոյշաւ, կը ճամբորդէինք ողողուած, թրջած մինչև ոսկորնիս, շարունակ մեր ձիերուն քայլափոխները ճշդելու և հաւանական անկումները արդիւլելու ջանադրութեամբ:

Այսպէս անընդհատ ջորի հեղեղներու մէջէն կ'երթայինք, լացող և խոնաւ երկիւնքի մը տակ, և կը մտածէինք ճամբուն երկայնքին, մեր ուղեւորութեան մնացած մասին, որ ճշմարիտ տաժանքի կերպարանքը կ'առնէր:

Իրիկուան դէմ դիշերեցինք մօտի դիւլին մէջ խոնջարեկ ու ցրտահար ամէնքնիս ալ. Հիմա ցուրտը կ'աւելնար ու ձիւնի հատիկները կը սկսէին գալ վաղահաս ու փութկոտ ձմեռին հետ:

Արշալոյսին երրոր ճամբայ ինկանք, նորէն սուստ կու դարձինք:

Սպիտակ, անհամար թիթեռնիկներ էին ասոնք, որ ժանտ ու շոր երկինքի մը կապարէ ցանցէն կը մազուէին. լուս ու մունջ տեղացում մըն էր ասիկա. անթիւ առաքելութիւն մը կարծես, որ երկինքը դրաւել կ'ուզէր իր դիւրահալ ու անրիժ խուժիկներովը:

Ու մենք գո՞հ, աղատելնու համար վերջապէս անձրեւի մրտաբախումներէն, մեր շուրջը կը դիտէինք անմեղ դմայլումով մը:

**Ե.** Վարանոտ ու յամր գնացքով մը շարունակեցինք ճամբանիս, ու իրիկնամուտին գեռ ոռել օթեւանի նշանը չէինք տեսած:

Չիւնը դադրեր էր ալ. բայց դէմը, հեռուն, մարը մտնող արեւին քով ճերմակ ոսկի թիթեռնիկներու տեղատարափ մը կար,

ատրաշէկ հալոցէ մը թափուած հիւլէներ, որոնք բաց դեպինէն մինչև մութ կարմիր դացող ծիրանի դօտիի մը հաղար երանդներով բոլոր եզերքը կը կիտուածէին: Սոուզեռում մըն էր գոյնզգոյն թիթեռնիկներու, որոնց փոքրիկ թեւերը կը տժղունէին, կը շիկնէին, կը վառէին, կը մարէին շարունակ հսկայ քարայրի մը մէջէն: Որքան մօտ դացինք իրենց, նոյնքան հեռացան անոնք մենէ, միշտ միևնոյն անջրպետը պահելով մէջերնիս:

Այս թիթեռնիկները այլափոխիկ խոստումնէն՝ րն էին կեանքին. անոնք դորս ձևոր երկնցնելուդ ափիդ մէջ Վը թուիս բունել շարունակ, անոնք որ մոռցնել կու տան խոնջէնքը ճամբուն, միշտ մերձակայ և միշտ խաբուսիկ հանդրուանը, երազուած, ըղձացուած բեւեռը, որուն ահա քայլ մը եւս, և սլիտի եղերիս:

Սև այսպէս, երբ ճերմակ թիթեռնիկները կը հարթէին ճամբանիս, ու պատիր ապահովութիւն մը կը ներշնչէին մեղի, այս միւս կարմիր թիթեռնիկներն ալ մօտաւոր հանդրուանի մը խոստումովն ու ձգողութեամբը կը պատրէին դմեզ, որպէսզի մեր վերջին ուժերը դէպի իրենց հասնելու ջանքերովը սպառենք:

(Գ. Զօհրայ)

## ՇԱՐԱՀԻՍՈՒԹԻՒՆ

### 136. ՇԱՐԱՀԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Րառերը, առանձին առնուած, դեռեւս միտք մը չեն արտայայտեր: Յրինակ՝ ծառեր, ծաղկիլ, գարուն, մեղաստան րառերը եթէ դատ դատ առնելու ըլլանք, միտք չեն արտայայտեր, այլ անոնք առանձին հասկացութիւններ են: Սակայն այդ բառերը իրարու հետ որոշակի օրէնքներով կապակցելով կը ստանանք՝ Գարնան մեղաստաններուն մէջ կը ծաղկին ծառերը նախադասութիւնը, որ ամբողջական միտք մը կ'արտայայտէ:

Գրիգորը ըսաւ: Գիրք կ'ուզէ:

Եթէ այս երկու նախադասութիւնները իրարմէ անջատ արտասանենք, անոնք կը համարուին անկախ նախադասութիւններ: Սակայն կրնանք դանոնք իրարու հետ կապել, և այն ատեն կ'ունենանք՝ Գրիգորը ըսաւ որ գիրք կ'ուզէ: Այստեղ մենք կապեցինք երկու նախադասութիւն և ստացանք մէկ նախադասութիւն, որ այն իմաստը շունի, ինչ իմաստ որ ունին նախորդ երկուքը առանձին առանձին: Այդ երկու նախադասութիւնները իրարու հետ կապուեցան շարահիւսական որոշ օրէնքներով:

Շարահիւսութիւնը քերականութեան այն բաժինն է, որ կ'ուսումնասիրէ բառերու կապակցութիւնը, նախադասութեան կազմութեան կանոնները:

Շարահիւսութիւն բառը կազմուած է շարահիւսել բառէն, որ կը նշանակէ իրար հիւսել, կապակցել:

### 137. ԽՕՍՔ

Լեզուի միջոցով մարդիկ կ'արտայայտեն իրենց միտքերը և այդ բանի շնորհիւ կը հաղորդակցին ուրիշներու հետ: Ուրեմն լեզուն միտք արտայայտելու միջոց է:

Մարդ իր մտածելու կարողութիւնը չի կրնար մէկ անգամէն արտայայտել: Իւրաքանչիւր պարագային մարդ կը մտածէ որեւէ բանի շուրջ և կ'ունենայ իրարու հետ կապուած միտքերու ամբողջութիւն մը, որ կը կոչուի մտածութիւն:

Մտածութիւնը կարելի է արտայայտել բանաւոր և գրաւոր կերպով:

Խօսքը բանաւոր կամ գրաւոր կերպով արտայայտուած մըտածութիւնն է:

Բերանացի արտայայտուած մտածութիւնը բանաւոր խօսք է, գրուածը՝ գրաւոր խօսք:

Խօսքը կրնայ ծաւալուն և կարճ ըլլայ: Մաւալուն խօսքի օրինակներ են վէպերը, հէքիաթները, պատմութիւնները և այլն: Ընդարձակ խօսքը սահմաններ չունի, ան կրնայ շատ ծաւալուն ըլլալ (կաղմուած մէկ կամ մի բանի հատորներէ): Մաւալուն են, օրինակ՝ Յ. Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ», Ս. Օտեանի «Ապտիլ շամիր և Շէրլոք Հոլմս», «Թաղականին կնիկը», Բաֆֆիի «Կայծեր», «Մամուէլ», «Դաւիթ—բէկ», Շիրվանդադէի «Քառս», Գ. Գէմիրճեանի «Վարդանանք» վէպերը, Յովհ. Քումանեանի «Անուշ», Ա. Իսահակեանի «Աբու լալա-Մահարի» վիպերգները և այլն:

Խօսքը կրնայ նաև կարճ ըլլալ. ինչպէս՝ պատմուածք, յօդուած, նամակ, տեղեկանք (հաստատագիր), բանաստեղծութիւն և այլն:

Խօսքը կրնայ պարունակել միայն մէկ միտք: Այդպէս կ'ըլլան սովորաբար կոչերը, առածները և այլն: Սակայն խօսքը չի կրնար մէկ միտքէն պակաս արտայայտել:

Կարճ խօսքի օրինակներ են՝

Սոխ ու հաց, սիրտը բաց:

Քամի ցանողը փոթորիկ կը հնձէ:

Մնափառութիւնը չիմարներուն կերակուրն է:

Մոյլին համար ամէն բան դժուար է:

Խորհուրդ լսել շփտցողը օգնութիւն գտնել չի կրնար:

Սիրեցէ՛ք գիրն ու դրականութիւնը:

### 138. ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Մաւալուն խօսքը բազկացած կ'ըլլայ բաղմաթիւ բաղադրիչներէ (միաւորներէ), որոնք զատ զատ առնուած՝ մէյմէկ ամփոփ միտք կ'արտայայտեն: Այդ բաղադրիչները նախադասութիւն են:

### Օրինակ՝

Այն տարուան ձմեռը անսովոր կերպով խիստ եղաւ: Գեկտեմբերի սկիզբէն ձիւնը սկսաւ տեղալ առատութեամբ: Աղքատիկ թաղերու մէջ տնակներու տանիքները կրեցան ձիւնի ծանրութեան տակ: Գործերը դադրեցան: Գիշերները հիւսիսային քամին կը փչէր մորիկի պէս:

Այս խօսքը բաղկացած է հինգ նախադասութիւններէ, որոնցմէ իւրաքանչիւրը մէկ ամբողջական միտք կ'արտայայտէ: Ատոնք են՝

- 1) Այն տարուան ձմեռը անսովոր կերպով խիստ եղաւ:
- 2) Գեկտեմբերի սկիզբէն ձիւնը սկսաւ տեղալ առատութեամբ:
- 3) Աղքատիկ թաղերու մէջ տնակներու տանիքները կրեցան ձիւնի ծանրութեան տակ:
- 4) Գործերը դադրեցան:
- 5) Գիշերները հիւսիսային քամին կը փչէր մորիկի պէս:

Երբ խօսքը շատ կարճ ըլլայ, այսինքն արտայայտէ մէկ միտք, այն առեն խօսք և նախադասութիւն կը նոյնանան իրարու հետ:

### Օրինակ՝

Տաշուած քարը գետինը շի մնար:  
Ջուրն ինկողը անձրևէն շի վախնար:  
Քամիին բերածը քամին կը տանի:  
Չուկը դուխէն կը հոտի:  
Աղուէսին լիան իր պոչն է:  
Մէկ ծաղիկով դարուն շի գար:

Ատոնք մէկական խօսք են, սակայն միաժամանակ և նախադասութիւն:

Նախադասութիւնը կրնայ արտայայտուիլ նաև մէկ բառով. օրինակ՝ Կրակ: Հողե՛ն: Օգնութի՛ւն: Մրկցաւ: Կը ձիւնէ: Կ'անձրևէ և այլն:

Բառերու այն կապակցութիւնը կամ այն բառը, որ ամփոփ, ամբողջական միտք մը կ'արտայայտէ, կը կոչուի նախադասութիւն:

Նախադասութիւնները արտասանութեան մէջ իրարմէ կ'անջատուին դադարով, իսկ դրութեան մէջ՝ վերջակէտով, երբևէն ալ միջակէտով:



## Յ ր ի ն ա կ՝

Անձրեւ եկաւ Բոյսերը կանանչցան: Արեւոտ օրերուն կը յաշորդեն աշուն, ձմեռ. երկինքը կը տխրի, արա ու դաշա մանկան մը պէս իրենց ձևութեամբ երեսներուն դրած կու լան. մահուան թևը կը թափահարէ վերերը. միայնութիւնը կատարեալ ու ցաւագին է:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածին մէջ ցո՛յց տուէր նախագասութիւնները.

Այսօր բուշկ երթալով՝ ձևերի և ծունկի վրայ բսուելով, մինչև աթոռակը հասայ յաղթական: Մատուըններովս բռնեցի զայն: Կանգնեցայ: Աթոռակը մէկդի հրեցի ու ոտքերս առաջ նետեցի: Փա՛թ, երեսիս, բթիս վրայ ինկայ, ճոսնունցայ: Աշխարհը փլաւ կ'ըսես, աշերս մթնցան: Երթներս գարարունցան: Ըշացի: Մայրս վաղեց, դրկեց զիս, ոտքը գետնին զարկաւ, ճիշդ ինկած տեղս, ու յարա աթոռս գոչեց: Խնդացի նոյն պահուն արցունքի հլուններ ուսած այտերէս վար կը սահէին:

(Բ. Նուրիկեան)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածին մէջ վերջակէտ կամ միջակէտ դրէ՛ք նախագասութիւններուն միջև (վերջակէտէն ետքը սկսող նախագասութիւնները դրեցէ՛ք զխաղիւրով).

**Ա.** Ամէնքը կը ճանչէին զինքը ան կերուխումի լաւադոյն քնկերն էր նորեկները անոր յանձնարարութեամբ կը վարձէին իրենց սենեակը կամ ճաշարանը կ'որոշէին ինքը փարիզցի դարձած՝ կը ծիծաղէր այս անփորձ պարոններուն վրայ ան իր բոլոր ջանքը ցոփակեաց ու շուայտ ուսանողաց ձևերը ձևը բերելու յատկացուցած էր անառակ մը շէր բառին բուն նշանակութեամբ, այլ անառակներուն վրայ զմայլող մը իր տափակցած ուղեղին համար պարծենալու մեծագոյն նիւթն, իր միակ տենչն՝ անոնց վարքը, սովորութիւններն ունենալու մէջն էր:

(Գ. Զօհրապ)

**Բ.**

Իրիկունը կը ծաւալի ձորին մէջ  
Յուրտ զիշերուան բերանարաց դռներէն  
Բլրին թաշտոտ կողին վրայ, մեղմօրէն,  
Հովի քնքուշ հետ մը կ'առնէ ելեւէջ

Իրիկուն է լուռ է գիւղական ամայի  
Վերագարձող կովերը մերթ, սրտագին

Կը բառաշին կարօտն իրենց հորթուկին  
Փողոցներուն մէջ գիւղակին ամայի

Նա կը դառնան մարդիկ՝ հեռուի դաշտերէն  
Մինչ յողնութեան տոպրակը դեռ կոնակին  
Հողագործը, դուրսը նստած իր հիւզին,  
Տրեխներուն կը թօթվէ հողն յամբօրէն

Ու երկինքի թաւշին խորէն կայտանուշ  
Կոունկներու կարաւան մը կը հոսի  
Նւ շի կենար դեռ շա՛տ ցուրտ է և քանդի  
Կարունն աւա՛ղ, դուցէ մնայ դեռ շատ ուշ:

(Ա. Յարութիւնեան)

### 139. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՆԱՆ ՏՆՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԵՐԱՆԳԻ

Նախադասութեան միաբը կրնայ տարբեր երանգով, բնոյթով  
արտայայտուիլ: Ըստ այն բանի, թէ խօսողը ինչպէս կ'արտայայտէ  
Նախադասութեան իմաստը, նախադասութիւնները կ'ըլլան շորս  
բնոյթի՝ պատմողական, հարցական, հրամայական, լրացազանչա-  
կան:

**Ա.** Պատմողական նախադասութիւն կը կոչուին այն նախա-  
դասութիւնները, որոնցմով խօսողը րան մը կը պատմէ, կը հաս-  
տատէ կամ կը ժխտէ:

Ասոնց մէջ ստորոգեալ կրնան ըլլալ սահմանական և ըղձա-  
կան և զանազաններուն բայաձևերը:

Օրինակ՝

Այն խօսքը, որ սրտէն կու գայ, սրտին կը խօսի:

Երեկոյ է, բոցավառ է հորիւղն:

Այդ օրը, մինչև ճաշի ժամը, Համբարձումը աշխատեցաւ պար-  
տէզը, որ վերջացնէ իր գործը:

**Բ.** Հարցական նախադասութիւնը կ'արտայայտէ հարցում  
բանի մը մասին: Հոս ալ ստորոգեալ կրնան ըլլալ սահմանական  
և ըղձական և զանազաններուն բայաձևերը:

Օրինակ՝

Վայրի՞ ծաղիկ, անունդ ի՞նչ է:

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ:

**Գ.** Հրամայական նախադասությունը կ'արտայայտէ խօսողին հրամանը, կամբը, յորդորը: Հրամայական նախադասութիւններու ստորոգեալ կ'ըլլան հրամայական եղանակին բայաձևերը:

Օրինակ՝

Վահան, պատմէ՛ դասդ:

է՛յ, աղօրի՛ք, դարձի՛ր, դարձի՛ր,

Աղաղակէ՛ երգդ խորին:

Հրամայական նախադասութիւնները կրնան նաև անորոշ դերբայով կազմուիլ:

Օրինակ՝

Առա՛ջ անցնիլ: Գո՛ւրս ելլել: Ոտքի՛ կենալ:

**Գ.** Թացազանչական նախադասությունը կ'արտայայտէ ցանկութիւն, դբացում, պահանջ, կոչ: Ասոնց մէջ ստորոգեալը կը դրուի ըղձական, երբեմն նաեւ այլ եղանակներով:

Օրինակ՝

Սա իրիկո՞ւնն ըլլայի ես:

Որքա՞ն ատեն Պետրոսը շէր տեսած հայրենի տունը:

Բացազանչական նախադասութեան մէջ ստորոգեալը կրնայ բաղադրեալ ըլլալ:

Օրինակ՝

է՛յ ջան Հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես:

Բացազանչական նախադասութիւնները կ'ըլլան նաև անդէմ:

Օրինակ՝

Էնկե՞րն ըլլալ ցորեններուն, մրգատտանին  
Գուռը բանալ զաւկի մը պէս, մտերմօրէն,  
մը թողուլ որ շահարիկներ ըղքեղ տանին  
Թեւապարտիակ՝ լայն լըռութեան մը համօրէն:  
Հոն շրջասփիւռ ծառերուն հետ եղրայրանա՞լ,  
Տարփո՞ղն ըլլալ ծաղիկներուն, ծովածաւալ  
Իրիկուան մէջ՝ անհետելու յոյսն ունենալ...

(Մ. Մեծարենց)

Կան նախադասութիւններ, ուր հրաման և բացադանշութիւն միասին կ'արտայայտուին:

Օրինակ՝

Յնորարե՛ր գիշեր, ա՛հ, ընդունէ՛ գիտ:

Արե՛ւ, մե՛ղ ալ ոսկեղօծէ՛,

Արե՛ւ, մե՛ղ ալ, ա՛հ, մե՛ղ ալ...

**Վարժութիւն 1.** Գրեցէ՛ք երկերիւ պատմողական, հարցական, հրամայական և բացադանշական նախադասութիւններ:

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բայերով կազմեցէ՛ք պատմողական նախադասութիւններ.

մտնել, լողալ, վառիլ, ընդունիլ, շինել, ծլիլ:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ բայերով կազմեցէ՛ք հարցական նախադասութիւններ.

երթալ, մտածել, կարծել, ժպտիլ, սպասել, երգել:

**Վարժութիւն 4.** Հետեւեալ բայերով կազմեցէ՛ք հրամայական նախադասութիւններ.

դրել, սորվիլ, աշխատիլ, խաղալ, ստանալ:

**Վարժութիւն 5.** Քալել, խնդալ, պայմարիլ, մնալ, ըլլալ, խօսիլ բայերով կազմեցէ՛ք բացադանշական նախադասութիւններ:

**Վարժութիւն 6.** Հետեւեալ նախադասութիւնները դարձուցէ՛ք հարցական, հրամայական, բացադանշական.

Գուր կը սիրէք ձեր հայրենիքը:

Վարդանը գիրք մը կարդաց:

## 140. ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ

### ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

Նախադասութիւնները կրնան արտայայտել ինչպէս մէկ միտք (Գրիգորը եկաւ Անձրև կը տեղայ), այնպէս ալ մէկէ աւելի իրարու հետ կապուած միտքերու Օրինակ՝

Ես դուրս չգացի, որովհետև անձրևի կու գար նախադասութիւնը իրարու հետ կապուած երկու միտք կ'արտայայտէ (ես դուրս չգացի և անձրևի կու գար):

Ըստ այսմ ալ նախադասութիւնները կ'ըլլան պարզ և բարդ:

Պարզ են այն նախադասութիւնները, որոնք մէկ միտք կ'արտայայտեն:

*Յ ր ի ն ա կ՝*

*Մենք դաս կը սորվինք:*

*Վարդանը գիրք կը կարդայ:*

*Անձրեւն սկսաւ:*

Բարդ են այն նախադասութիւնները, որոնք երկու կամ աւելի իրարու հետ կապուած միտքեր կ'արտայայտեն:

*Յ ր ի ն ա կ՝*

*Դուրը կը բացուի, և միշտ նորեկ մը կու դայ տեղաւորուելու կարծեա արդէն կանխորոշուած իր տեղը:*

*Ուխտած ենք կրակով հատուցանել այն պարտքը, զոր թշնամին համայնատարած հրդեհով ու մոխիրով փոխ տուաւ մեզի:*

*Մուխը, որ կը ծառանայ այս տաճարին խորէն, մեր սեւ երկրին մոայլ ցան է:*

**Վարժութիւն.** Հետեւեալ հատուածին մէջ ցո՛յց տուէք պարզ և բարդ նախադասութիւնները.

Սոթրինին թարմ շունչը մեր լերան քարոտ դուխն ու կողերը կը շոյէ այսօր: Լեռը, որ դեռ նոր պատուեր ու մէկդի նետեր է իր ձիւնեղէն վերարկուն՝ նոր կեանքով մը կը խտրուայ, նոր շնորհքով մը կ'աղաւորնայ: Արեգակը վերէն, իր աչքը կը քթթէ, ու ահա մամուռը թափէ նոր շուրջառներ կու տայ ժայռերուն ուսը: Հիրիկն ու կուժկոտրուկը, զոյգ մը խելօք քոյրեր, կաթնագոյն դօտի մը կը բանին լերան շորս բոլորը: Կրիան՝ իր կուղը շայկած՝ մօտակայ այգեստանին ճամբան կը հոտուրտայ: Նապաստակը խննի վաղք մը կը փորձէ լեռն ի վար, բայց չի յաջողիր:

(Բ. Նուրիկեան)

## ՊԱՐՉ ՆՍԻԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Լ.Լ. ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ, ԳԼԽԱՒՈՐ ԱՆԳԱՄՆԵՐ.

ՀԱՄԱՌՕՏ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Այն բառերը, որոնք միմեանց կապակցուելով կը կազմեն նախադասութիւն, կը կոչուին նախադասութեան անդամներ:

Գրիգորը տուն եկաւ նախադասութեան մէջ Գրիգորը, եկաւ, տուն բառերը նախադասութեան անդամներ են:

Նախադասութեան անդամները կ'ըլլան գլխաւոր և երկրորդական:

Փոքրիկ Վարդանը բակը կը խաղայ: Հոս Վարդանը բառը ենթակայ է, կը խաղայ-ն՝ ստորոգեալ: Եթէ հասնէր Վարդանը և կը խաղայ անդամները, նախադասութիւնն այլեւս կը գազրի նախադասութիւն ըլլալէ: Մինչդեռ կրնանք հասնել փոքրիկ ու բակը անդամները, և նախադասութիւնը չի խաթարուիր: Ուրեմն, ենթակայ և ստորոգեալ նախադասութեան գլխաւոր անդամներ են:

Ենթակաւն գլխաւոր անդամ է, քանի որ կը ցուցնէ անձ մը կամ իր մը (առարկայ), որ բան մը կ'ընէ, կ'ըլլայ:

Օրինակ՝ Վարդանը կը նկարէ, Մանուրը կը դեղնին նախադասութեանց մէջ Վարդանը, ծառերը բառերը ենթակայ են. կը ցուցնեն նկարել, դեղնիլ գործողութիւնն ու եղելութիւնը կատարող անձը (Վարդանը) և իրը (ծառերը):

Ստորոգեալը նոյնպէս գլխաւոր անդամ է, քանի որ կը ցուցնէ, թէ ինչ կ'ընէ, ինչ կ'ըլլայ կամ ինչ է ենթակաւն: Յիշեալ նախադասութեանց մէջ կը նկարէ, կը դեղնին բառերը ստորոգեալներ են. կը ցուցնեն Վարդանը, ծառերը ենթակաւններուն գործողութիւնը (կը նկարէ), եղելութիւնը (կը դեղնին):

Նախադասութեան մէջ ենթակաւն և ստորոգեալը, իրրեւ գլխաւոր անդամներ, իրարու լրացում չեն, այլ հաւասարազօր են:

Միայն գլխաւոր անդամներով (ենթակայով և ստորոգեալով) կազմուած նախադասութիւնը կը կոչուի կամառօտ:

Վերոյիշեալ նախադասութիւնները (Վարդանը կը նկարէ, ծառերը կը դեղնին) համառօտ են:

**Վարժութիւն 1.** Գտնել հետեւեալ նախադասութեանց մէջ գլխաւոր անդամները և ստորագծել ենթակաւն մէկ, ստորոգեալը՝ երկու գիծով. որոշել համառօտ նախադասութիւնները.

Ձին գլուխը առած կ'երթար: Ճամբայ շկար: Ձիւնը ծածկած էր ամէն բան, ու անոր յորդ առատութիւնը ակօսելով կը յառաջանայինք շարունակի ժամանակը կարծես կանգ առած էր: Ո՞ր էր վախճանը այս անհատնում անապատին: Բալխիրը մէկէնիմէկ կանգ առաւ տան մը առջև, որուն դրան վերեւի պատուհանէն ազօտ լոյս մը կը նշուէր: Մարդը իջաւ Գոտը դարկաւ: Մանկաւարդ կին մը բացաւ զայն:

(Լ. Բաշալեան)

**Վարժութիւն 2.** Կազմեցէ՛ք 6 համառօտ նախադասութիւն:

142. ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՆՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԳԱՄՆԵՐ.  
ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Նախադասութեան մէջ գլխաւոր անդամները կ'ունենան լրացումներ, որոնք կը կոչուին երկրորդական անդամներ: Վերի նախադասութիւնները կրնանք ընդլայնել և դարձնել՝ Մեր Վարդանը կը նկարէ տուն մը, Պարտէզին ծառերը կը դեղնին աշնան: Ասոնց մէջ Վարդանը ենթական ունի մեր լրացումը, կը նկարէ ստորոգեալը՝ տուն մը լրացումը, ծառերը ենթական՝ պարտէզին լրացումը, կը դեղնին ստորոգեալը՝ աշնան լրացումը: Մեր և պարտէզին բառերը կը լրացնեն ենթակաները, իսկ տուն մը և աշնան բառերը՝ ստորոգեալները:

Գլխաւոր անդամներուն միտքը պարզաբանող բառերը կը կոչուին նախադասութեան երկրորդական անդամներ կամ լրացումներ:

Նիջէ նախադասութիւնն ունի երկրորդական անդամներ, կը կոչուի ընդարձակ նախադասութիւն:

Բերուած նախադասութիւնները (Մեր Վարդանը կը նկարէ տուն մը, Պարտէզին ծառերը կը դեղնին աշնան) ընդարձակ են:

Միայն մէկ երկրորդական անդամ ունենալու սպարադային ալ նախադասութիւնը ընդարձակ կը կոչուի:

Օրինակ՝

Դաշտերը զարդարունցան ծաղիկներով:

143. ԼՐԱՅՄԱՆ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

Նախադասութեան երկրորդական անդամները՝ լրացումները ևս իրենց կարգին կրնան լրացուիլ ուրիշ բառերով: Օրինակ՝ Վարդանը կը նկարէ շֆեղ տուն մը, Մառերը կը զարդարուին կանաչ տերեւներով նախադասութեանց մէջ տուն մը, տերեւներով երկրորդական անդամները ստացած են շֆեղ ու կանաչ լրացումները (շֆեղ տուն մը— ի՞նչպիսի տուն մը. կանաչ տերեւներով— ի՞նչպիսի տերեւներով):

Երկրորդական անդամներուն լրացումները կը կոչուին լրացման լրացումներ:

Լրացման լրացումները ևս կրնան լրացումներ ունենալ:

Օրինակ՝

Իմ հօրեղբոր որդի Վարդանը կը նկարէ տուն մը:


Այս նախադասութեան մէջ որդի բառը լրացումն է Վարդանը ենթակային, հօրեղբոր բառը՝ որդի-ին, իմ-ը՝ հօրեղբոր բառին:

**Լրացում ունեցող անդամը կը կոչուի լրացեալ:**

Նախադասութեան բոլոր անդամները կարելի է բաժնել երկու խումբի՝ ենթակայի խումբ և ստորոգեալի խումբ:

Ենթակայի խումբին մէջ կը մտնեն ենթական, իր լրացումները, լրացման լրացումները և այլն: Ստորոգեալի խումբին մէջ կը մտնեն ստորոգեալը, իր լրացումները, լրացման լրացումները և այլն:

Այսպէս՝ Իմ հօրեղբոր որդի Վարդանը կը նկարէ շքեղ տուն մը նախադասութիւնը կարելի է պատկերացնել հետեւեալ դժապատկերով.



լրացման լրացումի լրացում

Լրացումները կ'ըլլան տրոհուող և շտրոհուող: Երբ լրացումն իր լրացեալէն չ'անջատուիր, կը գրուի անոր վրայ, կը կոչուի **չտրոհուող**: Օրինակ՝ Պզտիկ տունեւ հետուն ինձի կը ժպտին: Այս նախադասութեան մէջ պզտիկ լրացումը չ'է զատուած տունեւ լրացեալէն, հետուն և ինձի լրացումները՝ կը ժպտին լրացեալէն: Իսկ եթէ լրացումը զատուի, անջատուի լրացեալէն, **տրոհուող** կը կոչուի: Օրինակ՝ Բարեկամս՝ Վարդանը, մեզի պիտի գայ՝ միասին քատրոն երթալու համար: Այս նախադասութեան մէջ Վարդանը լրացումը զատուած է բարեկամս լրացեալէն, իսկ միասին քատրոն երթալու համար լրացումը՝ պիտի գայ լրացեալէն:



**Վարժութիւն 1.** Գտնել ենթակայի և ստորոգելի լրացումները հետեւեալ նախադասութեանց մէջ.

Երիտասարդն իսկոյն ըմբռնեց վտանգին մեծութիւնը (1): Արամի այս յայտարարութիւնը ուրախացուց դասարանի բոլոր տղարը (2): Վաճառականը յետոյ իրենց գործերէն տեղեկութիւն մը հարցուց (3): Երկչարի քարաշէն տունը ընդարձակ պարտէզի մը մէջտեղը կառուցուած էր (4): Ուշիմ պատանին մեծ ճարտչկութեամբ կատարած էր դժուարին գործը (5):

**Վարժութիւն 2.** Կաղմեցէ՛ք հինգ ընդարձակ նախադասութիւն:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ նախադասութեանց մէջ գտնել լրացման լրացումները.

Արամ իր մօր շփոթած կերպարանքը տեսնելով, հարկ համարեց զայն հանդարտեցնելու համար քանի մը տեղեկութիւններ տալ (1): Երկաթուղիի դիժին երկու կողմերը լեցուած էր հետաքրքիրներու խումն ըստ մտայնութիւն մը (2): Այս մահուան տարուբերին մէջ ալիք մը անհնարին մուկեղնութեամբ գրկեց թարձրացուց մակոյկն իր կուրծքին վրայ (3):

**Վարժութիւն 4.** Կաղմեցէ՛ք հետեւեալ նախադասութեանց զրծապատկերը.

Սրահին մէջտեղը կը կանգնէր կաղանդի հսկայ ծառ մը:

Մովեղերքի լեռներուն կատարները աստիճանարար կը կտրւընցընեն իրենց ձիգ ուղղութիւնը:

Փողոցին միւս կողմը կը կենար երկաթագործին սղտիկ խանութը:

Հրապարակին մէկ անկիւնը կաղի մխոտ կանթեղ մը կը վառէր:

#### 144. ԵՆԹԱԿԱՏ

Նախադասութեան այն անդամը, որ կը ցուցնէ բան մը ընող կամ եղող առարկայ (անձ կամ իր), կը կոչուի ենթակայ:

Արամը դաս կը սորվի:

Վարդը բացուեցաւ:

Այս նախադասութեանց մէջ Արամը բառը կը ցուցնէ ստովիկ

գործողութիւնը կատարող անձը, իսկ վարդը բառը՝ բացուիլ եղելութեան առարկան:

Ենթական կը պատասխանէ ո՞վ, ի՞նչ, ո՞րը հարցումներուն: Արամը դաս կը սորվի. ո՞վ կը սորվի—Արամը: Վարդը բացուեցաւ. ի՞նչը բացուեցաւ—Վարդը:

Ենթական միշտ կը դրուի ուղղական հոլովով:

Ենթական սովորաբար կ'արտայայտուի դոյականով և դերանունով:

Օրինակ՝

### Գոյականով

Ժողովուրդներն ահաւասիկ կը խորտակեն շղթաները:

Առուակ մ'հեռուն կը փալփիլի:

Կ'երթան եզները հուժկու ղանգակներով դաշնաւոր:

Հերկերուն ջաբէն արդէն անհունօրէն կ'երկարի:

### Դերանունով

Եւ արեւին կը սպասեմ եւ ցնծապատար:

Եւ ուզեցի սիրել զեփիւտ:

Դուն կ'երթաս գործատուն աշխատելու:

Անոնք փողոց կը խուժեն:

Ո՞վ պիտի երթայ հոն:

Վերջալոյսի աղջի՞կ մ'է սա, ո՞վ Աստուած:

Ոմանք իրենց ակերտուն մէջ կը փշրեն հասկ մը ասոր:

Ենթական կրնայ արտայայտուիլ նաև դոյականաբար գործածած ածականով, թուականով, դերբայով և այլն:

Օրինակ՝

Կապոյտն յանկարծ կու լայ բուն ծիծաղէն:

Գեղեցիկը հաճելի է:

Պատիկները պարտաւոր են մեծերը յարգել:

Այս նախադասութեանց ենթականերն են կապոյտը, գեղեցիկը, պատիկները բառերը, որոնք դոյականաբար գործածուած ածականներ են:

Անոնց նիւթը կրնայ տասը հոգի փոխարինել:

Չորրորդը ազուտը տղեկ մ'էր:

Այս նախադասութեանց մէջ ենթական են նիւթը, չորրորդը դոյականաբար գործածուած թուականները:

Մտրվիլը աշակերտի մը նուիրական պարտականութիւնն է:

Շատ աշխատողը շի գըջար:

Վարդանին գրածը յաջող շարագրութիւն մըն էր:

Այս նախագասութեանց մէջ ենթակայ են սուրվիլը, աշխատողը, գրածը գերբայաները, որոնք գործածուած են գոյականաբար սենթակայ կրնայ դառնալ ամէն մէկ բառ, դարձուածք, նոյն-իսկ հնչիւն, նախագասութիւն, եթէ գոյականաբար գործածուի:

Օրինակ՝

Գ-ն բաղաձայն հնչիւն է:

Դասս շեմ սուրվեր-ը ծոյլ աշակերտի մը մշտական պատասխանն է:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածին մէջ ցոյց տալ ենթակաները և որոշել, թէ ի՛նչ խօսքի մասով են արտայայտուած.

Կամաց-կամաց իր ուսերուն վրայ բարդուող տարիներուն դէմ այստերուն ծայրը կեռասի թեթեւ կարմիր մը կը յամենար, և գորովալից ժպիտ մը կը դժուէր:

Հասակը բարձր էր և տիբ, և զնացքը անձկագին փութկոտութիւն մը և նոյն ատեն վառ կենդանութիւն մը կը պարզէր տունէն ներս թէ տունէն դուրս, ուր որ ալ ըլլար:

Իր անցեալը իր ներկային շափ պարզ եղեր էր, պարզ ու յստակ, պատկերոտ մատենանի մը պէս, զոր ուզողը կրնայ թղթատել, աչքէ անցընել կամ ուշի ուշով կարդալ և քննել:

Իր այնքան բեղմնաւոր և բարի կեանքին անդիր պատմութիւնը, ուր ոչինչ կայ հէթիաթունակ, սէրով կը սկսի և աշխատանքով կը վերջակիտուի:

(Ք. Նուրիկեան)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ գոյականները նախագասութեանց մէջ գործածեցէ՛ք որպէս ենթակայ.

Գետ, երկիր, քաղաք, մարդ, ծով, գործարան, կեանք, հրապարակ, փողոց, սիրտ, քոյր, եղբայր:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ դերանունները գործածեցէ՛ք որպէս ենթակայ.

Մենք, դուք, ասիկա, ան, ով:

**Վարժութիւն 4.** Գոյականաբար գործածելով ենթակայ դարձուցէ՛ք՝

ա) ազատ, մեծ, բարձր, ծանր, բարի, քաղցր *ածականները* .  
բ) երեւ, քաւն, ուրեւորդ, տասնեւորդ, շորեւորդ *թուական-*  
*ները* .

դ) ծածկել, խմող, քափած, ինկած, աբքցած, աշխատիլ դեր-  
բայները :

#### 145. ԶԵՂՉՈՒԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՎ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Խօսքի մէջ յաճախ ենթակայան կը զեղչուի: Ատոր պատճառն  
այն է, որ հայերէն շեղուի մէջ ստորոգեալը միաժամանակ կը բո-  
ւլանդակէ գործողութիւն կատարողին դէմքը:

Ենթակայան սովորաբար կը զեղչուի .

Ա. Երբ գործողութիւն կատարողը խօսողն է .

Բ. Երբ գործողութիւն կատարողը խօսակիցն է .

Գ. Երբ գործողութիւն կատարողը յայտնի է նախընթաց նա-  
խադասութիւններէն:

Օրինակ՝

Կը սիրեմ հայրենիքս անսահման:

Վերադարձի՛ր ծնողքիդ բով:

Այս նախադասութեանց մէջ ենթակայաները զեղչուած են, սա-  
կայն անոնք որոշակի կերպով կը զգացուին կը սիրեմ և վերա-  
դարձի՛ր ստորոգեալներէն, որոնցմէ մէկը առաջին դէմքի է (կը  
սիրեմ), որ խօսող անձը կը ցուցնէ, իսկ միւսը երկրորդ դէմքի է  
(վերադարձի՛ր), որ խօսակիցը կը մատնանշէ:

Գրիգորը շուտով պիտի գայ: Շատ գիրքեր պիտի բերէ:

Երկրորդ նախադասութեան մէջ ենթակայ շկայ, սակայն անի-  
կա յայտնի է առաջին նախադասութենէն և կը հասկցուի պիտի բերէ  
ստորոգեալէն, որ երրորդ դէմքի է:

Գեղարուեստական գրուածքներու մէջ անձնական դերանուն-  
ներով ենթակայի զեղչումը սովորական երեւոյթ է:

Քեզի եկայ իբր ուխտատու մը յոգնած՝

Որ կը գանձ հուսկ փոխարէն իղձերուն

Շիրիմ մը՝ հոն ծնրադրելու սիրտը բաց,

Սե խօսելու, համբուրելու լոյս աճիւն:

Հոս կը ննջես.— քեզ կը պատէ լռութիւնն,

Ուղիւիան մ՛ես՝ զոր կը ծածկէ այդ պատանք:

Այս հաստատածին առաջին նախադասութեան մէջ զնշուած է նա ենթական, իսկ հինգերորդ սուղին մէջ՝ դուն ենթական: Միայն վերնագիրէն յայտնի է («Ալիշանի շիրիմին առջև»), որ եկողը հնչինակն է, իսկ ննջողը՝ Ալիշանը:

Սիրեցինք բեզ նախ՝ դրօշակի մը պէս (1).  
Մեզ բսկը էին (2), երբ փոքր էինք դեռ (3),  
Քէ լերանց կատարն էիր պանծացեր (4),  
Թէ ծալլեր, նետեր էին հիմա քեզ (5):

Այստեղ առաջին և երրորդ նախադասութեանց մէջ զնշուած է մենք ենթական, երկրորդին, հինգերորդին մէջ՝ անոնք ենթական, շարորդին մէջ՝ դուն ենթական:

Բնագիրէն կ'երևի, որ սիրեցինք, փոքր էինք ստորոգեալներուն ենթական է նայրենիքի գաւակները, իսկ պանծացեր էիր ստորոգեալին ենթական է Հայաստանը (բանաստեղծութիւնը նուիրուած է Հայաստանին):

Այն նախադասութիւնը, որուն ենթական բաց ձգուած է, բայց լռելեայն կը կռակցուի, կը կոչուի զնշուած ենթակայով նախադասութիւն:

Պէտք է յիշել սակայն, որ ամէն պարագային կարելի չէ ենթական զնշել, մասնաւանդ երբ խօսքի մէջ տարրեր ենթականներու դործողութիւններ են, որ կը յաջորդեն իրարու:

Օրինակ՝

Գրիգորը և վարդանը կը բալէին: Ասաւ Միշ մը սպասէ: Սակայն չսպասեց, ետեւէն կանչեց, շտեց:

Հոս չի հասկցուիր, թէ ո՞վ էր խնդրողը, կանչողը, շտողը: Հեռաւարտը այսպիսի զնշուամը սխալ է:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ նախադասութեանց մէջ զնշուած ենթակաները վերականգնել.

#### ՄԱՐԱՆ ԱՊՂԱՅ

Առանց ստք կոխած ըլլալու մեր շէնքէն ներս, ծանօթ դէմք մըն էր արդէն բողոքին համար:

Ստուերի մը պէս կը յայտնուէր դրան առջև, քանի մը անգամ կ'երթնէիէր, կը տնտնար, և ի վերջոյ կը նստէր գետին, փողոցի պատին տակ, գէմքը մեր դուռին: Մտրացիկի ցնցոտի-

Ֆեր կը կրէր, բայց մտրացկան չէր: Սրբէր չէինք տեսած ոչոր-  
մութիւն ուզելը, չէինք լսած ձայնը:

Բուրդէ աղտոտ շալ մը ունէր ուսերուն վրայ, որուն տակէն  
մինչև մէջքը կը հասնէր կախուած պարասլ տոպրակը, որ դեռ-  
նին կը փռուէր, ինքնարերարար, երբ նստէր:

(Ա. Մառուկեան)

**Վարժութիւն 2.** Զեղչել հետեւեալ նախադասութեանց ենթա-  
կաները.

Վարդանը շատ կը սիրէր ճատրակ խաղալ: Օր մը Վարդանը  
ըսաւ Գրիգորին.

— Դուն չե՞ս ուզեր դասդ սորվելէ հտըը երթալ ճատրակի  
մրցասրահ. հոն վարպետները ճատրակ պիտի խաղան:

Գրիգորն ալ այս խաղին սիրահար էր և հաճոյքով ընկերացաւ  
Վարդանին: Մուտքի տոմս գնելու համար Վարդանը և Գրիգորը  
կարգի կը սպասէին, երբ անոնց մօտեցաւ պատանի մը: Պատա-  
նին առաջարկեց երկու տոմսակ՝ այն պատճառաբանութեամբ, թէ  
իր ընկերները չէին ուզած գալ:

Սրահին մէջ Վարդանը և Գրիգորը բով բովի նստեցան: Անոնք  
համակ ուշադրութիւն դարձած կը հետեւէին խաղի ընթացքին:  
Խաղը վերջանալէն հտըը Վարդանն ու Գրիգորը դո՛հ դուրս ելան  
սրահէն:

### 146. ԱՆՆԹԱՆԱՅ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Այն նախադասութիւնը, որուն ենթական արտայայտուած չէ  
և կարելի չէ վերականգնել, կը կոչուի անենթակայ նախադա-  
սութիւն:

Օրինակ՝

Մրցաւ:

Երկարը տաք տաք կը ծեծեն:

Ասոնք անենթակայ նախադասութիւններ են և ղեղշուած են-  
թակայով նախադասութիւններէն կը տարրերին անով, որ ենթա-  
կայ շունին և շեն կրնար ունենալ: Անենթակայ նախադասութեան  
մէջ գործողութիւն կատարողը յայտնի չէ առհասարակ:

Անենթակայ նախադասութիւնները կ'արտայայտուին.

Ա. Բայի եզակի երբող դէմով. ասոնք կը ցուցնեն բնութեան  
կրեւոյթներ:

Ե՛րբ պիտի լուսնայ:

Այսօր առտուընէ ի վեր կ'անձրեւէ:

Այս նախադասութեանց ենթական և ստորոգեալը մէկ բառի մէջ ամփոփուած են (պիտի լուսնայ, կ'անձրեւէ):

**Բ.** Ուայի յոգնակի երրորդ դէմքով. *ասոնք կը ցուցնեն բոլորին, ընդհանորին վերարերող զործողութիւններ և մեծ մասամբ առածներ կ'ըլլան:*

Օրինակ՝

Օձը դուխէն կը սպաննեն:

Ճուտերը աշնան կը համրեն:

**Գ.** Ապառնի դերբայով և օժանդակ բայի եզակի երրորդ դէմքով. *ասոնք որեւէ բանի անհրաժեշտութիւն կը նշեն:*

Օրինակ՝

Այս դործին համար բան մը ընելու է:

Անգամ մը վարդանը կանչելու է հոս:

Խաղալիք մը տալու է երախային:

Անենթակայ նախադասութիւնը ոչ միայն առանձին կը դործածուի, այլև կրնայ բարդ նախադասութեան մը կազմին մէջ ըլլալ՝ իբրև անոր մէկ բաղադրիչը:

Օրինակ՝

Կ'անձրեւէր, երբ ճամբայ ինկանք:

Պետրոս կը սիրէր կրկնել, թէ նուտերը աշնան կը համրեն:

**Վարժութիւն 1.** Գտնել անենթակայ նախադասութիւնները և ցոյց տալ, թէ ի՛նչ ձևով արտայայտուած են.

Ինչ որ ալ եղած ըլլար իր կեանքը, սիրտս կ'ըսէր որ ծագիկ մը նետելու է անոր վրայ և ոչ թէ ազրի դէզ մը, ինչպէս կ'ընէին այս մարդիկը (1): Պատասխանելու է, որ ըստ այնմ դործի սկզբինք կամ չսկսինք (2): Այդ ձիով նապաստակ որսալու երթալու է: Նապաստակ կերած ունի՞ք (3): Երեսանց հաշտուելու է և այս զբօժոխքէն դուրս ելլելու ճար մը փնտռելու է (4): Երկու ատը նամակով Փրկիչ զրկելու է ուրեմն զինքը (5): Մազ մը խոտորելու չէ այն ճամբէն, զոր ցոյց տուի (6): Գործաւորները տուն ճամբելու էր. արդէն կը մթնէր, կը ցրտէր (7): Շատոնց զգուշացուցած եմ զինքը, որ շնորհքով դործ ընել սորվի. ձուկը զլուխէն կը բռնեն, իսկ անիկա չի հասկնար ըսածներս (8): Կ'անձրեւէ, տղաս... Աշունը թաց է (9):

Ստորոգեալը կը ցուցնէ ենթակային գործողութիւնը կամ եղելութիւնը, այսինքն, թէ ենթական ինչ կ'ընէ, ինչ կ'ըլլայ, ինչ է, ինչպէս է և այլն:

Արամը կը գրէ:

Դասը սկսած է:

Բնութիւնը զեղեցիկ է:

Տիգրանը աշակերտ է:

Հոս կը գրէ, սկսած է, զեղեցիկ է, աշակերտ է ստորոգեալներն են: Կը գրէ-ն կը ցուցնէ, թէ Արամը ինչ կ'ընէ, սկսած է-ն կը ցուցնէ, թէ դասն ինչ եղած է, զեղեցիկ է-ն կը ցուցնէ, թէ բնութիւնն ինչպէս է, աշակերտ է-ն կը ցուցնէ, թէ Տիգրանը ինչ է:

Այս ստորոգեալներն արտայայտուած են տարբեր միջոցներով՝ բայի պարզ ժամանակով (կը գրէ), բաղադրեալ ժամանակով (սկսած է), ածականով ու հանգոյցով (զեղեցիկ է), գոյականով ու հանգոյցով (աշակերտ է):

Ստորոգեալը միշտ կ'արտայայտէ երկու կարգի իմաստ, կը կատարէ երկու դեր:

Առաջին. ստորոգեալը ենթակային մէկ յատկանիշը կը ցուցնէ: Վերի նախադասութեանց մէջ յատկանիշ է ոչ միայն զեղեցիկ-ը, այլև գրելու գործողութիւնը, դասին սկսած ըլլալը: Յատկանիշ կը ցուցնէ նաև աշակերտ-ը. չէ՞ որ անով Տիգրանը ենթական կը տարբերի ուրիշ նախադասութիւններու ենթականերէն:

Օրինակ՝

Արամը ուսուցիչ է:

Յակոբը դարբին է:

Սակայն յատկանիշի անունը առարկայի անունին բով դրուելով չի դառնար ստորոգեալ: Արամը գրել, դասը սկսիլ, բնօրինը զեղեցիկ, Տիգրանը աշակերտ և այլն, միտք չեն արտայայտեր և գրել, սկսիլ, զեղեցիկ, աշակերտ բառերն ալ ստորոգեալ չեն:

Որովհետև այս վերջին բառերը գառնան ստորոգեալ և արտայայտեն Արամին, դասին, Տիգրանին յատկանիշները, անհրաժեշտ է, որ անոնք վերագրուին վերջիններուս, հաստատուին (կամ ժխտուին) իրրեւ անոնց յատկանիշները: Ինչպէս՝ Արամը կը գրէ: Դասը սկսած է: Բնութիւնը զեղեցիկ է: Տիգրանը աշակերտ է:



Ուրեմն՝ ստորոգեալին երկուրդ դերն այն է, որ ան յատկա-  
նիշը կը վերագրէ, կը ստորոգէ ենթակային:

Ստորոգումը յատկանիշի վերագրումն է ստաբիլային:

Ստորոգումը կ'արտայայտուի տարրեր միջոցներով: Ան յա-  
ճախ կ'արտայայտուի բայի խոնարհման վերջաւորութիւններով:

Օրինակ՝

Ուսուցիչը կը բացատրէ նոր դասը:

Թող աշակերաները զան ներս:

Անոնք վերադարձան Հայրենիք:

Կը բացատրէ, զան, վերադարձան ստորոգեալները, որոնք  
կազմուած են մէկ բառէ, թէ՛ յատկանիշ կ'արտայայտեն և թէ՛  
ստորոգում (վերջաւորութիւններու միջոցով):

Շատ անգամ ստորոգուող յատկանիշը կ'արտայայտուի մէկ  
բառով, իսկ ստորոգումը՝ բայով (սովորաբար վերացական բայով՝  
է (եմ, ես, էի, էր...), ըլլալ և այլն):

Օրինակ՝

Մազիկը հոտաւէտ է:

Անահիտը կարգապահ է:

Ասիկա հետաքրքրական գիրք է:

Այս նախագասութեանց մէջ ենթակային ստորոգուող յատկա-  
նիշներն են՝ հոտաւէտ, կարգապահ, գիրք: Ասոնց վերադրումը  
կամ ստորոգումը ենթակային կը կատարուի է: Բային միջոցով:

Ստորոգեալներն ըստ կազմութեան կ'ըլլան երկու տեսակ՝  
պարզ և բաղադրեալ:

**Վարժութիւն.** Ընդօրինակել հետեւեալ ոտանաւորը և ստորա-  
դծել ստորոգեալները. բացատրել, թէ ինչ միջոցներով արտայայ-  
տուած են ստորոգումները.

#### ԱՍՈՒՊՆԵՐ

Աչքերըս լեցուն են ասուաներով,  
Ամառ ժամանակ ժողվեցի զանոնք,  
Երբ որ երկնքէն կ'իյնային սիրով,  
Ինչպէս քունի մէջ՝ լոյս աչքեր անհոգ:

Ժողվեցի զանոնք, ամառ գիշերներ,  
Աչուրներուս մէջ, երբ որ երկնքէն

կ'իյնային՝ շինկած հողին վրայ դեռ,  
Ջինջ սէրն՝ ր ծնած և մեռած արդէն:

Հիմա իմ հոգիս լուսաւոր է միշտ.  
Աչքերս գոհարի տուփեր են մէյմէկ.  
Եւ օրը երբ որ շատ ճնշէ իմ վիշտ,

Շատ աղբատ մնամ և մռայլ ու մէզ  
Շրջապատէ զիս, — աստղեր կը կազմեմ  
Այն ասուպներէն և լո՛ւռ կը դիտեմ:

(Վ. Թէրէեան)

### 148. ՊԱՐՉ ՍՏՈՐՈՒԵԱԿ

Պարզ կը կոչուի միայն դիմաւոր բայով արտայայտուած ստորոգեալը:

Պարզ ստորոգեալները կրնան արտայայտուիլ բայի թէ՛ պարզ, թէ՛ բաղադրեալ ժամանակներով:

Օ ր ի ն ա կ՝

Ես ուշագրութեամբ կը նայիմ քովի պարտէզին:

Խումբ մը տղաք թատերական ներկայացում մը կը կազմա-  
կերպեն:

Պարտէզին մէկ անկիւնը տախտակներով զոցուած է:

Հանդիսականները հետզհետէ կու գան:

Հանդիսականները արդէն լեցուցած են նստարանները:

Ժամը երկուփին շոգենաւը եկած կ'ըլլայ:

Այս նախադասութեանց մէջ կը նայիմ, կը կազմակերպեն, զոցուած է, կու գան, լեցուցած են, եկած կ'ըլլայ բայերը պարզ ստորոգեալներ են, որոնք արտայայտուած են բայի պարզ կամ բաղադրեալ ժամանակներով:

Պարզ են նաև յարադիր բայերով արտայայտուած ստորոգեալները:

Օ ր ի ն ա կ՝

Թուրք հանդիսականները ոտքի կ'ելլեն:

Նոյն պահուն տղան ներս մտաւ:

Քանի որ ձեռքիդ տակը այսպիսի դանձ մը ունէիր, ինչո՞ւ համար մինչև հիմա երեսն չէիր հաճեալ դայն:

Ոսֆի կ'ելլեն, և երս մտաւ, երևան շէիր քաներ յարագիր րա-  
յերը պարզ ստորոգեալներ են, քանի որ անոնցմէ ամէն մէկը խո-  
նարհուած րայ մըն է:

### Վարժութիւն 1. Որոշեցէ՛ք պարզ ստորոգեալները.

Շալկեցիներ անկողինները և դացիներ մեր նոր տունը, ուր կա-  
լին արդէն ուրիշներ: Այդ շէնքը կը կոչուէր Մազկոց: Մազկոցին  
րնակիչ դառնալու հանգամանքը ինքնարեւարար կը բաժնէր մեզ  
Մանկապարտէշէն: Բակը պղտիկ էր, բայց ընդարձակ սենեակներ  
կային: Երեսուն-քառասուն հոգի հանգիստ տեղատրուեցանք ամէն  
մէկ սենեակի մէջ, առանց խճողումի: Հինները դրաւած էին վեր-  
նայարկի լաւագոյն երեք սենեակները:

Մայրիկ մը ունէինք, որ ցորեկը կը մնար Մազկոցին մէջ,  
բայց դիշերը կ'երթար իր տունը: Հսկիչները կ'երթային դպրոցա-  
կաններուն հետ, ու ամբողջ օրը ազատ էինք: Բակին պղտիկու-  
թեան պատճառով արտօնուած էինք խաղալու դուրսը: Կարճատև  
շրջան մը տեսց ազատութիւնը: Յետոյ փոխուեցաւ Մազկոցին շէն-  
քը, նաև վարչաձևեր:

(Ա. Մատուկեան)

### Վարժութիւն 2. Ընդօրինակեցէ՛ք այս հատուածը և ստորա- գծեցէ՛ք պարզ ստորոգեալները. որոշեցէ՛ք, թէ՛ րայի ի՛նչպիսի ժամանակներով արտայայտուած են անոնք (պարզ, բաղադրեալ).

Զիւն կայ ամէն կողմ: Լեռ ու դաշտ ծածկած է ան հոգածու  
տարփանքով, քաղաք ու գիւղ թաղուած են անոր մէջ մակոտ հա-  
ճութեամբ մը: Բուխերիկներ միայն կը ծակծկեն դայն գէսուղէն:  
Ու ցուրտ չէ այս ձիւնը, տաքցնող րան մը կ'ելլէ անկէ, և մտեր-  
մութեան, դուրդուրանքի ու խրախճանութեան հրաւէր մը կը յածի  
անոր վրայ:

Յնծութիւն մը կը խաղայ այս ամբողջ տարածութեան վերև:  
Ու մարդիկ ուր կը աւանհոմ դիմացս, կը խնդան, ու կիները կը  
ձայտին, ու պղտիկները, թևերնին վեր, կը պարեն:

Կէս դիշերուան դանդակները կը հնչեն աւետաւոր, նոր տա-  
րիի դալուստը իմացնելով, կը հնչեն հրճուալիր, ու բերկրութեան  
կրդի մը, զոհարանութեան ալէլուիայի մը պէս կը տարածուի, կը  
բարձրանայ, կը ստատոնի ասիկա:

Ու սեղաններ կը տեսնեմ, սեղաններ ամէն, ամէն կողմ, ու  
անոնց շորս կողմը շարուած են պառուսներ ու ծերունիներ իրենց  
զաւակներով, հարսներով ու թոռներով: Ճոխ ու բարի բնութեան

մը պարզեւած բոլոր բարիքները կուտակուած են հոս ժիր ու շար-  
բաշ մարդերու ձեռքով:

Ահա ոտքի կ'ելլէ պառաւը որ սեղանին զլուխը բաղմած է,  
դինիին կուտիկը ձեռքը կ'առնէ, անոր մէջ կը ձգէ իր ճակատին  
պսպլուն ոսկիներէն հատ մը ու դողդոջուն ձեռքով կը բարձրացնէ  
բաժակը:

(Լ. Ռաշալեան)

## 149. ԲԱՂԱԳՐԵԱԼ ՍՏՈՐՈՒԿԵԱԼ

Բաղադրեալ ստորոգեալին մէջ ենթակային վերագրուող յատ-  
կանիշը և վերագրումը կ'արտայայտուին տարրեր միջոցներով,  
ստորոգեալի տարրեր մասերով. յատկանիշը կ'արտայայտուի գո-  
յականով, ածականով, թուականով, անորոշ ու ենթակայական դեր-  
բայներով կամ այլ բառերով, իսկ ստորոգումը կ'արտայայտուի  
դիմաւոր բայով:

Օրինակ՝

Սենեակը լուսաւոր է:

Յակորը նիւտն է:

Այս նախադասութիւններուն ստորոգեալները (լուսաւոր է, հիւ-  
սըն է) կազմուած են յատկանիշ արտայայտող բառերէ (լուսաւոր,  
հիւսն) և յատկանիշը ենթակային վերագրող մասէ մը (է):

Գոյականէ, ածականէ, թուականէ, դերանունէ կամ այլ  
խօսքի մասէ և բայէ կազմուած ստորոգեալը բաղադրեալ է:

Բաղադրեալ ստորոգեալին մէջ յատկանիշը կ'արտայայտուի՝

1. Գոյականով՝

Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է:

Ասիկա ուշագրաւ գիրք մըն է:

Ան իմ եղբայրս է:

2. Ածականով՝

Պարունը ամենուն հաճելի է:

Տերևը կանաչ է:

Ատիկա շատոնց յայտնի է:

### 3. Քուականով՝

Անոնք ուր էին:

Մեր դասարանի աշակերտներուն թիւը Բաաներեւ է:

### 4. Գերանունով՝

Ո՞վ է անոր եղբայրը:

Մեր ուսուցիչը ան է:

Արիսողոմ աղան դո՞ւմ էր:

5. Անորոշ ու ենթակայական դերբայներով, որոնցմով մամանակներ շնն կազմուի՝

Արամը դժագիրներ ընդօրինակող է:

Ատիկա կարդալ շէր, դասդ շնս սորվեր:

Բաղադրեալ ստորոգեալին նիթական նշանակութիւն ունեցող մասը, որ կը ցուցնէ ստորոգուող յատկանիշը, կը կոչուի ստորոգելիական վերադիր:

Վերի օրինակներուն մէջ Երևան, զիւր, Եղբայրս, Բաանելի, կանաչ, յայտնի, ուր, Բաաներեւ, ով, ան, դում, ընդօրինակող, կարդալ թառերը ստորոգելիական վերադիրներ են:

Ստորոգելիական վերադիրը ենթակային կապող բայը կանոնայց կը կոչուի:

Վերի նախադասութեանց մէջ է-ն (էր, էին, շէր) հանգոյց է:

Հանգոյց կրնան ըլլալ վերացական բայերը, որոնք շունին նիթական իմաստ: Այդպիսի բայեր են՝ եմ (ես, է, էի, էիր, էր և այլն), ըլլալ, դառնալ, բուիլ, կոչուիլ, կազմել և այլն:

Օրինակ՝

Անոր ամբողջ հարստութիւնը հինգ հարիւր ոսկի կը կազմէր:

Իրեն մօտենալն այլեւս անկարելի եղած էր:

Հա՞ց... Աշխատելէն հայրդ դարձաւ ծեր,

Հացի խնդիրն ինքն ալ չէ հասկըցեր:

**Վարժութիւն 1.** Որոշեցէ՛ք հետեւեալ հատուածին մէջ եղած նախադասութեանց ստորոգեալները և ընդօրինակեցէ՛ք զանոնք՝ սլարգերն ու բաղադրեալները զրելով՝ զատ սինակներու մէջ. որոշեցէ՛ք, թէ ի՞նչ խօսքի մասի կը պատկանին անոնց վերադիրները և ո՞ր վերացական բայով արտայայտուած են հանգոյցները.

— Աս ի՞նչ է, կազը մարած է... — հարցուց տիկինը սենեակին դուռը բանալով:

— Այո, մարած է, — պատասխանեց Արիստղոմ աղան՝ զսպելով իր զգացած նեղութիւնն որ աւելնալու վրայ էր:

— Դուն հանգիստ եղիր, Արիստղոմ՝ աղա, այդ բաները նայիլը մեր գործն է:

— Այո, բայց ես անօթի եմ և սպասելու կարողութիւն չունիմ:

— Ես ի՞նչ ըսի քեզի, դուն սիրտ մի՛ հատցուներ, ամէն բան ինծի ձգէ, ես կը հողամ:

Տիկինը շուտ մը դրացուցն տունը վաղեց և անոր կազն բերելով լուսաւորեց Արիստղոմ աղային խուցը:

Այս լուսաւորութեան վրայ կէս ժամ շանցաւ, և Արիստղոմ աղային ներկայացաւ երիտասարդ մը, որ վաճառականի շէր նմաներ, սեղանաւորի ալ շէր նմաներ, գործաւորի ալ շէր նմաներ, և վերջապէս անանկ բանի մը կը նմանէր, որուն նմանը չկայ: Հաղիւ երեսուն երկու տարեկան կը թուէր: Կասկած աչքերով, դեղին մազերով զարդարուած ըլլալով՝ ունէր նաեւ երկու մատ մօրուք որ մայրաքաղաքիս մէջ կամ սոցոյ նշան է և կամ շքաւորութեան: Հագուստներն այնքան հին էին, որ հնախոյզներ զանոնք գնելու համար մեծաքանակ դումար մը կու տային: Սակայն եթէ հագուստի մասին վանողական էր, դէմքի մասին քաշողական զօրութիւն ունէր այս անձը:

(3. Պարոնեան)

**Վարժութիւն 2.** Կազմեցէ՛ք հինգ պարզ ստորոգեալով և տասը բաղադրեալ ստորոգեալով նախադասութիւններ (ստորոգելիական վերադիրներն արտայայտել տարբեր խօսքի մասերով):

### 150. ԶԵՂՁՈՒԱՐ ՍՏՈՐՈԳԵԱԼՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Խօսքի մէջ յաճախ չի գործածուիր, կը ղեղչուի այն, որ հասկընալի է առանց գործածուելու: Այդ պատճառով նախադասութեան ստորոգեալը յաճախ կը ղեղչուի:

Յ Ր Ի Ն Ա Կ՝

Մենք թատրոն պիտի երթանք, անոնք՝ համերգի:

Աշոտը բարեխիղճ է, կարգապահ, օրինակելի:

Առաջին տողին մէջ ղեղչուած է պիտի երբան ստորոգեալը (անոնք պիտի երթան համերգի), որովհետեւ ան արդէն հասկնա-

լի է նախորդ նախադասութենէն (մենք թատրոն պիտի երթանք):  
Երկրորդ օրինակին մէջ երկու անգամ ղեղչուած է միայն Է հան-  
դոյցը (կարգապահ Է, օրինակելի Է), որ կը հասկցուի նախորդ  
ստորոգեալէն (բարեխիղճ Է): Ուրեմն ստորոգեալը կրնայ ղեղչուիլ  
ամբողջովին կամ մասամբ:

Այն նախադասութիւնը, որուն ստորոգեալը ամբողջովին կամ  
մասամբ ղեղչուած է, բայց լռելեայն կը կատկցուի, կը կոչուի ղեղ-  
չուած ստորոգեալով նախադասութիւն:

Բայի պարզ ժամանակով արտայայտուած ստորոգեալը բնա-  
կանաբար կրնայ ղեղչուիլ միայն ամբողջովին:

Միւս բոլոր ստորոգեալները (բաղադրեալ ստորոգեալը և բայի  
բաղադրեալ ժամանակով արտայայտուած պարզ ստորոգեալը)  
կրնան ղեղչուիլ թէ՛ ամբողջովին, թէ՛ մասամբ (վերացական բայը):

Ստորոգեալը ամբողջովին կրնայ ղեղչուիլ.

Ա. Երէ նոյն ստորոգեալը ամբողջովին կամ անօր եխրա-  
կան իմաստ արտայայտող մասը (ստորոգելիական վերագիրը կամ  
խոնարհուող բայը) արդէն անգամ մը գործածուած է նախադասու-  
րեան մէջ.

Գուր հոս նստեցէք, անոնք՝ հոն  
Ան երէկ վերագարծաւ, ես՝ այսօր  
Ան դարբինի որդի է, ես՝ հիւսնի:

Այս օրինակներուն մէջ ղեղչուած են նստին, վերագարծայ, որ-  
դի եւ ստորոգեալները:

Բ. Տրամախօսութեան մէջ, երէ խօսակիցին նախադասու-  
թիւնն ունի նոյն ստորոգեալը.

- Գիշերները հանգիստ կը քնանա՞ս:
- Ես՝ շատ հանգիստ:
- Գուք բանի՞ տարեկան էք:
- Ես՝ ութ, ընկերս՝ ինը:

Առաջին օրինակին մէջ ղեղչուած է ես ենթակային կը բնա-  
նամ ստորոգեալը, իսկ երկրորդ օրինակին մէջ ղեղչուած են ես  
ենթակային տարեկան եւ և ընկերս ենթակային տարեկան է: ստո-  
րոգեալները:

Պ. Երէ ստորոգեալը առանց գործածուելու կը հասկցուի:

Այս երեւոյթին կը հանդիպինք մասնաւորապէս առածներու մէջ:

Հաղար խօսքին՝ մէկ խօսք, հաղար մնճղուկին՝ մէկ քար:  
Հասկցողին՝ մէկ, շհասկցողին՝ հաղար ու մէկ:

Առաջին օրինակին մէջ զեղչուած են ըսէ և նետէ ստորոգեալները, երկրորդ օրինակին մէջ՝ ըսէ ստորոգեալը:

Ստորոգեալը մասամբ միայն (վերացական բայը) կրնայ զեղչելի, եթէ ան նոյն նախադասութեան ուրիշ մէկ ստորոգեալէն տարրեր բառով արտայայտուած է, բայց անոր հետ ժամանակով ընդհանուր է:

Խիզը՝ բառ մըն է, մարդը՝ մեհեհալ,  
Աշխարհ՝ գործարան մ'անխոնջ, անխնայ,  
Սէրը հաշիւ մ'է, կրօնքը՝ դրամ:  
Ոտանաւոր կարգալը դիւրին է, բայց գրելը՝ դժուար:

**Վարժութիւն 1.** Յոյց տալ զեղչուած ստորոգեալները.

Կար ժամանակ մը ուր խաւարը լուսոյ դէմ կը կտուէր, տղիտուիթիւնը դիտութեան դէմ, անցեալն ապառնիին դէմ, հրամայականը սահմանականին դէմ, սուրը գրիչին դէմ, ասեղութիւնը սիրոյ դէմ, կրակը ջուրին դէմ, միսը բանջարեղէնին դէմ, իսկ հիմա անցա՞ն այն ժամանակները. անոնք անցեալ են, մենք՝ ապառնի, անոնք խաւար են, մենք՝ լոյս, անոնք տգէտ են, մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ասեղութիւն են, մենք՝ սէր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղէն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդանցա՞ն, անցա՞ն այն դարերը, ուր մարդկութիւնը տղիտութեան օրօրօցին մէջ մէկ մը ասդին, մէկ մը անդին կ'երթա՞ր, կու գա՞ր...

(Յ. Պարունեան)

**Վարժութիւն 2.** Վերականգնել զեղչուած ստորոգեալները. բացատրել անոնց զեղչման աստիճանը (ամբողջօրին, մասամբ) և կանոնը.

Կը տեսնե՞ս սա հեռաւոր բարձունքները, այդտեղ մայրիկ անտառներ կան, անոնց ետեւ է իմ գիւղը, իսկ Ֆաթիմէիներ՝ այդ նոյն բարձունքներուն ստորոտին (1): Զինուորները կատարած են շրջակայքի առօրեայ մաքրութիւնը, ջորիները ջուրի տարած ու



մաքրած (2): Սկնեակը աղբասիկ էր, շատ համեստ: Քարիդէ լամպարի մը աղօտ լոյսին սակ՝ սեղան մը, շորս աթոռ, դրասեղան մը՝ թերթերով, դիրքերով ու տետրակներով բնանաւոր, ու մէկ անկիւնը՝ անկողին մը (3): Ինչ անուշ ձայն ունէր այդ աղջիկը, ինչ համեստ տեսք (4): Նոյն առաւօտուն իսկ Մէհմէտին հետ Թիւրքէմին տունը դացած ու խեղճին կնոջը դարմանումներուն ներկայ էր գտնուած (5): Գուր ալլ ըմբռնումներ ունիր, մենք՝ ալլ (6): Մնացածները ևս Հայկաղին հետ կ'ամբողջացնեմ: Պատկերները թուղթերուն անկիւնները փակցուցէք, իսկ կենսադրականները՝ վարը (7):

- Ի՞նչ է ձեր անունը:
- Վահէ Արաքս:
- Որտեղացի՞ ևն ձեր ծնողքը:
- Ատապաղարցի (8):

### 151. ԱՆԳԷՄ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Կան նախադասութիւններ, որոնց մէջ ստորոգևալը արտայայտուած չէ և շի ալ կրնար արտայայտուիլ: Անոնք շունին դէմք, ուստի և անդէմ կը կոչուին:

Օրինակ՝

Անրեբի կատարել բոլոր վարժութիւնները:

Այս նախադասութիւնը կ'արտայայտէ ամփոփ, աւարտած միտք մը, բայց շունի ստորոգևալ, դէմք:

Զեղչուած ստորոգևալով նախադասութեան ստորոգևալը ևս չ'արտայայտուիր, բայց ան միշտ որոշակիօրէն կը հասկցուի, և կարելի է զիրար վերականգնել դայն: Իսկ անդէմ նախադասութիւններու մէջ ստորոգևալ գոյութիւն չունի և կարելի չէ դայն վերականգնել:

Անդէմ նախադասութիւնները նոյնպէս ենթակայ շունին:

Անդէմ նախադասութեան միտքը յաճախ կարելի է արտայայտել ստորոգևալ ունեցող նախադասութեամբ: Այսպէս, վերը յիշուած օրինակին տեղ կրնանք ըսել. Անրեբի կատարեցէք բոլոր վարժութիւնները: Բայց ասիկա արգէն ուրիշ նախադասութիւն է և ոչ թէ վերի նախադասութիւնը՝ վերականգնուած ստորոգևալով:

Սառսգում շունեցող նախադասութիւնն անդէմ է:

Անդէմ նախադասութիւնները կ'արտայայտեն գործողութիւն  
կատարելու հրահանգ, թելադրանք կամ գործողութեան կատարման  
վերաբերեալ հարցում, ինչպէս նաև գործողութիւն կատարելու  
փոձ, ցանկութիւն:

Օրինակ՝

1. Սիրել ու կրկին սիրել խնդագին,  
Փայփայել քնոյշ, լինել հարազատ.  
Հեռանալ, դառնալ կրկին ու կրկին,  
Անհուն աշխարհում բացսիրտ ու ազատ:

2. Վերջ տալ այդ ամենուն:

3. Ի՞նչպէս կատարել այս վարժութիւնը:

Կան անդէմ նախադասութիւններ ալ, որոնք կը գործածուին  
գլխաստորապէս նկարագրութիւններու մէջ և կ'արտայայտուին միայն  
անուանով մը կամ անունով մը և իր լրացումներով:

Օրինակ՝

Պոլիս:

Համալսարանական ուսանողներու ամառնային զինուորական  
պարտատրիչ քէմք:

8 Յուլիս 194...

Քաղաքէն վեց ֆիլմեր հեռատուրեան վրայ, Վասիլոսի  
կասկոյտ, Երազային ալիերուն զուգանեո՛ Այազ-ալայի ձորը:

Ահա մեր դպրոցը:

Անդէմ կրնայ համարուիլ նաև բարդ նախադասութեան մը մէկ  
բաղադրիչ նախադասութիւնը:

Օրինակ՝

Ամառ ձմեռ, առտու իրիկուն, ամազին ծրարներ, հսկայ  
դէզեր հայերէն լրագիրներու, հանդէսներու՝ որոնք իր նրկու դիւ  
գրպաններէն դուրս կը սպողին, զլուխին կը հանեն, կարծես շնչա-  
հեղձ ըլլալու սարսափով:

Հոս «Ամառ ձմեռ, առտու իրիկուն, ամազին ծրարներ, հսկայ  
դէզեր հայերէն լրագիրներու, հանդէսներու» նախադասութիւնը նը-  
կարագրական բնոյթի անդէմ նախադասութիւն մըն է, որ գործած-  
ւած է նեթակայ ու ստորոգեալ ունեցող նախադասութեան հետ  
միասին:

**Վարժութիւն 1.** Գտնել անդէմ նախադասութիւնները հետեւեալ հատուածներուն մէջ.

**Ա.** Երա՛զ, տեսի՛ւ, անգոյ ստուն՛ր մ'անհոգի,  
Ճառագայթի, փրփուրի խա՛ղ մը տարտամ,  
Քմայասլաշտ ծաղի՛կ մ'արղևօր ցընորքի,  
Գո՛ւ մշուշոտ դիծերուդ ի՛նչ անուն տամ.  
Երա՛զ, տեսի՛ւ, անգոյ ստուն՛ր մ'անհոգի:

Քու կապոյտըդ լճիտ, աղուոր ջուրերու  
Եթերային անըջանքին է հանգոյն.  
Ու քու կարմի՛րըդ Պէնկալեան վարդերու  
Երաղամած կարմըրութեան պէս տժգոյն.  
Գոգն աշերուդ կապոյտն ունիս ջուրերու

(Ռ. Սեւակ)

**Բ.** Մոռնա՛ւ, մոռնա՛ւ... Մէկը միւսին ետեւէն՝  
Մոռնալ ըոյրը ճամբաներն,  
Ուրիկէ անցար և կամ շանցար... ու մոռնա՛ւ  
Եղածը հոն, շեղածն ալ...  
Ա՛լ շտանիլ, չբաշրջել քեզի հետ  
Անցեալըդ՝ լուռ առ յաւէտ,  
Եւ քեզ այնտեղ՝ քեզմէ շքեղ, քեզմէ մեծ,  
Զոր կեանքն ըլլալ շներեց...  
Թօթվել աշխարհն՝ իր ծանրութեամբ կապարի  
Նստած մարբիդ, սրտիդ վրայ...  
Գիտել արեւն, որ բիշ առ բիշ կը մարբի,  
Եւ սպասել նոր առտուան, որ շողայ  
Թերեւս, փակուած աչքերուդ...

(Վ. Թէմէեան)

**Գ.** Ճառագայթող երևս մը՝ պայծառ խղճմտանքի ցոլացումով,  
Քեղեցիկ խարտեալ գլուխ մը, կրիտասարդի գլուխ, միշտ վեր  
բռնուած, հակառակ մտաւորական անընդհատ ու ծանր վաստակի  
մը ու, կարծես, ճիշդ այդ վաստակովը առուղացած: Հասակը ոչ  
մեծ և ոչ փոքր: Իր սլարտականութեանը, իր բովանդակ պարտա-  
կանութեանը մէջ ամփոփուած մարդու հասակ:

Այս ամէնը սակայն խրոխտ քան մը ունի որ անմասն չէ  
արդար հպարտութեանէ մը և որուն համար անծանօթ մը՝ իրեն մօտը  
երթալու սխտի վարանէր իրաւամբ:

(Գ. Զօհրապ)

**Գ.** — Մեզ առանձին թողուցէ՛ք, — ըսաւ սեղանին ետեւ նստողը, ակնարկը սլահելով ձեռքի թուղթերուն վրայ:

Երիտասարդը, թեթեւ խոնարհութիւն մը ընկելէ ետք, դուրս ելաւ ակնածանքով:

Կռուժիւն:

Թուղթի տրցակը ստորագրելէ ու սեղանին աջ կողմը դնելէ յետոյ.

— Հրամմեցէ՛ք, նստեցէ՛ք, — ըսաւ մարդը... — Ինչո՞ւ փափաք կը յայտնէք երթալու, դո՞հ շէ՞ք մեր երկիրէն:

— Ինչո՞ւ դո՞հ չըլլալ. քաւ լիցի, բնաւ այդպիսի միտք մը չէր, որ զիս առաջնորդեց հոն. Աղղականական կապերու դոյութիւնը... անոնց հոս գալուն անկարելիութիւնը՝ պարզապէս:

(Գ. Սեւան)

## 152. ԵՆԹԱԿԱՅԻՆ ԵՒ ՍՏՈՐՈՂԵԱԼԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Իրարու հետ կապուած նախադասութեան որոշ անդամներ, մասնատրարար ենթական և ստորոգեալը, քերականական յատկանիշներով կը համապատասխանեն իրարու, այսինքն ունին նոյն յատկանիշները՝ թիւը, դէմքը և այլն:

Օ ր ի ն ա կ՝

ես կը կարդամ:

Դու՛մ կը կարդամ:

Առաջին նախադասութեան մէջ թէ՛ ենթական, թէ՛ ստորոգեալը դրուած են եզակի թիւով, առաջին դէմքով: Երկրորդ նախադասութեան ենթական և ստորոգեալը դրուած են յոգնակի թիւով և երկրորդ դէմքով: Ուրեմն այս նախադասութիւններուն ենթականերն ու ստորոգեալները համաձայնած են իրարու հետ թիւով և դէմքով:

Այս երեւոյթը համաձայնութիւն կը կոչուի:

Ենթական և ստորոգեալը սովորաբար կը համաձայնին իրարու հետ:

1. Ենթական և ստորոգեալը կը համաձայնին քիւտով:

**Ա.** Եզակի ենթակային հետ կը դուրի եզակի ստորոգեալ, յոգնակի ենթակային հետ՝ յոգնակի ստորոգեալ:

*Օրինակ՝*

Ուսուցիչը աշակերտներուն ամենամեծ բարեկամն է:

Շոգեկառնը շարժեցաւ:

Փեղկերը բացուեցան:

Աշակերտները նստած են:

Հոս եղակի թիւով գրուած են առաջին երկու նախադասութեանց ենթակաները (ուսուցիչը, շոգեկառնը) և ստորոգեալները (բարեկամն է, շարժեցաւ), յոգնակի թիւով գրուած են երրորդ և չորրորդ նախադասութեանց ենթակաները (աշակերտները, փեղկերը) և ստորոգեալները (բացուեցան, նստած են):

**Բ.** Թագմալի (մէկէ աւելի) ենթականերու ստորոգեալը կը գրուի յոգնակի թիւով:

*Օրինակ՝*

Աւամն ու Աշոտը կը կատարեն իրենց պարտականութիւնները:

Անանիւսը, Յամիկն ու Յակոբը ծաղիկներ կը խնամեն:

Այս նախադասութիւններուն ստորոգեալները յոգնակի են (կը կատարեն, կը խնամեն), քանի որ գրուած են բաղմակի ենթականերու հետ:

**Գ.** Յոգնակի ստորոգեալին վերադիրը մեծ մասամբ եզակի կը գրուի, երբեմն ալ՝ յոգնակի:

*Օրինակ՝*

Անոնք հայրենասէր են:

Գոյք արդէն դպրոցակա՞ն էք:

Աւամն ու Աշոտը իմ լաւագոյն աշակերտներն են:

Անոնք լաւ վարպետներ են:

Առաջին երկու նախադասութիւններուն յոգնակի ստորոգեալներուն վերադիրները եզակի են (հայրենասէր, դպրոցական), իսկ վերջին երկու նախադասութիւններուն ստորոգեալիական վերադիրները յոգնակի են (աշակերտներ, վարպետներ):

**Մ ա ն օ ր ու թ ի լ ը 1.** Երբ բաղմակի ենթական մէկ բնութանոր իմաստ կ'արտայայտէ, այդ պարագային ստորոգեալը կը գրուի եզակի թիւով:

*Օրինակ՝*

Բարեխիղինն ու պարտանաւոր այն աշակերտն է, որ կանոնադրուած կը յաճախէ դասերուն, լաւ կը սորվի, միշտ կը կատարէ իր ուսուցիչներուն լինանարարութիւնները:

Հոս արդէն կարգ ու կանոն կայ:

**Մ ա ն օ ր ու ր ի ն 2.** Եզակի ենթակային հետ երբեմն յոգնակի ստորոգեսդ կը դրուի, երբ ենթական հաւարական գոյական մըն է կամ յոգնակիի իմաստ ունեցող ուրիշ բառ մը:

*Օ ր ի ն ա կ՝*

Աշակերտներուն մեծ մասը խրացուցած են մայրենի լեզուի քերականութիւնը:

Գիրբերուն մէկ մասը սեղանին վրայ են:

Ենթակայի և ստորոգեսալի այս ձևի անհամաձայնութիւնը բախառորին կը կոչուի և հարադատ չէ հայերէնին:

Վերի օրինակներուն համար յանձնարարելի են՝ մեծ մասը խրացուցած է, մէկ մասը սեղանին վրայ է:

**2.** Ենթական և ստորոգեսալը կը համաձայնին դէմքով:

**Ա.** Երէ ենթական արտայայտուած է անձնական դերանունով, ստորոգեսալը կը համաձայնի անոր հետ, այսինքն կը դրուի նոյն դէմքով:

*Օ ր ի ն ա կ՝*

Ես կը գրեմ:

Դուն կը գրես:

Ան կը գրէ:

**Բ.** Երբ ենթական ստաջին դէմքի դիմորոշ յօդ ունի, ստորոգեսալը կը դրուի ստաջին դէմքով, իսկ երբ ենթական երկրորդ դէմքի դիմորոշ յօդ ունի, ստորոգեսալը կը դրուի երկրորդ դէմքով:

*Օ ր ի ն ա կ՝*

Յառաջադէմներս կ'օգնենեմ *ես մնացողներուն:*

Ռոյտրդ եկէ՛ք *մեր հանդէսին:*

**Գ.** Գոյական (առանց դիմորոշ յօդի), դերանուն (բացի անձնական դերանունան առաջին ու երկրորդ դէմքերէն) և իբրև գոյական առնուած ենթականներս ստորոգեսալը կը դրուի երրորդ դէմքով:

*Օ ր ի ն ա կ՝*

Առուն կը խոխոջէ:

Դաշտը կը կանանչնայ:

Ատիկա *իմ* գիրքս է:

Իրամանչիւր ո՛ք պարտատու է *յարգել դիմացիներ:*

Քնացողը արբնցաւ:

**Դ.** Երէ բազմակի ենթականերէն մէկը ստաջին դէմքի է, ստորոգեսալը կը դրուի ստաջին դէմքով:

Օրինակ՝

Դուն, Արամը և ես կ'աշխատինք միասին:

Ես ու Աշոտը շատ կը կարդանք Հայրենիքի մասին:

Ես ու դուն վաղը սլիտի երբանք թատրոն:

**Ե.** Երէ բազմակի ենթակաները երկրորդ և երրորդ դէմքի են. ստորոգեալը երկրորդ դէմքով կը դրուի:

Օրինակ՝

Դուն և Աշոտը անկեղծ ընկերներ կ'են:

Արամն ու դուն եկէ՛ք մեր տունը:

**Վարժութիւն 1.** Գտնել ենթականերն ու ստորոգեալները, ցոյց տալ անոնց համաձայնութիւնը և բացատրել.

Մայրս յաճախ կը խօսէր ինծի հօրս մասին:

— Հայրդ խնկացի մարդ էր, զաւակս, նայէ՛ որ անոր պէս մարդ մը ըլլաս ապագային: Ծի'շո՛ է, ինք բացատրիկ ուսում չէր ստացած, սակայն կը սիրէր գիրն ու գրականութիւնը: Գրիգոր Զօհրապուր և Վարդգէսը մտերիմ բարեկամներն էին իրեն: Արշարունի պատրիարքը մեր տունն էր յաճախ, ան է եղբր քու անունդ կնքողը: Եթէ ողջ ըլլար, ինք գիտէր անշուշտ քեզ կրթելու ձեւը, սակայն նայէ որ դուն չղղացնես ինծի իր բացը... Դուն մեծ մարդ եղիր, զրազումդ ու ընկերներդ թող զիրքերը ըլլան: Մնացեալները ամբողջ պարսպ բաներ են, դաւա՛կս: Մենք մեծ ժողովուրդի մը թշուառ բեկորներն ենք այս փոխրուն վրայ...

Ու ես այլևս մօրս հետ միայն կ'ենլլէի փողոց... Ընկերներս բոլորը շարուած կ'ըլլային Ռուդիկենց տան առջև ու երբ մենք կ'անցնէինք այդպէս «նազանքով», ես ամօթէս կը կտրէի կասկարմիր: Գիտէի որ հիմա անոնք կը մեղքնային զիս: «Կաթնապուր» կ'ըսէինք մենք ատենին ինձպէսներուն: Հակառակ անոր որ երկար տարազ հագնիլը մեր բոլորին երազն էր այդ օրերուն, ես կրկին շտապաբար, երբ տեսայ որ մայրս օր մը լաղուարթ երկար տաբատ մը գննց շուկայէն ինծի ու ես այդ տարատով սկսայ երթալ ու գալ մեր փողոցէն:

(Գ. Աւան)

**Վարժութիւն 2.** Կազմեցէ՛ք մէյմէկ նախադասութիւն ենթակայի և ստորոգեալի համաձայնութեան բոլոր կանոններուն վերաբերեալ:

## 153. ԳՈՅԱԿԱՆԻ (ԵՆԹԱԿԱՅԻ) ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

Իմ հին բարեկամս երէկ այցելեց ինձի:

Ի բոլոր յաջողութիւնները միշտ կ'ուրախացնեն զիս:

Առաջին նախադասութեան ենթակային (բարեկամս) լրացումներն են՝ իմ և հին բառերը:

Երկրորդ նախադասութեան ենթակային (յաջողութիւնները) լրացումներն են՝ իր և բոլոր բառերը:

Ենթակայի լրացումները կը դրուին նաև դոյականով կամ դոյականարար գործածուած ուրիշ մէկ բառով արտայայտուած այլ անդամի մը (խնդիր, պարագայ), ինչպէս և ստորոգելիական վերադիրին վրայ:

**Օրինակ՝**

Ան նիհար ու սպիտակ դէմք մը ունէր:

Այդ ճամբան կ'առաջնորդէր դէպի սաղարքալսիտ անտառը:

Հայրենասիրութիւնը անիմաստ բան է, երբ անոր շ'ընկերանար ազգասիրութիւնը:

Այս նախադասութեանց մէջ նիհար և սպիտակ բառերը կը լրացնեն ուղիղ խնդիրը (դէմք), սաղարքալսիտ բառը կը լրացնէ պարագան (անտառը), անիմաստ-ը կը լրացնէ ստորոգելիական վերադիրը (բան):

Ենթական կամ գոյականով արտայայտուած այլ անդամ մը լրացնող բառերը ենթակայի կամ գոյականի լրացում են:

Ենթակայի լրացումներն են՝ որոշիչը, յատկացուցիչը, բացայայտիչը:

**Վարժութիւն.** Ընդօրինակել գոյականի (ենթակայի) լրացումները իրենց լրացեալներուն հետ.

**Ս.**

ՔՈՒ ՅԻՇԱՏԱԿԳ ԱՅՍ ԳԻՇԵՐ

Քու յիշատակդ այս դիշեր, զիս լալու շափ կը յուղէ.

Կարծես մեկնած էր սրտէս, և դադարարար այս դիշեր

Ես կը դառնայ, իր հին տեղն ու հին գգուանքը կ'ուղէ,

Կը սեղմուի գրկիս մէջ, կը բարձրանայ կուրծքս ի վեր:

Քու պատկերըդ աչքիս մէջ և բու ձայնըդ ականջիս,

Կը թրթրոտան այս դիշեր, երակներուս մէջ կարծես

Քաղցրահոտ շունչդ է լեցուած, որ կը ղզլխէ, կ'օրբէ զիս,

Մինչ երեսէս ալ կ'անցնին կարծես մատներդ անտես:



Ետ կը դառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ,  
Կարաւանին հետ աստեղց անոնք կու գան վերստին,  
Հողիս փարախն է բացուող ընդդէմ իր քաղցըր հօտին:

Յիշատակովդ, այս գիշեր, կը ղդամ այնչափ դիս հարուստ,  
Այնչափ բարի, երջանիկ... որ գթութեամբ մը անհուն  
Կը մտածեմ դայն բաժնել երկրի բոլոր խեղճերուն...

(Վ. Ռէլէեան)

**Բ.** Անցեալ նոյեմբերին տեղի ունեցաւ ասիկաւ Հինգշաբթի  
օր մըն էր: Տրտում օդ մը կար. առջի իրիկուրնէ ի վեր անձրեւ  
տեղացած էր, և Ղալաթիոյ սալայատակներուն աղտոտ կապտագոյն  
ցեխը աչքի ղարնող հակապատկեր մը կը կաղմէր երկնքին պայ-  
ծառ կապոյտին հետ որ թօնընկեց ամպերէն աղատուած՝ անհու-  
նութեան մէջ կը պարզէր իր անծայրածիր մերկութիւնը: Կծու  
ցուրտ մը կը տիրէր, ու բամին ըիւր սլաքներով կ'ասղնտկէր  
մարմնին հոլանի մասերը:

(Լ. Ռաշալեան)

#### 154. ՈՐՈՇԻՉ

Ենթակայի կամ գոյականով արտայայտուած այլ անյամի մը  
որակսութիւնը, չափը, քանակը ցուցնող լրացումները կը կոչուին  
որոշիչ:

Որոշիչը կը պատասխանէ ի՞նչպիսի, ո՞ր, ո՞րքան, բանի՞ և  
նման հարցումներու:

Օրինակ՝

Հայրենադարձ կարասները յաջորդարար կ'անցնին:

Անձնական տան մը, հանգստաւէտ բոյնի մը բաղձանքն  
իսկ անմեծնակալի կրող մըն է դարձեր մեղի համար:

Ուղևորները տեղատրուեցան երեմ ինքնաշարժի մէջ:

Այս օրինակներուն մէջ հայրենադարձ, անձնական, հանգստ-  
աւէտ, անմեծնակալի, երեմ բառերը որոշիչներ են:

Որոշիչը կ'արտայայտուի ածականով, թուականով, դերանու-  
նով, դերբայով, գոյականով, մակբայով:

**Ա.** Ածականով՝

Հանելի օդ է այսօր:

Անահիտը սալտակ ծաղիկներ շատ կը ոիրէ:

Ռազմայարկ շէնքեր շատ կան մեր քաղաքին մէջ:  
Ան բիւրեղեայ սիրտ ունի:

### Բ. Թռակահունով՝

Երկիրը վեց աշխարհամասերու կը բաժնուի:  
Երգչախումբը կը բաղկանար երեսուն հոգիէ:  
Խննեւորդ դասարանը կը փայլի իր կարգապահութեամբ:  
Աշակերտներուն նուիրեցին մէյմէկ գիրք, տասնական տետր,  
վեցական մատիտ:

### Գ. Դերահունով՝

Այս պատմութեան նիւթը զիս շատ կը յուզէ:  
Այդպիսի նկարներ ես ալ ունիմ:  
Միշտ նոյն մտերմական ժպիտն ունի:  
Մենք դարձեալ հանդիպեցանք միեւնոյն տեղը:

Գ. Յարակատար, երթակայական դերբայներով, ինչպէս նաև  
անորոշ դերբայի սեռակահունով՝

Արամը կանգնած ծերունիին առաջաբկեց իր տեղը:  
Հիմա մեզ կանչող հայրենիք մը ունինք:  
Քաղաքն ապահովուեցաւ խմելու ջուրով:

Ե. Գոյակահունով (ասոնք մեծ մասամբ կը դրուին ուղղական  
հոլովով, երբեմն ալ՝ սեռական, բացառական, գործիական հոլով-  
ներով)՝

Աշակերտները շատ գոհ են հայերէնի ուսուցիչ Արամեանէն:  
Տիկին Սիմեանը խնդրեց Ձեզ յանձնել այս ծրարը:  
Քարի դարէն մնացած շատ հնութիւններ յայտնարկուած են  
Հայաստանի մէջ:

Խանութք դուրսէն խիստ լուստուր էր շնորհիւ իր տպակիւն  
ճակատներուն:

Երկայնահասակ, նիհար, պատկառելի մօրուով ծերունի մըն  
էր ան:

Հսկիչները հանեցին ծխախոտի արկղի մեծուրեամբ սնտուկ մը:

### Զ. Մակրայով՝

Անոր բարձրածայն ընթերցանութիւնը կը խանդարէ մեզ:  
Մտերիմ ընկերներու յանախակի հանդիպումները միշտ ալ  
ցանկալի են:

Այն բառը, զոր կը լրացնէ որոշիչը, կը կոչուի որոշեալ:

Վերը բերուած քանակի օդ, վեց աշխարհամաս, այս պատմրածք, կանգնած ծերունի, ուսուցիչ Արամեան, բարձրաձայն ընթերցանութիւն բառակապակցութեանց մէջ քանակի, վեց, այս, կանգնած, ուսուցիչ բառերը որոշիչ են, իսկ օդ, աշխարհամաս, պատմուածք, ծերունի, Արամեան բառերը՝ որոշեալ:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել ստորագծուած որոշեալներն իրենց որոշիչներուն հետ միասին.

Միկառ մը բերնիս, բաց պատմանէս՝  
Խոռոչ մը թաքշած ծեր բուի մը պէս՝  
Կը դիտեմ փողոցը ամայի, լայն,  
Անտերեւ ծառի դոյզ շարքը երկայն.  
Հալած ձիւնի ծոյլ անձրեւը բարակ,  
Կոցուած հաղուադէս կառները արա՛գ  
Ու ծառերուն վրայ, դողդո՛ջ, ցրտահա՛ր  
Քանի մը սմբած ննկողկներ նիհար,  
Որոնք աշրերէս արցունք կը բերեն...  
Լ՛իս, մարդերն ինչ նորք կենդանիներ են:

Ճիշդ տանըս դիմաց, այս ցուրտ օրերո՛ւն,  
Հին համադրեստով ծեր մը երերուն,  
Այս անձրեւին տակ, աւել մը ձեռքին,  
Մինչեւ իրիկուն լո՛ւտ, դանդաղադի՛ն,  
Երկուքի կտարած քասակն աշեւոր,  
Կը մաքրէ մայթին ցիւրը՝ այնպէս որ  
Չաղտոտի կօշիկն աղնիւ անցորդին...  
Ինչպէ՛ս թոյլ կու տանք այս բու՛խն, ցուրտին,  
Որ ծերերն այսբա՛ն կոնակնին ծրոնն...  
Մարդերն ի՛նչ անդուժ կենդանիներ են:

(Ռ. Սեւակ)

**Վարժութիւն 2.** Գտնել որոշիչները և ընդօրինակել որոշեալներուն հետ միասին: Փակագիծերու մէջ նշել որոշիչներուն ինչ խօսքի մաս ըլլալը.

**Ս.** Մէկ քանի վայրկեանէ ի վեր դադափար մը մտքին մէջ կը պտուտքէր Յանկարծ, աճապարանքով, դրասեղանին վրայէն հինգ վեց կտոր դիրք առաւ, թևին տակը դրաւ և սանդուղէն վազնիվազ վար իջնելով դուրս ելաւ:

Մութը կոխած էր երրոր Յակոբ Գէորգ աղային դուռը զարկաւ:

— Շնորհաւոր Կաղանդ և բարի տարի. ամէն տարի բարով հասնիր:

— Շնորհակալ եմ, որ մեղի շմոռցար, միախլ Յակոբ, — սլատասխանեց Աղանի բռնադրօսիկ ժպիտով մը:

Սրահին մէջ, բազմոցին մէկ անկիւնը, երկու պղտիկները կծկըտած էին, լուս, իրենց աչքերուն մէջ մեծ մարդու տխրութեամբ մը, մտիկ ընկելով երդիտնակի զուարթ խաղերուն, որոնք կը հասնէին դուրսէն, հեռուէն: Բազմոցին միւս անկիւնը կարի կողով մը կար: Մերկ սենեակին մէջտեղը կրակարանի մը վրայ ածուխի մէկ քանի կտորներ յամբարար կը մոխրանային:

(Լ. Ռաշալեան)

Բ. Մենք, մօտ երկու տարի, ամայի լեռներու մէջ ղինուորական խիստ կարգապահութեան մը տակ մարդուելէ յետոյ, կարճ արձակուրդով մը կը վերադառնայինք մեր ծննդավայրը: Կը վերագառնայինք տասնհինգ վակոններով կառաշար մը բերնէ բերան լեցուցած մեր բազմութեամբ: Կը վերադառնայինք երգելով, զրկթէ խենթեցած՝ մեր երիտասարդական սմեռագեղեցիկ օրերէն խլուած կեանքը վերադառնելու երազով: Պարտաւորիչ ղինուորագրութիւն մըն էր մերինը: Անցնող ամիսները կարօտ էին ձգած մեր սիրտերուն մէջ, հանդէպ մեր սիրելիներուն, ծովին ու հայրենի սիրուն քաղաքին:

(Գ. Սևան)

**Վարժութիւն 3.** Կազմեցէ՛ք նախագասութիւններ՝ անոնց մէջ դործածելով հետևեալ բառերն իրրև որոշիչներ.

Հաճելի, հիասքանչ, կարօտագին, հայկական, հայրենարարձ, ընկեր, ուսուցիչ, բազմաթիւ, լայնարձակ, անկող, յաղթական, սրամիտ, համեստափայլ, համով, քար, ութ, երեք, այս, այդքան:

## 155. ՅԱՏԿԱՅՈՒՅԻԳ

Ենթակայի կամ ուրիշ անդամի մը յառկացումը, պատկանելութիւնը, վերաբերումը, ծագումը ցուցնող լրացումը կը կոչուի յատկացուցիչ:

Յատկացուցիչը կը դրուի սեռական հոլովով և կը սլատասխանէ որո՞ւ(ն), ինչի՞(ն) հարցումներուն:

*Օրինակ՝*

Աշոտին տետրակը օրինակելի է:

Մքերճներու դիւները մատչելի են:

Անանիային ընտանոթիւնը մեղմ է:

Գրիգորին պատասխանը ճիշդ է:

Սայեար-Նովայի երգերը տարածուած են շատ ազդերու մէջ:

Յատկացուցիչը կը դրուի գոյականի կամ իրրե գոյական առնելու յետոյ: Երբ յայտնուի վերջի վերջի օրինակներուն մէջ ստորագծուած յատկացուցիչները գրուած են տետրակը, գիւները, բնատուրքիւնը, պատասխանը, երգերը գոյականներուն վրայ: Այս վերջին բառերը յատկացեալ են:

**Յատկացուցիչ ունեցող անդամը յատկացեալ կը կոչուի:**

Ամէն յատկացուցիչ մեծ մասամբ մէկ իմաստ կ'արտայայտէ՝ պատկանելութիւն (վերի օրինակին մէջ՝ Աշոտին), յատկացում (մթերքներու), ծագում կամ սերում (Սայեար-Նովայի) և այլն:

Երբևէն յատկացուցիչը միևնոյն յատկացեալին հետ զործածուելով տարբեր պարագաներու մէջ կրնայ տարբեր իմաստ արտայայտել:

*Օրինակ՝*

Գրիգորին եզրը կապակցութիւնը կրնայ նշանակել 'Գրիգորին գրած եզրը, 'Գրիգորին երգած (կամ երգելիք) եզրը, 'Գրիգորին սիրած եզրը և նոյնիսկ՝ 'Գրիգորին մապիւն ելած եզրը (ինչպէս ունինք՝ «Գարանի երգը»):

Յատկացուցիչը կ'արտայայտուի տարբեր խօսքի մասերով՝

1. Գոյականով՝

Գպրոցին բակը կանաչապատուած է:

Ուսուցչի աշխատանքը ծանր է և պատուաւոր:

Վարժարաններուն կէտն արդէն կատարեր կմ:

2. Գերանունով՝

Իմ գիրքս նոր է:

Անոր անունը կարօ է:

Քու աշխատանքդ դժուար է:

3. Գոյականաբար գործածուած որեւէ բառով (ածական, թուական, գերանուն և այլն)՝

Մեծին պատիւը պէտք է բարձր պահել:

Ուրի՛ն կէսը շորս է:

Բամբուկու պահը շատ ծանր էր:

Պատմեց կարգացածին բովանդակութիւնը:

Անձնական դերանուններու առաջին, երկրորդ դէմքերով արտայայտուած յատկացուցիչները երբեմն շնն դործածուիւր և կը հասկցուին յատկացեալին հետ դրուած ստացական յօդէն:

Այսպէս, կ'ըսուի՝ իմ ընկերս կամ ընկերս, քու ընկերդ կամ ընկերդ, իմ եղբայրս կամ եղբայրս, քու եղբայրդ կամ եղբայրդ, իմ գրիչս կամ գրիչս, քու գրիչդ կամ գրիչդ և այլն:

Օրինակ՝

Ո՛չ, մտածումս անուշ է դեռ և արտում...

Չես ղգար զայն՝ աշտըներէդ սահող վար,

Ինչպէս մարող բոցի մը փայլն անհատնում.

Ինչպէս թօշնած ծաղկի թերթեր հողմաւար:

Յանկարծ ճաճանչ մ'ալ կը մեկնի նոզիէս,

Կ'եղբայրանայ ծառերուն հետ ու լեռանց,

Կու գայ սրտիս գարունի յոյս մը վաղանք:

Այսպիսի յատկացեալը ստացական կը կոչուի:

Անձնական դերանուններու առաջին ու երկրորդ դէմքով արտայայտուած յատկացուցիչները յատկապէս կը դործածուին պատկանելութիւնը շեշտելու ստեն և բանաստեղծական տողի շափի, յանգի պահանջքով:

Օրինակ՝

Ատիկա քու գիրքդ է, ոչ թէ իմս:

Հեռուներէն իմ մտածումս կ'իջնայ վրադ,

Չերթ տատրակ մը զանգակատան բարձունքէն՝

Կ'իյնայ վըրադ՝ վիրատր ու յուսահատ

Ս: սրբարոյր դեռ մատուռին հին խունկէն:

Արեւելահայ գրական լեզուի մէջ ստացական դերանունան յատկացեալը կը գործածուի որոշիչ յօդով:

Օրինակ՝

Ուր է՛լ յինեմ — լե՛մ մոռանայ ևս ողբաձայն երգերը մեր,

Չե՛մ մոռանայ աղօթք դարձած երկաթագիր գրքերը մեր,

Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արիւնարամ վէրքերը մեր—  
էլի ես որք ու արնավառ իմ շայաստան—Եւրե՛ն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար ոչ մի ուրիշ հէքիաթ չկայ.  
Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ.  
Անչխարհ անցիլ, Արարատի եման ճերմակ դազաթ չկայ.  
Ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

(Ե. Չաւենց)

Ստացական յատկացեալը կը դորձածուի ստացական չօգով.

Ինչպէ՛ս՝ Մայրս փորրիկ, մայրս խեղճ,  
Մայրս մի մայր հասարակ,  
Մայրս մի բուս սրտիս մէջ  
Գիշեր ու զօր արեգակ:

(Յովհ. Երեւոյ)

Անձնական դերանունով արտայայտուած ստացական յատկացեալը ստա-  
ցական յօդ չ'առնել:

Օր ի ն ա կ՝

Օ՞, սիրտ իմ, դե՛ս՝, սուրբ է այս ճամբէդ,  
Ինչ որ քեզ պահես՝ հէնց այն է կորած,  
Ինչ տաս աշխարհին, այն բո՛նն է չաւէտ...  
Բո՛նն է զարուեր ձիւներից ծնուած...:

(Յովհ. Երեւոյ)

**Վարժութիւն.** Ընդօրինակել յատկացուցիչները յատկացեալ-  
ներուն հետ. ստորագծել յատկացուցիչները և նշել, թէ անոնք  
ի՛նչ խօսքի մասով կ'արտայայտուին և ի՛նչ կը ցուցնեն.

**Ա.** Իրրեւ ամենէն հին ու փորձառու պաշտօնեայ՝ տետրակ-  
ներու և այլն բնութիւնը և յարդարումը ինծի յանձնունցաւ և այդ  
առթիւ ձեռքս անցաւ ընդօրինակութեան այն տետրակը որ բնաւ  
կապակցութիւն չունի հանդուցեալին առևտրական գործառնու-  
թեանց հետ:

— Հասպա ի՞նչ կը պարունակէ, — հարցուցի:

— Զուտ անձնական ու մտերմական նամակներ, մեծ մասը  
իր դաւիին ուղղուած, երբ այս վերջինը ժընեւ՝ առևտրական  
վարժարանի ուսանող էր...

— Այս տետրակը քեզի յանձնելով բնաւ դիտատրութիւն չու-  
նիմ դայն իրրեւ դէնք մը գործածել Դամբանոսեան ընտանիքին  
դէմ և այդ նամակները հանգուցեալին վաճառականական գործառ-  
նութեանց հետ բնաւ յարարերութիւն չունին և ասկէ դատ, ոեւէ

անձնական կամ ընտանեկան դադարներ չեն պարունակեր և ունէ կերպով չեն կրնար ազարտել թէ Գողմայ էֆէնտիի և թէ ունէ մէկու մը անունը: Անոնք պարզապէս ցոյց կու տան հայ վաճառականի մը հոգեբանութիւնը, իր խորհելակերպը, իր կեանքի ըմբռնումը, իր իտէալները և այս տեսակէտով կրնան շատ օգտակար ըլլալ բնզի...

Ամէն օր թերթերու, հաւաքածուներու կամ տարեցոյցներու մէջ մեռած անձերու ընտանեկան կամ մտերմական նամակները կը հրատարակուին, առանց արտօնութեան:

Ասիկէ դատ՝ կրնաս բան մը ընել, այսինքն նամակը ընդունողներուն հասցէներն ու անունները փոփոխել, որովհետեւ անձերը կարեւորութիւն չունին, այլ միայն նամակներու ողին:

Բոլոր այս առարկութիւնները խախտած էին իմ առաջին ընդգիմութիւնս:

(Ե. Օսեան)

- Բ. Ես խոյացայ, նուիրումէս տենդահար՝  
Հոն ուր նիհար ճառագայթ մը կայ լոյսի,  
Հոն ուր սիրոյ վտիտ երգ մը կը դողար,  
Հոն ուր գողգոջ ծիածան մը կար յոյսի...

Ու թեւաբեկ ահա բնզի կը դառնամ  
Նրջանկութեան ճամբաներէն յետադարձ,  
Տրտո՛ւմ ոգի, ողուս միակ բարեկամ,  
Գուն իրակա՛ն, դուն ճշմարի՛տ, դուն անդա՛րձ:

(Ռ. Սեւակ)

**Վարժութիւն 3.** Կազմեցէ՛ր տասը նախադասութիւն՝ անոնց մէջ գործածելով յատկացուցիչներ՝ արտայայտուած զոյականով, դերանունով, ածականով, թուականով:

## 156. ԲԱՅԱՅԱՅՍԻՉ

Ենթակային կամ ուրիշ անդամի մը ով, ինչ ջրալը ցուցնող լրացումը կը կոչուի բացայայտիչ:

Օրինակ՝

Արմէնը՝ ընկերս, ամտրանոցէն նոր վերադարձած է:

Պ. Դուրեան՝ հայ բնաբերդուրեան ճշմանտօր դէմքերէն մին, ընդամէնը քսան տարուան կեանք ունեցած է:



Մայրենի լեզուն՝ ազգին պանպանութեան այդ կարևոր միջոցը, պէտք է սիրել և լաւ գիտնալ:

Այս օրինակներուն մէջ բացայայտիչներ են՝ ընկերս, հայ քնարերգութեան նշանատու դէմքերէն մին և ազգին պանպանութեան այդ կարևոր միջոցը: Առաջինը կը ցուցնէ Արմէնին ով ըլլալը, երկրորդը՝ Պ. Գուրեանին ով ըլլալը, երրորդը՝ մայրենի լեզուին ինչ ըլլալը:

**Բացայայտիչ ունեցող անդամը բացայայտեալ կը կոչուի:**

Վերի օրինակներուն մէջ բացայայտեալ են՝ Արմէնը, Պ. Գուրեան, մայրենի լեզուն:

Բացայայտիչը բացայայտեալէն կը դատուի բովանդակ, իսկ նախադասութեան միւս անդամներէն՝ յաճախ ստորակէտով:

Բացայայտիչը և բացայայտեալը իրարու հետ սովորաբար կը համաձայնին հոլովով, դէմքով, թիւով: Առաջին ու երկրորդ դէմքի բացայայտեալներու հետ համաձայնելու համար բացայայտիչը կը ստանայ առաջին դէմքի պարագային՝ **Ա**, երկրորդ դէմքի պարագային՝ **Վ** յօդը:

**Օրինակ՝**

**Մենք՝ աշակերտներս, կարդալ շատ կը սիրենք:**

Մեզի՝ աշակերտներու, հետաքրքրական զիրքեր պէտք են:

Ան՝ Գրիգորը, իմ մտերիմ ընկերս է:

Նորեկ երիտասարդը՝ պարոն Պարոն, որ մինչև այն ատեն լուռ ու մունջ էր, վերջապէս ինքն ալ խօսք ատա:

Հոս բացայայտիչները կը համաձայնին բացայայտեալներուն հետ: Մենք բացայայտեալը և աշակերտներս բացայայտիչը դրուած են յոգնակի թիւով, առաջին դէմքով, ուղղական հոլովով: Մեզի բացայայտեալը և աշակերտներու բացայայտիչը յոգնակի են, առաջին դէմքի և դրուած են տրական հոլովով:

Վերջին երկու նախադասութեանց մէջ բացայայտիչներն ու բացայայտեալները դրուած են եզակի թիւով, ուղղական հոլովով:

Բացայայտիչը և բացայայտեալը երբեմն թիւով շին համաձայնիր իրարու հետ:

**Օրինակ՝**

Եւ ի՞նչպէս կ'ըլլայ որ այդ տեսրակը փոխանակ փր օրինաւոր տէրերուն՝ Գողմայ էֆէնտիի ընտանիքին յանձնելու՝ կ'ուզես ինծի տալ:

Հոս քնտանիքին բացայայտուիչը և զակի է, մինչդեռ աչբերուն բացայայտեալը՝ յոգնակի:

Բացի սովորական բացայայտուիչէն, որուն ծանօթացանք վերը, կայ նաև մասնական բացայայտիչ:

Մասնական բացայայտիչը բացայայտեալին կը կապուի իբրև, որպէս, ինչպէս բառերով և բացայայտեալին իմաստն իր մէջ կ'առնէ սահմանափակ ձևով մը, ոչ ամբողջութեամբ:

Օրինակ՝

Արամը, որպէս ընկեր, օրինակելի է:

Որպէս ընկեր-ը մասնական բացայայտիչ է, որ կը բացայայտուի Արամը որոշ տեսակէտով մը, մասնական կերպով, միայն իբրև ընկեր:

Կարգ մը բացայայտիչներ կը մեկնեն, կը մասնաւորեն բացայայտեալին իմաստը, մասնաւանդ երբ բացայայտեալը անդ կամ ժամանակ կը ցուցնէ:

Օրինակ՝

Փողոցի մեծ դրան կից, բակին ծայրը, կար միշտ դոց դուռ մը:

Բարի սամարացիները մանկապարտէզ կու դային կիրակի օրերը, կ'սօսուան նաշէն քիչ առաջ:

Այսպիսի բացայայտիչները բացայայտեալէն կը զատուին ստորակէտով. ասոնք իրենցմէ վերջ ալ ստորակէտ կ'ունենան, եթէ նախադասութեան վերջը շեն դրուիր:

**Վարժութիւն.** Ընդօրինակել բացայայտիչները իրենց բացայայտեալներուն հետ միասին. փակագիծերու մէջ նշել, թէ ի՞նչ խօսքի մասով արտայայտուած են բացայայտիչները, բացատրել անոնց համաձայնութիւնը.

**Ս.** Արփիար դո՞ւ էր իր վիճակէն, ապրուստը ազատուած էր: Լորօրորդին՝ Փիլիկը, բերել տուած էր Խտալիայէն ու իր բովը առած, միւս կողմէ հինաւորց բարեկամներ՝ Տիգրան Քէլէկեան ընտանիքը, Մալեղեան ընտանիքը և այլն, շրջապատած էին դինքը. Վահան Թէքէեանն ալ Փահիրէ դացած ու հոն հաստատուած էր, այնպէս որ Արփիար իր արտասահմանի մենաւոր ու թափառական կեանքին մէջ երբէր ասանկ վիճակ մը չէր ունեցած (1):

Մէկ քանիները անոնցմէ անցան այս կողմերէն մէկ բանի տարի առաջ, առանց սակայն հանդիսելու և տեսնելու զիս: Մէկը

միայն՝ Վահէ Տիրատուրեանը, փնտոնց ու գտաւ, սակայն մեր հանդիպումը եղաւ շատ հասարակ տեսակի բան մը (2):

Յուկոսլաւ Միլոն որ նիհար ու երկարահասակ ջղուտ աղայ մըն էր, յաճախ մեղի կը պատմէր իր ճամբորդութիւններէն: Ու մենք՝ Խրիստոն, ես ու Միլոն, մերթ Ընդ մերթ փախուտ կոտայինը դէպի ծով (3):

## 157. ԲԱՅԻ (ՍՏՈՐՈԳԵԱԼԻ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Ստորոգեալն ունի իրեն յատուկ լրացումներ:

Աշակերտը գիրքը գրաւ սեղանին վրայ:

Այս նախադասութեան մէջ ստորոգեալը (դրաւ) ունի երկու լրացում՝ գիրքը և սեղանին վրայ: Ասոնցմէ առաջինը կը ցուցնէ գործողութեան հետ կապուած առարկան, իսկ երկրորդը՝ գործողութեան տեղը:

Բայի (ստորոգեալի) լրացումներն են՝ խնդիրներն ու պարագաները:

**Վարժութիւն.** Գտնել այն անդամները, որոնք կը լրացնեն բայը (ստորոգեալը)։

Սեղանիս վրայ դրուած է մոխրասպիտակ թերթերով ծաղիկի: Գոց սնտուկներու մէջ՝ ծովով, երկաթուղիով ճամբորդած է: Այժմ դուրս ու դողդրջուն կեցիք է դէմս: Ուշադրութեամբ կը դիտեմ այս անրացատրիլի հմայքը, այս անթառամ երիտասարդութիւնը: Կը զգամ իր տերևներուն նուրբ թափը: Իր ստուերոտ ձերմակութիւնը առնն անցնելով չէ եղծուած: Իր գալուստէն ի վեր իմ բովըս, որբան ծաղիկներ ծնան, բողբոջեցան ու մեռան պարտէղիս մէջ: Էտլուայսը միայն իր անանց մանկութեան մէջ է ու պիտի մնայ այսպէս:

(Գ. Զօհրայ)

## 158. ԽՆԳԻԲՆԵՐ

Աշտիկը բաժակով ջուր խմեց:

Տիգրանը ընկերոջմէն նամակ ստացաւ:

Առաջին նախադասութեան մէջ բաժակով և ջուր բառերը կը լրացնեն ստորոգեալը (խմեց), ցուցնելով գործողութեան հետ կապուած առարկաներ: Երկրորդ նախադասութեան մէջ նոյն դերը

էլը կատարեն ընկերոջմէն և նամակ բառերը՝ ստացաւ ստորոգ-  
եալին համար:

Այն լրացումները, որոնք կը ցուցնեն գործողութեան հետ կապ-  
ւած առարկաներ, խնդիր կը կոչուին:

խնդիրները կ'ըլլան երկու տեսակ՝ ուղիղ և անուղակի:

Անուղակի խնդիրներն իրենց կարգին կ'ըլլան մի քանի տե-  
սակ՝ յանգման ու մատուցման, վերաբերութեան, անջատման,  
միջոցի և ներգործող:

### 159. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

Ուղիղ խնդիրը կը ցուցնէ գործողութիւնը ուղղակիօրէն իր  
վրայ կրող առարկան:

Ուղիղ խնդիրը կը դրուի հայցական հոլովով և կը սլատաս-  
խանէ զո՞վ կամ ի՞նչ(ը) հարցումներուն. զո՞վ՝ անձի համար,  
ի՞նչ(ը)՝ իրի համար:

Օրինակ՝

Յասմիրը զրկեց զիրքը (ի՞նչը):

Ես կը սիրեմ ընկերս (զո՞վ):

Ուղիղ խնդիր կը սլահանջեն միայն ներգործական սեռի բա-  
յերը՝ գրել, կարդալ, ըսել, բերել, բժշկել, տանիլ, տալ, սիրել,  
հանչնալ, գտնել, ղրկել, նամբել, նստեցնել, ծիծաղեցնել, կոր-  
ծանել, հասկնալ և այլն:

Առանց ուղիղ խնդիրի, այսինքն առանց ուղղակի առարկայի  
մը, ուղղակի նիւթի մը, անհրեւակայելի է այս ներգործական սե-  
ռի բայերուն գործողութիւնը:

Օրինակ՝ գրել (ի՞նչ), բերել (ի՞նչ), սիրել (ի՞նչ, զո՞վ), նըս-  
տեցնել (զո՞վ) և այլն:

Ներգործական սեռի բայերը կը մանչցոյն լոկ ուղիղ խնդիր  
ընդունելով, որ յատուկ է միայն իրենց:

Ուղիղ խնդիրը կը ցուցնէ՝

1. Այն առարկան, որ իր վրայ կրելով ենթակային կատա-  
րած գործողութիւնը, կ'ազդուի, կը փոխոյնուի անկէ:

Յ ր ի ն ա կ՝

Պարզեւը լարեց ժամացոյցը:

Յասմիկը սրբեց գրատախտակը:

Նրիտասարդը կանգ առաւ, յօնճերը պոստեց, ոտը աւազին՝  
զարկաւ...

2. Այն առաւիկան, որ կը ստեղծուի ենթակային գործողութեանէն, որ աղիւնէն է այդ գործողութեան:

Յ ր ի ն ա կ՝

Քանաստեղծը երգ մը գրեց:

Քանդակագործը հոյակապ արձան մը կերտած էր:

Գործարանը կը պատրաստէ առաջնակարգ մեքենաներ:

3. Այն առաւիկան, որ գործողութիւնը իր վրայ կը կրէ, բայց չի փոփոխուիր անկէ:

Յ ր ի ն ա կ՝

Հիւանդ տերեւ մը տեսայ կանաչին մէջ դաշտերուն:

Միրտս անհուն ցաւով լի, ևս հեռացայ սղաւոր,

Մատներուս մէջ առի զայն, ու իր մարմինը նիհար,

Գուրգուրանքով, արցունքով մօտեցուցի շրթունքիս:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել ուղիղ խնդիրները լրացեալներուն հետ՝ փակագիծերու մէջ նշելով, թէ ի՞նչ կը ցուցնեն անոնք և ո՞ր հարցումին կը պատասխանեն.

**Ա.** Արաքսիա բիշ մը կտոր մօրը կտակէն դնաց տեսնելու համար, թէ ինչ կ'ընէր ան: Բայց սենեակին գուռը կիսարաց լինելով տեսաւ զիւր մայր տարածուած, և կարծելով թէ կը ննջէր, ոտանց բնաւ ձայն հանելու հօրը քովը վերադարձաւ:

Տառապեալ մարդը նօթութենէ նկուելով սակաւ ինչ ուտեալ խնդրեց: Արաքսիա փութաց անմիջապէս բերելու պանիրն և հացը: Եւ մինչև աչք համեստ ճաշը հօրն առջև կը ղետեղէր, կոյսն կարելէր հօգուով գոչեց. «Ճայրիկ, փոյթ չէ, եթէ մենք ևս այլոց նման մեծափարթամ սեղան շունինք այսօր»:

Խեղճ մարդը ոչինչ պատասխանեց, այլ անխօս և անհառաչ, իրեն ներկայացուածը կերաւ. մինչ իր դուտորը ամէն ճիգ կը թափէր զսարթաղէմ երևալու, ու կատակներովն ջնջելու նոյն պարագային տխուր ազդեցութիւնը:

(Ս. Տիւար)

Բ. Սուրբիկ մինչև մովթը կը լուար, և յետոյ, սլարտէղի մէջ լարած հին փտտուկ շուաններուն վրայ կը փռէր շապիկներն ու թաշկինակները: Գործը բոլորովին աւարտելէ հարը շտապով կ'ուտէր կը լմնցնէր ունեցած ուտեստը, անկողինը կը փռէր մահճակալի ձևով շինուած տեղի մը վրայ ու կը սլառլէր՝ շատ անգամ իր լաթերը երազելով, որք ճեփ ճերմակ կ'ըլլային և յաճախորդները կը դուլէին իր լուացարարական ճարտարութիւնը:

Յաջորդ օրը աւելի եռանդով կ'աշխատէր, լաթերը աւելի սաստկութեամբ կը ճղմէր կը ճմռթկէր իր փրփրցուցած կարմիր մատներուն մէջ, և զմայլումի ու գոհունակութեան եզական հառաչանք մը կ'արձակէր, երբ զանոնք քով քովի փռելէն հարը՝ անձառ ակնարկ մը կը նետէր անոնց վրայ:

(Երուխան)

**Վարժութիւն 2.** Կազմել երեքական նախադասութիւն առարկայ (նիւթ), կրող առարկայ և գործողութեան հետեւանքով ստացած առարկայ ցուցնող ուղիղ խնդիրներով:

**Վարժութիւն 3.** Կազմել ուղիղ խնդիր ունեցող նախադասութիւններ հետեւեալ բայերով.

Ռերել, բանալ, նանչնալ, սիրել, լուսատրել, յարգել, բարձրացնել, ազատել, հրապարակել, նստեցնել, կտրել:

## 160. ՅԱՆԳՄԱՆ ԵՒ ՄԱՏՈՒՅՄԱՆ ԱՆՈՒՂՊԱԿԻ ԽՆԴԻՐ

Յանգման և մատուցման անուղղակի խնդիրը կը ցուցնէ՝ ա) այն առարկան, որուն կը յանգի կամ կը մօտենայ գործողութիւնը, բ) այն առարկան, որուն կը տրուի կամ կը մատուցուի բան մը:

Յանգման և մատուցման անուղղակի խնդիրները կը գրուին տրական հոլովով ու կը սլատառախանեն որո՞ւ (ն), ի՞նչ բանի(ն) հարցումներուն:

Օրինակ՝

Ազատութեան շուրջ հասաւ ծեր զինուորիկն (որո՞ւն):

Շնորհագիրը տուին յաղթող մարզիկին (որո՞ւն):

Պիտի ըմպեմ քոցն արեւին, նառագայքի (ի՞նչ բանի) եմ

ծարաւի:

Սա կը սպասեմ յորդ ու վճիտ լոյսերուն (ի՞նչ բանի),  
Որոնց բոցը պիտի ցոլայ անծիր ցայդուն մէջ հոգւոյս:

Անոնք տեսան նեմեսիսի վեհ արձանն,  
Եւ բուրմեր են, վրէժի բուրմեր, և ահա  
Անո՛ր, անո՛ր կը դիմեն (որո՞ն):

**Վարժութիւն 1.** Հնդօրինակիւ յանդման և մատուցման անուղ-  
ղակի խնդիրները ստորոգեալներուն հետ.

**Ա.** Իր գողգոջուն ձեռքերով զզրոց մը բացաւ, սպահարան մը  
դուրս հաննց, բացաւ լուսանկար մը, մարմարին վրայ դրաւ, յե-  
տոյ մօտեցաւ լամպարին:

Գիշերային աղօթքէն վերջ իր միւս սլաշտամունքը եղած էր  
այդ լուսանկարը. նորէն ու նորէն կը նայէր, դառնօրէն կը ժըպ-  
տէր, ցաւապին կը շարժէր դուլաւ, նորանոր վերլիշումներ կ'ու-  
նենար անոր կեանքէն... Եւ ամէն գիշեր, ամէն մէկ նայելուն,  
նոր խանդաղատանք մը կը զգար, ու կենդանագիրը կը մօտեցնէր  
անդադար աչքերուն ու շուրթերուն...

(Մ. Մեծարեմք)

**Բ.** Թակոյկին մէջ լեցուող օձաօին սպիտակ փրփուրները հա-  
ճոյական տեսք մը կ'ընծայեն իր սեւուկ ազուոր աշուրներուն (1):  
Իր թակոյկի հնոցէն ու եփօցէն զատ ամէն բանի կասկածելի աշ-  
քով կը նայէր (2): Լուացարարուհին երկշտ քայլերով ներս մտաւ  
և աչք ըրա ծերունի նաւալարին որ լուացրի մասին խօսի երի-  
տասարդ ձկնորսին հետ (3): Գառնուկներուն սղորմադին մայլունը կը  
խառնուէր մացառներուն վրայ թառող սոխակին հոգեշունչ դեղդե-  
զին(4): Երեսը արևին դարձուց ու ճամբայ ինկաւ (5): Իւրբանչիւր  
քաղաքի մէջ աշակերտները զինքը կը սիրէին ու միշտ իրեն կը հե-  
տեւէին (6): Յորդառատ ծուխ մը կը սլլուի տեղանքիս խորտակող  
բոցին, որ սուտակային դօտիի մը պէս կ'երկարի (7): Նամակը դրած  
օրէս ի վեր երկու ամիսներ անցան ու դեռ չէի յանձներ զայն թղթա-  
տարին (8):

**Վարժութիւն 2.** Կաղմել յանդման և մատուցման անուղ-  
ղակի խնդիրներ ունեցող նախադասութիւններ հետեւեալ բայերով.

Յղել, առաքել, մօտենալ, հասնիլ, վազել, յառել, նայիլ,  
տալ:

**Վարժութիւն 3.** Կաղմել լինց նախադասութիւն յանգման և մատուցման անուղղակի խնդիրներով ու ցոյց տալ, թէ ո՛ր հարցումներուն կը պատասխանեն խնդիրները:

### 161. ՎԵՐԱՐԵՐՈՒԹԻՅԱՆ ԱՆՈՒՂԱԿԻ ԽՆԴԻՐ

Վերաբերութեան անուղղակի խնդիրը կը ցուցնէ այն առարկան, որուն կը վերաբերի խօսքը, որու մասին որեւէ տեղեկութիւն կը տրուի կամ կը պատմուի:

Վերաբերութեան անուղղակի խնդիրները կը դորձածուին ըսել, գրուցել, բաժնաւել, խօսիլ, պատմել, շարախօսել, տեղեկանալ, հարցնել ու նման բայերու հետ և կը դրուին մեծ մասամբ բացառական հոլովով:

Օրինակ՝

Կը դրուցէին անցած-դացած օրերէն:

Կը պատմէր այդ հերոսական մարտերէն:

Անընդհատ կը խօսէր այդ վէպերէն:

Վերաբերութեան անուղղակի խնդիրը յաճախ կ'արտայայտուի նաև գոյականներու թիւր հոլովներով և վերաբերութիւն ցուցնող որոշ կապերով՝ մասին, վերաբերեալ, նկատմամբ, վրայ:

Օրինակ՝

Կը պատմէին անոր մասին:

Խօսեցաւ յետոյ օդին զնկեցկութեան ու ջերմութեան վրայ:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել վերաբերութեան անուղղակի խնդիրները լրացեալներուն հետ.

Անուշ կ'ըլլար ընկերներու մօէն մէկ հանդիպում: Կը խօսէին մանկական անգարձ օրերէն, դպրոցին մէջ պատահած զուարճալի դէպքերէն:

— Յակոբի մասին դրուցէ:

— Արմէնէն լուր ունի՞ս, ի՞նչ կը պատմեն իր մասին:

Եւ մինչև ուշ երեկոյ կը խօսէին անցած գացած դէպքերուն վրայ, իրենց մանկական ընկերներէն, սիրելի ուսուցիչներէն:

Անուշ եւ մանկական անջինջ յուշերը:



**Վարժութիւն 2.** Պատմել, խօսիլ, շարախօսել և գրուցել *բայկ-*  
*րով կազմել այնպիսի նախադասութիւններ, որոնց մէջ ըլլան վերա-*  
*բերութեան անուղղակի խնդիրներ:*

## 162. ԱՆՋԱՏՄԱՆ ԱՆՈՒՎՂԱԿԻ ԽՆԴԻՐ

Անջատման անուղղակի խնդիրը կը ցուցնէ այն տարիան,  
որմէ կ'անջատուի, կ'ելլէ, սկիսք կ'առնէ գործողութիւնը:

*Յ ր ի ն ա կ՝*

*Կեանքը հետացուց զինք մանկական ընկերներէն ու հարա-*  
*զատներէն:*

*Նամակ ստացայ Յակոբէն:*

*Դաշտանկարին անդորբութենէն ու անշարժութենէն բան մը*  
*անցած է մեզի:*

*Ինչպէս կ'երևի այս օրինակներէն, անջատման անուղղակի*  
*խնդիրը կը գրուի բացառական հոլովով:*

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել անջատման անուղղակի խնդիր-  
ները ստորոգեալներուն հետ.

*Գրականութիւնը ժողովրդեան կեանքէն պիտի քաղուի՝ ժո-*  
*ղովրդեան կեանքին ծառայելու համար (1):*

*Նաւակալքին դիմացը, տանիքը՝ փողոցի պատին ուղղու-*  
*թեամբը վերջացող խցիկի մը մէջ կը լուար Սուրբիկ աղտոտ,*  
*սեւցած լաթերը զորս շարաթը նրկու անգամ կը ժողվէր՝ ընտա-*  
*նեզուրկ նաւավարներէ, ձկնորսներէ, մօտակայ փուռին դորձաւոր-*  
*ներէն, գիշերները անկիւնի խահուէն պառկող դաւառացի պաղա-*  
*վաճառներէն ու նաւակալքին վրայի նեղ խուցերուն մէջ ընակող*  
*նաւավարներէն (2): Ու կը փախչիմ, շեմ դիտեր թէ ինչէ, թերևս*  
*իմ հոգիէս, իմ ցաւատանջ հոգիէս (3): Այդ մարդէն կը սպասէինք*  
*ցանկալի լուր մը (4): Նամակ ստացայ իմ մտերիմ բարեկամէս,*  
*մանկական օրերու հաւատարիմ վկայէ մը (5):*

**Վարժութիւն 2.** Կազմել հինգ նախադասութիւն անջատման  
անուղղակի խնդիրներով:

Միջոցի անուղղակի խնդիրը կը ցուցնէ այն առարկան, որու միջոցով կը կատարուի գործողութիւնը:

Միջոցի անուղղակի խնդիրը կը գրուի գործիական հոլովով:  
Օ ր ի ն ա կ՝

Նդեգնեայ գրչով երգեցի փառքերս:  
Անոնք հայրենիք մեկնեցան շոգեմատով:  
Արամը ստացաւ փոսքով զրկուած ծրարը:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել միջոցի անուղղակի խնդիրները ստորոգեալներուն՝ հետ.

Հունձը կը ժողվեմ մանգաղով,  
Ակօս ակօս ման դալով (1):  
Գլխարաց եմ ու բոսլիկ  
Արտերուն մէջ թափառիկ:  
Յորին, կակաչ, կարօտով,  
Կապեցի մէկ նարօտով (2):  
Հասկերուն մէջ վերեւէն  
Աստղեր միւտոն կը ծորին:  
Քանի խութձեր շաղկրով,  
Սա կապեցի խաղերով (3):  
Արարս խողանով մնաց,  
Գէղերով լեռ եմ շինած (4):

(Գ. Վարուժան)

**Վարժութիւն 2.** Կաղմել հինդ նախադասութիւն միջոցի անուղղակի խնդիրներով:

164. ՆԵՐՎՈՐԾՈՂ ԱՆՈՒՂԱԿԻ ԽՆԴԻՐ

Ներգործող անուղղակի խնդիրը կը ցուցնէ այն առարկան, որ իր կատարած գործողութեամբ կ'աղղէ, կը ներգործէ ենթակալին վրայ:

Օ ր ի ն ա կ՝

Ամայի դաշտերը ծածկուած են ձիւնով:  
Քանասանդոթիւնը յօրինուած էր երիտասարդ ֆերսովէ մը:

Ներգործող խնդիր կը պահանջեն կրաւորական սեռի բայերը: Ներգործող անուղղակի խնդիրը կ'արտայայտուի բացառական և գործիական հոլովներով: /

**Օրինակ՝**

Արշակ խարուեցաւ նենդ քշնամիլն:

Ասլակիները կոտրեցան քամիլն:

Ճամբան եղերուած էր բարախներու հոծ շարքով:

Ներգործող անուղղակի խնդիրը պէտք չէ շփոթել անջատման և միջոցի անուղղակի խնդիրներուն հետ, որոնք ենթակային կատարած գործողութեան հետ կը կապուին: Ներգործող անուղղակի խնդիրը գործողութիւն կատարողն է, ՆՅՔ կրաւորական սեռի բայերը դարձնենք ներգործական, ներգործող խնդիրը կը դառնայ ենթակայ, իսկ ենթական՝ խնդիր:

Այսպէս՝ վերի նախադասութիւնները փոխելով կ'ունենանք հետեւեալ պատկերը՝

Նենդ քշնամիլն խարեց Արշակը:

Քամիլն կոտրեց ասլակիները:

Բարտիներու հոծ շարքը եղերած էր ճամբան:

**Վարժութիւն 1.** Սիրովի, ցանչցուիլ, ոգևորուիլ, շարդուիլ, գերուիլ բայերով կազմել նախադասութիւններ, որոնց մէջ ըլլան ներգործող անուղղակի խնդիրներ:

**Վարժութիւն 2.** Որոշել անուղղակի խնդիրներուն տեսակները.

Երէկ նամակ ստացայ Յակոբէն: Իր սրտառու խօսքերէն պահ մը օրօրուեցաւ հոգիս: Որքան կ'ողջէի այգսքէս տեղեկութիւն ստանալ նաև իմ միւս ընկերներէս, որոնցմով միշտ ուրախացած եմ, որոնց յաջողութիւններէն շարունակ յուզուած է իմ սիրտս: Այսօր փոսթով կ'առարեմ պատասխան նամակս: Չեմ դիտեր ինչ խօսքերով արտայայտեմ կարօտիս ջերմ զգացումները, իմ լաւագոյն ցանկութիւններս: Տարիներ անց, հիմա ալ տակաւին հոգիս կը լեցուի քաղցր զգացումներով այն մարդոց նկատմամբ, որոնց հետ անցած են մանկութեանս լաւագոյն օրերը:

**Վարժութիւն 3.** Քսան-քսանհինգ նախադասութիւններէ բաղկացած շարագրութիւն մը գրել՝ անոր մէջ գործածելով ուղղի և անուղղակի խնդիրներ՝ իրենց բոլոր տեսակներով:

**Վարժութիւն 4.** Կրացեալներուն հետ ընդօրինակել խնդիրները՝ անոնց տեսակը նշելով փակագիծերու մէջ.

**Ա.** Հիմակ իր ձևքն առած էր գունատ թուղթերու բարակ ծրար մը, որ գորշ ժապաւէնով մը կապած էր: Անփութութեամբ ժապաւէնը քակեց, բայց հազիւ նայուածքին հանդիպեցան այդ նամակներուն կիսովին արուած կրկար ու բարակ գիրերը, իր գիմագծերը կծկուեցան ցաւատանջ յուշերէն: Վայրկեան մը կանգ առաւ, յետոյ՝ անգիտակցարար՝ աչքէ անցուց այդ նամակները:

Գուրսը խաւար կը տիրէր, այլ մայիսեան աստղազարդ երկընքի մը տարտամ ցոլացումովը մեղմացած... Կը յիշէր անոր նուրբ ու փափուկ դէմքը... Քսաներկու տարեկան էր ան, ու ինքը բսանչորս տարեկան: Վկայական ստանալուն կը սպասէր, որպէսզի կնութեան խնդրէր Վերդինը իր հօրմէն, ճերմակեղէնի խաւութեան մը, որ մեծապէս կը յարգէր զինքը իր սլալկեշտ բնատրութեան համար:

(Լ. Քաշալեան)

**Բ.** ...Սովորական տեսարան: Հոս հայր մը, մայր մըն է որ իր դաւակը ճամբու կը դնէ, հոն՝ աղջիկ տղայ մը, որ իր ծերունի ծնողքը շոգենաւին կը յանձնէ, ո՛վ զիտէ, թերեւս մէյ մըն ալ շտեմնելու վախով համակուած. աբստեղ բարեկամներ որ զիրար կը թողուն, ամէնքս այս սլահուս իրարու խառնուած՝ յանկարծ սուրիչին խաղցուցիչ ստիպումին վրայ, իրարմէ կը բաժնըւինք, հապճեպով տալով առնելով վերջին համբոյրները, արտասանելով վերջին բառերը: Սանդուղները վեր կ'առնուին, սլահուսները կը քակուին, հաղորդակցութիւնը կը կտրուի քովիկինիս կանդնող ցամաքին հետ:

Քարափէն կը բաժնուինք ահա, մեղմիս, գրեթէ անզգալիօրէն:

Անձկութիւնը սրտերնիս կը ճնշէ, սիրելիներէ բաժնուելու անձկութիւնը, զլջումի պէս բան մը, եթէ ետ կենայինք սա ուղևորութենէն. բայց ինչպէս կը պատահի միշտ՝ ուշ է զլջալու համար: Կինս ցամաքէն իր մեկնող դաւակներուն նորէն սլատէքներ կու տայ...

Յամարին հետ ուսէ կապ չունինք. միայն երամակը սլատիկ թողուններուն՝ իր դարձգարձիկ շրջաններովը մեր ճամբան կը սլարուրէ, իր ճտուղիւնը քամիին ձայնին կը խառնուի:

(Գ. Զօհրապ)

Բայի (ստորոգեալի) միւս լրացումը՝ պարագան, կը ցուցնէ գործողութեան այլապէս հանգումները:

*Օրինակ՝*

*Ան դանդաղօրէն անցաւ մեր փողոցէն:*

*Այսօր հանդիպեցայ Տարօնիկին:*

*Օրաթերթը դրուած էր սեղանին վրայ:*

Այս նախադասութեանց մէջ ստորագծուած բառերը պարագաներ են: Անոնցմէ առաջինը կը ցուցնէ ստորոգեալին արաւ-  
յայտած գործողութեան ձևը (դանդաղօրէն անցաւ), երկրորդը՝  
գործողութեան ժամանակը (այսօր հանդիպեցայ), իսկ երրորդը՝  
գործողութեան տեղը (դրուած էր սեղանին վրայ):

Պարագայ են այն լրացումները, որոնք կը ցուցնեն գործողու-  
թեան հետ կապուած հանգումներ՝ տեղ, ժամանակ, ձև, չափ ու  
քանակ և այլն:

*Բացի ստորոգեալէն, խնդիրներ ու պարագաներ կրնան ունե-  
նալ նաև գերբայները:*

*Օրինակ՝*

*Երկար վերարկու մը կը կազապարէր անոր իրանը՝ փոք փոք  
իջնալով ու ցեխոտ ծուլէններով վերջանալով:*

*Հոս փոք փոք բառը կը լրացնէ իջնալով գերբայը, իսկ ձը-  
ւլէններով-ը՝ վերջանալով գերբայը:*

Պարագաները կ'ըլլան քանի մը տեսակ՝ տեղի, ժամանակի,  
ձևի, չափ ու քանակի, նշանակի, պատճառի, նիւտոնի և նախա-  
նակ նիւտոնի:

## 166. ՏԵՂԻ ՊԱՐԱԿԱՆՆԵՐ

Տեղի պարագան կը ցուցնէ գործողութեան կատարման տեղը:  
Տեղի պարագան կ'արտայայտէ՝

**Ա.** Այն տեղը, ուր կը կատարուի գործողութիւնը:

Այսպիսի տեղի պարագան կը դրուի տրական, հայցական հո-  
լովներով, սեռական հոլովով ու մէջ, վրայ և այլ կապերով, ինչ-  
պէս նաև որոշ մակրայններով ու դերանուններով:

Օրինակ՝

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գիւղանկարը փռուած:

Տիգրանը կ'աշխատէր դարբնոցը:

Աշոտը ծնած էր Ալաշկերտ:

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին:

Մտին վրայ կը ճոռուղեն թռչունները:

Ամենուր կը թնգար հայկական դուռնային ձայնը:

Հոս այնքան խաղաղ է:

Փողոցներուն մէջ աշխոյժ եռուզեռ կար:

Այս իմաստը արեւելահայ գրական լեզուի մէջ մեծ մասամբ կ'արտայայտուի ներգոյական հոլովով. այսպէս՝

Կիրճի խորում, ժայռի ծոցում է գիւղանկարը փռուած:

Տիգրանն աշխատում է դարբնոցում:

Աշոտը ծնուել էր Ալաշկերտում:

Փողոցներում աշխոյժ եռուզեռ կար:

**Բ.** Այն տեղը, դէպի ուր ուղղուած է գործողութիւնը:

Այսպիսի տեղի պարագան կ'արտայայտուի կա՛մ միայն հայցական հոլովով, կա՛մ հայցական հոլովով և ի, դէպի կապերով, ինչպէս նաեւ որոշ մակրայններով ու գերանուններով:

Օրինակ՝

Մենք կը մագլցէինք սարն ի վեր:

Ո՛ւր պիտի երթաս:

Գետն համբոյրի մը երագով դէպի փունճ կը թեքի:

Մեր խումբը կ'երթար Սասուն:

Թրբաց մայրեր թող լան, ու դուն

Ուրախ լուրեր տար ի Ձէյրուն:

**Գ.** Այն տեղը, ուրիշ կը սկսի գործողութիւնը:

Այսպիսի տեղի պարագան կ'արտայայտուի բացառական հոլովով:

Օրինակ՝

Մաղիկներէն հովը թերթեր կը թափէ:

Ան Հայրենիք եկած էր օտար արիւնքէն:

Պատումանէն կը զրկէր ինձ հովիկն համբոյրն իր մտերիմ:

**Գ.** Այն տեղը, որուն վրայէն կամ մէջէն կը կատարուի շարժումը:

Այսպիսի տեղի պարագան կը գրուի միայն բացառական հոլովով:

Օրինակ՝

Կ'երթային ծաղկաւէտ դաշտերէն:

Հանրակառքը կ'անցնէր բազմամարդ վողոցէ մը:

Ուղևորները կը յառաջանային փոքրիկ ու մութ անտառիս  
մը մէջէն:

Օրն ի բուն քալեցին ցողաթուրմ մարգագետիններու վրայէն.

**Վարժուրիւն 1.** Ընդօրինակել տեղի պարագաները՝ ստորոգ-  
եալներուն հետ.

Լերան կողին, նման վէրքի մը լայնշի,

Հեղեղատն այն կը տեսնա՞ր.

Զուրէն բացուած, այսօր ջուրի ծարաւուտ

Ան ճամբայ մ'է կարմրորակ:

Տղայ կեանքիս, օգոստոսի մ'արեւով,

Կ'եկէի ես անկէ վեր,

Դէպի լեռն այն, դէպի դաշտերն ընդարձակ՝

Ըրկէ ինծի դիրին էր

Քաղել աստղեր ու անոնցմով պսակուիլ,

Շնչել ամէն երկրի հով.

Ու հետեւիլ արծիւներուն ընթացքին՝

Մատղաշ հոգիս պարզելով:

Ու կ'եկէի ես այդ կարմիր ճամբայէն...

Հոն ոչ սիւք կար և ոչ խոտ.

Թիթեռնիկներն այնտեղ ինկած դիպուածով՝

Կը փախչէին հեռեկոտ:

(Կ. Վարուժան)

**Վարժուրիւն 2.** Կաղմել նախադասութիւններ տարրեր հո-  
ւովներով արտայայտուած տեղի պարագաներով:

**Վարժուրիւն 3.** Կաղմել նախադասութիւններ, ուր տեղի պա-  
րագաներն արտայայտուած ըլլան մօտ, վրայ, տակ, իով, դէ-  
պի, մէջ, ի, շուրջը կապերուն և զանազան կապի խնդիրներու մի-  
ջոցով:

**Վարժուրիւն 4.** Կաղմել տասը նախադասութիւն, որոնք ունե-  
նան մակրայնկրով ու դերանուններով արտայայտուած տեղի պա-  
րագաներ:

Ժամանակի պարագան կը ցուցնէ գործողութեան կատարման ժամանակը:

Ժամանակի պարագան կը դրուի՝

**Ա.** Տրական, հայցական, րացառական և գործիական հոլովներով.

*Օրինակ՝*

*Շողեկաորը կը մեկնի ժամը երեքին:*

*Մայիսին կը բացուի վարդը:*

*Ամառը միշտ զիւղ կ'երթար:*

*Երեւանի մէջ երեկոները միշտ զով կ'ըլլայ:*

*Ժամը հինգէն կը սպասեմ քեզի:*

*Գիշերով հանդիպեցանք իրարու:*

**Բ.** Ժամանակ ցուցնող մակրայներով և դերանուններով (*արդ, Յիմակ, միշտ, երէկ, վաղը, այսօր, յար, երբ, երբեւէ և այլն*).

*Օրինակ՝*

*Տափան, թեւերըդ տարածէ,*

*Գրկէ արտերը յուռթի.*

*Հունդն այս օրուան՝ վաղը հունձ է՝*

*Երբ դուզձին տակ կ'անհետի:*

*Անիկա միշտ զուարթ է:*

*Մենք յանախ մէկզմէկու կ'այցեկենք:*

**Գ.** Ժամանակի գաղափար արտայայտող կապերով (*ատեն, շրայ, մինչեւ, պէս*) և անոնց խնդիրներով.

*Օրինակ՝*

*Գրելու ատեն շմոռնաս խնդիրքս:*

*Երիտասարդին պատասխանին վրայ ներս մտաւ տանտէրը:*

*Փողոցը հանդիպելուն պէս իրարու կը նայէին ջերմօրէն:*

**Վարժութիւն 1.** Որոշել ժամանակի պարագաները և յոյց տալ, թէ ինչով արտայայտուած են անոնք.

Օրերով րացական կը մնար դպրոցէն. այդ միջոցին նոր դրօսանքի մը, երբեմն նոր մարդանքի մը հետամուտ էր և որուն մէջ իսկոյն գերազանց կը հանդիսանար: Մասնաւորապէս կը յի-



շեմ կիրակի օր մը, երբ Օխլամուրի կողմը հանդիպեցայ իրեն. ձի հեծած էր... Այդ օրը նախանձեցայ իր վրան: Ատեն մըն ալ որ-սորդութեան սէր տուաւ:

Վարժարանին կեանքէն վերջը կորսնցուցի զինքը:

Պատանութենէն իր մուտքը երիտասարդութեան մէջ՝ շքեղ եղաւ: Ծերունի հայրը մեռեր էր մեծ հարստութիւն մը ձգելով իրեն: Ունեցածը ծայրէն սկսաւ վատնել, նախ սլատրաստ դրամը, յետոյ կալուածները մի առ մի ծախելով. առնելիքները ձգեց սլատրասականներուն, նոյնիսկ երբոր աղքատացաւ: Պէշիկթաշ իր մեծ հօր տունը բնակեցաւ միշտ:

(Գ. Զօհրայ)

**Վարժութիւն 2.** Կազմել երկուքական նախադասութիւն տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով արտայայտուած ժամանակի պարագաներով:

**Վարժութիւն 3.** Կազմել տասը նախադասութիւն, որոնք տնկնան ժամանակի մակրայններով, դերանուններով և կապերով ու կապի խնդիրներով արտայայտուած ժամանակի պարագաներ:

## 168. ՁԵՒԻ ՊԱՐԱԳԱՅ

**Ձեւի պարագան կը ցուցնէ գործողութեան կատարման ձեւը:**

**Ձեւի պարագան կ'արտայայտուի՝**

**Ա.** Գոյականներու կամ գոյականաբար գործածուած այլ խօսքի մասերու բացառական և գործիական հոլովներով:

**Օրինակ՝**

Յայգն է ժայթքած իր շողակի շատրուաններն անըջական,  
Հեռուններէն ուտի մը թաւ հեծքը կու գայ դաղղըզալէն,  
Այս գիշեր շեքմ ու երազուած կայծեր հողույտ խորերն ինկան,  
Կը մարեմ չոյսը լամպարիս ու կ'երազեմ մըբալիսլէն:

Երբէք մեզայ ըսողը այսպիսի ստոյգ անձկութեամբ լսուած չէր-  
Սիւով կը լսէինք անոր բաղքը դրոյցները:

**Բ.** Ձեւի մակրայններով՝ արագ, միհասի, միտ միհասի, դանդաղ, հասցնեայ, փութով, արագ-արագ, յաճախ և այլն:

Օրինակ՝

Պիշ կը դիտեմ սաղարթախիտ  
արահետները նրբին,  
Ու երազներս ականակիտ  
նկազնետէ կը թափին:

Խոնջ իրիկունն արագօրէն կը խոնարհի դէպի խաւար:

**Գ.** Կարգ մը դերամուներով՝ այսպէս, այդպէս, այնպէս,  
սանկ, ասանկ, անանկ, սապէս, որպէս և այլն:

Ասանկ շիտակ կայնէ նայիմ:

Ի՞նչպէս տեղ հասար:

Այսպէս ոչ մէկը երգած էր:

**Գ.** Որոշ ածականներով՝ դեղեցիկ, աղէկ, դէշ, ուրախ, տխուր,  
ամուր, խոր և այլն:

Օրինակ՝

Ան աղէկ կ'երգէ:

Աղջիկը տխուր կը ժպտէր:

Ուսուցիչս ամուր սեղմեց ձեռքս:

**Ե.** Ձևի իմաստ ունեցող կապերով (պէս, դերթ, նման, իր-  
օքու, որպէս և այլն) ու անոնց խնդիրներով:

Օրինակ՝

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդէս.

Երթալ առուին պէս մարդերու տակ անտես.

Կապոյցաին մէջ՝ հեզ, հողմալար ամպին պէս...

Մէր—արևիդ բոցն երկարէ խորերն հոգույս իմ պատանի,

Ձերք արևին լեզուակն ոսկի՝ որ կը ծրծէ մշուշն այգուն:

Տարափը կը տենդոտէր ու մարակներու հոյլի մը պէս կը  
շաշէր սալարկին վրայ, և յետոյ շարահօճի ձեռքի մը նման զգուս-  
կան ծեծիկներ կու տար ապակիներու երեսին:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել և ստորագծել ձևի պարագա-  
ները՝ փակագիծերու մէջ նշելով, թէ ի՞նչ խօսքի մասերով արտա-  
յայտուած են անոնք.

Երբոր ներս կը մտնեմ սենեակին դուռէն, ինչ սուտ զուրցեմ,  
ախրաս ուժով կը բարախէ:

Իրաւ է որ տասը երկար տարիներ զիս այս ատենէն կը բաժնեն, բայց երէկուան պէս աչքիս առջեւն է աս հեռաւոր անցեալը:

Ու ահա այս տանը դուռը ռաբ կոխելուս, մտտիլն ամբողջ վերադարձ մը կը կատարուի հոգիիս մէջ. կ'երիտասարդանամ յանկարծ: Թեթեւ բայլերով ուրեմն կը մտնեմ ներս... Մեղմիւ ահա ռաբի կ'ելլէ և քայլ մը առաջ կու դայ... Նազանքով ու ժպիտով մօտեցաւ ինձի: Ու աղէկ շղիտեմ ինչ խօսքի առթիւ— կ'երեւայ թէ կրցայ զուարճալի բան մը ըսել:

(Գ. Զօհրապ)

**Վարժութիւն 2.** Գրել փոքրիկ շարադրութիւն մը, որուն մէջ գործածուած ըլլան տարբեր խօսքի մասերով արտայայտուած ձեւի պարագաներ:

**Վարժութիւն 3.** Կազմել տասը նախադասութիւն, որոնցմէ հինգին մէջ ձեւի պարագաներն արտայայտուած ըլլան մակրայններով, իսկ հինգին մէջ՝ այլ խօսքի մասերով:

### 169. ԶԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆՅ

**Չափ ու քանակի պարագան կը ցուցնէ գործողութեան չափը կամ քանակը:**

Ան մեծ մասամբ կ'արտայայտուի շափի մակրայններով՝ Բանիցս, համօրէն, չափազանց, սակաւ առ սակաւ, փոքր-ինչ, շատ շատ, քիչ քիչ, քիչ քիչ շատ և այլն:

Օրինակ՝

Գիւղն համօրէն կը մրափէ ծոցն արևոտ ժայռերուն:

Քանիցս խօսուեր է այդ մասին:

Մութք քիչ քիչ կը թանձրանայ տխրալի:

Մենք սկսանք սակաւ առ սակաւ հանդիպիլ իրարու:

Քիչ մըն ալ դուն ժպտէիր, ա՛հ, հողոյս համար՝ որ Յիւանդ է:

Չափ ու քանակի պարագաները կ'արտայայտուին նաև թուականներով (յաճախ դոյականներու հետ) և շափ ու քանակ ցուցնող դերանուններով (այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ, քանի, որքան, ինչքան և այլն):

Օրինակ՝

Երեւ անգամ տեսած եմ «Պաղտատար աղբար»-ը:

Ամսական ո՞րքան կը շահի գործաւորը:

Չափ ու քանակի պարագան կը ցուցնէ նաև գործողութեան ժամանակի և տարածութեան չափը:

**Օրինակ՝**

Լճիկ ամիսով գացեր է ամառանոց:  
Անոր պիտի սպասէինք ճինգ բոլի:

**Վարժութիւն 1.** Գտնել շափ ու քանակի պարագաները և որոշել, թէ ի՛նչ խօսքի մասերով արտայայտուած են անոնք.

Մուշեղ երեք տարի աշխատեցաւ, յետոյ ընդունուեցաւ ինստիտուտ: Շատ երազած էր բժշկութիւն սորվիլու և հիմա երկար կը մնար գրադարանը, կը կարդար բազում գիրքեր բժշկութեան, մարդու առողջութեան վերաբերեալ: Քանիցս ան տրտմեցաւ, երբ չէր յաջողեր հասկնալ շատ ու շատ բաներ: Բայց հետզհետէ վարժուեցաւ, սակաւ առ սակաւ ձեռք բերաւ այն ամէնը, ինչ որ պէտք էր բժիշկի մը համար: Վեց տարի ուսանելէ ետքը այժմ Մուշեղ դարձեր է մեր քաղաքին շնորհալի բժիշկներէն մէկը:

**Վարժութիւն 2.** Կազմել եօթը նախադասութիւն շափ ու քանակի պարագաներով:

## 170. ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԿԱՑ

Նպատակի պարագան կը ցուցնէ գործողութեան կատարման նպատակը:

Նպատակի պարագան կ'արտայայտուի՝

**Ա.** Տրական հոլովով.

Աւարտուած էր ամէն գործ.—

Ահա մէջտեղն էր, — նեմեսիսը, — կանգուն,

Պաշտուելու, ընդունելու ողջակէզ

Այլևս կազմ ու պատրաստ:

Առաջտեան մեկնեցան որսի:

Ազջիկները աղբիւր գացին՝ ջուրի:

Խելքը գլուխը դալուն պէս փնտնելու ելաւ:

**Բ.** Նպատակի զազախու արտայայտող կապերով (համար, յօդուտ, ի, յանուն) և կապի խնդիրներով.

Ան կը լուայ յաճուն պատառ մը հացի, յաճուն միակ իր օրդոյն:

Ան ամէն բան կը զոհէր սուրկիւ կամար:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել նպատակի պարագաները ստորոգեալներուն հետ.

Պոլիսէն մեկնեցաւ Բարիլ երթալու համար (1): Այս լրագիրը կը հրատարակուէր աշխարհարար լեզուն կոկելու և զեղեցկացնելու համար (2): Ոսէ խնդիր մը անաշատութեամբ բննելու համար զայն կը պարզէ, անոր մէջ ճշմարտութենէ առաջ բաժանորդ կը փնտռէ (3): Ինչո՞ւ համար այս մարդուն պատուոյն զըպար (4): Ըսել է որ դուք ամէն իրիկուն հոս կը սպասէք Պոլիս եկող կամ անկից մեկնող հարուստները տեսնելու և անոնց անունները հրատարակելու համար (5): Բարեկամական պարտք մը կատարելու համար եկայ զձեզ տեսնելու (6): Քնաւ ձեր մտքէն շանցունէք թէ այս մարդը մէկ ու կէս ոսկի փրցնելու համար զիս տեսնելու եկաւ (7): Ազգին իրաւունքներն պաշտպանելու նպատակով դատ բացած էր ազգին պատրիարքին դէմ (8): Ընկեր կայծունի, որ նոյնպէս եկած էր շնորհատրական այցելութեան, խօսակցութեան մէջ մտաւ (9): Հիմա պարապ խօսքերով ժամանակ շանցունենք, բեղի յոր զրկեցի և բերել տուի՝ ինչո՞ւ համար, զիտե՞ս (10):

**Վարժութիւն 2.** Կազմել եօթը նախադասութիւն՝ նպատակի պարագաներով:

**Վարժութիւն 3.** Կազմել երեքական նախադասութիւն, ուր նպատակի պարագան զրուի գոյականի տրական հոլովով և կապերով ու կապի խնդիրներով:

## 171. ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԿՅ

Պատճառի պարագան կը ցուցնէ գործողութեան կատարման պատճառը:

Պատճառի պարագան կ'արտայայտուի բացառական հոլովով կամ պատճառի իմաստ արտայայտող կապերով (համար, պատճառով) ու կապի խնդիրներով:

Օրինակ՝

Հովը կ'ոռնայ խուզօրէն,  
Ու գիշերը կ'երկարի,  
Ալիքներու ժըխտէն  
Ու սարսափէն խաւարի:

Այ յողնած եմ սպասելէն:  
Տկար ըլլալուն համար չէր կրնար խօսիլ:  
Անսահման խնդարներէն շունչը կը սպառէր:  
Սանր վիշտերէն մարած էին աչքերը:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել պատճառի պարագաները ստորոգիւններուն հետ.

— Ուրիշ ոտք ունի՞նք, այս ոտքերով սքիտի ելնենք, պատասխանեցին պանդուխտներն այնպէս խղճուկ կերպով մը, որ կարծես իրենց աղքատութեան պատճառով երկու ոտքէ աւելի չէին կրցած ունենալ (1): Բարերախտարար կերակուրի ժամը հասաւ և ամէն մարդ անօթութենէ խթանուած մեկնեցաւ (2): Այս թուականին քարոզիչ կը կարգուի, ըստ քարոզչութեամբ շիրնալով ապրիլ, կը սկսի հրաշագործութեան (3): Կ'երևայ որ խնդիրը ծագում առած է թաղին ջոջ աղանկէն մէկուն ըրնած կամայական ընթացքէն (4): Վաճառականը ստիպուեցաւ երկարօրէն ըրցատրել այն անպատեհութիւնները, որոնք կրնային յառաջ դալ մարտիկ խումբերուն մէջ իր ներկայութենէն (5): Մարդար էֆէնտի ուրախութենէն կը ճառագայթէր (6): Կիները այդ ձայնին աղղեցութենէն մեքենարար մէկ կողմ քաշուեցան, ճամբայ ընկալով (7):

**Վարժութիւն 2.** Կադմել նախադասութիւններ՝ հետեւեալ բայերուն հետ գործածելով պատճառի պարագաներ.

Հասնիլ, ուրախանալ, տխրիլ, դալ, երթալ, յոյնիլ, սթափիլ, դարմանալ, խորշիլ, սիրել:

## 172. ՀԻՄՈՒՆՔԻ ՆԻ ՀԱՆՈՒՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ ՓԱՐԱԳԱՆՆԵՐ

Հիմունքի պարագան կը ցուցնէ այն հանգամանքը, որ ելմը կը ծառայէ գործողութեան կատարման համար. հակառակ հիմունքի պարագան կը ցուցնէ հանգամանք մը, որուն հակառակ կը կատարուի կամ չի կատարուիր գործողութիւնը:

Յ Ր Ի Ն Ա Կ՝

**Ա.** Հիմունքի պարագաներ՝

Եւ դուն, գարուն, ի՞նչ իրատունալ հարսանիք կը սարքես  
Դրան ղանգակին զարնուածակն, սանգուղին վրայ քալ-  
ումէկ կը ձանչնամ բեզ:

Ես ալ զիներ՝ սրահին մէջ ձգած անուշ հոտէն, շրջասպա-  
տող շնչին նիթերուն ազգականուրենէն անմիջապէս կը գու-  
շակէի:

Ձուցումածին նայելով՝ տարիէ մը ի վեր բաղարի նշանաւոր  
մարդոց մտերիմն էր:

**Բ.** Հակառակ հիմունքի պարագաներ՝

Հակառակ սակաւախօս ըլլալուն՝ կը սիրէին զիները:

Հակառակ որոշ կոպտութեան՝ անշափ հարուստ էր հոգին:

Հակառակ երկարաւն փորձերու՝ շէի կրցած մերկնան աշ-  
խատցնել:

**Վարժութիւն 1.** Կազմել վեց նախադասութիւն՝ հիմունքի և հա-  
կառակ հիմունքի պարագաներով:

**Վարժութիւն 2.** Ընդօրինակել պարագաները ստորոգևալնե-  
րուն հետ՝ փակագիծերու մէջ նշելով անոնց տեսակը.

**Ա.** Յոն ի բուն կ'աշխատէր: Իր բոլոր ջանքին հակառակ, իմ  
սննեակս չկրցաւ կարգի բերել. որը տասն անգամ կը շտկէր ու  
տասն անգամ կ'աւրշտկէի իր բոլոր տանտիկին խնամքին ար-  
դիւնքը, զոնտաներս հոս կը նետէի ու ձերմտիկուէններս հոն, զիր-  
բերս ցիրոցան բազմոցին վրայ կամ գետինը անկին մը ձրդ-  
ւած. և այս բոլորը հարիւր անգամ իր տելը կը դրուէր, ժամ մը  
վերջը առջի վիճակին վերագառնալու համար: Ձէր դանդատեր,  
եթէ երբէք իր լսիկ մնջիկ աշխատութեան անօգուտ բազմապատ-  
կութիւնը դանդատ մը չէր ինքնին իմ տուած նեղութեանս հա-  
մար. ո՛չ, չէր դանդատեր, ընդհակառակը, ա՛լ աւելի կը յամառէր  
հիմա, իր համբերատարութեամբը ամչցնելով զիս...

Ելքօր մը պէս կը խօսէի հետք ամէն անգամ որ բան մը  
հրամայել պէտք ըլլար, քաղցրութեամբ, դրեթէ գգուանքով...

(Գ. Զօհրապ)

**Բ.** Ձմրան ատուտ մը տաքուկ սննեակիս մէջ նախանշա  
կ'ընէի՝ բոլոր մասնիկներովս վայելելով այն կրջանիկ հանդատու-  
թեան ժամը, որ առաւօտեան ժամն է հիւանդանոցի մէջ: Յան.

կարծ մէկը արագ արագ դուռս ծեծեց: Գթութեան քոյրն էր, Մեծ-  
քոյրը, տարբերտը: Բոլորովին տժգունած՝ փնծի բացատրեց, որ  
այրուած կէն մը բերեր ու արդէն իսկ դործողութեան սեղանին  
վրայ պառկեցուցեր էին: Ջարմացայ. այրուածները հալուադիտ  
չեն. ինչո՞ւ ուրեմն այսքան այլայլեր էր այս կինը որ ահագին  
ցաւեր շոյած ըլլալու էր իր ծերունի ձեռքերուն մէջ... (Խ. Սեւակ)

**Վարժութիւն 3.** Գրել շարադրութիւն մը, որուն մէջ արտա-  
յայտուած ըլլան պարագաներուն բոլոր տեսակները: Փակադի-  
ծերու մէջ նշել անոնց տեսակները:

### 173. ԹԱԶՄԱԿԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

Նախադասութեան որեւէ անգամ կրնայ ունենալ նոյն տեսա-  
կի մէկէ աւելի լրացումներ. այսպէս՝ միեւնոյն անգամին հետ  
կրնան գործածուիլ Վրկու, Երեք, նոյնիսկ աւելի որոշիչներու Ասի-  
կա բնական է, որովհետեւ առարկայ մը լրիւ բնորոշելու համար  
յաճախ անհրաժեշտ կ'ըլլայ նշել անոր քանի մը յատկանիշները:

Օրինակ՝

Հաճին, պարտիզակցի մը, ինքն ալ սպասունի, սաճաւո,  
լուացարար, խոհարար կին եղած է ատենով, պարագային համե-  
մատ:

Չորրորդ յարկի խցիկին կէսը կը դրաւէր լայն, խորունկ ու  
բնդարձակ անկողինը:

Այսպէս ուրեմն, նախադասութեան մէջ կրնան դործածուիլ  
որեւէ անգամ մը լրացնող քերականօրէն համազօր, համարժէք  
որոշիչներ, յատկացուցիչներ, բացայայտիչներ, խնդիրներ ու պարագաներ, որոնք կը կոչուին բազմակի լրացումներ:

Բազմակի լրացումներն իրարմէ վը բաժնուին ստորաիւնտով  
կամ իրարու կը միանան համադասական շաղկապներով:

Օրինակ՝

#### 1. Բազմակի որոշիչներ՝

Գրաւ կտուցը թեւին տակ, ու ձեւ, խոնջ,

նուաղկոտ բիրով ըստպասեց

Իր վերջին սեւ վայրկեանին:

Իւր կտրն բայց ազդու հասակովն ամիրայութեան բարձրա-  
նալ կ'ուղէր:



## 2. Բազմակի ուղիղ խնդիրներ՝

Ոսկի շաղով օժեցիր  
Կապոյտ ծաղիկն ակերուն,  
Հիճերու պուրաք սարսուռն,  
Ու զետակներն ափնածիր:

Վարդի պէս կարմիր այտեր և ածուխի պէս սև յօնքեր ու մազեր ունի:

## 3. Բազմակի ձևի պարագաներ՝

Խրդի մը պէս, Բռոջ մը պէս, մօր մը պէս  
Սկո՛ւր, եկո՛ւր ճամբաներէն անուրջիս...

**Վարժութիւն 1.** Գտնել բազմակի լրացումները, ընդօրինակել լրացեալներուն հետ և ցոյց տալ, թէ նախադասութեան ի՛նչ անդամ են և ի՛նչպէս կը տրոհուին կամ կը կապակցուին.

Քանի որ ձևովէ շատերը յօդուածի մը մէջ աւելի իրենց գործը կը փնտոնն քան թէ արդարութիւն, ես ալ խորամանկութիւն կը բանեցնեմ և խօսքս կը փոխեմ:

Ոչ անցեալ և ոչ ալ աս դարուս մէջ շկայ ընկերութիւն մը, որուն կամ ատենապետն՝ կամ անդամ չ'ըլլայ...

Ոչ միայն երեսփոխանական ժողովոյ մէջ, այլ վարժարաններու ու թատրոններու մէջ ալ ըրած է ատենաբանութիւններ, որոնց թիւն այսօր վեց հազար ութը հարիւր ինսուներ վեցի կը հասնի:

Սուսուֆեան էֆէնտին կարճ հասակով, բարձր դադափարով, վայելուչ երիտասարդ մ'է:

Ստեփան Ասլանեան, աշակերտ նեմարանի, դարձեալ աշակերտ արքունի բժշկական դպրոցի, վարժապետ Ստեփան Փափաղեանի, կառավարիչ աղջային երեսփոխանական ժողովոյ, ծնաւ Մնիլը հաստատապէս գիտներ, բայց ծննդեան թուականին ճշդութեանը վրայ չենք կարող պնդել:

Սև արդարև քաջ բժիշկ ըլլալու համար նախ և առաջ ի՛նչ պէտք է ունենալ: Ապառաժի ձևով սիրտ մը: Ե՛տքը: Ետքը դանակ, ասեղ և դերձան: Ուրի՛շ: Մատիտ մը և կտոր մը թուղթ...

(Յ. Պարոնեան)

**Վարժութիւն 2.** Կազմել նախադասութիւններ բազմակի որոշիչներով, յատկացուցիչներով, տեղի, ձևի պարագաներով և միջոցի անուղղակի խնդիրներով:

Միտք արտայայտելու, նախադասութիւն կազմելու համար բառերը պատահական կերպով շենք դասաւորեր, այլ ընդունուած որոշ կարգով մը:

Օրինակ՝

Ես կարդացած եմ Ե. Օտեանի բոլոր գիրքերը:

Եթէ այս նախադասութեան մէջ դորձածուած բառերը դասաւորենք պատահական կերպով, միտք չ'արտայայտուիր: Ինչպէս՝ գրած բոլոր կարդացած եմ Ե. Օտեանի ես գիրքերը:

Հոս բառերու դասաւորութեան որեւէ կարգ չկայ, մինչդեռ վերի նախադասութեան մէջ այդ կարգը շատ որոշակի է. նախ դրուած է ենթական (ես), յետոյ՝ ստորոգեալը (կարդացած եմ), ապա գրուած է ուղիւ խնդիրը իր նախադաս լրացումներով (Ե. Օտեանի բոլոր գիրքերը):

Նախադասութեան անդամներու ընդունուած դասաւորութիւնը շարադասութիւն կը կոչուի:

Շատ ճկուն է հայերէնի շարադասութիւնը, որու շնորհիւ միևնոյն միտքը կրնանք արտայայտել նախադասութեան անդամներու տարրեր դասաւորութեամբ:

Այսպէս, վերը բերուած նախադասութեան շարադասութիւնը կրնանք փոխել ըստ այն բանի, թէ նախադասութեան ո՞ր անդամը մասնաւորապէս կ'ուզենք շեշտել:

1. Կարդացած եմ ես Ե. Օտեանի բոլոր գիրքերը:
2. Ես եմ կարդացած Ե. Օտեանի բոլոր գիրքերը:
3. Ե. Օտեանի բոլոր գիրքերն եմ կարդացած ես:
4. Ես Ե. Օտեանի բոլոր գիրքերը կարդացած եմ:

Շարադասութեան այս տարրեր ձևերը հետեւանք են նախադասութեան տրամարանական շեշտին տեղափոխութեան:

Տրամարանական շեշտը նախադասութեան միտքի շեշտն է:

Երբ նախադասութեան որեւէ անդամ կամ անդամներ կը փոխեն իրենց սովորական տեղը, շարադասութիւնը կը կոչուի շրջուն:

Ես կարդացած եմ Ե. Օտեանի բոլոր գիրքերը նախադասութեան շարադասութիւնը սովորական է, իսկ անոր շորս տարրերակներունը՝ շրջուն:

Շրջուն շարագասութիւնը կը գործածուի մասնաւորապէս շա-  
վածոյ գրուածքներու մէջ՝ թէ՛ տրամարանական շեշտի, թէ՛ յանգա-  
ւորման սլահանջքով:

Օ Ր Ի Ն ա կ՝

Իղձերու անհուն ուկկիւանոսին  
Վիճերուն յանձնուած նաւակ մ'է հոգիս...  
Արկանք, անարգանք՝ քամիներ ցրտին,  
Ժամանակին հետ կը հարուածեն զիս:

Քամիներ անսանձ թող մտրակին զիս,  
Շրջթայուած վազրի զայրոյթ մը հոգիս  
Կը սաղմնաւորէ ուժովն ամենի  
Հըսկայ փոթորկին, որ պիտի պայրի:

Առաջին քառատողին մէջ հոգիս ենթական յետագաս է դըր-  
ւած՝ շորրորդ տողին զիս բառին հետ յանդաւորուելու համար,  
երկրորդ քառատողին ամենի որոշիչը նոյնպէս յետագաս է դըր-  
ւած՝ պայրի բային հետ յանդաւորուելու համար:

Սովորական շարագասութեան համար անհրաժեշտ է գիտնալ  
հետեւեալ կանոնները.

Հայերէն լեզուի մէջ ենթական սովորաբար կը գրուի ստո-  
րոգեաւէն առաջ:

Օ Ր Ի Ն ա կ՝

Տղան մեկնեցաւ դիւր:

Մենե՛ կարճ արձակուրդով կը վերադառնայինե՛ մեր ծննդա-  
վայրը:

Որբա՛ն թանկագին, անփոխարինելի զանձե՛ր կան անոնց  
մէջ:

Գեղարուեստական և մասնաւորաբար շափածոյ խօսքի մէջ  
ենթական երբեմն կրնայ գրուիլ ստորոգեաւէն յետոյ:

Օ Ր Ի Ն ա կ՝

Երկիրը կարծես շոգի էր համակ, ու եռացող կարսաներ էին  
մեր սիրտերը:

Կոտորածի տարին այրի մընաց ան:

Հասարակաց փոսերուն

Մէջ ամուսինն իր կը հանդչի... կը նիրնէ

Տունն իր փոքրիկը սիրուն:

Հոս ան և փոքրիկը հնթակաները կը յաջորդեն ալրի մնաց, կը նիրհնէ ստորոգեալներուն:

Որոշիչը սովորաբար նախադաս կ'ըլլայ, այսինքն կը գրուի որոշեալէն առաջ:

Օրինակ՝

Մանկութիւն էր աչքերուդ մէջ տեսարար ծվացող մուր մը-  
շուշը փուռերուն առջև, ոունգերուդ ազան բացխփումը տա՛մ հա-  
ցերուն ըոյրին, լեղի լորձունքը շուր կոկորդիդ մէջ:

Հոս բոլոր որոշիչները նախադաս են. ծվացող, մուր որո-  
շիչները գրուած են մշուշը որոշեալէն առաջ, ազան որոշիչը՝  
բացխփումը որոշեալէն առաջ, իսկ տա՛մ, լեղի, շուր որոշիչները՝  
հացերուն, լորձունքը, կոկորդիդ որոշեալներէն առաջ:

Երբեմն, յատկապէս շփածոյ խօսքի մէջ, որոշիչը կը գրուի նաև յետադաս:

Օրինակ՝

Հարթեր է ձիւնն ամէն ճամբայ խորտուրտ...

Կը թռչաին ճերմակ ճանճերն անհամար՝

Մարմարելով հողէ տուները խոնարհ,

Կուրցընելով գիւղին գամփոները պահնուրդ:

Այս քառատողին մէջ խորտուրտ, անհամար, խոնարհ, պահնուրդ բառերը յետադաս որոշիչներ են ճամբայ, ճանճերն, տուները, գամփոները բառերուն համար:

Յետադաս ծաւալուն որոշիչը (որ կ'արտայայտուի մէկէ աւելի բառերով) որոշեալէն կը զատուի ստորակէտով, երբեմն ալ՝ բութով:

Օրինակ՝

Սիրուն, գրաւիչ արտաքինով ու շատ սլարդ արդուարդով  
աղջիկ մըն էր Մէրի, հագլիս Բաննինգ տաբեկան:

Ինծի այնպէս թուեցաւ, թէ տեղ մը տեսած եմ այդ գէմբը,  
անուշ, բարի ժպիտով ու հայրական նայուածքով:

Յատկացուցիչը սովորական շարագասութեան սլարագային  
նախադաս կ'ըլլայ:

Օրինակ՝ Արամիւն գիրքը, մեր դասարանի աշակերտները, իմ  
ընկերներս և այլն:

Չափածոյ խօսքի մէջ յատկացուցիչը Երբեմն յետադաս կ'ըլ-  
լայ:

Օրինակ՝

Գողացող լոյսին տակ լսարաններուն,  
Սառած մայթին վրայ, կը բալէ խոհուն:  
Կը թերթեմ անվերջ յուշերն անցեալի:  
Բոյբը խաղողին, Երգը ծղրիքին,  
Ու դեռ անհամար սրտի ձայնն չհին,  
Մայրական անուշ բառերուն նման  
Կ'օրօրեն հոգիս՝ սիրով անսահման:

Սովորական բացայայտիչը միշտ բացայայտեալէն յետոյ կը  
դրուի:

Օրինակ՝ Մենք՝ վտերես, գրաւած էինք առաջին կարգերը:

Մասնական բացայայտիչը կրնայ բացայայտեալէն թէ՛ առաջ  
և թէ՛ յետոյ դրուիլ. բացայայտեալին ու մասնական բացայայտի-  
չին միջև կրնան նոյնիսկ այլ բառեր դրուիլ:

Օրինակ՝

Որպէս ուսուցիչ, Վարդանեան շատ սիրուած է:

Բարբողիմէոս ազան ժամանակաւ մատով կը ցուցնեն եղեր,  
իբրև բարի մարդ, նիւրասէր մարդ, ազգասէր մարդ և բարե-  
պաշտ մարդ:

Վերջին նախադասութեան մէջ բացայայտեալին և բացայայ-  
տիչին միջև դրուած են քանի մը բառեր (ժամանակաւ մատով  
կը ցուցնեն եղեր):

Մասնական բացայայտիչը կրնայ դրուիլ բացայայտեալէն առաջ  
կամ վերջը:

Ինչպէս՝ Բարբողիմէոս ազան, իբրև բարի մարդ, նիւրա-  
սէր մարդ, ազգասէր մարդ և բարեպաշտ մարդ, ժամանակաւ մա-  
տով կը ցուցնեն եղեր:

Կամ՝ Իբրև բարի մարդ, նիւրասէր մարդ, ազգասէր մարդ  
և բարեպաշտ մարդ, Բարբողիմէոս ազան ժամանակաւ մատով  
կը ցուցնեն եղեր:

**Վարժութիւն 1.** Որոշել ենթականերուն, որոշիչներուն, յատ-  
կացուցիչներուն և բացայայտիչներուն շարադասութիւնը. նախա-  
դասները դատ ընդօրինակել (իրենց լրացեալներուն, իսկ ենթական՝  
ստորոգեալին հետ), վերջադասները՝ դատ.

**Ս.** Անոնցմէ մէկն էր Մահմէտ Ինձէն որ բժշկական վարժարանի վերջին դասարանը հասնելէն յետոյ ստիպուել էր կիսատ թողուլ ուսումը, ծայրայեղ շքաւորութեան հետեւանքով, և այժմ կ'աշխատէր վառավարական հիւանդանոցին մէջ, որպէս բժիշկի օգնական...

Մէջիտ էֆէնտիին հետ իր նոր հանդիպումը տեղի ունեցաւ աւելի պաշտօնական սլայմաններու մէջ: Չկար առաջին հանդիպումին բացառիկ մտերմութիւնը: Այնպէս որ էօմէր Տօղուն ստիպուեցաւ յարգել բացուած անջրպետը, ու, որպէս ստորագաս մը, պատմեց բոլոր մտադրութիւններն ու առած քայլերը: Մանրամասնօրէն նկարագրեց Կլոտկիինին հետ ունեցած իր սկզբնական տեսակցութիւնները:

(Գ. Սևան)

**Բ.**

*ՏՐՏՈՒՄ ՈՔԻ...*

Թափառամու ճամբուս վրայ բերթողի,  
Տրտում ողի— ահա դարձեալ դտայ բեղ,  
Հո՛ն ուր բեղի օր մը մինա՛կ ես թողի,  
Քարին վրայ, ադրիւրին մօտ, կը յիշե՛ս:

Մեր հրաժեշտի օրէն ի վեր դուն այսպէ՛ս,  
Հեռուն յառած մութ աչքերդ սևածիր՝  
Սպասեցիր ճամբուս վրայ տրտմապէս,  
Ու արցունքիդ լոխկ երգը միշտ լացիր:

Ես հեռացա՛յ տարտամի մէջ խօշարար,  
Եւ երազած ճամբաներէն անդադրում,  
Գիշերներու հովի նման մեղմարար,  
Վերջալոյսի՛ թըռչուններուն պէս տրտում:

Ու վաղեցի — անուրջներու ուխտաւոր —  
Թաւշին վրայ կեանքի ծիծղուն մարմանդին,  
Ու վէրքերու ծաղիկները ախտաւոր  
Տարի մինչեւ հորիզոնները մըթին:

(Բ. Սևակ)

**Վարժութիւն 2.** Բնգործնակել որոշիչներն ու յատկացուցիչները իրենց լրացեալներուն (որոշեալներուն ու յատկացեալներուն) հետ. նախադասները դարձնել վերջադաս, վերջադասները՝ նախադաս.

Ո՛վ պիտի երգէ բու անփառունակ  
 Կեանքիդ միամիտ տաղը, մատա՛ղ ջուր,  
 Որ լոյժ դայլայլի մը պէս շարունակ  
 Կը փրփրիս, կ'երթաս դաշտերուն մէջ ուր  
 Գարե՛ր դարերով հ'րգդ է գոհունակ:

Ո՛վ պիտի պատմէ վաղքերդ մշտուոր  
 Վայրի վարդերու երազանքն ի վար.  
 Ո՛վ պիտի ցոյց տայ փրփուրներուդ խոր  
 Հեւ ի հեւ կեանքիդ սէրերն հոգեվար,  
 Տարփոտ սէղերու շոյանքն ալ բուր:

Հուռ անբջանքի պահուն ցայգային,  
 Ո՛վ պիտի պատմէ խիճերուդ լեզուն,  
 Ու հէքիաթունակ սէրն ուռննիին,  
 Երբ մութ գիշերով իրեն ազազուն  
 Ոստերը փախշող հոգւոյդ կը հայի՛ն...

Միամի՛տ վտակ, դարերէ ի դար  
 Գուն մամոտ ճամբէդ կ'երթաս անմուր.  
 Ու երբ կը մեռնին շուրջդ անմխիթար՝  
 Գարնայնի գոյն գոյն ծաղիկներդ բուր,  
 Երկու բարի մէջ կ'երգես անդադար:

(Ռ. Սևակ)

175. ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՈՐԾԱՆՈՒՈՂ, ԲԱՅՅ  
 ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ ՉԵՂՈՂ ԲԱՌԵՐ

Նախադասութեան մէջ գործածուող բոլոր բառերը շին, որ  
 նախադասութեան անդամ կ'ըլլան:

Օ ր ի ն ա կ՝

Ո՛հ, միքէ բառ կամ խօսք ունի՛

Առշալոյսը, որ կը բռնկի...

Ստորագծուած նախադասութիւնը կազմուած է եօթը բառերէ,  
 սակայն անոնցմէ միայն չորսը նախադասութեան անդամ են (ար-  
 շալոյսը՝ ենթակայ, ունի՛՝ ստորոգեալ, բառ, խօսք՝ ուղիղ խնդիր-

ներ): նոյն նախադասութեան մէջ գործածուած երեք բառեր (ո՛հ, միթէ, կամ) նախադասութեան անդամ չեն. ո՛ն-ը ցաւի զգացում կ'արտայայտէ և որոշ երանդ մը կու տայ նախադասութեան, մի-րէ-ն՝ երկրայութիւն, տարակուսանք, իսկ կամ-ը կը շաղկապէ ուղիղ խնդիրները (բառ, խօսք):

Նախադասութեան անդամ չեն ըլլաւ **կապերը և շաղկապ-ները:**

*Օրինակ՝*

*Վարդը և մեխակը բուրումնաւէտ ծաղիկներ են:*

*Մանկան պէս կը վազէր առուն:*

*Կապերը սակայն կապուող բառերու հետ նախադասութեան անդամ կ'ըլլան, ինչպէս երկրորդ օրինակին մէջ, ուր պէս կապը մանկան բառին հետ միասին նախադասութեան անդամ է և կը ցուցնէ գործողութեան ձևը:*

Նախադասութեան անդամ չեն նաև **կոշականներն ու միջանկեալ բառերը:**

#### 176. ԿՈՉԱԿԱՆ

Կոշական կը կոչուին նախադասութեան մէջ գործածուած այն անունները, որոնց միջոցով կը դիմեն մէկու մը կամ բանի մը:

*Օրինակ՝*

*Եկո՛ւր, որդեան՛կ, հայրենի տունդ շէնցո՛ւր:*

*Ինչո՞ւ ապշած ես, լնա՛կ,*

*Ու չեն խայտար քո աշևակք...*

*Ո՞վ մանիշա՛կ, մանիշա՛կ,*

*Ինչո՞ւ այդպէս դիմիկոր*

*Նայիս հողին սգաւոր...*

*Հոս ստորագծուած բառերը կոշականներ են:*

*Կոշականները կը դրուին նախադասութեան սկիզբը, վերջը կամ մէջտեղը: Անոնք միշտ կը տրոհուին ստորակէտով և վերջին վանկի ձայնաւորին վրայ շեշտ կամ բացագանչական նշան կը կրեն:*

*Օրինակ՝*

*Ռարեկա՛մ, ըսէ՛, ո՞ւր կը տանի այս ճամբան:*

*Լեմա՛ն, Լեմա՛ն, սլատմէ՛ ինձ սիրտդ լսիկ:*



հօսէ՛, Լևւա՛ն, ձայն տուր շուրից ալքերէն:  
Պատմէ՛ դասդ, Վանկէ՛:

**Վարժութիւն.** Գտնել կոշականները և բացատրել սենոնց կէտադրութիւնը.

**Ա.** — Ուզելիքս դուն հասկցիր, կ'ամչնամ կոր ըսելու, քուզում Մարտիրոս աղա:

— Մի՛ քաշուիր, Համբարձո՛ւմ աղա, ըսէ՛:

— Քուզո՛ւմ Համբարձում աղա, ճանը՛մ Համբարձում աղա, ոտքդ պահեմ, Համբարձո՛ւմ աղա... Կ'ամչնամ կոր ըսելու, քուզո՛ւմ Համբարձում աղա, ստակ մը շունիմ:

**Բ.** — Ո՛ւր էիր մինչև հիմա, մա՛րդ Աստուծոյ:

— Չես ըսեր, կնի՛կ, թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք, կիրակի օրը քուէարկութիւն պիտի կատարուի, և բոլոր անդամները պատուաւոր մարդիկ պիտի ըլլան...

— Այդ խօսքերը վերջն ալ կ'ընենք, Մանո՛ւկ աղա, գնա՛ մտաւճառէն քիչ մը միս առ բեր:

— Տիրացու Մարտիրոսին զլխուն եկածը շես ըսեր, կնի՛կ, խնդճին կինն այս գիշեր մազ մնացեր է, որ մեռնի եղեր:

**Գ.** — Մա՛րդ Աստուծոյ, ամէն գիշեր գինո՞վ պիտի գաս սասնկ:

— Գուն ալ ամէն գիշեր սա խօ՞սքը պիտի ընես, կնի՛կ:

— Գինով մի՛ գար, որ չըսեմ:

— Մի՛ ըսեր, որ չգամ:

Տեսա՞ր, ընթերցո՞ղ, մարդը յանցանք շունի եղեր, բոլոր յանցանքը կնկանն է, որ կը բարկացնէ կոր իր էրիկը և գինով ըլլալու պատճառ կ'ըլլայ կոր:

(Յ. Պարոնեան)

## 177. ՄԻՋԱՆԿԵԱԿԱԿՈՒՄ

Միջանկեալ բառերը շնն կապուիք նախադասութեան անդամներուն հետ և կ'արտայայտեն խօսողին այս կամ այն բնոյթի վերաբերմունքը:

Օրինակ՝

Այն դրամներն կեղծ են եղեր, ա՛ն, չարաչար խաբեցին դիս... Ի՞նչպէ՞ս պիտի նայիմ տղջկանս երեսը... սաա՛ղ, թեթեալ

բևս մ'ունէի, մուրացկանի տոսպրակ մը, և տրտնջացի, իսկ հիմա սրտիս վրայ երկաթէ ձեռք մը կայ:

Գարունը, ի հաւրկէ, ամենադեղեցիկ եղանակն է:

Հոս ա՛ն, աւա՛ղ, ի հաւրկէ՛ բառերը միջանկեալ են. ա՛ն և աւա՛լ բառերը կ'արտայայտեն խօսողին վիշտի, ափսոսանքի զգացումները, իսկ ի հաւրկէ՛ բառը կ'արտայայտէ խօսողին հաստատական վերարեմունքը: Այս բառերը կ'երանգաւորեն նախադասութիւնները:

Միջանկեալ բառերը նախադասութեան անդամներէն կը զատուին ստորակէտով:

Իբրև միջանկեալ բառեր կը գործածուին ձայնարկութիւնները, որոնցմով խօսողը կ'արտայայտէ իր զգացական վերաբերմունքը:

Օրինակ՝

1. Է՛ն, մի՛ վախնաք ասեղ մ'անգամ պէտք չէ մեզ,

Այլ հայրենի սոսկ ըզդացում մ'աղեկէզ:

2. Ա՛ն, վայրկեանին մէջ՝ կրկին

Վայրկեաններ կան, իրարու

Գէմ յանդիման, կը նային

Զիրար առանց ճանչնալու:

3. Ո՛, դուն նշանաւոր բանաստեղծ ես եղեր, և մենք չէինք գիտեր մինչև հիմա:

4. Է՛յ, հիմա ի՞նչպէս եղաւ մեր Պօղոսը:

Միջանկեալ գործածութիւն ունին կարգ մը **եղանակաւորող բառեր**. Ինչպէս՝ ի հաւրկէ, անշուշտ, հաւրկաւ, յիւալի, այո, ոչ և այլն:

Ասոնցմով խօսողն իր հաստատական կամ այլ բնոյթի վերաբերմունքը կ'արտայայտէ եղածին կամ խօսուածին նկատմամբ:

Օրինակ՝

1. Յ. Պարոնեան, յիւալի, չգերադանցուած երգիծարան մըն է հայ գրականութեան մէջ:

2. Հայրենիքի կարօտը, անշուշտ, մենք միշտ կը զգանք:

3. Ատանկ բան մը պատահեցաւ, այո՛, բայց դեռ որոշ չէ անյայտացած ըլլալը:

4. Ա՛շ, շենք տար մեր հայրենին, ըսաւ Վարդան:

Պէտք է դիտնալ, որ եղանակատրոդ բառերը միշտ միջանկեալ շեն ըլլար, հետեւաբար, միշտ շէ, որ նախադասութեան անդամներէն կը դասուին ստորակէտով:

Օրինակ՝

1. Միրէ դուն շե՛ս լար, Հրաշեա՛յ, անա երկնադոյն աշքերդ արօղտած հն:

2. Արդեօք՝ ճշմարի՛տ են քու բոլոր պատմածներդ:

Սակաւարիւ ուրիշ բառեր եւ կրճան ըլլալ միջանկեալ: Ինչպէս՝ լաւ, աղէկ, շիտակը, ինչ, այսպէս և այլն:

Օրինակ՝

1. Կաւ, ուրեմն, մի՛ քաշուիք, ըրէք ձեր հարցումները:

2. Քեզի համար թերեւս այդպէս է, բայց ոչ ինծի համար: Ի՞նչ, միթէ իմ փախչելովս ու հօրդ աղատումովը ամէն բան կը լմենա՞յ:

3. Մենք, շիտակը, լաւ եկանք:

4. — Հայրը այսպէս ուղեց, անկէ՛ զտա, աճադարանքի մէջ էինք:

— Աղէկ, բայց պարապ տեղը առիթ տուիք որ մէկը կամ միւսը պարապ խօսքեր մէջտեղ հանեն:

5. Եթէ՛ զիս տեսնելու պէտք ունենաս՝ կրնաս հոս դալ, այսպէս, իրիկունք, ճաշէն անմիջապէս ետքը:

Իրրեւ միջանկեալ կրնան դործածուիլ նաև բանի մը բառակապակցութիւններ. ինչպէս՝ շատ աղէկ, անլի աղէկ, շատ լաւ, խօսքը մէջերևիս, այնպէս շէ՛, ըստ իս, ըստ երևոյթին, ըստ իրեն և այլն:

Օրինակ՝

1. — Մի՛ կարծեր թէ շատ դժուարին ծառայութիւններ պիտի խնդրեմ քեզմէ:

— Անլի աղէկ, ըսէ՛ ինչ որ կ'ուզես:

— Նախ և առաջ ըսեմ որ ծածկարար եկած եմ հոս և թերաօթէլ մը իջած եմ:

— Շատ աղէկ, բայց ինչո՞ւ համար, ալ ի՞նչ պէտք ունէիր ինքզինքդ կրկին վտանդի ենթարկելու:

2. — Փամանակին հասանք, այնպէս շէ՛, — գոչեց Զարուհի՛ զլարթ ձայնով մը:

3. Բայց վերջապէս լաւ էր որ բնաւ տեղի չտրուէր, որովհետեւ, խօսքը մէջերնին, իրաւցնէ ամէն մարդ կասկածելու իրատունք ունէր:

**Վարժութիւն.** Հետեւեալ հասուածներուն մէջէն գտնել միջանկեալ բառերը և որոշել, թէ ի՛նչ խօսքի մասով արտայայտած են անոնք.

**Ա.** Ելի՛ր հոն անգամ մը, մէկ կողմէն Եգէականը, միւս կողմէն Մարմարան, ո՛ւյ, մէյ մը շփշէ՛ հովը, կ'այրէ՛ կուրծքդ, կը մրկէ՛, ճանտաշ: Դուն պոլսեցի՛ ես, չէ՞, շեմ կարծեր որ Պոլիսդ աա իմ ծննդավայրիս նման գեղեցիկ ըլլայ. գրողը տանի, այստեղերէն ուրիշ տեղ ալ շեմ ուղեր տեսնել, շնեղանաս, հէ՛, ամէն մարդու ծննդավայրը դրախտ է իրեն համար: Գիտես, ես ծովի մարդ եմ, հայրս ձկնորս էր, արիւնը, կեանքը տուաւ այս ճամբուն:

(Վ. Սեւան)

- Բ.** — Միթէ՛ անգործագրելի ծրագի՞ր մըն է ասիկա:  
— Զէ՛, բայց Գժբախտաբար բոլորովին անկարելի է:  
— Բոլորովին անկարելի՞,— գոչեց երիտասարդը յուշումով:  
— Այո՛, աղա՛ս, Գժբախտաբար: Զարուհին այլեւս չի կրնար սամուսնանալ ձեզի հետ:  
— Ի՞նչ, ի՞նչ,— գոչեց Վահան,— կը պաշտտիմ, Բարսեղ էֆէնտի, դիս մի՛ շարշարէք այսպէս...  
— Զարուհին ամուսնացաւ,— գոչեց վերջապէս վաճառականը:  
— Ամուսնացաւ... չէ՛, չէ՛, անկարելի է, դիս կը փորձէք:

(Ն. Օսեան)

- Գ.** — Իրաւցնէ շատ դովեստներ լսած եմ անոր մասին... Դեռ քանտն է, այնպէս չէ՞:  
— Դժբախտաբար, և աղատելու ալ առայժմ յոյս չկայ:  
— Ո՞վ քիտէ,— պատասխանեց միւսը խորհրդաւոր կերպարանքով մը,— կարելի է անակնկալ դէպքեր կը պատահին ու բանտերու դուռները կը բացուին...:

Աշոտ սկսաւ ուրիշ կարգ մը տեղեկութիւններ հարցնել:

- Իսկ նիւթական վիճակնի՞դ,— հարցուց նորեկը:  
— Ափսոս, գրեթէ ոչինչով կ'ապրինք ու յոյսերնիս ձեր վրայ դրած ենք: Եթէ Վահանն ալ չըլլար՝ շենք դիտեր թէ ինչ պիտի ընէինք ամիսէ մը ի վեր:

- Ուրեմն անոր նիւթական կարողութիւնը տե՛ղն է:
  - Անշուշտ, կարենցի հարուստ վաճառականի մը զաւակն է:
- (Ե. Օտեան)

**Պ.** Նորայր.— Խօսէ՛, միթէ նոր թշնամի՞ք կ'արշաւեն Սերաստիոյ վրայ:

**Զինուոր.**— Այո՛, Վեհա՛ղն տէր:

**Նազենիկ.**— Ո՛հ, միթէ շատ մօ՞տ են մեզ, Աստուած իմ...

**Զինուոր.**— Ո՛չ, վաղ առաւօտեան դէմ հաղիւ հոս հասնին:

**Նորայր.**— Թող ամէն եկեղեցեաց զանգակները հնչուին՝ այս գոյժը բոլոր քաղքին մէջ շուտով տարածայնելու համար... Օ՛ն, ուրեմն տուած պատուէրներս փութով թող կատարուին, քա՛ջ Հայկաղն:

**Զինուոր.**— Անհո՛ղ եղիր, Վեհա՛ղն տէր, ջանք ու կեանք հայրենեացս նուիրելու պատրաստ եմ ես:

**Նորայր.**— Արի՛ զինուոր, երանի թէ ամէն հայ քեզի պէս զգար... Ա՛հ, ե՛րբ պիտի ջնջուի աշխարհիս վրայէն թագը, փառքը և միայն եղբայրութիւնը իր մանիշակներովը մարդոց ճակատք պիտի պճնէ փոխանակ դափնիի. բայց դու, Հայաստա՛ն, դու միշտ փուշեր պիտի տեսնես:

**Նազենիկ.**— Ե՛րբ խաղաղութիւն պիտի դտնենք մենք այս աշխարհիս վրայ, հա՛յր իմ:

(Պ. Գորեան)

## 178. ՀՈՂՈՎՆԵՐՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՈՒ

Նախադասութեան մէջ գոյականները, դերանունները և գոյականարար գործածուող ուրիշ բառեր կը կատարեն տարրեր պաշտօններ, վերջիններու համապատասխան գրուելով այս կամ այն հոլովով:

Օրինակ՝

Տղայ մը պարտէզէն վարդ մը քաղեց նախադասութեան մէջ սղայ, վարդ բառերը գրուած են նոյն ձևով, իսկ պարտէզէն բառը՝ այլ ձևով:

Հոս երեք գոյականները երեք տարրեր պաշտօններ կը կատարեն՝ համապատասխան հոլովով գրուելով (տղայ մը՝ ուղղական, վարդ մը՝ հայցական, պարտէզէն՝ բացառական):

Սակայն պէտք է դիտնալ, որ հոլովներու թիւը սահմանափակ է (6 հոլով), իսկ գոյականները նախադասութեան մէջ բաղմամբիւ պաշտօններ կը կատարեն: Ուստի նոյն հոլովով կրնան արտայայտուիլ բանի մը պաշտօններ, ընդ որում անոնցմէ մէկը հիմնական կ'ըլլայ, միւսները՝ երկրորդական:

Պէտք է յիշել, որ հայերէնի 6 հոլովներէն կայուն ձև ունին միայն բացառականը և գործիականը (բաց. ծառէ(ն), գործ. ծառով), իսկ ուղղականը և հայցականը, սեռականը և տրականը նոյն ձևն ունին (բացի դերանուններէն): Ուստի հոլովներու պաշտօնները կը ծառայեն որպէս միջոց ձևով իրարու նման հոլովները տարբերելու համար:

Օրինակ՝ ծառ ձևը կրնայ ըլլալ և՛ ուղղական (ծառ մը կար հոն), և՛ հայցական (ծառ մը կտրեցի). ծառին ձևը և՛ սեռական է (այս ծառին արմատը փտեք է), և՛ տրական (կոթնեցայ ծառին): Նախադասութենէն դուրս բառի մը հոլովը որոշել կարելի չէ միշտ: Սովորաբար հոլովը կ'որոշուի նախադասութեան մէջ, ուր յայտնի կ'ըլլայ, թէ հոլովական ի՛նչ իմաստ և պաշտօն ունի տուեալ բառը: Իսկ այդ կարելի կ'ըլլայ այն ատեն միայն, երբ դիտնանք հոլովներու պաշտօնները նախադասութեան մէջ (այսինքն թէ ի՛նչ պաշտօններ ունի ամէն մէկ հոլով):

Հոլովներու միջոցով արտայայտուած պաշտօններ անոնց կիրարկութիւնն են:

## 179. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈՂՈՎԻՆ ԿԻՐԱԿԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ

Ուղղական հոլովով կը դրուին.

**Ա.** Ենթական. ուղղականը ենթակայի նուրմ է.

Օրինակ՝

Հովնա կ'անցնին:

Գիշերն անուշ է:

Օդը քաղցր է այս դիշեր:

Գարունն եկաւ:

**Բ.** Քաղաքեալ ստորոգեալին վերադիւր.

Օրինակ՝

Պետրոսը լաւ վարպետ մըն է:

Անիկա ինծի մարդ թուեցաւ:

Գուն բանաստեղծ Նանապետն էս:  
Սուրբ աճիւնիդ սալտոնն է այդ ծովն հիմա:  
Բարձունքներու լայնշի նամբան ըլլայի:

#### Գ. Գոյական որոշիչը.

Յ Ր Ի Ն Ա Կ՝

Վարպետ Գրիգորը աղուոր սեղան մը շինեց:  
Համբարձում նըրայրս մեկնեցաւ քաղաքէն:  
Հօրեղբայր Գրիգորը նուէր մը բերաւ մեզի:  
Արծաք լոյսերն հիմակ տակաւ կը ծաղկին:

Մ Ա Ն Ո Ր Ա Ր Ի Ը Ն. Կոշականք ձեռով նման է ուղղականին, բայց ուղղական հոլով չի համարուիր, քանի որ չի կապուիր նախադասութեան անդամներուն հետ և որեւէ պաշտօն չունի:

Նկո՛ւր, Լըրա՛յր, փառարաններ մեր քաղցրարառ հայոց լե-  
զուն:

Նղեգնեայ գրչով երգեցի կարօտ,

— Ձեզի ընծա՛յ, հա՛յ պանդուխտներ:

Հերո՛ս ընկեր, մօտեցի՛ր:

Համբոյրի՛դ, զիշե՛ր, պատուհանս է բաց:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածին մէջ ցո՛յց տուէր են-  
թականները.

Հովիտին երկու կողմը՝ փոքրիկ, ճերմակ տուներ և մեծ պան-  
դոկներ շարուած են, որոնք ձեռք ձեռքի տուած՝ լինն ի վեր  
մագլցելու ճիգ մը փորձեր են կարծես, բայց ճարահատ՝ առեր  
նստեր են լերան փէշերուն վրայ կանանչով և դունագեղ ծաղիկ-  
ներով շրջապատուած:

Աչքս կ'իյնայ առուին քով ձեւացած փոքրիկ աւազանի մը  
երեսը, ուր ջուրերը կանդ կ'առնեն պահ մը, կը հանդշին ու կը  
տաքնան քիչ մը և նորէն կը վաղեն երգելով: Աւազանին մէջ  
գորտի մանր շերեփուկները կը վխտան, երկար ու թափանցիկ  
պոչերով, որ միշտ կը շարժին: Անծանօթ անկիւնէ մը՝ շափա-  
հաս գորտի մը կոկոտցը կը բարձրանայ մերթ ընդ մերթ, լեցուն,  
տիրական նշանակով մը:

(Ռ. Նուրիկեան)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածներէն ընդօրինակել ուղ-  
գական հոլովածները և որոշել անոնց պաշտօնը.

**Ա.** *Մշա՛կ, ցանէ՛.— յանուն տանդ սեղանին  
Թեւիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ.  
Վազը՝ նետած ցորեննկրդ այդ կը թափին  
Օրհնութեան պէս թոսնիկնէրուդ զլխուն վրայ:*

*Յանէ՛, ցանէ՛.— նոյնիսկ հեռու սահմանէն,  
Աստղերու պէս, ալիքներու պէս ցանէ՛:  
Սիտերն ի՛նչ փոյթ, թէ հատիկներդ կ'աւարեն.—  
Տեղը Աստուած պիտի մարդրիտ սերմանէ:*

*Էցո՛ւր ախօսն, յորդէ՛ հերկերը բերրի,  
Հողին ծոցէն ոսկի լոյսեր թող հոսին:  
Օրը ահա կ'իբրիկանայ.— կ'երկարի  
Շուրը թեւիդ հորիզոննէ՛րն աստղային:  
(<sup>1</sup>Ի. Վարուժան)*

**Բ.** *Տափա՛ն, տափնէ՛, կոշտերն հարթէ՛,  
Թաղէ՛ ցաներն հողին մէջ.  
Յորենն՝ ոսկի, սերմն յակինթ է  
Երբ միանայ հողին գէջ:*

*Տափա՛ն, ըմբոստ խութը փշրէ՛,  
Գոցէ՛ վէրքերը խսփին.  
Հերկն աննուաճ ալիք մըն է  
Զոր կ'անդորրես դուն հեշտին:*

*Տափա՛ն, տափնէ՛, կոշտերն հարթէ՛,  
Փակէ՛ բերանն ախօսին՝  
Ուր ամէն մէկ ցորեն սաթ է,—  
Թո՛ղ սարեակներ չը տանին:  
(<sup>1</sup>Ի. Վարուժան)*

**Վարժութիւն 3.** Հետեւեալ գոյականները գործածեցէ՛ք իր-  
րեւ ստորոգելիական վերագիր.

*Ուսուցիչ, բնկեր, զիրք, ծագիկ, զևտ, օր, հայրենիք, մարդ:*

**Վարժութիւն 4.** Իրրեւ որոշիչ գործածեցէ՛ք հետեւեալ գոյա-  
կանները.

*Քոյր, բանուոր, բաղաբացի, ոսկի, բար, Գագիկ, Յակորեան,  
Բժիշկ:*



**Վարժութիւն 5.** Իրրեւ կոշական գործածեցէ՛ք հետեւեալ բաները.

Ժողովուրդ, մայր, աշխարհ, լուսին:

### 180. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՒՈՎԻՆ ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆԸ

**Հայցական հոլովով կը դրուին.**

**Ա.** Ուղիւ խնդիրը (կրող խնդիր), որ հայցական հոլովին հիմնական պաշտօնն է:

*Օրինակ՝*

*Մենք կը սիրենք մեր Հայրենիքը:*

*Կանչէ՛ սա աշակերտը:*

*Հունձ՛ կը ժողվեմ մանդաղով:*

*Մայրի՛ կ, ինձի ծիլ մը բեր:*

*Սարգն անոնց վրայ է փոներ պատմունաները մոխրոտ:*

**Բ.** Տեղի պարագան.

*Կ'երթամ քաղաք:*

*Գետինը, խոտերուն վրայ, գիշերուրնէ մնացած ցօղը կը շոգիանար արեւին ջերմութենէն:*

*Դաշտին զոզը հիւղակ մը կայ կանանչներով ողողուած:*

*Դաշտը իջաւ արիւնի:*

*Կը նիրհէ տունն իր փոքրիկը սիրուն:*

*Նուանի ցոլքեր կ'անհետին*

*Խորքը ծովուն հոլանի:*

Արեւլահայերէնի մէջ հայցականով կը դրուի միայն ուղեւորութեան տեղի պարագան՝ շարժում ցուցնող բայերու մօտ: Օրինակ՝ Գետն էմ դաշտ, անտառ, գիւղ, քաղաք: Իսկ այլ բայերու մօտ տեղի պարագան հայցականով չի դրուիր. օրինակ՝ կարելի չէ ըսել՝ ապրում եմ քաղաք, սպասում եմ տունը, դիրքը թողել եմ սենեակը, այլ՝ ապրում եմ քաղաքում, սպասում եմ տանը, դիրքը թողել եմ սենեակում:

**Գ.** Ժամանակի պարագան.

*Այս գիշեր անձրևս եկաւ*

*Ամառը հանգստացանք գիւղը:*

**Դ.** Չափի պարագան: Այս պարագային հայցական հոլովին հետ կը դրուի թուական մը կամ ուրիշ բառ մը:

Օրինակ՝

Հոն եփնզ տարի ապրեցաւ:

Երեւ ամիս սպասեց:

Նաւը կտրեց ճամն մղոն:

Գիրքը կ'արժէ կէս ոսկի:

**Ե. Քունի մը կապերու (իրրեւ, որպէս, դէպի, զերթ, մինչև, ինչպէս, քան և այլն) խնդիրներ:**

Օրինակ՝

Երբև ոտներնի մը քեզ սիրեցինք:

Հեղեղ մը սև դէպի հարաւ կը քայէր:

Ու ծփայի վերք ոսկեսար վարագոյր:

Եւ կանգնեցան զերք պատուաւ մ'ոճիրին դէմ արիւնոուշաւ:

Սովը կ'ուզէ ոոնսձայն նետուիլ երկինքը մինչև:

**Վարժութիւն 1. Հետեւեալ հատուածին մէջէն գտէ՛ք ուղիւղ խնդիրները.**

Մութին հետ ելաւ Մարտիրոս. խանութը ալեց, առջի օրուընէ անկարգ թողուած տուփերն ու ծրարները տեղը դրաւ, վաճառատան մեծ ապակին սրբեց ու երկաթեայ փեղկերը բացաւ:

Վեց ամիսէ ի վեր այս մաղաղային մէջ կ'աշխատէր իր հօրեղբորը տեղ որ տասը տարի իրրեւ ընդհակիր ու սլահապան ծառայելէ վերջ հայրենիք վերադարձած էր, Մարտիրոսը թողլով իր տեղը:

Տասնինը տարու կար շկար. բարձրահասակ ու մենծ մենծի էր, ինչպէս կ'ըսէին կիները, բայց իր թուփ ու դեղեցիկ դէմքը պատանութեան փափկութիւնը կը պահէր առնական դրոշմը առնելով հանդերձ. սեւահեր ու սեւաշուի էր. քաղցր, վեհերոս և սղայական բան մը ունէր իր նայուածքը. լայն ու դուրս ցցուած կուրծքը իր հզօր ու հպարտ իրանին ըլլոր առաւելութիւնները ցոյց կու տար: Կասոյտ շուխայէ ձեռք մը հազուատ շինել տուեր էին իրեն որ աղէկ կը վայելէր իր կորովի ու ստոյգ մարմնին. ջրապինդ բազուկները հազուագիւտ ուժ մը պէտք էին ունենալ, մինչդեռ կարձ ու ամփոփ փոխանին զանդապանը աղդրերուն հարուստ ու բարեձև լեցունութիւնը կը հաստատէր: Ամէնքը համակրելի կը գտնէին զինքը:

(Պ. Զօհրապ)

**Վարժութիւն 2. Յո՛յց տուէ՛ք հայցական հոլովով դրուած բառերը և որոշեցէ՛ք անոնց պաշտօնը.**

**Ա.** Սկսած էինք փնտուել մեր հեռուոր բազաքը, որ շոր էր, նեղ ու մութ փողոցների ունէր, բայց աւելի մտերիմ էր ու տաքուկ:

Նոյնը չէինք նաև հաշիկին հետ: Նոր և աւելի մեծ ընկերների դատած էր տեղացիներէն, և ամբողջ օրը կ'անցընէր անոնց հետ: Կը մնայի մինակ, ու սև, դէշ բան մը օրէ օր կը մեծնար մէջս: Առանձնութիւնը կը սկզմէր կուրծքս, մզկելով որ նոր ընկերներ փնտուեմ, ու նոյն ասան հեռու փախիմ ընկերներէ:

Սր մը անդրադարձայ թէ ծովը դարձած է կեանքս լեցնող միակ իրականութիւնը: Յերեկը, լողանքի կամ պտոյալի պահուն ընկերներու հետ ջուրի սովորական տարածութիւնն էր, բոլորին տեսած ու բոլորին վայելած գեղեցկութիւնը ուրիշներուն համար և ինծի համար:

Կը պատահէր որ խումբով դանէինք անծանօթ նոր անկիւն մը, գեղեցիկ տեսարանի մը դիտարանը, ուրկէ ծովը կ'երևէր աւելի շքեղ ու փարթամ կերպարանքի մը մէջ: Միտանբու հետ բամենէ կտր իրենց դոհունակութիւնն ու հրճուանքը, հետագայ վայելքի խնայողութիւններ կ'ընէի ես ինծի համար, այն համոզումով, որ իրենցմէ դադտնի պիտի գամ նոյն տեղը աւելի կտրը, դիշերը:

**Բ.** Քանի մը շարաթը բուսց որ վեր-վար ընէինք՝ ժամերով հեռու ծովախորշերը, շրջակայ բլուրները, հին բերդին աւերակները, և հետզհետէ կծկուէինք, ամփոփուէինք մենք մեր վրայ, մեր տնակներուն առջև, տափարակ առողութիւն ու ծովուն դէմ: Անհաւատալի էր երևոյթը: Գեռ ամիս մը առաջ մեր նախկին շէնքին մէջ պատերը կը խնդդէին մեզ, բակը բանտ կը թուէր ու մեր միակ մտածումը փախտասան էր, ազատութիւնը: Ու հիմա, երբ ազատ էինք, թափը կը պակտէր, մզում չկար և տրամադրութիւն չկար: Ընկրմուած էին նաև հաշիկին բոլոր նաւերը, դեռ առադաստ շղարկած: Հեռուոր բոլոր Ամերիկաները ու Ռուսական կղզիները, մէկէն կորսնցուցած էին իրենց հմայքը:

(Ա. Մատուկեան)

**Վարժութիւն 3.** Հետևեալ բառերը նախադասութիւններու մէջ դրժածել հայցական հոլովով (տարրեր պաշտօններով).

Մտո, փողոց, դետ, ծաղիկ, օր, տարի, զիւղ, անտառ, տուն, ոտնաշափ, դոյլ:

Սեռական հոլովով կը դրուին.

**Ա.** Յատկացուցիչը, որ սեռական հոլովին հիմնական պաշտօնն է: Յատկացուցիչը այլ հոլովով չի դրուիր:

Օրինակ՝

Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է:

Վարդանի փառքն անմահ է:

Լուսնի լոյսը ծառերէն ծաղիկի պէս էր կախուեր:

**Բ.** Որոշիչը.

Օրինակ՝

Գուշտի գիւղացին կանանչ դարունքին

Հօտ ու նախիրով սարն է բարձրացեր:

Սեղանի ժամացոյց մը գնեցի:

Կործի մարդ է անիկա:

Կը խամրին աշնան ծաղիկներ տժգոյն:

**Գ.** Որոշ կապերու (մէջ, տակ, շուրջ, մասին, վրայ, բով) խընդիւրներ.

Օրինակ՝

Արշալոյսին մէջ ծիրանի կը հագնիս դուն:

Մտանքուդ մէջ հովանուտ կ'երթամ խինդով մ'անսահման:

Նս կ'երազեմ ծանրուն տակ:

Աշխարհի վրայ նոր արեւ մը ծագեցաւ:

Խնդանք, եղբայրնե՛ր, իրենց վախաբիւն

Քովն ինկած մարդոց ծիծաղով խնդանք:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հաստատօթին մէջ գտնել սեռական հոլովով դրուած բառերը և որոշել անոնց պաշտօնը.

Թուցիկները խախտեցին մեր առօրեան:

Թանձր ու շօշափելի արժէքներուն միայն հաւատացող մեր հոգիներուն առջև՝ թուցիկները բացին երկնքի ճամբան...

Համահարակի մը արագութեամբ և ծաւալով տարածուեցան թուցիկները ամէն կողմ ու տակաւ կրանեցին հասոյթի և խնայողութեան մեր բոլոր աղբիւրները:

Խօսակցութեանց միակ նիւթը, գնումներու և առուծախի զըլխատըր շափանիչը, մէկ օրէն միւսը դարձած էին թուցիկները:

Տարօրինակ ու անհատատալի Մինչև թոուցիկին յայտնուիլը, բոլոր տեսակի խաղալիքները մեկ համար պարզ ժամանցի առարկաներ չէին, այլ նաև, այլ մանաւանդ՝ ամուր և ասպհով գրամանիշներ: Վաճառումը և փոխանակութեան գործողութիւնները սյնքան յաճախադէպ էին, որ կը կատարուէին այնպիսի ճարպիկութեամբ, որ խաղալիքները ալ դադրած էին ծառայելէ իրենց սկզբնական սահմանումին, և դարձած առեստուրի և շարաշահութեան միջոցներ:

Իւրաքանչիւր խաղալիքի մարդին մէջ, ստեղծուած էին մնայուն հարստութիւններ և հարուստներ: Գնդիկի անվիճելի թաղաւորը Ֆէրտինանան էր, որուն գնդիկները հատով չէին համրուեր, այլ բսակի մեծութեամբ պղտիկ տոպրակներով: Պարդելին գրոշմաթուղթի հաւաքածոն ունէր այնպիսի փայլուն համրու մը, որուն ճառագայթները անցած էին մեր շէնքին սահմաններէն, հասած մինչև մեծ տղոց բով:

(Ա. Մատուկեան)

**Վարժութիւն 2.** Իրրեւ յատկացուցիչ գործածել աւել, գետ, դաշտ, անտառ, տուն, փողոց, եղբայր, ընկեր, գիրք, մարդ գոյականները:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ գոյականները դարձնել սեռական հոլովով որոշիչ:

Գրպան, պատուհան, դպրոց, հասակ, տարիք, աշուն, Հայաստան (օրինակ՝ զգրպանի լապտեր մը գնեցի):

## 182. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎԻՆ ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆԸ:

Տրական հոլովով կը գրուին.

**Ա.** Յանգման և մատուցման անուղղակի խնդիրը, որ տրական հոլովին շիմնական պաշտօնն է:

Օրինակ՝

Գիրք մը նուիրեցի վարդանին:

Կոթնեցայ պատին:

Օգնեցէ՛ք ծերերուն և կաշմանդամներուն:

Եւ աւելին կը սպասեմ ես ցնծապատար:

Ե՞րբ պիտի հասնի իր հանգրտանին

Արհարոտ Ուխտին այս գոս կարաւան:

Կարմիր, նախշուն հաւիթի պէս  
Կ'երթայ արեւն իր Ձատիկին:

**Բ. Տեղի պարագան.**

Օրինակ՝

Տղեկ մ'ուշիմ և բոսլիկ, առաջնորդէ սլիտի քեզ  
Տունս հայրենի՝ շինուած ջինջ զով առուակի մ'նգերիկն,  
Որուն քիլին կը մնչեն ազանիներ տարփակէզ,  
Նւ պատերուն երկայնիկն վառ կակաչներ կը ծաղկին:  
Յանկասպատին շուքին նստած  
Վայրի ծաղիկ, անունդ ի՞նչ է:

**Գ. Ժամանակի պարագան.**

Օրինակ՝

Կիշերուան վերջին պահերուն լսին  
Չայներն ու լոյսեր յանկարծ կը մարին:  
Ուշ ժամուն ևկաւ  
Ժամը վեցին արթնցաւ:

**Դ. Նստատակի պարագան.**

Օրինակ՝

Ու գլուանիս կանչէի  
Ես ճամբորդներն անժաման:  
Նկան ժողովի:

**Ե. Քանի մը կապերու (հետ, համար, առանց և այլն) խրն-  
դիրներ:**

Օրինակ՝

Քեզի նկտ գիւղ սլիտի կրթանք:  
Առանց գէ՛նքի, առանց գորքի շահերու դէմ կ'երթար:  
Քեզի համար գիրք գնած ևմ:

**Վարժութիւն 1. Հետեւեալ հաստածին մէջ ցոյց տալ արա-  
կան հոլովով դրուած բառերը և որոշել անոնց պաշտօնը.**

Գպրոցը և դասերը սկսան կանոնաւորուիլ, մանաւանդ երբ  
ճիւղային համեմատութիւններով աճած ու բազմացած մեր դա-  
սարանը կիսուեցաւ երկուքի, համընթաց զոյգ կարգերու բաժա-  
նումով:



Կ'երթայ ամպ մը կաթնորակ  
Փափուկ բուրդէն ծուէններ թողլով ժայռի կատարին:

Ու բերթողին տաղէս վանկեր ես տայի:

**Բ.** Տեղի պարագան.

Օրինակ՝

Կը կարկաչէ գիւղամէջէն զերթ առու,  
Զանգակն իրենց վիզներուն:

Գիւղին նամբայէն սայլերը կ'երթան:

Թող զոգնոցկոյ կէս շէլէ ափոց բնաւ:

**Գ.** Թամանակի պարագան.

Օրինակ՝

Քանի մ'օրէն պիտի մեր հողն համբուրես սիրալիր:

Այն օրուրնէն շունիմ դադար:

**Դ.** Պատնառի պարագան.

Օրինակ՝

Կը բարախէ սիրադ արդէն հայրենիքի կարօտէն:

Ռարկուրենէն պիտի ճաթի:

**Ե.** Քանի մը կապերու (ի վեր, վեր, զատ, վար և այլն) խըն-  
դիրներ.

Օրինակ՝

Հորիզոնէն վար լոյսի պար մը կ'իջնէ:

Տարիներէ ի վեր փափաքած եմ անսնել հայրենիքս:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հատուածին մէջ ցոյց տալ բա-  
ցառական հոլովով դրուած բառերը և որոշել անոնց պաշտօնը.

Հետուէն, մեր տանիքէն դիտելով, Աղուէս լեռը շոր շոր երե-  
տոյթ մ'ունէր. հսկայ ապառաժներ կը հանդշէին իր ժիր կոնակին  
ու կողերուն վրայ, գունտ ու գորշ ժայռեր, որոնք կարծես ամ-  
պի կոյտեր ըլլային երկինքէն ինկած ու քարացած: Գիւղացիք լե-  
րան սիրտը ծակեր ու անկէ ջուր հաներ էին վաղուց:

Մեր թաղին աղբուրը Աղուէս լեռան սրտէն կը բխէր: Աղու-  
գան կիրով ծեփուած երակն էր, որ լեռն ու գիւղը իրարու կը կա-  
պէր գետնին տակէն երկարող միակտուր երիզով մը: Զուրբ անուշ



ու պահուի, մեծագոյն բարիքն էր զոր լեռը իր զլխուն տեղացոյ  
անձրեւներէն և ձիւններէն կր գոյնար, իր կուրծքին տակ կ'ամբարէր  
կաթնտու մասուկի մը պէս:

(Ռ. Նուրիկեան)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերը գործածեցէ՛ք իրրեւ ան-  
ջատման անուղղակի խնդիր.

Քար, սեղան, պատ, առն, գիւղ, ծառ, դուռ, զետ:

**Վարժութիւն 3.** Բացառական հոլովով որպէս տեղի պարա-  
պայ գործածեցէ՛ք հետեւեալ բառերը.

Անտառ, դաշտ, սար, փողոց, երկիր, ծով, քաղաք, գրպան,  
այգի:

**Վարժութիւն 4.** Բացառականով որպէս ժամանակի պարագայ  
գործածեցէ՛ք հետեւեալ բառերը.

Տարի, ժամ, պահ, ատեն:

#### 184. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՎԻՆ ԿԻՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Գործիական հոլովով կը դրուին.

**Ա.** Միջոցի անուղղակի խնդիր, որ գործիական հոլովին հիմ-  
նական պաշտօնն է:

Օրինակ՝

Եղեղնեայ գրչով երգեցի փառքեր:

Ոսկի շաղով օծեցիք

Կապոյտ ծաղիկն ակերուն:

**Բ.** Տեղի պարագան.

Օրինակ՝

Այս իրիկուն ձեզի կու գանք, երգ երգելով

Հուսնակ նամբով:

**Գ.** Ժամանակի պարագան.

Օրինակ՝

Գիշերով եկած է:

Լոյսով ճամբայ ինկած էր:

## Գ. Չափի պարագան.

Օրինակ՝

Հնձես քիտովն ասողերուն:

Հինգ ոսկիով շրեղ մուշտակ մը դնեց:

## Ե. Անի պարագան.

Օրինակ՝

Յոյզով մեռաւ ան, յուշով կ'ապրի դեռ:

Երազանքներ զիս կ'օրրեն

Օրորումով մը հանդարտ:

## Զ. Որոշիչը.

Օրինակ՝

Սեւ մագնեռով, սեւ քննութենեռով մարդ մ'էր Արիստոզոմ ազան:

Համով խորտիկներ մատուցին:

**Վարժութիւն 1.** Հետեւեալ հաստատումներուն մէջ որոշել գործիական հոլովով դրուած բառերուն պաշտօնները.

**Ա.** Մեր կրթութիւնը, որ փախուստի շրջանիս թուլացում մը ունեցած էր դաշտային ընկերներու մտարովը կեանքիս մէջ, վերակազմուեցաւ դարձեալ, Յարութիւնին մնայուն յանլումով:

Օրուան նորոյթը շարժանկարն էր:

Ամէն օր ունէր իր ֆիլմերու հաւաքածոն, առաւել կամ նըւազ արժէքով, նայած օրակին և մաքրութեան: Գլխաւոր հերոսներուն ֆիլմերը աւելի սուղ կ'արժէին, մանաւանդ կրք առանձին կը գրաւէին տեսարանը և ամբողջ գլուխով կը լեցնէին ֆիլմը: Ունէի ֆիլմի տետրակս, բաւականին ճոխ և ալլազան: Գրոշմաթուղթի պէս, դասաւորած էի էջերուն վրայ, անկիւնները խընամբով բացուած ճեղքերու մէջ հաստատուած: Տետրակս, շուկայի դնով, մինչև մէճիտ մը գնահատուած էր, ինչ որ պատկառելի դումար մը կը կազմէր:

(Ա. Մատուկեան)

**Բ.** Թողոր սենեակներուն պատերը սուաղուած և ջնարակուած էին ճերմակ գոյնով: Գետինը տախտակ էր, բացի երկու սենեակէ, որոնք ծածկուած էին փախաթով: Այդ տախտակները այնքան յաճախակի կը լուացուէին և աւաղով կը շփուէին, որ թաց տախտակի հոտը սովորական դարձած էր մեր սունդերուն:

Սենեակներուն ճակատը մէկ պատէն միտը կ'երկարէր բաղմոցը, միշտ ծածկուած ձիւնաթոյր ծածկոցով: Բոլորակ սեղան մը ճերմակ ծածկոցով կը կրէր ջրաման մը և բաժակ մը:

(Չ. Նսայնան)

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բառերը դորձածել իրրև միջոցի անուղղակի խնջիր.

Մատիտ, ձեռք, դանակ, ջուր, հող, թուղթ, սանտր, օճառ, սրբիչ:

**Վարժութիւն 3.** Գրել վեց նախադասութիւն, որոնց մէջ ըլլան գործիականով դրուած ժամանակի, շափի, ձևի պարագաներ:

## ԲԱՐԳ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

### 185. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Բարդ կը կոչուի այն նախադասութիւնը, որ մէկէ աւելի միտք կ'արտայայտէ՝ կազմուած ըլլալով մէկէ աւելի պարզ նախադասութիւններէ:

Բարդ նախադասութեան բաղադրիչները (անոր կազմին մէջ գտնուող պարզ նախադասութիւնները) իրարու հետ կապուած են միտքով:

Օրինակ՝

Սեր Գրիգորը եկաւ, մենք համբայ ինկանք:

Ասիկա բարդ նախադասութիւն մըն է, որ կազմուած է երկու պարզ նախադասութիւններէ՝ ա) Սեր Գրիգորը եկաւ, բ) մենք համբայ ինկանք: Ասոնք իրարու հետ կապուած են միտքով. առանց մէկիւն միտքը կիսատ է, թերի, և երկուքը միասին միայն ամբողջական միտք մը կ'արտայայտեն:

### 186. ՀԱՄԱԳԱՍՈՒԹԻՒՆ ՆԻ ՍՏՈՐԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Բարդ նախադասութեան բաղադրիչները իրարու հանդէպ կըրնան գտնուիլ երկու կարգի յարաբերութեան մէջ՝ համադասական և ստորադասական:

Համադասական յարաբերութիւնն այն է, երբ բաղադրիչները մէկգմէկու լրացում չեն ըլլար:

Այն բարդ նախադասութիւնը, որուն բաղադրիչները համա-  
փօր են (իրարու միտք չեն լրացներ), կը կոչուին բարդ համադա-  
սական:

*Օրինակ՝*

Տեղը ամայի էր, և բաւական հետո էինք գիտէն:

Այնտեղ օդը մեղմ էր, կեանքը՝ աման, և ծովի լսգարանները  
բնականէն յատակուած էին նուրբ աւազով:

Այս բարդ նախադասութեանց մէջ բաղադրիչները քերական-  
նօրէն իրարու միտք չեն լրացներ, ուստի համադաս են, իսկ ամ-  
բողջ նախադասութիւնը բարդ համադասական է:

Ստորադասական յարաբերութիւնն այն է, երբ բաղադրիչներէն  
մէկը միասին լրացումն է, ստորադասուած է անոր:

Այն բարդ նախադասութիւնը, որուն բաղադրիչներէն մէկը  
կախուած է միւսէն, կը լրացնէ անոր միտքը, կը կոչուի բարդ ստո-  
րադասական:

*Օրինակ՝*

Փոքրեկալի ծովը կը տանջէր այդ ցամաքի մաքրիկը, որոնք  
անմիջապէս իրենց ապաստարանը կը փաշուէին:

Կը յիշեմ զարհան ստաւտները, և երբ այդ այգիները կը դառ-  
նային բոցավառ վարդաստաններ:

Ներ դպրոցը վերաբացուեցաւ, առաջին օրն իսկ ուրախու-  
րեամբ գտայ Պետիկը:

Այս երեք բարդ նախադասութեանց մէջ կան երկուքական սլարդ  
նախադասութիւններ:

ա) Փոքրեկալի ծովը կը տանջէր այդ ցամաքի մաքրիկը և որոնք  
անմիջապէս իրենց ապաստարանը կը փաշուէին:

բ) Կը յիշեմ զարհան ստաւտները և երբ այդ այգիները կը  
դառնային բոցավառ վարդաստաններ:

գ) Առաջին օրն իսկ ուրախուրեամբ գտայ Պետիկը և երբ դըպ-  
րոցը վերաբացուեցաւ:

Աստեղծէ Փոքրեկալի ծովը կը տանջէր այդ ցամաքի մաք-  
րիկը, Կը յիշեմ զարհան ստաւտները, Առաջին օրն իսկ ուրա-  
խուրեամբ գտայ Պետիկը նախադասութիւնները կրնան առանձին  
գործածուիլ առանց միւս նախադասութիւններուն: Իսկ վերջինները

առանձին շեն կրնար գործածուիլ. անոնք կախուած են առաջիննե-  
րէն, կը լրացնեն անոնց միտքը: Որոճմ անմիջապէս իրենց ապաս-  
տարանը կը փառուի Նախագասութիւնը կը լրացնէ Փորուկալի  
ծուլը կը տանջէր այդ ցամաքի մարդիկը Նախագասութեան միտքը  
(կը ցուցնէ, թէ ո՞ր մարդոց մասին է խօսքը):

Երբ այդ այգիները կը դառնային բոցավառ վարդաստաններ  
Նախագասութիւնը կը լրացնէ Կը յիշեմ գարեհան առաւօտները Նա-  
խագասութեան միտքը (կը ցուցնէ, թէ խօսքը ի՞նչպիսի առաւօտնե-  
րու մասին է):

Երբ դպրոցը վերաբացուեցաւ Նախագասութիւնը կը լրացնէ  
Առաջին օրն իսկ ուրախութեամբ գտայ Պեւիկը Նախագասութեան  
միտքը (կը ցուցնէ, թէ և՞ որ ուրախութեամբ գտայ Պեւիկը):

**Վարժութիւն 1.** Յոյց տալ, թէ բանի համազօր Նախագա-  
սութիւն կայ հետեւեալ բարդ համադասական Նախագասութեանց  
մէջ.

1) Յամաբէն տասը գրկաշափ բոցն էին, ծովն օրօրոցի մը  
սլէս առաջ ու ետ կը մղէր վերներ և իր խուլ նուազներովը բնացնել  
կ'ուղէր այս դատապարտեալները: 2) Պառաւը պատասխանելու  
ատեն շունէր, բայց իր սովորական անարին երեսը կը դունաւոր-  
ւեր ահա, փոքրիկ խածակ աչքերը արտասովոր փայլով կը ճա-  
ռագայթէին: 3) Ահա բղամիզդ ղղեցար, և ճամբորդի ցուպդ  
առիր, կը բարբախէ սիրտդ արգէն հայրենիքի կարօսէն:

**Վարժութիւն 2.** Քանի՞ բաղադրիչ կայ հետեւեալ բարդ ստորա-  
դասական Նախագասութեանց մէջ.

1) Այն հանդամանքը, որ ընտելացած էի գրարար ընթեր-  
ցանութեան, ինձ վարկ տուաւ դասարանիս մէջ: 2) Հետեւեալ օրը,  
երկուշաբթի, երբ դպրոցէն վերադարձայ, զգացի որ արտակարգ բան  
մը պատահած է: 3) Երբոր ժամ մը յետոյ վեր կ'իլլեմ, մութը տա-  
րածուած է ամէն կողմ:

**Վարժութիւն 3.** Հետեւեալ հատուածին մէջ ցոյց տալ բարդ  
համադասական և բարդ ստորադասական Նախագասութիւնները.

Ստուերները կամաց կամաց կ'երկարին ու կը սենան, ամէն  
կողմ ծովեզերքի բաղմութիւնը կը նօսրանայ: Մերացած զոյգեր  
կը լքեն փայտէ նստարաններն ու կը շտկուին դէպի ճաշարան:

Նստարանի մը մէկ ծայրը նստած կը դիտեմ ծովը, որուն  
ովկիանոս անունը կու տան ուրիշներ, մութ-կանանչ, կը տարած-

ւի մինչև հետուն, ուր երկիրն ու ջուրերը իրարու կը հանդիպին, և դորշ-կապոյտ հորիզոնը իր լայնալիճ աղեղը կը դժէ, հըսկայական հարուածով մը կարծես, որ դործն է անտեսանելի ձեռքի մը Մեծկակ թռչուններ կ'անցնին ջուրին վերևէն, պատահական կոխչներ նետելով: Եւ կ'անցնին ղոյզ մը թիթեռնիկներ, մուգ-կարմիր թեւերով. ու կը կորսուին միջոցին դիրկը: Մովը կը հեռաց կշռոյթով մը, որ խորունկ է ու յարաշարժ:

(Բ. Նուրիկեան)

**Վարժութիւն 4.** Կազմեցէ՛ք հինգական բարդ համադասական և բարդ ստորագասական նախագասութիւններ:

**187. ԲԱՐԳ ԶԱՄԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ**

Բարդ համադասական նախագասութիւնը բաղկացած է երկու և աւելի համադօր նախագասութիւններէ:

Օրինակ՝

Կծու ցուրտ մը կը տիրէր, ու քամին բիւր սլաքներով կ'աւղնտկէր մարմնին հողանի մասերը:

Այս նախագասութեան մէջ առաջին բաղադրիչն է կծու ցուրտ մը կը տիրէր, երկրորդ բաղադրիչն է քամին բիւր սլաքներով կ'աւղնտկէր մարմնին հողանի մասերը, որոնք համադօր են, իրարու միտք չեն լրացներ:

Համադասական նախագասութեան բաղադրիչները իրարու հետ կրնան կապակցուիլ համադասական շաղկապներով (և, ու, իսկ, բայց, սակայն, այլև, նաև և այլն) կամ շարայարութեամբ, այսինքն՝ առանց շաղկապներու, պարզապէս իրարու մօտ դրուելով:

Օրինակ՝

Հիւանդը առողջացաւ, բայց իր երեսը չնայեցաւ:

Հասկեր կ'իյնան շարունէ շարան, և կ'արիւնին կակաչներ լուռ: Յանկարծ թուփեր կը յայտնուին, կամ կը ցցուի քար մը ճերմակ:

Այս նախագասութեանց մէջ բաղադրիչները իրարու հետ կապւած են բայց, և, կամ շաղկապներով:

Իսկ հետեւեալ նախադասութեանց մէջ բաղադրիչները իրարու հետ կապուած են պարզ շարայաբոլորութեամբ.

Հողույս դափ ու թմրուկի  
կ'իջնէ ծիծաղն այս դիշեր,  
Մնծղաներու պէս ցնծուն՝  
Մափ կը զարնեն իմ յուշեր:

Մաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ  
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,  
Հողիներուն կ'իջնէ կրաղ մը բուրեան,  
Ի՞նչ հեշտին է մթնշաղն այս սատափէ:


Ջուրը ցայտփէն ծաղիկ-ծաղիկ կը կաթէ,  
Վճիտ, ինչպէս լոյսէ արցունքը մանկան,  
Նուազն անոր կը հեծեճէ հեշտական:

(Մ. Մեծարեւնց)

Բարդ համադասական նախադասութիւնները կարելի է վերլուծել դժասպատկեր կաղմելով: Փժասպատկեր կաղմելու համար անհրաժեշտ է բարդ համադասական նախադասութեան բաղադրիչները թուադրել, ապա իւրաքանչիւր բաղադրիչ արտայայտել երկրաչափական պայմանական պատկերներով (շրջանագիծ, քառակուսի, քառանկիւն) և դանոնք միացնել ուղիղ գիծով կամ հասարութեան նշանով (կրկու զուգահէտ գիծերով):

Մաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ  
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,  
Հողիներուն կ'իջնէ կրաղ մը բուրեան,  
Ի՞նչ հեշտին է մթնշաղն այս սատափէ:

Երեք բաղադրիչ ունեցող այս բարդ համադասական նախադասութեան դժասպատկերը կարելի է ներկայացնել հետեւեալ ձևով:



Ամէն մէկ քառակուսին բարդ համադասական նախադասութեան մէկ բաղադրիչը (պարզ նախադասութիւնը) կը ներկայացնէ: Քառակուսիներու միջև եղած զույգ գիծերը նախադասութեանց համարժէք՝ համաղօր ըլլալը կը ցուցնեն:

Վարդանը կը գրէ: Վարդանը կը պատմէ:

Այս երկու նախադասութեանց մէջ կայ միեւնոյն ենթական (Վարդանը): Կրնանք շանոնք միատրեւի և ստանալ մէկ նախադասութիւն՝ Վարդանը կը գրէ և կը պատմէ:

Յակոբը կը գրէ: Վարդանը կը գրէ: Այս երկու նախադասութիւններուն մէջ կայ միեւնոյն ստորոգեալը՝ կը գրէ: Չանոնք կրնանք նմանապէս միատրեւի և ստանալ մէկ նախադասութիւն՝ Յակոբը և Վարդանը կը գրեն:

Վարդանը կը գրէ և կը պատմէ, Յակոբը և Վարդանը կը գրեն նախադասութիւնները միատրեւալ են, քանի որ առաջինն ունի նոյն ենթական, իսկ երկրորդը՝ նոյն ստորոգեալը: Առաջինը միատրուած է ենթակայով, երկրորդը՝ ստորոգեալով:

Սակայն կարելի է միատրեւի նաև Վարդանը կը գրէ և կը պատմէ, Յակոբը կը գրէ և կը պատմէ արդէն միատրուած նախադասութիւնները և ստանալ Վարդանը և Յակոբը կը գրեն և կը պատմեն միատրեւալ նախադասութիւնը, որ ունի երկուքական ենթակայ և ստորոգեալ, այսինքն՝ միատրուած է թէ՛ ենթակայով, թէ՛ ստորոգեալով:

Այն նախադասութիւնը, որ միատրուած է ենթակայով կամ ստորոգեալով և կամ այդ երկուքով, կը կոչուի միատրեւալ:

Միատրեւալ նախադասութիւնները կ'ըլլան.

Ա. Ենթակայով միատրուած.

Օրինակ՝

Պետրոսը կ'աշխատի և կ'ուսանի:

Խենթ հաւաքուեցանք, խորհրդակցեցանք և որոշեցինք մեր ընելիքը:

Առաջին նախադասութեան մէջ կան երկու ստորոգեալներ (կ'աշխատի, կ'ուսանի), որոնք ունին նոյն ենթական (Պետրոսը), երկրորդ նախադասութիւնն ունի երեք ստորոգեալներ (հաւաքուեցանք, խորհրդակցեցանք, որոշեցինք) և մէկ ենթակայ (մենք):

Բ. Ստորոգեալով միատրուած.

Օրինակ՝

Վարդանն ու Պետրոսը զացին քաղար:

Ես ու ընկերս միասին կը սորվինք դասը:



Կ. ԵՆՐԱԽԱՅՈՒՎ և սատրոզեալով միատրուած.

Օրինակ՝

Պետրոսը և Վարդանը կ'երգեն ու կը պարեն:

Միատրեալ նախադասութեան բաղադրիչները նմանապէս իրարու հետ կը կապուին համադասական շաղկապներով կամ շարա-  
յարութեամբ:

Օրինակ՝

Գու ղո՞վ խնդրեա, մայր իմ անուշ,

Ե՛կ, մի՛ զողար, մօտեցի՛ր հոս,

Անլաց աչօք զիտէ զորդիդ

Ու իր վէրքերն արինահոս:

Տանիքներուն վրայ մըշուշը անդուս լաթեր կը փոէ,

Ճամբաներուն վրայ արելը՝ շոգոլիներ ոսկեման:

Այս նախադասութեանց բաղադրիչները իրարու հետ կապուած են շարայարութեամբ:

Կապոյտն յանկարծ կու լայ բուռն ծիծաղէն, և կը տեղայ աղա-  
մանդ:

Այս նախադասութեան մէջ բաղադրիչները կապուած են և շաղ-  
կապով:

**Վարժութիւն 1.** Որոշեցէ՛ք հետեւեալ բարդ համադասա-  
կան նախադասութեանց բաղադրիչները և ցո՛յց տուէք, թէ անոնք  
ինչո՞վ կապուած են իրարու հետ.

Շունչ կ'առնէր խեղճ մարդը, բայց դործերը կը պակսէին,  
աւուրչէ՛րը շահիլը տաժանելի տառապանք մը կ'ըլլար ու սլարտ-  
քերը կը զիզուէին շուրջը (1): Հիւանդութիւնը կը սաստկանար,  
հեղձոմաները կը յաճախէին, ու միշտ կը մնար անխիա իմ խրատ-  
ներուս, և իր դրօսանքի, հաճոյքի կեանքը անխափան կը շարու-  
նակէր (2): Գերանդիներն անոնց ուսին կը ցոլցլան լուսնկայէն,  
կը հովանան անոնց բրտնած կուրծքերն անուշ ծմակներէն (3):

Ձեր սլատերուն մէջ խաւար

Թող նոր արև նշողէ,

Երդիկներուն վրայ դալար

Կուսնակն ալիւր թող մաղէ (4):

**Վարժութիւն 2.** Յոյց տալ, թէ ինչո՞վ միաւորուած են հետեւեալ նախադասութեանց բաղադրիչները.

Վոսփօրը կ'երեւար, կ'ընդհատուէր յանկարծ, նորէն կը սկսէր, կը դառնար, կը դալարէր, տիտանեան օձի պէս, երկու դիէն բարձրացող բլուրներուն մէջ (1):

Մովին մէջտեղը այս հիւլէները կ'երերակային շարունակ, ձեւերնին, դիրքերնին, լոյսերնին կը փոխէին, իրարու առջև կը վազէին, իրարմէ խոյս կու տային անհնարին ու խօշական սատումներով, արշաւներով (2):

Ոմանք իրենց ակերտուն մէջ մերթ կը փշրեն հասկ մը ատոր, Եւ կ'օրհնեն թիւն հատիկներուն, ու կը ծամեն յետոյ դանոնք (3):

Ու կ'ընդլայնին դաշտեր, սարեր, խողաններով միշտ բատրմանած (4):

Հարս ու աղջիկ, պարմանիներ,  
Իրենց ձեռքին հոսելիներ՝  
Կը ձեղքեն թեղն յոյսերու բով (5):

**Վարժութիւն 3.** Հետեւեալ հատուածներուն մէջէն գտնել համադասական նախադասութիւնները, ջոյց տալ բաղադրիչները և անոնց կապակցման միջոցը: Ընդօրինակել միաւորեալները՝ ջոյց տալով, թէ ինչո՞վ միաւորուած են անոնք.

**Ա.**

ԻՄ ԱՅԿԻՄ

Այգիս դալար՝ կը սարսուռայ ցնծադին,  
Ողկոյզներու մարգարտաշար յորդման մէջ.  
Կ'ուռի կայլակը մեղրալից հատիկին՝  
Օծուած այգուն արծաթափայլ ցօղով դէջ:

Համայնասփիւռ կարմիր համրոյրն արեւին  
Կը կայծկլտի ծիրաներփնեան ցոլքերով,  
Ու կը խայտայ մենարանիս փոքր այգին՝  
Առտուան մէջ, օրուան սեմին վրայ դով:

Կը մխրճին մատներս յուղմամբ երջանիկ,  
Տերեւներուն աղուցուածքին մէջ տամուկ,  
Ու կը ձուփեմ ատոր ողկոյզն անդրանիկ,  
Իրրեւ մարդրիտ, իրբև մաքուր դեղին խունկ:

(Ա. Յարութիւնեան)

6. Հացի օր է սահայն, և տունն ամբողջ, առտու կանուխ ոտքի վրայ է:

Քոնիրը նոր վառեր է: Կոճղերը կը ճարճատին:

Կծու մուխ մը խոհանոցը կը լեցնէ ու կամաց-կամաց բուխե-  
րիկէն վեր կը սողայ:

Խմորի առաջին տաշար իրիկուանց շաղուեր, տրորուեր է արդէն, և կակուղ դնդիկներն ու տափակները սուֆային վերի կող-  
մը կը հանդէին՝ հացլաթով ծածկուած:

Քոնիրը կ'իջնէ ահա, կոճղերը կը սմքին, բարկ կրակներու շողշողուն դէպ մը կը կարմրի թոնիրին յատակը: Խոնկրուն վրայ կանացի թեւեր կը շարժին շնորհալի ճարտարութեամբ, և փայտէ գլանները ետ-առաջ կը թաւալին:

(Բ. Նուրիկեան)

**Վարժութիւն 4.** Կաղմեկ 3-րդ վարժութեան վերջին երկու նախադասութիւններուն գծադասակերպ:

#### 189. ԲԱՐԳ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Բարդ ստորագասական նախադասութիւններու բաղադրիչներէն մէկը կը լրացնէ միւսին միտքը:

**Յ ր ի ն ա կ՝**

Կը կարգամ այն գիրքը, զոր ֆեզմէ խնդրած էի:

Այս նախադասութիւնը բարդ ստորագասական է, քանի որ զոր ֆեզմէ խնդրած էի բաղադրիչը կախուած է կը կարգամ այն գիրքը նախադասութենէն, կը լրացնէ անոր միտքը և չի կրնար դործածուիլ առանց այդ նախադասութեան:

Բարդ ստորագասական նախադասութեան մէջ բաղադրիչներէն մէկուն որեւէ անգամը կ'արտայայտուի զատ նախադասութեամբ մը:

Այսպէս, վերի նախադասութեան միտքը կրնանք արտայայ-  
տել նաև հետեւեալ ձևով՝ Կը կարգամ ֆեզմէ խնդրած գիրքս. հոս ֆեզմէ խնդրած-ը նախադասութեան անգամ մըն է լուկ (որո-  
շիչ), որ վերը արտայայտուած էր զատ նախադասութեամբ (զոր ֆեզմէ խնդրած էի):

Բարդ ստորագասական նախադասութեան այն բաղադրիչը, որուն մէկ անգամը զատ նախադասութեամբ մը արտայայտուած է, կը կոչուի գլխաւոր նախադասութիւն:

*Վերի օրինակին մէջ գլխաւոր է կը կարդամ այն զիրքը նախադասութիւնը:*

Այն նախադասութիւնը, որ կը լրացնէ գլխաւոր նախադասութեան միտքը, կը կոչուի երկրորդական (ստորադաս) նախադասութիւն:

*Վերի օրինակին մէջ երկրորդական է գոր Բեզմէ խնդրած էի նախադասութիւնը:*

*Ուրիշ օրինակներ*

Պան մը կեցաւ, որպէսզի ապահով ըլլայ զինքը բերող կառփին հետնապում:

Թորոս պէյ հասկցաւ, որ իր գլխուն վտրձանք մը կը դառնայ: Երբ ամբողջ պատմութեան վերանասու եղաւ, շատ յուզուեցաւ: Ազգացի, որ հոգոյս մէջ կը ծագէր շող մը վնիտ:

*Այս օրինակներուն մէջ գլխաւոր են՝ Պան մը կեցաւ, Թորոս պէյ հասկցաւ, Շատ յուզուեցաւ, Ազգացի նախադասութիւնները:*

*Նոյն օրինակներուն մէջ երկրորդական են՝ որպէսզի ապահով ըլլայ զինքը բերող կառփին հետնապում, որ իր գլխուն վտրձանք մը կը դառնայ, երբ ամբողջ պատմութեան վերանասու եղաւ, որ հոգոյս մէջ կը ծագէր շող մը վնիտ նախադասութիւնները:*

*Պարզ նախադասութեան որեւէ անդամը յաճախ կարելի է վերածել զատ նախադասութեան մը. այդ պարագային պարզ նախադասութիւնը կը դառնայ բարդ:*

Գացի Վահանին զիրքը բերելու:

Անոր գրածը ինձի հանելիլ բուեցաւ:

Չհասկցայ ըսածդ:

Ուսուցիչը ներս մտնելուն պէս ոտքի կեցանք:

*Այս նախադասութիւնները կրնանք դարձնել՝*

Գացի, որ (որպէսզի) Վահանին զիրքը բերելու:

Ինձի հանելիլ բուեցաւ, ինչ որ անկէպէտ գրեւ (գրած) էր:

Չհասկցայ, քէ ինչ ըսիր (ըսեր էս, ըսած էս):

Ոտքի կեցանք, երբ ուսուցիչը ներս մտաւ:


*Բարդ ստորադասական նախադասութեան կառուցուածքը նոյնպէս կարելի է արտայայտել դժասպատկերներով:*

Անիկա ըսաւ, քէ Գրիգորը եկեր է:


Երբ ամբողջ պատմութեան վերանասու եղաւ, շատ յուզուեցաւ:

Այս նախադասութիւններուն զծապատկերը կազմելու համար կը թուագրենք բաղադրիչները: Ամէն մէկ բաղադրիչ նախադասութիւն կը ներկայացնենք քառակուսիով մը. վերի քառակուսին գլխաւոր նախադասութիւնը կը ցուցնէ, իսկ վարինը՝ ներկորդականը: Քառակուսիներուն մէջ կը նշանակուի բաղադրիչներու թուահամարը ըստ յաջորդականութեան: Երկրորդականէն սլաքը կ'ուղղուի դէպի գլխաւորը:

Բերուած նախադասութիւններէն առաջինին զծապատկերը կ'ըլլայ՝



Երկրորդ նախադասութիւնը կ'ունենայ այսպիսի զծապատկեր՝



**Վարժութիւն 1.** Յոյց տալ հետեւեալ բարդ ստորադասական նախադասութեանց գլխաւոր և ներկորդական բաղադրիչները, կազմել առաջին երեքին զծապատկերը:

Եթէ ուրիշի մը յանձնուէր այդ գործը, մտատանջ չսլիտի ըլլայի (1): Ասոնք բոլորը ծանրակշիւ իրողութիւններ էին, որոնք խորապէս կը յուզէին զինքը (2): Արամի գալուստէն ի վեր հազիւ կէս ժամ անցած էր, երբ երեք կիները կազմ ու սլատրաստ վար իջան (3): Երբ աչքերը բացաւ՝ արշալոյսը արդէն կը ծագէր (4): Վահան այնքան յուզուած էր, որ ամբողջ մարմնովը կը դողդողար (5): Երբ դրասենեակէն ներս մտաւ՝ օթէլին քարտուղարը յարգանքով ոտքի ելաւ և ամթոռ մը հրամցուց այցելուին (6): Իսկոյն հասկցած էր, որ հարուստ ուղեւորի մը հետ էր գործը (7): Իր յուզումը այնքան մեծ եղաւ, որ իսկոյն շիրջաւ սլատասխանել (8): Չեմ ուզեր, որ այդ խեղճ երիտասարդը սլարապ տեղը շարշարանքներու ենթարկուի (9):

**Վարժութիւն 2.** Հետեւեալ հատուածէն ընդօրինակել բարդ ստորագասական նախադասութիւնները, ստորագծել զլիսաւորները մէկ, երկրորդականները՝ երկու գիծով.

Արիսողոմ աղա աղւոր քուն մը բաշեց նոյն դիշերը. վաւրնդի շաա յոգնած էր և թերևս հետեւեալ օրն ալ չէր բանար աշերն, եթէ փողոցի վաճառականներն առաւօտուն իրենց ահարկու ձայներովն շխտովէին անոր քունը:

Բայց Պոլսոյ մէջ քնանալու աղատութիւն ալ չկայ. դիշերները սրահասղաններն այնքան ուժով դետին կը դարնեն իրենց փայտերն, և առաւօտուն փողոցի վաճառականներն այնքան բարձր ձայնով կ'եղանակեն իրենց ապրանքներն, որ քունն կը շուարի, կը մնայ, թէ որ կողմը փախչի:

Եթէ վերջին դատաստանին օրը Գարրիէլ հրեշտակապետը շաւղի իւր փողովն մեռեալները արթնցնել, ևս սխաի առաջարկեմ, որ այդ պաշտօնը Պոլսոյ փողոցի վաճառականներուն կամ գիշերային սրահասղաններուն յանձնուի: Արիսողոմ աղան ալ, որ փողոցի վրայ սենեակի մը մէջ կը պառկէր, ստիպուեցաւ կանուխ արթննալ:

Տան տիկինն, որ իմացած էր հիւրին ելած ըլլալն, վեր ելաւ և զարդարուն սենեակ մը հրամցնելով զայն՝ իմաց տուաւ, թէ մէկն կը սպասէր վարը:

(3. Պարոնեան)

**Վարժութիւն 3.** Հետեւեալ սարդ նախադասութիւնները դարձնել բարդ ստորագասական.

Երիտասարդը տեսնելուն սէս զարմացական շարժում մը ունեցաւ (1): Այդ փնտրած րոլսր յատկութիւններդ կան անոր քով (2): Հիմա ստիպուած էր Թորոս պէյին հետ բալել անոր ուղած կերպովը (3):

## 190. ԲԱՐԳ ՄՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹԻՒՆԵՐ

Երկրորդական նախադասութիւնները զլիսաւորին հետ կը կապակցուին.

**Ա.** Ստորագասական շաղկապներով (որ, թէ, եթէ, որովհետեւ, քանի որ, որպէսզի, քանզի և այլն):

Յ Ր Ի Ն Ա Կ՝

Վայրկեան մը ետքը տեսայ, որ շէի սխալած:

Խօսակցութիւնը կարելի չէր եղած աւելի երկարել, որովհետեւ ուրիշներ վրայ եկած էին:

Չախորժելու պատճառ մը շունիմ, Բանի որ դիրքը շիմ ճանշնար մօտէն:

Երէ՛ ևս շտեանէի, ապահովարար ճամբանիդ պիտի շարունակէիր:

Ժողովուրդը տակաւին չէր հասկցած, քէ ինչ կ'անցնէր, կը դառնար:

Այնքան կ'յորդի, կը կատղի դաշտը յուտթի՛

Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:

**Բ.** Յարաբերական բառերով (որ, որչափ, որքան, ինչ որ, ինչչափ, ուր, երբ, ինչպէս և այլն). այս պարագային գլխաւոր նախադասութեան մէջ կրնան ըլլալ յարաբերեալներ՝ արտայայտւած ցուցական դերանուններով (այն, այնքան, այնչափ, այնտեղ և այլն).

Յ Ր Ի Ն Ա Կ՝

Մանօթութիւն հաստատած էր յաճախորդներուն հետ, որոնք գրեթէ իրեն վիճակակից մարդիկ էին:

Գումար մը ստացած էր, որով կարող եղած էր պարտքերուն մէկ մասը մարքել:

Արամն ալ անակնկալ գործով մը իղմիր դացած էր, որ քանի մը շարաթ պիտի մնար:

Երիտասարդը անկեղծօրէն պատմեր էր, ինչ որ արդէն ընթերցողները գիտեն:

Տասը յարկ շէնքի մը ըրածութենէն վար իյնող մէկը այնչափ տակնուվրայ շպիտի ըլլար, որչափ ատէր Արրահամը եղաւ այս որոշումը իմանալուն:

Ինչ որ կը յուսային ինձմէ իմ ընկերներս, այն էր, որ ես գրէի այդ նիւթերուն վրայ:

Բերուած նախադասութեանց մէջ երկրորդական նախադասութիւնները գլխաւորներուն հետ կապուած են որոնք, որով, որ, ինչ որ, որչափ յարաբերական բառերով, ընդ որում առաջին 4 նախադասութեանց մէջ յարաբերեալ բառեր չկան, իսկ վերջին 2 գլխաւոր նախադասութիւններն ունին՝ այնչափ, այն յարաբերեալները:

**Գ.** Առանց շաղկապներու կամ յարաբերական բառերու, պարզ շարայարութեամբ.

Օրինակ՝

Հազիւ թէ դուրս ելան՝ ուղեց գոհացում տալ իր հետաքրքրութեան:

Զըսաւ՝ ուր դացած էր:

**Վարժութիւն 1.** Յո՛յց տուէք, թէ երկրորդական և զլխաւոր նախադասութիւնները ինչո՛ւ վ կապուած են իրարու հետ.

Ուղեւորներուն մէջ կային նաև երկու երրօրացիներ, որոնցմէ մին ռուսական և միւսը աստրիական անցադիրներ ունէին (1):

Հազիւ քսան վայրկեան անցած էր, երբ կառապանը վերադարձաւ (2):

Արդարև այս անակնկալ և դժնդակ պատահարը այնքան յուզած ու տակնուվրայ ըրած էր դինքը, որ կերակուրի վրայ չէր մտածեր (3):

Կ'ուղէի դուշակել, թէ ինչ է ձեր նպատակը (4):

Լեւոն զգաց, որ մարդը կատարելապէս իրաւունք ունէր (5):

Եւ հարկ եղաւ մանրամասնօրէն պատմել, ինչ որ պատահած էր իր բանտարկութենէն ի վեր (6):

Եթէ այնպէս շըլար՝ այս ժամուս և այս սարսափելի օդին մինչև հոս չէի դար (7):

**Վարժութիւն 2.** Կաղմեցէ՛ք բարդ ստորադասական նախադասութիւններ՝ գործածելով որ, երէ, րէ, որովհետեւ, Բանդի շաղկապները և որ, ինչ, երբ, ուր, որքան յարաբերական բառերը:

## 191. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

### ՇԱՐԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկրորդական նախադասութիւնները տարբեր տեսակի շարադասութիւն կ'ունենան. անոնք կրնան դրուիլ զլխաւորէն առաջ, յետոյ և զլխաւորին միջև:

Օրինակ՝

Երբ գրադարան մտայ, տեսայ ընկերս:

Նաւաւարը, որ վարձառու ծերունի մըն էր, շատ լաւ գիտէր իր գործը:

Իսկոյն հասկցալ, որ վտանգն անցած է:



Առաջին օրինակին մէջ երկրորդական նախադասութիւնը (երբ գրադարան մաս) դրուած է գլխաւորէն առաջ, այսինքն՝ նախադաս է: Երկրորդ օրինակին մէջ երկրորդականը (որ փորձառու ծերունի մըն էր) ինկած է գլխաւոր նախադասութեան կազմին մէջ, այսինքն՝ միջադաս է: Երրորդ օրինակին մէջ երկրորդականը (որ վառնգն անցած է) գլխաւորէն ետքն է, այսինքն՝ յետադաս է:

Գլխաւոր նախադասութենէն առաջ դրուած երկրորդական նախադասութիւնը կը կոչուի նախադաս (առաջադաս), գլխաւորին միջեւ դրուածը՝ միջադաս, իսկ յետոյ դրուածը՝ յետադաս (վերջադաս):

**Վարժութիւն 1.** Հետեւեալ բարդ ստորադասական նախադասութեանց երկրորդական բաղադրիչներուն շարադասութիւնը բացատրել:

Կը զգամ, որ ծունկերս ա՛լ կը դժուարանան զիս տանելու (1):  
Իրիկունը, երբ Բարսեղ էֆէնտին առանձին մնաց կնոջը հետ, մանրամասնօրէն պատմեց առտուան տեսակցութիւնը պալատականին հետ և միևնույն ատեն իր մտատանջութիւնն ալ ըստ հնարած սուտին նկատմամբ (2):

Թորոս պէ՛յ այս տեսակ խորհրդածութիւններու մէջ խորասուղւած էր, երբ սպասաւորը սենեակին դուռը բացաւ (3):

Պատանին, որ ծածկարար իրենց կը հետևէր, պահ՝ մը շուարած մնաց, կարծես ինչ ընկիւրը շղիտնալով (4):

— Ես եթէ ձեր վսեմութեան տեղը ըլլայի, փոխանակ զիս հոս վար դնելու, ազգու հրամաններ կու տայի՛՝ այդ երկու անձներուն հետքը դտնելու համար (5):

Ճիշդ այն վայրկեանին, ուր կը յուսար իրենց հետապնդած գործին գլխաւոր գերակատարները ձեռք ձգել, ահա փոքրիկ պատանի մը իր բուրբ յոյսը ի դերել կը հանէր (6):

**Վարժութիւն 2.** Բարդ ստորադասական նախադասութեանց մէջ որոշել գլխաւորը, երկրորդականը և բացատրել շարադասութիւնը:

**Ա.** Երեք տարի կար որ մտերմացած էինք և սակայն ահկարկութիւն մը իսկ շէր ըրած թէ գրող ալ նշած էր ժամանակին: Այո, գրող և ան ալ ոչ հասարակ տեսակէն, ինչ որ աւելի անհասկնալի կ'ընէր իր այս անտեղի գաղտնապահութիւնը, զոր դիպուած մը եկաւ երեւան հանելու:

Կոմկասեան հայ հանդէսի մը հին թիւերը փոխ առած էի բարեկամէ մը, զոր թղթատելու ատեն հանդիպեցայ արեւմտեան

բարբառով բանի մը պատկերներու թարաւ ստորագրութեամբ: Ասոնցմէ մէկուն վրայ հարեւանցի ակնարկ մը բաւական եղաւ, որպէսզի անմիջապէս իրարու հետեւէ կարդայի ամէնքն ալ, ճըշմարիտ յամիշտակութեամբ: Ինծի համար պարզապէս գրական յայտնութիւն մը եղան այդ սակաւաթիւ էջերը, որոնց ինքնատիպ ու կուռ ոճը հզօր բարձրարանդակի մը պէս դուրս կը ցցուէր հանդէսին սովորաբար տափակ մակերեսէն: Բնականաբար հիացումիս շափ բունն եղաւ նաև զարմանքս, որ տարիներէ ի վեր հայ գրականութեան ուշադիր հետևող մը ըլլալովս հանդերձ՝ բնաւ բան մը չէի կարդաչած այդ անծանօթ տաղանդէն:

Անզուտալ հետաքրքրութիւնս ասպհովարարս պիտի կրնար գոհացնել հանդէսներուն տէրը, որ ժամանակին իբր բաժանորդ անշուշտ ինքն ալ կարդացած և հետաքրքրուելով իմացած ըլլալու էր այս գաղտնիքը:

**Բ.** Արդէն սկսած էի հաշիւներ ընել թէ մօտաւորապէս որչափ զուտ շահ կրնար ձգել այս առաջին հատորիս հրատարակութիւնը, երբ տանտէրս եկաւ յիշեցնելու որ աւելի անյետածղելի հաշիւներ ունէի կարդադրելիք: Մենեակիս վերջին ամսուան վարձքը պէտք էր վճարել, մինչդեռ գանձարանիս վիճակը բնեկրով տեսայ որ սնանկութիւնը մօտալուտ էր: Տանտիրոջս խնդրեցի ամիս մը սպասել, բացատրելով որ Ռուսաստանէն ամէն օր գրամի կը սպասէի: Մարդը համողութեամբ, բայց իմ հաւատքս օրրատօրէ կը թուներ, կասկածը կը սկսէր բոյն դնել մտքիս մէջ: Երկու ամիսէն աւելի անցած էր խմբագրին այն նամակէն ի վեր, որով կը խոստանար շուտով կարդադրել վարձատրութեան խնդիրը: (Առանձաւ)

## 192. ՀԱՄԱՍՏՈՐՈՒԿԱՍ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Գլխաւոր նախագաստութեան կրնան ստորագաստել ոչ միայն մէկ, այլև երկու և աւելի երկրորդական նախագաստութիւններ: Երբ այդ նախագաստութիւնները համալօր են, իրարու միտք չեն լրացներ և միասին կը ոտորստաստին նոյն գլխաւոր նախագաստութեան, կը կոչուին համատորարդաս նախագաստութիւններ:

Օ թ ի ն ա կ՝

Արխտղոմ աղա դեռ Պոլիս չեկած՝ իմացած էր, թէ Ռեալ գաղղիական նաշարան մը կար, և երեւելի մարդիկ հոն կ'երթային նաշելու:

Այստեղ զլխաւոր նախադասութեան ստորադասուած են երկու նախադասութիւններ՝ 1) Սերա զաղղիական նաշարան մը կար, 2) երեւելի մարդիկ հոն կ'երբային նաշելու: Այս նախադասութիւնները համադոր են, համադաս, բայց ստորադասուած են նոյն զլխաւոր նախադասութեան: Այդ է պատճառը, որ այդ համաստորադաս նախադասութիւնները իրարու հետ կապուած են և համադասական շաղկապով, իսկ զլխաւորին հետ՝ թէ ստորադասական շաղկապով:

Նոյն բանը կը նկատենք նաև հետեւեալ բարդ ստորադասական նախադասութեանց մէջ.

Հետեւինք ուրեմն Արիստոզոմ աղային, որմէ վայրկեան մը չբաժնուեցանք մինչև հոս և բաժնուելիք ալ շունինք մինչև պատմութեանս վախճանը:

Ընթերցողը քանի մը անգամ մտրէն անցուց անշուշտ, քէ ինչու միայն Արիստոզոմ աղային օձիքը բռնեւ կ'երբանք և միտ անձերն, անգամ մը ներկայացնելէն ետքը, բարբոլիկն կը մոռնանք:

Երբ կը բացուի գարունը, և դաշտերը կը զարդարուին քաւիչ կանանչով, երբ կը լսուի շինականին անուշ հուրովելը, աշքերուս դէմ կ'ելլայ իմ հայրենի Մուշը:

Այս նախադասութիւններէն առաջինը կարելի է արտայայտել հետեւեալ պատկերով՝

### Գ լ խ աւ ու Ր Գ ա խ ա դ ա ս ու լ ք ի Ն Գ

Հետեւինք ուրեմն Արիստոզոմ աղային

### Հ ա մ ս ս ու Ր ա դ ա ս Գ ա խ ա դ ա ս ու լ ք ի Ն Գ Ն Ե

որմէ վայրկեան մը չբաժնուեցանք մինչև հոս

և


բաժնուելիք ալ շունինք մինչև պատմութեանս վախճանը

Երկրորդ նախադասութիւնը կ'ունենայ միշտ նոյն պատկերը, իսկ երրորդ նախադասութիւնը բիշ մը տարրեր, որովհետև անոր կազմին մէջ գտնուող համաստորադաս նախադասութիւնը կազմուած է ոչ թէ երկու, այլ երեք պարզ նախադասութիւններէ.

**Գ Լ խ ա ո Ր Ե Ն խ ա գ ա ս ու թ ի Ն Ե**

Աչքերու դէմ կ'ելլայ իմ հայրենի  
Մուշը

**Հ ա մ ա ս տ ո Ր ա գ ա ս Ե Ն խ ա գ ա ս ու թ ի Ն Ե Ե Ե**



**Վարժութիւն 1.** Ընդօրինակել այն նախադասութիւնները, որոնց մէջ կան համաստորագաս երկրորդական նախադասութիւններ և ստորագծել վերջիններս.

**Ա.** Խեղճ մարդը երկար ատեն չսիրտի վայելէր այն երջանկութիւնը որ տարիներով իր երազները խոտովեր ու իր սրտին առօրեայ հնհնուրն էր եղեր: Կնոջն ու զաւակներուն Պուլիս հասնելէն երեք շորս ամիս ետքը, ժանտատենդը առեր տարեր էր զինքը...

Առջի մէկ բանի օրուան ցնցումէն կտքը, Մարիամ տուտուն ինքզինքը ժողվեց: Երճիթի պէս բան մը վարձեց որ մէկ ընդարձակ սենեակ ու պղտիկ խոհանոց մ'ունէր և որուն տախտակամածներուն բացուածքէն երկինքը կը տեսնուէր ու հուլը անարգել կը մտնէր կ'ելլէր ամէն ծակ ու ծուկէ:

(Լ. Բաշալեան)

**Բ.** Սահակ էֆէնտիի բարիքներն այնքան մեծ են, որ շէն կըրնար իրենց վարձատրութիւնը գտնել այս աշխարհին մէջ և թէ ամբողջ յաւիտենականութեան մը երանութիւնը կրնայ փոխարինել դանոնք:

Նկեղեցական արարողութենէն յետոյ ժողովուրդը թափօրով ուղղունցաւ դայրոցի շինութեան տեղը, ուր կրկին աղօթքներ ու մաղթանքներ եղան:

Վահանիկ, ըստ Սահակ էֆէնտիի մեկնութեան, արժանապատուութեան վիրաւորանք մը զգաց, տեսնելով որ քոյրը մասնակից

կ'ըլլայ վարժարանի շինութեան և ինք անմասն իլը մնայ անկէ՜  
Վահանիկի սրամտութիւնը հետզհետէ բորբոքեցաւ, ինքն ալ կամ-  
քի տէր էր հօրը ոչնչո՛ւ Հայրը տեսնելով որ անկարելի էր տղուն  
խօսք հասկցնել, որոշեց գանձանակը բանալ և հաւաքած գումարը  
իրը Վահանիկի բաժինը՝ ծախսել վարժարանին: Ըսաւ թէ՛ վար-  
ժարանը իրենց համար շինուած է, թէ իրենց զաւակները պիտի  
կրթուէին հոն:

(Յ. Օտեան)

**Վարժութիւն 2.** Գրել հինգ բարդ նախադասութիւններ, որոնց  
մէջ ըլլան համաստերադաս երկրորդական նախադասութիւններ:

### 193. ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոչ միայն զլխաւոր, այլև երկրորդական նախադասութիւնը  
կրնայ ունենալ զինք լրացնող ստորադաս նախադասութիւն:

Օրի ն ա կ՝

Ամենէն աւելի կը սիրէինք Աշոտը, որ ոգեշնչումով կ'ար-  
տասանէր հայ բանաստեղծներէն, երբ որեւէ հաւաքոյթ ըլլար զըզ-  
րոցին մէջ:

Այստեղ կան երկու երկրորդական նախադասութիւններ, որոնց-  
մէ առաջինը (որ ոգեշնչումով կ'արտասանէր հայ բանաստեղծ-  
ներէն) կը լրացնէ զլխաւոր նախադասութեան միտքը, իսկ երկ-  
րորդը (երբ որեւէ հաւաքոյթ ըլլար զպրոցին մէջ) կը լրացնէ ոչ  
թէ զլխաւոր, այլ անոր ստորադաս երկրորդական նախադասու-  
թեան միտքը:

Երկրորդական նախադասութեան ստորադասուող նախադա-  
սութիւնը կը կոչուի երկրորդական կարգի երկրորդական նախա-  
դասութիւն:

Երկրորդական կարգի են հետեւեալ ստորադասուած նախադա-  
սութիւնները.

Մովէն դուրս ցցուած ժայռի մը կը կոթնէր անշուք տնակը,  
որուն կը հասնէին երբեմն ալիքները, երբ ուժգին հով մը տակ-  
նուրայ ընէր ծովը:

Ինքնարեւարար ձեռքը տարաւ այն գրպանը, որ կը գտնուէր  
հրաժարականը, զոր հետեւեալ ատու կանուխ պիտի տանէր յանձ-  
նէր վաճառականին:

Այս նախադասութիւնները կարելի է արտայայտել հետեւեալ գծադասուկերով.

**Գ Վ խ աւ ու ր Գ ն խ ա դ ա ս ու լ թ իւ ց**

Մովէն զուրս ցցուած ժայռի մը կը  
կոթնէր անշուր տնակը



**Ե ր կ ր ո ղ ա կ ա ց Գ ն խ ա դ ա ս ու լ թ իւ ց**

որուն կը հասնէին երբեմն ալիքները



**Ե ր կ ր ո ղ ա կ ա ց Կ ար գ ի  
Ե ր կ ր ո ղ ա կ ա ց Գ ն խ ա դ ա ս ու լ թ իւ ց**

Էրբ ուժղին հով մը տակնուվրայ  
ընէր ծովը

Երկրորդական կարգի երկրորդական նախադասութիւնն իր կարգին կրնայ ունենալ իր միտքը լրացնող այլ ստորադաս նախադասութիւն մը, որ կը կոչուի երրորդական կարգի երկրորդական նախադասութիւն: Երբեմն այս ալ կը լրացուի այլ ստորադաս նախադասութեամբ մը, որ կը կոչուի չորրորդական կարգի երկրորդական նախադասութիւն: Սակայն նկատելի է, որ հեղինակները շատ քիչ կը գործածեն երրորդական, չորրորդական կամ հինգերորդական կարգի երկրորդական նախադասութիւններ, որովհետեւ անոնք երբեմն կը ծանրացնեն ոճը և տեղի կու տան շփոթութիւններու: Համեմատաբար շատ գործածական են երկրորդական կարգի երկրորդական նախադասութիւնները:

Ստորադաս նախադասութիւն ունեցող նախադասութիւնները կը կոչուին գերադաս:

**Օ Ր Ի Ն Ա Կ՝**

Հրաշագեղ է Սեւանը արշալոյսին, երբ արեւը ծիւանի կը  
նետէ ջուրերուն վրայ, որոնք ալիքուելով մեղմ կ'երգեն կարծես:

Այս բարդ նախադասութեան մէջ գերադաս են թէ՛ գլխաւորը (Հրաշագեղ է Սևանը արշալոյսին) և թէ՛ անոր ստորադասուող երկրորդական նախադասութիւնը (Երբ արեւը ծիրանի կը նետէ շուրեւուն վրայ), որովհետև վերջինիս նոյնպէս կը ստորադասուի ուրիշ երկրորդական նախադասութիւն մը (որոնք ամբողջով մեզմ կ'երգեն կարծես):

Նոյն բարդ ստորադասական նախադասութեան մէջ կրնան ըլլալ ինչպէս համաստորադաս, այնպէս ալ երկրորդական կարգի երկրորդական նախադասութիւններ:

*Օրինակ՝*

Տեսակ մը արհեստական գիշեր կը տիրէ այնտեղ, որուն լուսինն է ձեղունէն կախուած լամպարն՝ ղեղնաշորը պլպլուֆով, և որուն աստղերը կը կազմեն գլանիկի ծայրերն, որք սրահին ամէն կողմէն կը ձակեն այդ խաւարը:

Այս նախադասութիւնը կ'ունենայ հետևեալ դժապատկերը.

**Պ ւ լ խ աւ ու ռ ց ա խ ա դ ա ս ու ը ր իւ ճ**

Տեսակ մը արհեստական գիշեր կը տիրէ այնտեղ

**Հ ա մ ա ս ու ռ ա դ ա ս ց ա խ ա դ ա ս ու ը ր իւ ճ ն եր**

որուն լուսինն է ձեղունէն կախուած լամպարն՝ իր ղեղնաշորը պլպլուֆով

և

որուն աստղերը կը կազմեն գլանիկի ծայրերն

**Երկրորդական կարգի երկրորդական նախադասութիւն**

որք սրահին ամէն կողմէն կը ձակեն այդ խաւարը

**Վարժութիւն 1.** Յոյց տալ երկրորդական և երրորդական Վարգի երկրորդական նախադասութիւնները.

Աշխարհիս վրայ կան մարդեր, որք կը կարծեն, թէ իրաւունք ունին մէկու մը քիթէն բռնել և անոր գլուխը ցաւցնել (1): Դըժ-

բախտութիւնը հոն է, որ գլուխդ ցայցնողն երբեմն այնպիսի հարցում մը կ'ընէ, որուն պատասխանելը դժուար է, վասնզի վճիռ տալը քեզի կը թողու (2): Ոմանք ալ կան, որ կարծես զքեզ ուտիկանութեան պիտի յանձնեն, եթէ չըսես, թէ Մարկոսն իրաւունք ունի... (3): Երանի անոնց, որ կը քնանան և ուշ կ'արթըննան կամ բնաւ չեն արթննար, վասնզի անոնք ընաւ չեն զգար այն ցաւերն, որ հալումաշ կ'ընեն մարդս (4): Առաւօտուն փողոցին վաճառականներն այնքան բարձր ձայնով կ'եղանակեն իրենց ապրանքներն, որ քունն կը շուարի, կը մնայ, թէ որ կողմը փախչի (5): Մարդիկ կան, որ կը դեղեցկանան, երբ մեռնին (6): Արիսողոմ աղա, ինչպէս ըսինք, ականջները տնկեց, երբ իմացաւ, որ բժիշկը, եթէ հիւանդ մը դտնէ, անոր անունը լրադիրներու մէջ պիտի հրատարակէ (7):

**Վարժութիւն 2.** Որոշել համաստորադաս, երկրորդական և երկրորդական ու երրորդական կարգի երկրորդական նախադասութիւնները. կազմել առաջին երկու բարդ ստորադասական նախադասութիւններուն գծապատկերը.

Թագուհի ջանաց աղջիկը մխիթարել, ըսելով թէ գուցէ Անթառամ ջղային տագնապ մը ունեցած էր, թէ իր ըրածին վրայ պիտի զղջար, թէ գուցէ ներում պիտի խնդրէր (1): Իսկ Լեւոն կը գրէր, թէ գեղեցիկ մատանի, զոյգ մը օղ և ապարանջան մը առած էր, զոր իր հետ պիտի բերէր (2): Յետոյ կը պատմէր այն անհուն տառապանքը, զոր կը զգար հեռու մնալով, թէ ինչպէս օրն ի րուն հարազատներու պատկերին նայելով կը մխիթարուէր, թէ ինչ անճառ կարօտով ընդունած է անոնց նամակը (3): Այն սպառնալիքը, ուրկէ մեծ բան չհասկցաւ տիկին Թագուհի, վերջ տուաւ խօսակցութեան, որովհետև նոյն միջոցին Ռոզիկ ներս կը մտնէր և ծնողքը չէին ուղեր օրուան այդ դժնդակ միջագէպին վրայ խօսիլ իրենց աղջկան ներկայութեանը (4): Խեղճ կիներ, որ կը կարծէր թէ ամէն վտանգ հեռացուցած էր, քանի որ վատահեցուցած էին զինքը, ահ ու դողի մատնուեր և իրիկունը ամէն բան պատմէր էր անոր (5):

(Ե. Օտեան)

**Վարժութիւն 3.** Կազմել հինգ նախադասութիւն, որոնց մէջ ըլլան երկրորդական կարգի երկրորդական նախադասութիւններ:



Որոշել էր կրորդական նախագասութեան ընդթը՝ կը նշանակէ որոշել, թէ ան գլխաւոր կամ գերագաս նախագասութեան ո՛ր անգամը կը փոխարինէ: Գլխաւոր կամ գերագաս նախագասութեան ենթական փոխարինող կրկրորդական նախագասութիւնը ըստ ընդթի կը կոչուի ենթակայ երկրորդական նախագասութիւն, որոշիչ: փոխարինողը՝ որոշիչ երկրորդական նախագասութիւն, խընգիրը փոխարինողը՝ խնդիր երկրորդական նախագասութիւն և այլն:

Երկրորդական նախագասութիւնը կրնայ փոխարինել գլխաւոր կամ գերագաս նախագասութեան ըստ անգամները, բայցի բայստորոգեալէն (Երկրորդական նախագասութեամբ կը փոխարինուի միայն բաղադրեալ ստորոգեալի վերագիրը):

Այսպէս ուրեմն, երկրորդական նախագասութիւններն ըստ բնոյթի կ'ըլլան՝ ենթակայ, ստորոգելիական վերագիր, որոշիչ, լատկացոցիչ, բացայայտիչ, խնդիր և պարագայ:

Օրինակ՝

Երեւանէն կրնանք տեսնել աշեհեր Մասիսն ու քառագագաթ Արագածը, որոնք աննաւելի զեղեցկութիւն մը կը պարգեւեն Արաբատեան դաշտավայրին:

Անիկա շէր գիտեր, բէ ինչու իր վիշալ այնքան մեծ էր:

Կը սպասէինք, որովհետեւ խոտացեր էր զալ:

Բերուած օրինակներուն մէջ առաջին կրկրորդական նախագասութիւնն ըստ ընդթի որոշիչ է, կրկրորդը՝ ուղիղ խնդիր, իսկ երրորդը՝ պատճառի պարագայ:

Ի՞նչպէս որոշել կրկրորդական նախագասութեան ընդթը, աշխինքն ի՞նչպէս որոշել, թէ ան գլխաւոր կամ գերագաս նախագասութեան որ անգամը կը փոխարինէ:

Գիրին է որոշել կրկրորդական նախագասութեան ընդթը, եթէ գլխաւոր կամ գերագաս նախագասութեան մէջ գործածուած է որեւէ յարարերեալ բառ (ան, այն, այնպիսի, այնպէս, այնքան, այնչափ և այլն): Միշտ ալ յարարերեալ բառը ձեւականօրէն կը կատարէ այն պաշտօնը, ինչ որ իրապէս ունի կրկրորդական նախագասութիւնը: Եթէ յարարերեալ բառը ձեւականօրէն ենթակայ է, ուրեմն կրկրորդական նախագասութիւնը իրապէս ենթակայ է, եթէ ձեւականօրէն պարագայի պաշտօն կը կատարէ, ուրեմն կրկրորդական նախագասութիւնը պարագայ է: Այդպէս ալ միւսները:

Օրինակ՝

Կը սիրուի այն մարդը, որ սլատուով կը ծառայէ հայրենիքին՝  
Իսկական հայրենասէրն ան է, որ իր բոլոր ուժերը կը նուիրարեւրէ հարազատ ժողովուրդին:

Սա անոր գիրքն է, որ երէկ մեր սունը եկած էր:

Առաջին նախադասութեան մէջ այն յարաբերեալը ձեւականորոշիչ է, ուրեմն ըստ բնոյթի որոշիչ է նաեւ երկրորդական նախադասութիւնը (երկուրն ալ կը լրացնեն մարդը ենթական). եթէ սլարզեցնենք նախադասութիւնը, այն յարաբերեալը դուրս կ'իջնայ, և անոր տեղը կը բռնէ երկրորդական նախադասութեանէն ստացուած բառակապակցութիւնը (կը սիրուի հայրենիքին սլատուով ծառայող մարդը), նոյն կերպ կարելի է փորձել միւս նախադասութիւնները: Այսպէս՝ երկրորդ նախադասութեան մէջ ան յարաբերեալը և երկրորդական նախադասութիւնը ստորոգելիական վերադիր են, իսկ երրորդին մէջ անոր յարաբերեալը և երկրորդական նախադասութիւնը յատկացուցիչ են:

Միշտ չէ, որ դերադաս նախադասութեան մէջ յարաբերեալ բառեր կը դործածուին: այդ իսկ պատճառով երկրորդական նախադասութեան բնոյթը որոշելու համար ուրիշ միջոցներ պէտք է կիրարկել: Ատանցմէ ամենակարեւորը որոշելն է, թէ երկրորդական նախադասութիւնն իր արտայայտած միտքով դերադաս նախադասութեան ո՞ր անդամին հետ կը կապուի:

Օրինակ՝

Խոշոր ահագին շուն մը կայ, որ չի մօտենար սակայն:

Յետոյ չորս թաթերը երկարեցան բիչ բիչ, երբ իր անասունի բնազդումովը հասկեցաւ վտանդ չըլլալը:

Ինչպէս կը նկատուի, բերուած օրինակներէն առաջինին մէջ երկրորդական նախադասութիւնը կը կապուի շուն բառին հետ, որ գոյական է: Իսկ գոյականի լրացումներն են՝ որոշիչը, յատկացուցիչը և բացայայտիչը: Ճշդելու համար, թէ այդ երեքն որ մէկն է, շուն բառին հետ կ'ընտրենք այնպիսի հարցում մը, որուն պատասխանը ըլլայ ամբողջ երկրորդական նախադասութիւնը, և ատուլ ալ կ'որոշենք անոր բնոյթը: Կը հարցնենք, օրինակ, ո՞ր շունը, և կը ստանանք պատասխանը՝ որ չի մօտենար սակայն: Ուրեմն, առաջին օրինակին մէջ երկրորդական նախադասութիւնը որոշիչ է:

Միւս օրինակին մէջ երկրորդական նախադասութիւնը կապուած է երկարեցան ստորոգելալին հետ, հետեւադէս ըստ բնոյթի:

պէտք է կամ խնդիր ըլլայ, կամ պարագայ: Այդ եւս կը ճշդենք հետեւեալ հարցումով՝ ե՞րբ երկարեցան. պատասխանը՝ երբ իր անասունի բնագոյումովը հասկցաւ վտանգ չըլլալը: Ուրեմն, երկրորդ օրինակին մէջ երկրորդական նախադասութիւնը ըստ բնոյթի ժամանակի պարագայ է: Այդ վը զգացուի նաեւ երկրորդական նախադասութիւնը շաղկապող երբ յարաբերական բառէն: Սակայն յարաբերական բառերով կամ շաղկապներով կարելի չէ միշտ որոշել երկրորդական նախադասութեան բնոյթը, որովհետեւ նոյն յարաբերական բառը կամ շաղկապը տարրեր նախադասութեանց մէջ կրնայ կապել տարրեր բնոյթի երկրորդական նախադասութիւններ: Ասոր լաւագոյն օրինակ կրնայ ծառայել երբ յարաբերական բառը, որ մեծ մասամբ կապելով ժամանակի պարագայ երկրորդական նախադասութիւններ, կրնայ դրուիլ նաեւ ենթակայ ու որոշիչ երկրորդական նախադասութեանց մէջ:

Օրինակ՝

Անհամբեր կը սպասէր ամբան, երբ արձակուող առնելով տուն պիտի երար:

Պատահած են դէպքեր, երբ անձերը հեղեղած է ամբողջ զիւրեր:

Այս օրինակներուն մէջ երբ յարաբերական բառը կապեր է ոչ թէ ժամանակի պարագայ, այլ որոշիչ երկրորդական նախադասութիւններ:

Կան սակայն քանի մը ստորադասական շաղկապներ, որոնք միայն մէկ բնոյթի երկրորդական նախադասութիւններ կը կապեն. այդ շաղկապներն են՝ որովհետեւ, որպէսզի, բէպէտ, բէն, հակառակ որ: Ասոնցմէ առաջինը կը դրուի միայն պատճառի պարագայ, երկրորդը՝ միայն նպատակի պարագայ, իսկ միւսները կը դրուին միայն հակառակ հիմունքի պարագայ երկրորդական նախադասութեանց հետ:

Օրինակ՝

Որովհետեւ ճշմարտութիւն կը բարոյէր, խօսքը հատու էր ու ազդեցիկ:

Անոնք շշուկով կը խօսէին, որպէսզի շարքնցեէին քնացած երախան:

Թէն շատ կարգացած էր, բայց չկրցաւ յաջող քննութիւն տալ:

Մենք հանգիպեցանք իրարու, հակառակ որ նախապէս որոշած չէինք:

**Վարժութիւն.** Որոշել, թէ երկրորդական նախադասութիւնները գերտղատան նախադասութեան ո՞ր անդամին հետ և ինչո՞ւ կը կապուին. ընտրել այն յարմար հարցումը, որուն պատասխանը ըլլայ ամբողջ երկրորդական նախադասութիւնը.

**Ա.** Պարոննէ՛ր, այս վերնադիրը կարգաւորվ շկարծէք թէ սընանկացած վաճառական մ'եմ և կու դամ հաշիւներս հասարակութեան ներկայացնելու: Պատիւ ունիմ յայտարարելու, որ կեանքիս մէջ վաճառական եղած չեմ երբէք և լինելու ալ տրամադրութիւն չունիմ, վասնզի խիղճս չի ներքը մէկուկէս ոսկոյ ուրիշի վաճառել այն ապրանքը, զոր ևս մէկ ոսկոյ դնած եմ:

Եւ շէք կարող երեւակայել, թէ որչափ բերկրութիւն պիտի զգամ, եթէ յաջողիմ ձեռքէ ծիծաղներ կ'իջել այն դէպքերու, իրերու և անձերու վրայ, որոնց պիտի հանդիպիր ձեռտետարիս մեջ... Պէտք չէ սակայն մոռնալ այն դաս մը մարդերն, որք ուխտ և երդում ըրած են բնաւ չխնդալու: Այսպիսիներու հետ զործ չունիմ, վասնզի ատոնց երեսէն ժպիտ բաղնին աւելի դժուար է, քան թուրք կառավարութենէ բարենորոգում յուսալն...

**Բ.** Խնդիր մը կայ լուծելու, կ'աղաչեմ որ կիրքը մէկդի ընէք և խղճի ձեր կարծիքը յայտնէք: Խնդիրը այն է, որ երեք անգամ տասնչորս քանի՞ կ'ընէ: Իմ կարծիքս այն է, թէ ութսունմէկ կ'ընէ: Ով որ իմ կարծիքս կ'ընդունի, թող ձեռքը վեր վերցնէ:

**Գ.** Ան որ հոգի ունի՝ մարդ է կրնանք ըսել. բայց շէք կրնար ըսել թէ ան որ ոսկի ունի՝ մարդ է:

**Դ.** Այն մարդը, որ առանց առաքինի ըլլալու կ'ըսէ, թէ հայրս ազնուական էր, և ևս ալ անոր համար ազնուական եմ, կը նմանի այն մարդուն, որ առանց բժշկութեան արհեստը սովորելու կ'ըսէ, թէ ևս բժիշկ եմ, որովհետեւ հայրս բժիշկ էր:

(Յ. Պարոնեան)

## 195. ԵՆԹԱԿԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ենթակայ երկրորդական նախադասութիւնը կը փոխարինէ զլիաւոր նախադասութեան ենթական: Վերջինիս մէջ ենթական կա՛մ բոլորովին չ'արտայայտուիր, կա՛մ կ'արտայայտուի միայն ձեւականօրէն:

Օրինակ՝

Պարզունցաւ, որ Արմէնը արդարացի է:

Իրա՞ւ է, որ վաղը շրջագայութեան սխտի երթանք:

Կարեւոր չէ, թէ այդ դիշեր ան հանդարտ բուն շունկացաւ:

Ստորագծուած գլխաւոր նախագասութիւններէն և ոչ մէկը  
ենթակայ ունի. այդ պաշտօնը կը կատարեն անոնց ստորագաստող  
երկրորդական նախագասութիւնները, որոնք գլխաւորներուն հետ  
կապուած են որ, քէ ստորագասական շաղկապներով:

Այս բանը որոշակի կերպով կ'երեւայ, երբ պարզեցնելու ը-  
լանք բարդ ստորագասական նախագասութիւնները:

Օրինակ՝

Պարզունցաւ Արմէնի արդարացի ըլլալը:

Վաղը շրջագայութեան երթալիս իրա՞ւ է:

Կարեւոր չէ այդ գիշեր անոր հանդարտ բուն շունկեալը:

Երբ գլխաւոր նախագասութեան մէջ ենթական բողոքովին չէ  
արտայայտուած, ստորոգեալը կ'ըլլայ կա՛մ միադէմ բայ մը  
(պարզունցաւ, կը բոլի) կա՛մ բաղադրեալ ստորոգեալ մը (կա-  
րելի է, հաւանական է):

Երբեմն գլխաւոր նախագասութեան մէջ կը դործածուին յա-  
րարերեալ բառեր (այն, այն ամէնը, ամէն ինչ, ան և այլն),  
որոնք ձևականօրէն ենթակայի դեր կը կատարեն, բայց ըստ էու-  
թեան ենթական ամբողջ երկրորդական նախագասութիւնը կ'ըլլայ:

Օրինակ՝

Հոն կը պաշտուէր այն, ինչ որ ամենաթանկագինն է մարդու  
համար:

Այն ամէնը, ինչ որ տեսանք լեռներուն վրայ, երբէք չի մոռ-  
ցուիր:

Յաջողութիւն կ'ունենան միայն անոնք, որոնք շատ կը կար-  
գան:

Այս նախագասութիւնները կապակցուած են այն... ինչ որ,  
այն ամէնը..... ինչ որ, անոնք..... որոնք յարարերեալ և յարա-  
բերական բառերու միջոցով: Նախագասութիւնները պարզեցնելու  
պարագային այդ կապող բառերը դուրս կ'իջան, և ձևական են-  
թակայի դեր կատարող յարարերեալ բառերուն տեղը կը բռնեն  
ենթակայ երկրորդական նախագասութիւններէն ստացուած բառա-  
կապակցութիւնները:

Օրինակ՝

Հոն կը սլաշտուէր մարդու համար ամենարանկազիւնը:  
Լեւոնբուն վրայ տեսածնիս կրէք շի մոռցուիք:  
Յաջողութիւն կ'ունենան միայն շատ կարգացողները:

Ենթակայ երկրորդական նախադասութիւնները միշտ միտքով  
կը կապուին զլիաւոր նախադասութեան ստորոգեալին հետ, բայց  
ոչ թէ կը լրացնեն զայն, այլ անոր հետ կը գործածուին իրրև  
նախադասութեան զլիաւոր անդամ:

Օրինակ՝

Կը թուի, թէ շատոնց ծանօթ եմ այդ մարդուն:  
Հաւանական է, որ ան գայ:

Հարցում ուղղենք՝ ի՞նչ կը բուի, սրտասխտնը կ'ըլլայ՝ այդ  
մարդուն ծանօթ ըլլալս: Երկրորդ նախադասութեան համար՝ ի՞նչ  
չը հաւանական է՝ անոր գալը: Այսպէսով, կ'ունենանք՝ Այդ  
մարդուն շատոնց ծանօթ ըլլալս (ենթակայ) կը բուի (ստորոգե-  
եալ). Անոր գալը (ենթակայ) հաւանական է (ստորոգեալ):

**Վարժութիւն 1.** Յոյց տալ, թէ ինչո՞վ կապակցուած են ենթակայ երկրորդական նախադասութիւնները.

Կէս ժամէն աւելի սպասելէն հտրն էր, որ վերջապէս երևեցաւ սեմին վրայ (1): Այս հեռապատկերն էր, որ զինքը դրդեր էր ամէն միջոցներով արգելք ըլլալու գործին (2): Ով որ ալ ըլլար իմ տեղս, նոյն բանը պիտի ընէր (3): Այս բանն էր, որ ամենէն աւելի կը կատղեցնէր զինք (4): Իրաւ է, թէ իրենց տարիքին բաղդատմամբ շատ բիշ բան պիտէին (5): Կ'երևի, թէ էֆէնտին բարկացուցած են (6): Կատարուեցաւ այն, ինչ որ բոլորովին չպիտի ըլլար (7): Յաղթեց ան, որ ամենէն ուժեղն էր (8):

**Վարժութիւն 2.** Կադմէկ վեց բարդ նախադասութիւններ, որոնց մէջ ըլլան ենթակայ երկրորդական նախադասութիւններ:

## 196. ԱՏՈՐՈԳԵԼԻՒԱԿԱՆ ՎԵՐԱԳԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ստորագելիական վերագիր երկրորդական նախադասութիւնը կը փոխարինէ գլխաւոր նախադասութեան բաղադրեալ ստորոգեալին՝ վերագիրը, որ ձեւակաւորէն կ'արտայայտուի որէնէ յա-

րաբերեալ բառով (այն, ան, այնպէս, այնքան, այնչափ, նոյն-  
քան, նոյնչափ և այլն):

*Օրինակ՝*

*Մեր նպատակը միշտ այն եղած է, որ լաւ սորվինք:*

*Հէզ դեղջուկին ունեցածն այնքան էր, որ հազիւ կը բաւա-  
րաւէր մինչև գարուն:*

*Անոր ձայնը այնպէս էր, որ կը դիտէր բոլորը:*

*Իմ գիրքս այն չէ, զոր դրկեր ես:*

*Իսկական մարդը ան է, որ իր ամբողջ էութեամբ ժողովուր-  
դին հետ է:*

*Աստուծոյ մէկ բանին կարելի է պարզեցնել: Այդ պարագային  
յարարեւրեալ բառերը գուրս կ'իյնան, և անոնց տեղը կը բռնեն  
ստորոգելիական վերագիր երկրորդական նախադասութիւններէն  
ստացուած բառակապակցութիւնները:*

*Մեր նպատակը միշտ լաւ սորվիլը եղած է:*

*Հէզ գեղջուկին ունեցածը հազիւ մինչև գարուն բաւարարե-  
լու չափ էր:*

*Իմ գիրքս քու դրկածդ չէ:*

**Վարժութիւն.** Գտնել յարարեւրեալները, յարարերտական բառերը  
և ստորագասական շաղկապները.

Իրողութիւնն այն էր, որ գործողութիւններու միջոցին ինք՝  
մտովի՝ բոլորովին այլաւր փոխադրուած էր (1): Ճշմարտութիւնն  
այն էր, որ ո՛չ տիկին Քաղուհի և ո՛չ ալ աղջիկը այգալիսի կաս-  
կած մը ունեցած էին (2): Իր առաջին տպաւորութիւնն այն  
եղաւ, թէ իր մայրը որեւէ մերենայութեան մը դո՛ւ գացած է  
պահ մը (3): Բարեկամդ ան չէ, որ քեզի միշտ կը դովէ (4):  
Անոր ստացածն այնքան էր, որ հազիւ բաւէր տան վարձքին (5):  
Մեր նպատակը նոյնն է, ինչ որ դուն կը պատկերացնես (6): Նա-  
ւաւարն անոնցմէ էր, որոնք արունստագէտի մը նաշակը ցոյց  
կու տան իրենց գործին մէջ (7):

197. ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՏՈՒԹԻՒՄ

Որոշիչ երկրորդական նախադասութիւնները կը լրացնեն  
գլխաւոր նախադասութեան մէջ գոյականով արտայայտուած որեւէ  
անդամ՝ ցուցնելով անոր գանազան յատկանիշներէն մէկը:

### Օրինակ՝

Հետզհետե՛ առիթ կ'ունենար ճանչնալու այն մարդիկը, որոնք հուշակ մը հաճած են գրական հրապարակիմ վրայ:

Մութ կանաչութիւն մը տարածուած էր ջուրիմ վրայ, ուր ներմակ վարկուրները կը գալարէին օձակերայիկ:

Ամէն բանէ աւելի կը սիրէր զարունը, երբ կ'արբենայ ամբողջ բնութիւնը:

Այս բոլոր օրինակներուն մէջ որոշիչ երկրորդական նախադասութիւնները գոյական անուններու լրացում են. առաջինին մէջ կը լրացնեն մարդիկ, երկրորդին մէջ՝ ջուր և երրորդին մէջ՝ զարուն բառերը:

Որոշիչ երկրորդական նախադասութիւնները գլխաւորներուն հետ մեծ մասամբ կը կապուին ու յարաբերական բառով, որ կըրնայ գործածուիլ բոլոր հոլովներով, թէ՛ եղակի և թէ՛ յոգնակի թիւով:

### Օրինակ՝

Կապոյտ աչքերով, դեղին մաղերով զարգարուած ըլլալով՝ ունէր նաև երկու մատ մօրուք, ու մայրաբաղաբիս մէջ կամ սպոյ նշան է՝ և կամ շքատրութեան:

Ներկայացաւ իրենց թուխ և երկար դէմքով կին մը, որուն գէմքին վրայ ժամանակը այնքան զիծեր գծած էր զայն սրբազրելու համար...

Փառասիրութիւնն ալ տեսակ մը անօթութիւն է, զոր դրամով կը կշտացնեն մարդերը:

Քիչ մը ատեն կը դիտէ անձրեւի կաթիլները, որոնք ծլարձակ փոսերուն վրայ իյնալով յուշիկ շրշիւն մը յառաջ կը բերեն և մարգարտի պէս կը փողփողին անդ:

Որոշիչ երկրորդական նախադասութիւնները երբեմն կը կապուին ուր, երբ յարաբերական բառերով:

### Օրինակ՝

Կար ժամանակ, ուր խաւարը լուսոյ դէմ կը կոտէր, տգիտութիւնը՝ գիտութեան դէմ, անցեալն՝ ապստոնիին դէմ:

Անցան այն դարերը, ուր մարդկութիւնը տգիտութեան օրօրօջին մէջ մէյ մը ասդին, մէյ մը անդին կ'երթար, կու դար:

Գրիգորը շտեսաւ այն օրը, երբ փողփողեցան յաղթութեան դրօշները:



**Վարժութիւն. Գտնել որոշիչ երկրորդական նախադասութիւնները.**

...Մութն ի լուսուն կու դար, սեւ սլատուած շրջադգեստին տակէն կախած մուրացկանի տոպրակը, որ աջ կուշտին վրայ ուռ մը կը ձեւացնէր: Գլուխը կը պլլէր հնութենէն գունատած շաւ մը, որուն երկու ծայրերը վղէն անցնելով խաշաձև՝ կոկորդին վրայ խոշոր կապ մը կը յօրինէին: Ոտուրները առանց գուլպայի, կ'անցնէին ծանր, լայն ու երկար ոտնամաններու մէջ, որը ծուրիկ ծուրիկ եղած շրջադգեստին տակէն ամէն մէկ քայլափոխի յաջորդաբար կ'երևային, և որոնց վրայ սեւեռած էր յարածամ իր կլոր, հիւծուած և անփայլ աշուրները՝ քալած ատեն: Աջ քաղուկին տակ կը սեղմէր լաթի թանձր կտոր մը՝ շորսի ծալուած, որ հաւանօրէն իր մինտէրն էր հաղարատը կարկտաններով ծածկուած...

Ամէն առտու իր այդ յաւիտենապէս միօրինակ կերպարանքով կը դառնար փողոցի անկիւնին և կը քաշուէր եկեղեցւոյ դրան այն մութ անկիւնը, ուր կը մուրարու Նկեղեցի յանախող ջերմեռանդներէն շատ բիշեր՝ այդ տխուր ու մոռյլոտ մուրացիկին վրայ ի գուժ շարժելով՝ տասնոց մը կը նեռէին լաթին վրայ, ուր կ'երկննար անմիջապէս պապուկին շոր, կոնծած ու երակներով ծածկուած ձեռքը...

(Նուխան)

### 198. ՅԱՏԿԱՑՈՒՅՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Յատկացուցիչ երկրորդական նախադասութիւնը նոյնպէս կը լրացնէ գլխաւոր նախադասութեան մէջ գոյականով արտայայտուած որեւէ անդամ՝ ցուցնելով անոր պատկանելութիւնը, յատկացումը կամ վերաբերութիւնը:

*Օրինակ՝*

Անմահ է անոր յիշատակը, ու զոհուած է իր հայրենիքին համար:

Յոյս կու տային, թէ պիտի գտնեն կորսուած որդին:

Բերուած օրինակներէն առաջինին մէջ յատկացուցիչ երկրորդական նախադասութիւնը կը ցուցնէ, թէ որո՞ւ յիշատակը անմահ է. անոր համար կրնանք հետեւեալ հարցումը ուղղել՝ որո՞ւն յիշատակը, և պատասխանը կ'ըլլայ՝ իր կայրեմիւրի նամար զոհուածին (յիշատակը):

Նոյն բանը կարելի է ընել երկրորդ նախադասութեան պարագային: Ի՞նչ բանի յոյս—կորսուած որդին զանկու (յոյս):

Ինչպէս կ'երևի բերուած օրինակներէն, յատկացուցիչ երկրորդական նախադասութիւնները գլխատրոններուն հետ կը կապուին մեծ մասամբ ով որ, որ յարարեական բառերով, որոնց հետ գլխատր նախադասութեան մէջ յաճախ կը գործածուի անոր յարարերեալը:

Յատկացուցիչ երկրորդական նախադասութիւնները կը կապուին նաեւ որ, քէ ստորադասական շաղկապներով՝ առանց գլխատր նախադասութեան մէջ յարարերեալ բառերու գործածութեան:

Օրինակ՝

Տարակոյս չկայ, որ դայ ժամանակին:

Կասկած կը յայտնէր, քէ զինք կը տեսնէ այսօր:

**Վարժութիւն 1.** Որոշել, թէ ինչ շաղկապներ, յարարեական ու յարարերեալ բառեր գործածուած են յատկացուցիչ երկրորդական նախադասութիւններու կապակցման համար. գլխատր նախադասութեան ո՞ր անդամի լրացում են յատկացուցիչ երկրորդական նախադասութիւնները.

Յառաջիկայ տարեմուտին տարակոյս չկար, թէ ուրիշ տեղեր ալ պիտի գտնէր աշխատելու (1); Շատ տեղեր արդէն դիմած էր և յոյս տուեր էին իրեն, որ մօտ օրերս պիտի վճռեն խնդիրը (2): Ով որ քեզի բարիք կը ցանկայ, անոր խօսքը մտիկ ըրէ (3): Ասոնք անոր գիրքերն են, որուն մասին դովեստով կը խօսին ամէնքը (4): Այս անոր նամակն է, որուն հետ քեզի լուր ուղարկած էի (5): Այդքանը տրդէն ապացոյց էր, որ դուր կը պուած չէր, այլ սեղմուած (6):

**Վարժութիւն 2.** Կազմել հինգ բարդ ստորադասական նախադասութիւններ, ուր յատկացուցիչ երկրորդական նախադասութիւնները կապուին անոր... ով որ, անոր... որ յարարերեալ և յարարեական բառերու միջոցով:

## 199. ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Բացայայտիչ երկրորդական նախադասութիւնը եւս կը լրացնէ գլխատր նախադասութեան մէջ գոյականով կամ գոյականաբար արտայայտուած որեւէ անդամ՝ ցոյց տալով, թէ ով է կամ ինչ է ան:

Օրինակ՝

Բոլորը մեծ սիրով կը կարդան Յ. Պարոնեանը, որ հայ երգիծական գրականութեան շոգշողուն աստղն է:

Մեծ հռչակ կը վայելէ Ա. Խաչատուրեան, որ աշխարհի ակա-  
նատու երգահաններէն մին է:

Բոլոր հայերուն հայեացքը ուղղուած է Մասիսին, որ մեր հայ-  
րենիքին խորհրդանշանն է:

Առաջին օրինակին մէջ բացայայտիչ երկրորդական նախադա-  
սութիւնը կը լրացնէ դոյականով արտայայտուած ուզիչ խնդիրը  
(Յ. Պարոնեան) և կը բացայայտէ, թէ ո՛վ է ան (հայ երգիծական  
գրականութեան շողշույուն աստղը): Երկրորդ օրինակին մէջ երկ-  
րորդական նախադասութիւնը կը լրացնէ դոյականով արտայայտ-  
ուած ենթական (Ա. Խաչատուրեան)՝ բացայայտելով, թէ ո՛վ է ան  
(աշխարհի ականատու երգահաններէն մին): Երրորդ օրինակին  
մէջ երկրորդական նախադասութիւնը կը լրացնէ անուղղակի խնդի-  
րը (Մասիս)՝ բացայայտելով, թէ ի՛նչ է ան (մեր հայրենիքին  
խորհրդանշանը):

Բացայայտիչ երկրորդական նախադասութիւնը այն առանձ-  
նայատկութիւնն ունի, որ անոր ստորոդեալը մեծ մասամբ բա-  
զադրեալ կ'ըլլայ (վերադիրը կ'արտայայտուի դոյական անունով):

Օրինակ՝

Նամակ ստացայ Արամէն, որ իմ մանկութեան ամենամտերիմ  
ընկերս է:

Ներս մտաւ պարոն Մարութեանը, որ հայերէն լեզուի մեր  
սիրելի ուսուցիչն է:

Տիգրանը ծնած է Վան, որ մեր հնադարեան աշխարհի կեդ-  
օնն էր:

Եթէ պարզեցնելու ըլլանք այս նախադասութիւնները, այդ  
պարագային բացայայտիչ երկրորդական նախադասութեան կրճա-  
տումէն ստացուած բառակապակցութիւնը հստովով կը համաձայնի  
իր բացայայտեալին հետ. ինչպէս՝

1. Նամակ ստացայ Արամէն (բացառ. հոլով)՝ իմ մանկու-  
թեան ամենամտերիմ ընկերօջմէս (բացառ. հոլով):

2. Ներս մտաւ Պ. Մարութեանը (ուղղ. հոլով)՝ հայերէն լեզ-  
ուի մեր սիրելի ուսուցիչը (ուղղ. հոլով):

3. Տիգրանը ծնած է Վան (հայց. հոլով)՝ մեր հնադարեան  
աշխարհի կեդրոնը (հայց. հոլով):

Վարժութիւն 1. Զատ դատ ընդօրինակել որոշիչ և բացա-  
յայտիչ երկրորդական նախադասութիւններ ունեցող քարդ նախա-  
դասութիւնները.

**Ա.** Աղաւնի հանրմը քսաներեք տարեկան տղայ մը ունէր, Ալեքսան Թումայեան, որ Պոլսոյ վաճառատան մը կողմէ Տրապիզոն զրկուած էր և անկից մերթ փոքրիկ գումարներ կը զրկէր իր մօրն ու մօրեղբորը, որ իր բարեկեցիկ օրերուն մէջ զինքը մեծցուցած և կրթել տուած էր (1): Կը ներկայացնեմ ձեզ միւսիւ Գէորգ Պաստրմաճեանը, մեր արժանատի դասատուն, որ միանգամայն նշանատր բանաստեղծ մ'է: Միւսիւ Գէորգ հիմա պիտի հաճի մեզ կարգալ իր բերթուածներէն մի քանի կտոր, որոնք հոս կը գտնուին, կանխաւ ընդունելով մեր ջերմ շնորհակալութիւնը (2):

**Բ.** Ղուկաս էֆէնտի անմիջապէս լուր ուղարկեց Սաթենիկին մասին բնութիւն կատարող մարդուն, որ ինչպէս քսինք, Աղքատախնամի օժանդակ անդամ էր (1): Ինք՝ որ մինչեւ այն ատեն իբրև տիրուհի մը ապրած էր Փարիզի մէջ, այժմ կրկիւղ մը կը զգար... (2): Երկու կիները և օրիորդ նունիկ բրդեղէն ու ֆանելայէ հագուատները, որոնք խոշոր ծրարներու մէջ զրուած էին, մէջտեղ հանեցին ու խոշոր սեղանի մը վրայ դիզեցին (3): Խօսք-կապի առթիւ նոյն առտուն կրկին իրենց տունը հիւր եկած էր քենին, Տիկին Երանիկ Ամիսեանը, իր փոքրիկ աղջկանը՝ Արարսիին հետ, որ տասներկու տարեկան գիրուկ, սեւաչուի և թուխ աղջիկ մըն էր (4):

**Վարժութիւն 2.** Կաղմել հինգ բարդ ստորագասական նախադասութիւններ՝ բացայայտիչ երկրորդական նախադասութիւններով:

## 200. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնը կը փոխարինէ գլխաւոր նախադասութեան ուղիղ խնդիրը:

Ան կը լրացնէ գլխաւոր նախադասութեան մէջ ներգործական սեռի բայով արտայայտուած ստորոգեալը և կը սլատասխանէ ուղիղ խնդիրին յատուկ հարցումներուն՝ զո՞վ, ի՞նչ:

Օրինակ՝ Օր մը տեսայ, քէ ինչպէս եաւ մը կ'այրէր շիտի մը պէս:

Բոլորը կ'ըսէին, քէ իրենց լոտրեան մէջ կայ միշտ նոյն պատճառը:

Կ'ուզեմ, որ դադրին ձայներն այս պատիր:

Այս երեք օրինակներուն մէջ ալ ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները ներդրածական սեռի բայերու լրացում են (տեսնել, ըսել, ուզել) . կը հարցնենք՝ տեսայ ի՞նչ, և պատասխանը կ'ըլլայ— նաուն շիպի մը պէս այբիլը. կ'ըսէին ի՞նչ — իրենց լսութեան մէջ միշտ նոյն պատմաւն ըլլալը. կ'ուշեմ ի՞նչ — այս պատիւ ձայներուն դադրիլը:

Առանց ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններու, թերի կը մնայ գերադաս նախադասութեան արտայայտած միտքը:

Օրինակ՝

1. Ուսուցիչը ըսաւ...
2. Մենք տեսանք...
3. Աշակերտը կը յարգէ...
4. Խմբավարը յայտնեց...

Անձի անուան վերաբերող ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները գլխաւորներուն հետ կը կապուին զայն... որ յարարերեալ և յարաբերական բառերու միջոցով. ըստ որում յարաբերեալը միշտ կը դրուի հայցական հոլովով, իսկ յարաբերականը կրնայ դրուիլ բոլոր հոլովներով:

Օրինակ՝ Ի՞նչպէս կրնաս պաշտպանել զայն, որ տարի մը ամբողջ խարած է բնը:

Նիհար, վատառողջ տղայ մըն էր Համրիկ. հիմա յուզումով կը յիշեմ զայն, որուն հետ ծանր ու ցաւագին օրեր անցուցած եմ պանդխտութեանս դժնդակ տարիներուն:

Ժողովուրդը այս կեսարացիին ընթացքին հանելով՝ կը քաջալերէր զայն, որուն խմբադրատունն էր այն ատեն Վէդիւր խանին մէջի սրճարանը...

Իրի վերաբերող ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնը կը կապուի այն... ինչ որ յարարերեալ ու յարաբերական բառերով, ինչպէս և որ, քէ ստորադասական շաղկապներով:

Օրինակ՝

Պանդուկասպետն ըսած էր, քէ առժամանակեայ կերպով միայն այդ սենեակն ինձ կը տրամադրէ:

Անմիջապէս կը զգամ, քէ բացագանչութիւնս որքան աւելորդ է: Կարդացի այն, ինչ որ գրեր էիր:

Արդևօք Յակոբը հասկցա՞ւ այն, ինչ որ ըսեր էի երէկ:

Ըսաւ, որ այսօր եղբայրը շի գար:

**Վարժութիւն 1.** Ուրոշել, թէ ի՛նչ շաղկապով կապուած են ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները և ո՛ր հարցումի՛ն կը պատասխանեն.

Բեռնակիրները համարձակած էին ըսել Արիստոզոմ աղային, թէ շատ աղէկ գիտէին Սաղկի փողոցը (1): Արիստոզոմ աղա այս տեսարանին առջև բոլորովին շուարած՝ անհամբեր տեսնել կ'ուզէր, թէ ի՛նչ պիտի ընէր այս սյարոնը սեղանի վրայ (2): Իւր քսակի բերանը կը բանար և դրամով կը վարձատրէր ամէն անոնք, որ իրեն կը խոստանային անունն ժողովրդեան մէջ տարածելու (3): Կ'ուզեմ, որ սլատկերս փառաւոր կերպով քաշուի (4): Կ'մկմալով պատասխանեց թէ՛ իր գրածները չէին արժեր այսպէս հրապարակաւ կարդացուելու (5): Մտքէն իսկ չէր անցուցած, թէ խնդալու ինչ զուարճալի առարկայ մ'էր դարձած (6): Ամէն բանէ առաջ սակայն զգացած էր, թէ այսպիսի ընկերութեան մը մէջ ըստ պատշաճի երևալու համար, պէտք է լաւ հաղուիլ (7): Վարպետին պատուիրեց, որ թողթը պահէ խնամքով (8): Անոր աչքերուն մէջը նայողը միայն կը հասկնայ, թէ որքան յամառ է (9): Կ'ըսէր, թէ ինք ամբողջ կարելին ըրաւ օգտակար ըլլալու համար (10): Ոսկերիչը տեսաւ, որ ալ փախուստի ճամբայ չկայ (11): Իրաւունք ունիս, միայն կը խնդրեմ, որ իմ մեկնելէս հոգը իրենց խօսք բանաս ու սլատասխանը վաղը հաղորդես ինձի (12):

**Վարժութիւն 2.** Հետեւեալ բայերուն հետ գործածել ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններ՝ հասկնալ, յարգել, տեսնել, նաեչնալ, նկարել, նուագել, բերել, պատմել:

**Վարժութիւն 3.** Կաղմել շորս բարդ ստորագասական նախադասութիւններ, որոնց մէջ ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները գլխաւորներուն հետ կապուած ըլլան յարարերեալ ու յարարերական բառերով, և շորս ուրիշ նախադասութիւններ ալ, ուր ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները գլխաւորներուն հետ կապուին ստորագասական շաղկապներով:

## 201. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՎՆԵՐ

Անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւնները կը փոխարինեն գլխաւոր նախադասութեան անուղղակի խնդիրները: Անոնք կ'ըլլան՝ յանգման ու մատուցման, վերաբերութեան, ան-

շատման, միջոցի և այլն: Աստուծոյ մէջ յաճախակի կը դործածուին յանդման ու մատուցման և վերաբերութեան անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւնները:

**Ա. ՅԱՆԳՄԱՆ ու ՄԱՏՈՒՅՄԱՆ** անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւնը կը փոխարինէ գերադաս նախադասութեան յանգման ու մատուցման անուղղակի խնդիրը:

*Օրինակ՝*

1. Հաւատացէ՛՛ք, որ շատ կը ցաւիմ եղածին համար:

2. Ինքք կը սպասէր, որ նոյն օրը որոշում տրուէր ու խնդիրը լմննար ժամկոչը նամբելով:

3. Ոչ որ օգնութեան կը հասնի անոր, որ խղճով մը կեցեր է պանդոկին դրան առջև:

*Ստորագծուած երկրորդական նախադասութիւնները կը լրացնեն ղլխաւոր նախադասութեանց ստորոգեալները և կը ցուցնեն, թէ ինչ բանի կը յանդի անոնց գործողութիւնը: Այսպէս՝*

1. Հաւատացէ՛՛ք ի՞նչ բանի՝ եղածին համար իմ շատ ցաւելու:

2. Կը սպասէր ի՞նչ բանի՝ նոյն օրը որոշում տրուելուն և ժամկոչը նամբելով խնդիրը լմննալուն:

3. Օգնութեան կը հասնի որո՞ւն՝ պանդոկին դրան առջև խղճով մը կեցողին:

**Բ. ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ** անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւնը կը լրացնէ գերադաս նախադասութեան ստորոգեալը՝ փոխարինելով անոր վերաբերութեան անուղղակի խնդիրը:

*Օրինակ՝*

1. Միւս կողմէ տիկին Սաթէն ալ վստահ էր, թէ ժամկոչը նամբուած է:

2. Ապահով եմ, թէ ոչ մէկ դէպք պիտի պատահի:

3. Վերջէն համոզուեցան, թէ ազգերն ալ սպրեւելու համար միութեան դեղի պէտք ունին:

*Ստորագծուած երկրորդական նախադասութիւնները կը լրացնեն գերադաս նախադասութիւններուն ստորոգեալները՝ ցուցնելով, թէ ինչի՞, ի՞նչ բանի կը վերաբերին անոնք: Այսպէս՝*

1. Միւստան էր ինչի՞, ի՞նչ բանի՝ ժամկոչին նամբուած ըլլալուն:

2. Ապահով եմ ինչի՞, ի՞նչ բանի մասին՝ ոչ մէկ ղէպի պատահելուն.

3. Համոզուեցան ի՞նչ բանի՝ ասլելու համար ազգերու ալ միութեան դեղի պէտք ունենալուն:

Կան անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւններ ալ, որոնք քիչ կը գործածուին արեւմտահայ լեզուի մէջ:

Օրինակ՝

Կը սպառնար իրենց, որ այդ մասին պէտք է յայտնէ տնօրէնին:

Այս օրինակին մէջ երկրորդական նախադասութիւնը միջոցի անուղղակի խնդիր է, որովհետեւ կը ցուցնէ, թէ ինչով կը սպառնար:

Արեւելահայերէնի մէջ անշատման, միջոցի և ներգործող անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւնները աւելի յաճախ կը գործածուին:

Օրինակ՝

Պետրոսը խուսափում էր նրանից, ով ճիշդ չէր խօսում:

Գուրգէնը հպարտանում էր նրանով, որ իր եղբայրը հերոս օդաչու է:

Արամը հրապուրուեց նրանով, որ իրեն հիւրախաղի հրատրեցին շատ քաղաքներէ:

**Վարժութիւն 1.** Որոշել անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւններուն տեսակները.

Հաճի թումիկ երբէք չէր սոյասեր, որ տակաւին շսկսուած գործի մը համար այսքան առատ կանխավճար մը պիտի ստանար (1): Ես շիտակը չեմ հաւատար, որ այդ մարդը գէշ ըլլայ (2): Սպասուհիին հետ լուր դրկեց Ղուկաս էֆէնտիին, թէ կը փախարէր դիմքը տեսնել (3): Ես վստահ եմ, որ այդ կիներ ու երիտասարդը անմեղ են (4): Հաւատացէ՛ք, որ շատ լաւ ըրիր հոս գալով (5): Կրնաք վստահ ըլլալ, որ քիչ օրէն, այսինքն մէկ երկու շաբաթէն, թուղթերը կը պատրաստուին ու ձեռք կը յանձնուին (6): Ես վստահ եմ, որ անիկա չպիտի հակառակի (7): Այսուհանդերձ կասկածած էր, որ թերեւ Պօղոս էֆ. աղղուէր իր պաշտօնակիցներուն խօսքերէն ու ճամբէր ժամկոչը (8): Մանկամարդ աղջիկը վստահ էր, որ իր խօսքը պիտի յարգէր (9): Կիները համոզուելու են, թէ գեղեցկութիւնը պարզութեան մէջ է (10):

**Վարժութիւն 2.** Կազմել ութ բարդ ստորադասական նախադասութիւններ՝ անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւններով:



Պարագայ երկրորդական նախադասութիւնները կը լրացնեն գլխաւոր նախադասութեան լատորոգեալը՝ վոխարինելով անոր այս կամ այն սլարագան (*տեղի, ժամանակի, ձևի, շար ու քանակի, պատճառի, պայմանի, նպատակի, հիմունքի և հակառակ հիմունքի*):

**Ա. Տեղի և ժամանակի սլաաչայ երկրորդական  
նախադասութիւններ**

Տեղի սլարագայ երկրորդական նախադասութիւնը կը ցուցնէ գերադաս նախադասութեան գործողութեան տեղը:

*Օրինակ՝*

*Միշտ կ'երթար այնտեղ, ուր շերամի որդերը օրէ օր կ'անէին, կը վարքամանային:*

*Շերամապահութեամբ կը ղրաղէին հոն, ուր քրեմիներ շատ կային:*

Ժամանակի սլարագայ երկրորդական նախադասութիւնը կը ցուցնէ գերադաս նախադասութեան գործողութեան ժամանակը:

*Օրինակ՝*

*Հանգիստեցայ Պարգեին, երբ կ'անցնէր մեր փողոցէն:*

*Մինչեւ առում ջուր գայ, դորտին աչքերը դուրս կ'իլլին:*

Տեղի և ժամանակի սլարագայ երկրորդական նախադասութիւնները գլխաւորներուն հետ կը կապուին համապատասխան յարաբերական բառերով ու շաղկապներով (*տեղի սլարագան՝ ուր, իսկ ժամանակի սլարագան՝ երբ, երբոր յարաբերական բառերով և մինչ, մինչեւ, մինչև որ ստորադասական շաղկապներով*):

*Օրինակ՝*

*1. Կը զքօսնէի այնտեղ, ուր կը բուրէին վարդերը:*

*2. Հոն, ուր կը թագաւորէր աղքատութիւնը, կեանքի խլըրտում մը կար սակայն:*

*3. Արիսողոմ աղա կը մոռնար իւր անօթութիւնն անգամ, երբ մէկն անոր խօսք կու տար անունը լրագրի մէջ անցընելու...*

*4. Սպասեցինք, մինչեւ որ եկան հիւրերը:*

Առաջին և երկրորդ օրինակներուն մէջ երկրորդական նախադասութիւնները տեղի պարագայ են, իսկ վերջին երկու օրինակներուն մէջ՝ ժամանակի պարագայ: Անոնք բոլորն ալ կը լրացնեն գլխաւոր նախադասութիւններուն ստորոգեակները (կը գրօսնէր, կար, կը մտնար, սպասեցին):

**Վարժութիւն 1.** Զատ զատ ընդօրինակել տեղի, ժամանակի պարագայ և որոշիչ երկրորդական նախադասութիւնները. որոշել, թէ անոնք գլխաւոր նախադասութեան ո՞ր խօսքի մասով արտաբայտուած անդամին լրացումն են:

Երբ խնդիրը դրական նիւթի մը կամ մատենագրաց վրայ էր, ամէն ոք առանց վիճարանութեան կ'ընդունէր Գէորգի բարձր հեղինակութիւնը (1): Երբ առաջին անգամ վարժարան մտաւ, տասնեակ հինգ տարեկան էր (2): Կու դայ Յունուարը, երբ ամէն ինչ պիտի ծածկուի ձիւնի ճերմակ սաւանով (3): Անյատակ անդունդի մը զարհուրելի խորութիւնը կը զգամ հոն, ուր արձակած ձայնիդ կամ նետած քարիդ արձագանդը շնա լսեր (4): Կեանքիս մէջ հարիւր անգամէ աւելի հանդիպած եմ այս տեսարանին, ուր երկու դերասաններ խօսքն իրարու բերնէն յափշտակելով՝ իւրաքանչիւրը կը փափաքի առաջ իւր խօսքը մտիկ ընել տալ (5): Այդտեղ լսել, ուր շոգենալը ապաստանած է, հովը՝ սմեհի ուժգնութեամբ կու դայ պատառոտել ծովը, ալիքներու երկար ու լայն շերտերով (6): Տունը, ուր կ'ապրէր ընկերս, ծովուն մօտ էր (7): Երախտաները մնացին տունը, մինչև որ մայրը վերադարձաւ շուկայէն (8): Երբ Քերայի մեծ փողոցը հասաւ, բազմութիւնը խոնուած էր ամէն կողմ (9):

**Վարժութիւն 2.** Կազմել շորս բարդ ստորագասական նախադասութիւններ, որոնց մէջ տեղի և ժամանակի պարագայ երկրորդական նախադասութիւնները գլխաւորներուն հետ կապուին ուր, երբ յարարեցական բառերով:

### Բ. Ձևի և չափ ու բանակի պարագայ երկրորդական Նախադասութիւններ

Ինչպէս ձեռի, այնպէս ալ չափ ու քանակի պարագայ երկրորդական նախադասութիւնները կը լրացնեն գերադաս նախադասութեան ստորոգեալը և կը ցուցնեն առաջինը՝ անոր գործողութեան ձեւը, իսկ երկրորդը՝ չափը:

### Օրինակ՝

1. Ինչպէս որ բժիշկները մէկու մը հիւանդ կամ առողջ ըլլալը հասկնալու համար անոր լեզուն կամ բազկերակները կը ֆենեն՝ ես ալ մէկու մը բարի կամ շար ըլլալը իմանալու համար՝ անոր քսակը կը քննեմ և շեմ սխալիր:

2. Այնպէս կը դայլալէր ընմէն, որ կարծես սոխակ մը ըլլար:

3. Գործատրներուն վրայ այնքան կը սրտար, որ յետոյ օրերով ձայնը կը փաշուէր:

4. Մանր աշխատանքէն այնչափ յոգնած էր, որ հազիւ կը փալէր սալայտակիլն վրայ:

Հոս ստորագծուած երկրորդական նախադասութիւններէն առաջին երկուքը դերագաս նախադասութեան ստորոգեակին գործողութեան ձևը կը ցուցնեն, ուրեմն ձևի պարագայ են, իսկ երրորդն ու չորրորդը գործողութեան շափը, քանակը կը ցուցնեն, ուրեմն շափ ու քանակի պարագաներ են:

Ձևի և շափ ու քանակի պարագայ երկրորդական նախադասութիւնները կարելի է որոշել թէ՛ իրենց արտայայտած միտքով և թէ՛ ձև կամ շափ ու քանակ ցուցնող յարարերեալ ու յարարերական բառերու միջոցով:

1- Իր դիտցած երկուք ու կէս հայերէն բառերն այնպէս մը կը գործածէր, որ ես կը նախընտրէի ընաւ շխօսիլ մեր լեզուով:

2. Ֆախրի պէչ այնպէս բացաւ դեղատունին դուռը, որ ցուցափեղկին մէջի դմսուած սկիւռը վար ինկաւ:

3. Այնքան սարսափեցաւ, որ սլատրաստ էր դուռը խորտակելու:

4. Այնչափ յուզուած էր, որ փողոցին անկիւնը կանգ առաւ՝ սրաին հերքը դադրեցնելու համար:

Առաջին երկու օրինակներուն մէջ երկրորդական նախադասութիւնները ձևի պարագայ են: Ատիկա կ'երեւի նախ և առաջ այնպէս յարարերեալ բառէն, որ ձև կը ցուցնէ, ապա նաև նախադասութեան միտքէն. կրնանք, օրինակ, առաջին նախադասութեան համար հետեւեալ հարցումը ուղղել՝ բառերն ի՞նչպէս կը գործածէր, և պատասխանը կ'ըլլայ՝ այնպէս, որ ես կը նախընտրէի շխօսիլ մեր լեզուով: Երկրորդ նախադասութեան համար տրամաբանական է հետեւեալ հարցումը՝ Ֆախրի պէչ ի՞նչպէս բացաւ դուռը. պատասխանը կ'ըլլայ՝ այնպէս, որ ցուցափեղկին մէջի զմրսուած սկիւռը վար ինկաւ:

Երրորդ և շորրորդ օրինակներուն մէջ երկրորդական նախադասութեանց շափ ու քանակի պարագայ ըլլալը կ'երևի այնքան, այնչափ յարաբերեալ բառերէն, որոնք շափ ու քանակ կը ջուշնեն: Այդ բանը կ'երևի նաև նախադասութեանց արտայայտած իմաստէն: Օրինակի համար, կարելի է հարցնել՝ ո՞րքան սարսափեցաւ (այնքան, որ պատրաստ էր դուր խորտակելու): Ի՞նչ շափ յուղած էր (այնչափ, որ փողոցին առկալը կանգ առաւ՝ սրտին հետք դադրեցնելու համար):

**Վարժութիւն.** Գտնել ձևի և շափ ու քանակի պարագայ երկրորդական նախադասութիւնները:

Այտերը այնչափ ներս բաշուած էին, որ բերնին մէջէն զիրար կը համրուրէին կարծես (1): Աչքերն առիլի խոռոշացած են, այնչափ ներս բաշուած, որ դերնդմանի փոսի մը տարօրինակ զգայնութիւնը կու տան տեսողին (2): Ատենարանը կայնած տեղը այնպէս կը դողար, որ Արիստոզոմ աղային սիրտը կը հասնէր, թէ կազը դետինը պիտի իյնար (3): Այս պարագան այնչափ կը խոզվէր զինքն, որ ամէն անգամ սիրտը կը տրոփէր, երբ տիկինը հարցումներ կ'ուղղէր իրեն (4): Այնքան յուղուած էր, որ այլեւս ուր շունցաւ յառաջանալու (5): Անիկա անանկ մը վեր թռաւ, որ կարծես թէ օձը խայթած էր (6):

#### Գ. Պայմանի պարագայ երկրորդական նախադասութիւն

Պայմանի պարագայ երկրորդական նախադասութիւնը կը ջուշնէ պայման մը, առանց որուն չի կատարուիր գերադաս նախադասութեան գործողութիւնը:

Պայմանի պարագայ երկրորդական նախադասութիւնը գլխաւորին հետ յաճախ կը կապուի երէ ստորագասական շաղկապով:

Երէ մէկ-երկու ռսլի տանք, այս շարաթ կու գա՞յ մուսան: Եւ երէ շգայ, անոր տեղ ուրի՞շ մը բերելու է:

Երէ ծաները տերեւարափի եղած ըլլային, պիտի շիրնայի ծառուղիին այդ անկիւնէն տեսնել անդունդին խորը նետուած կայարանը:

Երէ անիկա գար, ես ալ կու գայի:

Երէ պիտի շխաղայիր, ինչո՞ւ եկար:

**Վարժութիւն.** Կաղմել վեց բարդ նախադասութիւններ, որոնց մէջ ըլլան պայմանի պարագայ երկրորդական նախադասութիւններ:

**Պ. Պատճառի և նպատակի պարագայ երկրորդական  
նախադասութիւններ**

Պատճառի պարագայ երկրորդական նախադասութիւնը կը ցուցնէ զերադաս նախադասութեան արտասայտած գործողութեան պատճառը, իսկ նպատակի պարագան՝ նպատակը:

*Օրինակ՝*

1. Անձրեւանոց մը առեր էր հետը, որովհետեւ դուրսը անձրեւ կը մաղուէր:

2. Հպարտ տղան միշտ կը լսէր, զի շէր ուզեր իր տղիտութիւնը մատենել ընկերներուն:

3. Շուտ եկած էր, որպէսզի դասերը կրկնէ:

4. Յակոբը կը ժպտէր ընկերներուն, որպէսզի ծածկէ իր հոգիին խռովքը:

Ստորագծուած երկրորդական նախադասութիւններէն առաջին երկուքը պատճառի, իսկ երրորդն ու չորրորդը նպատակի պարագաներ են:

Պատճառի, ինչպէս նաեւ նպատակի պարագայ երկրորդական նախադասութիւնները որոշելը դժուար չէ, որովհետեւ անոնք գլխաւորներուն հետ մը կապուին միայն իրենց յատուկ ստորագասական շաղկապներով: Պատճառի պարագայ երկրորդական նախադասութիւնը կը կապուի որովհետեւ, զի, քանզի, վասնզի, իսկ նպատակի պարագան՝ որպէսզի ստորագասական շաղկապներով:

1. Աւելի կանուխ շէր կրցած ընել այս շարժումը, որովհետեւ յուզուած էր և սրտի բաբախումները դինքը կը գամէին կեցած տեղը:

2. Մեծ ճիգով մը կը զսպէր ինքզինքը, քանզի շէր ուզեր վիրատորած ըլլալ ընկերը:

3. Երիտասարդը անգամ մը նայեցաւ դռնէն դուրս, որպէսզի իրենց լսող չըլլայ:

4. Խումր մը երիտասարդներ մեկնեցան Երևան, որպէսզի բժշկութիւն և մեքենագիտութիւն ուսանին:

Այս օրինակներէն առաջին երկուքը պատճառի, իսկ վերջինները՝ նպատակի պարագաներ են:

Պատճառի և նպատակի պարագայ երկրորդական նախադասութիւնները կրնան կապուիլ նաեւ որ ստորագասական շաղկապով:

Յ Ր Ի Ն Ա Կ՝

Ան բաղաբ եկած էր, որ նոր գիրքեր գնէ:

Համերգին ներկայ չէր եղած անոր համար, որ խիստ զրա-  
ղած էր:

**Վարժութիւն 1.** Որոշել պատճառի և նպատակի պարագայ  
երկրորդական նախադասութիւնները և ցոյց տալ, թէ ի՛նչ շաղ-  
կապներով կապուած են անոնք զլիսաւոր նախադասութիւններուն  
հետ.

Ձեզի նամակ չէր գրած, բանի որ կը յանձնարարէր իր յա-  
պաղումը նախապէս իմաց տալ (1): Արխտղում աղան միշտ մե-  
քենարար հաւանութեան պատասխաններ կու տար իրեն եղած  
հարցումներուն, որպէսզի խօսքը չերկարի, և կերակուրը բերին (2):  
Արխտղում աղան աղուոր բուն մը բաշկց նոյն զիշերը, վասնզի  
շատ յագնած էր (3): Երկու ամիս սլխաի ստասեմ, որ մուսաս դայ  
և ներշնչէ ինձի, որպէսզի գրեմ (4): ժամանակը չէր յառաջանար  
կարծես, բանի որ նոյն ամուր նիւթով գրաւուած էր իր շրջապա-  
տը (5): Աւետիս իր թեղանիքով արեց զրութիւնը, ջանալով նու-  
գագոյն աղմուկ յարուցանել, որպէսզի Աղանի շտէ ու մէջտեղ  
ելլայ (6):

**Վարժութիւն 2.** Կազմել վեց բարդ ստորադասակալի նախա-  
դասութիւններ՝ պատճառի և նպատակի պարագայ երկրորդական  
նախադասութիւններով:

**Ե. ՀիմուճԳի և Խակառակ ԻմուճԳի պարագայ**

**Երկրորդական նախադասութիւններ**

Հիմունքի պարագայ երկրորդական նախադասութիւնը կը  
ցուցնէ որեւէ հանգամանք, որ կիմք կը ծառայէ գերադաս նա-  
խադասութեան գործողութեան կատարման համար:

Յ Ր Ի Ն Ա Կ՝

Ըստ այն բանի, ինչ որ հաստատել էին ընկերները, անիկա  
արդար ճանչցուեցաւ:

Ստորագծուած նախադասութիւնը Հիմունքի պարագայ է, որով-  
հետեւ կը ցուցնէ անոր արդար ճանչցուելուն հիմունքը (ինչ որ  
հաստատել էին ընկերները). ուրեմն ընկերներուն ըսածը հիմք  
ծառայած է անոր արդար ճանչցուելուն:

Հիմունքի պարագայ երկրորդական նախադասութիւնները բիշ գործածական են:

Աւելի յաճախ կը գործածուին հակառակ հիմունքի պարագայ երկրորդական նախադասութիւնները: Անոնք կը ցուցնեն նիւտունք մը, որուն հակառակ կատարուած է կամ կատարուած չէ գործողութիւնը:

*Օրինակ՝*

Թէև փոքր էր մարմնով, բայց կը յազթէր բուրբին:

Հակառակ որ Հայաստան երբէք չէւ եղած, բայց լսած էր ու գիտէր անոր ամէն մէկ յաջողութիւնը:

Հակառակ հիմունքի պարագայ երկրորդական նախադասութիւնները ղլխատորներուն հետ կը կապուին իրենց յատուկ ստորագասական շաղկապներով՝ րէւ, րէպէտ, րէպլետ, հակառակ որ և այլն:

*Օրինակ՝*

Թէև դիտողութեանս վրայ լուց բանի մը օր, բայց վերսկսաւ կրկին իր խաղերը:

Աւետիս րէւ կ'ամշնար, բայց միւս կողմէն ալ գոհ էր այդ հանդիպումէն:

Հաւարոյթին եկաւ, հակառակ որ չէր խոստացած ամենեւին: Թէպէտ արտաքինապէս անտաշ մարդ էր, բայց ազնիւ ու գեղեցիկ հոգի ունէր:

**Վարժութիւն 1.** Զատ զատ ընդօրինակել հիմունքի և հակառակ հիմունքի պարագայ երկրորդական նախադասութիւնները. որոշել, թէ ի՛նչ շաղկապներով կապուած են անոնք դիտար նախադասութիւններուն հետ.

**Ա.** Թէև լաւ լուրորդ չէր եղած երրէք, բայց ջուրը նետուեցաւ՝ ընկերոջը փրկելու համար (1): Մի՛ դատար մարդը ըստ այն բանի, ինչ որ կ'ըսեն շատերը, այլ ճանշցի՛ր դայն ըստ այն բանի, ինչ որ իրապէս կը ներկայացնէ անոր կեանքը (2): Թէպէտեւ չէր սիրեր, բայց կը յարդէր դայն՝ իր խելքին և հմտութեան համար (3): Թէպէտ գուր զիս չէք ճանշնար, բայց իմ մասին կարծիք յայտնած էք (4):

**Բ.**

Թէպէտ թոշնիկն ու հովն հայոց

Աւերակաց շրջին վերայ,

Թէպէտ պղտոր վտակն հայոց

Նոճիներու մէջ կը սողայ,  
Նորա հառաչք են հայրենեաց,  
Նորա շերթան սըրտէս ի բաց (5):

(Մ. Պէշիկըրաշևան)

**Վարժութիւն 2.** Կազմել հինգական բարդ ստորագասական նախադասութիւններ՝ հիմունքի և հակառակ հիմունքի պարագայ երկրորդական նախադասութիւններով:

**Վարժութիւն 3.** Որոշել պարագայ երկրորդական նախադասութեանց տեսակը և ցոյց տալ, թէ ի՛նչպէս կապուած են անոնք գերագաս նախադասութիւններուն հետ.

**Ա.** Կ'ուզէ՞ք մէկու մը բարի կամ չար ըլլալը հասկնալ, ձեռքերիդ անոր գրպանը խոթեցէք և եթէ բան մը շղտնէք հոն, մի՛ վախնաք այն մարդէն, որովհետեւ աշխարհիս ամենարարի մարդն է ան: Իսկ երբ տեսնէք, որ մարդ մը առանց գրպանի բանթալոն մ'է հագներ, մօտեցէք, և երկրպագութիւն ըրէք իրեն, որովհետեւ անիկա սուրբ մ'է, և անանկ սուրբ մը որ սրտոց մէջ ալ հաղուագիտ է: Ընդհակառակն, երբ տեսնէք մարդ մը, որուն գրպաններուն մէջ ստակ մը կը գտնուի, հեռացէք իրմէ, փախէք իրմէ, որովհետեւ այդ մարդը բարի չէ, և կրնայ ձեզի վնաս հասցնել...

Հարուստ մարդու մը ձին ինծի կից մը կու տայ և մարմինս ջարդ ու բուրդ ընկելով՝ դատինը կը պառկեցնէ կոր զիս. ներկայ նողոններէն մէկը շի համարձակիր կոր բովս մօտենալու, թուէս բռնելու և զիս վերցնելու, որպէսզի ձիուն արժանապատուութիւնը չվիրատորուի, որպէսզի ձիուն աէրը չեղնէ իրեն ըսէ թէ՛ իմ ձիուս հարուածած անձին դուք սաշտպանութիւն ըրած էք նղեր, և ասիկա իմ ձիուս անպատուութիւն կը բերէ:

(Յ. Պարոնեան)

**Բ.** Քառասունհինգ տարեկան մարդ մըն էր եկողը, որ սարկեշտ և գթասէր մէկու մը տպաւորութիւնը թողուցեր էր Սաթևնիկի վրան, թէև և իր նիւթական վիճակին ու կեանքին վրայ կատարուած բոլոր այդ քննութիւնները շատ անհասկոյ նղեր էին խեղճ կնոջ համար...

Անշուշտ իր դակիին ամենատարրական պէտքերը եթէ հոգալու կարողութիւն ունենար, Սաթևնիկ ևրբէք չպիտի գիջանէր դիմում ընել Աղբատալոնամիւ: Իր փսքրիկ աղջկան՝ Սիրվարդի վիճակը թէև փոփոխութիւն մը չէր կրած, բայց միշտ տկար ու նի-



հար կը մնար, սնունդի անբաւականութեան պատճառով: Եթէ չըլ-  
լային կարի գործերը, որոնք արդէն մեծ բան մը չէին արտադրեր,  
զրեթէ բոլորովին անօթի պիտի մնար իր փոքրիկ Սիրվարդին հետ:

Այժմ Սաթենիկ բաւական զրամ պարտական էր երիտասար-  
դին և ասիկա մեծ խցի խայթ մըն էր իրեն համար, որովհետեւ  
գիտէր, թէ ան իր անհրաժեշտ պէտքերէն զրկուելով էր որ այդ  
նիւթական փոքրիկ օդնութիւնները կ'ընէր իրեն:

... Երբ Ղուկաս էֆէնտի մտեր էր Աղբատախնամի գրասենեա-  
կէն ներս, ամէնքը փութացեր էին յարգանքով ոտքի ելլելու: Ղու-  
կաս էֆէնտի գիտէր, որ միւսները նստելու համար պիտի սպա-  
սէին, որ նախ ինքը բաղմէր և ասոր համար կամաց կը քալէր,  
որպէսզի զանոնք ոտքի վրայ կեցնելու հաճոյքը ըմբոշխնէ:

(Ե. Օտեան)

**Վարժութիւն 4.** Որոշել երկրորդական նախադասութեանց  
բնոյթը:

ՋԱՆԳԱԿՆԵՐ, ՋԱՆԴԱԿՆԵՐ...

Ջանդակներ, բարի, բարի՝ զանդակներ,  
ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն,  
հօսք ելլել կ'ուզէ արիւնը վազուն...  
Կը լոէ՞ք, բարի, բարի՝ զանդակներ:

...Ու ձեր դմբէթէն դիտեցիր անձայն,  
Թէ ինչպէս խնկոտ տաճարներու մէջ՝  
Որբ, կին, ծերունի, բոցերով անշէջ,  
Իրենց Աստժոյն դահին զոհուեցան:

Բայց... գիտէր նաև թէ մեր դարատր  
Գիականներու բուրգն ամպերէն անցաւ,  
Ու մեր արիւնի ժահրէն նեխուեցաւ  
Սրբութիւններու ծոյլ գունտն երկնաւոր:

Արդ՝ ո՞ւր էք, շքնաղ խոստումներ հաշին,  
Եղբայրութեան դուր բարբառներ, ո՞ւր էք,  
Կրակ կը փսխէ հողն ամենուրեք,  
Գետերն արիւնով, դիակո՞ւ՛ վ կ'ուռչին...

Ու կ'իյնայ այն որ կը ծնկէ ահով,  
Զի թուրն աւելի արդար է հաշէն,

Ձի կեանքն անոնց է միայն որ քաջ են,  
Անոնց որ կ'ապրին ուրիշի մահով...

Որովհետև դեռ հեռու է օրն այն,  
Երբ դայլն ու դառնուկ սիրով արածին...  
Թէ ապրիլ կ'ուզէ դառը նորածին՝  
Պէտք է իր ակուան սրէ լուելայն...

Վուռ էք, զանգակներ, Աստուած է մեներ:  
Գո՛յժ տուէք վաղուան, իր հասկը մեռաւ:  
Գո՛յժ տուէք հայուն, դի աղղը մեռաւ:  
Չանգակներ, ծերուկ, բարի՛ զանգակներ...

Ինչպէ՛ս կ'ուզէի ես ձեր պարանին  
Կախուիլ ու ցնցել կրկաթ բաղուկով.  
Անոնք որ ինկան բիրտով, քովէ՛ քով,  
Ձեր զօղանջին հետ՝ լալու պէ՛տք ունին...

Հոգիիս հազար խուլ զանգակներով  
Գոռացէք, զանգև'ր, ու կատաղօրէն  
Գահավիժեցէք ձեր կրկաթ թառէն,  
Ուրկէ՛ միայն լալ գիացար դարերով...

(Թ. Աւակ)

**Վարժութիւն 5.** Որոշել երկրորդական նախադասութիւններուն բնոյթը, կապակցող ստորագասական շաղկապները և յարաբերակ ու յարաբերական բառերը.

Կան մարդեր, որ ցուցնել կ'ուզեն, ինչ որ չունին. կան ալ, որ ցուցնել չեն ուզեր, ինչ որ ունին. կան նաև, որ ցուցնել կ'ուզեն, ինչ որ ունին: Արիսողոմ աղան վերջիններէն էր. կը փափաքէր, որ բոլոր աշխարհ իմանայ ազարակներ ունենալը, և իւր փափաքն իրացնելու համար ստակ ալ չէր խնայեր: Այսպէս, կրը ըսին իրեն, թէ մեծ մարդերն իրենց պատկերներն ունին, հաւանեցաւ, որ ինքն ալ իրենն ունենայ, բայց կասկածելով, թէ խաբուած ըլլայ և պարաս պտղը ստակէ ելլայ, Գերննիկին մեկնելէն անմիջապէս ետքը հարցուց Մանուկ աղային.

— Եթէ պատկերս քաշել չտամ, զիս մարդու տեղ չե՞ն դներ:

— Քաւ լիցի: Բայց ըսնի որ ձեր պատիճանի մարդերը իրենց պատկերները հանել տուած են, ձեզի ալ կը վայլէ, որ անոնց պէս

ընէք: Երբ մէկին ձեր պատկերն ունենալ փափարի, և դուք պատասխանէք, թէ պատկերս քաշել տուած չեմ, խաւարեալ մարդու տեղ կը դնեն ձեզի...

— Հասկցայ, ի՞նչպէս հանել տալու եմ ուրեմն պատկերս, որ տարակոյս չմնայ, որ պղտիկ մարդ չեմ, վասնդի ըսիք, թէ պղտիկներն ալ իրենց պատկերներն կը հանեն:

(Յ. Պարոնեան)

## 203. ԴԵՐՐԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՈՒԱՆ

Յաճախ նախադասութեան որեւէ մէկ անգամը կ'արտայայտուի դերբայով մը, որ կ'ունենայ իր լրացումը:

**Օրինակ՝**

Արամը դնաց գրագարան՝ զիրքերը յանձնելու:

Աքասիայի ծառը հիացումի առարկայ դարձած էր երկյարկանի տան մը մէջ բնակող հայ աղջկան համար:

Առաջին նախադասութեան մէջ յանձնելու անորոշ դերբայը (տրական հոլովով) նպատակի պարագայ է, իսկ երկրորդին մէջ բնակող ենթակայական դերբայը որոշիչ է:

Դերբայներով արտայայտուած այս նպատակի պարագան և որոշիչը ունին իրենց լրացումները: Յանձնելու պարագային լրացումն է զիրքերը, իսկ բնակող որոշիչին լրացումը՝ տան մէջ:

Դերբայով արտայայտուած անգամը իր լրացումներով միասին դերբայական դարձուած կը կոչուի:

Յաճախ դերբայական դարձուած կարելի է ստանալ երկրորդական նախադասութեան կրճատումէն, և դարձուածն ալ կարելի է վերածել դաս նախադասութեան:

Վերի նախադասութիւններուն դերբայական դարձուածները եթէ նախադասութեան վերածելու ըլլանք, կ'ունենանք հետեւեալ օրինակները.

Արամը գնաց գրագարան, որպէսզի զիրքերը յանձնէ:

Աքասիայի ծառը հիացումի առարկայ դարձած էր հայ աղջկան համար, որ կը բնակէր երկյարկանի տան մը մէջ:

Ինչ պաշտօն որ կը կատարէ երկրորդական նախադասութիւնը, նոյն պաշտօնը կ'ունենայ նաև անոր ստորոգեալին կրճատումէն ստացուած դերբայը:

Առաջին օրինակին մէջ երկրորդական նախադասութիւնը (որ-  
պէսզի դիրքերը յանձնէ) նպատակի պարադայ է, նոյն պաշտօնը  
ունի նաև յոնձնելու դերրայը կրճատուածին մէջ:

Դերրայով կրնան արտայայտուիլ նախադասութեան բոլոր ան-  
գամները, բացի պարզ ստորոգեալէն:

Օրինակ՝

Կտրին մէջ գտնուողները կը խնդան այս տեսարանին վրայ  
(ենթակայ):

Բակին մէջ խաղացող երախաները ջրուեցան (որոշիչ):

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել այն նախադասութիւնները, որոնց  
մէջ կան դերրայական դարձուածներ, ստորագծել զանոնք և որոշել  
դերրայներուն պաշտօնը.

— Իրաւունք ունիմ, կարծեմ, ինծի համար տրուելիք ներկա-  
յայցման ձեզի պէս աղնիւ մէկն ալ հրաւիրել:

— Ես պէտք չունիմ:

— Եթէ դուք օթեակ չէք ընդունիր, որո՞ւ ուրեմն տամ օթեակ-  
կի տոմսակներն:

— Ուր ուղես, հոն տար. ատ իմ խառնուելու բանս չէ:

— Աս իր խառնուելու բանը չէ՛, տղա՛ս, — ըսաւ Մանուկ  
աղան:

— Կ'աղաչեմ, մի՛ մերժէք այս տոմսակն. եթէ մերժելու ըլ-  
լաք, զիս փողոցներու մէջ խայտառակ ընելու պատճառ պիտի տաք:

— Գնա՛ բանիդ, ես ձանձրացայ այդ տեսակ խօսքեր մտիկ  
ընելէ:

— Ան ձանձրացաւ այդ տեսակ խօսքեր մտիկ ընելէ, — յարեց  
Մանուկ աղան:

— Ա՛հ, եթէ ասկից ձեռնունայն ետ դառնամ, իմ մահս պիտի  
տեսնեմ:

— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ:

— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունի, — ըսաւ Մանուկ աղան:

Սենեակին դուռը նորէն բացուեցաւ, և մաղբրուն մէջ ճերմակ  
ինկած՝ յիսունը անցած մարդ մը ներս մտաւ յանկարծ և իւր խօս-  
քերն Արիստղոմ աղային ուղղելով՝

— Զե՛ս խօսնիր դուն, — հարցուց:

(Յ. Պարոնեան)

**Վարժութիւն 2.** Կազմել դերրայական դարձուած ունեցող  
տասը նախադասութիւն՝ դերրայներու տարբեր պաշտօններով:

## 204. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Ինչպէս արդէն գիտենք, դերբայական դարձուածին դերբայը կ'ունենայ իր լրացումները:

Օրինակ՝

Ասոնք վազեցին արագօրէն փրկելու իրենց ընկերը:

Հոս փրկելու դերբայը նսպատակի պարագայ է, որ ունի արագօրէն և ընկերը լրացումները:

Ասոնք կողմնակի անդամներ են:

Գերբայական դարձուածին մէջ գտնուող և դերբային կետ կայտուող անդամները կը կոչուին նախադասութեան կողմնակի անդամներ:

Կողմնակի անդամները ճիշդ որոշելու համար կարելի է դերբայական դարձուածը վերածել նախադասութեան և որոշել վերջինիս՝ ստորոգեակի լրացումները: Ինչ պաշտօն որ ունի տուեալ բառը իրբն ստորոգեակի լրացում, միևնոյն պաշտօնը կ'ունենայ այդ նոյն բառը դերբայական դարձուածին մէջ, բայց այս անգամ իրբն կողմնակի անդամ:

Օրինակ՝

Բոլորս կը սպասէինք Արամի գլուղէն վերադառնալուն:

Եթէ դերբայական դարձուածը վերածենք նախադասութեան, կ'ունենանք հետևեալ օրինակը.

Բոլորս կը սպասէինք, որ Արամը գլուղէն վերադառնայ:

Երկրորդական նախադասութեան մէջ Արամը բառը ենթակայ է, գլուղէն բառը՝ տեղի պարագայ: Ուրեմն դերբայական դարձուածին մէջ ալ այդ բառերը ունին նոյն պաշտօնը՝ Արամի՝ կողմնակի ենթակայ, գլուղէն՝ կողմնակի պարագայ:

Կողմնակի ենթական կը դրուի սեռական, երբեմն ալ ուղղական հոլովով:

Օրինակ՝

Թիպէտ դուր գլխ շէք ճանչնար, բայց ես ձեր ուղ ըլլալը շատ աղէկ դիտեմ:

Անոր գալը ինծի մեծ զարմանք պատճառեց:

Հիրերը ճամբեցինք անձրևը գաղթելէն յետոյ:

Ստորադժուած բառերուն կողմնակի ենթակայ ըլլալը կ'երևի դերբայական դարձուածներուն համապատասխանող նախադասութեանց մէջ իրենց ունեցած պաշտօնէն:

Ի ն չ պ է ս՝

Ես շատ աղէկ գիտեմ, թէ դու՛ ով էք:

Ինձի մեծ դարմանը պատճառեց, որ ան եկաւ:

Հիւրերը ճամբեցինք, երբ անձրեւը դադրեցաւ:

Կողմնակի խնդիրները կը դրուին այն հոլովներով, ինչ հոլով-ներով որ կը դրուին սովորական խնդիրները:

Օր ի ն ա կ՝

Արդարև հետեւեալ առաու Քարսեղ էֆէնտի դնաց տեսնելու պալատակաճը (կողմնակի ուղիղ խնդիր):

Եւ յետոյ զբազրին դառնալով՝ նշանացի հրամայեց անոր որ խահուէ մը բերէ (կողմնակի յանդման անուղղակի խնդիր):

Գրիչով գրելը շատ յարմար է (կողմնակի միջոցի անուղղակի խնդիր):

Կողմնակի պարագաները եւս արտայայտման միջոցներով նման են սովորական պարագաներուն, միայն թէ անոնք կը լրաց-նեն ոչ թէ ստորոգեալը, այլ գերբայը:

Օր ի ն ա կ՝

Հայրենիք վերագարձածները իրենք զիրենք շատ երջանիկ կը զգան (կողմնակի տեղի պարագայ):

Երէկ ժամանած հիւրերը ծանօթացան քաղաքին (կողմնակի ժամանակի պարագայ):

Կան նաեւ կողմնակի ստորոգելիական վերագիրներ:

Օր ի ն ա կ՝

Անոր յառաջադէմ ըլլալը մեզի շատ ուրախացուց:

Տարիներ ետքը միայն մենք հասկցանք անոր սլ ըլլալը:

Օդը գէշ ըլլալուն համար շագցինք պտոյտի:

Հոս ստորագծուած բառերը կողմնակի ստորոգելիական վերագիրներ են. այդ բանը պարզ կերպով կ'երեւայ, եթէ դերբայական դարձուածները վերածենք երկրորդական նախագասութիւններու:

Ա յ ս պ է ս՝

Մեզի շատ ուրախացուց, որ ան յառաջադէմ է:

Տարիներ ետքը միայն մենք հասկցանք, թէ ով է ան:

Չգացինք պտոյտի, որովհետեւ օդը գէշ էր:

Թէև խնդիրն ու պարագան ստորոգևալի լրացում են, բայց գերբայական դարձուածներու մէջ ենթական, խնդիրը, որոշիչը նոյնպէս կրնան ունենալ կողմնակի խնդիր ու պարագայ, քանի որ անոնք բայով կ'արտայայտուին (տե՛ս վերի օրինակները):

**Վարժութիւն 1.** Գտնել գերբայական դարձուածները և որոշել նախադասութեան կողմնակի անդամները.

**Ա.** — Վա՛ր իջէք, — սյուաց Արիստղոմ աղան զանոնք զատելէն ևտքւ, — վա՛ր իջէք և հոն կոտեցէք:

— Գուն մեր կոտույն խառնուելու ի՞նչ իրաւունք ունիս. դուն զիս շես կրնար վռնտել, ես առնելիքս կ'ուղեմ և ինծի պարտական եղողն ուր որ դտնեմ, հոն կրնամ մտնել:

— Գուն վա՛ր իջիր, — ըսաւ դերասանին Արիստղոմ աղան:

— Մինչև որ ան չհեռանայ, ես շեմ կրնար փողոց ելնել, — ըսաւ դերասանը:

— Մենք իջնանք ուրեմն, Մանուկ աղա, — ըսաւ Արիստղոմ աղան:

Դերասանը Արիստղոմ աղային ծունկերուն փաթթուելով աղաչեց, որ ոսկի մը փոխ աայ դոնէ: Արիստղոմ աղան շատ ընդդիմացաւ, բայց յետոյ տեսնելով որ անոնց ձեռքէն ուրիշ կերպով փրկուելու ճար չկայ, ահոաները կրճտելով հանեց բարկութեամբ ոսկի մը տուաւ տպարանատէրին, որ շնորհակալութիւն յայտնելով դուրս ելաւ: Դերասանն ալ ներում խնդրելով վար իջաւ և դնաց:

— Հրամանքդ վա՛ր իջիր, դուռն դոցէ և ապսպրէ որ չրանան դուռն...

Մանուկ աղան վար դնաց իրեն տրուած հրամանները կատարելու, և Արիստղոմ աղան դուխը բարձի մը վրայ դրաւ քիչ մը քնանալու համար:

(Յ. Պարոնեան)

**Բ.** Դեսպանաժողովոյ անդամները խոստովանահայր ըլլալու մարդիկ են. քանի մը շաբաթէ ի վեր Ռուսիան ու Թուրքիան խոստովանանք կ'ընեն, անոնց մեղքերը կ'իմանան, բայց դադտնիքը դուրս չեն հաներ: Այս մարդիկ աւելի զադտնապահ ըլլալու յարմարութիւն ունին, քան թէ հաշտարարը:

Պարտող զրոյցներուն նայելով՝ մեր կառավարութիւնը մերժեր է իրեն եղած առաջարկութիւնը, բայց իր մերժման մերժումով պատասխանուեր է: Նստող զրոյցներուն նայելով՝ մեր կառավարութիւնն ալ զոհողութիւն ընելով՝ պատերազմի երկիւղները

պիտի փարատէ եղեր: Պարտողներո՞ւն հաւատանք թէ նստողներուն:

Յատրոզ լուրերուն նայելով՝ դեսսպանաժողովը Վիեննա պիտի տեղափոխուի եղեր և հոն պիտի ընէ եղեր իւր նիստերը... մինչեւ հիմա եղած նիստերը ասկից վերջը ուր նստելիքնին որոշելու համար էին: Գեսսպանաժողովին տեղը փոխելու տեղ աւելի լաւ չէ՞ր ըլլար՝ եթէ անոր անդամները փոխէին:

Պառկող լուրերուն նայելով՝ ուլթիմաթումը Վիեննայէն պիտի դրկեն եղեր...

(3. Պարունեան)

**Վարժութիւն 2.** Կաղմել դերրայական դարձուածով արտայայտուած այնպիսի նախադասութիւններ, որոնց մէջ ըլլան նախադասութեան բոլոր տեսակի կողմնակի անդամներ:

### 205. ՄԻՋԱՆԿԱԿԱՆ ԱՆՆԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Երբեմն նախադասութեան մէջ կը գործածուի ուրիշ նախադասութիւն մը, որ քերականօրէն չի կապուիր անոր հետ, ինչպէս որ միջանկեալ բառերը չեն կապուիր նախադասութեան անդամներուն հետ:

Նախադասութեան մէջ գործածուող, բայց անոր հետ քերականօրէն չկապուող նախադասութիւնը կը կոչուի միջանկեալ նախադասութիւն:

Միջանկեալ նախադասութեամբ՝ խօսողը կամ հեղինակը կ'արտայայտէ որեւէ լրացուցիչ միտք կամ իր վերաբերմունքը՝ նախադասութեան այս կամ այն անդամին կամ ամբողջ նախադասութեան արտայայտած միտքին վերաբերեալ:

Միջանկեալ նախադասութիւնը բուն նախադասութեան անդամներէն կ'անջատուի փակագծերով, երկու կողմէն ստորակէտ-գծիկով և կամ միայն ստորակէտերով: Որոշ հեղինակներ երբեմն միջանկեալ նախադասութիւնները միայն գծիկներով կը զատեն:

Օրինակ՝

1. Հօրաբոյրներու կամ հօբրիկներու (ինչպէս սուրվեցուցած էր ինձի ըսել տօքը. Ռուսլինեան) անչափ կապուած էի:

2. Թորոս աղայի խահուէն հոս բերէր, կը պոռայ Ստեփանոս աղան (այս է անկիւնը նատղիւն անունը):



3. Սովորութիւն վր այն ատեն,— և հիմակ ալ ինչո՞ւ շըլար,— որ երիտասարդները իրենց մեծերուն, տարիքատեներուն խօսքովը ասպարէզ մը որոշէին իրենց:

4. Ինչպէս քննդուռուած է ըսել, երկու խելքն աւելի լաւ է քան մէկը:

5. Սովորութիւն ունէր խօսած ժամանակ երբեմն քանի մը քայլ առնել դէպի ձախ և երբեմն՝ դէպի աջ—վերջերս կարծիքներն ալ ոտներուն օրինակիմ հետեւեցան, երեսփոխանական ժողովոյ մէջ — չէր մտնար նաև շորս քայլ դէպ առաջ դալէն ևտրը շորս քայլ ևտ երթալ:

6. Ազգեցութիւնը մեծ ըլլալուն պատճառաւ՝ մեծ ծախքերու կարօտ էր — յայտնի է, որ պղպիկ ծախսով մեծ ազգեցութիւն չ'ըլար — ուստի սկսած էր ամէն օր միաբանութեան դիմել և ստակ խնդրել, կամ առանց խնդրելու առնել:

Միջանկեալ նախադասութիւնները կրնան ըլլալ նախադաս, միջադաս և վերջադաս:

Վերի օրինակներէն երկրորդը վերջադաս է, շորլորդը՝ նախադաս, մնացեալները՝ միջադաս:

Միջանկեալ նախադասութիւնները կ'ըլլան պարզ կամ բարդ: Վերի միջադաս նախադասութիւններէն վեցերորդը բարդ է, միասները՝ պարզ:

Միջանկեալ նախադասութիւն կրնան ունենալ թէ՛ պարզ (առաջին և շորլորդ օրինակները), թէ՛ բարդ նախադասութիւնները (մնացեալ օրինակները):

**Վարժութիւն 1.** Գտնել միջանկեալ նախադասութիւնները, քաղատրել անոնց կէտադրութիւնը, կազմութիւնը, շարադասութիւնը:

**Ա.** Ի՞նչ աւելի դիրին րան կայ, քան ամէն տարի 4 կամ 5 պատանիներ զատելով արժանատրներէն,— ու երբ արժանատր կ'ըսեմ, կը հասկնաք որ սըւոր-նըւոր պաշտպանութեանը, յանձնարարութեանը կամ եղօրորդիութեանը վրայ չէ խօսքս, այլ մրցումով ապացուցուած արժանիքի,— Գերմանիա կամ ուրիշ յարմար տեղ մը զրկել, որպէսզի պէտք եղած ուսումը ու զարգացումը առնեն:

Կը կարծեմ որ շորս տարուայ շրջան մը կը բաւէ ասոր, և աչատեղ փորձուելիք ամուլ ջանքերը այնտեղէն սպասուած ապահով, ճշմարիտ օգուտներուն հետ րազդատութեան անգամ չեն կըրնար դրուիլ:

Այս գումարը մէկ տարի մը տալը կը բաւէ, որպէսզի մեր պատկերը ունենանք — իւզանհ՞րկ թէ մատիտով, այս մանրամասնութիւնը, որ սակայն իր կարեւորութիւնը ունի, դեռ չէ լուծուած — հիւանդանոցին մէջ:

(Գ. Զօհրապ)

**Բ.** Եւ ես ի՞նչ կ'ընեմ ինծի եղած նախատանաց և անարգանաց դէմ, կը համբերեմ կոր, դիտնալով՝ որ իմ խօսքերուս արժէքը ասկից հարիւր տարի ետքը պիտի ճանչցուի, իմ խօսքերուս արդիւնքը իմ թոռներս (Աստուած պահէ զիրենք արեւելեան խնդիրէն) պիտի վայլեն (1):

Հայրն ու մայրը նկատելով որ իրենց դաւակն փառաւոր ապագայ մը կը խոստանայ — թէպէտեւ վերջէն հասկցուեցաւ, որ շատ հաւատք ընծայելու չէ անոր խոստումներուն — կ'որոշեն Կ. Պոլիս ղրկել զիրեն, որպէսզի երթայ հոն դաստիարակութիւն առնէ (2):

Քանի մը օրէն իւր վարդապետները իրեն հրաիրելով՝ իշխանութիւն տուաւ անոնց մինչև նոր Կիրակի արձակել անուղղակի գործողները — ինքը բանադրելու դրադած ըլլալով արձակելու ժամանակ շունէր — իսկ ինք ստանձնեց ուղղակի գործողներն արձակելու պաշտօնը զոր մինչև այսօր արժանի շեղաւ (3):

(Յ. Պարոնեան)

## 206. ՈՒՐԻՇԻ ԽՕՍՔ

Խօսելու կամ գրելու ժամանակ յաճախ կը մէջբերուի որեւէ մէկու մը միտքը:

Օրինակ՝

Փանոսեան յօդուածը կարդալ տուաւ և ըսաւ. «Այս անունները շեմ կրնաւ իմ բերքիս մէջ տալի»:

Այս օրինակին մէջ ստորագծուած նախադասութիւնը ուրիշի խօսք է:

Այն միտքը, որ կը մէջբերուի խօսողի կամ հեղինակի խօսքին մէջ, ուրիշի խօսք կը կոչուի:

Ուրիշի խօսքը կրնայ մէջբերուիլ տառացի, այսինքն՝ նոյնութեամբ, և ոչ տառացի, պատմողաբար:

Տառացի մէջբերուած խօսքը ուղղակի խօսք է, իսկ ոչ տառացի, այլ պատմողաբար մէջբերուածը՝ անուղղակի խօսք:

Օրինակ՝

Հաւարուածներն ըսին. «Մենք սլաւորաստ ենք առաջին շոգեճատով մեկնելի հայրենիք»:

Հոս ստորագծուած նախադասութիւնը ուրիշի ուղղակի խօսք է: Իսկ հետեւեալ օրինակին մէջ նոյնը ուրիշի անուղղակի խօսք է:

Հաւարուածներն ըսին, թէ իրենք սլաւորաստ են առաջին շոգեճատով մեկնելի հայրենիք:

Ուրիշի խօսքը (թէ՛ ուղղակի, թէ՛ անուղղակի) իրականին մէջ երկրորդական նախադասութիւն է. ան մեծ մասամբ կը լրացնէ գլխատր նախադասութեան մէջ գործածուած ըսել, հարցնել, պատասխանել, մտածել, վննել, հրամայել և այլ բայերով արտայայտուած ստորոգեալները:

Ուրիշի ուղղակի խօսքը հեղինակային խօսքին միանալու որեւէ քերականական միջոց չունի, իսկ անուղղակի խօսքը հեղինակային խօսքին կը միանայ շաղկապներով:

Ուրիշի ուղղակի խօսքը կարելի է վերածել անուղղակի խօսքի: Այդ պարագային նախադասութեան կառուցուածքին մէջ տեղի կ'ունենան կարգ մը փոփոխութիւններ.

**Ա.** Ուրիշի խօսքը հեղինակային խօսքին կը միանայ որ, թէ շաղկապներով:

Օրինակ՝

Յակոբը ըսաւ. «Գրատունը նոր գիրքեր կը վաճառէ»:

Յասմիկը հարցուց «Ի՞նչ նոր գիրքեր ստացուած են»:

Այժմ ուղղակի խօսքը վերածենք անուղղակի խօսքի.

Յակոբը ըսաւ, որ գրատունը նոր գիրքեր կը վաճառէ:

Յասմիկը հարցուց, թէ ի՞նչ նոր գիրքեր ստացուած են:

**Բ.** Ենթականներու և ստորոգեալներու դէմքը կը փոխուի կամ կը մնայ նոյնը, ըստ այն բանի, թէ ուրիշի խօսքով որո՞ւ կամ ի՞նչ բանի գործողութիւնը, եղելութիւնը կ'արտայայտուի. եթէ ան կը վերաբերի խօսողին կամ հեղինակին, անուղղակի խօսքի ենթական և ստորոգեալը կը գրուին առաջին դէմքով, եթէ կը վերաբերի խօսակիցին՝ երկրորդ դէմքով, իսկ եթէ կը վերաբերի երրորդ անձի մը, կը գրուին երրորդ դէմքով:

Օրինակ՝

Արամը ինծի ըսաւ. «Դուն պիտի առաջնորդես հիւրերը»:

Ես արդէն ըսեք եմ. «Դուն մեզի հետ պիտի աշխատիս»:

Յակոբը ըսաւ. «Ես շատ կը սիրեմ Դուրեանի «Լճակը»:

Այժմ ուղղակի խօսքը վերածենք անուղղակիի.

Արամը ինձի ըսաւ, որ ես պիտի առաջնորդեմ հ/ւրերը:  
Ես արդէն ըսեք եմ, թէ դուն մեզի հետ պիտի աշխատիս:  
Յակոբը ըսաւ, թէ ինք շատ կը սիրէ Գուրեանի «Էճատը»:

Առաջին օրինակին մէջ ենթական և ստորոգեալը դրուած են առաջին դէմքով, որովհետեւ անոնք կը վերարերին խօսողին, երկրորդին մէջ դրուած են երկրորդ դէմքով, որովհետեւ կը վերարեբին խօսակիցին, չերջին նախադասութեան մէջ դրուած են երրորդ դէմքով, որովհետեւ կը վերարերին երրորդ անձի մը:

Միեւնոյն ուղղակի խօսքը անուղղակիի վերածուելու ատեն, պարագային համեմատ, ուրիշի խօսքի ենթական կրնայ տարբեր դէմքերով արտայայտուիլ:

Օրինակ՝

Յակոբը երախտագիտութեամբ ըսաւ. «Դուն շատ վապուկ սիրտ ունիս»:

Այս նախադասութեան ուղղակի խօսքը կարելի է անուղղակի դարձնել երեք կերպով.

ա) Յակոբը երախտագիտութեամբ ըսաւ, թէ **ան** շատ վապուկ սիրտ ունի (եթէ Յակոբին խօսակիցը խօսողին համար երրորդ անձ մըն է):

բ) Յակոբը երախտագիտութեամբ ըսաւ, թէ **դուն** շատ վապուկ սիրտ ունիս (եթէ Յակոբին խօսակիցը այժմ խօսողին խօսակիցն է):

գ) Յակոբը երախտագիտութեամբ ըսաւ, թէ **ես** շատ վապուկ սիրտ ունիմ (եթէ Յակոբին խօսակիցը նոյնինքն խօսողը եղած է):

Յաճախ հեղինակային խօսքի մէջ կ'ըլլան դերանուններ, որոնք կը ցուցնեն, թէ որուն կը վերարերի ուղղակի խօսքին մէջ գործածուած դերանունը և ատով իսկ կ'օգնեն մեզ ուղղակի խօսքը ճշդիւ անուղղակի դարձնելու:

Այսպէս, եթէ վերի նախադասութիւնը, որուն մէջ արտայայտուած ուղղակի խօսքը դարձուցինք անուղղակի, դործածուած է Ա նախադասութեան իմաստով, իր մէջ կրնար ունենալ անոր դերանունը (Յակոբը երախտագիտութեամբ անոր ըսաւ...), եթէ գործածուած է Բ նախադասութեան իմաստով, հեղինակային խօսքին մէջ կրնար դրուիլ Բնզի դերանունը (Յակոբը երախտագիտութեամբ Բնզի ըսաւ...), իսկ Գ նախադասութեան իմաստն արտայայտելու



Օրինակ՝

Ան մօտեցաւ և ըսաւ ինծի. «Դուք պարզապէս թիրիմացութեան մէջ էք»:

Ան մօտեցաւ և ըսաւ ինծի, թէ ես պարզապէս թիրիմացութեան մէջ եմ:

Ուրիշի ուղղակի խօսքը կրնայ դրուիլ գլխաւոր նախադասութեան վերջում կամ առաջ:

Վերի բոլոր օրինակները յետադաս են:

Նախադաս ուղղակի խօսքի օրինակ՝

«Սրանի թէ սպասէի քիչ մը ու տեսնէի միւս ելլողները», խորհեցաւ ան:

Թէ՛ նախադաս, թէ՛ յետադաս բլլալու՝ պարագային ուղղակի խօսքը կ'առնուի շակերտներու մէջ: Յետադաս ուղղակի խօսքը գլխաւորէն կը դատուի միջակէտով, իսկ նախադասը՝ ստորակէտով կամ դժիկով:

Սրբամն հեղինակային խօսքը կ'իյնայ ուղղակի խօսքին մէջ. նման պարագաներուն հեղինակային խօսքը ուղղակի խօսքէն կը դատուի ստորակէտով կամ ստորակէտ-դժիկով:

Օրինակ՝

— Սրէք հօտ կամբին դէմ գործ շեմ կրնար տեսնել, — ըսաւ երիտասարդը, և ես ալ իրեն համակարծիք եմ այս խնդրին մէջ:

— Զուակս, — ըսաւ հայրական շեշտ մը տալով ձայնին, — ի՞նչ գործ կ'ընէ հայրդ:

Գեղարուեստական խօսքի մէջ, մասնատրորաբար տրամախօսութեանց մէջ, ուղղակի խօսքը չ'առնուի շակերտներու մէջ, այլ անոր սկիզբը դիժ կը դրուի:

Օրինակ՝

Բարսեղ Էֆէնտի քունէն արթնցածի երևոյթով մը հարցուց — ի՞նչ կայ, ի՞նչ եղանք:

— Ոչի՛նչ, — պատասխանեց Արամ, — վար ոլիտի իջնենք:

— Հասա՞նք մեր տեղը:

— Ո՛չ, բայց ասկէ անդին ոտքով կ'երթանք:

**Վարժութիւն.** Որոշել ուրիշի ուղղակի և անուղղակի խօսքերը. բացատրել անոնց շարադասութիւնն ու կէտադրութիւնը. ուղղակի խօսքը դարձնել անուղղակի, անուղղակին՝ ուղղակի:

**Ա.** Տագէս աղա շուրջը նայելով ըսաւ. «Մօ տղայ, դուն ե՞րբ դերձակ եղար»:

Ըիշդ է, որ Տիրան տարի մը միայն աշակերտած էր Տագէս աղային մօտ և յետոյ մեկնած՝ այս արհեստին մէջ յարմարութիւն չունենալուն համար «Գործի մտած օրս մայրիկս մատնոց մը նուիրեց ինձ և խառնուածքս դիտնալով՝ ըսաւ, թէ սէտք է ջանամ խելքս կարին տալ: Եւ առաջին օրն իսկ, երբ որ երեկոյեան տուն դարձայ, մայրիկիս վիզը նետուելով ըսի, թէ անմիջապէս, անմիջապէս աչքը մտած էի վարպետիս...»:

Բայց յանկարծ արտմեցաւ երիտասարդը, որովհետև հեռաւոր ու սիրական դիմադձեր իրեն երևեցան շատ որոշ գոյներով, անփոխարինելի ջերմութեամբ և ինք ըսաւ իր վարպետին.— «Ան աշխարհը պարսպ աշխարհ է»: Բարեբախտարար ծագեցան ուրիշ հարցեր, և վարպետ Տիրանի մէկ հարցումին պատասխանելով՝ ըսաւ, թէ հակառակ ստացած ատահովիչ տեղեկութիւններուն, ինք չէր ուզած իր այսչափ տարուան տունը բանդել մէկ անդամէն և այդ պատճառով է, որ Փարիզ չէին եկած ամբողջ ընտանեօր:

(Ծ. Շահնուր)

**Բ.** Բոլոր տղաքը Զատիկուան օրօրոցներուն մէջ կը խաղան կը խնդան, հակիթ կը փոխանակեն, իսկ ես ասդին կու լամ: Կ'ուզեմ անդատճառ հետս առնել շապիկս: Զէ՞ մի որ անոր օձիքին տակ «Տ» մը և «Պ» մը կայ: «Ան իմինս է, հետս պիտի տանիմ», կ'ըսեմ: «Տագէս Պալապանեանը ես եմ», կ'ըսեմ: Ի՞նչ ըսեմ. տղու խելք: Տարիներ վերջ (դեռ դպրապետ չէի) հարցուցի Խլմիր-լեանին.— Սրբաղան, կը յիշէ՞ք, օր մը արարողութեան ատեն նուաղեցայ, որովհետև ծոմ բռնած էի Ս. Հաղորդութիւն առնելու համար: Խորհրդարանին մէջ է, որ խօսեցայ «Կը յիշեմ, կը յիշեմ», ըսաւ Սղրայրս ալ յիշեց: «Անոր ձայնը դեռ ախանջներուս մէջն է», ըսաւ:

(Ծ. Շահնուր)

## 207. ԿԷՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Քրաւոր խօսքի մէջ ընդունուած են կէտադրական կարգ մը նշաններ, որոնց միջոցով կ'արտայայտուին խօսքի դադարները, ձայնի ելեւէջները, կ'անջատուին նախադասութեան տարրեր մասերը:

Երբ խօսքը բանաւոր է, խօսողը ձայնի երանդով, կ'ելեւէջներով,

դադարներով շատ րան յիրնայ արտայայտել, նախադասութիւնը կրնայ բաժնել տարբեր մասերու՝ իմաստային և արտայայտչական կողմերով:

Գրաւոր խօսքը բանաւորէն կը տարբերի անով, որ գրաւորի սլարագային խօսողն ու խօսակիցը (կամ խօսակիցները) շնն տեսներ և շնն լսեր զիրար: Գրաւոր խօսքի այդ պակասը լրացնելու համար է ահա, որ կը գործածեն կէտադրական նշանները, որոնք Յ տեսակ կ'ըլլան. տրոհութեան, առոգանութեան և բացայայտութեան նշաններ:

## 208. ՏՐՈՂՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Տրոհութեան նշաններն են՝ վերջակէտը (.), միջակէտը (.), ստորակէտը (,) և բութը ('), որոնք կը դրուին նախադասութիւնները և անոնց մասերը իրարմէ դատելու համար:

**1. Վերջակէտը** կը դրուի աւարտուած նախադասութեան վերջը:

Օրինակ՝

Քամին հանդարտեցաւ: Երևի այդ օր ալ մենք ծովուն վրայ պիտի դիշերէինք: Երկկայմանի սրբնթաց նաւը՝ մէկ կողմէն միւսին վրայ կը նօճէր ծուլօրէն: Բացուած էին թաց անոթատները: Սպիտակ մառախուղը ամբողջովին շրջապատեց նաւը:

**2. Միջակէտը** կը դրուի՝

**Ա.** Իբարու հետ մտնով կապուած, սերտ ամբողջութիւն մը կազմող, սակայն որոշ ինքնուրոյնութիւն ունեցող նախադասութեանց միջև:

Օրինակ՝

Յանկարծ փլաւ. դէմքին վրայ լայն միսերը դէպի վար կախեցան. աչքերը այլանդակ երևոյթ մը ստացան բացուելով. սկսաւ տղու մը պէս հեծկտալ՝ տարածուելով բաղմոցին վրայ:

Ամէն նիւթի վրայ խօսեցանք. անիմաստ խօսքեր միայն ըսի կարծեմ. խնլքս վրաս ըլլալու չէր. մեկնելու ժամուն կը սպասէի ակնդէտ. դուրս ելայ:

**Բ.** Ուրիշի ուղղակի խօսմէն սուաջ, երբ ան կ'առնուի շակերտներու մէջ կամ անկէ սուաջ զծիկ կը դրուի (վերջին սլարագային ուրիշի ուղղակի խօսքը կը դրուի նոր տողէն):



Օրինակ՝

Երէկ ըսած էի. «Աշխարհիս վրայ ժամանակն է, որ կ'ընէ ամէն բան»:

Անիկա կ'ուրախանար և ինքնիրեն կ'ըսէր. «Եթէ չեն զգաստանար՝ գոնէ կը դուարճանան»:

Արամ բարեկէտքը ըսաւ.

— Պէջ էֆէնտի, արդեօր մասնաւոր ըսելի՞ք մը ունիք ինձի:

**Պ.** Այն նախադասութիւններէն յետոյ, որոնց կը յաջորդէ որեւէ բացատրութիւն.

Օրինակ՝

Հա՛յր իմ, օրհնէ՛. ժամը հասաւ, պիտ' երթամ:

Ինձմէ հեռո՛ւ. ահաւոր է տեսնել քեզ:

Սրահին մէջ ասեղ ձգելու տեղ չկայ. բոլոր աթոռները գրաւած են:

Շատախօսութիւն ընելու ժամանակ չունիմ. ըսածս ապացոյցներով և կենդանի վիճակներով կրնամ հաստատել:

**Պ.** Համադաս նախադասութիւնները իրարմէ անջատելու համար, երբ անոնք իրարու հետ կապուած են իսկ, բայց, սակայն, ուրեմ'ն, հետեւաբար, ուստի, այսինքն, զոր օրինակ շաղկապներով և իրենց մէջ ունին ստորակէտով բաժանելի նախադասութիւններ և կամ շատ երկար են.

Օրինակ՝

Երբ անիկա մօտեցաւ, Վարդան ոտքի ելաւ. սակայն բարեկամը չնկատեց, քանի որ ուրիշ կողմ կը նայէր:

Այս գիւղին մէջ հինգ հարիւր քսան տուն կայ հայու. սակայն ասոնց մէջ կան տուններ, որոնք երկու և երեք ընտանիքներէ բռնակուած են:

**Ե.** Կրճատումով զրուոյ բառերէն յետոյ:

Օրինակ՝

Փրոֆ. (փրոֆէսոր) Հ. Աճառեան, նախ. (նախադահ) Պետրոս Սարգիսեան, պր. (պարոն) Վարդանեան, Ս. (Սուրբ) էջմիածին և այլն:

### Յ. Ստորակէտը կը գրտի՝

**Ա.** Գլխաւոր և երկրորդական նախադասութեան միջև.

*Օրինակ՝*

Շուրջը կը նայէր կառք մը փնտռելու համար, երբ երկու հոգի իրեն մօտեցան և զինք կեցուցին:

Այս բացատրութիւնը այնքան բնական ու ճշմարիտ թունցաւ կառավարիչին, որ համոզում զոյացուց, թէ երիտասարդը ճշմարտութիւնը կը խօսէր:

Ետ դարձաւ իր կառքին քով, որ բաւական մը հեռու էր:

**Բ.** Համադաս նախադասութեանց միջև.

*Օրինակ՝*

Սահակ կը շարունակէր իր դերմարդկային ճիգերը, վտանգը կը կրկնապատկէր անոր ճարտարութիւնը:

Յանկարծ թուիկեր կը յայտնուին, կամ կը ցցուի բար մը ճերմակ:

Հասկեր կ'իյնան շարուէ շարան, և կ'արիւնին կակաչներ լուռ:

Մանսրութիւն. եթէ և, ու շողկապներով կը կապուին միտորեալ նախադասութեան բազադրիչները, ստորակէտ չի գրուիր անոնցմէ առաջ:

*Օրինակ՝*

Երկուքը միասին անցան բազմութեան մէջէն և ուղղուեցան դէպի ծովնդերք:

**Գ.** Նախադասութեան համադաս (համաուսն) անդամներու միջև, Երէ անոնք և, ու, կամ, թէ շաղկապներով շեն կապուած.

*Օրինակ՝*

Երկուքով անշէջ, սիրով, յոյզով, խանդով լի

Թաղել կ'ուզէ կարծես սէրերն իր սիրտին:

Կը հակին վարդ ու հարսնուկ, կակաչ, նարդոս,

Գարնանածաղիկ, նունուֆար:

**Դ.** Միջանկեալ նախադասութեանց և միջանկեալ բառերու սկիզբը և վերջը.

*Օրինակ՝*

Ինչպէս տեսանք, ուշիմ պատանին շատ ճարպիկութեամբ կատարած էր իրեն յանձնուած դժուարին գործը:

Վահանք, ինչպէս գիտենք, դեռ նոր ձանջուած էր:

Գրիգորը, անտարակոյս, շատ պիտի ուրախանայ իր ընկերոջ  
յաջողութեան առթիւ:

Արդարեւ, յաջորդ առտու ուրախ լուր առինք:

Ե. Կոչականներէն յետոյ, երբ անոնք նախադասութեան սկիզ-  
բըն են, առաջ, երբ նախադասութեան վերջն են և կոչականներու  
երկու կողմէն, երբ նախադասութեան մէջ են.

Օրինակ՝

1. Տալիան, տափնէ, կոշտերն հարթէ:

2. Քոյրիկ, ծիւ մը բեր ինծի:

3. Դարձիր, կամբս, արագ դարձիր:

4. Երնէ, էրան, երնէ, էրան.

Յարդը բեղի, մեզի ցորեան:

5. Ափ մը ցորեան ափերուդ մէջ

Թող լեցրենմ, կտրին որդիս:

Զ. Չայնարկութիւններէն առաջ, երբ անոնք նախադասու-  
թեան վերջն են, ձայնարկութիւններէն յետոյ, երբ նախադասու-  
թեան սկիզբն են և երկու կողմէն, երբ նախադասութեան մէջ են.

Օրինակ՝

Ա՛ն, բիշ մըն ալ, բիշ մըն ալ...

Յնորարք՝ ր գիշեր, ա՛ն, ընդունէ՛ գիտ:

Չոյ-հո՛յ, առուն կը հասնի ցանկապատին քովերէն:

Մ ա ն օ ր ու ր ի ն. Երբ ձայնարկութիւնը կը գործածուի կոչականէ մը  
առաջ, ձայնարկութենէն յետոյ ստորակէտ չի գրուիր:

Օրինակ՝

էյ ջա՛ն հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես:

Է. Յետադաս տրոհուող որոշիչէն առաջ.

Օրինակ՝

Ըսէ կնկանն այդ դողդոջ, եղած արդէն մոխրագէտ,

Որ իր պանդոխտ դաւակէն կու գաս՝ զոր ան կը պաշտէ:

Ճերմակ եզը կարծես կուռք մ'է, ձուլուած լուսնին արծաթին  
մէջ:

Զարուհի քսան տարեկան գեղանի աղջիկ մըն էր, նուրբ ու  
երկայնամասակ, սեւ վառվռուն աչքերով ու հրաշալի մազերով:

Յետադաս տրոհուող որոշիչէն առաջ կը դրուի նաև բութ (տե՛ս բութի գործածութեան Բ կէտը):

**Ք.** Տրոհուող միջադաս պարագաներուն երկու կողմէն.

*Օրինակ՝*

*Դոնապանը, Հայրիկին անակեկալ յայտնութենէն այլայլուած ու շփուր, ուշադրութիւն չըբաւ բնկերներուս:*

*Եւ մայր ու աղջիկ, միեւնոյն լոյն ու բաբուն համաձայնութեամբ, դեղջուկ կեանքէ վեր աստիճանի մը հասնելու տենչանքը կը սնուցանէին իրենց սրտին մէջ:*

**Թ.** Մասնատրեցնող և մեկնական բացայայտիչներէն առաջ, մասնական բացայայտիչին երկու կողմէն.

*Օրինակ՝*

*Այդ պարտէղէն անդին, պատին տակ, խարխիլի շէնք մը կ'երևար:*

*Երկար ատեն, քերես մամ մը, այսպէս շրջեցաւ հոն:*

*Վերջին անգամ ձեռէ ստացած գումարս, արդէն շատ ոչինչ բան մը, ամբողջովին սպառած է:*

*Մըսթըր ճօն Կօրէի, իրեն երկար տարինեւ Ամերիկայի մէջ ապրած գործնական մարդ մը, իր յանձն առած սլաշտօնը ուղած էր կատարել ամենայն խղճատութեամբ ու լրջութեամբ:*

**Ժ.** Ուրիշի ուղղակի խօսքին մէջ գտնուող հեղինակային խօսքին երկու կողմէն կամ առջեւէն, երբ անիկա վերջադաս է. նման պարագային կրնայ հաստատապէս գործածուիլ ստորակէտ-գծիկ (,—), ինչ որ նախընտրելի կը նկատուի:

*Օրինակ՝*

— Բայց ևս այդ դէպքերուն շեմ ակնարկեր, ըսաւ Վահան, ատոնք ինձի համար կարևորութիւն չունին:

— Կ'ուզե՞ս ևս անկեղծօրէն խօսիմ հետդ, գուշեց Վահան:

— Արդէն կարծեմ միշտ անկեղծօրէն կը խօսիս դուն, պաւասախանեց Արամ:

— Արդեօք, — հարցուց ինձն իրեն, — ոտանաւորն ուղածին պէս պիտի ըլլա՞՞յ:

— Ի՞նչ տեսակ մարդ է ան, — ըսաւ Յակոբ:

#### 4. Բուրջ կը գրտի՝

**Ա.** Բացայայտեալին վրայ՝ բացայայտիչէն անջատելու նամար.

*Օրինակ՝*

Գւրրոցին մէջ իր աղաքը՝ Արամն ու Գէորգը մօրերնուն մակահունովը յիշուեր էին:

Նախ իր կնոջ՝ Զապէլի միջոցաւ ուղած էր հասկնալ Զարուհիի տրամագրութիւնը:

Այս տեղեկութիւնները առնելէ ետքը Վահան դնաց գտաւ նաեւ իր մտերիմը՝ Արամը, որ շատ ուրախ եղաւ զայն տեսնելով:

Ես միակ բան մը ունիմ ընելիմ՝ իմ անմեղութիւնս հաստատելու:

Իր պոլսեցի վարժունին՝ կատարելագործեալ կնոջ տիպար մը Զարուհի աշբին, մնացածը ամբողջացուց:

**Բ.** Տրոհուող նախադաս պարագաներէն յետոյ և յետադաս պարագաներէն առաջ.

*Օրինակ՝*

Պարապ սեղան մը զանկտով՝ Գրիգոր տեղաւորուեցաւ անոր դիմաց:

Արդէն իր կամբջակին վրայ ելած՝ նաւալետը աջ ու ձախ հրամաններ կ'արձակէր:

Նաւաձիգ մը եկած կանդնած էր շոգենաւին ցողովը՝ զայն դէպի ծովին բացերը տանելու համար:

Յետոյ սկսաւ բաղմութիւնը ճեղքելով ժուռ գալ շոգենաւին վերնայարկը՝ ծանօթի մը հանդիպելու յոյսով:

**Գ.** Եթէ, երբ, ինչ որ բառերով սկսող նախադաս երկրորդական նախադասութիւններէն յետոյ (կարճ ըլլալու պարագային).

*Օրինակ՝*

Եթէ այդպէս է՝ մի՛ պատմէք:

Ինչ որ ձեզի յայտնեմ՝ ձեր քովը թող մնայ:

Եթէ դեր մը խաղցած եմ՝ այն ալ Անունը աղատելու համար բրած ջանքերս են:

Եթէ գիտնայիր՝ դուն ալ հիմա ինձի շափ պիտի խանդավառուէիր:

**Դ.** Թուարկութիւն ցուցնող նախ, ապա, յետոյ, առաջին, երկրորդ, երրորդ և նման բառերէն յետոյ.

Օրինակ՝

Վարդան երկու բաղձանք ունէր. նախ՝ ինքզինք արդարացնել Գրիգորի հանդէպ և երկրորդ՝ օգնել անոր վերագառնալու իր ընկերներուն քով:

Ե. Նախադասութեան մէջ իրարու յաջորդող, բայց իրարու հետ չկապուող բառերու միջև.

Օրինակ՝

Գրիգորին՝ ընկերոջը գրած նամակը պահեր եմ:

Վարդանին՝ տօնի առթիւ գրած բանաստեղծութիւնը յաջող էր:

Զ. Նախադասութեան զեղչուած ստորոգիւյի կամ օժանդակ բային, ինչպէս նաև հանգոյցին փոխարէն.

Օրինակ՝

Զայն կը լնցնէ աղբիւրն երգովը բիրենդ,

Աստղը՝ բիրենդ արցունքով:

Ի՛նչ արրեցութեամբ ծովերն են կապուտ,

Գետերն՝ յորդաջուր, աղբիւրներ՝ զեղուն,

Կիճեր՝ խաժագոյն, առուն՝ շուտափոյթ:

Է. Յետագաս տրոհուող որոշիչէն առաջ.

Օրինակ՝

Տղեկ մ'ուշիմ և բոսլիկ, առաջնորդէ պիտի բեզ

Տունս հայրենի՝ շինուած շինջ զով առուակի մ'նկերէին:

Վարժութիւն 1. Բացատրել, թէ հետեւեալ հատուածներուն մէջ ինչո՞ւ գրուած են միջակէտ, ստորակէտ և բութ.

Ա. Օրերը դանդաղօրէն կ'անցնին. աշխատութիւնն է որ գոհունակութեան մը հետ՝ երբեմն անզգալի կը դարձնէ մենութեան յարուցած ձանձրոյթը:

Ժամերով կը գրադիմ որբերուն հետ: Ազգային պատմութենէն զատ ստանձնած եմ բարոյախօսութեան և երաժշտութեան դասերը — անօգուտ շին անցնիր ժամերս, յաճախ դասախօսութեան ատեն փանդավառութիւն մը կը գունատորէ սովորաբար տմոյն և անկարեկիր դիմքս:

Իրաւ, չխաբեմ ինքզինքս, առանց սեւ, թնճուկ մօրուքիս, դէմքս ափ մը անգամ չէ և մոխրականաչ մորթս զիս շճանչցողներուն վրայ լաւ տպաւորութիւն չ'ըներ:

Կ'երեւի բացառութիւն մըն եմ վարդապետներուն մէջ, որոնք ընդհանրապէս գեղահասակ ու գեղադէմ են. փո՛յթս, հոգիս իր գեղեցկութիւններն ունի և միտքս՝ շնորհները:

Խանդի վայրկեաններուս կը մոռնամ աշակերտներու քով գտնուիլս և երկարօրէն կը խօսիմ:

(Տ. Չօկիւրեան)

**Բ.** Կաղանդի պէս օր մըն էր: Նոր տարի չէր, Զատիկ ալ չէր, բայց կայծակի արագութեամբ տարածուեցաւ լուրը շէնքէ շէնք, սենեակէ սենեակ: Կաղանդ պիտի ունենայինք: Կաղանդ ունենալ՝ կը նշանակէր տուպրակի վերածուած գուլպայ մը, մէջը շաքար, ընկոյզ, շամիչ ու թերեւս նաեւ թաշկինակ մը:

Նախ, լուրը առինք թերահաւատութեամբ, չհաւատալ կեղծելու և ամէն բոլոր հաւատացողներուն պնդումը ըմբոշխնելով: Մայրիկը յայտարարեց, թէ երկու օր ետք, շաքար՝ կէսօրին, կաղանդ պիտի ունենանք: Կաղանդը, այս անգամ ոչ Մայրիկին նուէրն էր, և ոչ ալ Հայրիկին: Գորսէն, ուրիշ քաղաքէ մը եկած էր ու իրեն հետ բերած կաղանդը:

Հաւաստի աղբիւր մը — հսկիչ Յարութիւնը — խորհրդաւոր ժպիտով նոյնիսկ յայտնած էր բարերարին անունը, բայց լսողները չէին կրնար յիշել. ու եթէ յիշէին իսկ, այդ անունը որեւէ նշանակութիւն չունէր մեզի համար: Բայց որոշ կերպով իմացուած էր հսկիչ Յարութիւնէն, թէ այցելուն նշանաւոր մէկն էր, շատ մը գիրքեր գրած էր և միշտ կը խնդար ու կը խնդացնէր: Այս կէտը կրկնապէս համակրելի կը դարձնէր անծանօթ բարերարին դէմքը, ու անհամբեր կը սպասէինք շաքար՝ օրուան:

(Ա. Մառուկեան)

**Վարժութիւն 2.** Կէտադրական ի՞նչ նշան պէտք է դնել հետեւեալ նախադասութեանց մէջ ստորագծուած բառերէն յետոյ (միջակէ՞տ, ստորակէ՞տ, թէ՛ բութ).

Ինքը շմոռցաւ մեզ հինգ տարի վերջը երկրաշափի վկայականս առնելէ ետքը տօնախմբութեան երեկոյթի մը մէջ հանդիպեցայ իւրե՛ն նոյնը մնացեր էր իր հրաշալի գեղեցկութիւնը (1): Բնաւ հետաքրքիր շէր դարմանալու սովորութիւն չունէր կարծես ի՞նչ բանէ կ'ախորժէր արդեօք ինչո՞ւ վարելի էր հաճելի գառնալ իրեն (2): Գործի լծուած էին արդէն ու մենք յարգալիբ հիացումով կը հետեւէինք աշխատանքներուն (3): Ծրկու թիղ երկայնութեամբ երկաթէ խողովակ մըն էր քնդանօթը որուն մէկ կողմը գոցել տուած

էին թիթեղագործին (4): Խաչօն որ մեր գլխատը յենարանն էր ընդդէմ Եզեկիէլին մէկէն կորսնցուց մեր համակրանքը (5): Սովին մէջտեղը այլ հիւլէններ կ'երեւտկային շարունակ ձեւերէին դիր-  
 ֆերէին լոյսերնին կը փոխէին իրարու առջև կը վազէին իրարմէ  
 խոյս կու տային անհնարին ու խօլական ուսումներով արշամե-  
 րով յամեցումներով (6): Փողոցի մեծ դրան կից բակին ծայրը  
 կար միշտ գոց դուռ մը (7): Անհամբերութիւնը ընդհանուր էր հե-  
 աւաբերութիւնը բռնակալ (8): Տղան մօտեցաւ և ըսաւ

— Պատրաստ էք (9): Անդրանիկ գաւաղը Արամը իր ուսու-  
 մը աւարտած էր և հիմա իր մասնագիտութեամբ կ'աշխատէր (10):  
 Լևոնը ինչպէս ըսինք գեղադէմ երիտասարդ մըն էր (11): Կ'ուզէր  
 խօսեցնել իր բարեկամունին ճշմարտութիւնը երեսան հանելու հա-  
 մար (12):

## 209. ԱՌՈՂԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առողանութեան նշաններն են՝ շեշտը ('), հարցականը (?),  
 բացազանշականը (~), որոնցմով կ'արտայայտուի խօսքի առողա-  
 նութիւնը:

### 1. Շեշտը կը դրուի՝

**Ա.** Հրամայական եղանակի բայաձեւերուն վրայ.

ա) Շեշտը հաստատական հրամայականի վերջին վանկին վրայ  
 կը դրուի.

Բարձրացո՛ւր ձեռքերդ և դանոնք դիշերուան կապոյտներու  
 կամարին կարկառէ՛:

Անցէ՛ք, անցէ՛ք, վախցող շկայ ալ ձեղմէ՛:

Նայէ՛, թեւերը բացած՝ մեր օգնութիւնը կ'աղերսէ:

բ) Շեշտը արգելական հրամայականի մի արգելականին վրայ  
 կը դրուի.

Օ՛, նստէ՛ հիմա և ալ մի՛ երբար:

Մի՛ վախնար, ես լաւ տեղ մը գիտեմ:

գ) Յարադիր բայերու հրամայականի շեշտը կը դրուի սովո-  
 բարբ անուանական բաղադրիչին վրայ.

Օ՛, կա՛նգ ստէ՛ք ձեր վերելքին վրայ:

— Նե՛րս անցէ՛ք ըսի, — հրամայեց Եզեկիէլ խիստ ու յանդի-  
 մանական:



**Բ.** Անդէմ նախադասութիւններու շեշտուած բառերուն վրայ.

*Ուրեմն ոտքի՛, նորէն ոտքի՛, նորէն ոտքի՛,  
Հայորդիներ՛ք, դիցազուններ՛ր, Ազատարեաններ՛ր:  
Վե՛րջ տալ անկարգութեան:*

*Այսպիսի նախադասութիւնները հրամայական են:*

**Գ.** Կոշակահին վրայ.

*Կը սիրենք քեզ արդ, հայրենի՛ք, շղթա՛յ,  
Որ ըմբոստացման կը մղես զմեզ...*

Երէ կոշակահը ունի նախադաս լրացում, շեշտը կը դրուի անոր վրայ.

*Հա՛ց անմեղութեան արցունքը անդարձ,  
Հա՛ց շգիտնալով, խեղճ, անզէ՛տ տղաս,  
Խեղճ որսը կեանքին, ա՛հ, լա՛ց, որ մեծնաս:*

*Ով հեռաւոր, անկարելի, քա՛ղցր երազ,  
Որ կեանքիս մէջ հետեւեցար միշտ ինծի:*

**Դ.** Այո և ոչ պատասխանական բառերուն վրայ.

— Նոր հագուստներս հագնելու եմ, այնպէս չէ՛:

— Այո՛:

— Սանկ ծխափող բաշելով և երկու մարդ ալ դէմս՝ բարեւ բըռ-  
նելով և մէկն ալ ետեւէս ձիս բռնելով:

— Այո՛, այո՛:

— Տաճկերէն գիտէք կարծեմ:

— Ո՛չ:

— Ֆրանսերէ՞ն:

— Ո՛չ:

— Անգղիերէ՞ն:

— Ո՛չ:

— Գերմաներէ՞ն:

— Ո՛չ:

— Վնաս չունի, ես լեզուագէտ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր  
վրայօք գովեստով պիտի խօսիմ:

**Ե.** Խօսողին կամ հնդիմակին կողմէ՛ յատկապէս շեշտուող  
բառերուն վրայ:

Այդան՛դ էր, որ ժողովուրդը իր իրաւունքը իր կոռուփվը պա-  
հանջեց,

Այդան՛դ էր, որ Ան շացաւ, շծերադրեց և իր գլուխը հողին չհասաւ,

Այդան՛դ էր, որ կատաղութեամբ զարկաւ և հսկարտօրէն զարնըւեցաւ:

Անո՛նք ալ ունին զգացո՛ւմ, հոգի՛,

Անո՛նք ալ ունին իրաւունք կեանքի:

**2. Հարցական նշանը** կը դրուի հարցում արտայայտող բառերուն վրայ.

Ո՞ւր ես, ո՞ւր մնացիր, Կրցա՞ր իրականացնել մեծ երազդ... Ի՞նչ եղաւ քու բաժինդ կեանքէն...

Ո՞ւր ես, Թորոս, ո՞ւր է ննովքը, ո՞ւր ես միւսները, կ'ապրի՞ն, թէ մեռան, ներմա՛կ սէ իրենց հացը, թէ սեւ, կո՞ւշտ կը պանկին, թէ անօթի...

**3. Բացազանչական նշանը** կը դրուի այն բառերուն վրայ, որոնք կ'արտայայտեն բացազանչումով.

Ի՞նչ ոսկեղէն դարազուխ է այս, և շղթաներու ի՞նչ դայրազին փշրտում.

Ի՞նչ ընդհարում ճակատ ճակատի, և հաւատքի ի՞նչ յաղթանակ.

Ի՞նչ երկաթակուռ հարուած բռնապետութեան անխախտելի օրէնքներուն:

**Վարժուիլուն.** Ընդօրինակել և ստորագծուած բառերուն վրայ գնել առողջանութեան նշաններ.

Այսօր եօթը լարերն իմ բարկութեան և մարտնչումի քնարիս,

Եւ հեծեծանքս, և մտածումս, և եղբայրական աչքերս, և հաւատքս  
մոլորանդ

Ձեզի կը բերեմ, ձեզի կը խնկեմ, ձեզի կը մատուցանեմ,

Ով կենդանի մեռեալներ,

Ով թիսպարտներ, ով ախտեալներ, հայրենասէր կալանատուներ...

Գիտեմ թէ ինչ ապառաժեայ խաւար է որ կը լեցուի ձեր զնտաններուն մէջն անողորմ,

Եւ ինչ դաժան կրազներ կու դան իրենց ժանիքներով ձեր ուղեղը  
բղկտելու...

Ինչ տառապանք և ինչ սէր, ինչ ինքնամոլորկում և ինչ հառաչանք  
ձեր ներսիդին,

Ինչ յոյսի երկինքներ, ինչ ձայն և ինչ բրբիջ և ինչ լռութիւն,

Ձեր հողիին մէջ կարգ առ կարգ և տարուէ տարի և յաւիտենապէս  
 կը թաալին...  
 Ուր են ուրեմն, ուր են մեր բազուկները, մեր կամքերը, մեր մուր-  
 ճերը, մեր հարուածներն ազատաբեր,  
 Ուր է մեր սէրը, ուր է մեր խիղճը, մեր վազքը, մեր զայրոյթը  
 շանթածրար,  
 Եւ երբ, երբ պիտի վար շրջենք, երբ պիտի խորտակենք, երբ  
 պիտի փշրենք  
 Մահուան դուռներն այդ բանտերուն, երթալ յափշտակելու, երթալ  
 համբուրելու համար  
 Այդ յաւիտենական հերոսները, որոնք մեր կեանքը իրենց կեանքէն  
 անհունապէս աւելի սիրեցին...  
 Որոնց մէջ թերեւս երէկուան սէրը մեռնի, վաղուան անէծքը ծնեց-  
 նելու համար...  
 Ուրեմն ուր էք, բռունցքներ, ուր էք, բարկութիւններ, ուր էք,  
 խորտակիչներ, ուր էք, ուր...  
 (Սիւմանթո)

— Գնա ջուր բեր ինծի...

— Շուտ, այստեղ եկուր, շտկէ այս անկողինը...

— Եկուր... գնա... նստիր... ելիւր...

Այս կարգի հրամաններ արձակողը հինգ թիզ հասակով տղայ  
 մըն էր անպայման, ու զոր՝ իրմէ կէս թիզ պակաս տղայ մը, որ  
 կը հնազանդէր առաջինին, ամոքելով աւելի մեծ տղու մը բիշ  
 առաջ անոր պատճառած դառնութիւնը:

(Ա. Մառուկեան)

## 210. ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ԵՇԱՆՆԵՐ

Բացայայտութեան նշաններն են՝ շակիրտները ( $\alpha$  յ), անջատ-  
 ման գիծը ( $-$ ), միութեան դիւղը ( $-$ ), փակադիծները [ $( )$ ], կախ-  
 ման կէտերը (...), բազմակէտը (.....), ենթաման ( $-$ ) և տղա-  
 թարցը ( $'$ ): Ասոնց միջոցով կը բացայայտուի բառերու, ամբողջ  
 բառակապակցութեանց կամ նախադասութեանց միջեւ եղած կապը:

### 1. Չակերտներու մէջ կ'ստուովն՝

Ա. Ուրիշի ուղղակի խօսքը, եթէ ուն մտածուեր է, բայց չէ  
 արտասանուեր, կամ արտասանուեր է շատոնց և ներկայ պահուն  
 գրողին կողմէ կը յիշատակուի որպէս մէջբերում: Չակերտներէն

առաջ կը դրուի միջակէտ (որոշ հեղինակներ կը դնեն միջակէտ-  
գիծ):

**Օրինակ՝**

*Քարեկամս ըսաւ. «Վաղը ցերեկը տունը պիտի ըլլամ»:*

*Քերթողն ըսաւ. — «Անո՛ւշ վտակ,*

*Շիւղերու տակ, ճիւղերու տակ,*

*Ո՛ւր կը վազես աննըպատակ...»:*

**Բ.** Գիրերէ, լրագիրներէ, որոշումներէ, նամակներէ և այլ կարգի գրութիւններէ կատարուած մէջբերումները, իրեն ուղղակի խօսք:

**Օրինակ՝**

*Կը գրէ մայրս. — «Ո՛վ իմ որդեակս պանդուխտ,*

*Դեռ մինչև ե՞րբ պիտ' անծանօթ լուսնի տակ*

*Օրերդ անցնին, դեռ մինչև ե՞րբ հէզ գլուխդ*

*Սա շտեղմեմ լանջքիս տար»:*

Պարոնեան ծաղրանքով կը գրէ. «Կարծիքները պէտք է սպասատրներու պէս գործածել, շոյելու է զանոնք, եթէ քեզի շահ կը բերեն, իսկ վնասելու է, երբ շահուղ կը դպչին»:

**Գ.** Գիրերու, լրագիրներու, բառերգութիւններու, արուեստի այլ երկերու անունները. ինչպէս՝ *Րաֆֆիի «Մամուէլ» վէպը*, *Յ. Պարոնեանի «Պաղտասար աղբար» կատակերգութիւնը*, *Ա. Մառուկեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Նայիրի»-ն*, *Տ. Չուխաճեանի «Արշակ երկրորդ»-ը*, *Ա. Խաչատուրեանի «Գայեանէ»-ն* և այլն:

**Դ.** Ընկերութիւններու, հաստատութիւններու, զանազան կազմակերպութիւններու անունները.

**Օրինակ՝**

*Գիրքը լոյս ընծայեց «Գիտութիւն և յառաջդիմութիւն» հրատարակչութիւնը:*

*«Առողջ մարմին» մարմնամարդական խումբը գրաւեց առաջին տեղը:*

*Այսօր պիտի հանդիպէին «Միածանի գոյներ» ճաշարանը:*

**Ե.** Ուրիշի խօսքէն առնուած պատառիկները, հեղինակի խօսքին ոչ յատուկ բառերն ու դարձուածքները.

Օրինակ՝

Իւր ատենարանութիւններուն մէկ մասը կը սկսի «Խնամակալութի տրիկնայք»-ով, մէկ մասը՝ «Տեարք և տրիկնայք»-ով, մէկ մասն ալ՝ «Տեարք»-ով:

**2. Հեզանեմով կամ հակառակ նշանակութեամբ ըստած բաներն ու քառակապակցութիւնները:**

Օրինակ՝

Եւ այդ «Իմաստունն» սկսած այնպիսի անհեթեթութիւններ ըսել, որ բոլորին ծիծաղը կը շարժէր:

Պարզուեցաւ, որ այդ «խենթը» խելօք և հայրենասէր մարդ մըն էր:

**2. Անջատման գիծը կը դրուի՝**

**Ա.** Ամէն մէկուն ըսած ուղղակի խօսքէն առաջ.

Անջատման գիծը կը դրուի նոր տողին ներսէն:

Օրինակ՝

1) Տօքթորը քայլ մը յառաջացաւ ու ձեռքս սեղմելով ըսաւ.

— Պարոն, ուրախ եմ որ հայու մը ձեռք կը սեղմեմ և առիթ կ'ունենամ յայտնելու ձեր ցնդին համար ունեցած սքանչացումս:

2) Խմբագիրը հարցուց.

— Կ'աղաչեմ, ըսէք ինձի, քանի՞ տարեկան էք:

— Քառասուն:

— Վաճառական էք, կարծեմ:

— Այո՛... Եթէ անցագիր սխտի շինել տար, հարկ չկայ, վասընդի հատ մը ունիմ...

— Զէ՛, վաղուան թերթիս մէջ պիտի գրեմ, որ առջի օրը Տրապիզոնէն մայրաքաղաքս եկաւ մեծապատիւ Արիստոզոմ աղա երեւելի վաճառականն...

**Բ.** Երկու բուականներու միջեւ, որոնք կ'արտայայտեն մտաւորութիւն՝ մէկ բիւլէն սկսեալ մինչեւ միւսը:

Օրինակ՝

Հարուստ տնտեսութիւն էր՝ ունէին տասը — տասնհինգ կով, հարիւր յիսուն — երկու հարիւր ոչխար, տասը — տասնհինգ ձի:

Ուղղակի խօսքին մէջ գտնուող կամ անկէ յետոյ դրուող հեղինակային խօսքը կ'անջատուի ստորակէտ-գծիկով:

**Օրի ն ա կ՝**

— Օ՛, դուն նշանաւոր բանաստեղծ ես եղեր, և մենք չէինք գիտեր մինչեւ հիմա,— ըսաւ տիկին Ջիւմպիլեան:

— Ձէ՛, տիկին,— պատասխանեց Գէորգ,— ուրիշներ ալ գրած ունիմ, սակայն երեւան չեմ հանած, ինձ համար պահած եմ:

**3. Միութեան գծիկը կը միացնէ երկու բառեր՝ իբրև մէկ բառական ամբողջութիւն:**

**Օրի ն ա կ՝**

Լուսնակն ալ ահա շքեղ կը ծաթի

Առասպելներու լոյս-դշլոյսին սրէս՝

Ալպեաններու ձիւն-նրաշէն արծաթի:

Շատերն իբրև ականատես վկայ կը պատմեն, մինչեւ իսկ կը նկարագրեն Նար-Պէյ Լուսինեանի կերպարանքը:

**Վարժութիւն.** Կազմել վեց նախադասութիւն՝ անոնց մէջ գործածելով միութեան և անջատման դիժեր:

**4. Փակագիծերու մէջ կ'առնուին՝**

**Ա.** Միջանկեալ նախադասութիւնները, որոնք քերականօրէն կապուած չըլլալով բուն նախադասութեան նետ, կրճան դիւրաւ դուրս մնալ խօսքէն:

էրիկը ժամանակ չունէր (այսինքն՝ դրամ չունէր, վասնդի անգործ ըլլալով՝ շատ ժամանակ ունէր) իւր վնական խնդիրքը կատարելու:

էրկան շքեղ (ինչպէս որ կ'ըսէր ողորմած հողի պապս), էրկան շքեղ...

**Բ.** Միջանկեալ բառի մը կամ բառակապակցութեան մը ձեւով գործածուած երկրորդական բացատրութիւններն ու ծանօթութիւնները.

Ֆուֆայուլային փնտմքը (մարդիչ՝ Ա. Փանոսեան, խումբի ղեկավար՝ Ն. Աթոյեան) յաջողութեամբ սկսաւ իր խաղաշրջանը:

Կոյսն հասկցաւ, մեղմիկ, ջութին վրայ սլայծառ,

(Անդրադարձած թովիչ դէմքին իր՝ անփոյթ)

Նւ վեր հաննց խուսափուկ ճիւղը դալար:

Ո՞վ պիտ' կրնար փետել հանել Ջայն սրտէս՝

Ուր (ինչպէս աստղը կասլոյտին ծոցէն ներս)

Ադուցուած է այնքան խոր:

Բախտին պատգամը կատարուեցաւ. Երուսաղեմի անկողնակալը ժողովներէն մէկուն նախ անդամ և յետոյ ամբողջութիւնն (նախագահ) եղաւ:

Արիզարինը (դեղնորակ կարմիր ներկ) շատ կը գործածուի ճարտարարուեստի մէջ:

### Ծ. Կախման կէտերը կը դրուին՝

Ա., երբ նախադասութիւնը անաւարտ կը մնայ՝ խօսողին խիստ յազուած ըլլալուն, հոգեկան ծանր կացութեան մէջ զրտնրելուն համար և կամ հման այլ պատճառներով:

#### Օրինակ՝

1) — Ի՞նչ, ի՞նչ... ըսել է պիտի պատմե՞ս... առանց ամչնալու պիտի պատմե՞ս եղածները...

2) — ... Փառանձեմիւն տղուն կը նմանիս... հարկա՛հայ ըլլալդ քիթէդ-բերնէդ կը վաղէ կոր... Գործդ ի՞նչ է... ան ատեն պիտի ճանչնաս իմ տղաքս... Պղտիկս եկեղեցին ձայնաւորութիւն կ'ընէ... Դուն եռաձայն չե՞ս... Ինչո՞ւ մայրիկդ քովդ բերել չես տար... Քոյրիկդ քեզմէ մե՞ծ է... կարգուա՞ծ է... Քա՛, ես խե՞նթ եմ... Աչքս էլլայ, ասանկ տղաքներ հասցուր տէ, վերջն ալ...

Բ. երբ հեղինակը կամ խօսողը դիտմամբ կ'ընդհատէ խօսքը, բայց յետոյ յանկարծ կը շարունակէ՝ ցոյցնելով անակնկալ, երբեմն ալ զանշտական վախճան մը:

#### Օրինակ՝

1) Քանի մը երիտասարդներ մէջտեղ եկած ընկերութիւն մը հաստատած են. ասոնք ո՛չ իրենց ըրածը գիտեն և ո՛չ ալ ընկերքը... այսպիսի ընկերութիւնները աղջիկ շարիք հասցնելէն ուրիշ բանի մը շնն ծառայէր, ուստի մենք որոշեցինք ընկերութիւն մը կազմել... այդ ընկերութիւնը կործանելու համար:

2) — Ես անոր ատենապետը կանչել կու տամ և կը խօսիմ:

— Ատենապետը կանչել կու տա՞ք...

— Այո՛, պիտի վախճնա՞մ իրմէ:

— Բայց այդ ընկերութեան ատենապետը... դուր էր:

### Գ. Բազմակէտը (չորս և աւելի կէտեր) կը գործածուի՝

Ա. Ոչ ամբողջական մէջբերումներու ժամանակ՝ ուղղակի խօսքի մը մէջ կատարուած կրճատումներուն տեղը:

Օրինակ՝

....Քող լան, ու դուն ուրախ լուրեր տար ի Զէյթուն:  
Նս մինչ ի մահ կախաղան.... պիտ' գոռամ.... ազատութիւն:

Բ. Երբ հեղինակը անլուրդ կամ անվայել կը համարէ պատ-  
ճել կամ նկարագրել բան մը, զոր առանց խրեն ալ ընթերցողը կրնայ  
պատկերացնել:

Նման պարագաներուն ամբողջ տող մը կամ ամբողջ քառա-  
տող մը բազմակէտ կը դրուի, երբեմն նոյնիսկ անլի:

Օրինակ՝

Երբ ինքզինքը կը գիտէր հայելիին մէջ, հոն տեսաւ նաեւ ան-  
ձանօթ մօր պատկերը: Ան միշտ կը ժպտէր քաղցրօրէն:

Ան միշտ կը ժպտէր քաղցրօրէն:

7. Ապարարցը կը գործածուի ը, ի ձայնաւորներուն, եր-  
բեմն ալ է ձայնաւորին սղման ժամանակ, երբ մը, կը, մի, թէ  
ն նման մասնիկներ ու բառեր կը դրուին ձայնաւորով կամ՝ սկ, սպ,  
ստ, սք, սփ, սթ, շկ, շպ, շտ, զգ, զք հնչլուսակապակցութիւն-  
ներով սկսող բառերէն առաջ:

Օրինակ՝

Ու թիթեռնիկ, միջատ, ծաղիկ ու թռչուն  
կը ծծէին երանութիւն մ'անննար:

Կ'ուզէ ուրիշ մէկ աշխարհ  
Ան գտնելու, ուր անհուն  
Ազատութիւնն իշխէ յար՝  
Նւ անխարդախ բարութիւն:

Մինչդեռ դու շնս սիրեր դիս,  
Մ'իշխեր գոնէ տկար սրտիս...

Իցիւ ք'անոր գերեզմանին քարն լինիմ...

Գոսթի, կիրքի սկէս տարտամ բոց մ'զգացի սրտէս ներս...

Պիտ' ըսեմ քեզի ամէն, ամէն բան:

Պիտի մասնիկին վերջին ձայնաւորը երբեմն կը դեղչուի նաեւ  
բաղաձայնէն առաջ՝ բանաստեղծութեան շարժը պահպանելու  
համար.



Օրինակ՝

Ի՞նչ պիտ' բերէ վաղն իմ հոգույն...

Ձայնաւորը շի սղուիր այն պարագային, երբ սուր շեշտ կը կրէ. օրինակ՝ մի՛ ուսեր: Մի՛ ըսեր այդ խօսքը խայթող...

Սխալ է ապաժարց դնել ժխտական շ մասնիկէն յետոյ, որովհետեւ անոր հետ ը ձայնաւոր չկայ. այսպէս՝ պէտք է գրել՝ շեղայ, շեկաւ, շերգեց, շեմ, շես և այլն:

Մ ա ճ օ Ր ու ի Ի ն. երբ շի ժխտականը կ'իյնայ ձայնաւորով սկսող բառերէն առաջ, Ի-ն կը սղուի և կը գրուի միայն չ՝

Օրինակ՝

Ասանկ շ'ըլար (չի ըլլար), Տասը վայրկեան չ'անցիր (չի անցիր), Այս ճաշը շ'ուտուիր (չի ուտուիր) և այլն:

**Ց. ԵՆՔԱՄԱՆԱՆ** կը դրուի տողին վերջը՝ բառը տողադարձ ընելու առին:

Օրինակ՝

Ձար-մանք, տըն-տեսութիւն, խա-ղալ, կա-պոյտ, այ-գի:

**Վարժութիւն 1.** Ընդօրինակել նախադասութիւնները և որոշել, թէ ինչո՞ւ գործածուած են շակերտները և անջատման գիծերը.

**Ա.** Ժամանակաւ իմաստասէրին մէկը ըսած է. «Քիչ խօսէ, ու շատ մտիկ ըրէ»: Ուրիշ իմաստասէր մը մեր իմաստասէրին այս խօսքին շատ հանելով՝ քայլ մ'ալ ինքն առաւ և ըսաւ. «Բնաւ մի՛ խօսիր ու շարունակ մտիկ ըրէ»:

**Բ.** Այս «բանտ»-ը հաճելի տպաւորութիւն թողուց վրաս: Յայտնի էր որ զիս սովորական շարագործի մը տեղ շէին դրած, և Եպատտոյ հիւր»-ի մը վայել ընդունելութիւնը կ'ընէին ինծի:

**Գ.** Եւ ամէն իրիկուն, հոգիիս մէջ՝ հեռաւոր ձայն մը կը կանչէ պաղատագին. «Ո՛վ իմ հորիդունիս վրայ շուշանացած ուրուային ձևորներ, անգամ մը, անգամ մըն ալ գէթ երեցէք ինծի» (1): Ու «մայրիկ» բառը, որ իր երեք խօսքին մէկն էր՝ իր շորքած ու ձմոթկած բերնին մէջ մանկական անուշութիւն մը կը ստանար» (2):

**Դ.** — Պէտք է հասկնաք,— վրայ բերի՝ ձայնիս մէջ դնելով այնքան համողողական ուժ, որ կարելի էր ինծի,— թէ ես ետ շեմ կրնար դառնալ և պարտաւոր եմ կատարել ինծի յանձնուած կարեւոր պաշտօնը:

— Օ՞, հոգ մի՛ ընէք,— պատասխանեց այս անգամ խնդալով...

**Ե.** Հինգ-վեց բարեկամ ճաշարանի մը մէջ կը ճաշէին անցեալ շաբթու:

— Մանչո՛ւկ, հօշալ մը բեր, — ըսաւ մին:

— Հօշալը հայերէն չունի՞, — հարցուց միւսը:

— Զանշտաջուր, — պատասխանեց ընկերը:

— Անանկ է նէ՛ մի՛ խմեր, հասարակաց բարոյականութեան վնասակար է եղեր, — ըսաւ բարեկամը:

(Յ. Պարոնեան)

**Վարժութիւն 2.** Ընդօրինակել և նշանակել բաց ձգուած կէտադրական նշանները ստորագծուած բառերէն յետոյ.

**Ա.** Հաճութեամբ կարգացեր էի փրոֆ. Կ. Թումայեանի կնոջ գովիցեումի մէկ նամակը խմբագրութեան ուղղուած որով անդ-լիական կառավարութենէն կը պահանջէր ուժգին շեշտերով անմիջապէս տնօրինութիւն մը ընել թշնամի օտարական շնկատելու Թուրքիոյ հպատակ հայերը Յօդուածը մատնանիշ ըրի անգլիացիին որ ուշադրութեամբ կարդաց զայն և անլցուցի:

Տեսէ՛ք Թուրքիոյ հայերու խնդիրը արդէն ուշադրութեան առարկայ է:

Իմ պերճախօսութիւնս ու կերպարա՞նքս էր որ ակնկալած արդիւնքս յառաջ բերին:

Օլ ոայք ըսաւ առաջին անգամ ձպտելով:

(Լ. Ռաշալեան)

**Բ.** Ան կ'ըսէր

Արարիչը մարդուն երկար բաղուկներ ու կարճ լեզու մը տուեր է որ շատ աշխատիս ու քիչ խօսիս ան կթէ գործադրէր ըսածը պղտիկ սիրտ մը ու մեծ ուղեղ մը տուեր է որ մէկ զգաս ու երկու հաշունս իսկ ուղեղին հարիւրապատիկ մեծութեամբ որովայն մըն ալ տուեր է հասկցնելու համար որ մեծ միտքերը փորէն կու գան Ուրեմն առաջին հողդ հոն պիտի ըլլայ եթէ ստամոքսդ դուն բաղցրութեամբ շինցնես ան քու կեանքդ զառնութեամբ կը լեցնէ:

Այս քաղցրութիւն բոլոր պատահական նմանութիւն մը չէր աչքովը անուշին պնակին կ'ակնարկէր որ իր առջև անցրնեմ

(Ռ. Անալ)

**Գ.** — Ով է ան ուրեմն, որ Մարտիրոս անունով մօրեղբայր մը ունի, որ վերջը բան մը եղաւ ներեցէք, ներեցէք, հիմա յիշեցի դուք չէք. ես ձեզի ուրիշի նմանցուցի Կարապետն էր այն, որ

ձեռքով աղէկ շրջալ, բարեկամս էր և որ Մարտիրոս աղային բե-  
ռորդին էր. պատուական երիտասարդ մ'էր, բայց վեց տարի կայ,  
որ դինքը տեսած շունիմ Մարտիրոս աղան ալ բարի մարդ մ'էր,  
որ վերջը վերջը տէր ողորմեա, ինչ եղաւ այս մարդը վերջը հա',  
վերջը շատ աղքատ եղաւ. վասնդի իր բոլոր հարստութիւնը բոն-  
սօլիտի մէջ քաղեց խեղճ Մարտիրոս աղան Բայց ևս զձեզ ալ ան-  
պատճառ տեղ մը տեսած եմ

(Յ. Պարոնեան)

**Վարժութիւն 3.** Գրել շարադրութիւն մը՝ անոր մէջ գործածելով  
բացայայտութեան նշաններ:

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք . . . . .	3
Մուտք . . . . .	6

### Հնչյունաբանություն

1. Հնչյուն . . . . .	7
2. Հնչյուններու արտաբերումը . . . . .	7
3. Տառ . . . . .	8
4. Այբուբեն . . . . .	8
5. Տառերու թուային կիրաբերումները . . . . .	9
6. Չայնաուրներ և բաղաձայններ . . . . .	10
7. Բաղաձայններու տեսակները . . . . .	11
Ա. Պայթական և շփական բաղաձայններ . . . . .	11
Բ. Շնչեղ խուլ, ձայնեղ, խուլ և ձայնորդ բաղաձայններ . . . . .	12
8. Վանկ . . . . .	14

### Բառագիտություն

9. Բառ . . . . .	17
10. Հայերէնի բառային կազմը . . . . .	17
11. Մեկիմաստ և բազմիմաստ բառեր . . . . .	18
12. Բառի տեսակներն ըստ իմաստի և ձևի . . . . .	20
13. Բառի կազմությունը . . . . .	22
14. Բարդ բառեր . . . . .	25
15. Իսկական բարդություն . . . . .	25
16. Անիսկական բարդություն . . . . .	27
Ա. Յարադիր բարդություն . . . . .	27
Բ. Կցական բարդություն . . . . .	29
17. Ածանցաւոր բառեր. ածանց . . . . .	30
18. Նախածանցներ . . . . .	30
19. Վերջածանցներ . . . . .	31
20. Յապատումներ . . . . .	33

### Ուղղագրություն

21. Չայնաուրներու ուղղագրությունը . . . . .	36
22. Երկնչյուններու ուղղագրությունը և արտասանությունը . . . . .	40
23. Բաղաձայններու ուղղագրությունը և արտասանությունը . . . . .	43
24. Տողաբարձ . . . . .	52
25. Բառի շեշտ . . . . .	53
26. Հնչյունափոխություններ . . . . .	54

## Քերականութիւն

### Ձևարանութիւն

27. Ձևարանութեան առարկան	• • • • •	59
28. Հիմք և վերջաւորութիւն	• • • • •	59

### Խօսքի մասեր

29. Ընդհանուր ծանօթութիւն	• • • • •	61
---------------------------	-----------	----

### Գոյական անուն

30. Ընդհանուր ծանօթութիւն	• • • • •	62
31. Հասարակ և յատուկ անուններ	• • • • •	64
32. Բաղադրեալ յատուկ անուններու ուղղագրութիւնը	• • • • •	66
33. Գոյականներու թիւը	• • • • •	67
34. Յոգնակի թիւի կազմութիւնը	• • • • •	69
35. Գոյականներու հոլովումը	• • • • •	73
36. Գոյականի հոլովները	• • • • •	73
37. Ուղղական հոլով	• • • • •	74
38. Հայցական հոլով	• • • • •	75
39. Սեռական հոլով	• • • • •	77
40. Տրական հոլով	• • • • •	78
41. Բացառական հոլով	• • • • •	79
42. Գործիական հոլով	• • • • •	81
43. Գոյականի առումները	• • • • •	82
44. Գոյականի հոլովումները	• • • • •	84
45. Ի հոլովում	• • • • •	85
46. Ո՞ւ հոլովում	• • • • •	86
47. Ե՛ւ հոլովում	• • • • •	87
48. Ո՞ւ՛, Ա՛ն հոլովում	• • • • •	88
49. Ո՞՞ հոլովում	• • • • •	89
50. Օ հոլովում	• • • • •	90
51. Ո՞Յ հոլովում	• • • • •	90
52. Այլաձև հոլովումներ	• • • • •	92
53. Գրարարեան հոլովաձևերու մեացորդներ	• • • • •	93
54. Յարազիր գոյականներու հոլովումը	• • • • •	93
55. Գոյական անուններու հոլովման ընդհանուր պատկերը	• • • • •	94
56. Գոյականակերտ ածանցներ	• • • • •	96

### Ածական անուն

57. Ընդհանուր ծանօթութիւն	• • • • •	99
58. Ածականի տեսակները	• • • • •	100
59. Ածականներու համեմատութեան աստիճանները	• • • • •	102
60. Ածականներու գործածութիւնը նախադասութեան մէջ	• • • • •	104
61. Ածականակերտ ածանցներ	• • • • •	106

Քուական անուն

62. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	109
63. Քանակական թուականներ . . . . .	109
64. Դասական թուականներ . . . . .	110
65. Բաշխական թուականներ . . . . .	111
66. Քուականներու զործածութիւնը . . . . .	112
67. Քուականներու հոլովումը . . . . .	114

Դերանուն

68. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	116
69. Անձնական դերանուններ . . . . .	119
70. Ցուցական դերանուններ . . . . .	124
71. Փոխադարձ դերանուններ . . . . .	127
72. Հարցական-յարարերական դերանուններ . . . . .	127
73. Անորոշ կամ մասնական դերանուններ . . . . .	129
74. Որոշեալ կամ հանրական դերանուններ . . . . .	131
75. Յօդ . . . . .	134

Քայ

76. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	139
77. Բայի խոնարհումը . . . . .	140
78. Բայի խոնարհման հիմքերը . . . . .	142
79. Գերբայներ . . . . .	144
80. Անորոշ դերբայ . . . . .	141
81. Ապառնի դերբայ . . . . .	146
82. Վաղակատար դերբայ . . . . .	147
83. Յարակատար դերբայ . . . . .	149
84. Անթակայական դերբայ . . . . .	151
85. Ժխտման դերբայ . . . . .	152
86. Բայի դիմաւոր Աւերբը . . . . .	153
87. Դէմք և թի . . . . .	151
88. Ժամանակ . . . . .	155
89. Եղանակ . . . . .	156
90. Սահմանական եղանակ . . . . .	156
91. Ներկայ ժամանակ . . . . .	157
92. Անցեալի անկատար ժամանակ . . . . .	159
93. Անցեալ կատարեալ ժամանակ . . . . .	160
94. Ապառնի ժամանակ . . . . .	161
95. Անցեալի ապառնի ժամանակ . . . . .	162
96. Վաղակատար ժամանակ . . . . .	164
97. Անցեալի վաղակատար ժամանակ . . . . .	165
98. Յարակատար ժամանակ . . . . .	167
99. Անցեալի յարակատար ժամանակ . . . . .	168
100. Բաղադրեալ ապառնի ժամանակ . . . . .	170
101. Բաղադրեալ անցեալի ապառնի ժամանակ . . . . .	170

102. Հրամայական եղանակ . . . . .	173
103. Ըղծական եղանակ . . . . .	175
104. Ապառնի ժամանակ . . . . .	176
105. Անցեալի ապառնի ժամանակ . . . . .	176
106. Կանոնաւոր բայերու խոնարհման պատկերը . . . . .	179
107. Նրկորդական բաղադրեալ ժամանակներ . . . . .	184
108. Ժխտական խոնարհում . . . . .	187
109. Ժխտական խոնարհման պատկերը . . . . .	188
110. Բայի կազմութիւնը . . . . .	194
111. Բայածանցներու և անանցաւոր բայերու տեսակները . . . . .	196
112. Կրաւորական բայերու խոնարհումը . . . . .	199
113. Պատճառական բայերու խոնարհումը . . . . .	200
114. Սոսկածանցաւոր բայերու խոնարհումը . . . . .	203
115. Անկանոն բայեր . . . . .	207
116. Անկանոն բայերու խոնարհումը . . . . .	208
117. Պակասաւոր բայեր . . . . .	218
118. Բայի սեռերը . . . . .	221
119. Ներգործական սեռ . . . . .	221
120. Կրաւորական սեռ . . . . .	222
121. Չլզոր սեռ . . . . .	223

#### Մակրայ

122. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	226
123. Մակրայներու տեսակները . . . . .	228
124. Մակրայներու կազմութիւնը . . . . .	231

#### Կապ

125. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	235
126. Կապերու տեսակներն ըստ իմաստի . . . . .	238
127. Իսկական կապեր, անիսկական կապեր և կապական բառեր . . . . .	240
128. Կապուող բառերու հոլովական կիրարկութիւնները . . . . .	242

#### Շաղկապ

129. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	245
130. Շաղկապներու տեսակները . . . . .	246

#### Սղանակաւորող բառեր

131. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	248
132. Սղանակաւորող բառերու տեսակները . . . . .	250

#### Չայնարկութիւն

133. Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	253
134. Չայնարկութիւններու գործածութիւնը . . . . .	254
135. Ամփոփիչ վարժութիւններ ձևարանութեան վերաբերեալ . . . . .	256

## Շարահիւտութիւն

136. Շարահիւտութեան փոստիկան . . . . .	260
137. Խօսք . . . . .	260
138. Նախադասութիւն . . . . .	261
139. Նախադասութեան տեսակներն ըստ երանգի . . . . .	264
140. Նախադասութեան տեսակներն ըստ կազմութեան . . . . .	266

## Պարզ նախադասութիւն

141. Նախադասութեան զլիստոր անդամներ. համառոտ նախադասութիւն . . . . .	267
142. Նախադասութեան երկրորդական անդամներ. ընդարձակ նախադասութիւն . . . . .	269
143. Լրացման լրացումներ . . . . .	269
144. Ենթակայ . . . . .	271
145. Զեղչուած ենթակայով նախադասութիւն . . . . .	274
146. Անենթակայ նախադասութիւն . . . . .	276
147. Ստորոգեալ . . . . .	278
148. Պարզ ստորոգեալ . . . . .	280
149. Բաղադրեալ ստորոգեալ . . . . .	282
150. Զեղչուած ստորոգեալով նախադասութիւն . . . . .	284
151. Անդէմ նախադասութիւն . . . . .	287
152. Ենթակային և ստորոգեալին համաձայնութիւնը . . . . .	290
153. Գոյականի (էնթակայի) լրացումներ . . . . .	294
154. Որոշիչ . . . . .	295
155. Ցատկացուցիչ . . . . .	298
156. Բացայայտիչ . . . . .	302
157. Բայի (ստորոգեալի) լրացումներ . . . . .	305
158. Խնդիրներ . . . . .	305
159. Ուղիղ խնդիր . . . . .	306
160. Յանգման և մատուցման անուղղակի խնդիր . . . . .	308
161. Վերաբերութեան անուղղակի խնդիր . . . . .	310
162. Անշատման անուղղակի խնդիր . . . . .	311
163. Միջոցի անուղղակի խնդիր . . . . .	312
164. Ներգործող անուղղակի խնդիր . . . . .	312
165. Պարագաներ . . . . .	315
166. Տեղի պարագայ . . . . .	315
167. Ժամանակի պարագայ . . . . .	318
168. Զեւի պարագայ . . . . .	319
169. Զափ ու քանակի պարագայ . . . . .	321
170. Նայատակի պարագայ . . . . .	322
171. Պատճառի պարագայ . . . . .	323
172. Հիմունքի և հակառակ հիմունքի պարագաներ . . . . .	324
173. Բաղմակի լրացումներ . . . . .	326
174. Շարահասութիւն . . . . .	328
175. Նախադասութեան մէջ զործածուող, բայց նախադասութեան անդամ չեղող բառեր . . . . .	333



176.	Կոչական	334
177.	Միջանկեալ բառեր	335
178.	Հօրովներու կիրառական նշանակութիւնը	339
179.	Ուղղական հօլովին կիրարկութիւնը	340
180.	Հայցական հօլովին կիրարկութիւնը	343
181.	Սեռական հօլովին կիրարկութիւնը	346
182.	Տրական հօլովին կիրարկութիւնը	347
183.	Բացառական հօլովին կիրարկութիւնը	349
184.	Գործիական հօլովին կիրարկութիւնը	351

### Բարդ նախադասութիւն

185.	Ընդհանուր ծանօթութիւն	353
186.	Համադասութիւն և ստորադասութիւն	353
187.	Բարդ համադասական նախադասութիւն	356
188.	Միաբերեալ նախադասութիւն	358
189.	Բարդ ստորադասական նախադասութիւն	361
190.	Բարդ ստորադասական նախադասութեան կապակցութիւնը	364
191.	Երկրորդական նախադասութիւններու շարադասութիւնը	366
192.	Համաստորադաս երկրորդական նախադասութիւններ	368
193.	Երկրորդական կարգի նախադասութիւններ	371
194.	Երկրորդական նախադասութիւններու բնոյժը	375
195.	Ննթակայ երկրորդական նախադասութիւն	378
196.	Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասութիւն	380
197.	Որոշիչ երկրորդական նախադասութիւն	381
198.	Յատկացուցիչ երկրորդական նախադասութիւն	383
199.	Բացայայտիչ երկրորդական նախադասութիւն	384
200.	Ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւն	386
201.	Անուղղակի խնդիր երկրորդական նախադասութիւն	388
202.	Պարագայ երկրորդական նախադասութիւն	391
	Ա. Տեղի և ժամանակի պարագայ երկրորդական նախադասութիւն	391
	Բ. Ձևի և շարժի ու բանակի պարագայ երկրորդական նախադասութիւն	392
	Գ. Պայմանի պարագայ երկրորդական նախադասութիւն	394
	Դ. Պատճառի և նպատակի պարագայ երկրորդական նախադասութիւն	395
	Ե. Հիմունքի և նակտակ հիմունքի պարագայ երկրորդական նախադասութիւն	396
203.	Գերբայական դարձուած	401
204.	Նախադասութեան կողմնակի անդամներ	403
205.	Միջանկեալ նախադասութիւն	406
206.	Ուրիշի խօսք	408
207.	Կլտադրութիւն	413
208.	Տրոհութեան նշաններ	414
209.	Ատոյանութեան նշաններ	422
210.	Բացայայտութեան նշաններ	425


ՍԵՐԿԷՅ ԳԵԱՆՋՈՒՄԻ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ  
ՐՈԳԳԻԱՆ ՅԱԿՈՐԻ ՎԵՐԳԵԱՆ  
ՎԱՀԱՐՇԱԿ ԱՐՋՈՒՄԵԱՆ ԲՈՍԵԱՆ  
ՀԱՅՆՐԷՆ ԼԵՋՈՒԻ ԳԱՍԱԳԻՐՔ

Խմբագիր՝ Պ. Գ. Շանյազեան  
Հրատ. խմբ.՝ Ռ. Հ. Արխտազէսեան  
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանեան  
Տեխ. խմբագիր՝ Վ. Ս. Աբրահամեան  
Վերատպող սրբագրիչ՝ Ի. Ա. Սիլցեան

•  
«ԼՈՅՍ» հրատարակչություն

Գինը՝ 25 կոպ.

ՀՍՍՀ Միևիտարների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդինարե-  
րության գլխավոր վարչության Յակոբ Մեղապարտի անունան պոլիգրաֆկոմբինատ,  
Երևան, Տերեան 91:



9000 85 4.